

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆՏՐԱՆԻ

Հատոր XII

ԵՐԵՎԱՆ – 2022

ՀՏԴ 34
ԳՄԴ 67
Հ 247

Խմբագիր՝

Լիլիթ Թադևոսյան

**Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի նախագահ,
Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբան,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

Խմբագրակազմ՝

Էմիլյա Աբրահամյան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի օգնական,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Ժենյա Ստեփանյան

ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների
ծառայության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Առնոլդ Վարդանյան

ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների
ծառայության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Տաթևիկ Սուջյան

ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների
ծառայության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Արման Բաբախանյան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի
Հ 247 2020 թվականի որոշումների ընտրանի (Խմբագրությամբ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի
նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Լ. Զ. Թադևոսյանի**). – Եր.: «Ջանգալ» հրատ., 2022. Հ. XII. – 992 էջ:

ՀՏԴ 34
ԳՄԴ 67

ISBN 978-9939-68-963-0

Գիրքը վաճառքի ենթակա չէ

Funded
by the European Union
and the Council of Europe



EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2020 թվականի որոշումների ընտրանու տպագրությունը ֆինանսավորվել է «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից: Սույն տպագրության մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2020 թվականի որոշումների ընտրանու մասին.....	7
Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2020 թվականի որոշումների առարկայական դասակարգում	16
Աղբյուրների ցանկ թիվ 1.	
ՀՀ Սահմանադրության դրույթներ	27
Աղբյուրների ցանկ թիվ 2.	
Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռներ	28
Աղբյուրների ցանկ թիվ 3.	
ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ	30
1. Դ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՄԴ3/0070/01/16	31
2. Ա.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0038/01/17	49
3. Գ.Վարտանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0289/01/17	66
4. Ա.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԿԴ/0002/01/18.....	82
5. Շ.Ոսկանյանի վերաբերյալ որոշում, ԱԴԴ-1/0042/01/17.....	97
6. Ա.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0061/01/08.....	104
7. Մ.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0080/01/08	122
8. Կ.Թարխանյանի վերաբերյալ որոշում, ԵՔԴԴ/0192/01/08.....	141
9. Դ.Աղայանի վերաբերյալ որոշում, ԵՔԴԴ/0286/01/08.....	161
10. Վ.Ջհանգիրյանի վերաբերյալ որոշում, ԵՔԴԴ/0197/01/08	179
11. Ա.Շահինյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0104/01/08.....	202
12. Ա.Բարեղամյանի վերաբերյալ որոշում, ԵՔԴԴ/0205/01/08	214
13. Դ.Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0067/01/08	234
14. Խ.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0077/01/08.....	254
15. Ս.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0083/01/08	272
16. Հ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0426/11/18.....	288

17. Ս.Միրզոնի վերաբերյալ որոշում, ԿԳ-3/0018/06/18.....	315
18. Վ.Ավդալյանի վերաբերյալ որոշում, ԵԳ-0606/01/18.....	322
19. Ս.Սնովնիկովի վերաբերյալ որոշում, ԵԴ/0312/06/19.....	330
20. Ժ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԱԸԳ-1/0002/11/18.....	338
21. Ի.Փաշյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0605/11/18.....	353
22. Ֆ.Յեզանեհի վերաբերյալ որոշում, ԵԴ/0580/01/18	360
23. Ա.Կարամիի (Քարամիի) վերաբերյալ որոշում, ԵԴ/0853/06/18.....	367
24. Վ.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0036/01/19.....	377
25. Հ.Պապոյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0231/13/18	383
26. Ա.Մադաթյանի վերաբերյալ որոշում, ԱԸԴ/0002/06/19	390
27. Ս.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0306/06/19.....	400
28. Վ.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0056/01/16.....	416
29. Վ.Մարգարյանի և Վ.Ներսիսյանի վերաբերյալ որոշում, ԳԴ-5/0004/01/16..	447
30. Գ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ-0186/11/16.....	483
31. Ա.Սնացականյանի վերաբերյալ որոշում (ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին), ԱԸԱԳ-1/0001/14/18, ԱԸԱԴ-1/0001/15/18.....	493
32. Լ.Հարությունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԱԴԳ-0079/01/16.....	519
33. Ա.Տեր-Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԴ-0049/11/19	562
34. Արման և Արքա Մադաթյանների վերաբերյալ որոշում, ԱԸԳ-0152/01/19..	569
35. Ռ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ-0026/15/09.....	584
36. Ա.Արծրունու վերաբերյալ որոշում, ԱԸԴ-1/0009/15/18	597
37. Ա.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԵԴ-2640/07/18.....	612
38. Ա.Բադալյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0120/12/17	629
39. Հ.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ-0095/06/19.....	644
40. Ա.Դավթյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-0014/11/18.....	658
41. Լ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ-0100/01/17	666
42. Վ.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԼԴ1/0057/01/17	682

43. Ա.Կիրակոսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0008/06/19	690
44. Զ.Աֆյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0052/11/18	697
45. «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0009/11/18	710
46. Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0100/01/08.....	723
47. Ա.Զալիսյանի վերաբերյալ որոշում, ԼԴ4/0013/01/18.....	739
48. Հ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0021/01/19.....	750
49. Ս.Թորոսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0245/01/19	762
50. Լ.Մեիրաբյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0005/11/10	774
51. Ռ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1487/07/19	789
52. Ռ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1488/07/19.....	800
53. Յ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/3085/07/19	809
54. Յ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/3084/07/19.....	823
55. Վ.Գասպարիի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0065/01/08	837
56. Հ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0072/01/18	857
57. Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0363/01/19	865
58. Ա.Բորումանդֆարի վերաբերյալ որոշում, ԵԴ/0201/01/18	874
59. Հ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0033/15/19	888
60. Ա.Արզումանյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0077/01/17	897
61. Մ.Կիրակոսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0201/01/15	910
62. Վ.Գասպարիի վերաբերյալ որոշում, ԵԴ/0554/11/19	925
63. Հ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0717/13/18	934
64. Ա.Ղուկասյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0044/15/19	942
65. Վ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0548/06/19	951
66. Ն.Ենգիբարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0016/11/18	964



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆՏՐԱՆՈՒ ՄԱՍԻՆ**

Ավելի քան մեկուկես տասնամյակ Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը շարունակում է հավատարիմ մնալ իր սահմանադրական բացառիկ առաքելությանը՝ մեր երկրում ապահովելով օրենքի միատեսակ կիրառություն և ձևավորելով ռոմանոգերմանական իրավական համակարգին պատկանող նախադեպային իրավունքի կիրառման ուրույն մշակույթ: Արդեն անատարկելի իրողություն է Վճռաբեկ դատարանին հաճախ տրվող՝ «նախադեպային իրավունքի դարբնոց» բնորոշումը: Ավելին, սկսած 2015 թվականից Վճռաբեկ դատարանն ապահովում է միասնական իրավակիրառ պրակտիկա ոչ միայն օրենքների, այլ նաև ցանկացած այլ տեսակի նորմատիվ իրավական ակտի կիրառման բնագավառում: Եռաստիճան դատական համակարգում լինելով Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը՝ Վճռաբեկ դատարանն իր գործունեությամբ կրում է նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու առաքելությունը:

Վերոնշյալ սահմանադրական գործառնությունների իրականացման նպատակով Վճռաբեկ դատարանն իր ամենօրյա գործունեությամբ նպաստում է հայրենական իրավակարգի ամրապնդմանն ու իրավունքի գերակայության ապահովմանը՝ զարգացնելով ու կենդանի շունչ հաղորդելով ավելի քան երկու տասնամյակ օրենսդրական նույն ձևակերպումներով պարուրված կարգավորումներին: Այս առումով հարկ է նկատել, որ Վճռաբեկ դատարանը միջազգային չափանիշների մեխանիկական տրանսպլանտացիա չի իրականացնում՝ արտասահմանյան երկրների օրենսդրական կարգավորումները նույնությամբ ներմուծելով հայրենական իրավակիրառ պրակտիկա, այլ ապահովում է այդ չափանիշների տեղայնացումը հայրենական իրավունքի ոգուն և էությանը համապատասխան՝ ուշադրություն դարձնելով ավանդական սկզբունքների վրա հիմնված հայրենական իրավունքի ներդաշնակ զարգացման ճարտարապետությանը:

Վերոշարադրյալի համատեքստում, միջազգային իրավաբանական համայնքի կողմից ընդունելի իրավամեկնաբանողական հնարքների

կիրառմամբ Վճռաբեկ դատարանն իրականացնում է նաև սահմանադրական իրավունքի հարցերով ՀՀ Սահմանադրական դատարանի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի մեկնաբանման հարցերով միջազգային դատական ատյանի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների կիրարկման հարմոնիզացիա՝ ապահովելով այդ դիրքորոշումների համահունչությունը հայրենական իրավակիրառ պրակտիկայում տարիներ շարունակ ձևավորված մոտեցումներին:

Համագործակցելով միջազգային գործընկերների հետ, Վճռաբեկ դատարանի ամենօրյա գործունեության օրակարգը ներառում է իրավական դոկտրինների ու մարդու իրավունքների պաշտպանության նոր հայեցակարգային լուծումների մշակումը՝ ապահովելու իրավունքի գերակայության կենտրոնացված պաշտպանությունը Հայաստանում:

Ջուր չէ ընդգծել, որ վերոնշյալ առանձնահատկություններով է պայմանավորված վճռաբեկ բողոքները Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունելու՝ սահմանադրի կողմից նախատեսված բարձր շեմը, որպիսի պայմաններում՝ ա) դատական ակտերի վերանայման գործառույթը կենտրոնացված է վերաքննիչ դատական ատյանում, բ) Վճռաբեկ դատարանն իր գործառույթներով չի նույնանում Վերաքննիչ դատարանի հետ, քանի որ օժտված է հատուկ իրավական կարգավիճակով:

Այդ պատճառով Վճռաբեկ դատարանը, ինչպես աշխարհի այլ բարձրագույն դատական ատյաններ, մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկելով ներկայացված բոլոր վճռաբեկ բողոքները, վեր հանելով դրանց վերաբերյալ ձևավորված իրավակիրառ պրակտիկան, դրանցից վարույթ է ընդունում միայն բարձր շեմը հաղթահարող բողոքները՝ այդ բողոքներում բարձրացված իրավական հարցերով նախադեպային նշանակություն ունեցող որոշում արձակելու ակնկալիքով: Տարիներ շարունակ Վճռաբեկ դատարան ներկայացված բողոքներից որպես կանոն սահմանված նշանողը հաղթահարում է բողոքների մինչև 10%-ը (2020 թվականի ընթացքում ներկայացված 1630 բողոքներից վարույթ է ընդունվել 116-ը, այսինքն՝ 7,12%-ը):

Կրելով Հայաստանի Հանրապետությունում կանխատեսելի արդարադատության միջավայր ձևավորելու պատասխանատվությունը՝ Վճռաբեկ դատարանի գործունեությունը միտված է իրավունքի զարգացմանը, իրավակիրառ պրակտիկայի միասնականացմանն ու իրավունքի խախտումները վերացնելուն:

Ընթացիկ տարում ևս, իրավունքի զարգացման առաքելության իրագործման շրջանակներում, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից կայացվող նախադեպային նշանակություն ունեցող որոշումները շարունակել են հենվել միջազգային լավագույն փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, Միավորված ազգերի կազմակերպության բանաձևերի և հանձնարարականների վրա՝ դատական պրակտիկայում ծագող խնդրահարույց հարցերով ձևավորելով միասնական քաղաքականություն: 2020 թվականի ընթացքում ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից կայացված այդպիսի որոշումների թվաքանակը եղել է 85:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում այդ որոշումների հանրային իրազեկման ապահովումը, ինչը նաև հետագա իրավակիրառ պրակտիկայում մարդու իրավունքների շարունակական խախտումները բացատրելու և կանխատեսելի արդարադատության միջավայր ձևավորելու լավագույն միջոցներից է, եթե ոչ ամենալավագույնը: Հատկանշական է, որ սույն թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ են մտնելու ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերը, որպիսի պայմաններում առավել ընդարձակվելու է Վճռաբեկ դատարանի որոշումների դերակատարումը՝ որպես իրավունքի ծանրակշիռ աղբյուր՝ իրավակիրառ պրակտիկայում առաջացող հակասությունները բացատրելու և անորոշությունները հաղթահարելու առումով: Հետևաբար, խիստ կարևոր է ապահովել Վճռաբեկ դատարանում թե՛ գրավոր, թե՛ բանավոր ընթացակարգով կայացված որոշումների հանրային մատչելիությունը: Ընդ որում, այդ առումով, հանրային իրազեկման հասցեատերերն են ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական շրջանակները: Եթե մասնագիտական հանրությունը դրանք օգտագործում է իրավակիրառ պրակտիկայի և ակադեմիական հետազոտությունների կատարման համար, ապա ոչ մասնագիտական հանրությունը ստանում է իրավական դաստիարակություն, բարձրացվում է քաղաքացիական հասարակության անդամների իրավագիտակցությունը, բացահայտվում են իրավունքի պաշտպանության վահանն ամրացնելու հստակ ուղիները:

Հանրային իրազեկման վստահելի գործիքներից են նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախադեպային որոշումների հրապարակվող ժողովածուները, որոնք արժեքանական կարևոր աղբյուր են՝ բարձրագույն դատական ատյանի գործունեության ընթացքին հետևելու և նախադեպային նշանակություն ունեցող որոշումներին ծանոթանալու համար: Հրապարակվող ժողովածուները նաև կարևոր ուղենիշ են

դատավորների համար, որոնք իրենց առօրյա աշխատանքային գործունեության ընթացքում լուծում են համանման փաստական հանգամանքներ ունեցող գործեր կամ վեճեր: Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կողմնորոշիչ նշանակություն ունեն նաև իրավաստեղծ գործունեության համար, հանդիսանում են իրավագիտական մտքի զարգացման առաջընթացի աղբյուր:

Ներկայացվող ժողովածուն, որը ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումների 12-րդ հատորն է, իրենից ներկայացնում է՝ 2020 թվականի ընթացքում ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից կայացված որոշումների ընտրանի և ներառում է նախադեպային նշանակություն ունեցող 65 որոշում և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին 1 որոշում, որոնցում մշակվել են իրավակիրառ պրակտիկայում ծագող հիմնահարցերի լուծման, նյութական և դատավարական իրավունքի նորմերի մեկնաբանության առանցքային չափորոշիչներ:

Օրենքի միատեսակ կիրառության ապահովման և մարդու իրավունքների ու ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու սահմանադրական գործառույթների իրացման շրջանակներում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը մի շարք արժեքավոր նախադեպային որոշումներ է կայացրել՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերանայելիս վերադաս դատական ատյանի լիազորությունների շրջանակի, դատական որոշումների կատարման փուլում լուծվող հարցերի ընդդատության, ժամանակավոր կալանավորման և հանձնման համար կալանավորման բողոքարկման ժամկետների, ձերբակալման իրավաչափության վիճարկման պահանջների, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը բեկանելու ու գործը վերաբացելու համատեքստում անձի արդար դատաքնության իրավունքի պաշտպանության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հիմք հանդիսացող՝ նոր երևան եկած հանգամանքների, քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու պարագայում խուզարկություն քննչական գործողություն կատարելու իրավաչափության, խարդախության և կաշառք ստանալու հանցակազմերի հարաբերակցության, չավարտված հանցագործությունների դեպքում պատժի հաշվարկման առանձնահատկությունների և մի շարք այլ կարևոր իրավական հարցերի առնչությամբ, որոնք վերջին տարիներին ծառայել էին իրավակիրառողների առաջ:

Այսպես, գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերանայելիս վերադաս դատական ատյանի լիազորությունների խնդրին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Հրայր Հովսեփյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ին կայացված որոշմամբ: Հաշվի առնելով մի կողմից՝ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՄԴՌ-1459 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանի՝ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի կարգավորումների առնչությամբ Սահմանադրական դատարան ներկայացրած դիրքորոշումները, օրենքի կիրառման դատական պրակտիկայի միասնականության ապահովման սահմանադրական գործառույթի իրացման համատեքստում, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ թեև գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը, որպես կանոն, պետք է ավարտվի Վճռաբեկ դատարանում՝ վերջնական որոշում կայացնելու միջոցով, սակայն որոշ դեպքերում, անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների պաշտպանությունը, ինչպես նաև Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառույթային կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումը կարող է ապահովվել միայն Վճռաբեկ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու պարագայում: Այլ կերպ, այդ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից բացառապես գործը նոր քննության ուղարկելը կարող է լինել արդյունավետ միջոց՝ հետևողականորեն երաշխավորելու վերադասության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի անխախտելիությունը:

Նշված իրավական դիրքորոշումների համատեքստում, Վճռաբեկ դատարանն արժեքավոր իրավական դիրքորոշում է արտահայտել այն առնչությամբ, որ որոշ դեպքերում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերով գործը նոր քննության ուղարկելու իրավասությունը կարող է լինել դատական վերանայման իրավունքի իրացման նախապայման և արդար դատաքննության իրավունքի (դատարանի մատչելիության, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման) երաշխիք: Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ նման դեպքում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի իրավաչափությունը ստուգելիս, նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, պետք է կիրառելի լինեն գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերանայելիս ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները: Միևնույն ժամանակ, նշված որոշմամբ արձանագրվել է, որ արտահայտված իրավական դիրքորոշումները, վերաբերելի մասով (*mutatis mutandis*), կիրառելի են նաև գործն ըստ էության չյուծող դատական ակտերը վերանայելիս Վերաքննիչ դատարանի նույնաբնույթ լիազորությունների նկատմամբ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ձերբակալման իրավաչափության վիճարկման պահանջները Վճռաբեկ դատարանը մեկնաբանության է ենթարկել *Մարգիս Մանուկյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի որոշմամբ: Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ձերբակալման իրավաչափությունը վիճարկելու իրավունքի իրացմանը ներկայացվող կարգավորումները չպետք է այն աստիճան չափազանցվեն (*excessive formalism*), որ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդության քննության ընթացքում զուտ գրավոր բողոքի բացակայության նկատառումներով ձերբակալման իրավաչափության վերաբերյալ պաշտպանության կողմի փաստացի բողոքը թողնվի առանց քննության՝ բացառելով ձերբակալման օրինականության նկատմամբ դատական վերահսկողություն ապահովելու միջազգային և ներպետական պահանջը: Հակառակ մեկնաբանության դեպքում, կխախտվի անձի՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հիմնարար սահմանադրական և կոնվենցիոնալ իրավունքը: Մրանից ելնելով, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ կալանավորման միջնորդությունը քննելիս, ձերբակալման ընթացակարգի խախտման վերաբերյալ պաշտպանության կողմի յուրաքանչյուր փաստարկ, դատարանի կողմից պետք է արժանանա համարժեք իրավական գնահատականի և հանգեցնի համապատասխան իրավական հետևանքների՝ երաշխավորելու համար արգելանքի վերցված անձի իրավունքների և ազատությունների իրական և արդյունավետ պաշտպանությունը:

Հիշատակման է արժանի նաև ժամանակավոր կալանավորման և հանձնման համար կալանավորման բողոքարկման ժամկետների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ *Ադրաս Կարամիրի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի որոշումը: Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ կալանավորման մասին որոշման բողոքարկման հնգօրյա ժամկետի վերաբերյալ քրեադատավարական նորմի գործողությունը տարածվում է ինչպես քրեական գործով վարույթի ընթացքում կալանավորման՝ որպես խափանման միջոցի մասին, այնպես էլ ՀՀ

տարածքից դուրս հանցագործություն կատարած և ՀՀ տարածքում ձերբակալված անձին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը ստանալու, հանձնումը բացառող հանգամանքները պարզելու կամ հանձնումն ապահովելու նպատակներով կալանավորման եղանակով անձնական ազատությունից զրկելու մասին առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումների դեմ վերաքննիչ բողոքների վրա: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման հնգօրյա ժամկետը վերաբերում է ոչ միայն կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու, այլև նույն օրենսգրքի 478.2-րդ և 478.3-րդ հոդվածներով սահմանված՝ համապատասխանաբար՝ ժամանակավոր կալանավորման և հանձնման համար կալանավորման վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկմանը:

Հարկ է նաև վկայակոչել դատական որոշումների կատարման փուլում լուծվող հարցերի ընդդատության որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ *Արսեն Արծրունու* վերաբերյալ 2020 թվականի մայիսի 26-ի որոշումը: Այդ որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը գտել է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը կրկին քննարկման առարկա դարձնելու և դատարանի առջև բարձրացնելու համապատասխան ժամկետների հետ կապված իրավական վեճն ուղղակիորեն վերաբերում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցին, հանդիսանում է այդ ինստիտուտի կենսագործման համար անհրաժեշտ նախադրյալ: Հետևաբար դրա վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի գործողության կամ անգործության դեմ բերված բողոքը ևս ընդդատյա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ուշադրության է արժանի նաև քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելուց հետո անձի բնակարանում խուզարկություն քննչական գործողության կատարման իրավաչափության վերաբերյալ *Յուշա Խաչատրյանի* գործով 2020 թվականի հոկտեմբերի 28-ի որոշումը: Նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն պայմաններում, երբ մեղադրյալը համաձայնություն չի տվել վաղեմության ժամկետն անցնելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն և գործի վարույթը կարճելուն, ապա վարույթն իրականացնող մարմինը պարտավոր

է շարունակել գործի քննությունը, կատարել անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ՝ գործի բնականոն քննությունն ապահովելու և վերջնական դատավարական որոշում կայացնելու համար անհրաժեշտ իրավական և փաստական հիմքեր ձևավորելու, այդ թվում՝ քրեական գործը դատարան ուղարկելու և անձին դատական քննության փուլում իրեն առաջադրված մեղադրանքը վիճարկելու հնարավորություն տալու համար: Վճռաբեկ դատարանը գտել է, որ անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի նկատմամբ միջամտությունը չի կարող անհամաչափ գնահատվել զուտ այն փաստի ուժով, որ առերևույթ անցել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները: Հատկանշական է Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումը, որ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով վարույթի դադարեցման դեմ առարկելով մեղադրյալն ընդունում է իր որոշ իրավունքների հնարավոր սահմանափակման, իսկ արդյունքում նաև՝ իր մեղավորության հաստատման ռիսկը:

Նշվածից զատ, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, 2020 թվականի մայիսի 26-ի որոշմամբ, *Արթուր Մասցակյանյանի* գործով, դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով քրեական դատավարությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու ինստիտուտի սահմանադրականության հարցը, հաշվի առնելով, որ այն առանց օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի, դատական պաշտպանության, արդար դատաքննության և մեղսագրվող՝ քրեական օրենքով արգելված արարքից պաշտպանվելու հիմնարար իրավունքներից օգտվելու հնարավորությունների առումով տարբերակված մոտեցում է ենթադրում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ՝ հանգեցնելով քրեական վարույթին լիարժեք մասնակցելու և հիմնարար սահմանադրական իրավունքներից օգտվելու երաշխիքների անհամաչափ սահմանափակման: Նույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը բարձրացրել է նաև անվտանգության միջոցների կիրառման սահմանադրականության հարցեր՝ այնքանով, որքանով հասարակության համար վտանգ ներկայացնող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու և ազատությունից զրկելու այլընտրանքային միջոցի բացակայությունը, ինչպես նաև ազատությունից զրկելու իրավաչափության պարբերական վերանայման ընթացակարգի և առավելագույն ժամկետի բացակայությունը վտանգում են անձնական ազատության սահմանադրական իրավունքի պաշտպանության հիմնարար երաշխիքները:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Վճռաբեկ դատարանի վերը մեջբերված, ինչպես նաև չհիշատակված, սակայն սույն հատորյակում ներառված մյուս ոչ պակաս արժեքավոր որոշումներն այսուհետ կհամարեն իրավունքի աղբյուրների շարքը: Դրանք լայնորեն կօգտագործվեն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող ինչպես դատավորների, դատախազների, քննիչների վերապատրաստման ու թեկնածուների պատրաստման դասընթացներում, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ դասավանդման գործընթացում և իրավաբան-գիտնականների կողմից իրականացվող գիտական հետազոտություններում:

Կանխատեսելի արդարադատության հայեցակարգի զարգացմամբ իրավունքահեն միջավայրի կերտումը մեր տեսլականն է:

Լիահույս ենք, որ ներկայացված նախադեպային որոշումների մեր ընթերցողը սույն հատորյակում կգտնի իր համար հետաքրքրություն ներկայացնող իրավական խնդիրներ և բարձրագույն դատական աստիճանի կողմից դրանց տրված ինքնատիպ լուծումներ:

Լ.Զ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ,

ՀՀ վաստակավոր իրավաբան,

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2020 թվականի որոշումների ընտրանու սույն հատորի հրատարակումը հնարավոր է դարձել Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Ն-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվության հիմքը (ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդված)

Ն-I-1 Ա.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԿԴ/0002/01/18 (4², նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-1, Ն-XIII-2) 82

Ն-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ օրինականության սկզբունքը (ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդված)

Ն-II-1 Ա.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԿԴ/0002/01/18 (4, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-XIII-2) 82

Ն-III Մեկնաբանվող իրավադրույթներ՝ պատժի արդարացիությունը, պատժի նպատակները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները (ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածներ)

Ն-III-1 Ա.Արզումանյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0077/01/17 (60) 879
Ն-III-2 Գ.Վարտանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0289/01/17 (3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Դ-VI-2) 66

Ն-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի հետադարձ ուժը (ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդված)

Ն-IV-1 Շ.Ոսկանյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0042/01/17 (5) 97
Ն-IV-2 Վ.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԼԴԻ/0057/01/17 (42) 682

Ն-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցավորձը (ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդված)

Ն-V-1 Վ.Աստոնյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0056/01/16 (28, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XI-1, Ն-XII-1) 416

Ն-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված)

Ն-VI-1 Գ.Վարտանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0289/01/17 (3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-2, Դ-VI-2) 66

¹ Մույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Ն» տառով:

² Որոշման հերթական համարը:

Ն-VI-2 Հ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0021/01/19 (48, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-1, Դ-XVI-2)750

Ն-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելն իրադրության փոփոխման դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդված)

Ն-VII-1 Ա.Զալիսյանի վերաբերյալ որոշում, ԼԴ4/0013/01/18 (47, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIX-1) 739

Ն-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը (ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդված)

Ն-VIII-1 Ա.Բաղայանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0120/12/17 (38, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1)629

Ն-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը (ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդված)

Ն-IX-1 Ա.Բաղայանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0120/12/17 (38, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1)629

Ն-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ համաներումը (ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդված)

Ն-X-1 Ա.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0038/01/17 (2, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-1, Դ-VI-1) 49

Ն-X-2 Լ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0100/01/17 (41, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VI-3)666

Ն-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված)

Ն-XI-1 Վ.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0056/01/16 (28, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Ն-XII-1) 416

Ն-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպանակիքը (ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդված)

Ն-XII-1 Վ.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0056/01/16 (28, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Ն-XI-1) 416

Ն-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդված)

Ն-XIII-1 Ա.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0038/01/17 (2, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-1, Դ-VI-1) 49

Ն-XIII-2 Ա.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԿԴ/0002/01/18 (4, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-I-1) 82

Ն-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ խարդախությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված)

Ն-XIV-1 Լ.Հարությունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0079/01/16 (32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVII-1) 519

Ն-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված)

Ն-XV-1 Հ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0021/01/19 (48, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-2, Դ-XVI-2) 750

Ն-XV-2 Ս.Թորոսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0245/01/19 (49) 762

Ն-XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը (ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդված)

Ն-XVI-1 Վ.Մարգարյանի և Վ.Ներսիսյանի վերաբերյալ որոշում, ԳԴ5/0004/01/16 (29) 447

Ն-XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կաշառք ստանալը (ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդված)

Ն-XVII-1 Լ.Հարությունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0079/01/16 (32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIV-1) 519

Ն-XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը (ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդված)

Ն-XVIII-1 Ա.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0061/01/08 (6, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-2) 104

Ն-XVIII-2 Մ.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0080/01/08 (7, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-3) 122

Ն-XVIII-3 Ա.Շահինյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0104/01/08 (11, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-7) 202

Ն-XVIII-4 Դ.Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0067/01/08 (13, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-9) 234

Ն-XVIII-5 Խ.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0077/01/08 (14, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-10) 254

Ն-XVIII-6 ԱՀարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0083/01/08 (15, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-11) 272

Ն-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքային ծառայությունից խուսափելը (ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդված)

Ն-XIX-1 Ա.Զալիսյանի վերաբերյալ որոշում, ԼԴ4/0013/01/18 (47, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1) 739

Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Դ-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդված)

Դ-I-1 Ժ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0002/11/18 (20, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVII-1) 338

Դ-I-2 Ա.Կարամիի (Քարամիի) վերաբերյալ որոշում, ԵԴ/0853/06/18 (23, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIX-1, Դ-XXXII-1) 367

Դ-I-3 Հ.Պապոյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0231/13/18 (25, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXII-1) 383

Դ-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը և անձնական ազատությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդված)

Դ-II-1 Արման և Արքա Մադթյանների վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0152/01/19 (34, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IX-1) 569

Դ-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)

Դ-III-1 Ն.Ենգիբարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0016/11/18 (66) 964

Դ-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)

Դ-IV-1 Կ.Թարխանյանի վերաբերյալ որոշում, ԵԲՐԴ/0192/01/08 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-4, Դ-VIII-1) 141

Դ-IV-2 Դ.Աղայանի վերաբերյալ որոշում, ԵԲՐԴ/0286/01/08 (9, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-5, Դ-VIII-2) 161

Դ-IV-3 Վ.Ջեհանգիրյանի վերաբերյալ որոշում, ԵԲՐԴ/0197/01/08 (10, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-6, Դ-VIII-3) 179

Դ-IV-4 Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0100/01/08 (46, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-12, Դ-VIII-4) 723

Դ-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդված)

Դ-V-1 Դ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0070/01/16 (1, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXV-1, Դ-XXVI-1) 31

¹ Սույն դասակարգման մեջ դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Դ» տառով:

Դ-V-2 Ա.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0061/01/08 (6, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVIII-1)	104
Դ-V-3 Մ.Այվագյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0080/01/08 (7, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVIII-2)	122
Դ-V-4 Կ.Թարխանյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԴ/0192/01/08 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-1, Դ-VIII-1)	141
Դ-V-5 Դ.Աղայանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԴ/0286/01/08 (9, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-2, Դ-VIII-2)	161
Դ-V-6 Վ.Ջհանգիրյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԴ/0197/01/08 (10, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-3, Դ-VIII-3)	179
Դ-V-7 Ա.Շահինյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0104/01/08 (11, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVIII-3)	202
Դ-V-8 Ա.Բարեղամյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԴ/0205/01/08 (12)	214
Դ-V-9 Դ.Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0067/01/08 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVIII-4)	234
Դ-V-10 Խ.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0077/01/08 (14, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVIII-5)	254
Դ-V-11 Ս.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0083/01/08 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVIII-6)	272
Դ-V-12 Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0100/01/08 (46, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-4, Դ-VIII-4)	723
Դ-V-13 Վ.Գասպարիի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0065/01/08 (55)	837

Դ-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)

Դ-VI-1 Ա.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0038/01/17 (2, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-1, Ն-XIII-1)	49
Դ-VI-2 Գ.Վարտանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0289/01/17 (3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-2, Ն-VI-1)	66
Դ-VI-3 Լ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0100/01/17 (41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-2)	666
Դ-VI-4 Յ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/3085/07/19 (53, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XI-1)	809
Դ-VI-5 Յ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/3084/07/19 (54, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XI-2)	823
Դ-VI-6 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0363/01/19 (57)	865
Դ-VI-7 Ա.Բորումանդֆարի վերաբերյալ որոշում, ԵԴ/0201/01/18 (58)	874
Դ-VI-8 Մ.Կիրակոսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0201/01/15 (61)	910

Դ-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդված)

Դ-VII-1 Ա.Արծրունու վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0009/15/18 (36, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVIII-1, Դ-XXIX-1)597

Դ-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների ստուգումը, ապացույցների գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ, 127-րդ հոդվածներ)

Դ-VIII-1 Կ.Թարխանյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԴ/0192/01/08 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-1, Դ-V-4) 141

Դ-VIII-2 Դ.Աղայանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԴ/0286/01/08 (9, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-2, Դ-V-5) 161

Դ-VIII-3 Վ.Ջհանգիրյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԴ/0197/01/08 (10, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-3, Դ-V-6)179

Դ-VIII-4 Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0100/01/08 (46, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-4, Դ-V-12) 723

Դ-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված)

Դ-IX-1 Արման և Արքա Մաղաթյանների վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0152/01/19 (34, նույն որոշումը տե՛ս նաև Դ-II-1)569

Դ-IX-2 Հ.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0095/06/19 (39, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIII-3)644

Դ-IX-3 Վ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0548/06/19 (65) 951

Դ-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետների հաշվումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդված)

Դ-X-1 Ս.Միրզոևի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0018/06/18 (17)315

Դ-X-2 Ա.Մաղաթյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0002/06/19 (26, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIX-2)390

Դ-X-3 Ա.Տեր-Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0049/11/19 (33)562

Դ-X-4 Ա.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/2640/07/18 (37, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIX-4) 612

Դ-X-5 Ա.Դավթյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0014/11/18 (40)658

Դ-X-6 Ա.Կիրակոսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0008/06/19 (43)690

Դ-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ խուզարկություն կատարելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդված)

Դ-XI-1 Յ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/3085/07/19 (53, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VI-4) 809

Դ-XI-2 Յ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/3084/07/19 (54, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VI-5) 823

Դ-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդված)

Դ-XII-1 Ռ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1487/07/19 (51)789

Դ-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ձերբակալման բողոքարկման ընթացակարգը, ձերբակալման դեմ բողոքի բովանդակությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 289.1-րդ, 289.2-րդ հոդվածներ)

Դ-XIII-1 Ս.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0306/06/19 (27, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIV-1)400

Դ-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ձերբակալման դեմ բողոքի քննության կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 289.4-րդ հոդված)

Դ-XIV-1 Ս.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0306/06/19 (27, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIII-1)400

Դ-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)

Դ-XV-1 «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0009/11/18 (45, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVI-1)710

Դ-XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդված)

Դ-XVI-1 «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0009/11/18 (45, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XV-1)710

Դ-XVI-2 Հ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0021/01/19 (48, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-2, Ն-XV-1)750

Դ-XVI-3 Վ.Գասպարիի վերաբերյալ որոշում, ԵԴ/0554/11/19 (62) 925

Դ-XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդված)

Դ-XVII-1 Ժ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԱԲԴ/0002/11/18 (20, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-1) 338

Դ-XVII-2 Զ.Աֆյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0052/11/18 (44, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XX-2)697

Դ-XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդված)

Դ-XVIII-1 Վ.Ավդալյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0606/01/18 (18) 322

Դ-XVIII-2 Ֆ.Յեզանենիի վերաբերյալ որոշում, ԵԴ/0580/01/18 (22)360

Դ-XVIII-3 Վ.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0036/01/19 (24) 377

Դ-XVIII-4 Հ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0072/01/18 (56)857

Դ-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդված)

Դ-XIX-1 Ա.Կարամիի (Քարամիի) վերաբերյալ որոշում, ԵԴ/0853/06/18 (23, նույն որոշումը տե՛ս նաև Դ-1-2, Դ-XXXII-1) 367

Դ-XIX-2 Ա.Մաղաթյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0002/06/19 (26, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-2)390

Դ-XIX-3 Ռ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0026/15/09 (35)584

Դ-XIX-4 Ա.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/2640/07/18 (37, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-4) 612

Դ-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոքը և վարույթ ընդունելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդված)

Դ-XX-1 Ի.Փաշյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0605/11/18 (21) 353

Դ-XX-2 Զ.Աֆյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0052/11/18 (44, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVII-2)697

Դ-XX-3 Հ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0033/15/19 (59) 888

Դ-XX-4 Հ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0717/13/18 (63)934

Դ-XX-5 Ա.Դուկասյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0044/15/19 (64) 942

Դ-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ վերանայման առարկան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդված)

Դ-XXI-1 Հ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0426/11/18 (16, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIII-1, Դ-XXIV-1)288

Դ-XXI-2 Ռ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1488/07/19 (52) 800

Դ-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննության կարգով գործը քննող դատարանի կազմը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդված)

Դ-XXII-1 Հ.Պապոյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0231/13/18 (25, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-3) 383

Գ-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդված)

Գ-XXIII-1 Հ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0426/11/18 (16, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXI-1, Գ-XXIV-1)288
Գ-XXIII-2 Ս.Սմոլիկովի վերաբերյալ որոշում, ԵԴ/0312/06/19 (19) 330
Գ-XXIII-3 Հ.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0095/06/19 (39, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IX-2)644

Գ-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ վճռաբեկ դատարանում գործի քննության սահմանները, վճռաբեկ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ, 419-րդ հոդվածներ)

Գ-XXIV-1 Հ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0426/11/18 (16, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXI-1, Գ-XXIII-1)288

Գ-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդված)

Գ-XXV-1 Դ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0070/01/16 (1, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-1, Գ-XXVI-1)31
Գ-XXV-2 Գ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0186/11/16 (30, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVI-2) 483
Գ-XXV-3 Լ.Մեհրաբյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0005/11/10 (50, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVII-1)774

Գ-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր երևան եկած հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդված)

Գ-XXVI-1 Դ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0070/01/16 (1, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-1, Գ-XXV-1)31
Գ-XXVI-2 Գ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0186/11/16 (30, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXV-2) 483

Գ-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդված)

Գ-XXVII-1 Լ.Մեհրաբյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0005/11/10 (50, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXV-3)774

Դ-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատժից պայմանական վաղակետ ազատելը և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդված)

Դ-XXVIII-1 Ա.Արծրունու վերաբերյալ որոշում, ԱՐԴԴ/0009/15/18 (36, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VII-1, Դ-XXIX-1) 597

Դ-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերը լուծող դատարանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 437-րդ հոդված)

Դ-XXIX-1 Ա.Արծրունու վերաբերյալ որոշում, ԱՐԴԴ/0009/15/18 (36, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VII-1, Դ-XXVIII-1) 597

Դ-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մինչդատական վարույթը, այն անձանց իրավունքները, որոնց նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ, 456-րդ հոդվածներ)

Դ-XXX-1 Ա.Մնացականյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴԴ/0001/14/18, ԱՐԱԴԴ/0001/15/18 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXI-1) 493

Դ-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ հսկողության համար ազգականներին, խնամակալներին, հոգաբարձուներին հանձնելը, անձին հոգեբուժական կազմակերպությունում տեղավորելը և բուժելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ, 459-րդ հոդվածներ)

Դ-XXXI-1 Ա.Մնացականյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴԴ/0001/14/18, ԱՐԱԴԴ/0001/15/18 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXX-1) 493

Դ-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ժամանակավոր կալանավորման կարգը, հանձնելու համար կալանավորելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.2-րդ, 478.3-րդ հոդվածներ)

Դ-XXXII-1 Ա.Կարամիի (Քարամիի) վերաբերյալ որոշում, ԵԴ/0853/06/18 (23, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-2, Դ-XIX-1) 367

Աղբյուրների ցանկ թիվ 1
ՀՀ Սահմանադրության դրույթներ

ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(66)

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(23), (27), (31), (34), (39), (65)

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(31)

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(16), (23), (26), (27), (31), (35), (36), (37), (38), (59), (64)

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(16), (23), (26), (31), (35), (36), (37)

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(6), (7), (11), (13), (14), (15), (31), (55)

ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(1), (6), (7), (8), (9), (10), (11), (12), (13), (14), (15), (30), (46), (55)

ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(26)

ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(4), (5), (42)

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդված(2015 թվականի փոփոխություններով)
(16)

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(26), (31), (40), (43), (59) (64)

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(4), (16)

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(31)

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(16)

ՀՀ Սահմանադրության 172-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(16), (52)

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)
(17), (20), (21), (33), (44), (63)

Աղբյուրների ցանկ թիվ 2

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. *Abdulkhakov v. Russia*, 2012 թվականի հոկտեմբերի 1-ի վճիռ (31)
2. *Affaire Raihani c. Belgique*, 2015 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռ (35)
3. *Aquilina v. Malta*, 1999 թվականի ապրիլի 29-ի վճիռ (27)
4. *Assenov and Others v. Bulgaria*, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (66)
5. *Běleš and others c. Czech Republic*, 2002 թվականի
սոյեմբերի 12-ի վճիռ (35), (37)
6. *Bratyakin v. Russia*, 2006 թվականի մարտի 9-ի որոշում (1), (6), (7), (8), (9),
(10), (11), (12), (13), (14), (15), (46), (55)
7. *Brualla Gómez de la Torre v. Spain*, 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ (16)
8. *Bulgakova v. Russia*, 2007 թվականի հունվարի 18-ի վճիռ (30)
9. *Busuioc v. Moldova*, 2004 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռ (16)
10. *Cam v. Turkey*, 2016 թվականի փետրվարի 23-ի վճիռ (31)
11. *Efstathiou and others v. Greece*, 2006 թվականի հուլիսի 27-ի վճիռ (26), (27)
12. *Enver Sahin v. Turkey*, 2018 թվականի հունվարի 30-ի վճիռ (31)
13. *Erfar-Avef v. Greece*, 2014 թվականի մարտի 27-ի վճիռ (35), (37)
14. *Ergi v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռ (66)
15. *Fabris v. France [GC]*, 2013 թվականի փետրվարի 7-ի վճիռ (31)
16. *Gaspari v. Armenia*, 2020 թվականի մարտի 26-ի վճիռը (55)
17. *Glor v. Switzerland*, 2009 թվականի ապրիլի 30-ի վճիռ (31)
18. *Hirschhorn v. Romania*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ (26), (27)
19. *Khalifaoui v. France*, 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ (26), (27)
20. *Kiyutin v. Russia*, 2011 թվականի մարտի 10-ի վճիռ (31)
21. *Kovalev v. Russia*, 2007 թվականի մայիսի 10-ի վճիռ (31)
22. *Kronfeldner v. Germany*, 2012 թվականի հունվարի 19-ի վճիռ (31)
23. *Kuznetsova v. Russia*, 2007 թվականի հունիսի 7-ի վճիռ (1)
24. *Ladent v. Poland*, 2008 թվականի մարտի 18-ի վճիռ (27)
25. *Levages Prestations Services v. France*, 1996 թվականի
հոկտեմբերի 23-ի վճիռ (16)
26. *Luordo v. Italy*, 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռ (26), (27), (59), (64)
27. *M. v. Germany*, 2009 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռ (31)
28. *Mamikonyan v. Armenia*, 2010 թվականի մարտի 16-ի վճիռ (35), (37)

29. *Matevosyan v. Armenia*, 2019 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռ (7), (13), (14), (15)
30. *McCann and Others v. The United Kingdom*, 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռ (66)
31. *McKay v. The United Kingdom*, 2006 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռ (27)
32. *Meftah and Others v. France [GC]*, 2002 թվականի հուլիսի 26-ի վճիռ (16)
33. *Mehrabyan v. Armenia*, 2020 թվականի մարտի 19-ի վճիռ (50)
34. *Mihalache v. Romania*, 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռ (55)
35. *Mihalache v. Romania*, 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռ (6), (7), (8), (9), (10), (11), (12), (13), (14), (15), (46)
36. *Miragall Escolano and others v. Spain*, 2000 թվականի հունվարի 25-ի վճիռ (35), (37)
37. *Molla Sali v. Greece [GC]*, 2018 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ (31)
38. *Murtazaliyeva v. Russia*, 2018 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ (55)
39. *Mushegh Saghatelyan v. Armenia*, 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռ (6), (7), (8), (9), (10), (12), (13), (14), (15), (46), (55)
40. *Nachova and Others v. Bulgaria*, 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռ (66)
41. *O.H. v. Germany*, 2011 թվականի նոյեմբերի 24-ի վճիռ (31)
42. *RTBF v. Belgium*, 2011 թվականի մարտի 29-ի վճիռ (35), (37)
43. *Seliverstov v. Russia*, 2008 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռ (6), (7), (11), (13), (14), (15)
44. *Shtukurov v. Russia*, 2008 թվականի մարտի 24-ի վճիռ (31)
45. *Sialkowska v. Poland*, 2007 թվականի մարտի 22-ի վճիռ (16)
46. *Stanev v. Bulgaria*, 2012 թվականի հունվարի 17-ի վճիռ (26), (27), (59), (64)
47. *Staroszczyk v. Poland*, 2007 թվականի մարտի 22-ի վճիռ (16), (26), (27), (59), (64)
48. *Stephens v. Malta* (թիվ 2), 2009 թվականի ապրիլի 21-ի վճիռ (27)
49. *Storck v. Germany*, 2005 թվականի հունիսի 16-ի վճիռ (31)
50. *The Sunday Times v. the United Kingdom*, 1979 թվականի ապրիլի 26-ի վճիռ(16)
51. *Vaudelle v. France*, 2001 թվականի հունվարի 30-ի վճիռ (31)
52. *Walchli v. France*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ (26), (27)
53. *Osman v. the United Kingdom*, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (66)

Աղբյուրների ցանկ թիվ 3
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

1. ՄԴՆ-690, 2007 թվականի ապրիլի 9 (16)
2. ՄԴՆ-719, 2007 թվականի նոյեմբերի 28 (16), (52)
3. ՄԴՆ-765, 2008 թվականի հոկտեմբերի 8 (16)
4. ՄԴՆ-827, 2009 թվականի սեպտեմբերի 12 (31)
5. ՄԴՆ-849, 2009 թվականի դեկտեմբերի 22 (16)
6. ՄԴՆ-852, 2010 թվականի հունվարի 19 (16)
7. ՄԴՆ-881, 2010 թվականի մայիսի 4 (31)
8. ՄԴՆ-935, 2011 թվականի փետրվարի 4 (30)
9. ՄԴՆ-936, 2011 թվականի փետրվարի 8 (16)
10. ՄԴՆ-997, 2011 թվականի նոյեմբերի 15 (16)
11. ՄԴՆ-1052, 2012 թվականի հոկտեմբերի 16 (35), (37)
12. ՄԴՆ-1139, 2014 թվականի փետրվարի 18 (1)
13. ՄԴՆ-1197, 2015 թվականի ապրիլի 7 (31)
14. ՄԴՆ-1224, 2015 թվականի հուլիսի 7 (31)
15. ՄԴՆ-1270, 2016 թվականի մայիսի 3 (16)
16. ՄԴՆ-1348, 2017 թվականի փետրվարի 14 (5), (42)
17. ՄԴՆ-1420, 2018 թվականի հունիսի 19 (21), (26), (27), (35), (37), (59), (63), (64)
18. ՄԴՆ-1421, 2018 թվականի հունիսի 26 (18), (22), (24), (56)
19. ՄԴՆ-1431, 2018 թվականի հոկտեմբերի 23 (6), (7), (8), (9), (10), (11), (12), (13), (14), (15), (46), (55)
20. ՄԴՆ-1439, 2019 թվականի հունվարի 22 (36)
21. ՄԴՆ-1452, 2019 թվականի ապրիլի 2 (16)
22. ՄԴՆ-1459, 2019 թվականի մայիսի 7 (16), (19), (39)
23. ՄԴՆ-1480, 2019 թվականի հոկտեմբերի 15 (31)
24. ՄԴՆ-1487, 2019 թվականի նոյեմբերի 6 (22), (24), (56)

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԴՅ/0070/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹՎԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏԻՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազներ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ս.ՅՈՒԶԲԱՇՅԱՆԻ
Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

*տուժողի իրավահաջորդ՝
տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ՝
շահագրգիռ անձ՝
պաշտպան՝*

Հ.ՀԱՄԲԱՐՅԱՆԻ
Հ.ՀԱՄԲԱՐՅԱՆԻ
Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
Մ.ՇԽԻՄՅԱՆԻ

2020 թվականի հունվարի 10-ին

ք.Երևանում

դոնրաց դատական նիստում, քննության առնելով նոր երևան եկած հանգամանքի հիմքով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի մայիսի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայագորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 90857615 քրեական

գործը՝ շարքային Հարություն Հրայրի Համբարյանի՝ հրազենային մահացու վիրավորում ստանալու փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի մայիսի 23-ի որոշմամբ Դավիթ Արմենի Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով և 360-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ):

2015 թվականի հունիսի 4-ին որոշում է կայացվել Հրայր Հարությունի Համբարյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի նոյեմբերի 11-ի, 12-ի և 13-ի որոշումներով որպես մեղադրյալ են ներգրավվել նաև Արթուր Վիլենի Սևումյանը, Հայկազ Սամվելի Մաթևոսյանը, Հովհաննես Գևորգի Մելքոնյանը, Սմբատ Սուրենի Հայրապետյանը:

2016 թվականի մայիսի 17-ին նախաքննության մարմինը, Հարություն Հրայրի Համբարյանին ինքնասպանության հասցնելու փաստով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում է կայացրել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

2. 2016 թվականի մայիսի 30-ին թիվ 90857615 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Դավիթ Արմենի Հարությունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, 360-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ), և մյուսների, ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ ըստ էության քննելու համար:

2.1. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ Դ. Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով և 360-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով: Նշված որոշման դեմ տուժողի իրավահաջորդի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ մերժել է: Նշված որոշման դեմ տուժողի իրավահաջորդի և նրա ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ մերժվել է:

3. Նախաքննության մարմնի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2016 թվականի մայիսի 17-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի բողոքը թիվ 3 կայագրի գինվորական դատախազի՝ 2016 թվականի հունիսի 27-ի որոշմամբ մերժվել է:

3.1. Տուժողի իրավահաջորդի բողոքի քննության արդյունքում, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, 2017 թվականի հունվարի 17-ի որոշմամբ այն բավարարել է և արձանագրել

տուժող Հարություն Համբարյանի ու տուժողի իրավահաջորդ Հ.Համբարյանի իրավունքների և ազատությունների խախտումները՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել դրանք:

4. Թիվ 3 կայագրի զինվորական դատախազի՝ 2017 թվականի մայիսի 17-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մայիսի 17-ի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացվել է և քրեական գործով նախաքննությունը վերսկսվել է:

4.1. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ թիվ 90857615 քրեական գործի նյութերով հարուցվել է նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով, այն առանձնացվել է առանձին վարույթում, որին շնորհվել է 90800318 համարը:

5. 2019 թվականի հունիսի 26-ին ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունում ստացվել է տուժողի իրավահաջորդ Հ.Համբարյանի հայտարարությունը, որով վերջինս խնդրել է նոր երևան եկած հանգամանքներով վարույթ հարուցել և հանձնարարել դատական ակտեր կայացնելիս դատարաններին անհայտ մնացած հանգամանքների առթիվ կատարել քննություն:

5.1. Նախաքննության մարմինը 2019 թվականի հունիսի 27-ին որոշում է կայացրել նոր երևան եկած հանգամանքների հիմքով վարույթ հարուցելու մասին:

5.2. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ թիվ 90800318 քրեական գործի վարույթը կարճվել է, քրեական հետապնդումը՝ դադարեցվել:

5.3. ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժնի ավագ դատախազ Ս.Յուզբաշյանի՝ 2019 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հուլիսի 17-ի վերոգրյալ որոշումը վերացվել է, և գործն ուղարկվել է նախաքննությունը շարունակելու համար՝ հետագայում միացվելով թիվ 90857615 քրեական գործին:

5.4. ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժնի ավագ դատախազ Ս.Յուզբաշյանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ թիվ 90800318 քրեական գործը միացվել է 90857615 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 90857615 համարով:

6. 2019 թվականի նոյեմբերի 19-ին Վճռաբեկ դատարանում ստացվել է Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումները նոր երևան

եկած հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը: Վճռաբեկ դատարանը 2019 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ հարուցել է դատական ակտի վերանայման վարույթ և վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

2019 թվականի դեկտեմբերի 20-ին Գ.Հարությունյանի և նրա պաշտպանի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոքի պատասխան, որով վերջիններս խնդրել են մերժել դատախազի վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Նախաքննության մարմնի՝ հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն նշանակելու մասին 2015 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ առաջադրված հարցերին պատասխանելիս փորձագիտական հանձնաժողովը, **Հարություն Համբարյանի հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննության թիվ 26/16 եզրակացությամբ** հանգել է հետևության, որ. «(...) *Ըստ քրեական գործում առկա նյութերի, մեղադրյալներ Գ.Հարությունյանի, Ա.Սևումյանի, Հ.Մաթևոսյանի, Հ.Մելքոնյանի և Ս.Հայրապետյանի արարքների (անգործության) և Հ.Համբարյանի կողմից ինքնասպանություն կատարելուն նախորդող հոգեվիճակի միջև պատճառահետևանքային կապեր գոյություն չունեն (...)»¹:*

8. Նախաքննության մարմինը, հղում կատարելով Հ.Համբարյանի հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննության թիվ 26/16 եզրակացությանը, 2016 թվականի մայիսի 17-ի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ հանգել է հետևության առ այն, որ որևէ անձի կողմից Հ.Համբարյանի նկատմամբ այնպիսի գործողություններ կամ անգործություն, որոնք կհասցնեին նրան ինքնասպանության կամ կհանդիսանային ինքնասպանության պատճառ, առիթ, չեն եղել և նրա կողմից ինքնասպանություն գործելը պատճառահետևանքային կապի մեջ չի գտնվում որևէ անձի հանցավոր գործողության հետ, հետևաբար անհրաժեշտ է Հ.Համբարյանին ինքնասպանության հասցնելու փաստով քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով²:

9. Նախաքննության մարմինը Դավիթ Հարությունյանին որպես մեղադրյալ է ներգրավել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 33-43:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 130-135:

մատով և 360-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ), այն բանի համար, որ նա. «(...) հանդիսանալով ՊԲ 49971 գորամասի զենիթահրթիռային դասակի 2-րդ դյուրակիր զենիթահրթիռային համալիր ջոկի ավագ հրաձիգ-զենիթահար, ժամկերային զինծառայող, կոչումով շարքային, 2015 թվականի մարտի 06-ին ժամը 14:40-ի սահմաններում զենիթահրթիռային դասակի ննջարանում խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները՝ ՀՀ ՁՈԻ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ՁՈԻ կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածների պահանջները՝ կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության հետ, նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, նույն ջոկի հրաձիգ-զենիթահար, ժամկերային զինծառայող, շարքային Հարություն Հրայրի Համբարյանի կողմից մահճակալը տեղափոխելու պարճառով վիճարանել է վերջինիս հետ և համաժառայողների շրջանում իր անձի վարկանիշը բարձրացնելու, կոլեկտիվում արտոնյալ դիրքի հասնելու և իր թվացյալ գերակայությունն ընդգծելու շարժառիթներով, այլ բռնի գործողություններ է կատարել շարքային Հարություն Հրայրի Համբարյանի նկատմամբ՝ երկու ձեռքով հարվածել է նրա կրծքավանդակին:

Բացի այդ, շարքային Դավիթ Արմենի Հարությունյանը նշանակված լինելով մարտական հերթապահության նույն գորամասի հրամանատարական կետում, 2015 թվականի մայիսի 8-ին ժամը 10:00-ի սահմաններում կապի հանգույցի սենյակում, խախտելով ՀՀ ՁՈԻ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ՁՈԻ կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածների պահանջները՝ կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության հետ, նախորդ օրը շարքային Հարություն Հրայրի Համբարյանի կողմից հրամանատարական սենյակը լավ չմաքրելու պարճառով, համաժառայողների շրջանում իր անձի վարկանիշը բարձրացնելու, կոլեկտիվում արտոնյալ դիրքի հասնելու, իր թվացյալ գերակայությունն ընդգծելու շարժառիթներով, վիրավորանք է հասցրել վերջինիս հայիոյանք փվել և ձեռքով մեկ անգամ հրել նրա ուսին՝ դրանով իսկ անպարկեշտ ձևով ստորացնելով Հարություն Հրայրի Համբարյանի պարիվն ու արժանապարվությունը:

Բացի այդ, շարքային Դավիթ Արմենի Հարությունյանը նշանակված լինելով մարտական հերթապահության նույն գորամասի հրամանատարական կետում, 2015 թվականի մայիսի 8-ին ժամը 14:20-ի սահմաններում հրամանատարական կետի ամառային տաղավարի մոտ, խախտելով ՀՀ ՁՈԻ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ և ՀՀ ՁՈԻ կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածների պահանջները՝

կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության հետ, նույն օրը հրամանատարական սենյակը լավ չմտքրելու համար շարքային Հարություն Հրայրի Համբարյանի հետ տեղի ունեցած խոսակցության կապակցությամբ պարզաբանումներ կատարելու ընթացքում, համաձայնությունների շրջանում իր անձի վարկանիշը բարձրացնելու, կոլեկտիվում արտոնյալ դիրքի հասնելու, իր թվացյալ գերակայությունն ընդգծելու շարժառիթներով, վիրավորանք է հասցրել՝ հայհոյել վերջինիս, դրանով իսկ անպարկեշտ ձևով ստորացնելով Հարություն Հրայրի Համբարյանի պարիվն ու արժանապատվությունը: (...)»¹:

10. Քննության առնելով նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մայիսի 17-ի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Հ.Համբարյանի բողոքը, Առաջին ատյանի դատարանը, 2017 թվականի հունվարի 17-ի որոշմամբ, ի թիվս այլնի, փաստել է, որ տուժող Հ.Համբարյանի մահվան դեպքի շուրջ նախաքննության մարմինը պատշաճ մակարդակի մանրակրկիտ քննություն չի իրականացրել, մասնավորապես՝ պարզման ենթակա որոշ հարցերի շուրջ առհասարակ քննություն չի իրականացվել, իսկ որոշ հարցերի շուրջ այն իրականացվել է ոչ լրիվ: Դատարանն իր որոշմամբ հաստատված չհամարելով Հ.Համբարյանի կողմից ինքնասպանություն կատարելու վարկածը և մատնանշելով կատարման ենթակա գործողությունների ամբողջությունը, միաժամանակ փաստել է, որ. «(...) [Թ]իվ 26/16 հետմահու դատահոգեբանական և դատահոգեբանական համալիր փորձաքննության եզրակացությունը պարզ է, ամբողջական, կասկած չի հարուցում և հարցեր չի առաջացնում: Հոգեբույժ և հոգեբան չորս փորձագետներ համապարասխան գիտական մեթոդիկայի կիրառմամբ խորությամբ վերլուծել են քրեական գործով իրենց տրամադրած նյութերը և միաձայն եզրահանգել, որ մեղադրյալներ Դ.Հարությունյանի, Ա.Սևումյանի, Հ.Մաթևոսյանի, Հ.Մելքոնյանի, Ս.Հայրապետյանի մեղսագրվող արարքները և Հարություն Համբարյանի «ինքնասպանությունը» պարճառահետևանքային կապի մեջ չեն գրնվում, որպիսի պայմաններում Դատարանը գրնում է, որ տուժողի իրավահաջորդի բողոքը այս մասով հիմնազուրկ է (...)»²:

11. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 17-ի որոշման հիման վրա վերսկսված նախաքննության շրջանակներում, ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայազորի զինվորական դատախազ Կ.Աղաբեկյանի կողմից նախաքննության մարմնին տրվել է գրավոր

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 157-171:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 3-24:

ցուցում՝ նշանակել **Հարություն Համբարյանի հետմահու հանձնաժողովային դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն**¹: Նշված ցուցումի հիման վրա, 2017 թվականի մայիսի 12-ին նախաքննության մարմինը նշանակել է **հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր հանձնաժողովային փորձաքննություն՝ փորձագետներին առաջադրելով 2015 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ առաջադրված նույն հարցերը**²:

11.1. 2018 թվականի հունիսի 14-ին ստացված՝ Հ.Համբարյանի հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննության թիվ 223/2/18 եզրակացության համաձայն՝ *«Դավիթ Հարությունյանի գործողությունների և մահվանը նախորդող ժամանակահատվածում Հարություն Համբարյանի ունեցած հոգեվիճակի միջև առկա է պարճատահերևանքային կապ»*³:

11.2. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունվարի 31-ի որոշմամբ թիվ 90800318 քրեական գործով նշանակվել է հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր հանձնաժողովային կրկնակի փորձաքննություն⁴:

11.3. 2019 թվականի հունիսի 3-ին ստացված՝ դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր հանձնաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 19-0361 եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը. *«(...) Մահվանը նախորդող ժամանակահատվածում Հարություն Համբարյանը գտնվել է խիստ ընկճված հոգեվիճակում, որը պարճատահերևանքային կապի մեջ է գտնվել Դավիթ Հարությունյանի գործողությունների հետ, [որի մասին են վկայում] Դավիթ Հարությունյանի և Հարություն Համբարյանի կոնֆլիկտային փոխհարաբերությունների հաճախականությունը, դեպքին անմիջականորեն նախորդելու հանգամանքը, Դավիթ Հարությունյանի կողմից Հարություն Համբարյանին ուղղված հայտյանքների բնույթը: (...) Դ.Հարությունյանի գործողությունների և մահվանը նախորդող ժամանակահատվածում Հ.Համբարյանի ունեցած հոգեվիճակի միջև առկա է պարճատահերևանքային կապ (...)*⁵:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 93:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 109-124:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 303-480:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 20-րդ, թերթեր 79-90:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 20-րդ, թերթեր 139-321:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով.

12. Բողոքաբերը նշել է, որ թիվ 90800318 քրեական գործի նախաքննությամբ ստացվել է դատարանների համար դատական ակտ կայացնելիս անհայտ մնացած հանգամանք, մասնավորապես՝ հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր հանձնաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 19-0361 եզրակացությունը, որի համաձայն՝ մահվանը նախորդող ժամանակահատվածում Հ.Համբարյանը գտնվել է խիստ ընկճված հոգեվիճակում, ինչը պատճառահետևանքային կապի մեջ է գտնվել Դ.Հարությունյանի գործողությունների հետ, որի առկայությունը հաստատվում է վերջինիս և Հ.Համբարյանի կոնֆլիկտային փոխհարաբերությունների հաճախականությամբ, դեպքին անմիջականորեն նախորդելու հանգամանքով, Դ.Հարությունյանի կողմից Հ.Համբարյանին ուղղված հայհոյանքների բնույթով:

Ըստ բողոք բերած անձի, նշված փորձաքննության եզրակացությամբ հաստատվել է նաև թիվ 90857615 քրեական գործով ստացված հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր հանձնաժողովային փորձաքննության թիվ 223/2/18 եզրակացության հետևությունն այն մասին, որ Դ.Հարությունյանի գործողությունների և մահվանը նախորդող ժամանակահատվածում Հ.Համբարյանի ունեցած հոգեվիճակի միջև առկա է պատճառահետևանքային կապ:

Բողոքի հեղինակը գտել է, որ տվյալ դեպքում նոր երևան եկած հանգամանքի կապակցությամբ իրականացված վարույթի ընթացքում հաստատվել է, որ Դ.Հարությունյանի կողմից Հ.Համբարյանի նկատմամբ գործադրած բռնությունը, հասցված վիրավորանքները թեն հայտնի են եղել նախաքննության ընթացքում և դատարաններին, սակայն բռնության և հայհոյանքների բնույթի, վերջիններիս կոնֆլիկտային փոխհարաբերությունների հաճախականության, դեպքին անմիջականորեն նախորդելու հանգամանքներով պայմանավորված, մահվանը նախորդող ժամանակահատվածում Հ.Համբարյանի խիստ ընկճված հոգեվիճակում գտնվելու, ծանր հետևանքների առաջացման և այն Դ.Հարությունյանի գործողությունների հետ պատճառահետևանքային կապի մեջ գտնվելու հանգամանքները դատարաններին հայտնի չեն եղել և ձեռք են բերվել Դ.Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:

Բողոքաբերն արձանագրել է, որ սույն գործով որպես նոր երևան եկած հանգամանք հանդիսացող փորձաքննության եզրակացությամբ հաստատված տվյալները ձեռք են բերվել տուժողի իրավունքների

խախտումը վերացնելու և կյանքից զրկվելու դեպքի կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու պետության պարտավորության կատարման շրջանակներում ձեռնարկված միջոցների արդյունքում, որոնք պատշաճ կարգով կարող են հետագոտվել ու գնահատվել գործի նոր քննության ընթացքում: Հետևաբար, ըստ բողոքի հեղինակի, ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, 360-րդ հոդվածի 1-ին մասով և 360-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով Դ.Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի որոշումը և այն անփոխոյ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումները ենթակա են բեկանման:

13. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է վերանայել Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 23-ի որոշումը և բեկանել Դավիթ Հարությունյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի որոշումն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումը, և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք 2019 թվականի հունիսի 3-ին ստացված՝ հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր հանձնաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 19-0361 եզրակացությունը, սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում, կարող է հիմք հանդիսանալ Դավիթ Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են, եթե՝*

(...)

4) ի հայր են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայր մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչև այդ պարզված հանգամանքների հետ պայացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կարարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև պայացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկարմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է:

(...):

2. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար բողոք կարող է բերվել 4 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայր գալու մասին: (...)»:

16. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը, լինելով օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտերի վերանայման բացառիկ եղանակ, հնարավորություն է տալիս ուղղել թույլ տրված հնարավոր դատական սխալները, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները: Նշված նպատակի կենսագործման համար նոր երևան եկած հանգամանքները, ի թիվս այլոց, հիմնականում բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

ա) պետք է հայտնի եղած չլինեն դատարանին դատական ակտ կայացնելիս՝ վերջինիս կամքից անկախ պատճառներով,

բ) պետք է գործի համար ունենան էական նշանակություն՝ պայմանավորված գործի ելքի վրա դրանց անմիջական ազդեցության հնարավորությամբ,

գ) պետք է գոյություն ունեցած լինեն օբյեկտիվ իրականությունում մինչև դատական ակտի կայացումը, սակայն բացահայտված լինեն (ի հայտ գան) դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո,

դ) պետք է առերևույթ կասկածի տակ դնեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավաչափությունը:

Նշված հատկանիշներին համապատասխանող նոր երևան եկած հանգամանքները, հանգեցնելով դատական ակտի վերանայման, կարող են իրենց ազդեցությունն ունենալ անձի մեղավորության, մեղսագրված արարքի հանցավորության կամ դրա ծանրության որոշման վրա:

17. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «(...) Ոչ ոք չպետք է կրկին անգամ դատվի կամ պարժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատախազության իրավունքին համապատասխան: (...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարծվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կեղծի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը րվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

18. Մեջբերված դրույթի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ՝

- գործի նորոգումը նոր երևան եկած հանգամանքների հիման վրա ինքնին չի հակասում իրավական որոշակիության սկզբունքին՝ այնքանով, որքանով այն օգտագործվում է արդարադատության սխալներն ուղղելու համար: Դատարանի խնդիրն է պարզել՝ արդյո՞ք ընթացակարգը կիրառվել է այնպես, որ համահունչ է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին¹,

- պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ²:

19. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kuznetsova v. Russia* գործով 2007 թվականի հունիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 67579/01, կետ 40:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Brataykin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

գրել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար»:

20. ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել է, որ «(...) Կրկին դատվելու անթույլատրելիության պահանջը (սկզբունքը) (...) իր բովանդակությամբ (մեկնաբանմամբ) ենթադրում է պետության պարտականությունը՝ նույն արարքի համար անձին կրկին անգամ պարտելը, դատելը և քրեական հետապնդման ենթարկելը բացառելը: Իր սահմանադրափրավական բովանդակությամբ՝ այդ սկզբունքի հիմքում (քրեափրավական իմաստով) դրված է այն գաղափարը, որ ոչ ոք չի կարող նույն արարքի համար կրկին դատվել: Այդ սկզբունքը նաև բացառում է միևնույն հանցագործության որակումը քրեական օրենսգրքի մեկից ավելի հոդվածներով, արգելում է նաև միևնույն հանգամանքը հաշվի առնել ինչպես հանցանքը որակելիս, այնպես էլ պարտի տեսակն ու չափն ընտրելիս (ՀՀ քր.օր-ի 10, 63, 104-րդ հոդվածներ): Այսպիսով, նախկինում հանցանք կատարած լինելու փաստը, եթե անձը դրա համար արդեն դատվել է, չի կարող նրա հետագա վարքագծի քրեափրավական գնահատականի հիմք հանդիսանալ, «բացառությամբ այն դեպքերի», ինչպես Վճռել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել արդյունքի վրա»¹:

21. Սույն որոշման 15-20-րդ կետերում վկայակոչված իրավադրոյթների և արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատական ակտերի վերանայման կառուցակարգում ևս կարևորվում է անձի իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության երաշխիքների ապահովումը: Մասնավորապես, նշված կառուցակարգը, պայմանավորված օրինական ուժի մեջ մտած և վերջնական դատական ակտերի վերանայման առանձնահատկություններով, պահանջում է պատշաճ ուշադրության արժանացնել անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով նախատեսված իրավական երաշխիքների ապահովումը: Նկատի ունենալով, որ դատական ակտերի վերանայումն անմիջականորեն հարաբերակցվում է նաև անձի՝ կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի հետ, ուստի նշված կառուցակարգը

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2014 թվականի փետրվարի 18-ի թիվ ՍԴՌ-1139 որոշումը, կետ 7-րդ:

գործադրելիս անհրաժեշտ է գնահատման ենթարկել նաև այս սկզբունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ իրավական երաշխիքների ամբողջությունը՝ ապահովելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունության և թույլ տրված հնարավոր դատական սխալների վերացման անհրաժեշտության միջև **արդարացի հավասարակշռությունը**, ինչը պետք է անվերապահորեն ուղեկցվի նաև անձի արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող երաշխիքների պաշտպանությամբ:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- նախաքննության մարմինը, հիմք ընդունելով Հ.Համբարյանի՝ հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննության թիվ 26/16 եզրակացությունն այն մասին, որ Դ.Հարությունյանի արարքների և Հ.Համբարյանի կողմից ինքնասպանություն կատարելուն նախորդող հոգեվիճակի միջև պատճառահետևանքային կապեր գոյություն չեն ունեցել, 2016 թվականի մայիսի 17-ին որոշում է կայացրել Հ.Համբարյանին ինքնասպանության հասցնելու փաստով քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով¹,

- նախաքննության մարմինը 2015 թվականի մայիսի 23-ի որոշմամբ Դ.Հարությունյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ զինձառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու համար՝ նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում և ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով՝ գորամասում զինձառայողին վիրավորանք հասցնելու, զինձառայողի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելու համար՝ մեկ այլ զինձառայողի կողմից²: Նշված մեղադրանքով քրեական գործն ուղարկվել է Առաջին ատյանի դատարան, որտեղ 2017 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ, Դ.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով և 360-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով: Հիշյալ որոշման դեմ տուժողի իրավահաջորդի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ մերժվել է: Նշված որոշման դեմ տուժողի իրավահաջորդի և նրա ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ մերժվել է³,

¹ Տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 2-2.1.-րդ կետերը:

- նախաքննության մարմնի 2016 թվականի մայիսի 17-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի բողոքի քննության արդյունքում, Մյունխիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, 2017 թվականի հունվարի 17-ի որոշմամբ բողոքը բավարարել է և արձանագրել տուժող Հարություն Համբարյանի ու տուժողի իրավահաջորդ Հ.Համբարյանի իրավունքների և ազատությունների խախտումները՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել դրանք: **Մինևույն ժամանակ, անդրադառնալով հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննության թիվ 26/16 եզրակացությանը՝ դատարանը նշել է, որ այն պարզ է, ամբողջական, կասկած չի հարուցում և հարցեր չի առաջացնում: Առաջին ատյանի դատարանը գտել է, որ տուժողի իրավահաջորդի բողոքն այս մասով հիմնազուրկ է: Առաջին ատյանի դատարանն անհրաժեշտ է համարել Հ.Համբարյանի մահվան դեպքի շուրջ պատշաճ նախաքննության կատարումը՝ հաստատված չհամարելով Հ.Համբարյանի կողմից ինքնասպանություն կատարելու վարկածը¹,**

- վերսկսված նախաքննության շրջանակներում, դատախազի կողմից տրված ցուցումի հիման վրա, նախաքննության մարմինը 2017 թվականի մայիսի 12-ին նշանակել է **Հարություն Համբարյանի հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր հանձնաժողովային նոր փորձաքննություն՝ փորձագետներին առաջադրելով այն նույն հարցերը, որոնք առաջարված են եղել հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննության թիվ 26/16 եզրակացությունը կազմած փորձագետներին²,**

- Հ.Համբարյանի հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննության նոր՝ թիվ 223/2/18 եզրակացության համաձայն՝ Դ.Հարությունյանի գործողությունների և մահվանը նախորդող ժամանակահատվածում Հ.Համբարյանի ունեցած հոգեվիճակի միջև առկա է պատճառահետևանքային կապ³,

- նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունվարի 31-ին նշանակված՝ հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր հանձնաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 19-0361 եզրակացությամբ ևս արձանագրվել է, որ մահվանը նախորդող ժամանակահատվածում Հ.Համբարյանը գտնվել է խիստ ընկճված

¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 11.1.-րդ կետը:

հոգեվիճակում, որը պատճառահետևանքային կապի մեջ է գտնվել Դ.Հարությունյանի գործողությունների հետ¹:

23. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-21-րդ կետերում վկայակոչված դրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների յույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Համբարյանի մահվան կապակցությամբ իրականացված նախաքննության ընթացքում ստացված թիվ 26/16 փորձագիտական եզրակացությամբ, ի սկզբանե, հերքվել է Հ.Համբարյանի մահվան և Դ.Հարությունյանի գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որ նշված փորձագիտական եզրակացությունը ստանալուց հետո դրա հիմնավորվածությունը և արժանահավատությունը կասկածի տակ չի դրվել ո՛չ նախաքննության մարմնի, ո՛չ էլ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից: Ավելին, նշված փորձագիտական եզրակացության հաշվառմամբ, Հ.Համբարյանին ինքնասպանության հասցնելու փաստով, նախաքննության մարմինը 2016 թվականի մայիսի 17-ին քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում է կայացրել՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ: Արդյունքում, նախաքննության մարմինը Դ.Հարությունյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով և 360-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով, ու քրեական գործն ըստ էության քննության համար ուղարկել Առաջին ատյանի դատարան, որտեղ Դ.Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Նշված փաստական հանգամանքների պայմաններում, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ուշադրության արժանացնել նաև այն առանցքային հանգամանքը, որ վերոնշյալ փորձագիտական եզրակացության հիմնավորվածությունը և արժանահավատությունը կասկածի տակ չի դրվել նաև Մյունխի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից, որը քննել է նախաքննության մարմնի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2016 թվականի մայիսի 17-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի բողոքը, և որի կողմից վերջինիս բողոքը բավարարելու արդյունքում կայացված որոշման հիման վրա է վերսկսվել քրեական գործով նախաքննությունը:

¹ Տե՛ս սույն որոշման 11.2.-11.3.-րդ կետերը:

Վճռարեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի կողմից նախանշված հետագա նախաքննության սահմաններն ընդգրկել են կատարման ենթակա անհրաժեշտ գործողությունների շրջանակ, որոնք առանց կասկածի տակ դնելու փորձագիտական թիվ 26/16 եզրակացության հիմնավորվածությունն ու արժանահավատությունը, միտված են եղել Հ.Համբարյանի մահվան դեպքի շուրջ պատշաճ նախաքննություն կատարելուն՝ միաժամանակ հաստատված չհամարելով Հ.Համբարյանի կողմից ինքնասպանություն կատարելու վարկածը: **Այսինքն՝ հետագա նախաքննության սահմանները չեն ներառել Հ.Համբարյանի հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննության թիվ 26/16 եզրակացությամբ հաստատված հանգամանքների վերստուգում: Այդ եզրակացության առնչությամբ Առաջին աստիճանի դատարանն ուղղակիորեն արձանագրել է, որ այն պարզ է, ամբողջական, կասկած չի հարուցում և հարցեր չի առաջացնում:**

Մինչդեռ, վարույթն իրականացնող մարմինը, նախաքննության վերսկսումից հետո, դատախազի գրավոր ցուցումի հիման վրա, նախկինում փորձագետներին առաջադրած նույն հարցերը պարզելու նպատակով նոր փորձաքննություն է նշանակել: Ընդ որում, ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ վարույթն իրականացնող մարմինը վերսկսված նախաքննության ընթացքում թիվ 26/16 փորձագիտական եզրակացությունն առանց որևէ հիմնավորման կասկածի տակ է դրել ոչ թե քրեադատավարական օրենքով նախատեսված՝ լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության նշանակման, այլ նույն փորձաքննությունը կրկին նշանակելու միջոցով: Նման պայմաններում նույն հարցերի առաջադրմամբ մինևույն փորձաքննության կրկնակի նշանակումը պարունակել է գործի՝ նախորդ քննության ընթացքում թույլ տրված հնարավոր թերությունների ուղղման, արդեն իսկ հերքված նախաքննական վարկածի «վերակենդանացման» վտանգ:

Արդյունքում, վարույթն իրականացնող մարմինը, Առաջին աստիճանի դատարանի կողմից նախանշված նախաքննության սահմաններից դուրս գալու հետևանքով ստացել է փորձագիտական թիվ 223/2/18 եզրակացությունը, որով ի տարբերություն նախորդ՝ փորձագիտական թիվ 26/16 եզրակացության, արձանագրվել է Հ.Համբարյանի մահվան և Դ.Հարությունյանի գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

¹ Տե՛ս նույն որոշման 10-րդ կետը:

Վճռաբեկ դատարանի համոզմամբ, եթե դատավարության ընթացքի՝ վերը նկարագրված խախտումների պայմաններում ձեռք բերված փորձագիտական նոր եզրակացությունը որպես նոր երևան եկած հանգամանք հանգեցնի Դ.Հարությունյանի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական որոշումների բեկանմանը, ապա կարող են վտանգվել կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի պաշտպանության իրավական երաշխիքները: Մասնավորապես, նկատի ունենալով, որ Հ.Համբարյանի մահվան և Դ.Հարությունյանի գործողությունների միջև պատճառահետևանքային կապի բացակայության մասով քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ վերջնական դատավարական որոշումը չի դրվել կասկածի տակ, մեկ այլ հարցի պարզաբանման նպատակով վերսկսված նախաքննության ընթացքում **դատավարական ընթացակարգի խախտմամբ** նշանակված և ձեռք բերված փորձագիտական նոր եզրակացության հիման վրա օրինական ուժի մեջ մտած դատական որոշումների բեկանումը, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, կհանգեցնի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունության և թույլ տրված հնարավոր դատական սխալների վերացման անհրաժեշտության միջև արդարացի հավասարակշռության խախտման: Բացի այդ, կվտանգվի նաև ընդհանուր առմամբ վարույթի արդարացիությունը՝ հաշվի առնելով, որ Հ.Համբարյանի մահվան և Դ.Հարությունյանի գործողությունների միջև պատճառահետևանքային կապի բացակայության վերաբերյալ նախաքննական վարկածը հաստատվել է վերջնական դատավարական որոշմամբ, ստացել է օրինական ուժ և ոչ իրավաչափ չի ճանաչվել դատարանի կողմից (դատական վերահսկողության շրջանակներում): Նման պայմաններում, Դ.Հարությունյանի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանումը և գործի վերաբացումը, որպես արդյունք՝ կվտանգի Դ.Հարությունյանի արդար դատաքննության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ 2019 թվականի հունիսի 3-ին ստացված՝ հետմահու դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր հանձնաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 19-0361 եզրակացությունը, **սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում**, չի կարող հիմք հանդիսանալ Դավիթ Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ ստորադաս դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ

հողվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-426.2-րդ, 426³-րդ, 426⁷-րդ և 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դավիթ Արմենի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 23-ի որոշումը՝ նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վերանայման արդյունքում վճռաբեկ բողոքը մերժել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴՅ/0038/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹՎԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Գ.ԽԱՆԶԱԴՅԱՆԻ
Ժ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

2020 թվականի հունվարի 10-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 18-ի որոշման դեմ Արմենակ Փայլակի Ավագյանի պաշտպան Ժ.Համբարձումյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի օգոստոսի 30-ին ՀՀ ոստիկանության Հրազդանի բաժնում Վարդան Բայաթյանի մարմնական վնասվածք ստանալու վերաբերյալ նախապատրաստված նյութերով հարուցվել է թիվ 49158516 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

2017 թվականի մայիսի 26-ին Արմենակ Փայլակի Ավագյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն օրը Ա.Ավագյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չեռնանալու մասին ստորագրությունը, և հայտարարվել է հետախուզում:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մայիսի 26-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է՝ մեղադրյալ Ա.Ավագյանի՝ քննությունից թաքնվելու հիմքով:

2017 թվականի հունիսի 7-ին Ա.Ավագյանը հայտնաբերվել է և բերման ենթարկվել ՀՀ ոստիկանության Հրազդանի բաժին:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 7-ի որոշմամբ քրեական գործով վարույթը վերսկսվել է:

2017 թվականի հուլիսի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 31-ի դատավճռով Ա.Ավագյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Նույն դատավճռով տուժող Վ.Բայաթյանի ներկայացրած քաղաքացիական հայցը՝ 50.000 (հիստոն հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ որպես բուժման ծախսեր, մերժվել է, իսկ 2.100.000 (երկու միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ որպես չվճարված աշխատավարձ, թողնվել է առանց քննության:

3. Ամբաստանյալ Ա.Ավագյանի պաշտպաններ Ժ.Համբարձումյանի և Մ.Մանուկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ բողոքը մերժել է և ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018 թվականի նոյեմբերի 1-ին ընդունված՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ Ա.Ավագյանին ազատել Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 31-ի դատավճռով նշանակված պատժից:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 18-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ավագյանի պաշտպան Ժ.Համբարձումյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Արմենակ Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Ն/ա, հանդիսանալով «Էդ Շին» ՍՊ ընկերության տնօրեն և գործարար, այսինքն՝ անվրանգության կանոնները պահպանելու պարտականություն կրող անձ, 2016 թվականի օգոստոսի 19-ին Հրազդան քաղաքի Շահումյան փողոցում իրականացված սաֆալտապարման աշխատանքներ կատարելու ժամանակ չի ապահովել ՀՀ Կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի 363-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրական ցանցերի անվրանգության գործիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի» 2-րդ գլխի 4-րդ կետի, (...) 3-րդ գլխի 9-րդ կետի 1-ին ենթակետի, (...) 10-րդ կետի 1-ին ենթակետի [և] 12-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները (...):»:

Բացի այդ, խախտել է 2016 թվականի օգոստոսի 1-ին «ԷՌ Շին» ՍՊ ընկերության ի դեմս իր և Վարդան Բայաթյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրի 3.4.2 կետի (...) [և] 3.4.4 կետի պահանջները (...): Ինչպես նաև չի կատարել ՀՀ-ում գործող ԳՕՍՏ 12.0.004-90-ի 7.1 «Ներածական հրահանգավորում», 7.2 «Աշխատարեղում առաջնային հրահանգավորում» և 7.9 «Անցկացված հրահանգավորումների վերաբերյալ մարյաններում համապարասիսան գրառումներ կատարելու մասին» կետերի պահանջները, ինչի արդյունքում նույն ընկերությունում որպես բանվոր աշխատող Վարդան Բայաթյանը ցանկացել է բարձրանալ սաֆալտ քեռնաթափող «ՄԱՆ» մակնիշի 777DD17 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի բարձրացրած թափքին՝ թափքում մնացած սաֆալտը քերել-թափելու նպատակով, սակայն բարձրացրած թափքը փողոցը հարող էլեկտրահաղորդալարին դիպչած լինելու հետևանքով հոսանքահարվել և ընկել է գետնին, որի արդյունքում վերջինիս առողջությանն անզգուշությամբ պարճատվել է կրծքավանդակի փակ վնասվածք, աչից 2-րդ, 3-րդ կողերի, աջ բազուկուսկրի բեկորային կոտրվածքների ձևով ծանր վնաս»¹:

6. Առաջին առյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) «Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արմենակ Ավագյանի կողմից տրված դատաքննական ցուցմունքներն անարժանահավատ են և մրացածին, դրանով նա հերքաւորում է քրեական պարասիսանալությունից և ակնկալվող պարճից խուսափելու նպատակ և արձանագրում, որ նրան մեղաագրված հանրորեն վրանգալոր արարքի կատարումը հիմնավորվեց իրավական պարճաւ ընթացակարգի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 235-236:

պահպանմամբ դատարանում հետազոտված՝ (...) [ընտանիքի Վարդան Վոլոդյայի Բայաթյանի դատաքննական ցուցմունքով, (...) [վ]կա Էդվին Արմենակի Ավագյանի՝ դատարանում հրապարակված նախաքննական ցուցմունքով], (...) [վ]կա Գրիգոր Գազիկի Գրիգորյանի դատաքննական ցուցմունքով, (...) [վ]կա Նորայր Հրանտի Սամվելյանի դատաքննական ցուցմունքով, (...) [վ]կա Գրիգոր Կառլենի Սարգսյանի դատաքննական ցուցմունքով, (...) [վ]կա (...) Համլետ Սանասարի Բարսյանի՝ [դատարանում հրապարակված նախաքննական ցուցմունքով], (...) [փ]որձագետ Գենարի Գևորգի Հարությունյանի՝ դատաքննության ընթացքում րված ցուցմունքներով], (...) [ը]նտանիքի փորձագետի թիվ 213 եզրակացությամբ, (...) [ը]նտանիքի փորձագետի թիվ 258 եզրակացությամբ, (...) [է]լեկտրատեխնիկական փորձաքննության թիվ 53401604 եզրակացությամբ (...):

Դատաքննության ընթացքում հրապարակվել և հետազոտվել են նաև ներքոնշյալ փաստաթղթերը՝ Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի թիվ 961-Ն որոշման 6.22 աղյուսակ[ը], (...) [է]լեկտրական ցանցերի անվտանգության գործիքների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգ[ը], (...) «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1933-Ն որոշում[ը], (...) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության «Գեդամա» մասնաճյուղի թիվ 014Մ-264 գրություն[ը], (...) «Սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1939-Ն որոշում[ը], (...) ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի քարածքային հարկային տեսչության թիվ 19-03/06 գրություն[ը] (...):

Պաշտպանի միջնորդությամբ որպես այլ ապացույց է ձևանշվել և հրապարակվել «ԷԴ-ՇԻՆ» ՍՊ ընկերության իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը, թիվ 001-003 ներդիրները, (...) Հրազդան համայնքի Շահումյան փողոցի սաֆալտերունն ծածկույթի հիմնանորոգման աշխատանքների կատարման գնման պայմանագիրը, (...) Վ.Բայաթյանի դիմումը՝ աշխատանքի ընդունվելու վերաբերյալ, (...) [ք]անվորի աշխատատեղը կանոնակարգող իրավական ակտերին ծանոթացնելու հավաստագիրը, (...) «ԷԴ-ՇԻՆ» ՍՊ ընկերության և Վ.Բայաթյանի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը, (...) «ԷԴ-ՇԻՆ» ՍՊ ընկերության ներքին կարգապահական կանոնների ծանոթացման թերթիկը, (...) «ԷԴ-ՇԻՆ» ՍՊ ընկերության ներքին կանոնադրությունը (...):

Վերոգրյալ ապացույցների հիման վրա Դատարանը հիմնավոր է համարում Ա.Ավագյանին առաջադրված մեղադրանքն այն մասով, որ. «Արևենակ Փայլակի Ավագյանը հանդիսանալով «Էդ Շին» ՍՊ ընկերության տնօրեն և գործարար, այսինքն՝ անվտանգության կանոնները պահպանելու պարտականություն կրող անձ, 2016 թվականի օգոստոսի 19-ին Հրազդան քաղաքի Շահումյան փողոցում իրականացված ասֆալտապարման աշխատանքներ կատարելու ժամանակ չի ապահովել ՀՀ Կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի 363-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրական ցանցերի անվտանգության գույքների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի» 2-րդ գլխի 4-րդ կետի, (...) 3-րդ գլխի 9-րդ կետի 1-ին ենթակետի, (...) 10-րդ կետի 1-ին ենթակետի, (...) 12-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները (...):

Բացի այդ, իսկադրել է 2016 թվականի օգոստոսի 1-ին «ԷՌ Շին» ՍՊ ընկերության ի դեմն իր և Վարդան Բայաթյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրի 3.4.2 կետի (...) [և] 3.4.4 կետի պահանջները (...):

[Անդրադառնալով] Արևենակ Ավագյանին առաջադրված մեղադրանքի ծավալում ներառված՝ ՀՀ-ում գործող ԳՕՍՍ 12.0.004-90-ի 7.1 «Ներածական հրահանգավորում», 7.2 «Աշխատարեղում առաջնային հրահանգավորում» և 7.9 «Անցկացված հրահանգավորումների վերաբերյալ մատչանքներում համապարասիսան գրառումներ կատարելու մասին» կետերի պահանջներին, ապա դատարանն արձանագրում է, որ այն պետք է հանել մեղադրանքի ծավալից (...):

Դատարանն անդրադառնալով պաշտպան Ժ.Համբարձումյանի կողմից իր ճառում ներկայացված մի շարք դիտարկումներին, մասնավորապես, թե տվյալ պարագայում Ա.Ավագյանին առաջադրված մեղադրանքն անհիմն է, բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սուբյեկտիվ կողմը և օբյեկտիվ կողմը, հարակեցված չէ, թե իր պաշտպանյալը դրսևորել է անփութություն, թե ինքնավարահոություն, կամ առկա են հանցակազմի բոլոր հարկանիշները, ապա Դատարանը վերը նշված ապացույցների մանրամասն վերլուծությամբ անդրադարձել է գործով բոլոր հանգամանքներին, ուստի չկրկնվելու և դատական ակտը չձանրաբեռնելու նպատակով դատարանը կրկին անգամ հարկ չի համարում անդրադառնալ նշված հարցին: (...)»¹:

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է. «(...) Առաջին արյանի դատարանի հետևությունները հիմնավորված ու պարզառարանված են, իսկ քրեական գործի փաստական հանգամանքների մասին Առաջին արյանի դատարանի հետևությունները

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 71-77:

հետազոտված ապացույցներին չհամապատասխանելու և ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալ Արմենակ Ավագյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված չլինելու վերաբերյալ պաշտպանների փաստարկները քրեական գործի նյութերում իրենց հաստատումը չեն գրել, հետևաբար չեն կարող հիմք հանդիսանալ Առաջին արյանի դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Այսպիսով, վերը նշված վերլուծությունների համալրեքարում Վերաքննիչ դատարանը գալիս է եզրահանգման, որ Առաջին արյանի դատարանը թույլ չի տվել նյութական և դատավարական իրավունքի այսպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ ամբաստանյալ Արմենակ Ավագյանը ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018թ. նոյեմբերի 1-ին ընդունված «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի ուժով պետք է ազատվի Առաջին արյանի դատարանի 2018թ. օգոստոսի 31-ի դատավճռով նշանակված պարզից:

(...)

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել նաև, որ ամբաստանյալը դատարանին չի ներկայացրել նաև վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և իր նկարմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին միջնորդություն¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերն անհիմն են և չպատճառաբանված: Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները քննության չեն առել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով սահմանված հանրորեն վտանգավոր արարքի հատկանիշները, բացի այդ, վերլուծության չեն ենթարկել Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, ինչը հանգեցրել է Ա.Ավագյանի արարքի սխալ որակման:

Վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածը, ինչպես նաև այն դիտարկելով Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների լույսի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 116-117:

ներքո՝ բողոք բերած անձը գտել է, որ Ա.Ավագյանը չի կարող լինել հիշյալ հանցագործության սուբյեկտ, քանի որ նրա վրա դրված չի եղել տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանման՝ իրավաբանորեն ձևակերպված հստակ պարտականություն:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 18-ի որոշումը և ճանաչել ու հռչակել Արմենակ Ավագյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Ա.Ավագյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելը՝ դրանց պահպանման համար պարասխանաբու անձի կողմից, եթե մարդու առողջությանն անզոչությամբ պայրճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ մասնագիտական հիվանդություն պայթվում է (...):»*

Վերոնշյալ իրավադրույթի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն Արոմ Մանուկյանի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«Աշխատողի անվտանգությունը և առողջությունն աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի և առողջության պահպանման համակարգ է, և պետությունը պարտավոր է՝*

ա) սահմանել աշխատողի անվտանգության և առողջության պահպանման իրավական կանոններ՝ ամրագրելով դրանք օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով,

բ) նախարեսել համապարասխան քաղաքացիական, վարչական, քրեական սանկցիաներ, որոնք կոչված են կանխելու աշխատողի անվտանգության և առողջության պահպանման կանոնների խախտումները:

Շարադրված վերլուծության հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը այն հասարակական հարաբերություններն են, որոնք ուղղված են մարդու անվտանգության և հիգիենայի պահանջները բավարարող

աշխատանքային պայմանների իրավունքի ապահովմանը, իսկ լրացուցիչ օրյեկր են հանդիսանում մարդու կյանքը և առողջությունը:

(...)

ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունն օրյեկրիվ կողմից բնութագրվում է ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ, որը դրսևորվում է տեխնիկայի անվրանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելով:

Անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցակազմն առկա է այն դեպքում, երբ՝

1) խախտվել են ՀՀ կառավարության, տարբեր նախարարությունների, գերատեսչությունների, հիմնարկների և առանձին գործարուների կողմից սահմանված՝ տեխնիկայի անվրանգության կամ աշխատանքի պաշտպանության հատուկ կանոնները,

2) առաջացել են հանրորեն վրանգավոր այնպիսի հետևանքներ, ինչպիսիք են տուժողի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի կամ մասնագիտական հիվանդության պարճատումը (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մաս) կամ մահվան առաջացումը (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մաս),

3) առկա է պարճատական կաս պարարքի (գործողության կամ անգործության) և վրա հասած հետևանքների միջև (...):¹

Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Հասմիկ Գրիգորյանի և Էդուարդ Սարիբեկյանի գործով փաստել է. «ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից հետևում է, որ այն նկարագրված է բլանկետային դիսպոզիցիայով. քրեական պարասխանարվություն նախատեսելով օրենքով կամ այլ նորմարիվ իրավական ակտով սահմանված տեխնիկայի անվրանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնների խախտման համար՝ այն չի սահմանում այդ կանոնները և, ըստ այդմ, ենթադրում է հղում նորմարիվ իրավական այլ ակտի (ակտերի), որը պետք է ամրագրի դրանք: Դրանից հետևում է, որ տեխնիկայի անվրանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները բացահայտելու համար անհրաճեշտ է դիմել դրանք սահմանող համապարասխան նորմարիվ իրավական ակտերի օգնությանը, որոնք պետք է համապարասխանեն իրավական որոշակիության սկզբունքի՝ (...) «հասանելիության» և «կանխատեսելիության» չափանիշներին»²:

¹ Տե՛ս Արում Մանուկյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԿԴ/0032/01/12 որոշման 13-14-րդ կետերը:

² Տե՛ս Հասմիկ Գրիգորյանի և Էդուարդ Սարիբեկյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵՇԴ/0131/01/15 որոշման 17-րդ կետը:

12. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Ա.Ավագյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության¹:

13. Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավագյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում հաստատված, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքված են տուժող Վ.Բայաթյանի, վկաներ Գ.Գրիգորյանի, Ն.Սամվելյանի, Գ.Սարգսյանի՝ դատաքննական, Է.Ավագյանի, Հ.Բաբայանի՝ դատարանում հրապարակված նախաքննական, փորձագետ Գ.Հարությունյանի՝ դատաքննական ցուցմունքներով, դատաբժիշկ փորձագետի՝ թիվ 213 եզրակացությամբ, դատաբժիշկ փորձագետի թիվ 258 եզրակացությամբ, էլեկտրատեխնիկական փորձաքննության թիվ 53401604 եզրակացությամբ, ինչպես նաև դատաքննության ընթացքում հրապարակված և հետագոտված փաստաթղթերով:

13.1 Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում նաև բողոքաբերի այն փաստարկին, որ ստորադաս դատարանները վերլուծության չեն ենթարկել Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, ինչը հանգեցրել է Ա.Ավագյանի արարքի սխալ որակման²: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով *Վարուժան Ավետիսյանի*, ինչպես նաև՝ *Դավիթ Միմիդյանի* գործերով Վճռաբեկ դատարանի որոշումները, Ա.Ավագյանին առաջադրված մեղադրանքի ծավալից հանել է Հայաստանի Հանրապետությունում գործող ԳՕՍՏ 12.0.004-90-ի 7.1 «Ներածական հրահանգավորում», 7.2 «Աշխատատեղում առաջնային հրահանգավորում» և 7.9 «Անցկացված հրահանգավորումների վերաբերյալ մատյաններում համապատասխան գրառումներ կատարելու մասին» կետերի պահանջների խատլումը³:

14. Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելու մեջ ամբաստանյալ Ա.Ավագյանի մեղավորության վերաբերյալ

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված են և նրա արարքին տրվել է քրեաիրավական ճիշտ գնահատական:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Ա.Ավագյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները (...):»:

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ (...) [կետրում] նշված [հիմքով] գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:*

17. Վերոգրյալ հոդվածի վերլուծությունից երևում է, որ դրանում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Նշված հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

17.1 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արամ Սարգսյանի* գործով որոշման մեջ և արձանագրել, որ *«(...) [Թ]եև [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ*

հողվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման»¹:

17.2 Բացի այդ, Վճռաբեկ դատարանը կրկնում է նախկինում արտահայտած իր դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանափակումները չունեն բացարձակ բնույթ, և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլոց, քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող դրույթի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում²:

18. ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելը՝ դրանց պահպանման համար պարասխանաբար անձի կողմից, եթե մարդու առողջությանն անզգուշությամբ պարճառով է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ մասնագիտական հիվանդություն՝ պարծվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապարիկից չորսհարյուրապարիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձն ազատվում է քրեական պարասխանաբարվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: (...)

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից»:

¹Տե՛ս Արամ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը:

²Տե՛ս, *mutatis mutandis*, Մխիթար Էրոյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ որոշման 14-րդ կետը:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված արարքը անզգույշ հանցագործություն է, իսկ դրա համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում երկու տարին, ուստի այն դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հանցավոր արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

20. Քրեական հետապնդումը բացառող քննարկվող հիմքի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները: Մինչև ժամանակ, քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով: Այսինքն՝ այն դեպքում, երբ անձը համաձայն չէ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու, իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հետ, նրան պետք է հնարավորություն ընձեռվի դատական քննության փուլում վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում¹: Մասնավորապես, դատարանը պետք է պարզի, թե արդյոք ամբաստանյալը համաձայն է, որ նրա նկատմամբ քրեական

¹Տե՛ս, *mutatis mutandis*, Ասահիր Մաղաթեյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը, Սիրաժ Ղամբարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշումը, Հրանտ Մազմանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշումը, Ֆարիդա Ավագիմյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՎԴ2/0016/01/14 որոշումը, Անդրանիկ Գրիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԴ/0180/01/15 որոշումը:

հետապնդումը դադարեցվի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: Անձի համաձայնությունը ստանալու դեպքում՝ դատարանը պարտավոր է դադարեցնել նրա նկատմամբ քրեական հետապնդումը, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ պետք է դատական քննությունը շարունակի ընդհանուր կարգով, սակայն դատավճիռ կայացնելիս՝ դադարեցնի անձի նկատմամբ քրեական հետապնդումը: Ընդ որում, երբ անձն արդեն հնարավորություն է ունեցել առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (վերջին դեպքում՝ վճռաբեկ բողոք բերելու միջոցով) վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը, ապա քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս նրա դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը բացակայում է¹:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ա.Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքն ավարտվել է **2016 թվականի օգոստոսի 19-ին**²: ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով որակված՝ Ա.Ավագյանին մեղսագրված արարքը կատարելու մեջ վերջինիս մեղավորությունը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է 2018 թվականի օգոստոսի 31-ին, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել 2019 թվականի փետրվարի 18-ին: Նշված որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ավագյանի պաշտպան Ժ.Համբարձումյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ³:

22. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-20-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և դիրքորոշումների վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքի՝ որպես ոչ մեծ ծանրության հանցանքի համար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը լրանալու օրվա՝ **2018 թվականի օգոստոսի 19-ի** դրությամբ վերջինիս նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ չի եղել:

¹ Տե՛ս Միրած Ղամբարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ վերը հիշատակված որոշման 25-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 2-4-րդ կետերը:

Հետևաբար, Ա.Ավագյանին քրեական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետը դեռևս Առաջին ատյանի դատարանի դատավճիռը կայացնելու օրվա դրությամբ անցած է եղել: Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ ուշադրության չարժանացնելով նշված հանգամանքը, 2018 թվականի օգոստոսի 31-ի դատավճռով չի քննարկել վաղեմության ժամկետն անցնելու հիմքով Ա.Ավագյանին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը: Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ ամբաստանյալը դատարանին չի ներկայացրել վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին միջնորդություն¹, արդյունքում անտեսելով այն հանգամանքը, որ Ա.Ավագյանը հնարավորություն է ունեցել վերաքննիչ բողոք բերելու միջոցով վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը, ուստիև քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու համար նրա դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը բացակայել է, հետևաբար, բացակայել է նաև այդ կապակցությամբ միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունը: Արդյունքում անտեսվել են Վճռաբեկ դատարանի՝ *Միրաժ Համբարյանի* որոշմամբ արտահատված իրավական դիրքորոշումները:

23. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով Ա.Ավագյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը չդադարեցնելով՝ Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Ավագյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, և նրա վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճել: Հիշյալ հիմքով Ա.Ավագյանի նկատմամբ քրեական հետապնդումը

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

դադարեցնելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ անձն արդեն իրացրել է օրենքով սահմանված կարգով իր մեղավորության հարցը համապատասխան դատական ատյաններում վիճարկելու իր իրավունքը: Այլ խոսքով՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում, որ ամբաստանյալն արդեն հնարավորություն ունեցել է ինչպես առաջին ատյանի դատարանում, այնպես էլ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (վերջին դեպքում՝ վճռաբեկ բողոք բերելու միջոցով) վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը, հետևաբար՝ բացակայում է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ անձի դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը:

24. Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև սույն գործով Ա.Ավագյանի նկատմամբ Վերաքննիչ դատարանի կողմից կիրառվել է Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և Ա.Ավագյանն ազատվել է Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 31-ի դատավճռով նշանակված պատժից, սակայն, կոնկրետ գործով Համաներման մասին օրենքի նշված դրույթով անձին պատժից ազատելու և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի՝ վաղեմության ժամկետն անցնելու՝ հիմքերի մրցակցության պայմաններում, պետք է նախապատվությունը տրվի երկրորդ հիմքին, քանի որ հիշյալ հիմքի կիրառման իրավական հետևանքներն առավել բարենպաստ են անձի համար: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե Համաներման մասին օրենքի համապատասխան դրույթի կիրառմամբ՝ Ա.Ավագյանն ազատվում է նշանակված պատժից՝ մեղադրական դատավճռի առկայության պայմաններում, ապա վաղեմության ժամկետի հիմքով՝ առհասարակ քրեական պատասխանատվությունից: Բացի այդ, և՛ Համաներման մասին օրենքի, և՛ վաղեմության ժամկետի կիրառման հիմքերի միաժամանակյա առկայության պայմաններում Ա.Ավագյանի նկատմամբ համաներման ակտի կիրառման դեպքում, վերջինս հայտնվում է անբարենպաստ վիճակում նաև այն պատճառով, որ նախկինում ընդունված համաներման ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ անձի նկատմամբ համաներման կիրառումը, որպես կանոն, հետագայում կրկին համաներման հնարավոր կիրառման արգելք է:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ Արմենակ Փայլակի Ավագյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը պետք է վերացնել:

Հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 163-րդ հոդվածի պահանջն առ այն, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծվում է դատավճռով¹, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժող Վարդան Վոլոդիայի Բայաթյանի քաղաքացիական հայցը պետք է թողնել առանց քննության: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը, որը դատարանի կողմից թողնվել է առանց քննության, կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արմենակ Փայլակի Ավագյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 31-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 18-ի որոշումը բեկանել, Արմենակ Փայլակի Ավագյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ, և քրեական գործի վարույթը կարճել:

2. Արմենակ Փայլակի Ավագյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

3. Տուժող Վարդան Վոլոդիայի Բայաթյանի քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Դավիթ Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 26-ի թիվ ՇԴ/0008/01/09 որոշման 17-րդ կետը:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0289/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
ամբաստանյալ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ն.ՄՈՎՍԻՍՅԱՆԻ
Գ.ՎԱՐՏԱՆՅԱՆԻ

2020 թվականի հունվարի 10-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գերասիմ Սուրենի Վարտանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի որոշման դեմ ամբաստանյալ Գերասիմ Վարտանյանի պաշտպան Ա.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի հունիսի 9-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնում հարուցվել է թիվ 17199117 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

2017 թվականի հունիսի 9-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնում հարուցվել է թիվ 17199217 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով,

266-րդ հոդվածի 4-րդ մասով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

2017 թվականի հունիսի 12-ի որոշմամբ Գերասիմ Վարտանյանը թիվ 17199217 քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով:

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 12-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը, և Գ.Վարտանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

1.2. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 16-ի որոշմամբ թիվ 17199117 և 17199217 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է 17199217 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ Գ.Վարտանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով:

2017 թվականի նոյեմբերի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան:

2. Գատական քննության ընթացքում մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի կանոններով, որոշում է կայացրել Գ.Վարտանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին և նրան նոր մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով:

Երևան քաղաքի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ստյանի դատարան)՝ 2018 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճռով Գ.Վարտանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով, Գ.Վարտանյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով և տուգանք՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ Գ.Վարտանյանին վերջնական թողնվել է կրելու ազատազրկում՝ 2 (երկու) տարի 4 (չորս) ամիս 10 (տասը)

օր ժամկետով և տուգանք՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Պատժի սկիզբը հաշվվել է փաստացի արգելանքի վերցնելու պահից:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի հունվարի 22-ի որոշմամբ ամբաստանյալ Գ.Վարտանյանի պաշտպան Ա.Զուվանովայի վերաքննիչ բողոքը մերժվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճիռը՝ թողնվել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ բողոք է բերել ամբաստանյալ Գ.Վարտանյանի պաշտպան Ս.Հովհաննիսյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Գերասիմ Վարտանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «(...) [Ի]րացնելու նպատակով, գործով չպարզված հանգամանքներում և անձից, սպորինի ձեռք է բերել ընդհանուր զգալի չափի՝ 2.32 գրամ քաշով ափիոն փրեսակի թմրամիջոց, որից 0.92 գրամն սպորինի իրացրել է Արայիկ Գառնիկի Մոտյանին, 0.4 գրամը՝ Գագիկ Մարտիրոսի Աբրահամյանին, իսկ 1 գրամն սպորինի պահել է իր՝ Երևան քաղաքի Արմենասկյան փողոցի 81 փանը, բացի այդ, ինքնությունը չպարզված անձից, գործով չպարզված հանգամանքներում, թմրամիջոց պարտասարելու նպատակով սպորինի ձեռք է բերել պրեկուրսոր հանդիսացող ընդհանուր՝ 0.003132 կգ քաշով քաղաքացիական անհիդրիդ, որից 0.001728 կգ-ն սպորինի իրացրել է Արայիկ Գառնիկի Մոտյանին, 0.000648 կգ-ը՝ Գագիկ Մարտիրոսի Աբրահամյանին, իսկ 0.000756 կգ-ն սպորինի պահել է Երևանի Արմենասկյան փողոցի 81 փանը:

Այսպես.

Գերասիմ Սուրենի Վարտանյանը, չպարզված ժամանակահատվածում և հանգամանքներում, իրացնելու նպատակով սպորինի ձեռք է բերել և իր մոտ պահել ընդհանուր զգալի չափի՝ 2.32 գրամ քաշով ափիոն փրեսակի թմրամիջոց, ինչպես նաև սպորինի ձեռք է բերել և պահել պրեկուրսոր հանդիսացող ընդհանուր՝ 0.003132 կգ քաշով քաղաքացիական անհիդրիդ:

Պայմանավորվածության համաձայն՝ հիշյալ թմրամիջոցից երեք թղթյա փաթեթներում ընդհանուր խոշոր չափի՝ 0.92 գրամ հասարարուն

քաշով ափիոն տեսակի թմրամիջոցը և երեք ներարկիչների մեջ՝ ընդհանուր 0.001728 կգ քաշով քացախաթթվի անհիդրիդ տեսակի պրեկուրսորը 2017 թվականի հունիսի 9-ին ժամը 14:30-ի սահմաններում, իր՝ Երևան քաղաքի Արմենակյան փողոցի թիվ 81 տանը, վաճառելու եղանակով 40.000 ՀՀ դրամի դիմաց, ապօրինի իրացրել է Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Ազատամարտիկների փողոցի 3-րդ տան բնակիչ Արայիկ Գառնիկի Մոտյանին, ինչը հայտնաբերվել է ոստիկանության աշխատակիցների կողմից Սամվել Չիչյանին պարկանոց սպորտմեքենայում կատարված դեպքի վայրի զննությամբ:

Բացի այդ, նույն օրը երեկոյան ժամը 18:00-ի սահմաններում, պայմանավորվածության համաձայն, չպարզված գումարի դիմաց, իր՝ Երևան քաղաքի Արմենակյան փողոցի թիվ 81 տան մոտակայքում, նշված ընդհանուր զանգվածներից 0.4 գրամ քաշով ափիոն տեսակի թմրամիջոցը և պրեկուրսոր հանդիսացող 0.000648 կգ քաշով քացախաթթվի անհիդրիդն ապօրինի իրացրել է Երևան քաղաքի Ավետ Ավետիսյան փողոցի թիվ 14 տան բնակիչ Գագիկ Մարտիրոսի Աբրահամյանին, ինչն էլ հայտնաբերվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի աշխատակիցների կողմից վերջինիս անձնական խուզարկությամբ, իսկ նշված ափիոն տեսակի, ընդհանուր 2.32 գրամ քաշով թմրամիջոցից մնացած 1 գրամը և պրեկուրսոր հանդիսացող ընդհանուր՝ 0.003132 կգ քաշով քացախաթթվի անհիդրիդից մնացած՝ 0.000756 կգ-ն ապօրինի պահել է իր՝ Երևան քաղաքի Արմենակյան փողոց 81 տանը, որն էլ հայտնաբերվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի աշխատակիցների կողմից 2017 թվականի հունիսի 10-ին նշված տանը կատարված խուզարկության արդյունքում¹:

6. Առաջին ատյանի դատարանը Գ.Վարտանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքները կատարելու մեջ և, անդրադառնալով վերջինիս նկատմամբ պատիժ նշանակելու և այն կրելու նպատակահարմարության հարցին, արձանագրել է. «(...) [Առաջին ատյանի դատարանը], որպես ամբաստանյալ Գերասիմ Վարտանյանի անձը բնութագրող տվյալներ է գնահատում նախկինում դատապարտված չլինելը (ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն կատարված հարցման արդյունքների), ամուսնացած լինելը, վարատող լինելը (ըստ ՀՀ ԱՄ Վ.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնից տրված տեղեկանքների և էպիկրիզի):

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 13-16:

[Առաջին արյանի դադարանն] ամբաստանյալ Գերասիմ Վարդանյանի պարասիանսարվությունը և պարիժը ծանրացնող ու մեղմացնող հանգամանքներ չարձանագրեց:

(...)

[Առաջին արյանի դադարանը], հաշվի առնելով ամբաստանյալ Գերասիմ Վարդանյանի անձը բնութագրող տվյալները, հարկապես նախկինում դադարապարտված չլինելը, վարատող լինելը, ամուսնացած լինելը, հաշվի առնելով նրան վերագրվող հանցագործությունների բնույթն ու վրանգավորության աստիճանը (ծանր և ոչ մեծ ծանրության դիրավորյալ հանցագործություններ են), ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի տեսանկյունով բացառիկ հանգամանքների, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով նախատեսված՝ ազատագրվման ձևով վերջնական պարիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի բացակայությունը, փաստում է, որ պարժի նպատակներն ապահովելու տեսանկյունով վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով պարիժ կարող է նշանակվել բացառապես որոշակի ժամկետով ազատագրվման ձևով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի ձևով¹:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) Վերաքննիչ դադարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Գ. Վարդանյանի նկատմամբ նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու անթույլարելիության վերաբերյալ Առաջին արյանի դադարանի հետևությունը բխում է Գ. Վարդանյանի կարարած հանցանքի հանրային վրանգավորության աստիճանի, բնույթի, մեղքի ձևի, դրա տեսակի, հանցագործության կոնկրետ հանգամանքների, կարարման եղանակի, ավարտվածության աստիճանի, օրենքով պահպանվող հասարակական հարաբերության կարևորության, հանցագործության առարկա թմրամիջոցի տեսակի, դրա չափի, հանցանքի կարարման նպատակի և շարժառիթի, պարձատված վնասի չափի, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալների և նրա պարասիանսարվությունն ու պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայության փաստի ամբողջական վերլուծությունից: Այլ կերպ՝ ամբաստանյալ Գ. Վարդանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի դրույթները կիրառելու անթույլարելիության մասին Առաջին արյանի դադարանի հետևությունն արդարության և պարասիանսարվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված ու իրավաչափ է:

(...)

¹ Տե՛ս՝ քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 73-85:

Վերաքննիչ դատարանը փաստում է նաև, որ ամբաստանյալի առողջական վիճակի վերաբերյալ պաշտպանության կողմի փաստարկեր կարող է քննության առարկա դառնալ ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի լույսի ներքո և քրեադատական այլ ընթացակարգով, սակայն ինքնին հիմք չի կարող հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով նահապետված պարիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի գործադրման համար, քանի որ վերջինիս հիմքում ընկած է միանգամայն այլ նահապայման, այն է՝ դատարանի համոզվածությունն ու վստահությունն առ այն, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պարիժ կրելու, որը պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի փաստերի համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պարիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին¹:

8. Քրեական գործի նյութերում առկա են հետևյալ փաստական տվյալները.

ա) ՀՀ առողջապահության նախարարության Վ.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի տեղեկանքը, համաձայն որի՝ Գ.Վարտանյանի հիվանդության ախտորոշումն է՝ միզապարկի C-ր, ցավային համախտանիշ, ցուցված է հետագա բուժում՝ ըստ տեղամասի օնկոլոգի²:

բ) ՀՀ առողջապահության նախարարության Վ.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի էպիկրիզը, համաձայն որի՝ Գ.Վարտանյանի հիվանդության ախտորոշումն է՝ միզապարկի C-ր T3bN0M0, մակրոհեմատուրիա, անեմիա: 2011 թվականին միզապարկի C-ր T3bNxMx, մակրոհեմատուրիա, անեմիա ախտորոշմամբ կատարվել է միզապարկի պալիատիվ ՏՈՒՌ: 2011 թվականի ապրիլի 1-ին ենթարկվել է վիրահատության՝ ցիստոպրոստատեկտոմիա, երկկողմանի ուրետերոկլոտանեոտոմիա: Հեռացված են զստային ավշահանգույցները³:

գ) ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի գրությունն այն մասին, որ Գ.Վարտանյանի մոտ ախտորոշված է «Վիճակ միզապարկի հեռացումից հետո՝ քաղցկեղի կապակցությամբ»⁴:

դ) Հաշմանդամության տեղեկանքն այն մասին, որ Գ.Վարտանյանը 2-րդ խմբի հաշմանդամ է⁵:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 93-112:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 72:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 74:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 66:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 65:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, ինչի արդյունքում կայացվել է անհիմն և անօրինական դատական ակտ:

Բողոքաբերը փաստարկել է, որ Գ.Վարտանյանի նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս Վերաքննիչ դատարանը չի ղեկավարվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել այն, որ ամբաստանյալը նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, ամուսնացած է, ունի մշտական բնակության վայր, ֆիզիկապես վատառողջ է՝ տառապում է «Միզապարկի քաղցկեղ» հիվանդությամբ, որի հետևանքով հեռացվել է միզապարկը և ստամոքսի 2/3-ը, ունի մշտական խնամքի կարիք, 2-րդ խմբի հաշմանդամ է, ինչպես նաև բացակայում են պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները:

10. Վերոշարադրյալի հիման վրա պաշտպան Ա.Հովհաննիսյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ և Գ.Վարտանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքաբեր Ա.Հովհաննիսյանի կողմից բարձրացված իրավական հարցը վերաբերում է ամբաստանյալ Գ.Վարտանյանի նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելուն: Մինևույն ժամանակ, հաշվի անելով, որ սույն գործով առերևույթ առկա է քրեական հետապնդումը և քրեական գործի վարույթը բացառող հանգամանք և կրկնելով նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանները չունեն բացարձակ բնույթ և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլնի, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում¹, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նախևառաջ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել ամբաստանյալ Գ.Վարտանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով դադարեցնելու հարցը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Թմրամիջոցներ կամ հոգեմեկեր (հոգեներգործուն) նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրորներ սպորինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք սպորինի իրացնելը՝ պարծվում են ցուցանքով նվազագույն աշխատավարձի առավելագույնը չորսհարյուրապարիկի չափով, կամ կալանքով առավելագույնը երեք ամիս ժամկետով»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտարկությանը կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում երկու փարի ժամկետով ազատազրկումը կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պարիժ (...):»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.*

1) երկու փարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից (...):

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դարավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: (...):»:

Մեջբերված նորմերից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով նկարագրված արարքը դիտարկյալ հանցագործություն է, որի համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, ուստի այն դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին: Հետևաբար, վերոնշյալ արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմը ձևական է, ուստի հանցանքն համարվում է ավարտված՝ հոդվածի

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Միսիթար Էլոյանի և այլոց վերաբերյալ գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0211/01/10 որոշումը:

դիսպոզիցիայով նկարագրված արարքներից որևէ մեկը կատարելու պահից:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե*

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները. (...):»:

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, հայրնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ կետում նշված հիմքով (...) գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում¹: Մասնավորապես, դատարանը պետք է պարզի, թե արդյոք ամբաստանյալը համաձայն է, որ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: Անձի

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Ասահիյր Մաղաթելյանի* վերաբերյալ գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10, *Սիրաժ Դամբարյանի և այլոց* վերաբերյալ գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11, *Հրասր Մազմանյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14, *Ֆարիդա Ավագիմյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՎԴ2/0016/01/14, *Անդրանիկ Գրիգորյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԴ/0180/01/15 որոշումները:

համաձայնությունը ստանալու դեպքում դատարանը պարտավոր է դադարեցնել նրա նկատմամբ քրեական հետապնդումը, իսկ համաձայնության բացակայության դեպքում պետք է դատական քննությունը շարունակի ընդհանուր կարգով, սակայն դատավճիռ կայացնելիս՝ դադարեցնի անձի նկատմամբ քրեական հետապնդումը: Ընդ որում, երբ անձն արդեն հնարավորություն է ունեցել առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (վերջին դեպքում՝ վճռաբեկ բողոք բերելու միջոցով) վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը, ապա քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս նրա դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը բացակայում է¹:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- ամբաստանյալ Գ.Վարտանյանին մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր արարքը կատարվել է **2017 թվականի հունիսի 10-ին**²,

- Առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը կայացվել է **2018 թվականի սեպտեմբերի 13-ին**, որը Գ.Վարտանյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով բողոքարկվել է Վերաքննիչ դատարան³,

- բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել **2019 թվականի հունվարի 22-ին**⁴,

- նշված որոշման դեմ պաշտպան Ա.Հովհաննիսյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ **2019 թվականի հուլիսի 29-ի** որոշմամբ ընդունվել է վարույթ⁵:

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Վարտանյանին մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր արարքն ավարտվելու օրվանից ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը լրանալու օրվա դրությամբ վերջինիս նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը դեռևս օրինական ուժի մեջ մտած չի եղել:

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սիրած Ղամբարյանի և այլոց վերաբերյալ գործով վերը հիշատակված որոշման 25-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

Հետևաբար, սույն դատական ակտը կայացնելու օրվա դրությամբ Գ.Վարտանյանին մեղաազրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցել է, ուստի ամբաստանյալ Գ.Վարտանյանի նկատմամբ այդ մասով քրեական հետապնդումն անհրաժեշտ է դադարեցնել:

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *հաջորդ իրավական հարցը* հետևյալն է. մարդասիրության և պատասխանատվության անհատականացման սկզբունքների պահպանման տեսանկյունից հիմնավորված են արդյո՞ք ամբաստանյալ Գ.Վարտանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պարծի նպարակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարծի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկարումնր նշանակվում է արդարացի պարիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապարասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

2. *Պարծի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պարասխանարվությունը և պարիժը մեղմացող կամ ծանրացող հանգամանքներով: (...):»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարակում պահելու ձևով պարիժ նշանակելով, հանգում է հերևության, որ դատարարյալի ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պարիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. *Պարիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պարասխանարվությունը և պարիժը մեղմացող և ծանրացող հանգամանքները (...):»:*

Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում և մշտապես

վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա¹ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն²:

18. Անդրադառնալով հանցանք կատարած անձի նկատմամբ արդարացի պատիժ նշանակելու համատեքստում նրա առողջական վիճակը որպես անձը բնութագրող տվյալ գնահատման ենթարկելու կարևորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ հանգամանքի պատշաճ գնահատումն էական նշանակություն ունի պատժի նպատակների իրականացման տեսանկյունից համաչափ պատժատեսակ ընտրելու և պատժաչափ նշանակելու համար, ինչպես նաև բխում է դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի արգելքի սահմանադրական և կոնվենցիոն պահանջից: Թերևս վերջիններիս հաշվառմամբ էլ օրենսդիրն անձի մտ ծանր հիվանդության առկայությունը նախատեսել է որպես նրան պատժից ազատելու (ՀՀ

¹ Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մարտիրոսյանի* վերաբերյալ գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Արևեն Շահրազյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սամսոն Ամիրխանյանի* վերաբերյալ գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԴ/0034/01/12, *Արսեն Մկրտչյանի* վերաբերյալ գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԴ/0093/01/12, *Վանյա Բեգյանի* վերաբերյալ գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԴ/0018/01/13, *Արամայիս Հովհաննիսյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14, *Մհեր Հովհաննիսյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0039/01/15 և այլ որոշումները:

քրեական օրենսգրքի 79-րդ հոդված), ինչպես նաև նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի ի կատար ածումը հետաձգելու հիմք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 431-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

Վերոհիշյալով պայմանավորված՝ ամբաստանյալի վատառողջ լինելու վերաբերյալ տվյալների առկայության դեպքում դատարանը պարտավոր է պատշաճ ստուգման և գնահատման ենթարկել դրանք: Այն դեպքում, երբ կհաստատվի անձի մոտ հիվանդության առկայությունը, դատարանը պարտավոր է այն՝ *որպես անձը բնութագրվող փոխալ*, հաշվի առնել համապատասխան պատժատեսակ ընտրելիս, պատժաչափ սահմանափակ, ինչպես նաև դրա կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս¹:

18.1. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ առանց պատիժը փաստացի կրելու հանցանք կատարած անձի ուղղվելու հնարավորության մասին դատարանը կարող է գալ համապատասխան եզրահանգման գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների համակցության վերլուծության արդյունքում՝ մասնավորապես գնահատման ենթարկելով պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող, ինչպես նաև հանցավորի անձը բնութագրող տվյալները: Վերջինի համատեքստում կարևորվում է նաև անձի առողջական վիճակի վերաբերյալ առկա տեղեկությունների վերլուծությունն ու գնահատումը, քանի որ անձի մոտ հիվանդության առկայությունը՝ ելնելով դրա բնույթից, տեսակից և ծանրության աստիճանից գործում առկա այլ տվյալների համակցությամբ, կարող է վկայել անձին ազատությունից զրկելու աննպատակահարմարության և առանց պատիժը փաստացի կրելու պատժի նպատակներին հասնելու հնարավորության մասին, ինչը համահունչ է նաև պատիժ նշանակելու կարևորագույն՝ մարդասիրության սկզբունքին:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը Գ.Վարտանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ նշանակելիս հաշվի է առել կատարված հանցանքի հանրության համար վտանգավորության բնույթը և աստիճանը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, անձը բնութագրող տվյալները, մասնավորապես այն, որ վերջինս վատառողջ է, նախկինում դատապարտված չի եղել, ամուսնացած է, ինչպես նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի բացակայությունը, և որոշել, որ

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ալեքսան Հակոբյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՇԴ/0025/01/16 որոշման 16-17-րդ կետերը:

Գ.Վարտանյանը պետք է կրի իր նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը¹:

Վերաքննիչ դատարանը, քննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցը, գտել է, որ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունը բխում է հանցագործության բնույթի ու հանրային վտանգավորության աստիճանի, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալների և նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայության փաստի ամբողջական վերլուծությունից: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ ամբաստանյալի առողջական վիճակը կարող է քննարկման առարկա դառնալ քրեաիրավական օրենսդրությամբ նախատեսված այլ ընթացակարգով, և այն ինքնին հիմք չէ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար²:

20. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 17-18.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Գ.Վարտանյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրելու պարտականություն սահմանելիս պատշաճ գնահատման չեն ենթարկել գործի փաստական տվյալների ամբողջությունը: Մասնավորապես, թեև թե՛ Առաջին ատյանի, թե՛ Վերաքննիչ դատարաններն անդրադարձել են Գ.Վարտանյանի վատառողջ լինելու հանգամանքին, այնուամենայնիվ այն պատշաճ վերլուծության չեն ենթարկել, չեն գնահատել հիվանդության տեսակը, բնույթն ու հնարավոր բացասական հետևանքները:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ ամբաստանյալի առողջական վիճակը կարող է քննարկման առարկա դառնալ այլ ընթացակարգով, և այն ինքնին հիմք չէ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար, ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններն ըստ էության հանցավորի անձը բնութագրող տվյալներ են, որոնք պետք է պատշաճ ստուգման և գնահատման արժանանան պատիժ նշանակելու գործընթացում՝ գործի ողջ հանգամանքների համատեքստում:

21. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Գ.Վարտանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս պատշաճ գնահատման չեն ենթարկել ամբաստանյալի

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

ատողջական վիճակը, մասնավորապես այն, որ նրա մոտ ախտորոշվել է՝ միզապարկի քաղցկեղ, դրանով պայմանավորված՝ ենթարկվել է վիրահատությունների, հեռացվել է միզապարկը, ցուցված է հետագա բուժում՝ ըստ տեղամասի օնկոլոգի, համարվում է 2-րդ խմբի հաշմանդամ՝ Վերոնշյալ տվյալները չեն դիտարկվել գործում առկա՝ ամբաստանյալի անձը բնութագրող այլ հանգամանքների, այն է՝ նախկինում դատված չլինելու, ամուսնացած լինելու, ծանրացնող հանգամանքների բացակայության համատեքստում:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեջբերված և վերլուծված փաստական տվյալների համակցությունը վկայում է Գ.Վարտանյանին ազատությունից զրկելու աննպատակահարմարության և առանց պատիժը փաստացի կրելու պատժի նպատակներին հասնելու հնարավորության մասին, որը բխում է նաև պատիժ նշանակելու կարևորագույն՝ մարդասիրության սկզբունքի պահանջներից:

Հետևաբար, մարդասիրության և պատասխանատվության անհատականացման սկզբունքների պահպանման տեսանկյունից ամբաստանյալ Գ.Վարտանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն:

22. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալ Գ.Վարտանյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելն անթույլատրելի համարելով, թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է և հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս փոփոխելու կայացված դատական ակտերը, այն է՝ Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճիռը ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի որոշումը բեկանելու, ամբաստանյալ Գ.Վարտանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, իսկ 266-րդ հոդվածի 1-ին մասով ազատագրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելու՝ սահմանելով փորձաշրջան՝ երկու տարի ժամկետով:

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գերասիմ Սուրենի Վարտանյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի որոշումը բեկանել ու փոփոխել:

2. Ամբաստանյալ Գերասիմ Սուրենի Վարտանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

3. Ամբաստանյալ Գերասիմ Սուրենի Վարտանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ նշանակված՝ 2 (երկու) տարի 4 (չորս) ամիս 10 (տասը) օր ժամկետով ազատազրկումը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով: Փորձաշրջանի ընթացքում ամբաստանյալի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնել ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանման վրա:

4. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ/0002/01/18

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹՎԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ ամբաստանյալ՝
տուժող՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ԳԱԼՍՅԱՆԻ
Ի.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2020 թվականի հունվարի 10-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 21-ի որոշման դեմ ամբաստանյալ Արտակ Արամայիսի Գալստյանի պաշտպան Մ.Ալավերդյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի մայիսի 20-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի բաժնում հարուցվել է թիվ 20168717 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2017 թվականի նոյեմբերի 2-ին Արտակ Արամայիսի Գալստյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Գալստյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2018 թվականի հունվարի 9-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, 2018 թվականի մայիսի 30-ի դատավճռով Ա.Գալստյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակել տուգանք՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Նույն դատավճռով որոշվել է տուժող, քաղաքացիական հայցվոր Իշխան Մերուժանի Աբրահամյանի ներկայացուցիչ Քրիստինե Ղազարյանի քաղաքացիական հայցը բավարարել մասնակիորեն՝ Ա.Գալստյանից հօգուտ Ի.Աբրահամյանի բռնագանձվել է 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի փոխհատուցում, քաղաքացիական հայցի մնացած մասը թողնվել է առանց քննության:

3. Նշված դատավճռի դեմ դատական քննության արագացված կարգ կիրառելու և քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու մասով տուժող Ի.Աբրահամյանի ներկայացուցիչ Ք.Ղազարյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2018 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մայիսի 30-ի դատավճիռը բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Գալստյանի պաշտպան Մ.Ալավերդյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Արտակ Գալստյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ. «(...) [Ն]ա 2017 թվականի մայիսի 1-ին կնքված թիվ 2017/05/01 աշխատանքային պայմանագրով աշխատանքի անցնելով «Արամ-Շին 2007» ՍՊ ընկերությունում որպես աշխուղեկ, ձեռնամուխ է եղել 2017 թվականի մայիսի 1-ին «Գլասս ոտրլդ քամինի» ՓԲ ընկերության և «Արամ-Շին 2007» ՍՊ ընկերության միջև թիվ 01.05/17 կապալի պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացմանը, որի համար

աշխատանքի է ընդունել Իշխան Մերուժանի Աբրահամյանին: (...) «Արամ-Շին 2007» ՍՊ ընկերության աշխղեկ Արտակ Գալստյանը, հանդիսանալով աշխատանքի անվրանգության հրահանգավորման, տեխնիկայի անվրանգության և աշխատանքի պաշտպանության ապահովման պարտականատու անձ, խախտել է [ՀՀ քաղաքաշինության նախարարության 10.01.2001թ. թիվ 82 հրամանով սահմանված, ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.11.2001թ. պետական գրանցում ստացած, «ՀՀ տարածքում գործող հանրապետական միջպետական շինարարական նորմերի ցանկ»-ում ներառված ՄՆԻՊ III-4-80 «Անվրանգության տեխնիկական շինարարությունում» նորմատիվ ակտի/ (...) 1.19* կետի և դրա հիման վրա ԳՕՍՏ 12.0.004-90 «Աշխատանքի անվրանգության ուսուցման կազմակերպում» միջպետական սրանդարտի 7.1, 7.2 և 7.9 կետերը՝ Ի.Աբրահամյանին չի ուսուցանել և հրահանգավորել աշխատանքի անվրանգության վերաբերյալ հրահանգները, որոնք վերջինս պարտավոր էր կատարել ողջ աշխատանքային գործունեության ընթացքում, բացի այդ՝ ՄՆԻՊ III-4-80-ի 1.10*, 1.11*, 4.17* և 4.18* կետերի պահանջները՝ չի ապահովվել հարուկ հագուստով, կոշիկներով և մյուս պաշտպանիչ միջոցներով, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ բոլոր անձինք, ովքեր գրնվում են շինարարական հրապարակում, պարտավոր են կրել պաշտպանիչ սաղավարտներ, իսկ առանց բանվորական (աշխատանքային) հարթակով կահավորված հենովի սանդուղքները թույլատրվում են օգտագործել միայն մի հարթության մակարդակից մյուսին անցնելու և այնպիսի աշխատանքների կատարման համար, որոնք չեն պահանջում սանդուղքի կոնստրուկցիայի վրա հենում, իսկ հենովի սանդուղքի վրա կանգնած աշխատելիս, պետք է վերջի հարվածից մեկ մետրից ներքև գրնվել և 1.3 մետր ու ավել բարձրության վրա գրնվելիս աշխատել միայն անվրանգության ապահովիչ գոպիով ամրակապված վիճակում՝ գոբու զսպանակակեռիկը ամրացված շենքի կայուն կոնստրուկցիայից կամ որևէ այլ կայուն տեղից, ինչպես նաև առանց աշխատանքների կատարման նախագծի և դրանով սահմանված անվրանգ մեթոդով աշխատելու պայմաններում, մասնավորապես՝ առանց ամբարձիչ կոունկի միջոցով տանիքի սալի հնարավոր ընկնելը ապահովելու, Ի.Աբրահամյանին հանձնարարել է առանց հենակի ստրիճանի վրա պաշտպանիչ գոբու բացակայությամբ հենման կետից 6 մետր բարձրության վրա կատարել ապամոնտաժման աշխատանքներ, ինչի արդյունքում էլ 2017թ. մայիսի 10-ին, ժամը 14:00-ի սահմաններում զոդման սարքի միջոցով Ի.Աբրահամյանի կողմից եռհարկանի շինության տանիքի սալի հենման անկյունակը կորելու արդյունքում վերջինիս մի մասը կամ քարե պատի մի մասը՝ բեկոննե լիցքի հետ միասին, ընկել է սանդուղքի վրա, կորրել այն և Ի.Աբրահամյանը, ընկնելով գետնին, ստացել է կյանքին

վրանց սպառնացող, առողջության ծանր վնասի հասկանալիներ պարունակող՝ աջ և ձախ հոնքային շրջանների սալջարդ վերքերի, աջ այրային, ակնակապիճային և քունքային շրջանների արյունազեղումների, ձակարային, աջ քունքային, քթի, կզակի շրջանների փափուկ հյուսվածքների սալջարդի, բազմաթիվ քերծվածքների, դիմային գանգի ոսկրերի, ծոծորակոսկրի, սեպոսկրի մարմնի կոտրվածքների, գլխուղեղի սալջարդի, ձախ ազդրի, ձախ սրունքի շրջանների սալջարդ վերքերի, ձախ ազդրոսկրի բաց, ձախ ճաճանչոսկրի փակ կոտրվածքների ձևով մարմնական վնասվածքներ»¹:

6. Առաջին առյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Գալարարանը, գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չկատարելով, հիմք ընդունելով մեղադրանքն ամբողջ ծավալով ամբաստանյալ Արտակ Գալարյանի կողմից կամովին ու գիտակցաբար ընդունելու և դրա հետ համաձայն լինելու փաստերը, հանգում է այն հետևության, որ նա կատարել է (...) ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով իրեն մեղաազարկող արարքը, այն կատարելու համար ենթակա է քրեական պարասահմանարվության ու պարժի:

(...)

Նկատի ունենալով, որ հարուցված քաղաքացիական հայցը չի հակասում օրենքին և չի վերաբերում այլ անձանց իրավունքներին, դատարանը գտնում է, որ քաղաքացիական հայցը պետք է բավարարել մասնակի և ամբաստանյալ Արտակ Արամայիսի Գալարյանից հոգուր րուծող, քաղաքացիական հայցվոր Իշխան Աբրահամյանի բռնագանձել 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես պարճառված վնասի փոխհարուցում, իսկ քաղաքացիական հայցի մնացած մասը պետք է թողնել առանց քննության (...)»²:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն. «(...) Այն դեպքում, երբ արագացված կարգով դատական քննության ժամանակ դատարանը պարզում է, որ ամբաստանյալը համաձայն չէ պարճառված վնասի բնույթի և չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության հետ՝ դատարանը պետք է որոշում կայացնի արագացված դատական քննություն չկիրառելու և ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին:

(...)

Մինչդեռ, (...) պարզելով, որ քաղաքացիական հայցը մասնակիորեն ընդունելու մասին ամբաստանյալի կողմից արված հայտարարության

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 47-48:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 105, 109:

պայմաններում վերջինս համաձայն չէ առաջադրված մեղադրանքի հետ, քանի որ համաձայն չէ հայցապահանջի հետ, Առաջին ասրյանի դատարանը, խախտելով քրեադատավարական օրենքի պահանջը, շարունակել է գործի քննությունն արագացված կարգով:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ասրյանն իրավասու չէր դատական քննության արագացված կարգ կիրառել այն դեպքում, երբ ամբաստանյալը համաձայն չէր քաղաքացիական հայցի չափի հետ (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն անհիմն է, այն հակասում է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջներին, այնպես էլ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ տուժողի ներկայացուցչի կողմից ներկայացված գումարն ընդհանրապես արտացոլված չի եղել մեղադրական եզրակացության մեջ, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ ամբաստանյալի կողմից քաղաքացիական հայցի պահանջը մասնակի ընդունելը հիմք չէր կարող լինել ընդհանուր կարգով դատաքննության անցնելու համար, հետևաբար Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ Առաջին ասրյանի դատարանը պետք է շարունակեր գործի քննությունը ընդհանուր կարգով, քանի որ ամբաստանյալը չի ընդունում հայցապահանջը, ուստի համաձայն չէ առաջադրված մեղադրանքի հետ, անհիմն է և չի բխում քրեադատավարական օրենքի պահանջներից:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ասրյանի դատարանի՝ 2018 թվականի մայիսի 30-ի դատավճիռին:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 75:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքաբերի կողմից բարձրացված իրավական հարցը վերաբերում է քաղաքացիական հայցը մասնակի ընդունելու պայմաններում դատական քննության արագացված կարգ կիրառելու իրավաչափությանը: Մինևս սույն ժամանակ հաշվի առնելով, որ սույն գործով առերևույթ առկա է քրեական հետապնդումը և քրեական գործի վարույթը բացառող հանգամանք, և վերահաստատելով նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանները չունեն բացարձակ բնույթ և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլնի, քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է դուրս գալ վճռաբեկ բողոքարկման սահմաններից:

10.1. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Ա.Գալստյանին մեղսագրված արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

11. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել (...):»*

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի» 7-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պարիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի*

¹ Տե՛ս՝ *Ս.Էրոյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0211/01/10 որոշման 13-14-րդ կետերը:

արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Արարքի հանցավորությունը, դրա պարժեղությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:

(...)»:

12. Վերոնշյալ իրավադրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Վարուժան Ավետիսյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ. «(...) [Ա]նձին հանցագործություն (հանցագործություններ) կատարելու մեջ մեղավոր ճանաչելու և այդ հանցագործության (հանցագործությունների) համար պարիժ նշանակելու միակ հիմքն է կատարման պահին նրա արարքն օրենքով հանցագործություն համարվելը և այդ հանցագործության համար պարիժ նախատեսված լինելը: Ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պարասխանարվության և պարժի այլ կերպ, քան օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, կարգով և չափով: Անձը չի կարող ենթարկվել պարասխանարվության այնպիսի արարքի համար, որն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով նախատեսված չէ գործող օրենքով:

(...) «[2]կա հանցագործություն և պարիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում արացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն րարք: Այն բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից որևէ շեղում անթույլատրելի է»¹:

Զարգացնելով Վարուժան Ավետիսյանի գործով արտահայտված վերոհիշյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Դավիթ Սիմիդյանի գործով նշել է. «(...) Արարքի հանցավորությունն ու պարժեղությունը պետք է նախատեսված լինեն իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով: Այս առումով Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է «օրենք» հասկացությանն առաջադրվող այնպիսի որակական չափանիշներ, ինչպիսիք են հասանելիությունը և կանխատեսելիությունը (...): Որակական այս պահանջները պետք է ապահովվեն ինչպես հանցագործության, այնպես էլ դրա համար պարժի նշանակման ժամանակ (...): Անձը համապարասխան դրույթի րատացի ընկալումից և, անհրաժեշտության դեպքում, դրա կապակցությամբ դատարանների րված մեկնաբանությունից պետք է

¹ Տե՛ս Վարուժան Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11 որոշման 13-րդ կետը:

հասկանա, թե որ գործողությունների և անգործության համար է քրեական պարասխասարվություն նախատեսվում և ինչ պարիժ կնշանակվի այդ գործողությունների կատարման և/կամ անգործության համար: (...)»¹:

12.1 Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Հասանի Գրիգորյանի և Էդուարդ Սարիբեկյանի գործով արձանագրել է. «[Այրաթքի հանցավորությունն ու պարժեխությունն իրավական որոշակիության չափանիշին համապարասխասնող «օրենքով» նախատեսելու պահանջն իրավունքի գերակայության առանցքային քաղաքիչներից է, որն ունի հիմնարար նշանակություն՝ անձին քրեական պարասխասարվության ենթարկելիս օրինականության սկզբունքն ապահովելու համար: Հսրակ կարգադրագրեր (վարքագծի կանոններ) ամրագրող այդպիսի օրենքը մի կողմից ապահովում է դրանում ամրագրված պահանջների հասցեագրումը համապարասխասն վարքագծի դրսևորման ակնկալիք ունեցող անձանց, մյուս կողմից՝ բացառում է կամայականորեն քրեական հեղապնդման ենթարկվելու ցանկացած հնարավորություն՝ երաշխավորելով օրենքի միարեսակ կիրառությունը սահմանված նորմադիվ պահանջներին հակասող վարքագիծ դրսևորող անձի նկարմամբ:

Այսինքն՝ նշված սկզբունքի ներքո իրավական պեղության պոզիդիվ պարպականությունն է ապահովել որդեգրած քրեական քաղաքականության արդացողումն այնպիսի «օրենքում», որում նկարագրված կանոնները և դրանց խախրման դեպքում վրա հասնող իրավական հեղանքները բովանդակային սոռումով այնքան որոշակի կլինեն, որ հնարավորություն կրան իրավունքի հիմնական կրողին դրսևորելու սահմանված պահանջներին համապարասխասնող վարքագիծ: Վերջինս կարող է ապահովված լինել «իրավական որոշակիության» երկու քաղաքիչներին, այն է՝ «հասանելիության» և «կանխարեսելիության» չափանիշներին համապարասխասնող «օրենքի» սոկայության պարագայում, որոնք ունեն հեղկյալ բովանդակային նշանակությունը.

- «օրենքի» համապարասխասնությունը «հասանելիության» չափանիշին պարզելիս անհրաժեշտ է գնահարել, թե այն օրենքը, որով սահմանված պահանջների խախրումը մեղսագրվում է անձին, արդյո՞ք եղել է պարշաճ կերպով հրասարակված, ողջամրորեն հասանելի, թե ոչ: Այսինքն՝ «օրենքը» կարող է համապարասխասնել հասանելիության չափանիշին, եթե այն, պեղական իշխանությունների կողմից լինելով հրասարակված, նվազագույն ջանքերի գործարմամբ եղել է հասանելի:

¹ Տե՛ս Դավիթ Միմիդյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0122/01/13 որոշման 16-18-րդ կետերը:

Որպես այդպիսին, «օրենքը» կարող է հրապարակվել ինչպես դրա փաստագիր փարբերակն անձանց հասանելի դարձնելու, այնպես էլ դրա առցանց փարբերակը համապատասխան պաշտոնական էլեկտրոնային հարթակներում տեղադրելու միջոցով¹,

- «օրենքի» համապատասխանությունը «կանխարեսելիության» չափանիշին պարզելիս անհրաժեշտ է գնահատել, թե այն օրենքը, որով սահմանված պահանջների խախտումը մեղադրվում է անձին, արդյո՞ք բովանդակային առումով ողջամբորեն ընկալելի է եղել անձանց համար: Այլ կերպ՝ արդյո՞ք քրեական պարասխանաբնույթի ենթարկվող սուբյեկտը, տեղեկանալով «օրենքով» նախարեսված պահանջների մասին, ծանոթանալով դրանց վերաբերյալ նորմարիվ վարքագծի կանոնների բովանդակությանը, դրանց վերաբերյալ փորձած դատական մեկնաբանություններին և անհրաժեշտության դեպքում՝ սրանալով համապատասխան իրավական խորհրդարկություն, կարող էր կանխարեսել, թե որ գործողության/անգործության դրսևորումը կհանգեցնի քրեական պարասխանաբնույթի և պարթի նշանակմանը: Այդ հանգամանքը պարզելիս անհրաժեշտ է հաշվի առնել համապատասխան կանոններն ամրագրող փաստաթղթի բովանդակությունը, ոլորտը, որի կարգավորմանն ուղղված է այդ փաստաթուղթը, ինչպես նաև այն անձանց շրջանակն ու կարգավիճակը, որոնց հասցեագրված է այն²:

(...) [Ա]նձին քրեական պարասխանաբնույթի ենթարկելիս «օրենքը», լինելով «հասանելի» և «կանխարեսելի», պետք է հնարավորություն ընձեռի այդ օրենքի հասցեարհորոշը գիտակցելու իր իրավունքների և ազարությունների իրացման թույլարբելի շրջանակները, հարմարեցնելու իր վարքագիծն այդ շրջանակներն ամրագրող նորմերի պահանջներին և գնահատելու իր վարքագծի իրավաչափությունը՝ կանխարեսելով ոչ իրավաչափ վարքագծի դրսևորելու դեպքում վրա հասնող իրավական հետևանքները: Ընդ որում, (...) նշվածը վերաբերում է ինչպես ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գրած նկարագրական

¹ *Sti' u, mutatis mutandis, Kokkinakis v. Greece* գործով Եվրոպական դատարանի՝ 1993 թվականի մայիսի 25-ի վճիռը, գանգատ թիվ 14307/88, 40-րդ կետը; *G. v. France* գործով Եվրոպական դատարանի՝ 1995 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 15312/89 գանգատը, 25-րդ կետը; *Korbely v. Hungary* [GC]: գործով Եվրոպական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 9174/02, 74-75-րդ կետերը:

² *Sti' u mutatis mutandis Cantoni v. France* գործով Եվրոպական դատարանի՝ 1996 թվականի նոյեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 17862/91, 29-րդ կետը, *Mkrtychyan v. Armenia* գործով Եվրոպական դատարանի՝ 2007 թվականի հունվարի 11-ի վճիռը, գանգատ թիվ 6562/03, 39-րդ կետը, *Kafkaris v. Cyprus* [GC] գործով Եվրոպական դատարանի՝ 2008 թվականի փետրվարի 12-ի վճիռը, գանգատ թիվ 21906/04, 140-րդ կետը, *Kononov v. Latvia* [GC] գործով Եվրոպական դատարանի՝ 2010 թվականի մայիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36376/04, 235-րդ կետը, *Del Rio Prada v. Spain* [GC] գործով Եվրոպական դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 42750/09, 79-րդ կետը:

դիսպոզիցիայով ամրագրված հանցագործության պարտադիր և լրացուցիչ հատկանիշներին, այնպես էլ բլանկետային դիսպոզիցիայով նկարագրված հանցագործության հատկանիշները բացահայտող այլ իրավական ակտերի նորմերին, որոնց պահանջների խախտումը ևս հանգեցնում է քրեական պարասխանաարվության: Միայն այդ դեպքում անձի համար կարող է երաշխավորվել իր իրավունքների և ազատությունների իրացման դիսպոզիցիայի թույլատրելի շրջանակներն ընկալելու հնարավորությունը: Հակառակ պարագայում այն իրավական նորմը, որի ենթադրյալ խախտումը մեղադրվում է անձին, չի կարող համարվել «օրենք», քանի որ այն չի համապարասխանի իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չի լինի բավարար ստորհասնի հարակիցումբ, որը թույլ կրա քաղաքացուն դրա հետ համարելելու իր վարքագիծը»¹:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Տեխնիկայի անվտանգության կամ աշխարանքի պաշտպանության կանոնները խախտելը՝ դրանց պահպանման համար պարասխանաարու անձի կողմից, եթե մարդու առողջությանն անզգուշությամբ պարճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ մասնագիտական հիվանդություն պարճվում է (...):»:

Վերոնշյալ իրավադրոյթի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը Հասմիկ Գրիգորյանի և Էդուարդ Մարիբեկյանի վերը հիշատակված գործով փաստել է. «ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից հետևում է, որ այն նկարագրված է բլանկետային դիսպոզիցիայով. քրեական պարասխանաարվություն նախարեսելով օրենքով կամ այլ նորմարիվ իրավական ակտով սահմանված տեխնիկայի անվտանգության կամ աշխարանքի պաշտպանության կանոնների խախտման համար՝ այն չի սահմանում այդ կանոնները և, ըստ այդմ, ենթադրում է հղում նորմարիվ իրավական այլ ակտի (ակտերի), որը պետք է ամրագրի դրանք: Դրանից հետևում է, որ տեխնիկայի անվտանգության կամ աշխարանքի պաշտպանության կանոնները բացահայտելու համար անհրաճեշտ է դիմել դրանք սահմանող համապարասխան նորմարիվ իրավական ակտերի օգնությանը, որոնք պետք է համապարասխանեն իրավական որոշակիության սկզբունքի՝ (...) «հասանելիության» և «կանխարեսելիության» չափանիշներին»²:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Գալստյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա,

¹ Տե՛ն Հասմիկ Գրիգորյանի և Էդուարդ Մարիբեկյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵՇԿ/0131/01/15 որոշման 14-15-րդ կետերը:

² Տե՛ն Հասմիկ Գրիգորյանի և Էդուարդ Մարիբեկյանի գործով վերը հիշատակված որոշման 17-րդ կետը:

պարտավոր լինելով ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ, դրանց նպատակով ընդունել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության վերաբերյալ ներքին իրավական ակտեր՝ աշխատանքների կազմակերպման և իրականացման կանոններ և հրահանգներ, «Գլաս ուորլդ քամինի» ՓԲ ընկերության և «Արամ-Շին 2007» ՍՊ ընկերության միջև կնքված կապալի պայմանագրով ստանձնած ապամոնտաժման աշխատանքները կատարել է կամայական ձևով՝ խախտելով ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ 2001 թվականի հունվարի 10-ի թիվ 82 հրամանով սահմանված, ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2001 թվականի նոյեմբերի 12-ին պետական գրանցում ստացած, «ՀՀ տարածքում գործող հանրապետական միջպետական շինարարական նորմերի ցանկ»-ում ներառված՝ ՄՆԻՊ III-4-80* «Անվտանգության տեխնիկական շինարարությունում» նորմատիվ ակտի 1.19* կետի և ԳՕՍՍ 12.0.004-90՝ «Աշխատանքի անվտանգության ուսուցման կազմակերպում» միջպետական ստանդարտի 7.1, 7.2 և 7.9 կետերը, ինչպես նաև ՄՆԻՊ III-4-80*-ի 1.10*, 1.11*, 4.17* և 4.18* պահանջները, ինչի հետևանքով Ի.Աբրահամյանը Բյուրեղավան քաղաքի «Գլաս ուորլդ քամինի» ընկերության տարածքում գտնվող կիսաքանդ շինության երրորդ հարկի տանիքի ծածկի սալը ապամոնտաժելու արդյունքում մոտ 6 մետր բարձրությունից վայր է ընկել գետնին և ստացել առողջությանը ծանր վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածքներ¹:

Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, Ա.Գալստյանին մեղավոր է ճանաչել իրեն առաջադրված մեղադրանքում՝ մասնակի բավարարելով նաև ներկայացված քաղաքացիական հայցը²:

Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին գտել է, որ Առաջին ատյանի դատարանը պարզելով, որ ամբաստանյալը համաձայն չէ հայցապահանջի և հետևաբար մեղադրանքի հետ, իրավասու չէր շարունակելու արագացված կարգով գործի դատական քննությունը, արդյունքում բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության³:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, Ա.Գալստյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

157-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, իսկ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը բեկանելով և գործը նոր քննության ուղարկելով, պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել այն հանգամանքը, թե արդյոք նորմատիվ պահանջները, որոնց խախտումը մեղաազգրվել է Ա.Գալստյանին, համապատասխանում են իրավական որոշակիության սկզբունքի՝ «հասանելիության» և «կանխատեսելիության» չափանիշներին:

Այսպես, Ա.Գալստյանին մեղադրանք է առաջադրվել «ՄՆԻՊ III-4-80* «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» նորմատիվ ակտի 1.19* կետի և ԳՕՍՏ 12.0.004-90՝ «Աշխատանքի անվտանգության ուսուցման կազմակերպում» միջպետական ստանդարտի 7.1, 7.2 և 7.9 կետերը, ինչպես նաև ՄՆԻՊ III-4-80*-ի 1.10*, 1.11*, 4.17* և 4.18* պահանջները խախտելու համար: Մասնավորապես, «ՄՆԻՊ III-4-80* «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերը հաստատվել են ԽՍՀՄ Պետշինի 1980 թվականի հունիսի 9-ի որոշմամբ և ուղղված են եղել նոր հաստատությունների, շենքերի և շինությունների շինարարության, գործող հաստատությունների, շենքերի և շինությունների վերանորոգման, ընդլայնման և տեխնիկական վերազինման ժամանակ շինարարական-մոնտաժային աշխատանքների իրականացման, նոր շինարարական նախագծերի մշակման ոլորտի համակարգմանը: ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 2001 թվականի հոկտեմբերի 1-ի՝ «Նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» թիվ 82 հրամանով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված (ընդունված) հանրապետական, ինչպես նաև միջպետական շինարարական նորմերը, որում ներառված է նաև «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» վերտառությամբ թիվ III-4-80* ՄՆԻՊ-ը: Ինչ վերաբերում է ԳՕՍՏ 12.0.004-90՝ «Աշխատանքի անվտանգության ուսուցման կազմակերպում» միջպետական ստանդարտին, ապա այն հաստատվել է՝ 12.0.004-90 ԳՕՍՏ-ը՝ ԽՍՀՄ Արտադրության որակի և ստանդարտների պետական կոմիտեի՝ 1990 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ: Ընդ որում, նշված նախկին ԽՍՀՄ պետական ստանդարտը գործում է Հայաստանի Հանրապետության տարածքում՝ համաձայն ԱՊՀ երկրների «Ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» միջկառավարական համաձայնագրի՝ կնքված 1992 թվականի մարտի 13-ին¹:

¹ Տե՛ս, mutatis mutandis, *Գազիկ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԳ/0258/01/16 որոշումը, ինչպես նաև *Հասմիկ Գրիգորյանի և Էդուարդ Սարիբեկյանի* գործով վերը հիշատակված որոշումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել այն, որ վերոնշյալ ՄՆԻՊ և ԳՕՍՍ կանոնները անձանց համար հասանելի եղանակով պաշտոնական որևէ աղբյուրում հրապարակված չեն, այդ կանոնները կարելի է գտնել միայն համացանցային տիրույթում առկա ոչ պաշտոնական կայքէջերում, ինչը չի երաշխավորում դրանց համապատասխանությունը բնօրինակին և առաջացնում է ողջամիտ կասկած՝ դրանցով սահմանված աշխատանքի պաշտպանության կանոնների արժանահավատության վերաբերյալ: Ընդ որում, հարկ է նաև ընդգծել, որ այդ կանոններն ի սկզբանե կազմված են եղել օտար լեզվով, իսկ դրանց հայերեն թարգմանված օրինակը հասանելի չէ որևէ աղբյուրում: Ավելին, ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 2001 թվականի թիվ 82 հրամանը, որով Հայաստանի Հանրապետությունում հաստատվել են «Անվտանգության տեխնիկական շինարարությունում» վերտառությամբ թիվ III-4-80* ՄՆԻՊ կանոնները, ոչ թե ամրագրում է անվտանգության տեխնիկայի նորմեր կամ վերարտադրում այդ կանոնների ամբողջությունը մայր աղբյուրից, այլ ընդամենը կից ցանկում հղում է կատարում ԽՍՀՄ Պետշինի 1980 թվականի հունիսի 9-ի որոշմամբ ընդունված՝ ՄՆԻՊ կանոնների վերնագրերին: Այսինքն, թեև նշված հրամանը հաստատում է ՄՆԻՊ կանոնների գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում, սակայն այն չի պարունակում ո՛չ այդ կանոնների բովանդակությունը, ո՛չ էլ համապատասխան հղում այդ կանոնները գտնելու պատշաճ աղբյուրին: Թեև ԳՕՍՍ 12.0.004-90 կանոնները ևս գործում են Հայաստանի Հանրապետության տարածքում, սակայն որևէ նորմատիվ իրավական ակտով ևս հստակեցված չէ ո՛չ այդ կանոնների բովանդակությունը, ո՛չ էլ առկա է համապատասխան հղում այդ կանոնները գտնելու պատշաճ աղբյուրին:

Վերոնշյալ հանգամանքների համակցությունը ցույց է տալիս, որ վերոշարադրյալ ՄՆԻՊ և ԳՕՍՍ կանոնները պետական իրավասու մարմնի կողմից Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես հրապարակված չլինելու պայմաններում, ապահովված չի եղել նվազագույն ջանքերի գործադրմամբ դրանք գտնելու և ընթերցելու հնարավորությունը: Ուստի նշած կանոնները, որոնց խախտումը մեղսագրվում է Ա.Գալստյանին, չեն համապատասխանել «հասանելիության» չափանիշին: Նման պայմաններում դրանք չեն համապատասխանել նաև «կանխատեսելիության» չափանիշին:

Հետևաբար «Անվտանգության տեխնիկական շինարարությունում» վերտառությամբ թիվ III-4-80* ՄՆԻՊ և ԳՕՍՍ 12.0.004-90 «Աշխատանքի անվտանգության ուսուցման կազմակերպում» կանոնները չեն կարող համարվել «օրենք», քանի որ դրանք չեն համապատասխանում իրավական

որոշակիության (res judicata) սկզբունքին: Այդ պայմաններում Ա.Գալստյանին թիվ III-4-80* ՄՆԻՊ և ԳՕՍՍ 12.0.004-90 կանոնների խախտման համար դատապարտելը կհանգեցնի «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (Nullum crimen, nulla poena sine lege) սկզբունքի խախտման:

16. Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Գալստյանին մեղաազրված արարքում առկա չեն ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

17. Ամփոփելով վերոշարադրյալը, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանները, ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Ա.Գալստյանին մեղավոր ճանաչելով, թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 5-րդ և 157-րդ հոդվածների սխալ կիրառում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն, հիմք է Առաջին ատյանի դատարանի դատավճիռն ու Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Մինևույն ժամանակ, հաշվի առնելով, որ սույն գործով առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում պետք է ճանաչել անմեղ և արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի բարձրացրած՝ սույն որոշման 8-րդ կետում ներկայացված փաստարկներին:

Նման պայմաններում, Ա.Գալստյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին, ենթակա է վերացման, իսկ տուժող Ի.Աբրահամյանի ներկայացուցիչ Ք.Ղազարյանի քաղաքացիական հայցը պետք է թողնել առանց քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 397-րդ, 419-րդ հոդվածի 6-րդ մասով, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արտակ Արամայիսի Գալստյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի մայիսի 30-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը բեկանել:

2. Արտակ Արամայիսի Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Արտակ Արամայիսի Գալստյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

4. Տուժող Իշխան Մերուժանի Աբրահամյանի ներկայացուցիչ Քրիստինե Ղազարյանի քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴՆ/0042/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի հունվարի 10-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հիմքով դատապարտյալ Շուշանիկ Զակոյի Ոսկանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի փետրվարի 6-ի դատավճռով Շուշանիկ Զակոյի Ոսկանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներ կատարելու մեջ և դատապարտվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ 8 (ութ) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով, պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Շ.Ոսկանյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Շ.Ոսկանյանից

գանձվել է 123.660 (հարյուր քսաներեք հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ որպես դատական ծախս:

2. Պաշտպան Յ.Մարգարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի մայիսի 22-ի որոշմամբ բողոքը բավարարվել է, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը Շ.Ոսկանյանի նկատմամբ նշանակված պատժի կրման և դատական ծախսերի մասով բեկանվել և փոփոխվել է: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Շ.Ոսկանյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով, իսկ դատական ծախսը չի գանձվել:

3. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի դեմ դատապարտյալ Շուշանիկ Ոսկանյանի կողմից նոր հանգամանքի հիմքով բերված բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2019 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ հարուցել է դատական ակտի վերանայման վարույթ և վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

4. Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Շ. Ոսկանյանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ *«2016 թվականի ընթացքում, առանց իրացնելու նպատակի, ապօրինի պատրաստել և անձնական օգտագործման համար իր փանը պահել է զգալի չափի՝ 0,570 գրամ հասարարուն չոր քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց (...)»:*

6. ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի 2020 թվականի հունվարի 8-ի գրության համաձայն՝ Շուշանիկ Ոսկանյանի նկատմամբ սահմանված փորձաշրջանը 2019 թվականի հոկտեմբերի 22-ին փաստացի ավարտվել է:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոշարադրյալ հիմնավորումներով.

7. Բողոք բերած անձը, հղում կատարելով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերը սահմանող ՀՀ կառավարության՝ 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշմանը, փաստարկել է, որ նշված փոփոխություններով բարելավվել է իր վիճակը, հետևաբար դրանք ենթակա են կիրառման իր նկատմամբ:

8. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է վերանայել իր նկատմամբ կայացված դատական ակտերը, մեղմացնել նշանակված պատիժը կամ իրեն արդարացնել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՄԴՌ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է դատապարտյալ Շուշանիկ Ոսկանյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 22-ի որոշումը վերանայելու համար:

10. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) Արարքի պարժեղիությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապարասիան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պարիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:*

11. Քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nulum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Դրա հետ մեկտեղ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Մասնավորապես, քրեական օրենքի հետադարձության կանոնը սկսում է գործել այն դեպքերում, երբ նոր օրենքը կա՛մ վերացնում է արարքի հանցավորությունը (ապաքրեականացում), կա՛մ մեղմացնում է պատիժը, կա՛մ այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը: Թվարկված պայմաններն ունեն իմպերատիվ բնույթ, և նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դրանցից առնվազն մեկի առկայության պարագայում նոր օրենքի

գործողությունը տարածվում է մինչև այն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն¹:

12. ՀՀ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան), 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշման շրջանակներում անդրադառնալով արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու կառուցակարգին, արձանագրել է. «(...) [Ելնելով] ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից և վերջինիս՝ սույն որոշման մեջ բացահայտված բովանդակությամբ կիրառումն սպահովելու համար իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը պարիժ կրող անձանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ իրավակարգավորումների շրջանակներում՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելը դիտարկելով որպես դատական ակտը վերանայելու համար նոր հանգամանք (...)»²:

Արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ գտնվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք, և օրինական ուժի մեջ մտնած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով (...)»³:

13. Նախորդ կետում մեջբերված Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գասպար Պողոսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴՈ/0013/01/11 որոշման 16-17-րդ կետերը:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշման եզրափակիչ մասը:

օրենքի ընդունմամբ նախկինում կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ենթակա են վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49.1-րդ գլխով սահմանված՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման կանոններով: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը նոր հանգամանք է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու համար:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Մտանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրասարելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝*

պարտվում է կալանքով առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

(...):»

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հավելվածում **«մարիխուանա»** տեսակի թմրամիջոցի համար որպես զգալի չափ է սահմանված եղել **0.5 գրամից մինչև 5.0 գրամը ներառյալ:**

Վերոնշյալ օրենքի 4-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 1-5-րդ հավելվածներն ուժը կորցրած ճանաչելուց հետո ՀՀ կառավարության՝ 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածով **«մարիխուանա»** տեսակի թմրամիջոցի համար որպես **մանր չափ** է սահմանվել **0.5 գրամից մինչև 2.5 գրամը ներառյալ**, իսկ որպես **զգալի չափ՝ 2.5 գրամից մինչև 12.5 գրամը ներառյալ:**

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Շ. Ոսկանյանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ առանց իրացնելու նպատակի **զգալի չափերի՝ 0.570 գրամ քաշով «մարիխուանա»** տեսակի թմրամիջոց ապօրինի պատրաստելու և պահելու համար¹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները վերացնում են

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Շ.Ոսկանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի հանցավորությունը:

Մասնավորապես, «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի զգալի չափերի նվազագույն և առավելագույն սահմանների օրենսդրական փոփոխությունների համեմատական ուսումնասիրությունից երևում է, որ դրանց արդյունքում 0.570 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոցն այսուհետ ոչ թե զգալի, այլ մանր չափի է:

Նման պայմաններում թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին պետք է տալ հետադարձ ուժ և գործողությունը տարածել մինչև դրանց ուժի մեջ մտնելը Շ.Ոսկանյանի կողմից կատարված արարքի վրա:

17. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՄԴՈ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է դատապարտյալ Շուշանիկ Ոսկանյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 22-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու համար:

18. Վերանայման արդյունքում անհրաժեշտ է բեկանել ու փոփոխել դատապարտյալ Շ.Ոսկանյանի վերաբերյալ Առաջին ստյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 6-ի դատավճիռը, Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 22-ի որոշումը բեկանել ու փոփոխել, Շ.Ոսկանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով որակված արարքն անհրաժեշտ է վերաորակել և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով պետք է թողնել անփոփոխ:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ Շ.Ոսկանյանի նկատմամբ սահմանված փորձաշրջանը 2019 թվականի հոկտեմբերի 22-ին ավարտվել է¹:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Շուշանիկ Զակոյի Ոսկանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 22-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Շուշանիկ Զակոյի Ոսկանյանի վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 6-ի դատավճիռը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 22-ի որոշումը բեկանել ու փոփոխել:

3. Շուշանիկ Զակոյի Ոսկանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով որակված արարքը վերաորակել և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել:

4. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0061/01/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արմեն Շայվալադի Ավագյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 225¹-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 235-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը:

2008 թվականի մարտի 2-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասի և 235-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը:

2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ՝ թիվ 62202508 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 62202608 համարով:

2008 թվականի մարտի 2-ին Արմեն Շայվալադի Ավագյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 5-ի որոշմամբ Արմեն Ավագյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225¹-րդ հոդվածի 2-րդ մասով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի մարտի 5-ի որոշմամբ Ա.Ավագյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 25-ի որոշմամբ Ա.Ավագյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի մարտի 28-ի որոշմամբ Ա.Ավագյանի վերաբերյալ գործի նյութերն անջատվել են առանձին վարույթ և նույն թվականի մարտի 31-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ այն ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 25-ի դատավճռով Ա.Ավագյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Ավագյանի պաշտպան Լ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2008 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 25-ի դատավճիռը՝ նշանակված պատժի մասով փոփոխել է, Ա.Ավագյանի նկատմամբ նշանակված պատիժը՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը, պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

4. 2019 թվականի դեկտեմբերի 26-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը հիմնարար խախտման հիմքով բողոք է բերել Վճռաբեկ դատարան, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմինը, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով, Արմեն Ավագյանին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ «նա նպատակ ունենալով աջակցել 2008թ. փետրվարի 19-ին կայացած Հայաստանի Հանրապետության Նախագահի հերթական ընտրություններում ըստ նախնական տվյալների պարտություն կրած Նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանին ու նրա համահիռոհներին՝ ընտրությունների օրինականությունը միջազգային հանրության առաջ կասկածի տակ դնելու, ընտրությունների արդյունքների նկատմամբ հասարակության լայն զանգվածներում անվստահություն սերմանելու, հասարակական դժգոհություն և ընդվզումների պատրաստ սրբեղծելու գործում, անմիջական մասնակցություն է ունեցել ընտրությունների հաջորդ իսկ օրվանից Երևան քաղաքում օրենքով սահմանված կարգի խախտմամբ իրականացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին:

Այնուհետև՝ երբ ազատության հրապարակում անընդմեջ իրականացվող հրապարակային զանգվածային միջոցառումների շրջանում հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պարձառելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու համար հարմարեցված այլ պարագաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրացնելիս, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողները 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 06-ի սահմաններում, Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռել սրուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը և հերթական անգամ նախազգուշացրել՝ օրենքով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպած միջոցառումը դադարեցնելու մասին, Արմեն Շայվալադի Ավագյանը՝ հրապարակում գրելով մի խումբ այլ անձանց հետ հարձակում է գործել ոստիկանության ծառայողների նկատմամբ, որի ընթացքում առողջության համար ոչ վրանգավոր բռնություն է գործադրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի աշխատակցի նկատմամբ՝ ուրբերով հարվածելով նրան՝ կապված վերջինիս կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ»¹:

6. Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում ամբաստանյալ Ա.Ավագյանի պաշտպան Լ.Գրիգորյանը միջնորդել է նշանակել լրացուցիչ կամ կրկնակի դատաբժշկական փորձաքննություն,

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-րդ, թերթեր 77-78:

դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել դեպքի օրն Ա.Ավագյանի հետ ձերբակալված և ոստիկանության բաժնում պահված Խաչիկ Գասպարյանին և Ավո Ներսիսյանին: Առաջին ատյանի դատարանը միջնորդությունը մերժել է՝ պատճառաբանելով, որ պաշտպանի կողմից չեն նշվել, թե որ հանգամանքներն են պահանջում լրացուցիչ հետազոտություն և ինչպիսի նոր ապացույցների հիման վրա¹:

7. Առաջին ատյանի դատարանը, Ա.Ավագյանին մեղավոր ճանաչելով մեղսագրվող հանցագործության կատարման մեջ, հիմք է ընդունել վկաներ՝ ՀՀ ոստիկանության Էրեբունո բաժնի աշխատակիցներ Էրիկ Քոչինյանի, Մամիկոն Հակոբյանի, Ժոռա Համբարձումյանի ցուցմունքները, դատաբժշկական փորձագետի թիվ 277 եզրակացությունը, ինչպես նաև դեպքի վայրի զննության արձանագրությունները²:

8. Վերաքննիչ դատարանը նշել է հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Արմեն Շայվալադի Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքը հիմնավորվում, իսկ ամբաստանյալի վերը բերված պարճառարանություններն իրեն մեղավոր չճանաչելու վերաբերյալ հերքվում են գործով ձեռք բերված, ընդհանուր իրավասության դատարանի կողմից հերազուրված ապացույցներով վկաներ Է.Քոչինյանի, (...) Մ.Հակոբյանի, (...) Ժ.Համբարձումյանի ցուցմունքներով, (...) դատաբժշկական փորձագետի թիվ 277 եզրակացությամբ, (...) դատական ակտում շարադրված փորձագիտական եզրակացություններով, դեպքի վայրի զննության արձանագրություններով:

Վերլուծելով գործի փաստական փյախները, գնահատելով ինչպես յուրաքանչյուր ապացույց, այնպես էլ դրանք իրենց համակցությամբ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Արմեն Ավագյանին ՀՀ քր. օր.-ի 316 հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքը որակված է ճիշտ և նա պետք է քրեական պարասիսանսարվության և պարճի ենթարկվի:

Նման պայմաններում պաշտպանի վերաքննիչ բողոքում շարադրված պարճառարանություններն այն բավարարելու հիմք համարվել չեն կարող: (...)»³:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 61:
² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 68-69:
³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 122-124-րդ:

9. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի չեն գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, ինչը հանգեցրել է Արմեն Ավագյանի իրավունքների խախտման: Մասնավորապես, առաջադրված մեղադրանքի ձևակերպումից չի երևում, թե մեղսագրված արարքն ինչու՞մ է արտահայտվել, առհասարակ նկարագրված չէ, թե ով կամ ովքեր են իշխանության ներկայացուցիչ հանդիսացել, հետևաբար խոսել ծառայողական պարտականությունների կատարման մասին հիմնագուրկ է: Ավելին՝ մեղադրանքի նման ձևակերպումից անհասկանալի է, թե ինչպես է ամբաստանյալն իրականացրել իր հանցավոր մտադրությունը, այսինքն՝ ինչպիսի ձև և բովանդակություն է ունեցել մեղսագրված արարքի պարտադիր հատկանիշ հանդիսացող՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելն այն պայմաններում, երբ վերացական կերպով նկարագրվել են հարվածներ հասցնելու գործողություններ, որոնց վերաբերյալ կոնկրետ կատարման ձևն ու եղանակը չի նկարագրվել, ինչպես նաև հստակեցված չէ հարվածների քանակը, դրա արդյունքում ֆիզիկական ցավի առկայությունը կամ բացակայությունը: Բացի այդ, հատկանշական է այն, որ քրեական գործով տուժող ճանաչված անձ չկա:

Բողոքաբերը փաստել է, որ դատական քննության ընթացքում պաշտպանի կողմից միջնորդություն է ներկայացվել դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել վկաներ Ա.Ներսիսյանին և Խ.Գասպարյանին, ովքեր ականատես են եղել իրադարձություններին և Ա.Ավագյանի հետ միասին բերման են ենթարկվել ոստիկանության բաժին: Սակայն հիշյալ անձանց դատարան հրավիրելու և որպես վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժել է:

Վկայակոչելով *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործով դատարանը բացառապես հիմնվել է վիճարկվող իրադարձությանն ակտիվ ներգրավված ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ պաշտպանության կողմին չտալով հակառակ ապացույցներ ներկայացնելու որևէ հնարավորություն, ինչը հանգեցրել է պաշտպանության իրավունքի սահմանափակման:

Բողոքի հեղինակը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասը, փաստել է, որ ստորադաս դատարանները գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնցով խաթարվել է արդարադատության բուն էությունը: Ըստ բողոքի հեղինակի՝ դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի

(այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների պահանջները: Բողոքաբերի պնդմամբ՝ թե՛ Առաջին ատյանի և թե՛ Վերաքննիչ դատարաններն առավել արժանահավատ են համարել ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները՝ պաշտպանության կողմին չտալով հակառակ ապացույցներ ներկայացնելու որևէ հնարավորություն, ինչը հանգեցրել է պաշտպանության իրավունքի սահմանափակման:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 25-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 14-ի որոշումը և կայացնել արդարացման դատական ակտ՝ ճանաչելով ու հռչակելով Ա.Ավագյանի անմեղությունը մեղսագրված արարքում:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

12. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարծվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը փյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայր են եկել նոր կամ նոր բացահայտված

փաստեր, կամ նահորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական պխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ¹:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «հիմնարար խախտում» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից զուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 Արձանագրության Բացատրական զեկույցի 31-րդ կետում ընգծված է, որ «4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հոգուր դատապարտված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատապարտյալի»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախևառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

այնպիսին, որ «ազդեն գործի ելքի վրա»՝ կամ հոգուտ անձի, կամ հակառակը¹:

12.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնող դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ե]նթացում էր կրողը մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խախտում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

12.2. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտնող դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Եման իրավակարգավորումը քիչում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...))²:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

² Տե՛ս *Մկրտիչ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

12.3. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ թիվ ՍԴՈ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարճատահետևանքային կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկարումը արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից րուժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճատված վնասը հատուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեզրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը սրացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»¹:

13. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիր ժամկետում արդարացի և իրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք րվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք րված վկաները (...):»:

14. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով² արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին**

¹ Տե՛ն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-1431 որոշման 4.3-րդ կետը:

² Տե՛ն *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ¹,

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ **դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»²,**

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին³,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետեր, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետեր:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետեր:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետ, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետ, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետ:

համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն¹,

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, **միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին:** Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին²,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում:** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած **այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները³:**

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին աստիանի դատարանում գործի քննության ընթացքում ամբաստանյալ Ա.Ավագյանի պաշտպան Լ.Գրիգորյանը միջնորդել է նշանակել լրացուցիչ կամ կրկնակի դատաբժշկական փորձաքննություն, դատարան հրավիրել և

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topić v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետ:

² Տե՛ս *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը, 206-րդ կետ:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76201/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

որպես վկա հարցաքննել դեպքի օրն Ա.Ավագյանի հետ ձերբակալված և ոստիկանության բաժնում պահված Խաչիկ Գասպարյանին և Ավո Ներսիսյանին: Առաջին ատյանի դատարանը միջնորդությունը մերժել է՝ պատճառաբանելով, որ պաշտպանի կողմից չեն նշվել, թե որ հանգամանքներն են պահանջում լրացուցիչ հետազոտություն և ինչպիսի նոր ապացույցների հիման վրա¹:

15.1 Առաջին ատյանի դատարանը, 2008 թվականի ապրիլի 25-ի դատավճռով Ա.Ավագյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության մեջ, որպես արարքի կատարումը հիմնավորող ապացույցներ հիմք է ընդունել միայն վկաներ՝ ոստիկանության Էրեբունու բաժնի աշխատակիցներ Է.Քոչինյանի, Մ.Հակոբյանի, Ժ.Համբարձումյանի ցուցմունքները, դատաբժշկական փորձագետի թիվ 277 եզրակացությունը, դեպքի վայրի զննության արձանագրությունները²:

15.2 Վերաքննիչ դատարանը, 2008 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ գտել է, որ Ա.Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքը հիմնավորվում, իսկ ամբաստանյալի կողմից բերված պատճառաբանություններն իրեն մեղավոր չճանաչելու վերաբերյալ հերքվում են գործով ձեռք բերված, ընդհանուր իրավասության դատարանի կողմից հետազոտված ապացույցներով³:

16. Սույն որոշման 15-15.2-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մուշեղ Սաղաթեյան ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ա.Ավագյանի մեղադրանքը հիմնավորելիս առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովել *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարաններն Ա.Ավագյանի մեղքը հիմնավորող ապացուցողական զամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը

¹Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

²Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Ա.Ավագյանի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակիցներ՝ վկաներ՝ ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի աշխատակիցներ Էրիկ Քոչինյանի, Մամիկոն Հակոբյանի ցուցմունքներն են: Ինչ վերաբերում է այլ ապացույցներին, որոնց դատարանները հղում են կատարել, այն է՝ որպես վկա հարցաքննված ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի աշխատակից Ժոռա Համբարձումյանի ցուցմունքը և դեպքի վայրի զննության արձանագրությունները, ապա դրանք անուղղակի ապացույցներ են և ուղղակիորեն չեն հաստատում Ա.Ավագյանի առնչությունը մեղսագրվող արարքին: Միաժամանակ, հարկ է նկատել, որ դատաբժշկական փորձագետի եզրակացությունը վերաբերել է Ա.Ավագյանի մարմնական վնասվածքներին, հետևաբար այն առհասարակ չի կարող դիտարկվել որպես Ա.Ավագյանի մեղքը հիմնավորող ապացույց:

Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Ա.Ավագյանին մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում: Ավելին, ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից՝ *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում, սույն գործով ևս պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Մասնավորապես, պաշտպանության կողմին լիարժեք հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու վկաների և ապացուցողական զանգվածում ներառելու նրանց ցուցմունքները, որոնք, ըստ պաշտպանի, կասկածի տակ էին դնում ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալները և հիմնավորում էին դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանության կողմի առաջ քաշված վարկածը: Այլ կերպ, ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն անվերապահորեն ընդունելը՝ առանց պաշտպանության կողմին լիարժեք հնարավորություն ընձեռելու մրցակցային դատավարության պայմաններում արդյունավետորեն վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքների արժանահավատությունը, ինչպես արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով, այնպես էլ սույն գործով, հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:

17. Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Ա.Ավագյանի մեղավորության հարցին՝ Վճռարենկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝
«Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք

(...)

3) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք»:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրտեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար (...):»

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի դրույթն ընդգծում է առաջադրվող «մեղադրանքի» մասին մեղադրյալին ծանուցելուն հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Հանցագործության վերաբերյալ մանրամասն տվյալները կարևոր դեր են խաղում քրեական դատավարությունում այն իմաստով, որ դրանց հայտարարման պահից է անձը համարվում պաշտոնապես ծանուցված նրա դեմ առաջ քաշված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելու իրավունքը պետք է դիտել պաշտպանության նախապատրաստության իրավունքի լույսի ներքո¹:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Seliverstov v. Russia* գործով 2008 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 19692/02, կետեր 16-17:

17.1. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշման մեջ մեղադրանքի ձևակերպումը դիտարկելով որպես արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման միջոց՝ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) *Դիրանում, Բացի հանցավորի մասին փյալներից, հանցագործության փեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հարակ պետք է նշվեն արարքի քրեահրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ: (...)*

Վճռաբեկ դատարանը գրնում է, որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կտա մեղադրյալին պատշաճ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դատավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայագրկման»¹:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Արմեն Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա նպատակ ունենալով աջակցել 2008թ. փետրվարի 19-ին կայացած Հայաստանի Հանրապետության Նախագահի հերթական ընտրություններում ըստ նախնական տվյալների պարտություն կրած Նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանին ու նրա համախոհներին՝ ընտրությունների օրինականությունը միջազգային հանրության առաջ կասկածի տակ դնելու, ընտրությունների արդյունքների նկատմամբ հասարակության լայն զանգվածներում անվստահություն սերմանելու, հասարակական դժգոհություն և ընդվզումների պատրանք ստեղծելու գործում, անմիջական մասնակցություն է ունեցել ընտրությունների հաջորդ իսկ օրվանից Երևան քաղաքում օրենքով սահմանված կարգի խախտմամբ իրականացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին:

¹ Տե՛ս *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 21-րդ կետը:

Այնուհետև՝ երբ ազատության հրապարակում անընդմեջ իրականացվող հրապարակային զանգվածային միջոցառումների շրջանում հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պատճառելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու համար հարմարեցված այլ պարագաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրացնելիս, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողները 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 06-ի սահմաններում, Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռել ստուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը և հերթական անգամ նախազգուշացրել՝ օրենքով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպված միջոցառումը դադարեցնելու մասին, Արմեն Ավագյանը՝ հրապարակում գտնվող մի խումբ այլ անձանց հետ հարձակում է գործել ոստիկանության ծառայողների նկատմամբ, որի ընթացքում առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի աշխատակցի նկատմամբ՝ ոտքերով հարվածելով նրան՝ կապված վերջինիս կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ¹:

19. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքների գնահատմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ավագյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունը չի համապատասխանում «մեղադրանքի» վերաբերյալ միջազգային և ներպետական պահանջներին ու Վճռաբեկ դատարանի կողմից *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշմամբ սահմանված չափանիշներին: Մասնավորապես, մեղադրանքի ձևակերպումը պարունակում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի դիսպոզիցիայի նկարագրությունը: Մեղադրանքի մեջ նշված չեն այնպիսի փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն հիմնավորված կերպով եզրահանգելու, որ Ա.Ավագյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասին, այն է՝ մեղադրանքի բովանդակությունից հնարավոր չէ պատկերացում կազմել, թե ու՞մ նկատմամբ է գործադրվել բռնություն², պարզ չէ, թե հարվածների հետևանքով կոնկրետ ու՞մ ինչպիսի վնաս է պատճառվել և ինչպե՞ս է որոշվել, որ Ա.Ավագյանի կողմից գործադրվել է հենց առողջության համար ոչ վտանգավոր բռնություն:

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ *Վահան Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԱՐԴ/0038/01/13 որոշման 14-15-րդ կետերը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Ա.Ավագյանին առաջադրված մեղադրանքում մանրամասնորեն և հստակ չեն նշվել արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական տվյալները՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրանքի այդպիսի անորոշ ձևակերպման պայմաններում խախտվել է քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքը՝ տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքերի մասին, որպիսի պայմաններում չի ապահովվել նաև անձի պաշտպանության իրավունքի իրացումը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է արդար դատաքննության հիմնարար իրավունքի պահանջների խախտման:

20. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու Ա.Ավագյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել, քրեական գործի վարույթը կարճելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

21. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արմեն Շայվալադի Ավագյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության

դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 25-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 14-ի որոշումը բեկանել:

2. Արմեն Շայվալադի Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0080/01/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
դիմող՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Մ.ԱՅՎԱԶՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Մասիս Վազգենի Այվազյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 26-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը, իսկ մարտի 2-ին՝ թիվ 62202608 քրեական գործը, որոնք 2008 թվականի մարտի 2-ին միացվել են մեկ վարույթում՝ 62202608 համարով: Նույն օրը Մասիս Վազգենի Այվազյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 3-ի որոշմամբ Մ.Այվազյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է

առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 225¹-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ Մ.Այվազյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ թիվ 62202608 քրեական գործից անջատվել են Մ.Այվազյանի վերաբերյալ գործի նյութերը, կազմվել է թիվ 62207608 քրեական գործը և կատարվել նախաքննություն:

2008 թվականի ապրիլի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 11-ի դատավճռով Մ.Այվազյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ Մ.Այվազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Մ.Այվազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2008 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 11-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի մարտի 19-ի որոշմամբ Մ.Այվազյանի և նրա պաշտպան Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

5. 2019 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի հիմնարար խախտման հիմքով վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Նախաքննության մարմնի որոշմամբ Մասիս Այվազյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին

մասով այն բանի համար, որ նա «(...) 2008 թվականի փետրվարի 20-ից մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել է Երևան քաղաքում կազմակերպված, մայրաքաղաքի կենսագործունեությանը, ճանապարհատրանսպորտային երթևեկությանը, պետական հիմնարկների բնականոն գործունեությանը, ազգաբնակչության հանգիստը և անդորրը խանգարող զանգվածային հրապարակային միջոցառումներին, երթերին, շուրջօրյա հանրահավաքներին ու նարագույցերին: (...)

Այնուհետև, երբ «Ազատության» հրապարակում անընդմեջ իրականացվող հրապարակային զանգվածային միջոցառումների մասնակիցների շրջանում հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պարճատելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու համար հարմարեցված այլ պարագաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրացնելիս իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողները 2008 թվականի մարտի 1-ին ժամը 07-ի սահմաններում, «Ազատության» հրապարակում գրնվող հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռել արուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը, հանրահավաքի մասնակիցների մի մասը սկսել է աղմկել ու դիմադրություն ցույց տալ, իսկ «Ազատության» հրապարակը քննչական գործողություններին խոչընդոտելու հանգամանքը բացատրելու և կանխելու նպատակով շրջափակելուց հետո օրինախախտները առանձին խմբավորումներով բաժանվել են հրապարակի շրջակա փողոցներ, որտեղ շարունակել են ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցների դիմադրությունը:

Ժամը 07:30-ի սահմաններում, Հյուսիսային պողոտայի և Պուշկինի փողոցի խաչմերուկի մոտակայքում Մասիս Վազգենի Այվազյանը մի խումբ օրինախախտների հետ ձեռքերով և ոտքերով հարվածելու եղանակով բռնություն է գործադրել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանների նկատմամբ՝ կապված նրանց ծառայողական պարտականությունները կատարելու հետ, որի ընթացքում էլ ՀՀ Ոստիկանության ՊՊԾ գնդի ոստիկաններ Էդգար Ռշտունին, Արսեն Ապերյանը, Հայկ Սարգսյանը, ոստիկանության Կենտրոնի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվազորներ Արթուր Կարապետյանը, Սերգեյ Բեգլարյանը, Արամ Վարդանյանը և Էրիկ Պողոսյանը նրան բերման են ենթարկել ոստիկանության Կենտրոնի բաժնի (...)¹:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 176-177:

7. Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում պաշտպանության կողմը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Վարդգես Հայոցյանին և Դավիթ Առաքելյանին, ովքեր ըստ քրեական գործի նյութերի՝ Մասիս Այվազյանի հետ միասին են բերման ենթարկվել: Հիշյալ անձանց դատարան հրավիրելու և որպես վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունները դատարանը մերժել է¹:

8. Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի ոստիկաններ Էդգար Ռշտունու և Հայկ Սարգսյանի, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվազորներ Սերգեյ Բեգլարյանի, Արամ Վարդանյանի և Էրիկ Պողոսյանի ցուցմունքները²:

9. Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 26-ի որոշման համաձայն՝ «(...) *Գնահատելով ամբաստանյալ Մասիս Այվազյանի գործի քննության ընթացքում տրված ցուցմունքները, դրանք համադրելով միմյանց և գործով ձեռք բերված մյուս փաստական տվյալների հետ, վերաքննիչ դատարանը ոչ արժանահավասար է համարում վերջինիս կողմից բերված պարճատարանություններն իրեն մեղավոր չճանաչելու վերաբերյալ, քանի որ նշված պարճատարանությունները չեն բխում գործի փաստական հանգամանքներից, որով փորձ է արվում խուսափել քրեական պարասխանարվությունից:*

(...) Մասիս Այվազյանին ՀՀ քր. օր-ի 316 հոդվածի 1-ին մասով մեղաազրված արարքը որակված է ճիշտ և նա պետք է քրեական պարասխանարվության և պարճի ենթարկվի: (...)»³:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնցով խաթարվել է արդարադատության բուն էությունը և խախտվել սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, դատական նիստի ձայնային արձանագրության կրիչը, թերթ 226:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 62-64, 68-70, 95-97, 98-100, 131-133:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 46-48:

Ըստ բողոքի հեղինակի՝ սույն քրեական գործով դատարանները, ի թիվս այլնի, խախտել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 18-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 358-րդ հոդվածների պահանջները:

10.1. Բողոքի հեղինակը նշել է, որ Մ.Այվազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքն անորոշ է՝ նրան մեղսագրվել է, որ նա Հյուսիսային պողոտայի շրջակայքում, օրինախախտ մի խումբ անձանց հետ միասին, ձեռքերով և ոտքերով հարվածելու եղանակով, կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանների նկատմամբ՝ կապված նրանց ծառայողական պարտականությունները կատարելու հետ:

Բողոքաբերը փաստել է, որ Մ.Այվազյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպումից չի երևում, թե մեղսագրված արարքը կոնկրետ ինչու է արտահայտվել, առհասարակ նշված չէ, թե ով կամ ովքեր են իշխանության ներկայացուցիչ հանդիսացել, հետևաբար՝ ծառայողական պարտականությունների կատարման մասին պնդումները հիմնազուրկ են: Բողոքաբերը հատկանշական է համարել այն հանգամանքը, որ քրեական գործով տուժող ճանաչված անձ չկա, և կատարված քննությամբ չի պարզվել այն անձը, ում նկատմամբ ենթադրաբար բռնություն է գործադրվել:

10.2. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ մեղադրանքի նման ձևակերպման պայմաններում խախտվել է քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքը՝ տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքերի մասին, որպիսի պայմաններում չի ապահովվել ամբաստանյալի պաշտպանության իրավունքի իրացումը, ինչն էլ, իր հերթին, անհնար է դարձրել արդար դատաքննության հիմնարար իրավունքի պահանջները բավարարող դատաքննության անցկացումը:

10.3. Բողոքաբերը նշել է, որ Մ.Այվազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելով՝ ստորադաս դատարանները չեն հաղթահարել ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված անմեղության կանխավարկածը: Ավելին՝ դատաքննության ընթացքում պաշտպանության կողմը միջնորդություն է ներկայացրել՝ դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Վարդգես Հայրցյանին և Դավիթ Առաքելյանին, ովքեր ըստ քրեական գործի նյութերի՝ Մ.Այվազյանի հետ միասին են բերման

ենթարկվել: Հիշյալ անձանց դատարան հրավիրելու և որպես վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունները դատարանը մերժել է:

Բողոքաբերն ընդգծել է, որ Մ.Այվազյանի կողմից հանցանք կատարելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն, նրա արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը:

11. Բողոքաբերը շեշտել է, որ մեղադրական դատավճռի հիմքում դրվել են վկաներ՝ ոստիկանության ծառայողներ Էդգար Ռշտունու և Հայկ Սարգսյանի նույնաբովանդակ ցուցմունքներն այն մասին, որ ժամը 07:30-ի սահմաններում, Պուշկին-Հյուսիսային պողոտա խաչմերուկի մոտակայքում նկատել են հարձակողական վարքագիծ դրսևորող քաղաքացիների, որոնք ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել ոստիկանության համազգեստով ծառայություն իրականացնող ոստիկաններին, որոնց չեն ճանաչել: Միջամտել և կարողացել են դիմադրություն ցույց տվողներից երեք անձի բերման ենթարկել ոստիկանության Կենտրոնականի բաժին, որոնցից մեկը հանդիսացել է Մ.Այվազյանը:

Բողոքաբերն ընդգծել է, որ նշված ցուցմունքներից առհասարակ պարզ չէ, թե Մ.Այվազյանը կոնկրետ ինչ գործողություններ է իրականացրել, կոնկրետ որևէ մեկի նկատմամբ բռնություն գործադրել է, թե՛ ոչ, և եթե այո՝ ապա ինչու է դա արտահայտվել:

Բողոքի հեղինակը նշել է, որ վկաներ՝ ոստիկանության ծառայողներ Էրիկ Պողոսյանի, Սերգեյ Բեգլարյանի, Արամ Վարդանյանի՝ մեղադրական դատավճռի հիմքում դրված ցուցմունքներն ընդամենը վերաբերում են Մ.Այվազյանին բերման ենթարկելուն:

Բողոքաբերն ընդգծել է, որ դատարանը բացառապես հիմնվել է վիճարկվող իրադարձությանն ակտիվ ներգրավված ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա և պաշտպանության կողմին չի տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու հնարավորություն, ինչը հանգեցրել է պաշտպանության իրավունքի սահմանափակման:

12. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է Մասիս Այվազյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հունիսի 11-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 26-ի որոշումը բեկանել ու փոփոխել՝ ճանաչելով և հռչակելով Մասիս Այվազյանի անմեղությունը մեղսագրված արարքում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել կյուրալական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

14. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարծվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կեղծի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը րվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և

արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ¹:

Մինևույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «*հիմնարար խախտում*» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից զուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 Արձանագրության Բացատրական գեկույցի 31-րդ կետում ընգծված է, որ «*4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հոգուր դատապարտված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատապարտյալի*»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախևառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «*ազդեն գործի ելքի վրա*»՝ կամ հոգուտ անձի, կամ հակառակը²:

14.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնող դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրեթի անձի վիճակի վարթարացում*»:

14.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «*Միայն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության*

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

ընթացքում թույլ են փոխվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

14.3. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտնող դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Եման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրվում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)»¹:

14.4. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՄԴՈ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարճատահերևանքային կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկարմամբ արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից փոժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճատված վնասը հարուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեգրվի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ

¹ Տե՛ս Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

գործը քննվել և դատարանի ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը ստացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»¹:

15. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրբեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հերկյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները (...):»

15.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով² արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ**: Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ **արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ**³,

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

² Տե՛ս *Mushagh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետեր, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետեր:

անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ **դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»¹,**

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին²,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն³,

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, **միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին:** Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետեր:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետ, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետ, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետ:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topić v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետ:

չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին¹,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում**: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած **այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեն յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները**²:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Մ.Այվազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2008 թվականի փետրվարի 20-ից մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել է Երևան քաղաքում կազմակերպված, մայրաքաղաքի կենսագործունեությանը, ճանապարհատրանսպորտային երթևեկությանը, պետական հիմնարկների բնականոն գործունեությանը, ազգաբնակչության հանգիստը և անդորրը խանգարող զանգվածային հրապարակային միջոցառումներին, երթերին, շուրջօրյա հանրահավաքներին ու նստացույցերին: Այնուհետև, երբ «Ազատության» հրապարակում անընդմեջ իրականացվող հրապարակային զանգվածային միջոցառումների մասնակիցների շրջանում հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պատճառելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու համար հարմարեցված այլ պարագաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրացնելիս

¹ Տե՛ս *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը, 206-րդ կետ:

² Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, զանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, զանգատ թիվ 76201/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, զանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողները 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 07-ի սահմաններում, «Ազատության» հրապարակում գտնվող հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռել ստուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը, հանրահավաքի մասնակիցների մի մասը սկսել է աղմկել ու դիմադրություն ցույց տալ, իսկ «Ազատության» հրապարակը քննչական գործողություններին խոչընդոտելու հանգամանքը բացառելու և կանխելու նպատակով շրջափակելուց հետո օրինախախտները առանձին խմբավորումներով բաժանվել են հրապարակի շրջակա փողոցներ, որտեղ շարունակել են ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցների դիմադրությունը: Ժամը 07:30-ի սահմաններում, Հյուսիսային պողոտայի և Պուշկինի փողոցի խաչմերուկի մոտակայքում Մասիս Վազգենի Այվազյանը մի խումբ օրինախախտների հետ ձեռքերով և ոտքերով հարվածելու եղանակով բռնություն է գործադրել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանների նկատմամբ՝ կապված նրանց ծառայողական պարտականությունները կատարելու հետ, որի ընթացքում էլ ՀՀ Ոստիկանության ՊՊԾ գնդի ոստիկաններ Էդգար Ռշտունին, Արսեն Ապերյանը, Հայկ Սարգսյանը, ոստիկանության Կենտրոնի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվագորներ Արթուր Կարապետյանը, Սերգեյ Բեգլարյանը, Արամ Վարդանյանը և Էրիկ Պողոսյանը նրան բերման են ենթարկել ոստիկանության Կենտրոնի բաժնի¹:

- Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում, պաշտպանության կողմը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Վարդգես Հայոցյանին և Դավիթ Առաքելյանին, ովքեր ըստ քրեական գործի նյութերի՝ Մասիս Այվազյանի հետ միասին են բերման ենթարկվել: Հիշյալ անձանց դատարան հրավիրելու և որպես վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունները դատարանը մերժել է²:

- Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի ոստիկաններ Էդգար Ռշտունու և Հայկ Սարգսյանի, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվագորներ Սերգեյ Բեգլարյանի, Արամ Վարդանյանի և Էրիկ Պողոսյանի ցուցմունքները³:

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, դատական ակտում նշել է, որ Մասիս

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Այվազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքը որակված է ճիշտ և նա պետք է քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվի¹:

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-15.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Մ.Այվազյանի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովել *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները Մ.Այվազյանի մեղքը հիմնավորող ապացուցողական զամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների վստահելիությունն ու արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Մ.Այվազյանի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակիցներ՝ ՀՀ ոստիկանության ծառայողներ Էդգար Ռշտունու, Հայկ Սարգսյանի ցուցմունքներն են: Ինչ վերաբերում է այլ ապացույցներին, որոնց դատարանները հղում են կատարել, այն է՝ ոստիկանության Կենտրոնի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվազորներ Սերգեյ Բեգլարյանի, Արամ Վարդանյանի և Էրիկ Պողոսյանի ցուցմունքներին, ապա վերջիններս դարձյալ իրադարձությունների անմիջական մասնակիցներ են և ուղղակիորեն չեն հաստատում Մ.Այվազյանի առնչությունը մեղսագրվող արարքին:

Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Մ.Այվազյանին մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում: Ավելին, ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

կողմից Մուշեղ Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում, պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Այսինքն՝ բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ, ընդունելի են Վճռաբեկ դատարանի համար, քանի որ պաշտպանական կողմին հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու մի շարք վկաների և ապացուցողական զանգվածում ներառելու նրանց ցուցմունքները, որոնք կասկածի տակ էին դնում ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն ու հիմնավորում դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանության կողմի առաջ քաշված վարկածը: Այլ կերպ, ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն անվերապահորեն ընդունելը՝ առանց պաշտպանական կողմին լիարժեք հնարավորություն ընձեռելու մրցակցային դատավարության պայմաններում արդյունավետորեն վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքների արժանահավատությունը, ինչպես արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մուշեղ Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի գործով, այնպես էլ սույն գործով, հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման¹:

18. Վերոգրյալի հաշվառմամբ, անդրադառնալով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Մ.Այվազյանի մեղավորության հարցին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝
«Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

(...)

3) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք (...):»:

¹ Տե՛ս *Matevosyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 61730/08, 41-րդ կետ, *mutatis mutandis*, *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրեղծված անկասի ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապայտրաստելու համար (...):»:

18.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի դրույթն ընդգծում է առաջադրվող «մեղադրանքի» մասին մեղադրյալին ծանուցելուն հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Հանցագործության վերաբերյալ մանրամասն տվյալները կարևոր դեր են խաղում քրեական դատավարությունում այն իմաստով, որ դրանց հայտարարման պահից է անձը համարվում պաշտոնապես ծանուցված նրա դեմ առաջ քաշված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելու իրավունքը պետք է դիտել պաշտպանության նախապատրաստության իրավունքի լույսի ներքո¹:

18.2. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշման մեջ մեղադրանքի ձևակերպումը դիտարկելով որպես արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման միջոց՝ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [Գ]րանում, բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնավար անձը համապարասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Seliverstov v. Russia* գործով 2008 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 19692/02, կետեր 16-17:

ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ: (...)

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կտա մեղադրյալին պարզաճ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դարավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայագրկման»¹:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մ.Այվազյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունը չի համապատասխանում «մեղադրանքի» վերաբերյալ միջազգային և ներպետական պահանջներին ու Վճռաբեկ դատարանի կողմից *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշմամբ սահմանված չափանիշներին: Մասնավորապես, մեղադրանքի ձևակերպումը պարունակում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի դիսպոզիցիայի նկարագրությունը: Մեղադրանքի մեջ նշված չեն այնպիսի փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն հիմնավորված կերպով եզրահանգելու, որ Մ.Այվազյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասին, այն է՝ մեղադրանքի բովանդակությունից հնարավոր չէ պատկերացում կազմել, թե ո՞ւմ նկատմամբ է գործադրվել բռնություն², չի պարզվել թե Մ.Այվազյանի կողմից ու՞մ և ինչպիսի՞ վնաս է պատճառվել:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Մ.Այվազյանին առաջադրված մեղադրանքում մանրամասնորեն և հստակ չեն նշվել արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական տվյալները՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրանքի այդպիսի անորոշ ձևակերպման պայմաններում, խախտվել է քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքը՝ տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքի

¹ Տե՛ս *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 21-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ *Վահան Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԱՐԴ/0038/01/13 որոշման 14-15-րդ կետերը:

մասին, որպիսի պայմաններում չի ապահովվել նաև անձի պաշտպանության իրավունքի իրացումը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է արդար դատաքննության իրավունքի հիմնարար խախտման:

20. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Մ.Այվազյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և քրեական գործի վարույթը կարճելու՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

21. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մասիս Վազգենի Այվազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 11-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 26-ի որոշումը բեկանել:

2. Մասիս Վազգենի Այվազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԲԲԴ/0192/01/08

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

*Նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Կարեն Վաչագանի Թարխանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 2-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը:

2008 թվականի մարտի 5-ին Կարեն Թարխանյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 7-ի որոշմամբ Կ.Թարխանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին առյուծի դատարանի՝ 2008 թվականի մարտի 7-ի որոշմամբ Կ.Թարխանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ Կ.Թարխանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի ապրիլի 18-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան (այսուհետ՝ նաև Երևանի դատարան):

2. Երևանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 10-ի դատավճռով Կ.Թարխանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով:

3. Կ.Թարխանյանի պաշտպան Զ.Բուդաղյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2008 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ բողոքը մերժել է, Երևանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 10-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Կ.Թարխանյանի և նրա պաշտպան Զ.Բուդաղյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ վերադարձվել է:

5. 2020 թվականի փետրվարի 25-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը հիմնարար խախտման հիմքով բողոք է բերել Վճռաբեկ դատարան, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Երևանի դատարանը, Կ.Թարխանյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, հաստատված է համարել հետևյալ փաստական տվյալները. «(...) 2008թ. մարտի 1-ին, ժամը 13:30-ի սահմաններում, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան մոտ, բռնությամբ և իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով ուղեկցվող զանգվածային անկարգությունների ժամանակ ամբաստանյալ Կարեն Թարխանյանը հայիոյանքներ է փռել հանրապետության

ղեկավարների և նշված վայրում հասարակական կարգի պահպանության գծով ծառայություն իրականացնող, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանների հասցեին, զանգվածային անկարգությունների մասնակիցներին է բաժանել մետաղյա ձողեր, նման եղանակով և կոչերով նրանց ուղղորդել է շարունակել զանգվածային անկարգություններն ու բռնություն կիրառել իշխանության ներկայացուցիչների նկատմամբ: Զանգվածային անկարգությունների մասնակիցները մետաղյա ձողերով հարձակվել են իշխանության ներկայացուցիչների վրա և այդ ձողերով ու քարերով հարվածել նրանց:

(...) Վերլուծելով ամբաստանյալ Կարեն Վաչագանի Թարխանյանին առաջադրված մեղադրանքը, նրա ցուցմունքը և գործով ձեռք բերված ապացույցները, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Կարեն Վաչագանի Թարխանյանի կողմից, նրա մեղավորությամբ, բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով և վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութեր, պայթուցիկ սարքեր գործադրելով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով ուղեկցված զանգվածային անկարգություններ կազմակերպելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 225 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին»¹:

7. Առաջադրված մեղադրանքում Կ.Թարխանյանն իրեն մեղավոր չի ճանաչել և դատաքնության ընթացքում ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ 2008 թվականի մարտի 1-ին, ժամը 12.30-ից 13.00-ի սահմաններում, իր ավտոմեքենայով, մոր հետ միասին «Հրագդան տոնավաճառ» գնալիս, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան մոտ տեսնելով մարդկանց բազմություն՝ հետաքրքրությունից դրդված իջել են ավտոմեքենայից: Այնտեղ են գտնվել նաև ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Զ.Փոստանյանը, Ա.Մարտիրոսյանը և այլոք, խաղաղ մթնոլորտ է տիրել: Չնայած ոստիկանները պահանջել են հեռանալ և ազատել հրապարակը, սակայն ինքը, հետաքրքրությունից դրդված, նշված տարածքից չի հեռացել, նաև սպասել է մինչև տարածքն ազատվի, որպեսզի կարողանա մեքենան դուրս բերել: Այդ ընթացքում ինքն ու մայրը գրուցել են ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների հետ, իսկ ճանապարհը բացվելուց հետո գնացել են տուն:

Վկաների ցուցմունքները չեն համապատասխանում իրականությանը: Ինքը որևէ ջարդի կամ անկարգությունների մասնակից չի եղել, երկաթյա ձողեր ոչ ոքի չի տվել, ընդամենը մի քանի անգամ բացականչություններ է

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 79-82:

արել՝ «Զիլ» մակնիշի ավտոմեքենայի ոտնահարթակի վրայից բղավել է «Լևոն» և այլն: Այդպես է վարվել, քանի որ բոլորն էին այդպես վարվում:

Ոստիկան Կարեն Աբեյանին ճանաչում է շուրջ 7 տարի: Վերջինս հսկողություն է իրականացրել Շենգավիթի շուկայում, որտեղ ինքն աշխատել է որպես մսավաճառ, և իրենց միջև պարբերաբար կոնֆլիկտներ են տեղի ունեցել: Ինչ վերաբերվում է բերման ենթարկելու օրվան, ապա ոստիկաններն իրեն տեսել են Մաշտոցի և Խորենացու փողոցների հատման տարածքում և փակել են իր ճանապարհը, ապա կոպիտ կերպով տարել են ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժին և հայտնել, որ մարտի 1-ի գործով կարկառուն դեմքի են բերել: Ինքը պատմել է իրողությունը, որ անկարգություններին և ջարդերին չի մասնակցել¹:

7.1. Առաջին ատյանի դատարանը, Կ.Թարխանյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք է ընդունել վկաներ՝ ՀՀ ոստիկանության պահակապարեկային ծառայության գնդի 1-ին վաշտի ոստիկաններ՝ Էդուարդ Գասպարյանի և Շահեն Խաչատրյանի նույնաբովանդակ ցուցմունքներն այն մասին, որ 2008 թվականի մարտի 1-ին ծառայություն են իրականացրել Երևան քաղաքի Գ.Լուսավորիչ փողոցում, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան մոտ, որտեղ չարտոնված հանրահավաքի մասնակիցներն անկարգություններ են կատարել: Անկարգությունների անմիջական ակտիվ կատարողներից է եղել Կ.Թարխանյանը, ով մասնակիցներին մետաղյա ձողեր է բաժանել: 2008 թվականի մարտի 4-ին, պարեկային ավտոմեքենայով ծառայություն իրականացնելիս, Երևան քաղաքի Մաշտոց-Խորենացի փողոցների հատման խաչմերուկում պատահաբար տեսել են Կ.Թարխանյանին, անմիջապես ճանաչել նրան՝ որպես մարտի 1-ին վերը նկարագրված զանգվածային անկարգությունների մասնակցի ու բերման ենթարկել ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժին²:

7.2 Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է նաև ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի՝ 2008 թվականի մարտի 27-ի թիվ 10\4-2-536 գրությունը, դեպքի վայրի գնտության արձանագրությունը, պայթյունատեխնիկական և քիմիական համալիր փորձաքնությունների 2008 թվականի մարտի 21-ի թիվ 07100803 և 07050803 եզրակացությունները, Երևանի քաղաքապետի՝ 2008 թվականի մարտի 27-ի թիվ 01\7-6295h գրությունը³:

7.3. Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում Կ.Թարխանյանի պաշտպանը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Կ.Թարխանյանի մորը, ՀՀ Ազգային ժողովի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 47-55:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 283-286:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 74-78:

պատգամավորներ Զ.Փոստանջյանին, Ա.Մարտիրոսյանին և Ա.Բախչյանին: Առաջին ստյանի դատարանը հիշյալ անձանց դատարան հրավիրելու և որպես վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունը մերժել է՝ պատճառաբանելով, որ պաշտպանը չի հիմնավորել միջնորդության մեջ նշված անձանց ցուցմունքների վերաբերելիությունը Կ.Թարխանյանին առաջադրված մեղադրանքին¹:

8. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ստյանի դատարանի դատավճիռը, նշել է. «(...) *Քննության առնելով պաշտպանի վերաքննիչ բողոքը և հիմնավորումները, մեղադրողի պարասիան առարկությունը, ուսումնասիրելով գործի փաստական հանգամանքները և ձեռք բերված ապացույցները, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ վերաքննիչ քրեական դատարանը եկավ հետևության, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարելու և ամբաստանյալի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացնելու հիմքեր չկան (...)*»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը նշել է, որ նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները, Կ.Թարխանյանի մեղադրանքը հիմնավորելիս առավելապես հիմնվելով դեպքից տևական ժամանակ անց ոստիկանության աշխատակիցների հայտնած իրարամերժ ցուցմունքների վրա, չեն ապահովվել *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները, Կ.Թարխանյանի մեղքը հիմնավորող ապացուցողական զամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին, պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների արժանահավատությունը:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 54-55:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 118-121:

Ինչ վերաբերում է այլ ապացույցներին, որոնց դատարանները հղում են կատարել, ապա բողոքաբերի պնդմամբ, դրանք անուղղակի ապացույցներ են և ուղղակիորեն չեն հաստատում Կ.Թարխանյանի առնչությունը մեղսագրվող արարքին:

Ըստ բողոքաբերի՝ առավել հատկանշական է այն, որ Կ.Թարխանյանը որպես վիճարկվող իրադարձությունների ակտիվ մասնակից և ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն գործադրող, ոստիկանություն բերման է ենթարկվել հիշյալ իրադարձություններից տևական ժամանակ անց՝ այն պատճառաբանությամբ, որ ծառայություն իրականացնող ոստիկաններն այլ վայրում ծառայություն իրականացնելիս նկատել են Կ.Թարխանյանին և նույնացրել այդ իրադարձությունների ժամանակ հիշատակված արարքները կատարող անձի հետ: Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում:

Բացի այդ, բողոք բերած անձը նշել է, որ պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Դատաքննության ընթացքում պաշտպանության կողմը միջնորդություն է ներկայացրել դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել անձանց, ովքեր ականատես են եղել նկարագրված իրադարձություններին, որը դատարանի կողմից մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել այն հարցը, թե ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները՝ Կ.Թարխանյանին բերման և քրեական հետապնդման ենթարկելուն՝ նախորդող և հաջորդող իրադարձությունների համատեքստում արդյո՞ք կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության առումով, ինչն ուներ առանցքային նշանակություն՝ դրանց արժանահավատությունը, ինչպես նաև այլ փաստական տվյալների հետ համակցության մեջ գործի լուծման համար բավարարությունը որոշելու տեսանկյունից:

Այսպիսով, ըստ բողոքաբերի, ստորադաս դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, իսկ քրեական գործում առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան

ապացուցված համարել, որ Կ.Թարխանյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանել ու փոփոխել՝ ճանաչելով և հռչակելով Կարեն Թարխանյանի անմեղությունը մեղսագրված արարքում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Կ.Թարխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

12. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե սուկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարժվի այն հանցագործության կասկակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը րվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն

դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ¹:

Մինևույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «հիմնարար խախտում» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից զուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 Արձանագրության Բացատրական գեկույցի 31-րդ կետում ընգծված է, որ «4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հոգուր դարապարտված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դարապարտյալի»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախևառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «ազդեն գործի ելքի վրա»՝ կամ հոգուտ անձի, կամ հակառակը²:

12.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրեթի անձի վիճակի վարթարացում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ն]ույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն րացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դարական քննության ընթացքում թույլ են րրվել նյութական կամ դարավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դարական ակրը խաթարում է արդարադարության րուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշրպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

12.2. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մրած դարական ակրերը կարող են վերանայվել րացառապես նյութական կամ դարավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը րիում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մրած դարական ակրերի վերանայումը ընդհանուր կանոնից րացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է րողքարկման րացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր րնույթ, քան քրեական օրենքի սիալ կիրառումը կամ քրեադարավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, րովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դարական ակր կայացված լինելու մասին: (...)»¹:

12.3. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ թիվ ՄԴՌ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պերք է պարճառահեղանակային կայի մեջ գրնվի ընդունված և արդարադարության րուն էությունը խաթարող դարական ակրի հեր: Քրեական արդարադարությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կարարած անձին դարապարելուն, նրա նկարմամբ արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից րուժած անձի իրավունքներն ու

¹ Տե՛ն Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճառված վնասը հատուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեզրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը սրացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»¹:

13. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները (...):»:

13.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռում² արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ**: Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ **արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ**³,

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

² Տե՛ս *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետեր, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետեր:

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ **դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»¹,**

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին²,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն³,

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, **միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ**

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետեր:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետ, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետ, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետ:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topić v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետ:

արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին: Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղաագրվող արարքներին,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում:** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած **այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեն յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները¹:**

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին աստիանի դատարանում գործի քննության ընթացքում Կ.Թարխանյանի պաշտպանը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել մի շարք վկաների: Առաջին աստիանի դատարանը հիշյալ անձանց դատարան հրավիրելու և որպես վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունը մերժել է՝ պատճառաբանելով, որ պաշտպանը չի հիմնավորել միջնորդության մեջ նշված անձանց ցուցմունքների վերաբերելիությունը Կ.Թարխանյանին առաջադրված մեղադրանքին²:

14.1. Առաջին աստիանի դատարանը, 2008 թվականի հունիսի 10-ի դատավճռով Կ.Թարխանյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության մեջ, որպես արարքի կատարումը հիմնավորող ապացույցներ հիմք է ընդունել վկաներ՝ ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի 1-ին վաշտի

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76201/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

² Տե՛ս սույն որոշման 7.3-րդ կետը:

նստիկաններ է դուրս դրել Գասպարյանի և Շահեն Խաչատրյանի նույնարժեքի ցուցմունքները, ՀՀ նստիկանության պետի առաջին տեղակալի՝ 2008 թվականի մարտի 27-ի թիվ 10\4-2-536 գրությունը, դեպքի վայրի գնտության արձանագրությունը, պայթյունատեխնիկական և քիմիական համալիր փորձաքննությունների 2008 թվականի մարտի 21-ի թիվ 07100803 և թիվ 07050803 եզրակացությունները և Երևանի քաղաքապետի՝ 2008 թվականի մարտի 27-ի թիվ 01\7-6295h գրությունը¹:

14.2. Վերաքննիչ դատարանը, 2008 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը, արձանագրել է, որ Կ.Թարխանյանի մեղադրանքն ապացուցված է, մեղավորությունը հաստատված, արարքին տրվել է քրեաիրավական ճիշտ գնահատական, նշանակվել է արդարացի և համաչափ պատիժ, հետևաբար ամբաստանյալին արդարացնելու, պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքեր չկան²:

15. Սույն որոշման 14-14.2-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մուշեղ Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Կ.Թարխանյանի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվելով նստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովել *Մուշեղ Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները Կ.Թարխանյանի մեղքը հիմնավորող ապացուցողական զամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով նստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Կ.Թարխանյանի մասնակցությունը նրան վերագրված արարքների կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակից՝ վկաներ՝ ՀՀ նստիկանության ծառայողներ Է.Գասպարյանի և Շ.Խաչատրյանի

¹ Տե՛ս սույն որոշման 7.2-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

ցուցմունքներն են: Ինչ վերաբերում է այլ ապացույցներին, որոնց դատարանները հղում են կատարել, ապա դրանք անուղղակի ապացույցներ են և ուղղակիորեն չեն հաստատում Կ.Թարխանյանի առնչությունը մեղսագրվող արարքին:

Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Կ.Թարխանյանին մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում: Ավելին, ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում, սույն գործով ևս պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Այսինքն՝ բողոքաբերի փաստարկն այն մասին, որ պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ, ընդունելի է Վճռաբեկ դատարանի համար, քանի որ պաշտպանական կողմին հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու մի շարք վկաների և ապացուցողական զանգվածում ներառելու նրանց ցուցմունքները, որոնք կասկածի տակ էին դնում ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալները և հիմնավորում էին դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանության կողմի առաջ քաշված վարկածը: Այլ կերպ, ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն անվերապահորեն ընդունելը՝ առանց պաշտպանական կողմին լիարժեք հնարավորություն ընձեռելու մրցակցային դատավարության պայմաններում արդյունավետորեն վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքների արժանահավատությունը, ինչպես արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով, սույն գործով ևս հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:

16. Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Կ.Թարխանյանի մեղավորության հարցին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունները չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է

հասարակական գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ «Գործով հավաստված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ «1.Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության փաստակցունից»:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պարզաձև իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարսավորող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի ստաշին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին պայիս է հասարակող պարասխաններ»:

16.1. Վերլուծելով ապացուցման քրեադատավարական կանոնները, մասնավորապես անդրադառնալով «ապացույցների բավարարություն» հասկացությանը՝ Վճռաբեկ դատարանն Արարար Ավագյանի և Վահան Մահակյանի գործով որոշման մեջ նշել է, որ. «(...) «Այապացույցների բավարարությունը» որոշելու չափանիշներն են.

- 1) անմեղության կանխավարկածը,
- 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
- 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պարզառարանվածությունը:

(...) Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

(...) Երեքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բիսի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիրտորդի մտք պետք է առաջացնի այն վարահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

(...) Ապացույցի արժանահավատության հարկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) ապացույցի աղբյուրի հարկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հարկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հարկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

(...):

Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների սրացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից սրացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից սրացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել սրացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ

ապացույցների հետ, պարզել դրանց համապարասիանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում դրա պարճառները:

Ապացույցի արժանահավարտության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական փյվյալների վրա:

(...) Ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է սրանում և օբյեկտիվացվում ապացույցների բավարարությունը որոշելու մյուս՝ դատավարական որոշումների հիմնավորման և պարճառարանման չափանիշի միջոցով (...):

(...) [Ք]րեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական փյվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (իսիտ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»¹:

17. Սույն որոշման 16-16.1-րդ կետերում վկայակոչված իրավադրությունների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 14-14.2-րդ կետերում ներկայացված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի իրավական ռեժիմով վճռաբեկ բողոքը քննության առնելու պայմաններում, չանդրադառնալով 2009 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ՝ ապացուցողական զամբյուղում ներառված փաստական տվյալների վերաբերյալ արդեն իսկ տրված գնահատականներին, ընդունելի է համարում բողոքաբերի փաստարկն այն մասին, որ վստահելիության և ճշգրտության առումով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները պատշաճ ստուգման չեն ենթարկվել: Մասնավորապես, ստորադաս դատարանները համակողմանի վերլուծության չեն ենթարկել այն հարցը, թե ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները՝ սույն գործի փաստական հանգամանքների և գործի նյութերի համատեքստում արդյո՞ք

¹ Տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 29-31-րդ և 33-րդ կետերը:

կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության առումով, ինչն ունեն անհանգստացնող նշանակություն՝ դրանց արժանահավատությունը, ինչպես նաև այլ փաստական տվյալների հետ համակցության մեջ գործի լուծման համար բավարարությունը որոշելու տեսանկյունից: Այսպես, դատական ակտերով հաստատված փաստական հանգամանքների և գործի նյութերի համադրված վերլուծությունից հետևում է.

- Կ.Թարխանյանը, 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ Ֆրանսիայի դեսպանատան մոտ մասնակցել է հանրահավաքին,

- 2008 թվականի մարտի 4-ին, պարեկային ավտոմեքենայով ծառայություն իրականացնելիս, սույն գործով վկաներ ոստիկանության աշխատակիցները, Երևան քաղաքի Մաշտոց-Խորենացի փողոցների հատման խաչմերուկում պատահաբար տեսել են Կ.Թարխանյանին, և նրան՝ որպես մարտի 1-ին կատարված զանգվածային անկարգությունների մասնակցի, բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժին¹,

- նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 7-ի որոշմամբ Կ.Թարխանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով: Այնուհետև, նախաքննության մարմնի՝ 2008 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ Կ.Թարխանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով²:

Դեպքի վերոնշյալ ժամանակագրությունը, մասնավորապես այն, որ ըստ մեղադրանքի՝ Կ.Թարխանյանը 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ Ֆրանսիայի դեսպանատան մոտ մասնակցել է հանրահավաքին, այնուհետև, երեք օր անց, ոստիկաններն այլ վայրում ծառայություն իրականացնելիս, պատահական տեսել են նրան և որպես մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձությունների ակտիվ մասնակցի բերման ենթարկել ոստիկանություն, ողջամտորեն սովորում են Կ.Թարխանյանի մեղադրանքը հիմնավորող, գործով ուղղակի ապացույց հանդիսացող՝ ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վստահելիությունն ու ճշգրտությունը՝ կասկածի տակ դնելով դրանց արժանահավատությունը: Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում:

¹ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

Վերոշարադրյալ անհերքելի գործոնների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, իսկ քրեական գործում առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված համարել, որ Կ.Թարխանյանը կատարել է սույն քրեական գործով իրեն մեղաագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը:

19. Հիմք ընդունելով վերոշարադրյալ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Կ.Թարխանյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և քրեական գործի վարույթը կարճելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

20. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Կարեն Վաչագանի Թարխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հունիսի 10-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 24-ի որոշումը բեկանել:

2. Կարեն Վաչագանի Թարխանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և

արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԲԲԴ/0286/01/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Դավիթ Շիլլերի Աղայանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը, իսկ մարտի 2-ին՝ թիվ 62202608 քրեական գործը, որոնք 2008 թվականի մարտի 2-ին միացվել են մեկ վարույթում՝ 62202608 համարով:

2008 թվականի մայիսի 5-ին Դավիթ Շիլլերի Աղայանը ձերբակալվել է:

2008 թվականի մայիսի 8-ին Դավիթ Աղայանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի

225-րդ հոդվածի 2-րդ մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի հունիսի 9-ի որոշմամբ թիվ 62202608 քրեական գործից անջատվել են Դ.Աղայանի վերաբերյալ գործի կյութերը, կազմվել է թիվ 62212108 քրեական գործը:

2008 թվականի հունիսի 12-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 3-ի դատավճռով Դ.Աղայանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ: ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 տարի ժամկետով, 225-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկում՝ 3 տարի 6 ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 տարի ժամկետով:

3. Դ.Աղայանի պաշտպան Կարեն Ղազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2008 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 3-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. 2019 թվականի դեկտեմբերի 26-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը հիմնարար խախտման հիմքով բողոք է բերել Վճռաբեկ դատարան, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի որոշմամբ Դ.Աղայանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ. «(...) [Ն]ա անմիջական մասնակցություն է ունեցել 2008թ. փետրվարի 20-ից Երևան քաղաքում օրենքով սահմանված կարգի խախտմամբ հրականացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին, իսկ 2008թ. մարտի 1-ին՝ 07-ի սահմաններում, երբ Ազգայության հրապարակում անընդմեջ հրականացվող հրապարակային զանգվածային միջոցառումների

մասնակիցների շրջանում հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պարճառելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու համար հարմարեցված այլ պարագաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրացնելիս իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ռաբիկանության ծառայողները Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռել ստուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը, Դավիթ Աղայանը հրապարակում գրելով մի խումբ այլ անձանց հետ հարձակում է գործել ռաբիկանության ծառայողների վրա, որի ընթացքում մահակով հարվածելու եղանակով՝ կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բռնություն է գործադրել ՀՀ ռաբիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի ռաբիկան Արկադի Նավասարդյանի նկատմամբ՝ կապված նրա ծառայողական պարտականությունները կատարելու հետ, իսկ վերջինիս վայր ընկնելուց հետո իլել է նրա վահանը:

Բացի այդ, նա անմիջական մասնակցություն է ունեցել 2008թ. մարտի 1-ին Երևան քաղաքում բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պեղական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վնասումով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, նրանց նկատմամբ հրազենի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պարճառելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրմամբ, խմբակային հարձակումներով իրականացված զանգվածային անկարգություններին, որոնց ընթացքում Դավիթ Աղայանը դիմադրություն է ցույց տվել Գրիգոր Լուսավորչի պողոտայում հասարակական կարգի պահպանություն իրականացնող ռաբիկանության աշխատակիցներին՝ հայտոյանքներ, սպառնալիքներ է տվել նրանց հասցեին և Արկադի Նավասարդյանից իլած վահանով հարվածել ՀՀ ռաբիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի ռաբիկաններին»¹:

6. Առաջին առյանի դատարանը Դ.Աղայանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ՝ դատավճի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակային ծառայության գնդի ոստիկաններ Արկադի Նավասարդյանի, Վահան Սարատիկյանի, Նորայր Աբրահամյանի, Մհեր Գևորգյանի, Արմեն Խելոմյանի ցուցմունքները,

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 200-202:

դեպքի վայրի զննության արձանագրությունները, փորձագիտական եզրակացությունները, ՀՀ ոստիկանապետի առաջին տեղակալի՝ 2008 թվականի մարտի 27-ի գրությունը¹:

7. Վերաքննիչ դատարանը 2008 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ արձանագրել է, որ «(...) *հետազոտելով դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները, վերլուծելով և գնահատելով դրանք իրենց համակցությամբ՝ հանգում է հետևության, որ Դավիթ Շիլլերի Աղայանին մեղսագրված արարքը ապացուցված է, նրա կատարած արարքը ճիշտ է որակված, մեղավորությունը հաստատվել է, նշանակվել է արդարացի և համաչափ պարիժ, հետևաբար նրա [պաշտպանի] բողոքը բավարարելու և նրան արդարացնելու հիմքեր չկան: (...)*»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնցով խաթարվել է արդարադատության բուն էությունը և խախտվել սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ըստ բողոքի հեղինակի՝ սույն քրեական գործով դատարանները, ի թիվս այնի, խախտել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 358-րդ հոդվածների պահանջները:

Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները Դ.Աղայանի մեղքը հիմնավորել են առավելապես հիմնվելով դեպքից տևական ժամանակ անց ոստիկանության աշխատակիցների տված ցուցմունքների վրա, արդյունքում չեն ապահովվել *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները Դ.Աղայանի մեղքը հիմնավորող ապացուցողական գամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 190-197, 209, 219-222, 223-224, 157-158, 175-176, 159-160, 173-174, 155-156, 8-27, 39-97, 99-103, 108-110, 113-117, 124-136, 145-148, 137-141:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 163-166:

այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Դ.Աղայանի մասնակցությունը նրան վերագրված արարքների կատարմանը, դա ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակային ծառայության գնդի ոստիկաններ Արկադի Նավասարդյանի, Վահան Սարատիկյանի, Նորայր Աբրահամյանի, Մհեր Գևորգյանի, Արմեն Խեչումյանի ցուցմունքներն են:

Բողոքաբերը հատկանշական է համարել այն, որ Դ.Աղայանը որպես վիճարկվող իրադարձությունների ակտիվ մասնակից և ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն գործադրող, ոստիկանություն բերման է ենթարկվել հիշյալ իրադարձություններից տևական ժամանակ անց՝ 2008 թվականի մայիսի 5-ին՝ այն պատճառաբանությամբ, որ ծառայություն իրականացնող ոստիկաններ Ն.Աբրահամյանը և Մ.Գևորգյանը նշված օրը վերաքննիչ դատարանի բակում հավաքված բազմության մեջ նկատել են Դ.Աղայանին և նույնացրել վերը հիշատակված արարքները կատարող անձի հետ:

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Դ.Աղայանին մեղազրկվող արարքի կատարման ժամանակահատվածում:

Բողոքաբերն ընդգծել է, որ ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել այն հարցը, թե ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները՝ Դ.Աղայանին բերման և քրեական հետապնդման ենթարկելուն նախորդող և հաջորդող իրադարձությունների համատեքստում արդյո՞ք կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության առումով, ինչն ուներ առանցքային նշանակություն դրանց արժանահավատությունը, ինչպես նաև այլ փաստական տվյալների հետ համակցության մեջ գործի լուծման համար բավարարությունը որոշելու տեսանկյունից:

Բողոքաբերը շեշտել է, որ ստորադաս դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, իսկ քրեական գործում առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված համարել, որ Դ.Աղայանը կատարել է սույն քրեական գործով իրեն մեղազրկված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքները:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է Դ.Աղայանի վերաբերյալ Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 3-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը բեկանելու փոփոխել՝ ճանաչելով և հռչակելով Դ.Աղայանի անմեղությունը մեղսագրված արարքներում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Դ.Աղայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում արդյո՞ք թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

12. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը փյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի

պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ¹:

Մինևույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «*հիմնարար խախտում*» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից զուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության Բացատրական գեկույցի 31-րդ կետում ընգծված է, որ «*4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հոգուր դատասարդված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատասարդյալի*»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախնառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «*ազդեն գործի ելքի վրա*»՝ կամ հոգուտ անձի, կամ հակառակը²:

12.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Նույն անձի վերաքննարկ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի*

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

12.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ե]րկու հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

12.3. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտնող դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Եման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրվում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)»¹:

12.4. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՍԴՌ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարզապես անհերքելի կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկատմամբ արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից արժամ անձի իրավունքներն ու

¹ Տե՛ս Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճատված վնասը հատուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեզրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը սրացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»¹:

13. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և իրապարակային դատաքննության իրավունք»:

13.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով² արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ:** Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ **արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ**³,

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

² Տե՛ս *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետեր, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետեր:

համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ **դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»¹,**

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին²,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն³,

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, **միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին:** Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին⁴,

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետեր:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետ, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետ, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետ:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topić v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետ:

⁴ Տե՛ս *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը, 206-րդ կետ:

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում**: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած **այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները**¹:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Դ.Աղայանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա անմիջական մասնակցություն է ունեցել 2008 թվականի փետրվարի 20-ից Երևան քաղաքում, օրենքով սահմանված կարգի խախտմամբ իրականացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին, իսկ 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 07.00-ի սահմաններում, երբ Ազատության հրապարակում անընդմեջ իրականացվող հրապարակային զանգվածային միջոցառումների մասնակիցների շրջանում հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պատճառելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու համար հարմարեցված այլ պարագաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրացնելիս, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողները Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռել ստուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը, Դ.Աղայանը հրապարակում գտնվող մի խումբ այլ անձանց հետ հարձակում է գործել ոստիկանության

¹ Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, զանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, զանգատ թիվ 76201/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, զանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

ծառայողների վրա, որի ընթացքում մահակով հարվածելու եղանակով՝ կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակային ծառայության գնդի ոստիկան Արկադի Նավասարդյանի նկատմամբ՝ կապված նրա ծառայողական պարտականությունները կատարելու հետ, իսկ վերջինիս վայր ընկնելուց հետո՝ խլել է նրա վահանը:

Բացի այդ, նա անմիջական մասնակցություն է ունեցել 2008 թվականի մարտի 1-ին Երևան քաղաքում բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վնասումով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, նրանց նկատմամբ հրազենի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրմամբ, խմբակային հարձակումներով իրականացված զանգվածային անկարգություններին, որոնց ընթացքում Դ.Աղայանը դիմադրություն է ցույց տվել Գրիգոր Լուսավորչի պողոտայում հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանության աշխատակիցներին՝ հայհոյանքներ, սպառնալիքներ է տվել նրանց հասցեին և Ա.Նավասարդյանից խլած վահանով հարվածել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակային ծառայության գնդի ոստիկաններին¹:

- Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակային ծառայության գնդի ոստիկաններ Արկադի Նավասարդյանի, Վահան Սարատիկյանի, Նորայր Աբրահամյանի, Մհեր Գևորգյանի, Արմեն Խեչումյանի ցուցմունքները, դեպքի վայրի գնության արձանագրությունները, փորձագիտական եզրակացությունները, ՀՀ ոստիկանապետի առաջին տեղակալի՝ 2008 թվականի մարտի 27-ի գրությունը²:

- Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, գտել է, որ Դավիթ Աղայանին մեղսագրված արարքներն ապացուցված են, նրա կատարած արարքները ճիշտ են որակված և նրա նկատմամբ նշանակվել է արդարացի և համաչափ պատիժ³:

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ*

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Դ.Աղայանի մեղադրանքը հիմնավորելիս առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովել *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները Դ.Աղայանի մեղքը հիմնավորող ապացուցողական զամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Դ.Աղայանի մասնակցությունը նրան վերագրված արարքների կատարմանը՝ դա վիճարկվող իրադարձություններին անմիջական մասնակցություն ունեցած՝ ՀՀ ոստիկանության ծառայողներ Արկադի Նավասարդյանի, Վահան Սարատիկյանի, Նորայր Աբրահամյանի, Միեր Գևորգյանի ցուցմունքներն են: Մինևույն ժամանակ, զննության արձանագրությունները և փորձագիտական եզրակացությունները, ինչպես նաև ՀՀ ոստիկանապետի առաջին տեղակալի գրությունը¹, որոնց դատարանները ևս հղում են կատարել, չեն հաստատում Դ.Աղայանի առնչությունը մեղսագրվող արարքներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու ոստիկանության վերոհիշյալ ծառայողների ցուցմունքները, այն էլ այն դեպքում, որ վերջիններս ակտիվ դեր են ունեցել Դ.Աղայանին մեղսագրվող արարքների կատարման ժամանակահատվածում: Այլ կերպ, ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն անվերապահորեն ընդունելը՝ առանց ստուգելու այդ ցուցմունքների իսկությունը, սույն գործով հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:

16. Վերոգրյալի հաշվառմամբ, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով

¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

նախատեսված հանցանքները կատարելու մեջ Դ.Աղայանի մեղավորության հարցին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ *«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ սրուզման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն սրուզելու միջոցով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Ցուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:*

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պարզաձ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարապոլող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին պայիս է հաստատող պարասխաններ»:*

17. Վերլուծելով ապացուցման քրեադատավարական կանոնները, մասնավորապես անդրադառնալով «ապացույցների բավարարություն» հասկացությամբ՝ Վճռաբեկ դատարանն Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով որոշման մեջ նշել է, որ. *«(...) «[Ա]պացույցների բավարարությունը» որոշելու չափանիշներն են.*

- 1) անմեղության կանխավարկածը,
- 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
- 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և

պարձառարանվածությունը:

(...) Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

(...) Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բիբի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիրորդի մտք պետք է առաջացնի այն վարահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

(...) Ապացույցի արժանահավարտության հարկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավար է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավարտության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) ապացույցի աղբյուրի հարկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հարկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հարկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

(...):

Յուրաքանչյուր ապացույց արժանահավարտության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների սրացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավարտության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից սրացված

տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ սպացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում դրա պարճառները:

Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական փյույանների վրա:

(...) Ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում սպացույցների բավարարությունը որոշելու մյուս՝ դատավարական որոշումների հիմնավորման և պարճառաբանման չափանիշի միջոցով (...):

(...) [Ք]րեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես սպացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» սպացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» սպացուցողական չափանիշ ստելով, պետք է հասկանալ փաստական փյույանների (սպացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի որջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (իսկառ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի սպացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա սպացուցվածության վերաբերյալ ցանկացած որջամիտ կասկած»¹:

18. Սույն որոշման 16-17-րդ կետերում վկայակոչված իրավաբանությունների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով որոշման 14-րդ կետում ներկայացված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել այն հարցը, թե ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները՝ սույն գործի փաստական հանգամանքների և գործի նյութերի համատեքստում արդյո՞ք կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության առումով, ինչն ուներ առանցքային նշանակություն՝ դրանց արժանահավատությունը, ինչպես նաև այլ փաստական տվյալների հետ

¹ Տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 29-31-րդ և 33-րդ կետերը:

համակցության մեջ գործի լուծման համար բավարարությունը որոշելու տեսանկյունից:

Այսպես. դատական ակտերով հաստատված փաստական հանգամանքների և գործի նյութերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Դ.Աղայանի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել ոստիկանության աշխատակիցների կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու, ինչպես նաև՝ զանգվածային անկարգություններին մասնակցություն ունենալու համար, որպիսիք քրեական վարույթն իրականացնող մարմինը հիմնավորել է վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակիցներ՝ ոստիկաններ Ա.Նավասարդյանի, Վ.Սարատիկյանի, Ն.Աբրահամյանի, Մ.Գևորգյանի և Ա.Խեչումյանի ցուցմունքներով:

Դեպքի ժամանակագրությունը, մասնավորապես այն, որ ըստ մեղադրանքի՝ Դ.Աղայանը 2008 թվականի մարտի 1-ին, նախ Երևանի Ազատության հրապարակում, իսկ ժամեր անց նաև Երևանի Գրիգոր Լուսավորչի պողոտայում, մասնակցել է հանրահավաքին, այնուհետև, տևական ժամանակ անց՝ 2008 թվականի մայիսի 5-ին, ոստիկաններն այլ վայրում ծառայություն իրականացնելիս, պատահական տեսել են նրան և որպես մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձությունների ակտիվ մասնակցի բերման ենթարկել ոստիկանություն, ողջամտորեն ստվերում են Դ.Աղայանի մեղադրանքը հիմնավորող, գործով ուղղակի ապացույց հանդիսացող՝ ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վստահելիությունն ու ճշգրտությունը՝ կասկածի տակ դնելով դրանց արժանահավատությունը: Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել մեղսագրվող արարքների կատարման ժամանակահատվածում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, իսկ քրեական գործում առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված համարել, որ Դ.Աղայանը կատարել է սույն քրեական գործով իրեն մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքները:

19. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են

արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Դ.Աղայանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքներում և քրեական գործի վարույթը կարճելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

20. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դավիթ Շիլլերի Աղայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 3-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը բեկանել:

2. Դավիթ Շիլլերի Աղայանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 225-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքներում ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԲՐԴ/0197/01/08

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

*նախազահույթյամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
պաշտպաններ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե.ՎԱՐՈՍՅԱՆԻ
Լ.ՍԱՀԱԿՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վարդան Վրեժի Ջհանգիրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի փետրվարի 24-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 69101308 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ Վարդան Վրեժի Ջհանգիրյանի կողմից ոստիկանության աշխատակիցների կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու փաստի առթիվ:

Հետաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ թիվ 69101308 քրեական գործի նյութերով հարուցվել է թիվ 69101408 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ Գագիկ Վրեժի Զհանգիրյանի կողմից ապօրինի կերպով հրազեն և ռազմամթերք ձեռք բերելու ու պահելու փաստի առթիվ, որն էլ միացվել է թիվ 69101308 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 69101308 համարով:

2008 թվականի փետրվարի 24-ին Վ.Զհանգիրյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ Վ.Զհանգիրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ Վ.Զհանգիրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

1.1. 2008 թվականի մարտի 7-ին քրեական գործն ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որը նույն օրն ընդունվել է վարույթ:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 7-ի որոշմամբ թիվ 69101308 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 62202608 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ Ռաֆիկ Ռաֆայելի Մուրադյանը ճանաչվել է տուժող:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի ապրիլի 18-ի որոշումներով Վ.Զհանգիրյանին առաջադրված մեղադրանքի ծավալը լրացվել է և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ թիվ 62202608 քրեական գործից անջատվել են Վ.Զհանգիրյանի վերաբերյալ թիվ 69101308 քրեական գործի նյութերը և նույն թվականի ապրիլի 23-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել Երևանի քրեական դատարան:

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2009 թվականի մարտի 31-ի դատավճռով Վ.Զհանգիրյանին մեղաազրված արարքը վերադրակվել է և նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով ու դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. Վ.Զհանգիրյանի և նրա պաշտպաններ Լ.Սահակյանի ու Ե.Վարդյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2009

թվականի հուլիսի 15-ի որոշմամբ բողոքը մերժել է, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի մարտի 31-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Նույն որոշմամբ Վ.Ջհանգիրյանի նկատմամբ կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը, և նա ազատվել է նշանակված պատժի կրումից:

4. Վ.Ջհանգիրյանի և նրա պաշտպաններ Լ.Սահակյանի ու Ե.Վարդյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ վերադարձվել է:

5. 2020 թվականի մարտի 13-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը հիմնարար խախտման հիմքով բողոք է բերել Վճռաբեկ դատարան, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 7-ի որոշմամբ ընդունվել է վարոյթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Առաջին ատյանի դատարանը, 2009 թվականի մարտի 31-ի դատավճռով հիմնավորված է համարել հետևյալ փաստերը. «(...) 2008թ. փետրվարի 23-ին ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ Էջմիածին քաղաքից դեպի Երևան ընթացող «ԲՄՎ իքս-5» մակնիշի, սև, 99 SL 555 պերհամարանիշի և ՎԱԶ-21010 մակնիշի, արծաթագույն, 80 ՍՍ 555 պերհամարանիշի ավտոմեքենաներում գտնվում են զինված անձինք: Վերջիններին վնասագերծելու նպատակով նույն օրը, ժամը 23-ի սահմաններում Էջմիածին-Երևան մայրուղու Արգավանդ գյուղի խաչմերուկում ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության հարուկ նշանակության 5-րդ վարչության և 3-րդ վարչության աշխատակիցների միջոցով իրականացվել է օպերատիվ միջոցառում: Այդ միջոցառման անցկացման նախնական հրահանգավորման համաձայն ոստիկանական «Ֆորդ-Տրանզիտ» մակնիշի, 219 ՈՍ 01 պերհամարանիշի ավտոմեքենան փակել է «ԲՄՎ-իքս-5» [«BMW X-5»] մակնիշի ավտոմեքենայի ընթացքի ուղին, որի ժամանակ, այդ ավտոմեքենայի դիմացը ձախից աջ ուղղությամբ փակելիս՝ «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենան և «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենան բախվել են միմյանց: ՀՀ ոստիկանության 5-րդ վարչության աշխատակից, տուժող

Ռաֆիկ Մուրադյանն ավտոմեքենաների բախմանը նախորդող պահին դուրս է ցարկել «Տորդ» մակնիշի ավտոմեքենայի սրահի աջակողմյան դռնից և գոռացել՝ «չարժվեք, ուրիկանությունն է»: Երանից հետո, նույն դռնով, ավտոմեքենայից դուրս են ցարկել նաև վկաներ Արսեն Աղանիկյանը, Միքայել Ղազարյանը և Արտակ Մարգարյանը, որոնք նույնպես ներկայացել են որպես ուրիկանության աշխատակիցներ: Տուժող Ռաֆիկ Մուրադյանը ուրիկանական համազգեստի վրայից կրել է առանց փարբերանշանների բաճկոն, իսկ վկաներ Արսեն Աղանիկյանը, Միքայել Ղազարյանը և Արտակ Մարգարյանը կրել են ուրիկանական փարբերանշաններով սև համազգեստ: Եշված անձինք անմիջականորեն իրականացրել են «ԲՄՎ իքս-5» ավտոմեքենայում գրնավողների զինաթափումն ու վնասազերծումը: «ԲՄՎ իքս-5» մակնիշի, 99 SL 555 պերհամարանիշի ավտոմեքենայի վարորդ, ամբաստանյալ Վարդան Վրեժի Զհանգիրյանն իմանալով, որ իրեն դիմողները ուրիկաններ են, չենթարկվելով ավտոմեքենայից իջնելու և իր մոտ պահվող հրազենը ներկայացնելու մասին ուրիկանության աշխատակիցների օրինական պահանջներին՝ մեկ անգամ ձեռքով հարվածել է փուժող Ռաֆիկ Մուրադյանի դեմքին՝ պարճառելով առողջության թեթև վնասի հարկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ և ձեռքով քաշել պայտել է նրա բաճկոնը: Ֆիզիկական ուժի կիրառմամբ, փուժող Ռաֆիկ Մուրադյանը, վկաներ Արսեն Աղանիկյանը և Տիգրան Կարապետյանը վնասազերծել են ամբաստանյալ Վարդան Զհանգիրյանին, որն իր բաճկոնի փակ, գուրկարեղում կրել է «ԻԶՀ-75» (IZH-75) մոդելի «ԳՕՊ-1432» (ԹԿԼ-1432) գործարանային համարի արթճանակ և նրան բերման են ենթարկել ՀՀ ուրիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն: Ամբաստանյալ Վարդան Զհանգիրյանին վնասազերծելիս տեղի ունեցած քաշքշուկի, պայքարի ընթացքում ՀՀ ուրիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 5-րդ վարչության ՀԿԳ ավագ օպերլիազոր, փուժող Ռաֆիկ Մուրադյանի հաշվեցուցակային արթճանակից արձակվել է երկու կրակոց, որոնց հետևանքով ամբաստանյալ Վարդան Զհանգիրյանին և ուրիկանության աշխատակիցներ, վկաներ Տիգրան Կարապետյանին ու Գևորգ Մալխասյանին հրազենային վնասվածքներ են պարճառվել: Ամբաստանյալ Վարդան Զհանգիրյանի վարած «ԲՄՎ իքս-5» մակնիշի, 99 SL 555 պերհամարանիշի ավտոմեքենայի զննմամբ հայտնաբերվել է նաև «Կոնկորդ Սարսիլմազ» (CONCORD SARSILMAZ) մոդելի «ԴԿ 118518» (DK 118518) համարի 12 փրամաշափի որսորդական ողորկափող հրացան: Ամբաստանյալ Վարդան Զհանգիրյանի մոտ պահվող արթճանակի և որսորդական հրացանի կապակցությամբ կատարված քննությամբ պարզվել է, որ ՀՀ ուրիկանության հասարակական կարգի սպառնալուծման

վարչությունից նրան Կրվել են համապատասխանաբար՝ պարզևարարական զենք պահելու և կրելու ԹՊԶ թիվ 1048 և որսորդական հրազեն պահելու և կրելու ԹՊԿ թիվ 160 թույլտվությունները (...)¹:

6.1. Առաջին ատյանի դատարանն իր կողմից հաստատված հանգամանքների հիմքում դրել է վկաներ Կ.Հովհաննիսյանի, Ա.Սիմոնյանի, Լ.Պողոսյանի, Մ.Հովհաննիսյանի ցուցմունքները, տուժող՝ ՀՀ ոստիկանության աշխատակից Ռաֆիկ Մուրադյանի ցուցմունքը, վկաներ՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցներ Ա.Աղանիկյանի, Տ.Կարապետյանի, Ա.Մարգարյանի, Մ.Ղազարյանի, Ա.Սուքիասյանի, Գ.Վարդանյանի, Կ.Խաչատրյանի, Գ.Գևորգյանի, Մ.Արզումանյանի, Վ.Քաբաբյանի, Ռ.Կապիաջյանի, Գ.Մալխասյանի ցուցմունքները, Վ.Ջհանգիրյանին բերման ենթարկելու մասին՝ 2008 թվականի փետրվարի 23-ի արձանագրությունը, ՀՀ ոստիկանության աշխատակիցներ Ռ.Մուրադյանի, Ա.Աղանիկյանի, Մ.Ղազարյանի, Ա.Մարգարյանի և Ա.Սուքիասյանի կողմից 2008 թվականի փետրվարի 23-ին կազմված զեկուցագրերը, անձնական խուզարկություն կատարելու մասին նույն օրվա արձանագրությունը և իրեղեն ապացույց ճանաչված՝ տուժող Ռ.Մուրադյանի բաճկոնը²:

7. Առաջին ատյանի դատարանը գտել է, որ ամբաստանյալ Վարդան Ջհանգիրյանի կողմից, իշխանության ներկայացուցիչների նկատմամբ կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելն ապացուցված չէ, նրա արարքը ճիշտ չէ որակված և չի համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Միաժամանակ, Առաջին ատյանի դատարանն ապացուցված է համարել ամբաստանյալ Վարդան Ջհանգիրյանի կողմից իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ նրա արարքը վերադրակելով և վերջինիս մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով³:

7.1. Դատաքննության ընթացքում պաշտպանության կողմի միջնորդությամբ հարցաքննվել են վկա Գրիգոր Զաքարյանն ու մեկ այլ գործով մեղադրյալ Գագիկ Ջհանգիրյանը, որոնք տվյալներ են հայտնել քրեական գործի հարուցման առիթը հանդիսացող իրադարձությունների ժամանակ դրանց մասնակցող անձանց շրջանակի, նրանց արտաքին նկարագրության, հնչած կրակոցների, խոսակցությունների և այդ իրադարձությունների հետ կապված հանգամանքների վերաբերյալ՝

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 512-520:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

հերքելով Վ.Ջհանգիրյանի կողմից որևէ մեկի նկատմամբ բռնություն գործադրելու կամ բռնության սպառնալիք տալու հանգամանքները:

Բացի այդ, Գագիկ Ջհանգիրյանը տեղեկություններ է հայտնել ինչպես տեղի ունեցած միջադեպի ընթացքում, այնպես էլ դրանից հետո՝ իր և Վարդան Ջհանգիրյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից գործադրված բռնության հանգամանքների շուրջ¹:

7.2. Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Գրիգոր Զաքարյանի ու Գագիկ Ջհանգիրյանի վերոնշյալ ցուցմունքները Վարդան Ջհանգիրյանին առաջադրված մեղադրանքի հետ առնչություն չունեն²:

7.3. Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում, Վ.Ջհանգիրյանի պաշտպանները միջնորդել են դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել մի շարք անձանց, բացի այդ նշել են, որ գործի քննության ընթացքում ի հայտ են եկել Վ.Ջհանգիրյանի մեղավորությունը հերքող ապացույցներ, այդ թվում՝ նաև՝ Գ.Ջհանգիրյանի գործով Կ.Բաբակեխյանի կողմից՝ որպես ոստիկանական օպերացիայի ղեկավարի, տրված ցուցմունքները, ՀՀ ոստիկանության 6-րդ վարչությունից ստացված՝ իրենց հարցման պատասխանը, որպիսի փաստական տվյալները պատշաճ կերպով կարող են ներկայացնել դատաքննությունը վերսկսելու պայմաններում:

Առաջին ատյանի դատարանը միջնորդությունը մերժել է այն պատճառաբանությամբ, որ պաշտպանական կողմը հստակ չի մատնանշել և չի ներկայացրել այն ապացույցները, որոնք կարող էին հիմք հանդիսանալ դատական քննությունը վերսկսելու համար և միայն այն հանգամանքը, որ պաշտպանական կողմը հայտարարություններ է անում այնպիսի ապացույցների մասին, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Վ.Ջհանգիրյանի վերաբերյալ գործով, բավարար հիմք չի կարող հանդիսանալ դատաքննությունը վերսկսելու համար³:

8. Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ նշել է. *«(...) Վերաքննիչ դատարանը գտնում է՝ գործով տրուժողի և վկաների ոստիկանության աշխատակիցներ լինելու հանգամանքը չի կարող կասկածի տակ դնել վերջիններիս ցուցմունքների արժանահավատությունը, ապացուցողական նշանակությունը և դիտել այն որպես կանխորոշիչ կամ կանխակալ հանգամանք, առանց որևէ հիմնավորումների (...):*

(...) [Վ]երաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն քրեական գործի ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում քրեադատավարական օրենքի էական խախտումներ՝ որոնք

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, դատական նիստի արձանագրություն:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 512-520:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, դատական նիստի արձանագրություն:

գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու, կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, թույլ չեն տրվել, գործի փաստական հանգամանքների մասին դատավճռում շարադրված դատարանի հետևությունները բխում են քրեական գործով ձեռք բերված ապացույցներից, կիրառվել է քրեական այն օրենքը, որը ենթակա էր կիրառման, ուստի դատավճիռը պետք է թողնել օրինական ուժի մեջ (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Վճռաբեկ բողոքը բերվել է այն հիմքով, որ նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Բողոքի հեղինակն ընդգծել է, որ Առաջին ատյանի դատարանը, 2009 թվականի մարտի 31-ի դատավճռով Վ.Ջհանգիրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության մեջ՝ որպես արարքի կատարումը հիմնավորող ապացույցներ հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության աշխատակիցներ հանդիսացող տուժողի և վկաների ցուցմունքները, ինչպես նաև տուժող Ռ.Մուրադյանի վերաբերյալ դատաբժշկական փորձաքննության 2008 թվականի մարտի 25-ի թիվ 223 եզրակացությունը, որպես իրեղեն ապացույց ճանաչված՝ տուժող Ռ.Մուրադյանի բաճկոնը և այլ ապացույցները, իսկ Վերաքննիչ դատարանը, 2009 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, գտել է, որ ստորադաս դատարանը հանգամանորեն հետազոտել է յուրաքանչյուր ապացույց՝ թույլատրելիության և վերաբերելիության քրեադատավարական պահանջների տեսանկյունից, որպիսի պայմաններում կայացրել է օրինական և հիմնավորված դատական ակտ:

Բողոք բերած անձը շեշտել է, որ ստորադաս դատարանները Վ.Ջհանգիրյանի մեղադրանքը հիմնավորելիս առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովվել

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 85-99:

Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Բացի այդ, ստորադաս դատարանները Վ.Ջհանգիրյանի մեղքը հիմնավորող ապացուցողական գամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Վ.Ջհանգիրյանի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակից՝ ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության աշխատակիցներ, տուժող Ռ.Մուրադյանի և վկա Ա.Ադանիկյանի ցուցմունքներն են: Ինչ վերաբերում է այլ ապացույցներին, որոնց դատարանները հղում են կատարել, այն է՝ որպես վկա հարցաքննված ոստիկանության մյուս աշխատակիցների ցուցմունքները, իրեղեն ապացույցը, դրա առգրավման արձանագրությունն ու փորձագիտական եզրակացությունը, ապա դրանք անուղղակի ապացույցներ են և ուղղակիորեն չեն հաստատում Վ.Ջհանգիրյանի առնչությունը մեղսագրվող արարքին:

Բողոքաբերի կարծիքով, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Վ.Ջհանգիրյանին մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում, իսկ ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն անվերապահորեն ընդունելը՝ առանց պաշտպանական կողմին լիարժեք հնարավորություն ընձեռելու մրցակցային դատավարության պայմաններում արդյունավետորեն վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքների արժանահավատությունը, ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով, այնպես էլ սույն գործով, հանգեցրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա)՝ 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:

Բողոք բերած անձը գտել է, որ ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել այն հարցը, թե ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները՝ Վ.Ջհանգիրյանին բերման և քրեական հետապնդման ենթարկելուն նախորդող և հաջորդող իրադարձությունների

համատեքստում արդյո՞ք կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության առումով, ինչն ունեւր առանցքային նշանակություն դրանց արժանահավատությունը, ինչպես նաև այլ փաստական տվյալների հետ համակցության մեջ գործի լուծման համար բավարարությունը որոշելու տեսանկյունից:

Բողոքաբերի պնդմամբ ստորադաս դատարանների դատական ակտերով հաստատված փաստական հանգամանքների և գործի նյութերի համադրված վերլուծությունից հետևում է, որ ստորադաս դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, իսկ քրեական գործում առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված համարել, որ Վ.Ջհանգիրյանը կատարել է սույն քրեական գործով իրեն մեղաագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը:

Բողոքաբերը գտել է, որ Վարդան Ջհանգիրյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2009 թվականի մարտի 31-ի դատավճռով և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ թույլ է տրվել դատավարական իրավունքի հիմնարար խախտում, վերը նկարագրված փաստական տվյալների պայմաններում ի սկզբանե կանխորոշված է եղել քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկվել է դրա նշանակությունը՝ ինչը վկայում է անօրինական և չհիմնավորված դատական ակտեր կայացված լինելու մասին:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել Առաջին աստիանի դատարանի՝ 2009 թվականի մարտի 31-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 15-ի որոշումը՝ ճանաչելով և հռչակելով Վ.Ջհանգիրյանի անմեղությունը մեղաագրված արարքում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

12. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարծվի այն հանցագործության կասկածից, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ¹:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «հիմնարար խախտում» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից գուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 Արձանագրության Բացատրական զեկույցի 31-րդ կետում ընգծված է, որ «4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հոգուր դատապարտված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատապարտյալի»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախնառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «ազդեն գործի ելքի վրա»՝ կամ հոգուտ անձի, կամ հակառակը¹:

12.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ն]ույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

12.2. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Մարգարյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտնած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)»¹:

12.3. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ թիվ ՍԴՈ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարճատահերևանքային կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկարմամբ արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից րուժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճատված վնասը հարուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեգրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը սրացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»²:

13. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիր ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

¹ Տե՛ս Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-1431 որոշման 4.3-րդ կետը:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները (...):

14. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով¹ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ:** Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ **արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ**²,

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ **դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»**³,

¹ Տե՛ս *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

² Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետեր, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետեր:

³ Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետեր:

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին¹,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն²,

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, **միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին:** Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին³,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում:** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն

¹ Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետ, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետ, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետ:

² Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topić v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետ:

³ Տե՛ս *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը, 206-րդ կետ:

վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեն յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները¹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում Վ.Ջհանգիրյանի պաշտպանները միջնորդել են դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել մի շարք վկաների, բացի այդ նշել են, որ ի հայտ են եկել Վ.Ջհանգիրյանի մեղավորությունը հերքող ապացույցներ, որպիսի փաստական տվյալները պատշաճ կերպով կարող են ներկայացնել դատաքննությունը վերսկսելու պայմաններում: Առաջին ատյանի դատարանը միջնորդությունը մերժել է այն պատճառաբանությամբ, որ պաշտպանական կողմը հստակ չի մատնանշել և չի ներկայացրել այն ապացույցները, որոնք կարող էին հիմք հանդիսանալ դատական քննությունը վերսկսելու համար և միայն այն հանգամանքը, որ պաշտպանական կողմը հայտարարություններ է անում այնպիսի ապացույցների մասին, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Վ.Ջհանգիրյանի վերաբերյալ գործով, բավարար հիմք չի կարող հանդիսանալ դատաքննությունը վերսկսելու համար²:

15.1. Առաջին ատյանի դատարանը, 2009 թվականի մարտի 31-ի դատավճռով Վ.Ջհանգիրյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության մեջ, որպես արարքի կատարումը հիմնավորող ապացույցներ հիմք է ընդունել վերջինիս նախաքննական ցուցմունքը, վկաներ Կ.Հովհաննիսյանի, Ա.Սիմոնյանի, Լ.Պողոսյանի, Ս.Հովհաննիսյանի ցուցմունքները, տուժող, ՀՀ ոստիկանության աշխատակից Ռ.Մուրադյանի ցուցմունքը, վկաներ՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցներ Ա.Ադանիկյանի, Տ.Կարապետյանի, Ա.Մարգարյանի, Մ.Ղազարյանի, Ա.Սուքիասյանի, Գ.Վարդանյանի, Կ.Խաչատրյանի, Գ.Գևորգյանի, Մ.Արզումանյանի, Վ.Քարաբյանի, Ռ.Կայֆաջյանի, Գ.Մալխասյանի ցուցմունքները, Վ.Ջհանգիրյանին բերման ենթարկելու մասին՝ 2008 թվականի փետրվարի 23-ի արձանագրությունը, ՀՀ ոստիկանության աշխատակիցներ

¹ Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, զանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, զանգատ թիվ 76201/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, զանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

² Տե՛ս սույն որոշման 7.3-րդ կետը:

Ռ.Մուրադյանի, Ա.Ադանիկյանի, Մ.Ղազարյանի, Ա.Մարգարյանի և Ա.Սուքիասյանի կողմից 2008 թվականի փետրվարի 23-ին կազմված գեկուցագրերը, անձնական խուզարկություն կատարելու մասին նույն օրվա արձանագրությունը և իրեղեն ապացույց ճանաչված՝ տուժող Ռ.Մուրադյանի բաճկոնը¹:

15.2. Վերաքննիչ դատարանը, 2009 թվականի հունիսի 23-ի որոշմամբ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը, ի թիվս այլնի, արձանագրել է, որ գործով տուժողի և վկաների ոստիկանության աշխատակիցներ լինելու հանգամանքը չի կարող կասկածի տակ դնել վերջիններին ցուցմունքների արժանահավատությունը, ապացուցողական նշանակությունը և դիտվել որպես կանխորոշիչ կամ կանխակալ հանգամանք, առանց որևէ հիմնավորումների, և հանգել է հետևության, որ սույն քրեական գործի ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու, կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, թույլ չեն տրվել, գործի փաստական հանգամանքների մասին դատավճռում շարադրված դատարանի հետևությունները բխում են քրեական գործով ձեռք բերված ապացույցներից²:

16. Սույն որոշման 15-15.2-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մուշեղ Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Վ.Ջհանգիրյանի մեղադրանքը հիմնավորելիս առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովվել *Մուշեղ Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները Վ.Ջհանգիրյանի մեղքը հիմնավորող ապացուցողական զանբյուրում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝

¹ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Վ.Ջհանգիրյանի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակից, ՀՀ ոստիկանության աշխատակիցներ՝ տուժող՝ Ռ.Մուրադյանի և վկա՝ Ա.Աղանիկյանի ցուցմունքներն են: Ինչ վերաբերում է այլ ապացույցներին, որոնց դատարանները հղում են կատարել, այն է՝ որպես վկա հարցաքննված ոստիկանության մյուս աշխատակիցների ցուցմունքները, բերման ենթարկելու մասին արձանագրությունը, ոստիկանության աշխատակիցների կողմից կազմված զեկուցագրերը, անձնական խուզարկություն կատարելու մասին արձանագրությունը և իրեղեն ապացույց ճանաչված՝ տուժողի բաճկոնը, դրանք անուղղակի ապացույցներ են և ուղղակիորեն չեն հաստատում Վ.Ջհանգիրյանի առնչությունը մեղսագրվող արարքին:

Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու ոստիկանության այն ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Վ.Ջհանգիրյանին մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում: Ավելին, ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում, սույն գործով ևս պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Մասնավորապես, պաշտպանական կողմին հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու մի շարք վկաների և ապացուցողական զանգվածում ներառելու նրանց ցուցմունքները, որոնք, ըստ պաշտպանների, կասկածի տակ էին դնում ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալները և հիմնավորում էին դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանության կողմի առաջ քաշված վարկածը: Այլ կերպ, ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն անվերապահորեն ընդունելը՝ առանց պաշտպանական կողմին լիարժեք հնարավորություն ընձեռելու մրցակցային դատավարության պայմաններում արդյունավետորեն վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքների արժանահավատությունը, ինչպես արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով, այնպես էլ սույն գործով, հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի

6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:

17. Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Վ.Ջհանգիրյանի մեղավորության հարցին՝ Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոփոխականացված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ *«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ սրուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն սրուգելու միջոցով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:*

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պարզաձ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարափող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին տրախ է հաստատող պարասիսաններ»:*

17.1. Վերլուծելով ապացուցման քրեադատավարական կանոնները, մասնավորապես անդրադառնալով «ապացույցների բավարարություն» հասկացությանը՝ Վճռաբեկ դատարանն *Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով որոշման մեջ նշել է, որ.

«(...) «[Ա]պացույցների բավարարությունը» որոշելու չափանիշներն են.

- 1) անմեղության կանխավարկածը,
- 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
- 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և

պարզառարանվածությունը:

(...) Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միննույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

(...) Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

(...) Ապացույցի արժանահավատության հարկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության րեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) ապացույցի աղբյուրի հարկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հարկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հարկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

(...):

Յուրաքանչյուր ապացույց արժանահավաքության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների սրացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավաքության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից սրացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից սրացված տեղեկությունների արժանահավաքությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել սրացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապարասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում դրա պատճառները:

Ապացույցի արժանահավաքության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա:

(...) Ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում ապացույցների բավարարությունը որոշելու մյուս՝ դատավարական որոշումների հիմնավորման և պատճառաբանման չափանիշի միջոցով (...):

(...) [Բ]րեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ստելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (իսկար ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացատրի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»¹:

18. Սույն որոշման 17-17.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 15-15.2-րդ կետերում ներկայացված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել այն

¹ Տե՛ս Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 29-31-րդ և 33-րդ կետերը:

հարցը, թե ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները՝ Վ.Ջհանգիրյանին բերման և քրեական հետապնդման ենթարկելուն նախորդող և հաջորդող իրադարձությունների համատեքստում արդյո՞ք կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության առումով, ինչն ուներ առանցքային նշանակություն դրանց արժանահավատությունը, ինչպես նաև այլ փաստական տվյալների հետ համակցության մեջ գործի լուծման համար բավարարությունը որոշելու տեսանկյունից: Այսպես, դատական ակտերով հաստատված փաստական հանգամանքների և գործի նյութերի համադրված վերլուծությունից հետևում է.

- ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ Էջմիածին քաղաքից դեպի Երևան քաղաք ընթացող «BMW-X5» մակնիշի և նրան ուղեկցող «ՎԱԶ 21010» մակնիշի ավտոմեքենաներում զինված անձինք են գտնվում: Կարճ ժամանակ անց, օպերատիվ միջոցառումն իրականացնելիս տեղի է ունեցել քաշքշուկ, որի ընթացքում ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 5-րդ վարչության ՀԿԳ ավագ օպերիվագոր, սույն գործով տուժող Ռաֆիկ Մուրադյանի հաշվեցուցակային ատրճանակից արձակվել է երկու կրակոց, որոնց հետևանքով ամբաստանյալ Վարդան Ջհանգիրյանին և ոստիկանության աշխատակիցներ Տիգրան Կարապետյանին ու Գևորգ Մալխասյանին հրազենային վնասվածքներ են պատճառվել¹:

1. Վ.Ջհանգիրյանը, «դիմադրություն ցույց տալու» կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանություն²,

2. 2008 թվականի փետրվարի 24-ին Վ.Ջհանգիրյանը ձերբակալվել է:

3. Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ Վ.Ջհանգիրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Հարկ է նկատել, որ Վարդան Ջհանգիրյանի մոտ պահվող ատրճանակի և որսորդական հրացանի կապակցությամբ կատարված քննությամբ պարզվել է, որ վերջինս ունեցել է դրանք պահելու և կրելու օրինական թույլտվություններ:

Միաժամանակ, Վ.Ջհանգիրյանի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել ՀՀ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ բռնություն գործադրելու համար՝ կապված նրանց կողմից իրենց

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս քրեական գործ հատոր 1, թերթ 12:

ծառայողական պարտականությունները կատարելու հետ, ինչն առավելապես հիմնավորվել է վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակից ոստիկանների ցուցմունքներով, ինչպես նաև դեպքի մասին միջնորդավորված ձևով իրազեկված ոստիկանության աշխատակիցների անուղղակի ցուցմունքներով և այլ անուղղակի փաստական տվյալներով:

Նման պայմաններում, դեպքի վերոնշյալ ժամանակագրությունը՝ ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում գինված անձանց մասին օպերատիվ տեղեկությունների ստացման պահից մինչև «*դիմադրություն ցույց տրալու*» կասկածանքով բերման ենթարկվելը, այնուհետև՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ բռնություն գործադրելու համար մեղադրանքի առաջադրումը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ, ողջամտորեն ստվերում են այն հիմնավորող, գործով ուղղակի ապացույց հանդիսացող՝ ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վստահելիությունն ու ճշգրտությունը՝ կասկածի տակ դնելով դրանց արժանահավատությունը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, սույն գործով անդրադարձ չի կատարվել Գ.Ջհանգիրյանի ցուցմունքում նշված՝ ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց նկատմամբ գործադրված բռնության հանգամանքներին¹: Մինչդեռ, հայտնաձև տեղեկությունների ստուգման նպատակով համապատասխան քննության իրականացումը կարող էր էական նշանակություն ունենալ ինչպես ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների արժանահավատությունը, այնպես էլ գործի ելքը որոշելիս:

Վերոշարադրյալ անհերքելի գործոնների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, իսկ քրեական գործում առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված համարել, որ Վ.Ջհանգիրյանը կատարել է իրեն մեղսագրված արարքը:

19. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

¹ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Վ.Ջհանգիրյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և քրեական գործի վարույթը կարճելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

20. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վարդան Վրեժի Ջհանգիրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2009 թվականի մարտի 31-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանել:

2. Վարդան Վրեժի Ջհանգիրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0104/01/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արման Սպարտակի Շահինյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 7-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի և 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը:

2008 թվականի մարտի 2-ին, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասի և 235-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը: Նույն օրը որոշում է կայացվել նշված քրեական գործերը մեկ վարույթում միացնելու մասին:

2008 թվականի մարտի 3-ին Արման Սպարտակի Շահինյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 6-ի որոշմամբ Ա.Շահինյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրը նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի հունիսի 11-ի որոշմամբ Ա.Շահինյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի հունիսի 11-ի որոշմամբ թիվ 62202608 քրեական գործից անջատվել է Ա.Շահինյանի վերաբերյալ մասը, որին շնորհվել է 62212808 համարը:

2008 թվականի հունիսի 12-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով Ա.Շահինյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Պաշտպան Զ.Բուդաղյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2008 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Ա.Շահինյանի՝ նոր հանգամանքի հիմքով բերված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

5. 2019 թվականի նոյեմբերի 1-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը հիմնարար խախտման հիմքով բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Նախաքննության մարմնի կողմից Արման Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «անմիջական մասնակցություն է ունեցել ընտրությունների հաջորդ իսկ օրվանից Երևան քաղաքում օրենքով սահմանված կարգի խախտմամբ իրականացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին:

Այնուհետև՝ երբ ազատության հրապարակում անընդմեջ իրականացվող հրապարակային զանգվածային միջոցառումների շրջանում հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պատճառելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու համար հարմարեցված այլ պարագաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրացնելիս, ռադիկալության ծառայողները 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 7-ի սահմաններում, Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից իրենց ծառայողական պարականությունները կատարելով պահանջել են հնարավորություն ընձեռել սրուզելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը՝ Արման Շահինյանը հանրահավաքի մյուս մասնակիցների հետ, չենթարկվելով ռադիկալության աշխարակիցների օրինական պահանջներին, փայտյա մահակով զինված հարձակվել և հարվածներ է հասցրել նրանց, որով իսկ կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բռնություն է գործադրել իշխանության ներկայացուցիչներ հանդիսացող ռադիկալության աշխարակիցների նկատմամբ¹:

7. Առաջին ատյանի դատարանը, Ա.Շահինյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, հաստատված է համարել հետևյալ փաստական տվյալները. «(...) 2008 թվականի մարտի 1-ին առավորյան Ազատության հրապարակում Արման Շահինյանը չենթարկվելով ռադիկալության աշխարակիցների օրինական պահանջներին, փայտյա մահակով զինված հարձակվել և հարվածներ է հասցրել նրանց, որով իսկ կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բռնություն է գործադրել իշխանության ներկայացուցիչներ հանդիսացող ռադիկալության աշխարակիցների նկատմամբ:

(...) Դադարանը վերլուծելով և գնահատելով դադարնությունը հետազոտված ապացույցները, ներքին համոզմամբ՝ գտնում է, որ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է Արման Շահինյանը ապացուցված է,

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 186-188:

նրա կողմից կատարած արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին մասի հարկանիշներին, ապացուցված է ամբաստանյալի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ (...):¹

8. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը նշել է. «(...) [Վ]երաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում քննության առնելով քրեական գործը, սրուգելով նյութական և դատավարական օրենքի կիրառման ճշտությունը, լսելով վերաքննիչ բողոքի կապակցությամբ ամբաստանյալի հիմնավորումները, դատական ակտը չբողոքարկած հակառակ կողմի՝ դատախազի պատասխանը, հանգում է այն հետևության, որ (...) վերաքննիչ բողոքը պետք է մերժել (...):»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները դատական քննության ընթացքում թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ըստ բողոքաբերի՝ Ա.Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքն անորոշ է, որի պայմաններում խախտվել է քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքը՝ տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքերի մասին, որպիսի պայմաններում չի ապահովվել ամբաստանյալի պաշտպանության իրավունքի իրացումը, ինչն էլ, իր հերթին, անհնար է դարձրել արդար դատաքննության հիմնարար իրավունքի պահանջները բավարարող դատաքննության անցկացումը:

9.1. Բացի այդ, ըստ բողոքաբերի, նախաքննության և դատաքննության ընթացքում հավաքված ապացույցներն իրենց համակցության մեջ գնահատելով, դրանք համադրելով միմյանց հետ, անհրաժեշտ է փաստել, որ գործով բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել, որպիսի պայմաններում անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 55-59:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 118-121:

10. Վերագրյալի հիման վրա, բողոք բերած անձը, եզրահանգելով, որ Ա.Շահինյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը, խնդրել է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանել ու փոփոխել՝ ճանաչելով և հռչակելով Արման Շահինյանի անմեղությունը մեղսագրված արարքում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Ա.Շահինյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

12. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պեղծության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պեղծության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը րվյալ պեղծության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի

պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ¹:

Մինևույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «*հիմնարար խախտում*» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից զուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 Արձանագրության Բացատրական գեկույցի 31-րդ կետում ընգծված է, որ «*4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հոգուր դատապարտված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատապարտյալի*»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախնառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «*ազդեն գործի ելքի վրա*»՝ կամ հոգուտ անձի, կամ հակառակը²:

12.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի*

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրեթի անձի վիճակի վարթարացում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ն]ույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն րացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դարական քննության ընթացքում թույլ են րրվել նյութական կամ դարավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դարական ակրը խաթարում է արդարադարության րուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշրպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

12.2. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մրած դարական ակրերը կարող են վերանայվել րացառապես նյութական կամ դարավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը րիում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մրած դարական ակրերի վերանայումը ընդհանուր կանոնից րացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է րողքարկման րացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր րնույթ, քան քրեական օրենքի սիալ կիրառումը կամ քրեադարավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, րովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դարական ակր կայացված լինելու մասին: (...)»¹:

12.3. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ թիվ ՄԴՌ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պերք է պարճառահեղանակային կապի մեջ գրնվի ընդունված և արդարադարության րուն էությունը խաթարող դարական ակրի հեր: Քրեական արդարադարությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կարարած անձին դարապարելուն, նրա նկարմամբ արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից րուժած անձի իրավունքներն ու

¹ Տե՛ն Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պայրճառված վնասը հատուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեզրկի քրեական գործով իրականացված արդարատիրությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը սրացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»¹:

13. ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

(...)

3) իր պաշտպանությունը նախապարտադրելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք (...):»:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրտեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիր ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապարտադրելու համար (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի դրույթն ընդգծում է առաջադրվող «մեղադրանքի» մասին մեղադրյալին ծանուցելուն հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Հանցագործության վերաբերյալ մանրամասն տվյալները կարևոր դեր են խաղում քրեական դատավարությունում այն իմաստով, որ դրանց հայտարարման պահից է անձը համարվում պաշտոնապես ծանուցված նրա դեմ առաջ քաշված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

մասին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելու իրավունքը պետք է դիտել պաշտպանության նախապատրաստության իրավունքի լույսի ներքո¹:

13.1. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշման մեջ մեղադրանքի ձևակերպումը դիտարկելով որպես արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման միջոց՝ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) *ԴՆՐանում, բացի հանցավորի մասին փյալներից, հանցագործության րեղից, ժամանակից և տղանակից, մանրամասնորեն և հարակ պետք է նշվեն արարքի քրեահրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ: (...)*

Վճռաբեկ դատարանը գրնում է, որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կտա մեղադրյալին պարզաճ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դատավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայագրկման»²:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «անմիջական մասնակցություն է ունեցել ընտրությունների հաջորդ իսկ օրվանից Երևան քաղաքում օրենքով սահմանված կարգի խախտմամբ իրականացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին:

Այնուհետև՝ երբ ազատության հրապարակում անընդմեջ իրականացվող հրապարակային զանգվածային միջոցառումների շրջանում հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պարճատելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Seliverstov v. Russia* գործով 2008 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 19692/02, կետեր 16-17:

² Տե՛ս *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 21-րդ կետը:

համար հարմարեցված այլ պարագաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրացնելիս, ոստիկանության ծառայողները 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 7-ի սահմաններում, Ազարության հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից իրենց ծառայողական պարտականությունները կատարելով պահանջել են հնարավորություն ընձեռել սրուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը՝ Արման Շահինյանը հանրահավաքի մյուս մասնակիցների հետ, չենթարկվելով ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, փայտյա մահակով զինված հարձակվել և հարվածներ է հասցրել նրանց, որով իսկ կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բռնություն է գործադրել իշխանության ներկայացուցիչներ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների նկատմամբ»¹:

15. Առաջին ատյանի դատարանը, 2008 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով Ա.Շահինյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության մեջ՝ հաստատված համարելով, որ «2008 թվականի մարտի 1-ին առավոտյան Ազարության հրապարակում Արման Շահինյանը չենթարկվելով ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, փայտյա մահակով զինված հարձակվել և հարվածներ է հասցրել նրանց, որով իսկ կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բռնություն է գործադրել իշխանության ներկայացուցիչներ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների նկատմամբ»²:

15.1. Վերաքննիչ դատարանը, 2008 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, արձանագրելով, որ դատավճիռը բեկանելու հիմքեր չկան³:

16. Սույն որոշման 14-15.1-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, ինչպես նաև հաշվի առնելով դրանց համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Շահինյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունը չի համապատասխանում «մեղադրանքի» վերաբերյալ միջազգային և ներպետական պահանջներին ու Վճռաբեկ դատարանի կողմից *Գևորգ Ճաղարյանի և մյուսների գործով* որոշմամբ սահմանված չափանիշներին: Մասնավորապես, մեղադրանքի ձևակերպումը պարունակում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի դիսպոզիցիայի նկարագրությունը: Մեղադրանքի մեջ նշված չեն

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

այնպիսի փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն հիմնավորված կերպով եզրահանգելու, որ Ա.Շահինյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասին, այն է՝ մեղադրանքի բովանդակությունից անհնար է պատկերացում կազմել, թե ո՞ւմ նկատմամբ է գործադրվել բռնություն¹, պարզ չէ, թե արդյո՞ք այն անձինք, ում նկատմամբ ենթադրաբար բռնություն է գործադրվել, հանդիսացել են իշխանության ներկայացուցիչներ և կատարել են ծառայողական պարտականություններ, ավելին՝ չի պարզվել թե հարվածների հետևանքով կոնկրետ ո՞ւմ ինչպիսի վնաս է պատճառվել և ինչի հիման վրա է որոշվել, որ Ա.Շահինյանի կողմից գործադրվել է հենց կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Ա.Շահինյանին առաջադրված մեղադրանքում մանրամասնորեն և հստակ չեն նշվել արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական տվյալները՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրանքի այդպիսի անորոշ ձևակերպման պայմաններում, խախտվել է քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքը՝ տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքի մասին, որպիսի պայմաններում չի ապահովվել նաև անձի պաշտպանության իրավունքի իրացումը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է արդար դատաքննության իրավունքի հիմնարար խախտման:

17. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

18. Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Արման Շահինյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և քրեական գործի վարույթը կարճելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ

¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ *mutatis mutandis* Վահան Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԱՐԴ/0038/01/13 որոշման 14-15-րդ կետերը:

հողվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն առարկայագուրկ է համարում անդրադառնալ բողոքաբերի՝ սույն որոշման 9.1.-րդ կետում շարադրված փաստարկներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արման Սպարտակի Շահինյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 7-ի որոշումը բեկանել:

2. Արման Սպարտակի Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՔԲԴ/0205/01/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Ն.ՆՈՒՄԱՆՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
դիմող՝ Ա.ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արամ Բաբկենի Բարեղամյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ավանյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում, 2008 թվականի մարտի 1-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը:

2008 թվականի մարտի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ թիվ 62202508 քրեական գործը միացվել է 62202608 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 62202608 համարով:

2008 թվականի մարտի 7-ին Արամ Բարեկենի Բարեղամյանը ձերբակալվել է:

2008 թվականի մարտի 10-ին Գարեգին Քամայանը ճանաչվել է տուժող:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 10-ի որոշմամբ Արամ Բարեղամյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225¹-րդ հոդվածի 2-րդ մասով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ Ա.Բարեղամյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 225¹-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ Ա.Բարեղամյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225¹-րդ հոդվածի 1-ին մասով, 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2008 թվականի ապրիլի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 14-ի դատավճռով Արամ Բարեղամյանը ՀՀ քրեական օրենսգրքի 225¹-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Արամ Բարեղամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով. ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտվել է ազատազրկման՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կարգով՝ պատիժները մասնակի գումարելու միջոցով, Ա.Բարեղամյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Բարեղամյանի պաշտպան Հ.Բաղդասարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2008 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 14-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի մայիսի 7-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Բարեղամյանի պաշտպան Վ.Զուռնայանի կողմից բերված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

5. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը՝ հիմնարար խախտման հիմքով բողոք է բերել Վճռաբեկ դատարան, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 17-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Արամ Բարեղամյանը ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով դատապարտվել է հետևյալ արարքների համար. «(...) երբ Ազատության հրապարակում անընդմեջ իրականացվող հրապարակային զանգվածային միջոցառումների մասնակիցների շրջանում հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պատճառելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու համար հարմարեցված այլ պարագաների սպորինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրացնելիս, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողները 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 07-ի սահմաններում, Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռել սպրոզելու նրանց մոտ գենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը՝ Արամ Բարեղամյանը չենթարկվելով դրանց, մի խումբ այլ անձանց հետ հարձակում է գործել ոստիկանության ծառայողների վրա, որի ընթացքում կյանքի և առողջության համար վրանգավոր բռնություն է գործադրել ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի տեղակալ Գարեգին Քամայանի նկատմամբ, դիտավորությամբ փայտե մահակով հարվածել է վերջինիս գլխին և նրա առողջությանը պատճառել ծանր վնաս՝ կապված վերջինիս կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ (...)»¹:

6.1 Արամ Բարեղամյանը ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ 2008 թվականի մարտի 1-ի առավոտյան՝ ժամը 6³⁰-ի սահմաններում Ազատության հրապարակ են մտել ոստիկանության աշխատակիցները, որոնք ցանկացել են տեղահան անել հրապարակում

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 106-109:

գտնվող քաղաքացիներին: Այդ ժամանակ ինքը մի շարք քաղաքացիների հետ միասին գտնվել է Ազատության հրապարակում գտնվող Սպենդիարյանի արձանի մոտակայքում: Այդ պահին իրենց է մոտեցել գնդապետի ուսադիրներով ոստիկանության մի աշխատակից և առաջարկել դուրս գալ հրապարակից, որից հետո իրենք քայլել են Թումանյան փողոցի ուղղությամբ: Քայլելու ժամանակ ինքը հարված է ստացել գլխին և վայր ընկել: Մի կերպ հասել է Հյուսիսային պողոտա, պատահական տաքսի ավտոմեքենայով գնացել է հանրապետական հիվանդանոց, որտեղ բուժվել է յոթ օր, այնուհետև իր պահանջով դուրս է գրվել: Դուրս գրման օրը՝ 2008 թվականի մարտի 7-ին, հիվանդանոց են եկել ոստիկանության աշխատակիցները և իրեն հրավիրել ոստիկանության Մաշտոցի բաժին: Նա հայտնել է նաև, որ 2008 թվականի մարտի 1-ի առավոտյան, երբ ոստիկանության աշխատակիցները մտել են Ազատության հրապարակ, թե ինքը և թե իր հետ գտնվող անձինք ոստիկանության աշխատակիցներին դիմադրություն ցույց չեն տվել և ինքը որևիցե մեկին մարմնական վնասվածք չի հասցրել¹:

6.2. Տուժող Գարեգին Քամայանն ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ աշխատում է ոստիկանության Մալաթիայի բաժնում՝ որպես բաժնի պետի տեղակալ: 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 6-ի սահմաններում, Մալաթիայի բաժնի պետի հրամանով անձնակազմը մեկնել է Ազատության հրապարակ՝ տեղում կատարվող զննություններին օժանդակելու և հասարակական կարգը պահպանելու նպատակով: Տեղում կազմել են շղթա և բացել միջանցք՝ հանրահավաքի մասնակիցների ելքը հրապարակից անվտանգ ապահովելու համար: Սակայն հանրահավաքի որոշ մասնակիցներն իրենց դիմավորել են քարերով, փայտե, մետաղյա մահակներով, մարմնական վնասվածք պատճառելու համար հարմարեցված այլ առարկաներով և դուրս չեն եկել հրապարակից: Մի քանի աշխատակիցների հետ փորձել է միտինգավորների համար հրապարակից դեպի Հյուսիսային պողոտա դուրս գալու ճանապարհ բացել, որի ընթացքում միջին տարիքի, երկար դեմքով, գանգուր մազերով անծանոթ երիտասարդը, որը, ինչպես հետագայում պարզվել է՝ Արամ Բարեղամյանն է եղել, ձեռքի ձողով հարվածել է իր գլխի ճակատային մասին: Հարվածից ինքը կորցրել է գիտակցությունը: Այնուհետև, ավագ լեյտենանտ Միհրան Միրեկանյանը ուշքի է բերել իրեն: Դրանից հետո շտապօգնության ավտոմեքենայով տեղափոխվել է «Նաիրի» բժշկական կենտրոն, որտեղ բուժօգնություն է ստացել: Հարվածի հետևանքով իր առողջությանը պատճառվել է ծանր վնաս, և մոտ մեկ ամիս ինքն աշխատանքի չի ներկայացել: Իրեն ձողով հարվածող Արամ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 71-73, 90, 101, 167, հատոր 2-րդ, թերթեր 35-37:

Բարեղամյանին անմիջապես ճանաչել է ինչպես լուսանկարով, այնպես էլ անձին ճանաչման ներկայացնելիս: Տուժողն իր ցուցմունքները պնդել է նաև Ա.Բարեղամյանի հետ առերես հարցաքննության ժամանակ¹:

6.3. Վկա Միհրան Միրեկանյանը նախաքննության և դատաքննության ընթացքում ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ աշխատում է ոստիկանության Մալաթիայի բաժնում՝ որպես տեղամասային տեսուչ: Նույն բաժնում՝ որպես բաժնի պետի տեղակալ աշխատում է նաև Գարեգին Քամայանը: 2008 թվականի մարտի 1-ին, ժամը 6-ի սահմաններում, ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի հրամանով ամբողջ անձնակազմը մեկնել է Ազատության հրապարակ, որտեղ կազմել են շրթա և բացել միջանցք՝ դեպի Հյուսիսային պողոտա: Այնուհետև, բարձրախոսներով հայտարարվել է, որ հրապարակում գտնվող քաղաքացիները կարող են դուրս գալ հրապարակից և չդիմադրեն ոստիկանության աշխատակիցներին ու, քանի որ նրանց հրապարակից դուրս գալու համար ստեղծվել է միջանցք, վերջիններս հանգիստ դուրս են եկել: Այդ ամենն արվել է առանց ուժ գործադրելու, սակայն որոշ անձինք սկսել են դիմադրել և առաջացել է քաշքշուկ: Որոշ ժամանակ անց նկատել է, որ իր թիկունքում կանգնածներից մեկն ընկել է: Շրջվել ու տեսել է, որ ընկնողն իրենց բաժնի պետի տեղակալ Գ.Քամայանն է: Տեսել է նաև փախչող՝ միջին հասակի մի տղամարդու: Ինքը մոտեցել է Գ.Քամայանին, գետնից վերցրել է «Ջերմուկի» շիշը, բացել է այն և լվացել կիսազիտակից վիճակում գտնվող Գ.Քամայանի արյունոտ դեմքը: Այնուհետև օգնել է նրան և «Օպերա ակումբի» կողմով տարել է Սայաթ-Նովա փողոց, որտեղ նստեցրել է պատահական տաքսի ավտոմեքենա և վերադարձել ծառայության վայր:

Վկան հայտնել է նաև, որ Գ.Քամայանին հարվածելու պահը չի տեսել, չի տեսել նաև փախչող տղամարդու դեմքը, համոզված չէ, որ հենց Ա.Բարեղամյանն է հասցրել հարվածը և, որ դեպքից հետո մոտ մեկ ամիս Գ.Քամայանը աշխատանքի չի ներկայացել: Վկան իր ցուցմունքները պնդել է նաև Ա.Բարեղամյանի հետ առերես հարցաքննության ժամանակ²:

6.4. Վկա Արսեն Բեյբությանը դատաքննության ընթացքում ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ աշխատում է «Արմենիա» բժշկական կենտրոնում՝ որպես նյարդաբան-վիրաբույժ: Արամ Բարեղամյանը հիվանդանոցի ընդունարան է տեղափոխվել 2008 թվականի մարտի 1-ին: Նրա գլխի ձախ գազաթային շրջանում առկա է եղել արյունահոսող՝ մոտ 4սմ երկարությամբ վերք: Ընդունարանում կատարվել է վերքի մշակում, որպեսզի դադարեցվի արյունահոսությունը, այնուհետև

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 108-110, 159, 160-161, հատոր 2-րդ, թերթեր 38-39:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 119-120, հատոր 2-րդ, թերթեր 40-41:

հիվանդը ենթարկվել է ռենտգենաբանական հետազոտության և նրա մոտ կոտրվածքներ չեն հայտնաբերվել: Հետագայում հիվանդը տեղափոխվել է նյարդավիրաբուժական բաժանմունք: Հաջորդ օրն անհրաժեշտ հետազոտություններից հետո պարզվել է, որ Ա.Բարեղամյանի մոտ առկա է գլխուղեղի ցնցում և ճակատային շրջանում սալջարդ վերք, որի կապացույթամբ վերջինիս նկատմամբ բուժում է նշանակվել: Ա.Բարեղամյանը հիվանդանոցում է գտնվել մինչև 2008 թվականի մարտի 7-ը, որից հետո ինքնակամ հրաժարվել է հետագա բուժումը շարունակելուց և ցանկություն է հայտնել դուրս գրվել հիվանդանոցից: Նկատի ունենալով, որ Ա.Բարեղամյանի առողջական վիճակը թույլ է տվել բուժումը շարունակել արտահիվանդանոցային պայմաններում, վերջինս դուրս է գրվել հիվանդանոցից¹:

6.5. ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի փորձագետի թիվ 348 եզրակացության համաձայն՝ Գ.Քամայանի մարմնական վնասվածքն, ըստ բժշկական փաստաթղթերի տվյալների՝ ճակատոսկրի կոտրվածքի ձևով, հասցվել է բուր, կոշտ առարկայով, հնարավոր է նշված ժամկետում, և պատճառել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող²:

6.6. Անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու մասին 2008 թվականի մարտի 17-ի արձանագրության համաձայն՝ տուժող Գարեգին Քամայանը որպես իրեն մարմնական վնասվածք պատճառողի ճանաչել է թիվ 3 լուսանկարում պատկերված անձին՝ Արամ Բարեղամյանին³:

6.7. Անձին ճանաչման ներկայացնելու վերաբերյալ 2008 թվականի ապրիլի 21-ի արձանագրության համաձայն՝ տուժող Գարեգին Քամայանը որպես իրեն մարմնական վնասվածք պատճառողի ճանաչել է ձախից 3-րդը կանգնած տղամարդուն, որը հանդիսացել է Արամ Բարեղամյանը⁴:

7. Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Ա.Բարեղամյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ, արձանագրել է. «(...) Ինչ վերաբերում է Արամ Բարեղամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքին, ապա դատարանն ապացուցված է համարում ամբաստանյալի կողմից սույն թվականի մարտի 1-ին, ժամը 07.00-ի սահմաններում՝ Ազգայության հրապարակում Գարեգին Քամայանի՝ որպես իշխանության ներկայացուցչի, նկատմամբ կյանքի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 72-73:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 121-122:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 118:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 158:

համար վրանգավոր բռնություն գործադրելը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, որն արտահայտվել է Գ.Քամայանի առողջությանը դիտարկությամբ ծանր վնաս պատճառելով:

Արամ Բարեղամյանի կատարած արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասին և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին և ամբաստանյալը պետք է պարիժ կրի կատարած հանցագործության համար (...)¹:

8. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնելով անփոփոխ, իր դատական ակտում նշել է, որ Արամ Բարեղամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը հաստատված է գործի քննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված բավարար, հավաստի ու արժանահավատ հետևյալ ապացույցներով. մասնավորապես՝ տուժող Գարեգին Քամայանի ցուցմունքներով, որոնք նա պնդել է նաև ամբաստանյալ Ա.Բարեղամյանի հետ առերես հարցաքննվելիս, վկա Միհրան Սիրելյանյանի ցուցմունքներով, ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի փորձագետի թիվ 348 եզրակացությամբ, անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու վերաբերյալ 2008 թվականի մարտի 17-ի արձանագրությամբ, անձին ճանաչման ներկայացնելու վերաբերյալ 2008 թվականի ապրիլի 21-ի արձանագրությամբ:

8.1. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնելով անփոփոխ, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Դատաքննությամբ և գործով ձեռք բերված ապացույցներով վերաքննիչ դատարանը հաստատել է համարում, որ Արամ Բարեղամյանը կատարել է հանցանքներ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Ամբաստանյալ Արամ Բարեղամյանի կատարած հանցավոր արարքները որակված են ճիշտ, կատարած հանցանքների համար նա ենթակա է պարժի և պետք է կրի այն:

Այսպիսով, վերաքննիչ դատարանը ստուգելով գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, հանգում է այն հետևության, որ Երևան քաղաքի քրեական դատարանը դատական քննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների պարզաձ գնահատմամբ հանգել է ճիշտ եզրակացության:

¹ Տես քրեական գործ , հատոր 2-րդ, թերթեր 108-109:

Սույն գործի քննության և լուծման ընթացքում ապահովվել է ամբաստանյալ Արամ Բարեղամյանի նյութական և դատավարական իրավունքների պաշտպանությունը:

Արամ Բարեղամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Երևան քաղաքի քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 14-ի դատավճիռը օրինական է, հիմնավորված և պարճառաբանված, այն բեկանելու հիմքեր չկան:

*Քրեական գործում բացակայում են ամբաստանյալ Արամ Բարեղամյանի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացնելու հիմքերը (...)*¹:

9. 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործով՝ 2018 թվականի օգոստոսի 11-ին և հոկտեմբերի 8-ին տված ցուցմունքներում Արամ Բարեղամյանն ըստ էության պնդել է 2008 թվականին նախաքննության և դատաքննության ընթացքում տրված ցուցմունքները, նշելով, որ դատարանում բազմիցս հայտնել է, որ Գ.Քամայանը ստում է, նրան չի հարվածել և մարմնական վնասվածքներ չի պատճառել, իր մոտ փայտե մահակ կամ նմանատիպ առարկա չի եղել, այդ անձի հետ չի առնչվել²:

9.1. 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործով՝ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի նախկին տեղակալ Գարեգին Քամայանը 2018 թվականի օգոստոսի 22-ին, օգոստոսի 23-ին, սեպտեմբերի 12-ին և հոկտեմբերի 5-ին ըստ էության ցուցմունքներ է տվել այն մասին, որ 2008 թվականի մարտի 1-ի առավոտյան՝ 6:00-ից 6:30-ի սահմաններում, «Ազատության» հրապարակում գտնվող անձանց տարհանելիս ցուցարարներից մեկը ձողով հարվածել է իր գլխի ճակատային հատվածին, ինչի հետևանքով ստացել է մարմնական վնասվածք և վայր ընկել: Հարված ստանալու պահին մեկ ակնթարթ տեսել է իրեն հարվածող անձին: Դրանից հետո՝ մոտ 10 օր անց, հրավիրվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որտեղ ցուցմունքով մոտավոր նկարագրել է իրեն հարվածած անձի արտաքին տվյալները: Այնուհետև իր մասնակցությամբ կատարվել է լուսանկարով ճանաչում, ինչպես նաև անձի ճանաչում, որոնց ընթացքում իրեն հարվածող անձին նմանեցրել է ճանաչման ներկայացված Արամ Բարեղամյանին և հայտնել է, որ հենց վերջինս է եղել իրեն հարվածողը:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 101-107:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 66-70, 74-79:

Հայտնել է նաև, որ այն ժամանակ, ընդամենը նմանեցնելու պարագայում, չպետք է հաստատապես մատնանշեր Արամ Բարեղամյանին՝ որպես իրեն հարվածող և մարմնական վնասվածք պատճառած անձի, քանի որ դրանում համոզված չէ: Գ.Քամայանը նշել է, որ դա հետևանք է դեպքի արդյունքում ուղեղի ցնցում ստանալու¹:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը փաստել է, որ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Բողոքաբերը վկայակոչելով Վճարելի դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք որոշումներ՝ նշել է, որ Արամ Բարեղամյանի վերաբերյալ կայացված դատական ակտերում իբրև մեղադրական բնույթ կրող ապացույցները չէին կարող բավարար լինել՝ «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշով մեղսագրվող հանցագործության կատարման մեջ Արամ Բարեղամյանի մեղավորությունը հաստատված համարելու համար:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Արամ Բարեղամյանի առնչությունն իրեն մեղսագրվող հանցագործությանը, բացի ոստիկանության ծառայող հանդիսացող տուժողի կողմից հայտնած, այն էլ ոչ հստակ և ոչ միանշանակ բովանդակությամբ տեղեկություններից, այլ փաստական տվյալով չի հաստատվում:

Բողոքաբերը նշել է նաև, որ ոստիկանության ծառայող Գարեգին Քամայանի ցուցմունքի արժանահավատությունը կասկածի տակ դնող էական հանգամանքներ են հանդիսանում նաև Արամ Բարեղամյանի՝ ի սկզբանե ապօրինի հանրահավաքին մասնակցելու կասկածանքով բերման ենթարկվելը, վերջինիս ձերբակալվելուց, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի և 225¹-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված հանցանքներ կատարելու համար որպես մեղադրյալ ներգրավվելուց միայն օրեր անց տուժողի կողմից ճանաչվելը՝ այն էլ ոչ հստակ, առավել ևս որ վերջինս 2018 թվականի օգոստոսի 23-ի և հետագա ցուցմունքներով միանշանակ կասկածի տակ է դրել իր նախկին ցուցմունքների արժանահավատությունը:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 71-73, 80-82, 83-85, 86-89:

Բողոքաբերը նշել է նաև, որ Գ.Քամայանը 2018 թվականի օգոստոսի 22-ին, օգոստոսի 23-ին, սեպտեմբերի 12-ին և հոկտեմբերի 5-ին տրված ցուցմունքներում նշել է, որ նախաքննության և դատաքննության ընթացքում տված ցուցմունքները հետևանք են դեպքի արդյունքում ուղեղի ցնցում ստանալու և պնդել է, որ համոզված չէ Արամ Բարեղամյանի կողմից իրեն հարվածելու և մարմնական վնասվածք պատճառելու հարցում:

Դրանից բացի, ըստ բողոքաբերի՝ 2008 թվականի մարտի 10-ին մեղադրյալ Արամ Բարեղամյանին առաջադրված մեղադրանքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված արարքից տուժած անձի վերաբերյալ կոնկրետ նշում, ավելին՝ դրանում որպես բռնության ենթարկված և մարմնական վնասվածք ստացած անձինք են նշված ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության և ԿՀԴՊ գլխավոր վարչության ծառայողները:

Նման պայմաններում, բողոքաբերի պնդմամբ, դատարանները կոպտորեն խախտել են ապացույցների գնահատման կարգը՝ դրանց բավարարության տեսանկյունից, ինչը հանգեցրել է դատական քննության ընթացքում թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումների, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

11. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Արամ Բարեղամյանի վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանել և փոփոխել՝ ճանաչելով ու հռչակելով նրա անմեղությունը մեղսագրված արարքներում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Արամ Բարեղամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում արդյո՞ք թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնք խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը և հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

13. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կերի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը փոխյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ¹:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «հիմնարար խախտում» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից գուտ գործով ապացույցների պարզ վերազնադատումը չէր կարող

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության Բացատրական զեկույցի 31-րդ կետում ընգծված է, որ «4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հոգուր դատապարտված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատապարտյալի»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախևառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «ազդեն գործի ելքի վրա»՝ կամ հոգուտ անձի, կամ հակառակը¹:

13.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիթ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ն]ույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

13.2. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատարարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատարարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)¹:

13.3. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ թիվ ՍԴՈ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարճատահետևանքային կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկարումը արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից Գուծած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճատված վնասը հատուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեգրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսենացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մանավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել է դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը սրացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»²:

14. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիր ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

14.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ

¹ Տե՛ս Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-1431 որոշման 4.3-րդ կետը:

Հայաստանի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռում¹ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ:** Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ **արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ**²,

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ **դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»**³,

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին⁴,

¹ Տե՛ս *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետեր, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետեր:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետեր:

⁴ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետ, *Popov v. Russia*

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն¹,

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, **միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին:** Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում:** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած **այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները²:**

գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետ, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետ:

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topić v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետ:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ

15. Սույն գործի նյութերից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Ա.Բարեղամյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, նշել է, որ ապացուցված է համարել ամբաստանյալի կողմից 2008 թվականի մարտի 1-ին, ժամը 7-ի սահմաններում՝ Ազատության հրապարակում Գարեգին Քամայանի՝ որպես իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, որն արտահայտվել է Գ.Քամայանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելով¹,

- Առաջին ատյանի դատարանը, 2008 թվականի հուլիսի 14-ի դատավճռով Ա.Բարեղամյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործությունների համար, որպես արարքի կատարումը հիմնավորող ապացույցներ հիմք է ընդունել տուժող՝ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ Գ.Քամայանի, վկա՝ նույն բաժանմունքի պրոֆիլակտիկ բաժանմունքի տեղամասային տեսուչ Մ.Սիրեկանյանի ցուցմունքները, ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործական կենտրոնի փորձագետի թիվ 348 եզրակացությունը, անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու մասին 2008 թվականի մարտի 17-ի և անձին ճանաչման ներկայացնելու վերաբերյալ 2008 թվականի ապրիլի 21-ի արձանագրությունները²,

- Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնելով անփոփոխ, եզրահանգել է, որ Արամ Բարեղամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը հաստատված է գործի քննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված բավարար, հավաստի ու արժանահավատ հետևյալ ապացույցներով. մասնավորապես՝ տուժող Գ.Քամայանի ցուցմունքներով, որոնք նա պնդել է նաև ամբաստանյալ Ա.Բարեղամյանի հետ առերես հարցաքննվելիս, վկա Միհրան Սիրեկանյանի ցուցմունքներով, ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործական կենտրոնի փորձագետի թիվ 348 եզրակացությամբ, անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու

76201/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6.2-րդ-6.7-րդ կետերը:

վերաբերյալ 2008 թվականի մարտի 17-ի արձանագրությամբ, անձին ճանաչման ներկայացնելու վերաբերյալ 2008 թվականի ապրիլի 21-ի արձանագրությամբ¹:

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-14.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, Մուշեղ Սաղաթեյան ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանը նախևառաջ անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ստորադաս դատարանները, Ա.Բարեղամյանի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվել են ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա: Ընդ որում, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ստորադաս դատարանները Ա.Բարեղամյանի մեղքը հիմնավորող ապացուցողական գամբյուղում ծանրակշիռ դեր են հատկացրել ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ այն դեպքում, երբ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ստորադաս դատարանները հիմնավորել են Ա.Բարեղամյանի մասնակցությունը նրան վերագրված արարքների կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակից՝ տուժող՝ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ Գարեգին Քամայանի ցուցմունքներն են: Ինչ վերաբերում է վկա՝ նույն բաժանմունքի պրոֆիլակտիկ բաժանմունքի տեղամասային տեսուչ Մ.Սիրեկանյանի ցուցմունքներին, ապա դրանք, չնայած դրվել են դատական ակտի հիմքում, սակայն ուղղակիորեն չեն հիմնավորել Ա.Բարեղամյանի մեղքը նրան մեղսագրված արարքում, քանի որ թեև վկան գտնվել է դեպքի վայրում, սակայն ամբաստանյալի կողմից տուժողին հարված հասցնելուն ականատես չի եղել²:

17. Վերոգրյալի համատեքստում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով պատշաճ վերլուծության չի ենթարկել նաև այն հարցը, թե ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները՝ Ա.Բարեղամյանին բերման և քրեական հետապնդման ենթարկելուն նախորդող և հաջորդող իրադարձությունների համատեքստում, արդյո՞ք կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության առումով, ինչն ուներ առանցքային նշանակություն՝ դրանց արձանահավատությունը, ինչպես նաև այլ փաստական տվյալների հետ

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6.3.-րդ կետը:

համակցության մեջ գործի լուծման համար բավարարությունը որոշելու տեսանկյունից:

Այսպես, դատական ակտերով հաստատված փաստական հանգամանքների և գործի նյութերի համադրված վերլուծությունից հետևում է,

- Ա.Բարեղամյանը մասնակցել է Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքին, որտեղ 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 7-ի սահմաններում տեղի է ունեցել իրեն մեղսագրվող դեպքը¹,

- դեպքից էական ժամանակահատված հետո՝ **2008 թվականի մարտի 7-ին** Ա.Բարեղամյանը ձերբակալվել է²,

- **2008 թվականի մարտի 10-ին** Գ.Քամայանը ճանաչվել է տուժող³,

- նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 10-ի, ապրիլի 21-ի, ապրիլի 25-ի որոշումներով Ա.Բարեղամյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 225.1-րդ հոդվածի 1-ին մասով, ինչն առավելապես հիմնավորվել է վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակցից ոստիկանների ցուցմունքներով⁴,

-**2008 թվականի մարտի 17-ին** լուսանկարով ճանաչման, իսկ **ապրիլի 21-ին**՝ անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողությունների կատարման ընթացքում տուժող ոստիկանը ճանաչել է Ա.Բարեղամյանին՝ որպես իրեն մարմնական վնասվածք պատճառած անձի⁵,

- տուժող Գ.Քամայանը **2018 թվականին** տրված իր ցուցմունքներով նշել է, որ նախկինում, ընդամենը նմանեցնելու պարագայում, չպետք է հաստատապես մատնանշեր Արամ Բարեղամյանին՝ որպես իրեն հարվածող անձի, կարծում է, որ դա հետևանք է դեպքի արդյունքում ուղեղի ցնցում ստանալու՝ պնդելով, որ համոզված չէ Արամ Բարեղամյանի կողմից իրեն հարվածելու և մարմնական վնասվածք պատճառելու հարցում⁶:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դեպքի վերոնշյալ ժամանակագրությունը՝ հանրահավաքին Ա.Բարեղամյանի մասնակցելու պահից մինչև յոթ օր անց նրա ձերբակալվելը, դրանից միայն երեք օր անց Գ.Քամայանին տուժող ճանաչելը, Ա.Բարեղամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված արարքի մեղսագրումը մինչև տուժողի կողմից նրան ճանաչելը, առավելապես վիճարկվող

¹ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

² Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

³ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը, նաև սույն որոշման 6-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 6.6-րդ և 6.7-րդ կետերը:

⁶ Տե՛ս սույն որոշման 11.1-րդ կետը:

իրադարձությունների անմիջական մասնակից՝ ոստիկանության ծառայողների ցուցմունքների հիման վրա քրեական հետապնդում իրականացնելը, իսկ այնուհետև՝ տուժող ճանաչված ոստիկանության ծառայող Գ.Բամայանի կողմից նախկինում տրված ցուցմունքներին որոշակիորեն հակասող ցուցմունքներ տալը, *Մուշեղ Սաղաթեյանս ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, առերևույթ ստվերում են գործով ձեռքբերված ապացուցողական գամբյուղի լիարժեքությունն ու վկայում Ա.Բարեղամյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքների խախտման մասին:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

18. Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով թույլ տրված խախտումները վերացնելու ամենապատշաճ միջոցը, ըստ Վճռաբեկ դատարանի, վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է: Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա Արամ Բաբկենի Բարեղամյանի վերաբերյալ Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 14-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով բեկանելու և գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, *Մուշեղ Սաղաթեյանս ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում և սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է գնահատման ենթարկի գործով ձեռքբերված ապացույցների արժանահավատությունը, այդ թվում՝ քննարկման առարկա դարձնելով տուժողի ցուցմունքների միջև առկա որոշակի հակասությունները, ըստ այդմ՝ անդրադառնալով նաև սույն որոշման 10-րդ կետում նշված բողոքաբերի

վիաստարկներին և որոշելով գործի լուծման համար Արամ Բարեղամյանի մեղադրանքի հիմքում դրված ապացույցների բավարարությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Արամ Բարեղամյանի վերաբերյալ Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 14-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով բեկանել ու գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0067/01/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դրնբաց դատական նիստում, քննության առնելով Դավիթ Ղևոնդի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով և Դավիթ Ղևոնդի Մաթևոսյանի ներկայացուցիչ՝ Մ.Շուշանյանի՝ նոր հանգամանքի հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով: Նախաքննության մարմնի՝ նույն

օրվա մեկ այլ որոշմամբ, թիվ 62202508 քրեական գործը միացվել է 62202608 քրեական գործին:

Նույն օրը Դավիթ Ղևոնդի Մաթևոսյանը ձերբակալվել է:

2008 թվականի մարտի 4-ին Դ.Մաթևոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 2-րդ մասով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի մարտի 4-ի որոշմամբ Դ.Մաթևոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2008 թվականի մարտի 27-ին որոշում է կայացվել Դավիթ Ղևոնդի Մաթևոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 28-ի որոշմամբ թիվ 62202608 քրեական գործից անջատվել են Դավիթ Ղևոնդի Մաթևոսյանի վերաբերյալ գործի նյութերը:

2008 թվականի ապրիլի 8-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 16-ի դատավճռով Դ.Մաթևոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. Դ.Մաթևոսյանի և պաշտպան Վ. Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2008 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 16-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերոնշյալ որոշման դեմ հավատարմագրված փաստաբանի միջոցով ներկայացված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունվարի 22-ի որոշմամբ վերադարձվել է:

5. Դ.Մաթևոսյանի թիվ 61730/08 գանգատի հիման վրա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2019 թվականի հոկտեմբերի 10-ին վճիռ է կայացրել, որով ճանաչել է Դ.Մաթևոսյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի

(այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետով և 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման փաստը:

6. 2019 թվականի հոկտեմբերի 29-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը հիմնարար խախտման հիմքով բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

6.1. 2020 թվականի հունվարի 10-ին Դ.Մաթևոսյանի պաշտպան Մ.Շուշանյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 16-ի որոշմամբ հարուցվել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ և բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Նախաքննության մարմնի կողմից Դավիթ Մաթևոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Ե]ս մշտապես մասնակցելով ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի և նրա համախոհների կողմից 2008 թվականի փետրվարի 20-ից օրենքով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպված և անընդմեջ իրականացվող, մայրաքաղաքի կենսագործունեությունը, ճանապարհափարանապորտային երթևեկությունը, պետական հիմնարկների բնականոն գործունեությունը, ազգաբնակչության հանգիստն ու անդորրը խանգարող զանգվածային հրապարակային միջոցառումներին, երթերին, շուրջօրյա հանրահավաքներին և նստացույցերին՝ 2008 թվականի մարտի 01-ին ժամը 07:00-ի սահմաններում, երբ իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխարակիցները «Ազատության» հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռնել սրուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկարվության խլությունը և հերթական անգամ նախազգուշացրել օրենքի խախտմամբ կազմակերպված և իրականացվող միջոցառումը դադարեցնելու մասին, չենթարկվելով իշխանության ներկայացուցիչների՝ ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնի օպերատիվ հետախուզական բաժանմունքի աշխարակիցների օրինական պահանջներին, հրելու և քաշքշելու եղանակով վերջիններիս նկատմամբ գործադրել է կյանքի կամ

առողջության համար ոչ վրանգավոր բռնություն՝ կապված նրանց ծառայողական պարտականությունները կատարելու հետ (...)¹:

7.1. Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում, Դ.Մաթևոսյանը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Արարատ Մահուեսյանին, Հովհաննես Մարությանին, Արմեն Օհանյանին, ինչը դատարանի կողմից մերժվել է²:

7.2. Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Ջեյթունի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվագորներ Հարություն Քարտաշյանի և Եղիյա Կարախանյանի ցուցմունքները, Դ.Մաթևոսյանի ցուցմունքը, ինչպես նաև անձին ոստիկանության բաժին բերման ենթարկելու, անձնական զննություն կատարելու, անձի ձերբակալման և առերես հարցաքննությունների մասին կազմված արձանագրություններն ու դիմադրություն ցույց տալու վերաբերյալ Հ.Քարտաշյանի և Ե.Կարախանյանի զեկուցագրերը³:

8. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, 2008 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ փաստել է. «(...) Վերաքննիչ դատարանն ապացուցված է համարում, որ Դավիթ Մաթևոսյանն իշխանության ներկայացուցիչ հանդիսացող, ոստիկանության աշխատակիցներ Հարություն Քարտաշյանի և Եղիյա Կարախանյանի նկատմամբ կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բռնություն է գործադրել՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ: Հետևաբար Դավիթ Մաթևոսյանի արարքին ինչպես նախաքննության մարմնի, այնպես էլ ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրվել է քրեահրավական ճիշտ գնահատական:

(...) Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի այն պարճառարանությանը, որ դատավճիռը կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 86-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետերի խախտմամբ, դատարանն իր դատավճռի հիմքում չէր կարող դնել սույն գործով դատավարական գործողություններ իրականացրած օպերիվագորներ Հ.Քարտաշյանի և Ե.Կարախանյանի ցուցմունքները, ապա դա հիմնավոր չէ, քանի որ փյույվ դեպքում ոստիկանության աշխատակիցները սույն քրեական գործի հետ կապված որևէ դատավարական լիազորություններ չեն իրականացրել:

Քննարկելով պաշտպանության կողմի միջնորդությունը՝ դեպքին ակնասարես վկաներ Հովհաննես Մարությանին և Արմեն Օհանյանին

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 169-173:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 62-66:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 104-108:

հարցաքննելու վերաբերյալ, Վերաքննիչ դատարանը գտավ, որ այն ենթակա չէ բավարարման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով, նկատի ունենալով, որ նշված կողմի բերած հիմնավորումները բավարար չեն հանգելու հետևության, որ ներկայացված միջնորդությունն Առաջին աստիճանի դատարանի կողմից մերժվել է անհիմն: Բացի այդ պաշտպանության կողմի պնդումը, թե անհիմն կերպով չեն հարցաքննվել դեպքի օրը Գ.Մաթևոսյանի հետ եղած անձինք՝ Հ.Մարտիոսյանը և Ա.Օհանյանը, հիմնավոր չէ, քանի որ գործի նյութերից երևում է, որ նշված անձինք, նախքան ոստիկանության աշխատակիցների Դավիթ Մաթևոսյանին մոտենալը, այլ ոստիկանների կողմից հրավիրվել են պարզաբանումների և հեռացել են նրանց ուղեկցությամբ, այսինքն Հ.Մարտիոսյանը և Ա.Օհանյանը կատարված դեպքին ներկա չեն գտնվել:

Այս պայմաններում բողոքի հետևություններն այն մասին, որ մեղադրանքը կառուցվել է միայն մեղադրանքի կողմի վկաներ հանդիսացող անձանց ցուցմունքների հիման վրա և խախտվել են արդար դատաքննության, կողմերի հավասարության և խորականության արգելման սկզբունքները, հիմնադրուկ է, քանի որ գործի քննության ընթացքում այդպիսի հանգամանքներ չեն հիմնավորվել (...):»¹:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբեր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 20-րդ կետը, 270-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Ճաղարյանի և այլոց* վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, փաստել է, որ Գ.Մաթևոսյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպումից չի երևում, թե մեղսագրված արարքն ինչու է արտահայտվել, դրանում նկարագրված չէ, թե ո՞վ կամ ովքե՞ր են իշխանության ներկայացուցիչ հանդիսացել, որի պարագայում անհիմն է խոսել ծառայողական պարտականությունների կատարման մասին:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ վերոգրյալի պայմաններում, Առաջին աստիճանի դատարանը դատավճռում հաստատված է համարել Գ.Մաթևոսյանի կողմից ոստիկանության աշխատակիցներ Հ.Քարտաշյանի և Ե.Կարախանյանի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքները, որոնք ուղղակի բացակայել են մեղադրանքի ձևակերպումից, իսկ վերջիններս սույն քրեական գործով տուժող չեն ճանաչվել, ինչպիսի մոտեցումն ընդունելի է համարվել նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 190-195:

Արդյունքում, բողոքի հեղինակը գտել է, որ Դ.Մաթևոսյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը:

Բողոքաբերը, վկայակոչելով *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռով արձանագրված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասը, 67-րդ հոդվածը, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածը՝ նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են ամբաստանյալի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով ամրագրված պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը, որը դրսևորվել է նրանում, որ դատաքննության ընթացքում պաշտպանության կողմը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ հրավիրել և որպես վկա հարցաքննել Հովհաննես Մարությանին ու Արմեն Օհանյանին, ովքեր ականատես են եղել նկարագրված իրադարձությանը, ինչն էլ Առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է, իսկ մեղադրական դատավճռի հիմքում դրվել են բացառապես ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները:

9.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Դ.Մաթևոսյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 16-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 24-ի որոշումը՝ ճանաչելով և հռչակելով Դավիթ Մաթևոսյանի անմեղությունը մեղսագրված արարքում:

10. Բողոքաբեր՝ Դ.Մաթևոսյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանը փաստել է, որ Եվրոպական դատարանի՝ *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* վճռով ճանաչվել է Դ.Մաթևոսյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման փաստը, որոնք ուղղակիորեն առնչվում են թե՛ փաստերի, և թե՛ իրավունքի հարցերի մասին Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նյութական և դատավարական իրավունքների կոպիտ և էական սխալներին, որպիսիք և հանգեցրել են Դ.Մաթևոսյանի վերոնշյալ իրավունքների խախտումներին:

Բողոքի հեղինակը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի*, *Ավերիսյանն ընդդեմ Հայաստանի* և *Ասաբրյանն ընդդեմ Հայաստանի* գործերով կայացված վճիռները, նշել է, որ գործերի վերաբացումը (վերանայումը) խախտված իրավունքի վերականգնման ամենապատշաճ միջոցն է, եթե իրականացվող վերաբացված (վերսկսված)

դատավարությանը կամ գործի վերաքննությանը ապահովված լինեն արդար դատաքննության երաշխիքները:

10.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հետինակը խնդրել է հարուցել նոր հանգամանքի հիմքով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 24-ի որոշման վերանայման վարույթ և բողոքն ընդունել վարույթ, բեկանել վերը նշված որոշումը և ճանաչել ու հռչակել Դ.Մաթևոսյանի անմեղությունը՝ հանցագործի բացակայության հիմքով:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործով առկա են Դավիթ Մաթևոսյանի վերաբերյալ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բացառիկ վերանայման հիմքեր:

12. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նահորդ կերի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նահորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը:

Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ¹:

Մինևույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «*հիմնարար խախտում*» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից զուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չի կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել, և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության Բացատրական գեկոյցի 31-րդ կետում ընգծված է, որ «*4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հոգուր դատապարտված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատապարտյալի*»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախևառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «*ազդեն գործի ելքի վրա*»՝ կամ հոգուտ անձի, կամ հակառակը²:

12.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարփոճ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում*»:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ե]լույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

12.2. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտնող դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Եման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...):¹:

12.3. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՄԴՈ-1431 որոշմամբ՝ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարզապես անհերքելի կապի մեջ գտնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկատմամբ արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից փրկած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճառված վնասը հատուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է

¹ Տե՛ս Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

արժեզրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսենացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը սրացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»¹:

13. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրեղծված անկասի ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները (...):»:

13.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2019 թվականի հոկտեմբերի 10-ին կայացված վճռում², արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ**: Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ **արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ**,

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի *Matevosyan v. Armenia* գործով վճիռը, գանգատ թիվ 61730/08:

անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ինքնություն» նշանակությամբ: Ապացույցները ձեռք բերելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի իրավահավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ **դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու համապատասխան հնարավորություն, որը նրան չի դնի նրա համար էականորեն վատ իրավիճակում՝ համեմատած մյուս կողմի հետ»**,

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, հնարավոր է լինեն բացառիկ հանգամանքներ, որոնք կարող են Մարդու իրավունքների եվրոպական դատարանին ստիպել եզրակացնել, որ դա (վկաներ հրավիրելը) չանելն անհամատեղելի է եղել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի առարկային և հնարավոր է, որ ամրապնդի պաշտպանական կողմի դիրքերը կամ նույնիսկ հանգեցնի արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է ներկայացնեն համապատասխան հիմնավորումներ¹,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում**: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած **այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ**

¹ St'ն, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelian v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, 202-204-րդ կետեր, *Murtazaliyeva v. Russia* գործով 2018 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 36658/05, 139-159-րդ կետեր:

դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեն յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները¹:

13.2. Վերոգրյալ դրույթները կիրառելով քննարկվող գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է. «(...) Ըստ երևույթին, դիմումատուի նկարմամբ հարուցված քրեական գործով վարույթն իրականացվել է նույն կերպ: Դիմումատուի նկարմամբ հարուցված քրեական գործը, որին, ինչպես [Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի] գործով դիմումատուին, մեղադրանք էր առաջադրվել Ազատության հրապարակում իր կողմից ենթադրաբար կատարված որոշ արարքների համար, ամբողջովին կառուցված էր ուրիշ կանոնների՝ վիճարկվող դեպքերին ակտիվորեն ներգրավված ծառայողների վկայությունների վրա, որոնց ցուցմունքները, ավելին, կարծես թե պարունակել են անհամապատասխանություններ, այդ թվում՝ դիմումատուի ձեռքակալման վայրի վերաբերյալ: Դիմումատուի՝ վկաներ կանչելու վերաբերյալ միջնորդությունը, որը բավարար կերպով հիմնավորված էր և ուղղակիորեն վերաբերում էր իրեն ներկայացված մեղադրանքներին, դատաքննությունն իրականացնող դատարանի կողմից մերժվել էր շատ հակիրճ և ոչ համոզիչ պարճատարանությամբ (...): Թեև վերաքննիչ դատարանը նույնաբովանդակ միջնորդությունը մերժելու իր եզրահանգումը պարճատարանել է նրանով, որ այն անձինք, որոնց դիմումատուն ցանկանում էր կանչել, վկա չէին գտնվել նրա ձեռքակալմանը. այն հիմնված էր ուրիշ կանոնների հենց այն ծառայողների ցուցմունքի վրա, որոնց ցուցմունքները դիմումատուն փորձում էր վիճարկել Կրիմիայի վկաներին կանչելու միջոցով (...): Հետևաբար Դատարանը համարում է, որ ներպետական դատարանները մեղադրանքների հիմքում ընկած այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, որոնք, ավելին, հիմնված են եղել հակասական ապացույցների վրա, չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու ուրիշ կանոնների մեղադրական ցուցմունքները, որոնք քրեական հետապնդման համար միակ վկաներն են եղել և ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում: Կարելի է ասել, որ դեպքերի վերաբերյալ ուրիշ կանոնների [ծառայողների] կողմից ներկայացված փաստերակն անվերապահորեն հաստատելը, դիմումատուի փաստարկներին պարզաձև կերպով չանդրադատումը և պաշտպանության

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76204/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

կողմի վկաներին քննելը մերժելը՝ առանց պարզաճ կերպով ուսումնասիրելու նրանց ցուցմունքների վերաբերելիությունը, հանգեցրել են պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակման, ինչը հակասում է արդար դատաքննության երաշխիքներին (...):

(...) Ինչ վերաբերում է դիմումատուի կողմից 2008 թվականի մարտի 27-ի իր հարցաքննության ժամանակ մեղքն ընդունելուն, այս Դատարանը նշում է, որ դիմումատուն ավելի ուշ՝ դատական վարույթի ընթացքում, հրաժարվել է այդ ցուցմունքից և իրեն անմեղ է ճանաչել: Դատարանը չի կարող ենթադրություններ անել այն պարճառների վերաբերյալ, թե ինչու է դիմումատուն ընդունել այն և ավելի ուշ հրաժարվել դրանից, սակայն նշում է, որ նա, անկասկած, պետք է շարունակեր օգրվել 6-րդ հոդվածի երաշխիքներից և ունենար իր գործը պաշտպանելու և անհրաժեշտության դեպքում, ինչպես փյալ գործով, իր դեմ ներկայացված ապացույցներն արդյունավետորեն վիճարկելու հնարավորություն՝ վկաներ կանչելու միջոցով:

(...) Վերոնշյալի հիման վրա Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուի նկարմամբ հարուցված քրեական գործով վարույթն ընդհանուր առմամբ իրականացվել է նրա՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատաքննության իրավունքի խախտմամբ (...):¹:

13.3. Բացի այդ, Եվրոպական դատարանը վերոնշյալ վճռով ճանաչել է նաև Դ.Մաթևոսյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման փաստը՝ արձանագրելով հետևյալը. «(...) Դատարանը վերահասարակում է, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածով պաշտպանվում է միայն «խաղաղ հավաքների» իրավունքը՝ հասկացություն, որը չի ներառում այն ցույցերը, որոնց կազմակերպիչները և մասնակիցներն ունեն բռնի մրադրություններ: Հետևաբար 11-րդ հոդվածի երաշխիքները կիրառվում են բոլոր հավաքների նկարմամբ՝ բացի այն հավաքներից, որոնց կազմակերպիչներն ու մասնակիցներն ունեն այդպիսի մրադրություններ, հրահրում են բռնություն կամ այլ կերպ մերժում են ժողովրդավարական հասարակության հիմնասյունները (...):

(...) Ինչ վերաբերում է Կատավարության այն պնդմանը, որ դիմումատուի դատապարտումը կապված չի եղել 11-րդ հոդվածով սահմանված նրա իրավունքների հետ, Դատարանը նշում է, որ թեև դիմումատուի դեմ ոստիկանության ծառայողների ցուցմունքները, անշուշտ, վերաբերում էին հիմնականում դիմումատուի ձերբակալման հանգամանքներին, այդ թվում՝ ենթադրյալ դիմադրությանը, որը նա ցույց

¹ Տե՛ս *Matevosyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 61730/08, կետեր 41-43:

էր տրվել ձերբակալման ընթացքում (...), դիմումատուին ներկայացված փաստացի մեղադրանքները և նրա հետագա դատապարտումը վերաբերել են նրա վարքագծին և արարքներին, որոնք նա ենթադրաբար կատարել էր Ազատության հրապարակում անցկացվող հավաքի ընթացքում, երբ իրականացրել է 11-րդ հոդվածով սահմանված իր իրավունքները, ինչպիսիք են հավաքը ցրելու ընթացքում անհնազանդություն հրահրելը և ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն գործադրելը (...):

(...) Հետևաբար Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուի նկատմամբ իրականացված քրեական հետապնդման և դատապարտման հետևանքով տեղի է ունեցել միջամտություն խաղաղ հավաքների ազատության նրա իրավունքին (...):»¹:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Դ.Մաթևոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, մշտապես մասնակցելով ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի և նրա համախոհների կողմից 2008 թվականի փետրվարի 20-ից օրենքով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպված և անընդմեջ իրականացվող, մայրաքաղաքի կենսագործունեությունը, ճանապարհատրանսպորտային երթևեկությունը, պետական հիմնարկների բնականոն գործունեությունը, ազգաբնակչության հանգիստն ու անդորրը խանգարող զանգվածային հրապարակային միջոցառումներին, երթերին, շուրջօրյա հանրահավաքներին և նստացույցերին՝ 2008 թվականի մարտի 01-ին՝ ժամը 07:00-ի սահմաններում, երբ իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցները «Ազատության» հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռնել ստուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը և հերթական անգամ նախազգուշացրել օրենքի խախտմամբ կազմակերպված և իրականացվող միջոցառումը դադարեցնելու մասին, չենթարկվելով իշխանության ներկայացուցիչների՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնի օպերատիվ հետախուզական բաժանմունքի աշխատակիցների օրինական պահանջներին, հրելու և քաշքշելու եղանակով վերջիններիս նկատմամբ գործադրել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն՝ կապված նրանց ծառայողական պարտականությունները կատարելու հետ²,

- Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում, Դ.Մաթևոսյանը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա

¹ Տե՛ս *Matevosyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 61730/08, կետեր 50, 52, 54:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

հարցաքննել Արարատ Մահուեսյանին, Հովհաննես Մարությանին, Արմեն Օհանյանին, ինչը դատարանի կողմից մերժվել է¹,

- Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ² ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվագորներ Հ.Քարտաշյանի և Ե.Կարախանյանի ցուցմունքները, Դ.Մաթևոսյանի ցուցմունքը, ինչպես նաև անձին ոստիկանության բաժին բերման ենթարկելու, անձնական գնություն կատարելու, անձի ձերբակալման և առերես հարցաքննությունների մասին կազմված արձանագրություններն ու դիմադրություն ցույց տալու վերաբերյալ վերը նշված ոստիկանության աշխատակիցների զեկուցագրերը²,

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, դատական ակտում նշել է, որ ապացուցված է համարում, որ Դ.Մաթևոսյանն իշխանության ներկայացուցիչ հանդիսացող՝ ոստիկանության աշխատակիցներ Հ.Քարտաշյանի և Ե.Կարախանյանի նկատմամբ կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ³:

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Դ.Մաթևոսյանի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովել *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները Դ.Մաթևոսյանի մեղքը հիմնավորող ապացուցողական զամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների վստահելիությունն ու արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով

¹ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7.2-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

ուղղակիորեն հիմնավորվել է Դ.Մաթևոսյանի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակից՝ ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվագորներ Հ.Քարտաշյանի և Ե.Կարախանյանի ցուցմունքներն են:

Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Դ.Մաթևոսյանին մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում: Ավելին, ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում, պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Այսինքն՝ բողոքաբերների փաստարկներն այն մասին, որ պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ, ընդունելի են Վճռաբեկ դատարանի համար, քանի որ պաշտպանական կողմին հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու մի շարք վկաների և ապացուցողական զանգվածում ներառելու նրանց ցուցմունքները, որոնք կասկածի տակ էին դնում ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն ու հիմնավորում դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանության կողմի առաջ քաշված վարկածը: Այլ կերպ, ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն անվերապահորեն ընդունելը՝ առանց պաշտպանական կողմին լիարժեք հնարավորություն ընձեռելու մրցակցային դատավարության պայմաններում արդյունավետորեն վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքների արժանահավատությունը, հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման¹:

Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը նոր հանգամանք է Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունվարի 22-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու համար:

¹ Տե՛ս *Matevosyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 61730/08, 41-րդ կետ, *mutatis mutandis*, *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

16. Միննույն ժամանակ, հիմնարար խախտման հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքի սահմաններում, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել այն փաստարկը, թե արդյո՞ք սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

16.1. ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝
«Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

(...)

3) իր պաշտպանությունը նախապարաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք (...):»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրտեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:*

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապարաստելու համար (...):»:

16.2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի դրույթն ընդգծում է առաջադրվող «մեղադրանքի» մասին մեղադրյալին ծանուցելուն հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Հանցագործության վերաբերյալ մանրամասն տվյալները կարևոր դեր են խաղում քրեական դատավարությունում այն իմաստով, որ դրանց հայտարարման պահից է անձը համարվում պաշտոնապես ծանուցված նրա դեմ առաջ քաշված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ

մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելու իրավունքը պետք է դիտել պաշտպանության նախապատրաստության իրավունքի լույսի ներքո¹:

16.3. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշման մեջ մեղադրանքի ձևակերպումը դիտարկելով որպես արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման միջոց՝ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) *ԴՆԻրանում, բացի հանցավորի մասին փյույններից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ: (...)*

Վճռաբեկ դատարանը գրնում է, որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կույս մեղադրյալին պատշաճ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դատավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայազրկման»²:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դ.Մաթևոսյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունը չի համապատասխանում «մեղադրանքի» վերաբերյալ միջազգային և ներպետական պահանջներին ու Վճռաբեկ դատարանի կողմից *Գ.Ճաղարյանի և մյուսների* գործով որոշմամբ սահմանված չափանիշներին: Մասնավորապես, մեղադրանքի ձևակերպումը պարունակում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի դիսպոզիցիայի նկարագրությունը: Մեղադրանքի մեջ նշված չեն այնպիսի փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն հիմնավորված կերպով եզրահանգելու, որ Դ.Մաթևոսյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Seliverstov v. Russia* գործով 2008 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգառ թիվ 19692/02, կետեր 16-17:

² Տե՛ս *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 21-րդ կետը:

մասին, այն է՝ մեղադրանքի բովանդակությունից հնարավոր չէ պատկերացում կազմել, թե ու՞մ նկատմամբ է գործադրվել բռնություն¹, ինչը նաև հնարավորություն չի տալիս պարզելու թե արդյո՞ք այն անձինք, ում նկատմամբ ենթադրաբար բռնություն է գործադրվել, հանդիսացել են իշխանության ներկայացուցիչներ և կատարել են ծառայողական պարտականություններ, ավելին՝ չի պարզվել թե ու՞մ և ինչպիսի՞ վնաս է պատճառվել, ու ինչպե՞ս է որոշվել, որ Դ.Մաթևոսյանի կողմից գործադրվել է հենց կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Դ.Մաթևոսյանին առաջադրված մեղադրանքում մանրամասնորեն և հստակ չեն նշվել արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական տվյալները՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրանքի այդպիսի անորոշ ձևակերպման պայմաններում, խախտվել է քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքը՝ տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքի մասին, որպիսի պայմաններում չի ապահովվել նաև անձի պաշտպանության իրավունքի իրացումը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է արդար դատաքննության իրավունքի հիմնարար խախտման:

18. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հոչակելու Դ.Մաթևոսյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և քրեական գործի վարույթը կարճելու՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

19. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ *Վահան Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԱՐԴ/0038/01/13 որոշման 14-15-րդ կետերը:

հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի և Դավիթ Ղևոնդի Մաթևոսյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքները բավարարել: Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունվարի 22-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Դավիթ Ղևոնդի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հունիսի 16-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 24-ի որոշումը բեկանել:

3. Դավիթ Ղևոնդի Մաթևոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0077/01/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Խաչիկ Շահումյանի Գասպարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 30-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Յ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225¹-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

2008 թվականի մարտի 1-ին Խաչիկ Շահումյանի Գասպարյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

հանցագործությունների հատկանիշներով: Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ, թիվ 62202508 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 62202608 համարով:

2008 թվականի մարտի 4-ին Խ.Գասպարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225¹-րդ հոդվածի 2-րդ մասով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի մարտի 4-ի որոշմամբ Խ.Գասպարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

2008 թվականի մարտի 25-ին որոշում է կայացվել Խ.Գասպարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225¹-րդ հոդվածի 2-րդ մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ Խ.Գասպարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Խ.Գասպարյանի վերաբերյալ գործի նյութերն անջատվել են առանձին վարույթ:

2008 թվականի ապրիլի 15-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 4-ի դատավճռով Խ.Գասպարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Խ.Գասպարյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2008 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 4-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2009 թվականի հունիսի 26-ի որոշմամբ Խ.Գասպարյանի նկատմամբ կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ 2009 թվականի հունիսի 19-ի որոշման

1-ին կետի 2-րդ ենթակետը, և նա ազատվել է նշանակված պատժի հետագա կրումից:

5. 2019 թվականի հոկտեմբերի 29-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը հիմնարար խախտման հիմքով վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Նախաքննության մարմնի կողմից Խաչիկ Գասպարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Մ]ա նպատակ ունենալով աջակցել 2008 թվականի փետրվարի 19-ին կայացած Հայաստանի Հանրապետության Նախագահի հերթական ընտրություններում ըստ նախնական տվյալների պարտություն կրած Նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանին ու նրա համահոհներին՝ ընտրությունների օրինակնությունը միջազգային հանրության առաջ կասկածի տակ դնելու, ընտրությունների արդյունքների նկատմամբ հասարակության լայն զանգվածներում անվստահություն սերմանելու, հասարակական դժգոհություն և ընդվզումների պարբերակ սրելով գործում, անմիջական մասնակցություն է ունեցել ընտրությունների հաջորդ իսկ օրվանից Երևան քաղաքում օրենքով սահմանված կարգի խախտմամբ իրականացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին:

Այնուհետև՝ երբ ազատության հրապարակում անընդմեջ իրականացվող հրապարակային զանգվածային միջոցառումների շրջանում հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պարճառելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու համար հարմարեցված այլ պարագաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրացնելիս, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողները 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 7-ի սահմաններում, Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռել արուզելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության խնդրությունը՝ Խաչիկ Գասպարյանը հրապարակում գրնամբ մի խումբ այլ անձանց հետ հարձակում է գործել ոստիկանության ծառայողների նկատմամբ, որի ընթացքում առողջության համար ոչ վրանգավոր բռնություն է գործադրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի

*աշխատակցի նկատմամբ՝ քաշքշելով և հարվածելով նրան՝ կապված վերջինիս կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ (...)*¹:

6.1. Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում, պաշտպանության կողմը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Ավետիք Ներսիսյանին, Սարգիս Պարունիկյանին, Միսակ Հովակիմյանին, Աշոտ Մանուկյանին, Արմեն Ավագյանին, Վարդան Մկրտչյանին, Կոռյուն Դանիելյանին, Ռաջի Պետրոսյանին, ինչը դատարանի կողմից մերժվել է²:

6.2. Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի աշխատակիցներ Արմեն Խաչատրյանի, Սիմոն Պողոսյանի, ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի օպերատիվ հերթապահ Ժորա Համբարձումյանի, ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի ոստիկան Հայկ Սարգսյանի, ինչպես նաև վկա Կարինե Թորոսյանի ցուցմունքները³:

7. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, 2008 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ փաստել է. *«(...) Վերաքննիչ դատարանն ապացուցված է համարում, որ Խաչիկ Գասպարյանն իշխանության ներկայացուցիչ հանդիսացող՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի աշխատակից Արմեն Խաչատրյանի նկատմամբ կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բռնություն է գործադրել՝ կապված նրանց կողմից ծառայողական պարտականությունները կատարելու հետ:*

Հերևարար, պաշտպանի վերաքննիչ բողոքի պարճատարանությունը, որ Խաչիկ Գասպարյանի մասնակցությունը վերագրվող հանցավոր արարքի մեջ ապացուցված չէ, հիմնադրվել է և չի բխում նյութերից:

(...)

Պաշտպանի վերաքննիչ բողոքի այն պնդման վերաբերյալ, որ դատարանը թույլ է տվել քրեական օրենքի, ինչպես նաև միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառում, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ ընդհանուր իրավասության դատարանը պահպանելով թե ներպետական, և թե միջազգային պայմանագրերով սահմանված նորմերի պահանջները, վերաքննիչ բողոքի սահմաններում կայացրել է օրինական և հիմնավորված դատավճիռ:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 195-196:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, դատական նիստի արձանագրության լագերային կրիչը, թերթ 61-62:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 100-102:

Ինչ վերաբերվում է դեպքի հանգամանքների վերաբերյալ բողոքում նշված մյուս փաստարկներին, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք հիմնազուրկ են և չեն կարող հիմք հանդիսանալ պաշտպանի բողոքը բավարարելու համար (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբեր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 20-րդ կետը, 270-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, փաստել է, որ Խ.Գասպարյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպումից չի երևում, թե մեղսագրված արարքն ինչու է արտահայտվել, դրանում նկարագրված չէ, թե ո՞վ կամ ովքե՞ր են իշխանության ներկայացուցիչ հանդիսացել, որի պարագայում անհիմն է խոսել ծառայողական պարտականությունների կատարման մասին:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ վերոգրյալի պայմաններում, Առաջին ստյանի դատարանը դատավճռում հաստատված է համարել Խ.Գասպարյանի կողմից ոստիկանության աշխատակից Արմեն Խաչատրյանի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքը, որն ուղղակի բացակայել է մեղադրանքի ձևակերպումից, իսկ վերջինս սույն քրեական գործով տուժող չի ճանաչվել, ինչպիսի մոտեցումն ընդունելի է համարվել նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Արդյունքում, բողոքի հեղինակը գտել է, որ Խ.Գասպարյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը:

8.1. Բողոքաբերը, վկայակոչելով *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռով արձանագրված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասը, 67-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածը՝ նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են ամբաստանյալի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով ամրագրված պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը, որը դրսևորվել է նրանում, որ դատաքննության ընթացքում պաշտպանության կողմը

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 164-165-րդ:

միջնորդություն է ներկայացրել դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Ավետիք Ներսիսյանին, Սարգիս Պարունիկյանին, Արմեն Ավագյանին, Վարդան Մկրտչյանին, Կորյուն Դանիելյանին, Ռաջի Պետրոսյանին և այլ անձանց, ովքեր ականատես են եղել նկարագրված իրադարձությանը, ինչն էլ Առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է, իսկ մեղադրական դատավճռի հիմքում դրվել են բացառապես ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները:

8.2. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է քեկանել ու փոփոխել Խ.Գասպարյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 4-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 30-ի որոշումը՝ ճանաչելով և հռչակելով Խաչիկ Գասպարյանի անմեղությունը մեղսագրված արարքում:

Վճարելի դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

9. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

10. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարծվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը փոյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված

փաստեր, կամ նահորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական պխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ¹:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «հիմնարար խախտում» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից զուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության Բացատրական զեկույցի 31-րդ կետում ընդգծված է, որ «4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հոգուր դատասպարոված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատասպարոյայի»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախևառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

լինեն այնպիսին, որ «ազդեն գործի ելքի վրա»՝ կամ հոգուտ անձի, կամ հակառակը¹:

10.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

10.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ե]նթացում էր կրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խախտում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

10.3. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտնած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Եման իրավակարգավորումը քիտում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտնած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...))²:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

² Տե՛ս, *Մկրտիչ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

10.4. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՍԴՈ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարճատահետևանքային կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկարումը արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից րուժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճատված վնասը հատուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեզրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը սրացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»¹:

11. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիր ժամկետում արդարացի և իրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք րվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք րված վկաները (...):»:

11.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով² արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին**

¹ Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-1431 որոշման 4.3-րդ կետը:

² Տե՛ս *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ¹,

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ **դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»²,**

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին³,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետեր, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետեր:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետեր:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետ, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետ, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետ:

համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն¹,

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, **միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին:** Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին²,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում:** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած **այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները³:**

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Խ.Գասպարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, նպատակ ունենալով աջակցել 2008 թվականի փետրվարի 19-ին կայացած

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topić v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետ:

² Տե՛ս *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը, 206-րդ կետ:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76201/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

Հայաստանի Հանրապետության Նախագահի հերթական ընտրություններում ըստ նախնական տվյալների պարտություն կրած Նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանին ու նրա համախոհներին՝ ընտրությունների օրինականությունը միջազգային հանրության առաջ կասկածի տակ դնելու, ընտրությունների արդյունքների նկատմամբ հասարակության լայն զանգվածներում անվստահություն սերմանելու, հասարակական դժգոհություն և ընդվզումների պատրանք ստեղծելու գործում, անմիջական մասնակցություն է ունեցել ընտրությունների հաջորդ իսկ օրվանից Երևան քաղաքում օրենքով սահմանված կարգի խախտմամբ իրականացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին:

Այնուհետև՝ երբ ազատության հրապարակում անընդմեջ իրականացվող հրապարակային զանգվածային միջոցառումների շրջանում հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պատճառելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու համար հարմարեցված այլ պարագաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրացնելիս, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության ծառայողները 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 7-ի սահմաններում, Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռել ստուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը՝ Խաչիկ Գասպարյանը հրապարակում գտնվող մի խումբ այլ անձանց հետ հարձակում է գործել ոստիկանության ծառայողների նկատմամբ, որի ընթացքում առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի աշխատակցի նկատմամբ՝ քաշքշելով և հարվածելով նրան՝ կապված վերջինիս կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ¹:

- Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում, պաշտպանության կողմը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Ավետիք Ներսիսյանին, Սարգիս Պարունիկյանին, Միսակ Հովակիմյանին, Աշոտ Մանուկյանին, Արմեն Ավագյանին, Վարդան Մկրտչյանին, Կորյուն Դանիելյանին, Ռաջի Պետրոսյանին, ինչը դատարանի կողմից մերժվել է²,

- Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի աշխատակիցներ Արմեն Խաչատրյանի, Սիմոն Պողոսյանի, ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի օպերատիվ հերթապահ Ժորա Համբարձումյանի, ՀՀ

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

նստիկանության ՊՊԾ գնդի նստիկան Հայկ Սարգսյանի, ինչպես նաև վկա Կարինե Թորոսյանի ցուցմունքները¹,

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը, դատական ակտում նշել է, որ ապացուցված է համարում, որ Խ.Գասպարյանն իշխանության ներկայացուցիչ հանդիսացող՝ նստիկանության աշխատակից Ա.Խաչատրյանի նկատմամբ կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել՝ կապված նրա կողմից ծառայողական պարտականությունները կատարելու հետ²:

13. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Խ.Գասպարյանի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվելով նստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովել *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները Խ.Գասպարյանի մեղքը հիմնավորող ապացուցողական զամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով նստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների վստահելիությունն ու արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Խ.Գասպարյանի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակիցներ՝ ՀՀ նստիկանության Էրեբունու բաժնի աշխատակիցներ Ա.Խաչատրյանի և Ս.Պողոսյանի ցուցմունքներն են: Ինչ վերաբերում է այլ ապացույցներին, որոնց դատարանները հղում են կատարել, այն է՝ ՀՀ նստիկանության Էրեբունու բաժնի օպերատիվ հերթապահ Ժորա Համբարձումյանի, ՀՀ նստիկանության ՊՊԾ գնդի նստիկան Հայկ Սարգսյանի, Կարինե Թորոսյանի ցուցմունքները, դրանք անուղղակի

¹ Տե՛ս սույն որոշման 6.2-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

ապացույցներ են և ուղղակիորեն չեն հաստատում Խ.Գասպարյանի առնչությունը մեղսագրվող արարքին:

Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Խ.Գասպարյանին մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում: Ավելին, ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում, պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Այսինքն՝ բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ, ընդունելի են Վճռաբեկ դատարանի համար, քանի որ պաշտպանական կողմին հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու մի շարք վկաների և ապացուցողական զանգվածում ներառելու նրանց ցուցմունքները, որոնք կասկածի տակ էին դնում ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն ու հիմնավորում դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանական կողմի առաջ քաշված վարկածը: Այլ կերպ, ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն անվերապահորեն ընդունելը՝ առանց պաշտպանական կողմին լիարժեք հնարավորություն ընձեռելու մրցակցային դատավարության պայմաններում արդյունավետորեն վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքների արժանահավատությունը, ինչպես արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով, այնպես էլ սույն գործով, հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքնության իրավունքի խախտման¹:

14. Վերոգրյալի հաշվառմամբ անդրադառնալով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Խ.Գասպարյանի մեղավորության հարցին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝
«Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

¹ Տե՛ս *Matevosyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 61730/08, 41-րդ կետ, *mutatis mutandis*, *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհասպաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

(...)

3) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք (...):»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրտեղծված անկասի ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհասպաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար (...):»:

14.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի դրույթն ընդգծում է առաջադրվող «մեղադրանքի» մասին մեղադրյալին ծանուցելուն հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Հանցագործության վերաբերյալ մանրամասն տվյալները կարևոր դեր են խաղում քրեական դատավարությունում այն իմաստով, որ դրանց հայտարարման պահից է անձը համարվում պաշտոնապես ծանուցված նրա դեմ առաջ քաշված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելու իրավունքը պետք է դիտել պաշտպանության նախապատրաստության իրավունքի լույսի ներքո¹:

14.2. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշման մեջ մեղադրանքի ձևակերպումը դիտարկելով որպես արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման միջոց՝ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) /Դ/րանում, բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից,

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Seliverstov v. Russia* գործով 2008 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 19692/02, կետեր 16-17:

ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պերպ է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ: (...)

Վճռաբեկ դատարանը գրնում է, որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կտա մեղադրյալին պատշաճ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դատավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայագրկման¹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Խ.Գասպարյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունը չի համապատասխանում «մեղադրանքի» վերաբերյալ միջազգային և ներպետական պահանջներին ու Վճռաբեկ դատարանի կողմից *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշմամբ սահմանված չափանիշներին: Մասնավորապես, մեղադրանքի ձևակերպումը պարունակում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի դիսպոզիցիայի նկարագրությունը: Մեղադրանքի մեջ նշված չեն այնպիսի փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն հիմնավորված կերպով եզրահանգելու, որ Խ.Գասպարյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասին, այն է՝ մեղադրանքի բովանդակությունից հնարավոր չէ պատկերացում կազմել, թե ու՞մ նկատմամբ է գործադրվել բռնություն², ինչպե՞ս է այն արտահայտվել, ավելին՝ չի պարզվել թե ու՞մ և ինչպիսի՞ վնաս է պատճառվել, ու ինչպե՞ս է որոշվել, որ Խ.Գասպարյանի կողմից գործադրվել է հենց առողջության համար ոչ վտանգավոր բռնություն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Խ.Գասպարյանին առաջադրված մեղադրանքում մանրամասնորեն և հստակ չեն նշվել

¹ Տե՛ս *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 21-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ *Վահան Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԱՐԴ/0038/01/13 որոշման 14-15-րդ կետերը:

արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական տվյալները՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրանքի այդպիսի անորոշ ձևակերպման պայմաններում, խախտվել է քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքը՝ տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքի մասին, որպիսի պայմաններում չի ապահովվել նաև անձի պաշտպանության իրավունքի իրացումը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է արդար դատաքննության իրավունքի հիմնարար խախտման:

16. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Խ.Գասպարյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և քրեական գործի վարույթը կարճելու՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

17. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Խաչիկ Շահումյանի Գասպարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հունիսի 4-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 30-ի որոշումը բեկանել:

2. Խաչիկ Շահումյանի Գասպարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0083/01/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սամվել Գայոսի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225¹-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

2008 թվականի մարտի 1-ին Սամվել Գայոսի Հարությունյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

հանցագործությունների հատկանիշներով: Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ, թիվ 62202508 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 62202608 համարով:

2008 թվականի մարտի 4-ին Ս.Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի մարտի 4-ի որոշմամբ Ս.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ Ս.Հարությունյանի վերաբերյալ գործի նյութերն անջատվել են առանձին վարույթ:

2008 թվականի ապրիլի 16-ին որոշում է կայացվել Ս.Հարությունյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի ապրիլի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 3-ի դատավճռով Սամվել Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:

3. Ս.Հարությունյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2008 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 3-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 25-ի որոշմամբ Ս.Հարությունյանի նկատմամբ կիրառվել են «Համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ 2009 թվականի հունիսի 19-ի որոշման դրույթները և նա ազատվել է պատժի հետագա կրումից:

5. 2019 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը հիմնարար խախտման հիմքով վճռաբեկ բողոք է բերել, որը

Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մարտի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Նախաքննության մարմնի կողմից Սամվել Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն]ա 2008 թվականի փետրվարի 20-ից սկսած մասնակցել է մայրաքաղաքի կենսագործունեությունը, երթևեկությունը, պեղական և մասնավոր հիմնարկների քնականոն գործունեությունը, ազգաբնակչության հանգիստն ու անդորրը խանգարող ապօրինի հրապարակային միջոցառումներին՝ զանգվածային ցույցերին, շուրջօրյա հանրահավաքներին, միտինգներին, երթերին և նստացույցերին: Այնուհետև 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 7-ի սահմաններում, երբ իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներն Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռել սրուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկարկության իսկությունը, այդ ժամանակ Ազատության հրապարակում գտնվող Սամվել Հարությունյանը չի ենթարկվել նրանց օրինական պահանջներին, քաշքշուկ է սրեղծել իրեն մտրեցած՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի աշխատակիցների հետ, որի ընթացքում, նրանց կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բռնություն գործադրելով՝ հրել ու հարվածել է վերջիններին (...):»¹:

6.1. Առաջին ատյանի դատարանը, մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի աշխատակիցներ Հարություն Ալեքսանյանի և Դավիթ Եղյանի ցուցմունքները, դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև անձին ոստիկանության բաժին բերման ենթարկելու մասին արձանագրությունը, դատաբժշկական փորձագիտական եզրակացությունը²:

7. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, 2008 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ փաստել է. «(...) Վերաքննիչ դատարանն ապացուցված է

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 185-186:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 67-69:

համարում, որ Սամվել Հարությունյանը իշխանության ներկայացուցիչ հանդիսացող՝ ՀՀ նախկինության Երևան քաղաքի վարչության Շենգավիթ քաժնի աշխատակիցներ Դավիթ Եղյանի և Հարություն Ալեքսանյանի նկատմամբ կյանքի և ստողջության համար ոչ վրանգավոր բռնություն է գործադրել՝ կապված նրանց կողմից ծառայողական պարտականությունները կատարելու հետ:

Հետևաբար, պաշտպանի վերաքննիչ բողոքի պարճառարանությունը, որ ամբաստանյալ Սամվել Հարությունյանի մասնակցությունը վերագրվող հանցավոր արարքի մեջ ապացուցված չէ, հիմնագուրկ է և չի բխում նյութերից:

Ինչ վերաբերում է պաշտպանի վերաքննիչ բողոքի պարճառարանությունը, որ դատավճիռը կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի խախտմամբ, դատարանն իր դատավճի հիմքում չէր կարող դնել օպերիվագորներ Դավիթ Եղյանի և Հարություն Ալեքսանյանի ցուցմունքները, ապա դա հիմնավոր չէ, քանի որ ինչպես իրավացիորեն նշվել է ընդհանուր իրավասության դատարանի դատավճում րվյալ դեպքում նախկինության աշխատակիցները ոչ թե իրականացրել են սույն քրեական գործի հետ կապված իրենց դատավարական լիազորությունները, այլ կատարել են նախկինության պարտականությունները:

(...)

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ դատավճիռը քրեադատավարական օրենքի էական խախտումներով և միջազգային պայմանագրի սխալ կիրառմամբ կայացված լինելու վերաբերյալ բողոքի փաստարկներն իրենց հիմնավորումը գործի նյութերում չեն գտնում, հետևաբար Սամվել Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 3-ի դատավճիռը պետք է թողնել օրինական ուժի մեջ (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբեր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 20-րդ կետը, 270-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ Գևորգ Ճաղարյանի և մյուսների վերաբերյալ որոշմամբ արտահայտված

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 108-109:

իրավական դիրքորոշումները, փաստել է, որ Ս.Հարությունյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպումից չի երևում, թե մեղսագրված արարքն ինչու է արտահայտվել, դրանում նկարագրված չէ, թե ո՞վ կամ ովքե՞ր են իշխանության ներկայացուցիչ հանդիսացել, որի պարագայում անհիմն է խոսել ծառայողական պարտականությունների կատարման մասին:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ վերոգրյալի պայմաններում, Առաջին ատյանի դատարանը դատավճռում հաստատված է համարել Ս.Հարությունյանի կողմից ոստիկանության աշխատակիցներ Դավիթ Եղյանի և Հարություն Ալեքսանյանի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքը, որն ուղղակի բացակայել է մեղադրանքի ձևակերպումից, իսկ վերջիններս սույն քրեական գործով տուժող չեն ճանաչվել, ինչպիսի մոտեցումն ընդունելի է համարվել նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Արդյունքում, բողոքի հեղինակը գտել է, որ Ս.Հարությունյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը:

8.1. Բողոքաբերը, վկայակոչելով *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռով արձանագրված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասը, 67-րդ հոդվածը, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածը՝ նշել է, որ ստորագրած դատարանները խախտել են ամբաստանյալի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով ամրագրված պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը, որը դրսևորվել է նրանում, որ մեղադրական դատավճռի հիմքում դրվել են բացառապես ոստիկանության աշխատակիցներ Դավիթ Եղյանի և Հարություն Ալեքսանյանի ցուցմունքները:

8.2. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ու փոփոխել Ս.Հարությունյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 3-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը՝ ճանաչելով և հռչակելով Սամվել Հարությունյանի անմեղությունը մեղսագրված արարքում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի

այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

10. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. *Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:*

Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարծվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. *Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը ցվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայր են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ¹:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, *«հիմնարար խախտում»* հասկացությունը ենթադրում է միայն

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից գուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության Բացատրական գեկույցի 31-րդ կետում ընդգծված է, որ «4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հօգուտ դատապարտված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատապարտյալի»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախնառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «ազդեն գործի ելքի վրա»՝ կամ հօգուտ անձի, կամ հակառակը¹:

10.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնող դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարփժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

10.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ն]ույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

10.3. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռարեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)¹:

10.4. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՍԴՈ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարճատահերևանքային կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկարումը արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից րուժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշրպանելուն, նրան պարճատված վնասը հարուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեգրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսենացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մանավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը սրացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»²:

¹ Տե՛ս Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռարեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-1431 որոշման 4.3-րդ կետը:

11. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկասի ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները (...):»:

11.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով¹ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ:** Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ **արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ²,**

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոմատ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին

¹ Տե՛ս *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետեր, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետեր:

համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ **դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»¹,**

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին²,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն³,

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, **միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին:** Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին⁴,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետեր:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետ, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետ, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետ:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topić v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետ:

⁴ Տե՛ս *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը, 206-րդ կետ:

անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում:** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած **այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեն յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները¹:**

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Ս.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2008 թվականի փետրվարի 20-ից սկսած մասնակցել է մայրաքաղաքի կենսագործունեությունը, երթևեկությունը, պետական և մասնավոր հիմնարկների բնականոն գործունեությունը, ազգաբնակչության հանգիստն ու անդորրը խանգարող ապօրինի հրապարակային միջոցառումներին՝ զանգվածային ցույցերին, շուրջօրյա հանրահավաքներին, միտինգներին, երթերին և նստացույցերին: Այնուհետև 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 7-ի սահմաններում, երբ իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցները Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքի մասնակիցներից պահանջել են հնարավորություն ընձեռել ստուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը, այդ ժամանակ Ազատության հրապարակում գտնվող Սամվել Հարությունյանը չի ենթարկվել նրանց օրինական պահանջներին, քաջքնով է ստեղծել իրեն մոտեցած՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի աշխատակիցների հետ, որի ընթացքում, նրանց կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով՝ հրել ու հարվածել է վերջիններին²:

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76201/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

- Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի աշխատակիցներ Հարություն Ալեքսանյանի և Դավիթ Եղյանի ցուցմունքները, դատահոգերովական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև անձին ոստիկանության բաժին բերման ենթարկելու մասին արձանագրությունը և դատաբժշկական փորձագիտական եզրակացությունը¹:

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, դատական ակտում նշել է, որ ապացուցված է համարում, որ Ս.Հարությունյանն իշխանության ներկայացուցիչ հանդիսացող՝ ոստիկանության աշխատակիցներ Հ.Ալեքսանյանի և Դ.Եղյանի նկատմամբ կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել՝ կապված նրա կողմից ծառայողական պարտականությունները կատարելու հետ²:

13. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մուշեղ Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Ս.Հարությունյանի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովել *Մուշեղ Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները, չօգտագործելով յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, Ս.Հարությունյանի մեղքը հիմնավորող ապացուցողական գամբյուղում ծանրակշիռ դեր են հատկացրել դրանց՝ պատշաճ գնահատման չենթարկելով այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների վստահելիությունն ու արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Ս.Հարությունյանի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական

¹ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

մասնակիցներ՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի աշխատակիցներ Հարություն Ալեքսանյանի և Դավիթ Եղյանի ցուցմունքներն են: Ինչ վերաբերում է այլ ապացույցներին, որոնց դատարանները հղում են կատարել, այն է՝ դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությունը, դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև անձին ոստիկանության բաժին բերման ենթարկելու մասին արձանագրությունը, ապա դրանք չեն հաստատում Ս.Հարությունյանի առնչությունը մեղսագրվող արարքին¹:

14. Վերոգրյալի հաշվառմամբ անդրադառնալով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Ս.Հարությունյանի մեղավորության հարցին՝ Վճռարենկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝
«Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

(...)

3) իր պաշտպանությունը նախապարաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք (...):»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա արեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապարաստելու համար (...):»:

14.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի

¹ Տե՛ս *Matevosyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 61730/08, 41-րդ կետ, *mutatis mutandis*, *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

դրույթն ընդգծում է առաջադրվող «մեղադրանքի» մասին մեղադրյալին ծանուցելուն հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Հանցագործության վերաբերյալ մանրամասն տվյալները կարևոր դեր են խաղում քրեական դատավարությունում այն իմաստով, որ դրանց հայտարարման պահից է անձը համարվում պաշտոնապես ծանուցված նրա դեմ առաջ քաշված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելու իրավունքը պետք է դիտել պաշտպանության նախապատրաստության իրավունքի լույսի ներքո¹:

14.2. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշման մեջ մեղադրանքի ձևակերպումը դիտարկելով որպես արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման միջոց՝ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) *ԴՆյանուն, բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ: (...)*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կտա մեղադրյալին պատշաճ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դատավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայազրկման»²:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ս.Հարությունյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունը չի համապատասխանում «մեղադրանքի» վերաբերյալ միջազգային և ներպետական պահանջներին ու Վճռաբեկ

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Seliverstov v. Russia* գործով 2008 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 19692/02, կետեր 16-17:

² Տե՛ս *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 21-րդ կետը:

դատարանի կողմից *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշմամբ սահմանված չափանիշներին: Մասնավորապես, մեղադրանքի ձևակերպումը պարունակում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի դիսպոզիցիայի նկարագրությունը: Մեղադրանքի մեջ նշված չեն այնպիսի փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն հիմնավորված կերպով եզրահանգելու, որ Ս.Հարությունյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասին, այն է՝ մեղադրանքի բովանդակությունից հնարավոր չէ պատկերացում կազմել, թե ու՞մ նկատմամբ է գործադրվել բռնություն¹, ավելին՝ չի պարզվել թե ու՞մ և ինչպիսի՞ վնաս է պատճառվել, ու ինչպե՞ս է որոշվել, որ Ս.Հարությունյանի կողմից գործադրվել է հենց կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Ս.Հարությունյանին առաջադրված մեղադրանքում մանրամասնորեն և հստակ չեն նշվել արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական տվյալները՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրանքի այդպիսի անորոշ ձևակերպման պայմաններում, խախտվել է քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքը՝ տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքի մասին, որպիսի պայմաններում չի ապահովվել նաև անձի պաշտպանության իրավունքի իրացումը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է արդար դատաքննության իրավունքի հիմնարար խախտման:

16. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Ս.Հարությունյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և քրեական գործի վարույթը կարճելու՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ *Վահան Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԱՐԴ/0038/01/13 որոշման 14-15-րդ կետերը:

17. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Սամվել Գայոսի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 3-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը բեկանել:

2. Սամվել Գայոսի Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

սրորագրություն

Դատավորներ՝

սրորագրություններ

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0426/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման դեմ դիմող Հրայր Սվյատոսլավի Հովսեփյանի փաստաբան, ներկայացուցիչ Ռ.Ահարոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Յ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի հետաքննիչ Հ.Մկրտչյանի (այսուհետ՝ նաև Հետաքննիչ)՝ 2016 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ դիմող Հրայր Հովսեփյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Վերոնշյալ որոշման դեմ փաստաբան Ռ.Ահարոնյանի բողոքը Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի պաշտոնակատար Մ.Գրիգորյանի (այսուհետ՝ նաև Դատախազ)՝ 2018 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. Փաստաբան Ռ.Ահարոնյանի՝ բողոքի քննության արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Ռ.Ահարոնյանի՝ բողոք բերելու իրավասություն չունենալու պատճառաբանությամբ:

3. Վերոնշյալ որոշման դեմ փաստաբան Ռ.Ահարոնյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ բողոք բերելու իրավասություն չունենալու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ փաստաբան Ռ.Ահարոնյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

4.1. Վճռաբեկ դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 18-ին որոշում է կայացրել փաստաբան Ռ.Ահարոնյանի բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան) դիմելու մասին:

4.2. «Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի և 415-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը» Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՍԴԱՌ-110 որոշմամբ քննության ընդունվել է քննության և Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի թիվ ՍԴԱՌ-66 որոշմամբ կարճվել:

4.3. Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մարտի 23-ի որոշմամբ Ռ.Ահարոնյանի բողոքի վերաբերյալ վարույթը վերսկսվել է:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի՝ բողոքը մերժելու մասին որոշման համաձայն՝ «(...) Հրայր Հովսեփյանի կողմից Ռոմեն Ահարոնյանին տրված լիազորագիրը՝ վերապահելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով հայցվորին կամ պատասխանողին վերապահված բոլոր լիազորությունները, չի նախատեսում մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումներն ու գործողությունները բողոքարկելու լիազորությունը: Բացի այդ, լիազորագիրը տրվել է 2014 թվականի հոկտեմբերի ութին՝ երեք տարի ժամկետով, դրա գործողության ժամկետը լրացել է շուրջ մեկ տարի առաջ,

հետևաբար, այդ պահից այն կորցրել է իրավաբանական ուժը: Վերոգրյալից բխում է, որ Ռոմեն Ահարոնյանն իրավասու չէ կատարելու որևէ գործողություն Հրայր Հովսեփյանի անունից, այդ թվում՝ բողոքարկելու (...)»¹:

6. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ փաստաբան Ռ.Ահարոնյանի վերաքննիչ բողոքը՝ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու պահանջով, արձանագրել է. «(...) [Վ]երաքննիչ բողոքին կից չի ներկայացվել փաստաբան Ռոմեն Ահարոնյանի կողմից Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշումը Հրայր Հովսեփյանի անունից բողոքարկելու իրավունք ունենալու վերաբերյալ համապատասխան լիազորությունը: Ինչ վերաբերում է գործի նյութերում ստկա լիազորագրին, սպա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն փաստաբան Ռոմեն Ահարոնյանին նման իրավասությամբ չի օժտում: (...)»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

7. Բողոքի հեղինակը գտել է, որ Առաջին ատյանի դատարանն ըստ էության չքննարկելով իր բողոքը, իսկ Վերաքննիչ դատարանն առանց քննության թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը՝ իրեն ոչ իրավաչափորեն դիտարկել են որպես բողոք բերելու իրավունք չունեցող անձ, այնինչ ինքն ունեցել է այդպիսի լիազորություն:

Բողոք բերած անձը նշել է, որ բողոքը չքննարկելու պայմաններում Վերաքննիչ դատարանը կայացրած որոշմամբ զրկել է իրեն դատական բողոքարկման իրավունքից, որը և հանգեցրել է դատական պաշտպանության իրավունքի ակնհայտ խախտման: Ըստ բողոքաբերի՝ եթե նույնիսկ իր հետևություններում Վերաքննիչ դատարանը լիներ իրավացի, միևնույն է պարտավոր էր քննել բողոքը:

8. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը՝ ճանաչելով դիմողի իրավունքների խախտումը և սահմանելով խախտված իրավունքները վերականգնելու պարտականություն կամ գործն ուղարկել ստորադաս դատարան նոր քննության:

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 31-42:

² Տե՛ս նյութեր, թերթեր 74-75:

Սահմանադրական դատարանում Վճռաբեկ դատարանի դիմումի քննությունը.

9. Վկայակոչելով Վճռաբեկ դատարանի հատուկ կարգավիճակին, դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքին, դատական վերանայման առանձնահատկություններին առնչվող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, մեկնաբանելով դատական վերանայման իրավունքի իրացման և արդար դատաքննության իրավունքի (դատարանի մատչելիության, դատական պաշտպանության իրավունքների) արդյունավետ իրականացման երաշխիքները, ինչպես նաև կարևորելով Սահմանադրական դատարանի որոշումները՝ Սահմանադրության գերակայության երաշխավորման համատեքստում, Վճռաբեկ դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ դիմել է Սահմանադրական դատարան¹ հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումների համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանադրական խնդիր առաջանալու դեպքում Սահմանադրական դատարանը պետք է կայացնի նոր որոշում²:

Նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանը միջնորդել է Սահմանադրական դատարանին՝ որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածում, 415-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ընթացակարգերի և կառուցակարգերի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ, 79-րդ հոդվածներին, 171-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցն այնքանով, որքանով գործն ըստ էության չլուծող դատական ակտի իրավաչափությունը բացառապես վճռաբեկ բողոքի առարկայի և սահմանների շրջանակում ստուգելիս Վճռաբեկ դատարանը, Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշմամբ վերոնշյալ քրեադատավարական նորմերի հետ անմիջականորեն փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասին տրված մեկնաբանության պայմաններում, առանց գործը նոր քննության ուղարկելու իրավասության, զրկված է վերջնական

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի սույն գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշումը:

² Տե՛ս CDL-PI(2017)008, European Commission For Democracy Through Law (Venice Commission), Compilation of Venice Commission opinions, reports and studies on Constitutional justice, 18 December 2017:

որոշում կայացնելու և իրավունքի խախտումը փաստելով այն վերացնելու հնարավորությունից¹:

10. Նշված դիմումի կապակցությամբ Սահմանադրական դատարանում որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովը դիրքորոշումներ է հայտնել՝ նշելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածը և 415-րդ հոդվածի 1-ին մասը դիտարկելով ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշման լույսի ներքո՝ պետք է փաստել, որ միանգամայն ողջամիտ է միջանկյալ դատական ակտերի վերանայումը որպես կանոն Վճռաբեկ դատարանում ավարտելու պահանջը, սակայն այդ կանոնից պետք է նախատեսել բացառություններ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ վճռաբեկ բողոքի առարկան սահմանափակված է բացառապես ընթացակարգային բնույթի խախտումների վերաբերյալ ներկայացվող հիմնավորումներով՝ առանց անդրադառնալու ստորադաս դատարաններում ըստ էության վիճարկվող խնդրի իրավաչափության հարցին (նման մի շարք իրավիճակներ նկարագրվել են դիմողի կողմից): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածը հնարավորություն է տալիս Վճռաբեկ դատարանին վերաքննիչ դատարանի դատական ակտերը վերանայել միայն վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, ինչի արդյունքում վերը նկարագրված իրավիճակներում Վճռաբեկ դատարանն օբյեկտիվորեն զրկված է վերջնական որոշում կայացնելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի խախտման փաստն արձանագրելուց հետո անձն այլևս հնարավորություն չունի վիճարկվող խնդրի իրավաչափության հարցը ստորադաս դատարաններում բարձրացնել՝ միջանկյալ դատական ակտի վերանայման վարույթն ավարտված լինելու պատճառով: Այսինքն՝ կստացվեն իրավիճակներ, երբ Վճռաբեկ դատարանը կարձանագրի իրավունքի խախտումը, սակայն հնարավորություն չի ունենա վերացնել այն, քանի որ սահմանափակված է վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններով, մինչդեռ Սահմանադրական դատարանն իր հիշյալ որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը պարտավոր է սահմանել վճռաբեկ առյանում արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության անհրաժեշտ նախադրյալներ՝ այն հաշվով, որ Վճռաբեկ դատարանը, հանգելով որևէ իրավունքի կամ ազատության խախտման մասին եզրակացության,

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի սույն գործի վարույթը կատեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշումը:

պարտադիր կարգով և արդյունավետ ընթացակարգի շրջանակներում, իրականացնելով արդարադատություն, վերացնի այդ խախտումը¹:

Միևնույն ժամանակ, Ազգային ժողովը կարևոր է համարել հստակորեն ընգծել այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանը քննարկվող որոշման շրջանակներում կարծես թե ստեղծել է մի փակուղային իրավիճակ, որի պայմաններում միջանկյալ դատական ակտերով Վճռաբեկ դատարանն իրավունքի խախտում արձանագրելուց զատ հնարավորություն չի ունենալու գործուն միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ:

Վերոգրյալի հիման վրա՝ Ազգային ժողովն արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածը և 415-րդ հոդվածի 1-ին մասը՝ ինքնին, ինչպես նաև **Վճռաբեկ դատարանի կողմից պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասին տրված մեկնաբանության պայմաններում** չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը:

11. «Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի և 415-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը» Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի թիվ ՍԴԱՌ-66 որոշմամբ կարճելու մասին որոշման համաձայն՝ *«(...) Վճռաբեկ դատարանը որևէ կերպ չի հիմնավորել իր դիրքորոշումը և չի անդրադարձել այն հարցերին, թե վերաքննիչ դատարանի վերոնշյալ դատական ակտերի վերանայման վերաբերյալ օրենսդրական կարգավորումն ինչու՞ է հակասում Սահմանադրությանը, արդյո՞ք այդ ակտերը չպետք է վերանայվեն, կամ այլ ակտեր ևս պետք է ենթակա լինե՞ն վերանայման, կամ այդ ակտերը ոչ թե պետք է վերանայվեն, այլ վերանայումից փարբերվող ա՛յլ գործընթաց պետք է փնտի ունենա և այլն:*

Դիմողն Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի Սահմանադրությանը չհամապատասխանելու մասին նույնպես հիմնավորումներ չի ներկայացրել, այլ փաստացի պնդել է, որ Վճռաբեկ դատարանում գործի քննության սահմաններ նախատեսող այդ դրույթի պայմաններում, անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար պետք է հնարավորություն ունենա գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում գործն ուղարկել նոր քննության:

Սահմանադրական դատարանը վերաբին արձանագրում է, որ «նոր դատական ակտ» եզրույթը չի նույնանում Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 170-199:

մասում ամրագրված դատական ակտերից որևէ մեկի հետ, և օրենսդիրը, կիրառելով «նոր դատական ակտ» եզրույթը, նկատի չի ունեցել հիշյալ հոդվածի 1-ին մասում թվարկված այն լիազորությունները, որոնք վերապահված են Վճռաբեկ դատարանին՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման դեպքերում:

Միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում փվյալ հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից վերջնական որոշում կայացնելու ընդհանուր կանոնից բացառություններ նախատեսելն անհրաժեշտ է համարել նաև պարասխանողը:

Սահմանադրական դատարանը նշում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ամրագրման սահմանադրական պահանջների կենսագործման նկատառումներից ելնելով՝ օրենսդրական զարգացումների ապահովումն Ազգային ժողովի իրավասությունն է, և հետևաբար՝ դիմողի բարձրացրած հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանին¹:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի իրավաչափությունը ստուգելիս, Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշման համատեքստում, Վճռաբեկ դատարանի լիազորությունների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12.1 Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչ Վճռաբեկ դատարանի լիազորությունների կապակցությամբ օրենքի միատեսակ կիրառության ապահովման հարցի քննությանն անդրադառնալը՝ նախևառաջ անհրաժեշտ է քննարկել Վերաքննիչ դատարանի՝ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման իրավաչափությունը:

1. Վերաքննիչ դատարանի՝ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման իրավաչափությունը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք բողոքարկման

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 207-212:

իրավասություն չունենալու հիմքով փաստաբան Ռ.Ահարոնյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

14. ՀՀ Սահմանադրության 172-րդ հոդվածի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարաններն առաջին աստիճանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական աստիճան են»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի համաձայն՝ *«Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն ստուգում է գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշգրտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը»:*

14.1 Դատական վերանայման իրավունքի համատեքստում դատարանների գործառնություններն առանց ատվածության մասին Սահմանադրական դատարանը նշել է, որ տարբեր աստիճանների դատարանները միմյանցից տարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով: Տվյալ դատական աստիճանի իրավասությունների շրջանակով են պայմանավորված այդ դատարանի կողմից ընդունվող դատական ակտերի բնույթն ու բովանդակությունը. յուրաքանչյուր դատական աստիճանի կողմից ընդունվող ակտը հանդիսանում է տվյալ դատական աստիճանի իրավասությունների և գործառնությունների կրողը: Հետևաբար, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դատական աստիճանի գործառնությունի իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական աստիճանի կողմից իր գործառնությունների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում¹:

Վճռաբեկ դատարանը *Գոռ Դուրյանի* գործով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ *«(…) Վերաքննիչ դատարանում դատական վերանայման առարկան սահմանափակվում է միայն առաջին աստիճանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգմամբ (…):*

Վերոնշյալ դիրքորոշումը բխում է դատարանների միջև գործառնությունների կապն ապահովելու տրամաբանական պահանջից: Մասնավորապես, դատարանակազմական խնդիրներով պայմանավորված առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանները իրականացնում են տարբեր դատավարական գործառնություններ և

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՌ-719 որոշման 5-րդ կետը:

համապատասխանաբար օժտված են դրանց կատարումն ապահովող փարքեր լիազորություններով: Հերևաբար մեկ արյանի կողմից մյուսի լիազորությունների յուրացումը կամ միմյանց փոխարինումն անթույլարելի է և հանդիսանում է օրինականության սկզբունքի կոպիտ խախտում: (...)¹:

15. Նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ «վերաքննությունը», որը ծագում է լատիներեն «*appellare*» բառից և թարգմանաբար նշանակում է բողոքարկում, իրենից ենթադրում է ստորադաս դատարանի կողմից կայացված դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգում: Այսինքն՝ վերաքննիչ դատարանը, սահմանափակ վերաքննության մոդելի պայմաններում, կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններով, վերանայում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը: Նշվածը՝ որպես վերաքննիչ դատարանի հիմնական գործառույթ, ամրագրվեց նաև 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով՝ հստակեցնելով վերաքննիչ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը:

Նման պայմաններում, պետք է փաստել, որ եթե առաջին ատյանի դատարանը լրիվ ծավալով քննության է առնում բողոքը և կայացված որոշմամբ լուծում ներկայացված պահանջի հիմնավորվածության ու իրավաչափության հարցը, ապա վերաքննիչ դատարանը, որպես կանոն, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայում է առաջին ատյանի դատարանի կողմից բողոքի առնչությամբ տրված լուծման հիմնավորվածությունը և իրավաչափությունը: Այդ համատեքստում վերաքննիչ դատարանի մատչելիությունն անձի համար երաշխավորվում է հենց այդ նպատակով՝ ստուգման ենթարկելու իր իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական ակտը: Հարկ է նկատել, որ այս սահմանով են տարանջատվում առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների գործառույթները, այդ դատարանների առջև դրված խնդիրները և հետապնդվող նպատակները: Հակառակ պարագայում, երբ վերաքննիչ դատարանն իր կարգավիճակով ստանձնի առաջին ատյանի դատարանի դերը, ոչ միայն կխախտվի այդ դատարանների միջև ձևավորված գործառութային կապը, այլ նաև անհամաչափորեն կսահմանափակվի անձի՝ վերաքննության մատչելիության իրավունքը, և վերջինս կգրկվի իր վերաբերյալ կայացված դատական ակտը ստուգման ենթարկելու հնարավորությունից:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գռո Դուրյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ՏԴ/0052/06/14 որոշման 19-րդ կետը:

- Հետաքննիչի՝ 2016 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ դիմող Հրայր Հովսեփյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով¹,

- որպես դիմողի ներկայացուցիչ հանդես եկող փաստաբան Ռ.Ահարոնյանի բողոքը Դատախազի՝ 2018 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ ևս մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ²,

- վերոնշյալ որոշումների դեմ Ռ.Ահարոնյանի բողոքն Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ մերժել է՝ վերջինիս՝ բողոք բերելու իրավասություն չունենալու պատճառաբանությամբ՝ **առանց ըստ էության քննարկման առարկա դարձնելու Ռ.Ահարոնյանի բողոքը և առանց անդրադառնալու վիճարկվող որոշումների իրավաչափության հարցին**³,

- Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ընթացակարգային բնույթի խախտումներով ներկայացված վերաքննիչ բողոքը՝ **ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու պահանջով**, Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ **թողնվել է առանց քննության՝ Ռ.Ահարոնյանի՝ բողոք բերելու իրավասություն չունենալու այդ նույն պատճառաբանությամբ**⁴:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, առանց քննարկման առարկա դարձնելու Առաջին ատյանի դատարանի որոշման հիմնավորվածությունը և իրավաչափությունը, առանց քննության է թողել Ռ.Ահարոնյանի բողոքն այն նույն հիմքով, որով Առաջին ատյանի դատարանը մերժել էր ըստ էության քննարկել նրա բողոքը: Նման պայմաններում, Ռ.Ահարոնյանի՝ բողոք բերելու իրավասության առնչությամբ Առաջին ատյանի դատարանի փաստարկը ստուգման չի ենթարկվել Վերաքննիչ դատարանի կողմից այն դեպքում, երբ այդ դատարանի գործառույթն էր Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգումը: Արդյունքում խախտվել է Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառույթային կապը, անհամաչափորեն սահմանափակվել անձի՝ վերաքննության մատչելիության իրավունքը, և վերջինս զրկվել է

¹ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

բողոք բերելու իրավասության բացակայության մասին Առաջին ատյանի դատարանի փաստարկը վերադաս դատարանի կողմից ստուգման ենթարկելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ բողոքարկման իրավասություն չունենալու հիմքով փաստաբան Ռ.Ահարոնյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր չէ:

II. Գործն ըստ էության չլուծող դատական ակտի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանի լիազորությունները

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. փաստաբան Ռ.Ահարոնյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման իրավաչափությունը ստուգելիս, Վճռաբեկ դատարանը, սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի առարկայով և սահմաններով, կարող է արդյո՞ք առանց գործը նոր քննության ուղարկելու կայացնել վերջնական որոշում և իրավունքի խախտումը փաստելով վերացնել այն՝ ապահովելով անձի հիմնարար իրավունքների պաշտպանության երաշխիքները:

19. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»:*

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:*

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով*

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի (...) դատական ակտերը՝ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից»:

20. Անձի դատական վերանայման իրավունքի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատական ակտի բողոքարկման օրենսդրական ընթացակարգով պետք է լիարժեք պաշտպանելի լինեն անձի՝ **առանց բացառության բոլոր իրավունքներն ու ազատությունները**: Սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համա- պատասխան երաշխիքների առկայությունը, որն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունը նաև վճռաբեկ վարույթում գնահատելու առումով¹,

- բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ **մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին**: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը²,

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՌ-690 որոշման 8-րդ կետը:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՌ-719 որոշման 5-րդ կետը:

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, **պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝** պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները¹:

20.1 Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի հատուկ իրավական կարգավիճակին՝ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- վճռաբեկության կարգով սահմանադրական իր վերահսկողական գործառույթի իրականացմամբ, **ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելիս և դատական սխալներն ուղղելիս Վճռաբեկ դատարանը բացառապես պետք է լուծի իրավունքի իրացման հարցեր²,**

- վճռաբեկ ատյանի մատչելիության իրավունքը պետք է ապահովվի՝ **հաշվի առնելով վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները³,**

- վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկման դեպքում վերանայման իրավունքի իրացման հնարավորությունն իրավաչափորեն **սահմանափակվում է վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով և գործառնական դերով⁴,**

- **Վճռաբեկ դատարանը գործն ըստ էության քննող դատարան չէ,** այլ ստուգում է դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը⁵,

- **Վճռաբեկ դատարանը չի իրականացնում փաստերի անմիջական հաստատման լիազորություն** և գործը վերանայում է նախորդ ատյանների դատարաններում հաստատված փաստերի շրջանակներում⁶:

20.2. Մինևույն ժամանակ, դատական վերանայման վերընթաց նվազման սկզբունքի առնչությամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՌ-936 որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՌ-690 որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ՍԴՌ-765 որոշման 12-րդ կետը:

⁴ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի հունվարի 19-ի թիվ ՍԴՌ-852 որոշման 7-րդ կետը:

⁵ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՍԴՌ-849 որոշման 7-րդ կետը:

⁶ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 2-ի թիվ ՍԴՌ-1452 որոշման 4.1-րդ կետը:

«1) վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքն ածանցվում է Սահմանադրության հիշյալ պահանջներից՝ համակցված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի հետ, և ենթադրում է վերանայման ծավալի սահմանափակում՝ առաջին արյանի դատարաններից մինչև Վճռաբեկ դատարան՝ «որքան ավելի բարձր է դատական արյանը, այնքան ավելի սահմանափակ է վերանայման ծավալը» կանոնի համաձայն,

2) ըստ էության դատական ակտերի վերանայումը վերադաս դատարանների հիմնական գործառույթն է՝ արդարադատության էությունը, իսկ նրանց այլ լիազորությունների շրջանակն օրենսդրի կողմից՝ Սահմանադրությամբ կանխորոշված դեպքերից բացի, կարող է էլ ավելի սահմանափակվել՝ ելնելով արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ապահովելու անհրաժեշտությունից,

3) գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը՝ ի փարբերություն գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման, կարող է իրականացվել միմյանցից զգալիորեն փարբերակված կանոնների համաձայն՝ այն հաշվով, որ պարզաձև կերպով ապահովվի գործն ըստ էության լուծող դատական ակտերի արդյունավետ և արդարացի քննությունը բոլոր դատական արյաններում, ուստի և կանխվի այդ հարցերով դատավարական շրջապտույթը և դրա ազդեցությունը բուն արդարադատության արդյունավետության վրա:

Վերոգրյալի փաստակյունից անդրադառնալով վերաքննիչ և վճռաբեկ արյաններում միջանկյալ դատական ակտերի վերանայման ծավալների խնդրին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքում որդեգրված լուծումները՝ վերաքննիչ արյանում վիճարկվող միջանկյալ դատական ակտերի շրջանակը սահմանափակելը, իսկ վճռաբեկ արյանում՝ այդ սահմանափակ շրջանակը հավելյալ՝ վճռաբեկ բողոքի ընդունելիության առավել բարդ **ընդհանուր նախադրյալների** հաղթահարման պահանջով զուգորդելը, ինքնին համահունչ են Սահմանադրության հիշյալ հոդվածների փրամաքանությանը¹:

21. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշման 4.6-րդ կետը:

ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրտեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքը չի ներառում վերաքննության իրավունքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ նախատեպային իրավունքում հետևողականորեն արտահայտվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Եվրոպական կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, **եթե ստեղծվել են, ապա պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից՝**

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այն հանգամանքը, թե Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը որքանով է կիրառելի վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների առնչությամբ, **կախված է այդ դատարաններում վարույթի առանձնահատկություններից**, դիտարկվելով իր ամբողջության մեջ՝ հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի առանձնահատուկ կարգավիճակը²:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերով ընդգծել է, որ հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի առանձնահատուկ դերը՝ համապատասխան ընթացակարգն այստեղ կարող է ավելի ֆորմալ լինել հատկապես այն պարագայում, երբ վճռաբեկ վերանայմանը նախորդում է գործի քննությունն առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում, որոնք **իրավասու են անդրադառնալու նաև փաստի հարցերին**³:

22. Դատական ակտերի վերանայման հայրենական մոդելի զարգացման պայմաններում հստակեցվել է ոչ միայն Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառնության կապը, այլ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի մարտի 22-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, կետ 125:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Sialkowska v. Poland* գործով 2007 թվականի մարտի 22-ի վճիռը, գանգատ թիվ 8932/05, կետ 104:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Levages Prestations Services v. France* գործով 1996 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 23920/93, 44-48-րդ կետեր, *Brualla Gómez de la Torre v. Spain* գործով 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 26737/95, 34-39-րդ կետեր, *Meftah and Others v. France [GC]* գործով 2002 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատներ թիվ 32911/96, 35237/97 և 34595/97, կետ 41:

նաև դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքը: Վերջինս արտացոլում է դատական ատյանների աստիճանակարգությանը համապատասխան դատական վերանայման ծավալի և ստորադաս դատական ատյանի համեմատ վերադաս դատական ատյանի լիազորությունների նվազումը¹: Այսինքն՝ դատական ատյանի բարձրության աստիճանը ուղիղ համեմատական է դատական վերանայման ծավալին. որքան բարձր է դատական ատյանը, այնքան դատական վերանայման առարկան առավել սահմանափակ է, ինչպես փաստել է նաև Սահմանադրական դատարանը²:

Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների գործառնության լիազորությունների հաշվառմամբ Սահմանադրական դատարանը քննարկվող սկզբունքի կապակցությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Սահմանադրությունն էապես փարբերակում է վճռաբեկ և վերաքննիչ արյանների դատարանների գործառնությունը և կարգավիճակը, ինչը չի կարող չանդրադառնալ նաև դատական սկզբունքի, հարկապես՝ միջանկյալ դատական սկզբունքի վերանայման ծավալի վրա, և որ ամեն դեպքում Սահմանադրությամբ ապահովված՝ վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքի ուժով դրանք չեն կարող չփարբերվել միմյանցից, հետևապես՝ **միջանկյալ դատական սկզբունքի և հարկապես կապանավորման իրավաչափության վերաբերյալ դատական սկզբունքի առնչությամբ վերաքննիչ դատարանի իրավասության ծավալն ավելին է, քան Վճռաբեկ դատարանինը**: Այս փարբերությունը կանխորոշված է Սահմանադրությամբ ամրագրված՝ Վճռաբեկ դատարանի գործառնությունից և կարգավիճակից ածանցվող իրավական նախադրյալներով, որոնք էապես ավելի բարձր շեմ են սահմանում վճռաբեկ բողոքի ընդունելիության համար, ինչն էլ, իր հերթին, կանխորոշում է Վճռաբեկ դատարանի կողմից դատական սկզբունքի վերանայման ծավալը»³:

Վերոնշյալ իրավական դիրքորոշման հաշվառմամբ պետք է փաստել, որ դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի համատեքստում, վերադաս դատական ատյանը, լինելով սահմանափակված վիճարկվող դատական ակտում քննարկված հարցերի

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Ռուբիկ Արշակունյացի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԱԲԱԿ/0021/01/08 որոշման 21-րդ կետը, որի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը՝ որպես վերանայող ատյան, գործի էության վերաբերյալ չի կարող ավելի լայն լիազորություններ ունենալ, քան առաջին ատյանի դատարանը:

² Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

³ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշման 4.6-րդ կետը:

շրջանակով՝ չի կարող իր վերստուգիչ լիազորությունն իրացնելիս անդրադառնալ ստորադաս դատարանում քննարկման առարկա չդարձված հանգամանքներին: Այլ կերպ, վերադաս դատական ատյաններում դատական վերանայման առարկան սահմանափակված է ստորադաս դատարաններում քննարկված հարցերով: Օրինակ՝ եթե Առաջին ատյանի դատարանը մերժել է անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելը՝ հանցանքի կատարման հիմնավոր կասկածի բացակայության հիմքով, իսկ Վերաքննիչ դատարանն էլ օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ իր հերթին հաստատելով հանցանքի կատարման հիմնավոր կասկածի բացակայությունը, ապա Վճռաբեկ դատարանը, ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերի հետ չհամաձայնելու և հանցանքի կատարման հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված համարելու դեպքում, չի կարող քննարկման առարկա դարձնել կալանավորման հիմքերի առկայության հարցը և կայացնել վերջնական որոշում: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը, սահմանափակված լինելով դատական վերանայման առարկայի ծավալով չի կարող քննարկել կալանավորման հիմքերի առկայության հարցը, որը չի քննարկվել ստորադաս դատական ատյաններում¹: Հակառակ մոտեցումը կհանգեցնի Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառնություն կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի խախտմանը: Ավելին, կխախտվեն նաև անձի՝ կալանավորման հիմքերի առկայության մասով դատարանի դիրքորոշումների օրինականությունը դատական ստուգման ենթարկելու մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքները:

Հետևաբար, եռաստիճան դատական համակարգի պայմաններում, որտեղ նաև իրավունքի զարգացման ներկայիս ժամանակաշրջանում հստակ տարանջատվել են դատական ակտերի վերանայման ձևերը, պետք է արձանագրել, որ դատական ատյաններն իրենց ունեցած գործառնությամբ առանձնահատկություններով պայմանավորված՝ չեն կարող «փոխարինել» միմյանց (վերոնշյալ օրինակում Վճռաբեկ դատարանը, կալանավորման

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԿ/0017/06/16 որոշումը: Այդ գործով ստորադաս դատարանները մերժել էին Է.Եղիազարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ նախաքննական մարմնի միջնորդությունը՝ հանցանքի կատարման հիմնավոր կասկածի բացակայության հիմքով, ինչի հետ Վճռաբեկ դատարանը չհամաձայնելով որոշում էր կայացրել ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու մասին, քանի որ կալանավորման այլ պայմանները և հիմքերը քննարկման առարկա չէին դարձվել ստորադաս դատական ատյաններում:

հիմքերը քննարկելու դեպքում, հանդես կգար որպես փաստեր հետազոտող և հաստատող առաջին ատյանի դատարան, ինչը համահունչ չէր լինի Վճռաբեկ դատարանի սահմանադրափրավական կարգավիճակին, ինչպես նաև վճռաբեկ վարույթին բնորոշ առանձնահատկություններին, որոնց մասին նշել է նաև Սահմանադրական դատարանը¹: Բացի այդ, կայացված որոշումը եռաստիճան դատական համակարգի պայմաններում բողոքարկման ենթակա լինել չէր կարող):

Ուստի, դատական ակտերի վերանայման կառուցակարգը գործադրելիս, պետք է պաշտպանել անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքները, ինչպես նաև ապահովել Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառնության կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումը: Այլ կերպ, անձի հիմնարար իրավունքների պաշտպանության նկատառումներից ելնելով՝ դատական ակտերի վերանայման կառուցակարգում հետևողականորեն պետք է երաշխավորել վերադատության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի անխախտելիությունը:

23. Օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործելով «նոր դատական ակտ» ձևակերպումը՝ չի հստակեցրել դրա դրսևորման ձևերը, ինչն ըստ էության գործնականում հանգեցրել է իրավական անորոշության՝ դրա մեկնաբանման առումով: Այդ համատեքստում հարկ է նկատի ունենալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները՝ իրավական անորոշությունը դատական պրակտիկայում հաղթահարելու վերաբերյալ: Մասնավորապես այն, որ՝

- շատ օրենքներ **անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է**²,

- նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձակապես սահմանափակվել՝ **նույնիսկ ոչ բավարար**

¹ Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշման 5-րդ կետը:

հատակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով¹,

- չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց՝ իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով, հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: **Գրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է²:**

Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում, որոշ դեպքերում, գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու ձևավորված իրավակիրառ պրակտիկան, Վճռաբեկ դատարանը, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով, «Արցախբանակ» ՓԲԸ-ի վերաբերյալ գործով 2011 թվականի մայիսի 11-ի որոշմամբ իրավական դիրքորոշում ձևավորեց այն մասին, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը պետք է ղեկավարվի գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերանայելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված լիազորություններով³:

Արդյունքում, անձի դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների, Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառնության կապի, դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումն ապահովելու նպատակով, ինչպես մինչև 2011 թվականը, այնպես էլ դրանից ի վեր, Վճռաբեկ և Վերաքննիչ դատարաններում ձևավորվել էր կայուն իրավակիրառ պրակտիկա՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելիս ղեկավարվել գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերանայելիս օրենսդրի կողմից սահմանված լիազորություններով, այդ թվում՝ գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու առումով:

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՌ-1270 որոշման 7-րդ կետը,

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *The Sunday Times v. the United Kingdom* գործով 1979 թվականի ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49, *Busiuc v. Moldova* գործով 2004 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 61513/00:

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ «Արցախբանակ» ՓԲԸ-ի գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴ/0003/11/10 որոշումը, կետ 11:

24. Սակայն, Սահմանադրական դատարանը 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշմամբ արտահայտեց հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) [Տ]արանջարելով Վճռաբեկ դատարանի լիազորությունները գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքերում, ինչպես նաև սահմանափակելով Վճռաբեկ դատարանի լիազորությունները գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքում **նոր դատական ակտեր ընդունելու պահանջով**, օրենսդիրը հետապնդել է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ **դատավարական շրջապարտյուր կանխելու**, ընդամին՝ այդ հարցերով **վճռաբեկ արյանում վերջնական իրավական դիրքորոշում ձևավորելու** և այն ամրագրելու միջոցով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ապահովելու նպատակներ:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ այս կարգավորումն ունի կանխարգելիչ բնույթ և ուղղված է **վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքի** րեասանկյունից գործով ըստ էության վերջնական որոշում կայացնելու հիմնական գործառույթի երաշխավորված ապահովմանը, ինչը հնարավոր չի լինի իրականացնել գործն ըստ էության չլուծող դատական ակտերի անվերջ վերանայման դեպքում:

Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի անվերջ վերանայման իրավական հնարավորությունը, որը կարող էր առկա լինել Վճռաբեկ դատարանի առավել ընդգրկուն լիազորությունների օրենսդրական ամրագրման դեպքում, կարող էր էականորեն ազդել ինչպես ստորադաս դատարաններում, այնպես էլ նույն վճռաբեկ արյանում փյայ գործի ըստ էության քննության վրա՝ խաթարելով դրա արդյունավետությունը: Ավելին՝ Սահմանադրական դատարանը գրնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերն անսահմանափակ վերանայելու հնարավորությունն օրենսդրորեն չկանխելը կարող էր վրանգել արդարադատության բուն գործառույթը, քանի որ անհնարին կլինեք կանխարեւել միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումների իրական կամ հնարավոր ազդեցությունը գործի ըստ էության լուծման վրա, ուստի՝ վերջնարդյունքում կա՛մ դատաքննության րեողությունը պեք է անհարկի երկարաձգվեք, կա՛մ դատարանները միջանկյալ դատական ակտերի քննությանը պեք է հարկադրված լինեին անդրադառնալ գործով ըստ էության որոշում կայացնելուց հեքո, ինչն անթույլարելի կլինեք»¹:

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշման 4.1-րդ կեքը:

Միևնույն ժամանակ, նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդգծել է. «(...) [Օ]րենսդիրը փարանջաւրել է կալանքի ձևով անձնական ազատությունից զրկելու ստնչութամբ մինչդարական վարույթի իրավաչափության նկարմամբ դարական վերահսկողության կառուցակարգերը փարբեր դարական արյաններում: Եթե առաջին արյանի դարարանն ամբողջ ծավալով պերք է նախապես վերահսկի կալանավորման իրավաչափությունը՝ այդ հարցով կայացնելով սկզբնական որոշում, ապա վերաքննիչ և վճռաբեկ արյանների դարարանները պերք է հերագայում որոշեն արդեն դարական սկրի իրավաչափության հարցը՝ համապարասխան բողոքի առկայության դեպքում և այդ բողոքի առարկայի շրջանակներում»¹:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթներին՝ Սահմանադրական դատարանը շեշտել է. «Որևէ դարարանի կողմից իրավունքի խախտումը փասրելը՝ առանց այն վերացնելու, նշանակում է չիրականացնել արդարադարություն, մինչդեռ, եթե դարարանը կոչված է վերանայելու արորադաս դարարանների դարական սկրերը (իսկ Վճռաբեկ դարարանի համար այդ պահանջն ուղակիորեն սահմանված է Սահմանադրության 171-րդ հողվածի 2-րդ մասում), ապա չի կարող չիրականացնել արդարադարություն, այսինքն, նաև չվերացնել հիմնական կամ այլ իրավունքների և ազարությունների խախտումները, հարկապես եթե արձանագրում է դրանք: Ակնհայտ է, որ որևէ նման օրենսդրական կառուցակարգ կամ դարական պրակրիկա հակասության մեջ կմրնեն Սահմանադրության 61-րդ հողվածի 1-ին մասի հեր, ընդ որում, նման դեպքերում երաշխավորված չեն լինի նաև արդար դարաքննության երաշխիքները»² (ընդգծումը՝ Վճռաբեկ դարարանի):

25. Նախորդ կետում մեջբերված՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում, Վճռաբեկ դատարանն ընդունելի է համարում այն պնդումը, որ գործն ըստ էության չլուծող դատական սկտերի վերանայումը, որպես կանոն, պետք է ավարտվի Վճռաբեկ դատարանում՝ խնդրո հարցի կապակցությամբ վերջնական որոշում կայացնելու միջոցով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ապահովելու նպատակներով:

Սակայն հիշյալ մոտեցումը, ինչպես նշել է նաև ՀՀ Ազգային ժողովը՝ Սահմանադրական դատարան ներկայացված դիրքորոշումներում, բացարձակ բնույթ կրել չի կարող, քանի որ գործնականում, որոշ դեպքերում, օբյեկտիվորեն անհնարին է լինում կայացնել վարույթի հետագա ընթացքը բացառող վերջնական որոշում, և Սահմանադրական

¹ Տե՛ս նույն որոշման 4.2-րդ կետը:

² Տե՛ս նույն որոշման 4.4-րդ կետը:

դատարանի կողմից մատնանշված՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման միակ ճանապարհը դառնում է գործը նոր քննության ուղարկելը, որի միջոցով միայն կարող են վերականգնվել անձի խախտված իրավունքներն ու ազատությունները:

Այլ կերպ, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի օրինականությունը ստուգելիս, **Վճռաբեկ դատարանը, գործը նոր քննության ուղարկելու իրավասության բացակայության պարագայում, օբյեկտիվորեն զրկված կլինի արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության անհրաժեշտ նախադրյալների ապահովման հնարավորությունից, որի կարևորության մասին նշել է Սահմանադրական դատարանը:** Ավելին, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի օրինականությունը ստուգելիս, **Վճռաբեկ դատարանը, գործը նոր քննության չուղարկելու պարագայում, որոշ գործերով ստիպված կլինի փաստել իրավունքի խախտումը՝ առանց այն վերացնելու,** ինչն ըստ Սահմանադրական դատարանի՝ կնշանակի չիրականացնել արդարադատություն, իսկ որպես արդյունք՝ կվտանգի ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված երաշխիքները:

Բացի այդ, հարկ է նկատել, որ Վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտի օրինականությունը վերանայելիս վերջնական որոշում կայացնելու և անձի իրավունքի խախտումը վերացնելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի դիրքորոշումը որոշ դեպքերում անիրագործելի կլինի՝ այդ կապակցությամբ վճռաբեկ բողոքի առարկայի բացակայության պատճառով: Այսպես.

Սահմանադրական դատարանն իրավացիորեն նշել է, որ **վճռաբեկ և վերաքննիչ ատյանների դատարանները պետք է որոշեն դատական ակտի իրավաչափության հարցը՝ համապատասխան բողոքի առկայության դեպքում և այդ բողոքի առարկայի շրջանակներում:** Սակայն գործնականում, որոշ դեպքերում, վճռաբեկ բողոքի առարկան սահմանափակված է լինում բացառապես ընթացակարգային բնույթի խախտումների վերաբերյալ ներկայացվող հիմնավորումներով՝ առանց անդրադառնալու ստորադաս դատարաններում ըստ էության վիճարկվող խնդրի իրավաչափության հարցին: Վերջինը պայմանավորված է այն հանգամանքով, որ բողոքաբերը, դիմելով Վճռաբեկ դատարան, պահանջում է արձանագրել ստորադաս դատարանի կողմից թույլ տրված իր իրավունքի **ընթացակարգային բնույթի** խախտման փաստը և այն վերացնելու նպատակով գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության, որտեղ հնարավոր կլինի ըստ էության քննության առնել իր կողմից վիճարկվող խնդրի իրավաչափության հարցը: Արդյունքում, Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ

հողվածի 1-ին մասով սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններով, օբյեկտիվորեն գրկված է լինում վերջնական որոշում կայացնելու հնարավորությունից: Հակառակ պարագայում, իրավունքի խախտման փաստն արձանագրելով գործն ըստ էության չլուծող դատական ակտի վերանայման վարույթն ավարտելու դեպքում, անձը գրկված կլինի ստորադաս դատարաններում վիճարկվող խնդրի իրավաչափությունն այլևս քննարկման առարկա դարձնելու հնարավորությունից, ինչը *prima facie* կվտանգի նրա արդար դատաքննության իրավունքը: Այսինքն՝ տվյալ պայմաններում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվող «նոր դատական ակտ» եզրույթը նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի իմաստով որպես «վերջնական որոշում» մեկնաբանելը համահունչ չի լինի վկայակոչված սահմանադրաիրավական երաշխիքներին:

Վերոգրյալի հիման վրա, պետք է արձանագրել, որ Վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերանայելիս անձի իրավունքի խախտումը փաստելով, որոշ դեպքերում այն կարող է արդար դատաքննության երաշխիքներին համահունչ վերականգնվել ոչ այլ կերպ, քան գործը նոր քննության ուղարկելու միջոցով:

26. Միննույն ժամանակ, հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1459 որոշման կայացումից հետո, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի օրինականությունը ստուգելիս, ոչ միայն իրավունքի խախտման փաստն արձանագրելու, այլ նաև անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության նկատառումներով, Վերաքննիչ դատարանում շարունակվում է ըստ էության չլուծող դատական ակտերը վերանայելիս գործերը նոր քննության ուղարկելու՝ նախկինում ձևավորված կայուն իրավակիրառ պրակտիկան¹: Ավելին, հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարանի՝ վերոնշյալ որոշման կայացումից հետո, Վերաքննիչ դատարանը 2019 թվականի հունիսի 10-ի որոշմամբ դիմել էր Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով գործն ըստ էության չլուծող դատական ակտերով գործը նոր քննության ուղարկելու հնարավորության առնչությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասի և 394-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը: Սահմանադրական դատարանը 2019 թվականի հունիսի 21-ի թիվ ՍԴԱՌ-54 որոշմամբ նշված գործը քննության ընդունելը մերժել էր՝ նշելով, որ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1459

¹ Տե՛ս օրինակ՝ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/0095/06/19 որոշումը, 2019 թվականի հուլիսի 8-ի թիվ ԵԴ/0312/06/19 որոշումը և այլն:

որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների, ինչպես նաև վերաբերելի օրենսդրական կարգավորումների հիման վրա դատարանները պետք է ձևավորեն համապատասխան դատական պրակտիկա:

27. Անփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով մի կողմից՝ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՄԴՌ-1459 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանի՝ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի կարգավորումների առնչությամբ Սահմանադրական դատարան ներկայացված դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանը, օրենքի կիրառման դատական պրակտիկայի միասնականության ապահովման սահմանադրական գործառնության իրացման համատեքստում փաստում է, որ թեև գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը, որպես կանոն, պետք է ավարտվի Վճռաբեկ դատարանում՝ վերջնական որոշում կայացնելու միջոցով, սակայն որոշ դեպքերում, անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների պաշտպանությունը, ինչպես նաև Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառնության կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումը կարող է ապահովվել միայն Վճռաբեկ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու արդյունքում: Այլ կերպ, այդ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից բացառապես գործը նոր քննության ուղարկելը կարող է լինել արդյունավետ միջոց՝ հետևողականորեն երաշխավորելու վերադասության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի անխախտելիությունը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որոշ դեպքերում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերով գործը նոր քննության ուղարկելու իրավասությունը կարող է լինել դատական վերանայման իրավունքի իրացման նախապայման և արդար դատաքննության իրավունքի (դատարանի մատչելիության, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման) երաշխիք: Նման դեպքում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի իրավաչափությունը ստուգելիս, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, պետք է կիրառելի լինեն գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերանայելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները: Միևնույն ժամանակ, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, վերաբերելի մասով (*mutatis mutandis*), կիրառելի են նաև

գործն ըստ էության չլուծված դատական ակտերը վերանայելիս Վերաքննիչ դատարանի նույնաբնույթ լիազորությունների նկատմամբ¹:

28. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- փաստաբան Ռ.Ահարոնյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ ստորադաս դատարանների կողմից անհիմն կերպով Հետաքննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու և Դատախազի՝ բողոքը մերժելու մասին որոշումների իրավաչափությունն **ըստ էության քննության չառնելու**, Առաջին ատյանի դատարանի եզրահանգման իրավաչափությունը Վերաքննիչ դատարանի կողմից **դատական ստուգման չենթարկելու և նույն պատճառաբանությամբ** վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման դեմ, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ²,

- **վճռաբեկ բողոքի առարկան սահմանափակված է բացառապես վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից քննության չառնելու իրավաչափության ստուգման հիմնավորումներով³:**

29. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 19-27-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը մի կողմից՝ **սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի առարկայով և սահմաններով**, մյուս կողմից՝ **ապահովելով բողոքաբերի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքները**, օբյեկտիվորեն զրկված է, սույն որոշման 17-րդ կետում նշված իրավունքի խախտման փաստի արձանագրման պայմաններում իրավունքի խախտումը վերացնելու և գործով վերջնական որոշում կայացնելու հնարավորությունից:

Մասնավորապես, գործը ստորադաս դատարան նոր քննության չուղարկելու պարագայում, անձի՝ արդար դատաքննության իրավունքի խախտումը փաստելուց զատ, անհնարին կլինի այն գործնականորեն վերականգնելը: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքն ըստ էության քննարկման առարկա չի դարձվի և չի ապահովվի անձի՝ Վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքը: Ավելին, վճռաբեկ բողոքի համապատասխան առարկայի բացակայության պայմաններում, Վերաքննիչ դատարանի որոշումը հնարավոր ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում, բողոքաբերը կզրկվի նաև

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԳ/0003/11/10 որոշման 11-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը:

Հետաքննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու և Դատախազի՝ բողոքը մերժելու մասին որոշումների իրավաչափությունը դատական ստուգման ենթարկելու հնարավորությունից, որպիսի մոտեցումն անհամատեղելի կլինի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքի հետ:

Այսինքն՝ տվյալ պարագայում անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների պաշտպանությունը, ինչպես նաև Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառության կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումը կարող է ապահովվել միայն Վճռաբեկ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու արդյունքում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փաստաբան Ռ.Ահարոնյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու որոշման իրավաչափությունը ստուգելիս, Վճռաբեկ դատարանը, սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի առարկայով և սահմաններով, չի կարող կայացնել վերջնական որոշում և իրավունքի խախտումը փաստելով վերացնել այն՝ առանց գործը նոր քննության ուղակելու՝ ապահովելով անձի հիմնարար իրավունքների պաշտպանության երաշխիքները:

30. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար: Վերաքննիչ դատարանը նոր քննության ընթացքում պետք է քննարկման առարկա դարձնի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Հրայր Սվյատոսլավի Հովսեփյանի ներկայացուցիչ Ռ.Ահարոնյանի՝ բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴՅ/0018/06/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 8-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի նոյեմբերի 12-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասի, 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 20860118 քրեական գործը:

Նախաքննական մարմնի՝ 2018 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ Ստեփան Միխայիլի Միրզոնը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով:

2. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ Ստեփան Միրզոնի

նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

3. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ մերժվել է Ս.Միրզոյանին կալանքի տակ պահելու ժամկետը 2 ամսով երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը:

4. Վերոնշյալ որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի հունվարի 8-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

5. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ վարույթ է ընդունվել¹:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 8-ի որոշումը ՀՀ Կոտայքի մարզի դատախազությունում ստացվել է 2018 թվականի դեկտեմբերի 10-ին²:

7. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով ՀՀ Կոտայքի մարզի դատախազության դատախազ Թ.Թադևոսյանի վերաքննիչ բողոքը, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Դատախազ Թ.Թադևոսյանի վերաքննիչ բողոքի և գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը հրապարակվել է 2018 թվականի դեկտեմբերի 08-ին: Որոշման օրինակը՝ Կոտայքի մարզի դատախազություն է սրացվել 2018 թվականի դեկտեմբերի 10-ին: Հերևաբար՝ դատախազ Թ.Թադևոսյանի համար վիճարկվող դատական ակտի բողոքարկման ժամկետի ընթացքը սկսվել է 2018 թվականի դեկտեմբերի 11-ին՝ ժամը 00:00-ից և ավարտվել՝ նույն թվականի դեկտեմբերի 17-ին՝ ժամը 24:00-ին (ժամկետի լրանալը

¹ Ծանոթություն. Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-66 որոշումը ստանալուց հետո:

² Տե՛ս նյութեր, թերթ 105:

համընկել է ոչ աշխատանքային օրվան՝ 2018 թվականի դեկտեմբերի 15-ին): Սակայն, վերաքննիչ բողոքը փոստին է հանձնվել 2018 թվականի դեկտեմբերի 18-ին»¹:

8. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ ՀՀ Կոտայքի մարզի դատախազության դատախազ Թ.Թադևոսյանի վերաքննիչ բողոքը, փոստային առաքման միջոցով, RR248708765AM բեռնային համարով ուղարկվել է Վերաքննիչ դատարան²: «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև «Հայփոստ» ՓԲԸ) պաշտոնական կայքէջի համաձայն՝ RR248708765AM բեռնային համարով առաքանին հաճախորդից ընդունվել է 2018 թվականի դեկտեմբերի 17-ին³:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, ինչի արդյունքում կայացրել է անհիմն և անօրինական դատական ակտ:

Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ թեև Վերաքննիչ դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ բողոք ներկայացնելու ժամկետի ընթացքն ավարտվել է 2018 թվականի դեկտեմբերի 17-ին՝ ժամը 24:00-ին, սակայն առանց պատճառաբանության եզրահանգել է, որ վերաքննիչ բողոքը փոստին է հանձնվել նույն թվականի դեկտեմբերի 18-ին՝ օրենքով սահմանված ժամկետից 1 օր անց: Մինչդեռ բողոքը փոստային ծառայությանը հանձնվել է 2018 թվականի դեկտեմբերի 17-ին, ինչի մասին է վկայում թիվ RR248708765AM բեռնային համարով փոստային առաքման վերաբերյալ «Հայփոստ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջում առկա համապատասխան տեղեկատվությունը: Նշվածից հետևում է, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է ժամկետի պահպանմամբ, որպիսի պայմաններում, Վերաքննիչ դատարանը բողոքը պետք է ընդուներ վարույթ և քննության առնել:

10. Վերոշարադրյալի հիման վրա, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 8-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 108-110:

² Տե՛ս նյութեր, թերթ 106:

³ Տե՛ս <https://www.haypost.am/hy/track-and-trace>:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք ՀՀ Կոտայքի մարզի դատախազ Թ.Թադևոսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

12. ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *«Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ (...) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ *«Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է՝*

(...) բողոքարկել դատարանի դատավճիռները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումներ»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից հետևում, որ դատախազը, լինելով հանրային իշխանության մարմին, քրեական դատավարությունում հանդես է գալիս որպես մեղադրանքի կողմ և օժտված է որոշակի լիազորություններով, որոնց թվում է նաև՝ դատարանի դատավճիռները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումները բողոքարկելու լիազորությունը: Դատական ակտերը բողոքարկելու դատախազի իրավունքը սերտորեն փոխկապված է դատախազության ընդհանուր գործառույթի հետ, քանի որ այն օրենքի կիրառումն ապահովելու և մինևույն ժամանակ արդարադատության համակարգն ավելի արդյունավետ դարձնելուն օժանդակող միջոցներից մեկն է:

12.1 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 3.Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին: Ժամկետն ամիսներով կամ տարիներով հաշվելիս ժամկետը վերջանում է վերջին ամսվա համապատասխան օրը (...): Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը (...)*

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ (...):»:

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Նարեկ Հարությունյանի գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՆԴ/0081/01/14 որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վերաքննիչ բողոք բերվում են՝

(...)

3) առաջին աստիճանի դատարանի՝ կայանավորման, կայանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

13. Վճռաբեկ դատարանը, դատախազի՝ դատական ակտերի բողոքարկման սահմանադրական գործառույթի համատեքստում անդրադառնալով դատական ակտերի բողոքարկման դատավարական ժամկետների պահպանության ստուգման հարցին, կրկնում է, որ դատախազի՝ դատական ակտերի բողոքարկման սահմանադրական գործառույթի պատշաճ իրացումն ապահովելու համար, ներկայացված բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելիս, դատարանների եզրահանգումները պետք է հիմնվեն հստակ և որոշակի փաստական հանգամանքների վրա: Մասնավորապես, առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելիս որպես հիմք կարող են ընդունվել փոստային անդորրագրի, «Հայփոստ» ՓԲԸ-ի կայքէջի, համապատասխան հարցում կատարելու և այլ միջոցներով ձեռք բերված տվյալները¹:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին աստիճանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 8-ի որոշումը ՀՀ Կոտայքի մարզի դատախազությունում ստացվել է 2018 թվականի դեկտեմբերի 10-ին²,

- ՀՀ Կոտայքի մարզի դատախազության դատախազ Թ.Թադևոսյանի վերաքննիչ բողոքը, փոստային առաքման միջոցով, ուղարկվել է Վերաքննիչ դատարան: «Հայփոստ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջի համաձայն՝ նշված փոստային առաքանին հաճախորդից ընդունվել է 2018 թվականի դեկտեմբերի 17-ին³,

- Վերաքննիչ դատարանը ՀՀ Կոտայքի մարզի դատախազության դատախազ Թ.Թադևոսյանի բողոքը թողել է առանց քննության՝ նշելով, որ Առաջին աստիճանի դատարանի դատական ակտի վերաքննիչ բողոքարկման ժամկետի ընթացքը սկսվել է 2018 թվականի դեկտեմբերի 11-ին՝ ժամը 00:00-ից և նկատի ունենալով, որ ժամկետի լրանալը համընկել է ոչ աշխատանքային օրվան, հետևաբար ժամկետի վերջին օրը պետք է հաշվել

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վարդգես Գասպարիի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԳ/0067/11/16 որոշումը, 15-րդ կետ, *Սնդրանիկ Խաչատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ ՇԳ-2/0049/01/17 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ը, սակայն վերաքննիչ բողոքը փոստին է հանձնվել նույն թվականի դեկտեմբերի 18-ին¹:

15. Վերլուծելով վերոշարադրյալ փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև Վերաքննիչ դատարանը հանգել է ճիշտ հետևության առ այն, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերաքննիչ բողոքարկման ժամկետի վերջին օրը **2018 թվականի դեկտեմբերի 17-ն** է, սակայն ոչ հիմնավոր եզրահանգում է կատարել բողոքը ժամկետանց լինելու մասին: Մասնավորապես՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ ՀՀ Կոտայքի մարզի դատախազության դատախազ Թ.Թադևոսյանի վերաքննիչ բողոքը, փոստային առաքման միջոցով, **2018 թվականի դեկտեմբերի 17-ին** ուղարկվել է Վերաքննիչ դատարան, ինչը հավաստվում է «Հայփոստ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջում առկա տվյալներով²: Հետևաբար ՀՀ Կոտայքի մարզի դատախազության դատախազ Թ.Թադևոսյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարան է ուղարկվել սահմանված ժամկետում:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքարկման ժամկետը բաց թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնված չէ հստակ և որոշակի փաստական տվյալների վրա:

Ուստի, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ Կոտայքի մարզի դատախազության դատախազ Թ.Թադևոսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 23-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար³:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի դատախազի վերաքննիչ բողոքը:

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-րդ և 423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Ստեփան Միխայիլի Միրզոնի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 8-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0606/01/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 29-ի որոշման դեմ Վաչագան Աշոտի Ավդալյանի պաշտպան Լ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի հուլիսի 4-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթուն բաժնում հարուցվել է թիվ 09170018 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ Վաչագան Աշոտի Ավդալյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, 117-րդ և 118-րդ հոդվածներով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ Վ.Ավդալյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և 117-րդ հոդվածով՝ երկու դրվագով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ Վ.Ավդալյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, որի ժամկետը հետագայում երկարացվել է:

2018 թվականի օգոստոսի 8-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ թիվ ԵԴ/0606/01/18 քրեական գործը, ըստ մեղադրանքի Վաչագան Ավդալյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և 117-րդ հոդվածով՝ երկու դրվագով, ընդունվել է վարույթ:

2018 թվականի օգոստոսի 22-ին Առաջին ատյանի դատարանը, քննության անելով ամբաստանյալ Վ.Ավդալյանի նկատմամբ մինչդատական վարույթի ընթացքում որպես խափանման միջոց ընտրված և երկարացված կալանավորման վերացման, փոփոխման կամ պահպանման հարցը, որոշել է Վ.Ավդալյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պահպանել նաև գործի դատական քննության ընթացքում:

3. Վ.Ավդալյանի պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Վ.Ավդալյանի պաշտպան Լ.Ասլանյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 8-ի որոշմամբ պաշտպանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ թիվ ԵԴ/0606/01/18 քրեական գործը՝ ըստ մեղադրանքի Վաչագան Ավդալյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և 117-րդ հոդվածով՝ երկու դրվագով, միացվել է թիվ ԵԴ/0367/01/18 քրեական գործին՝ ըստ մեղադրանքի Վաչագան Ավդալյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, 113-րդ հոդվածի 1-ին մասով, 137-րդ

հողվածի 1-ին մասով, և նշանակվել է դատական քննության: Նույն որոշմամբ Վ.Ավդալյանի նկատմամբ մինչդատական վարույթի ընթացքում ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու, փոփոխելու կամ անփոփոխ թողնելու հարցը քննարկելու համար նշանակվել է դատական նիստ՝ 2018 թվականի սեպտեմբերի 4-ին:

6. 2018 թվականի սեպտեմբերի 4-ի դատական նիստի ընթացքում, պաշտպան Լ.Ասլանյանը միջնորդել է վերացնել իր պաշտպանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը և կիրառել չհեռանալու մասին ստորագրությունը, կամ կալանավորման այլընտանքային խափանման միջոց գրավի կիրառումը ճանաչել թույլատրելի՝ սահմանելով գրավի ողջամիտ չափ:

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ Վ.Ավդալյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնվել է անփոփոխ, իսկ պաշտպանի միջնորդությունը՝ որպես կալանավորման այլընտանքային խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ, մերժվել է:

8. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ Վ.Ավդալյանի պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

9. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Վ.Ավդալյանի պաշտպան Լ.Ասլանյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 16-ի որոշմամբ պաշտպանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ: 2019 թվականի ապրիլի 11-ին Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու վերաբերյալ՝ արձանագրելով, որ նոր քննության ընթացքում վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առնի Վ.Ավդալյանի պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը¹: Գործի նոր քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2019 թվականի օգոստոսի 26-ին որոշում է կայացրել Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 4-ի որոշման դեմ բերված՝ պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին²: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2019 թվականի օգոստոսի 26-ի որոշման

¹ Տե՛ս www.datalex.am դատական տեղեկատվական համակարգ, Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԵԴ/0606/01/18 որոշումը:

² Տե՛ս www.datalex.am դատական տեղեկատվական համակարգ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 29-ի թիվ ԵԴ/0606/01/18 որոշումը:

դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ մերժվել է¹:

10. Վերաքննիչ դատարանը, պաշտպանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին 2018 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Պաշտպան Լ.Ասլանյանի կողմից վերաքննության կարգով բողոքարկվել է Առաջին աստիճանի դատարանի՝ դատաքննության ընթացքում կայացված՝ ամբաստանյալ Վաչագան Ավդալյանի նկարումամբ դեռևս մինչդատարանական վարույթի ընթացքում որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պահպանելու վերաբերյալ որոշումը, որն ընդգրկված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածով նախատեսված Վերաքննիչ դատարան բողոքարկման ենթակա ակտերի շարքում (...):

(...) Վերաքննիչ դատարանը՝ գտնում է, որ պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոք բերվել է այնպիսի դատարանական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ: Մասնավորապես, բողոքաբերի պնդմամբ, սույն գործով Վերաքննիչ դատարանը խախտել է Վ.Ավդալյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները, ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներ: Բողոքաբերը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, նշել է, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի իրեն ազատությունից զրկելու որոշումը բողոքարկելու իրավունք, մինչդեռ Վերաքննիչ դատարանը ներկայացված վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության:

12. Մինևույն ժամանակ բողոք բերած անձը, անդրադառնալով Առաջին աստիճանի դատարանի կայացրած դատական ակտին, գտել է, որ այն ևս անհիմն է և չպատճառաբանված: Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերը փաստել է, որ Առաջին աստիճանի դատարանը միջնորդության քննարկման ժամանակ որևէ անդրադարձ չի կատարել պաշտպանության կողմի հնչեցրած առարկություններին:

¹ Տե՛ս www.datalex.am դատական տեղեկատվական համակարգ, Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԴ/0606/01/18 որոշումը:

² Տե՛ս նյութեր, թերթեր 43-44:

Բացի այդ, բողոքաբերի պնդմամբ, դատարանն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, որ վերացել է կալանավորման հիմքը՝ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը: Բողոքաբերը նաև փաստել է, որ գործի դատական քննության ներկա փուլում հացաքննված են բոլոր վկաները և տուժողները, իսկ Վ.Ավդալյանն ազատության մեջ գտնվելու ժամանակահատվածում որևէ ազդեցություն չի ունեցել դատավարության մասնակիցների նկատմամբ: Ինչ վերաբերում է կալանավորման մյուս հիմքին՝ օրենքով արգելված արարք կատարելուն, ապա բողոքաբերը նշել է, որ այն ևս անհիմն է, քանի որ պետք է հաշվի առնել անմեղության կանխավարկածը, իսկ իր պաշտպանյալի նկատմամբ առկա չէ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ:

13. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 29-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնելով Վ.Ավդալյանի նկատմամբ խափանման միջոց ընտրված կալանավորումը և նրան ազատել արգելանքից:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից Վ.Ավդալյանի պաշտպանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումն այն պատճառաբանությամբ, որ մինչդատական վարույթի ընթացքում որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պահպանելու վերաբերյալ որոշումը ընդգրկված չէ վերաքննիչ դատարան բողոքարկման ենթակա ակտերի շարքում:

15. ՀՀ Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՄԴՈ-1421 որոշմամբ անդրադառնալով գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննության արդյունքում կայացված որոշման բողոքարկման հնարավորությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«(...) [Գ]ործը դատական քննության նախապատրաստելու փուլում վիճարկվող իրավակարգավորման ուժով մեղադրյալի նկատմամբ անձնական ազատության իրավունքի սահմանափակում նախատեսող խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունվում է որոշում (Օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մաս), որն, ի թիվս այլնի, Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետի, ինչպես նաև Օրենսգրքի 73-րդ հոդվածի 15-րդ կետի ուժով կարող է բողոքարկվել

մեղադրյալի, նրա պաշտպանի կողմից (...): Ուստի և, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումը խնդրահարույց չէ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համարեքսպում այն առումով, որ Օրենսգրքում, մասնավորապես, առկա են կալանքի՝ որպես խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունված որոշման դատական բողոքարկման (ստուգման) օրենսդրական երաշխիքներ (...):»¹:

16. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը, վերանայելով *Մուշ Ղալալյանի* գործով արտահայտած իրավական դիրքորոշումները², *Գարիկ Սարգսյանի* գործով փաստել է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու (այդ թվում նաև՝ կալանավորումը վերացնելու կամ այլ խափանման միջոցով փոխարինելու միջնորդությունը մերժելու) մասին որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով³:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ այն պատճառաբանությամբ, որ պաշտպանի կողմից վերաքննության կարգով բողոքարկվել է Առաջին ատյանի դատարանի՝ դատաքննության ընթացքում կայացված՝ ամբաստանյալ Վ.Ավդալյանի նկատմամբ դեռևս մինչդատական վարույթի ընթացքում որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պահպանելու վերաբերյալ որոշումը, որն ընդգրկված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածով նախատեսված՝ վերաքննիչ դատարան բողոքարկման ենթակա ակտերի շարքում⁴:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 15-16-րդ կետերում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքարկվել է գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ կալանավորումն անփոփոխ թողնելու մասին որոշումը:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԳՈ-1421 որոշման 4.2-րդ կետը:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մուշ Ղալալյանի* գործով 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԲԲԴ/0299/01/08 որոշման 21-րդ կետը:

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարիկ Սարգսյանի* գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԵԿԴ/0294/01/17 որոշման 14-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի կողմից Վ.Ավդալյանի պաշտպանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը՝ այն պատճառաբանությամբ, որ դեռևս մինչդատական վարույթի ընթացքում որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պահպանելու վերաբերյալ որոշումը ընդգրկված չէ դատարան վերաքննիչ բողոքարկման ենթակա ակտերի շարքում:

19. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել քրեադատավարական օրենքի պահանջի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկել համար: Սակայն հաշվի առնելով, որ թիվ ԵԴ/0606/01/18 քրեական գործը միացվել է ԵԴ/0367/01/18 քրեական գործին, որոնք դատական քննության նախապատրաստելու փուլում Առաջին ատյանի դատարանի կողմից 2018 թվականի սեպտեմբերի 4-ին կայացվել է Վ.Ավդալյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին որոշում, որի օրինականությունն ու հիմնավորվածությունը Վ.Ավդալյանի պաշտպան Լ.Ասլանյանն ըստ էության վիճարկելու հնարավորություն է ունեցել, արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ մերժվել է¹, Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում բողոքարկված դատական ակտի բեկանումը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, ճանաչել Վ.Ավդալյանի իրավունքի խախտման փաստը, իսկ ստորադաս դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

20. Ելնելով վերոշարադրյալից, ինչպես նաև այն հանգամանքից, որ բողոքաբերի կողմից բարձրացված՝ սույն որոշման 14-րդ կետում ներկայացված փաստարկները կոնկրետ գործով Վերաքննիչ դատարանի կողմից քննարկման առարկա չեն դարձվել, Վճռաբեկ դատարանը դրանց չի անդրադառնում:

¹ Տե՛ս սույն որոշման 5-11-րդ կետերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Ճանաչել Վաչագան Աշոտի Ավդալյանի իրավունքի խախտման փաստը:
3. Վաչագան Աշոտի Ավդալյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 29-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0312/06/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Սերգեյ Անատոլիի Սմոլնիկովի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 8-ի որոշման դեմ պաշտպան Ս.Մանուկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի Նուբարաշենի բաժանմունքում 2019 թվականի մայիսի 6-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12180219 քրեական գործը:

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Գ.Ազարյանի՝ 2019 թվականի մայիսի 8-ի որոշմամբ քրեական գործն ընդունվել է վարույթ:

Սերգեյ Անատոլիի Սմոլնիկովը 2019 թվականի մայիսի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունը կատարելու կասկածանքով ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 24-ի որոշմամբ Սերգեյ Անատոլիի Սմոլնիկովը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի մայիսի 25-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը՝ մեղադրյալ Ս.Սմոլնիկովի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, մերժվել է:

3. Դատախազ Ա.Մուրադյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 25-ի որոշումը բեկանել է և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ Ս.Սմոլնիկովի պաշտպան Ս.Մանուկյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Մ]եղադրյալի կողմից հանցագործության առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայության մասին հետևության գալով Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, ինչն իր քննությամբ էական է, քանի որ կարող էր ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հիմք է բողոքարկված դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ, Վերաքննիչ

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառված նորմերի հետ փոխկապակցված քրեադատավարական նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

դատարանը գրնում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալն այնպիսին է, որ Վերաքննիչ դատարանին գրկում է վերաքննիչ բողոքում արժարժված կալանավորման հիմքերի առկայության հարցը քննարկման առարկա դարձնելու հնարավորությունից: Հերևաբար, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ դատախազի բողոքը պետք է բավարարել, Առաջին ատյանի դատարանի (...) որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ խախտվել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքը:

Բողոքաբերը փաստել է, որ մեղադրյալ Ս.Սմոլնիկովի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց չկիրառելու (քննիչի միջնորդությունը մերժելու) վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման հիմնավորվածությունը և օրինականությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունը, մինչդեռ պետք է կիրառեր նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված լիազորությունը, որպիսի հետևությունները բխում են ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1459 որոշումից:

Ըստ բողոքաբերի՝ ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումից բխում է, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու իրավաչափությունը գնահատելու մասով Վերաքննիչ դատարանը պետք է ղեկավարվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասով իրեն տրված լիազորությամբ, որի շրջանակները հատուկ դրույթների միջոցով հստակեցված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասում և հնարավորություն են ընձեռում Վերաքննիչ դատարանին կայացնել վերջնական որոշում:

7. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 8-ի որոշումը բեկանել և կայացնել նոր դատական ակտ:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 49-60:

Վճարելի դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավասու էր արդյո՞ք Վերաքննիչ դատարանը գործն ըստ էության չլուծող դատական ակտը՝ մեղադրյալ Ս.Սմոլնիկովի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց չկիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը, բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

9. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝*

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պարճատարանված, ապա վերաքննիչ դատարանը պարճատարանում է անփոփոխ թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապարասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղարկվում է համապարասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մերժում է օրինական ուժի մեջ. (...)

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հասարարած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում քաղաքացիական հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

2. Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մերժում կայացման պահից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը՝

1) մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պարճատարանված, ապա վճռաբեկ դատարանը պարճատարանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապարասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապարասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ. (...)

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է համապարասխան ստորադաս դատարանի ակտը, եթե համապարասխան ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

6) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում վճռաբեկ դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին արյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պարճատարանում է առաջին արյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պարճատարանված:

2. Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից»:

10. ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1459 որոշման համաձայն՝ «(...) [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվող] «նոր դատական ակտ» եզրույթը չի նույնանում Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դատական ակտերից որևէ մեկի հետ և օրենսդիրը, կիրառելով «նոր դատական ակտ» եզրույթը, նկատի չի ունեցել հիշյալ հոդվածի 1-ին մասում

թվարկված այն լիազորությունները, որոնք վերապահված են Վճռաբեկ դատարանին՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման դեպքերում: Սա վերաբերում է նաև միջանկյալ դատական ակտերի վերանայման՝ միճարկվող դրույթի հետք համակարգային առումով փոխկապակցված՝ Օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նույնական ձևակերպման ամրագրման նպատակին: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ «նոր դատական ակտ» եզրույթն օրենսդիրը գործածել է Օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի խնամքով (...):»¹:

11. Օրենքի կիրառման դատական պրակտիկայի միասնականության ապահովման սահմանադրական գործառույթի իրացման համատեքստում անդրադառնալով գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վերադաս դատական ատյանների լիազորություններին՝ Վճռաբեկ դատարանը Հրայր Հովսեփյանի գործով իրավական դիրքորոշումներ է արտահայտել, այն մասին, որ. «(...) [Թ]եև գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը, որպես կանոն, պետք է ավարտվի Վճռաբեկ դատարանում վերջնական որոշում կայացնելու միջոցով, սակայն որոշ դեպքերում, անձի՝ դատարանի մարչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների պաշտպանությունը, ինչպես նաև Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառույթային կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումը կարող է ապահովվել միայն Վճռաբեկ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու արդյունքում: Այլ կերպ, այդ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից բացառապես գործը նոր քննության ուղարկելը կարող է լինել արդյունավետ միջոց՝ հետևողականորեն երաշխավորելու վերադասության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի անխախտելիությունը:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որոշ դեպքերում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերով գործը նոր քննության ուղարկելու իրավասությունը կարող է լինել դատական վերանայման իրավունքի իրացման նախապայման և արդար դատաքննության իրավունքի (դատարանի մարչելիության, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման) երաշխիք: Մնան դեպքում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի իրավաչափությունը ստուգելիս, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, պետք է կիրառելի լինեն գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերանայելիս ՀՀ քրեական դատավարության

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1459 որոշումը:

օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները: Միևնույն ժամանակ, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, վերաբերելի մասով (*mutatis mutandis*), կիրառելի են նաև գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերանայելիս Վերաքննիչ դատարանի նույնաբնույթ լիազորությունների նկատմամբ¹ (...):»²:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը մերժել է նախաքննության մարմնի միջնորդությունը՝ մեղադրյալ Ս.Սմոլնիկովի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ³:

- Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ այն պատճառաբանությամբ, որ Առաջին ատյանի դատարանի թույլ տրված դատական սխալը Վերաքննիչ դատարանին գրկում է վերաքննիչ բողոքում մատնանշված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցը քննարկման առարկա դարձնելու հնարավորությունից⁴:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-11-րդ կետերում վկայակոչված իրավադրությունների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը իրավասու էր գործն ըստ էության չլուծող դատական ակտը՝ մեղադրյալ Ս.Սմոլնիկովի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց չկիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը, բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

14. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 8-ի որոշումն օրինական է և հիմնավորված: Հետևաբար, վճռաբեկ բողոքը պետք է մերժել, Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 8-ի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ «Արցախբանակ» ՓԲԸ-ի գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴԻ/0003/11/10 որոշման 11-րդ կետը:

² Մանրամասն տե՛ս Հրայր Հովսեփյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴԻ/0426/11/18 որոշումը:

³ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

հողվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Սերգեյ Անատոլիի Սմոլնիկովի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 8-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴՎ/0002/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դիմող Ժենիկ Լևոնի Հովսեփյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 20-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում 2016 թվականի դեկտեմբերի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի և 244-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 57131916 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ Նիկողոս Արամայիսի Աստոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի դեկտեմբերի 30-ի որոշմամբ Խաչիկ Լևոնի Հովսեփյանը ճանաչվել է տուժող: Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ Փենիկ Լևոնի Հովսեփյանը ճանաչվել է տուժող Խ.Հովսեփյանի իրավահաջորդ:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է, Ն.Անտոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով իրականացված քրեական հետապնդումը դադարեցվել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Արմավիրի մարզի դատախազ Վ.Հովհաննիսյանի՝ 2018 թվականի հունվարի 8-ի որոշմամբ՝ նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի որոշման դեմ Ժ.Հովսեփյանի բողոքը մերժվել է:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ դիմող Ժ.Հովսեփյանի բողոքը բավարարվել է, վարույթն իրականացնող մարմինը պարտավորեցվել է վերացնել քրեական գործով տուժող Խ.Հովսեփյանի (տուժողի իրավահաջորդ Ժ.Հովսեփյանի) խախտված իրավունքները:

3. Արմավիրի մարզի դատախազության դատախազ Մ.Տիգրանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի մարտի 20-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վերաքննիչ դատարանը, առանց ըստ էության քննության առնելու դատախազի բողոքը և հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածին, իր որոշմամբ փաստել է. «(...) [Ե]լնելով դատարանի արյանների գործառնության և ինստիտուցիոնալ տարանջատման սկզբունքներից՝ օրենսդիրը սահմանել է յուրաքանչյուր հաջորդող դատարանի արյան բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների տարբերակված շրջանակ, մասնավորապես՝ վերաքննիչ բողոքարկման իրավունքով օժտել է մեղադրողին և վերադաս դատախազին, ինչն էլ Վերաքննիչ դատարանի գնահատմամբ որևէ կերպ չի սահմանափակում դատախազի՝ անսահմանափակ բողոքարկման իրավունքի կենսագործումը, քանզի ն՝ մեղադրողը, ն՝ վերադաս դատախազը քրեադատավարական օրենսդրության և դատախազության միասնական համակարգի հասկացության իմաստով ևս հանդիսանում են դատախազներ:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ՀՀ Արմավիրի մարզի դատախազության դատախազ Մ.Տիգրանյանը փոխյալ բողոքի քննության կապակցությամբ չի կարող համարվել ոչ միայն վերադաս դատախազ, այլև մեղադրող, քանզի քրեական գործն ըստ էության լուծման համար դատարանի վարույթում չէ և վերջինս էլ չի հանդիսանում այդ գործով մեղադրանքը դատարանում պաշտպանող դատախազ: Ասվածն առավել հարկանշական է դառնում այն հանգամանքի լույսի ներքո, որ ՀՀ Արմավիրի մարզի դատախազ Վ.Հովհաննիսյանն է հենց հանդիսանում իր՝ 2018 թվականի հունվարի 8-ի բողոքը մերժելու մասին որոշման անձի իրավունքների և ազատությունների խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ արտահայտված տեսակետների «սեփականարերը», իսկ օրենսդրի կամքն ուղղված է այն գաղափարին, որ այդ տեսակետներն արտահայտած դատախազի ստորադաս դատախազը չներկայացնի վերաքննիչ բողոք՝ ի պաշտպանություն վերադաս դատախազի տեսակետների, մինչդեռ այդ որոշումն ըստ էության գնահատման ենթարկված Առաջին արյանի դատարանի դատարանի սկզբի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել միայն ՀՀ Արմավիրի մարզի դատախազության դատախազ Մ.Տիգրանյանը (...):»¹

5.1. Քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն է իրականացրել Արմավիրի մարզի

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 38-44:

դատախազության դատախազ Մ.Տիգրանյանը, ով նաև մասնակցել է Առաջին ատյանի դատարանում բողոքի քննությանը¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածը նեղ մեկնաբանելու հետևանքով, սահմանափակել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն իր վերլուծությունների հիմքում, ըստ էության, դրել է այն տրամաբանությունը, համաձայն որի՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազն իրավասու չէ մինչդատական քրեական վարույթն ավարտող՝ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության վիճարկման ընթացակարգում մասնակցելու, քանի որ այդ որոշման դեմ բերված բողոքը վերադաս դատախազի կողմից մերժվել է, ինչը չի բխում ՀՀ Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված լիազորությունների տրամաբանությունից: Հակառակը՝ եթե վերադաս դատախազը մերժել է մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված 7-օրյա ժամկետում օրինական համարված որոշման դեմ բերված բողոքը, ապա վերջիններս՝ տվյալ դատախազը և իր վերադաս դատախազը համակարծիք են քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման օրինական և հիմնավոր լինելու հարցում: Տվյալ դեպքում, ըստ բողոքաբերի, գործառությանին տարանջատման սկզբունքի խախտման մասին խոսք լինել չի կարող:

6.1. Բացի այդ, բողոքաբերն անդրադարձել է նաև Առաջին ատյանի դատարանի որոշման հիմնավորվածությանն ու պատճառաբանություններին՝ նշելով, որ Առաջին ատյանի դատարանը, իր հերթին, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերի խախտումներ, մասնավորապես՝ անտեսվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ և 358-րդ հոդվածների պահանջները:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 86-88, հավելված, թերթեր 105, 127, 174-175, 191, 203, 209:

7. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 20-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Արմավիրի մարզի դատախազության դատախազ Մ.Տիգրանյանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու պատշաճ սուբյեկտ չէ:

9. ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի համաձայն՝ «1. *Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:*

2. *Դատախազությունն օրենքով սահմանված ղեկավարում և կարգով՝*
(...)

2) *հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.*

(...)

4) *բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.*

(...)

4. *Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա: (...):»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «*Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գրած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝ (...)*

22) *քրեական հետապնդման մարմիններ՝ դատախազը (մեղադրողը),*
(...)

31) *դատավարության մասնակիցներ՝ դատախազը (մեղադրողը) (...):»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի համաձայն՝ «1. *Դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն (...)* բողոքարկում է *դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները:* Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը կոչվում է մեղադրող:

(...)

3. *Քրեական գործի վարույթով իր լիազորություններն իրականացնելիս դատախազն ինքնուրույն է որոշումներ ընդունում*

հիմնվելով օրենքների և ներքին համոզմունքի վրա, և պարասիսանսարու է իր ընդունած որոշումների համար (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1.Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է՝

(...)

1) բողոքարկել դատարանի դատավճիռները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումներ. (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունները և որոշումները կարող են սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել **դատավարության մասնակիցների կողմից**: Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապարասիսան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին արյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն (...) մեղադրողը կամ վերադաս դատախազը, (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝ (...)

5) առաջին արյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «(...) Դատախազի կողմից բերված բողոքը կարող է հետ վերցնել վերադաս դատախազը»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետության դատախազությունը (այսուհետը՝ դատախազություն) միասնական համակարգ է, որը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը (այսուհետը՝ գլխավոր դատախազ):»:

2. Դատախազությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետը՝ Սահմանադրություն) իրեն վերապահված լիազորություններն իրականացնում է դատախազների միջոցով»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ «1. Մինչդարձ քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն (այսուհետ՝ հսկողություն), որպես կանոն, իրականացնում է վերադաս դատախազի կողմից նման հանձնարարություն սրացած դատախազը, կամ հսկողությունը սրանձնում է անձամբ վերադաս դատախազը: Ի սկզբանե հսկողություն իրականացնող վերադաս դատախազը կարող է փոխյալ քրեական գործով հսկողությունը հանձնարարել ստորադաս դատախազի:

2. Հսկողություն իրականացնելիս դատախազն ինքնուրույն է և գործում է առանց վերադաս դատախազի թույլտվության և համաձայնության: (...):

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում, որպես կանոն, իրականացնում է փոխյալ քրեական գործով հսկողություն իրականացրած դատախազը, բացառությամբ երբ նրան օրենքով նախատեսված դեպքերում փոխարինում է վերադաս դատախազը կամ վերադաս դատախազի հանձնարարությամբ՝ այլ դատախազ»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գործին մասնակցող դատախազը պարտավոր է բողոքարկել օրինական ուժի մեջ չմտնած այն դատական ակտեր, որը, իր կարծիքով, հիմնավոր չէ կամ սպորինի է:

(...)

7. Բողոքը պաշտպանում է բողոք բերած դատախազը, իսկ եթե բողոք բերել է վերադաս դատախազը, ապա բողոքը պաշտպանում է ինքը կամ իր հանձնարարությամբ՝ այլ դատախազ:

8. Վերադաս դատախազը վերաքննիչ կամ վճռաբեկ վարույթին մասնակցությունը կարող է հանձնարարել այլ դատախազի (դատախազների):

9. Դատախազի բերած բողոքը կարող է հետ վերցնել բողոք բերած դատախազը կամ վերադաս դատախազը (...):

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Հանձնարարականը կամ ցուցումն իրենց իրավասության սահմաններում վերադաս դատախազի կողմից ստորադաս դատախազին օրենքով սահմանված կարգով փոխված բանավոր կամ գրավոր, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված լիազորություններն իրականացնելիս միայն գրավոր հրահանգ է կատարելու որոշակի գործողություններ, կայացնելու որոշումներ կամ ձեռնպահ մնալու որևէ գործողություն կատարելուց»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատախազության գործունեությունը հիմնվում է

աստիճանակարգված ենթակայության և միասնականության ապահովման սկզբունքի վրա»:

10. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակին, Նարեկ Հարությունյանի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Վ]երաքննության կարգով բողոքարկման ենթակա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածով սահմանված Առաջին աստիճանի դատարանի որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտներին օրենսդիրն ըստ բողոքարկման իրավունքի ծավալի փարանջարել է խմբերի: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին նախադասության բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների ընդհանուր շրջանակը, ովքեր օժտված են բողոքարկման անսահմանափակ իրավունքով: Այդ սուբյեկտների շարքում ընդգրկված են (...) մեղադրողը կամ վերադատ դատախազը (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրողը՝ որպես վերաքննիչ բողոքարկման անսահմանափակ իրավունքով օժտված սուբյեկտ, ներառված է գործն ըստ էության չլուծող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 3-6-րդ կետերով նախատեսված որոշումները բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակում: (...)

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ մեկնաբանությունը (...) համահունչ է դատախազի կարգավիճակի վերաբերյալ միջազգային փաստաթղթերով ամրագրված չափանիշներին: Այսպես՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հոկտեմբերի 6-ի «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ» թիվ Rec(2000)19 հանձնարարականի 1-ին հոդվածի համաձայն՝ դատախազները պետական իշխանությանը օժտված մարմինների ներկայացուցիչներ են, ովքեր հասարակության անունից և հանուն հանրային շահի ապահովում են օրենքի կիրառումը բոլոր այն դեպքերում, երբ օրենքի խախտումը հանգեցնում է քրեական սանկցիաների՝ հաշվի առնելով ինչպես անձի իրավունքները, այնպես էլ քրեական արդարադատության համակարգի պարզաձև արդյունավետությունը: Հանձնարարականի 2-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ քրեական արդարադատության բոլոր համակարգերում դատախազները կարող են բողոքարկել բոլոր կամ որոշ դատական որոշումներ: Նշված հանձնարարականի բացատրական նամակում փրված 2-րդ հոդվածի մեկնաբանության համաձայն՝ **դատական որոշումները բողոքարկելու դատախազի իրավունքը սերտորեն փոխկապված է դատախազության**

ընդհանուր գործառույթի հեղ, քանի որ այն օրենքի կիրառումն ապահովելու և միևնույն ժամանակ արդարադատության համակարգն ավելի արդյունավետ դարձնելուն օժանդակող միջոցներից մեկն է (...)»¹:

11. Դատախազությունը՝ որպես պետական մարմին, իր առջև դրված խնդիրների իրականացման համար օժտված է պետաիշխանական լիազորություններով, որոնք ամրագրված են օրենսդրությամբ և իրականացվում են այդ մարմնի պաշտոնատար անձանց՝ դատախազների միջոցով: Միևնույն ժամանակ, դատախազությանը բնորոշ առանցքային հատկանիշներից է դատախազության մարմինների միասնականությունը:

Դատախազության միասնականության սկզբունքը, որը նաև անմիջականորեն ամրագրված է ՀՀ Սահմանադրությունում, նշանակում է, որ դատախազության ամբողջ համակարգը կազմակերպվում է միևնույն սկզբունքներով, ղեկավարվում է միևնույն օրենսդրությամբ, հետապնդում է միևնույն նպատակները և լուծում է միևնույն խնդիրները: Բոլոր դատախազները, իրենց վերապահված իրավասության շրջանակում, իրականացնում են ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատախազության բոլոր լիազորությունները: Այսինքն՝ յուրաքանչյուր դատախազ իր իրավասության շրջանակներում օժտված է միևնույն լիազորություններով և դրանց իրականացման իրավական միջոցներով:

12. Սույն որոշման 9-րդ կետում վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ դատախազության միասնականության սկզբունքի համատեքստում յուրաքանչյուր դատախազ՝

- իրավասու է հսկողություն իրականացնել քրեական գործով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ **և բողոքարկել դատարանների դատական ակտերը,**

- իրավասու է քրեական գործի վարույթով իր լիազորություններն իրականացնելիս **ինքնուրույն որոշումներ ընդունել**՝ հիմնվելով օրենքների և ներքին համոզմունքի վրա, և պատասխանատու է իր ընդունած որոշումների համար,

- գործի քննությանը մասնակցելիս՝ պարտավոր է բողոքարկել այն դատական ակտը, որը, իր կարծիքով, հիմնավոր չէ կամ ապօրինի է:

Նշվածի համատեքստում հարկ է նկատել, որ սույն որոշման 9-րդ կետում վկայակոչված իրավադրույթների համալիր վերլուծությունից հետևում է, որ դատարանների դատական ակտերը բողոքարկելու իրավասությամբ դատախազության միասնական համակարգում օժտված են դատավարությանը մասնակցած դատախազները, ովքեր նաև լիազորված են մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ

¹ Տե՛ս Նաթել Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՆԴ/0081/01/14 որոշման 14.1-15-րդ կետերը:

հսկողություն իրականացնել, և հետագայում, գործը դատարան ուղարկելու դեպքում, որպես կանոն, հենց իրենք էլ իրականացնում են դատարանում մեղադրանքի պաշտպանությունը և հանդես գալիս որպես մեղադրող: Այսինքն՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի իրավական կարգավիճակը քրեական գործը դատարան ուղարկելու հետ մեկտեղ վերաճում է մեղադրողի իրավական կարգավիճակի: Հենց այդ հանգամանքով է պայմանավորված նաև այն, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում «դատախազ» և «մեղադրող» եզրույթներն ամրագրում է որպես համասեռ հասկացություններ և «մեղադրող» եզրույթը փակագծերի մեջ ներառելով, ըստ էության, այն դիտարկում որպես «դատախազ» եզրույթի այլընտրանք:

Բացի այդ, քրեական դատավարությունում «մեղադրող» եզրույթը մեկնաբանելիս պետք է ելնել նաև այդ եզրույթի ընդհանուր հասկացությունից (*«generalia verba sunt generaliter intelligenda»* իրավամեկնաբանման հնարք): Այսինքն՝ «մեղադրող» եզրույթը պետք է մեկնաբանել նաև հաշվի առնելով դրա՝ ընդհանուր առմամբ ընկալելի բուն իմաստը: Այդ առումով «մեղադրող» եզրույթը մեկնաբանելիս պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր մեղադրող ընդհանուր առմամբ նախևառաջ հանդիսանում է դատախազ (ինչպես օրինակ՝ յուրաքանչյուր պաշտպան նախևառաջ հանդիսանում է փաստաբան): Այլ կերպ, յուրաքանչյուր մեղադրողի «բազային» կարգավիճակը ներառում է դատախազ լինելու պայմանը: Այդ համատեքստում պետք է հաշվի առնել, որ դատախազի և մեղադրողի դատավարական կարգավիճակները՝ իրենց սահմանադրական գործառնություններով և դատավարական լիազորություններով ըստ էության նույնանում են՝ այն տարբերությամբ, որ պայմանավորված դատավարական փուլերով՝ մեղադրողը հանդես է գալիս դատարանում՝ մեղադրանքը պաշտպանելու սահմանադրական գործառնությամբ իրացնելիս: Սակայն, բոլոր դեպքերում, թե՛ դատախազը, թե՛ մեղադրողն օժտված են դատական ակտերի բողոքարկման անսահմանափակ իրավունքով:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում Առաջին աստիճանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող մեղադրողի դատավարական կարգավիճակի ներքո պետք է դիտարկել նաև այն դատախազին, ով հսկողություն է իրականացրել քրեական գործով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ և հետագայում, քրեական գործը դատարան ուղարկելիս, որպես կանոն, նշված գործերով հանդես է գալու մեղադրողի դատավարական

կարգավիճակով: Միաժամանակ, հարկ է նշել, որ մեղադրողի դատավարական կարգավիճակի ներքո պետք է դիտարկել նաև այն դատախազին, ով թեև հսկողություն չի իրականացրել մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ, սակայն վերադաս դատախազի կողմից լիազորված է եղել մասնակցելու դատավարությանը, որպիսի պայմաններում, որպես դատավարությանը մասնակցող դատախազ, օրենքի ուժով (*ex lege*) լիազորված է վերաքննիչ բողոք բերել Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ և արտահայտել իր անհամաձայնությունը՝ իր մասնակցությամբ տեղի ունեցած դատավարության արդյունքում կայացված դատական ակտի հետ:

Վերը նշված մոտեցումները համապատասխանում են նաև *Նարեկ Հարությունյանի* գործով Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին, որոնցով մեղադրողի դատավարական կարգավիճակ ունեցող դատախազը մեկնաբանվել է որպես առաջին ատյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները վերաքննության կարգով բողոքարկելու իրավասություն ունեցող սուբյեկտ: Ավելին, հարկ է նկատել, որ այդպիսի մեկնաբանությունը համապատասխանում է նաև նույն որոշման մեջ վկայակոչված՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հոկտեմբերի 6-ի՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ» թիվ Rec(2000)19 հանձնարարականում և դրա բացատրական նամակում տրված՝ դատական որոշումները բողոքարկելու դատախազի իրավունքի վերաբերյալ արտահայտված դիրքորոշումներին:

13. Վերը նշվածի պայմաններում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հակառակ դեպքում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում նշված՝ Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու սուբյեկտներ ենթադրող «մեղադրող» կամ «վերադաս դատախազ» եզրույթները ենթարկվեն ինքնավար մեկնաբանության և մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացված դատական ակտերի դեմ բողոք բերելու իրավասությունը վերագրվի բացառապես վերադաս դատախազին, ապա որոշ դեպքերում կարող է վտանգվել բողոք բերելու իրավասություն ունեցող սուբյեկտների դասակարգման հիմքում օրենսդրի կողմից դրված տրամաբանությունը, որը տարբերակվում է՝ պայմանավորված դատական ատյանների գործառության և ինստիտուցիոնալ առանձնահատկություններով (օրինակ՝ դատախազական հսկողության կառուցակարգով ՀՀ գլխավոր դատախազի կողմից բողոքը

քննության առնելու դեպքում կարող է ստեղծվել այնպիսի անտրամաբանական վիճակ, երբ առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավասությամբ օժտված լինի բացառապես ՀՀ գլխավոր դատախազը՝ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավասությամբ օժտված են նաև ՀՀ գլխավոր դատախազի տեղակալները):

Բացի այդ, հարկ է նկատել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի այդպիսի մեկնաբանությունը նաև կարող է խնդրահարույց համարվել այն տեսանկյունից, որ եթե օրենսդիրը նպատակ հետապնդեր բողոքարկման իրավասություն վերապահել բացառապես վերադաս դատախազին, ապա նույն տրամաբանությունը պետք է կիրառվեր քրեական գործով առաջին ատյանի դատարանի դատավճռի բողոքարկման դեպքում: Այլ կերպ, պայմանավորված գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման կառուցակարգում տարբերակված մոտեցում դրսևորելու օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի բացակայությամբ՝ օրենսդիրը նույնկերպ պետք է դատավճիռների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավասությունը վերապահեր վերադաս դատախազին: Մինչդեռ, օրենսդիրը դատավճռի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ դիտարկում է նաև դատարանում քրեական գործի ըստ էության քննությանը մասնակցած դատախազին (մեղադրողին), ով, ինչպես վերը նշվեց, իր դատավարական կարգավիճակով (իրավունքներով և պարտականություններով) ըստ էության նույնանում է քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի դատավարական կարգավիճակի հետ: Նման պայմաններում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում տրված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավասություն ունեցող «մեղադրող» և «վերադաս դատախազ» հասկացությունները չեն կարող դիտարկվել որպես դատախազի կողմից բողոք բերելու իրավասության բացառման և օրենսդրի կողմից հատուկ՝ տարբերակված կարգավորման սահմանման դրսևորում: Այսինքն՝ տվյալ համատեքստում, ընդհանուր կարգավորման նկատմամբ հատուկ կարգավորման նախապատվության («*Lex specialis derogat generali*») իրավամեկնաբանման հնարքը կիրառվել չի կարող:

14. Վերոգրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով վերադաս դատախազի և ստորադաս դատախազի փոխհարաբերություններին ու գործով ստորադաս դատախազի կողմից վերադաս դատախազի տեսակետը դատարանում ներկայացնելու հնարավորությանը՝ Վճռաբեկ

դատարանը փաստում է, որ դատախազության մարմինների միասնականության սկզբունքի հետ սերտ կապի մեջ է գտնվում նաև կենտրոնացվածության սկզբունքը: Մասնավորապես, այդ սկզբունքի համատեքստում՝

- յուրաքանչյուր դատախազ պատասխանատվություն է կրում իր ենթակայության տակ գտնվող դատախազների աշխատանքի համար,

- օրենքով նախատեսված դեպքերում իր լիազորությունների իրականացման ընթացքում դատախազը կարող է փոխարինվել մեկ այլ դատախազով կամ վերադաս դատախազը կարող է իր վրա վերցնել ստորադաս դատախազի պարտականությունների կատարումը,

- վերադաս դատախազը լիազորված է ստորադաս դատախազին տալ գրավոր կամ բանավոր հանձնարարական, ցուցում կամ հրահանգ՝ կատարելու որոշակի գործողություններ, կայացնելու որոշումներ կամ ձեռնպահ մնալու որևէ գործողություն կատարելուց,

- բողոքը պաշտպանում է բողոք բերած դատախազը, իսկ եթե բողոք է բերել վերադաս դատախազը, ապա բողոքը պաշտպանում է ինքը կամ իր հանձնարարությամբ՝ այլ դատախազ,

- վերադաս դատախազը վերաքննիչ կամ վճռաբեկ վարույթին մասնակցությունը կարող է հանձնարարել այլ դատախազի (դատախազների):

Վերոնշյալի լույսի ներքո պետք է փաստել, որ «վերադաս դատախազ» և «ստորադաս դատախազ» փոխհարաբերությունները հստակ կանոնակարգված են և կենտրոնացվածության սկզբունքի շրջանակներում ստորադաս դատախազը իրավասու է ներկայացնել նաև վերադաս դատախազի տեսակետը, այդ թվում՝ վերաքննիչ բողոքարկման կառուցակարգի շրջանակներում: Ընդ որում, այս առումով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ վերադաս դատախազը ստորադաս դատախազի ներկայացրած վերաքննիչ բողոքի հետ համաձայն չլինելու դեպքում օժտված է այն հետ վերցնելու լիազորությամբ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մաս, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 9-րդ մաս): Նշված քրեադատավարական երաշխիքը բացառում է բոլոր այն հնարավոր «մտահոգությունները», որոնք կարող են առաջանալ վերադաս դատախազի և ստորադաս դատախազի փոխհարաբերությունների ու գործով ստորադաս դատախազի կողմից վերադաս դատախազի տեսակետը դատարանում ներկայացնելու հնարավորության հետ:

15. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակում առաջին ատյանի դատարանի կայացրած դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող

սուբյեկտների շրջանակը ներառում է նաև մեղադրողի դատավարական կարգավիճակին համարժեք՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին, ինչպես նաև որպես դատավարության մասնակից՝ վերադաս դատախազի կողմից լիազորված այլ դատախազին:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման դեմ Ժ.Հովսեփյանի բողոքը **Արմավիրի մարզի դատախազ Վ.Հովհաննիսյանի՝** 2018 թվականի հունվարի 8-ի որոշմամբ մերժվել է¹,

- Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ դիմող Ժ.Հովսեփյանի բողոքը բավարարվել է, վարույթն իրականացնող մարմինը պարտավորեցվել է վերացնել քրեական գործով տուժող Խ.Հովսեփյանի (տուժողի իրավահաջորդ Ժ.Հովսեփյանի) խախտված իրավունքները²: Առաջին ատյանի դատարանում գործի քննությանը մասնակցել է մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացրած՝ **Արմավիրի մարզի դատախազության դատախազ Մ.Տիգրանյանը**³,

- **Արմավիրի մարզի դատախազության դատախազ Մ.Տիգրանյանի** վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը, Առաջին ատյանի դատարանի որոշումը թողելով օրինական ուժի մեջ՝ ՀՀ Արմավիրի մարզի դատախազության դատախազ Մ.Տիգրանյանի՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու ոչ պատշաճ սուբյեկտ հանդիսանալու պատճառաբանությամբ⁴:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի այնպիսի մեկնաբանությունը, ըստ որի՝ քրեական գործերով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացված Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունքով օժտված է միայն վերադաս դատախազը, հակասում է սովյալ իրավանորմը սահմանելիս օրենսդրի կամքին, դատախազության մարմինների միասնականության և կենտրոնացվածության սկզբունքներին,

¹ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

² Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

անհարկի սահմանափակում է դատախազի՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Արմավիրի մարզի դատախազության դատախազ Մ.Տիգրանյանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու պատշաճ սուբյեկտ չէ, հիմնավոր չէ:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 20-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության¹: Նոր քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, պետք է քննարկման առարկա դարձնի դատախազի վերաքննիչ բողոքը, այդ թվում՝ բողոքաբերի՝ սույն որոշման 6.1-րդ կետում բարձրացրած փաստարկները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Ժենիկ Լևոնի Հովսեփյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 20-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս, mutatis mutandis, Հրայր Հովսեփյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0605/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Օ.Շախկույանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 6-ի որոշմամբ Իննա Ռաֆիկի Փաշյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Վերոնշյալ որոշման դեմ Իննա Փաշյանի ներկայացուցչի բողոքը Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ Ս.Խաչատրյանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ մերժվել է:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), 2019 թվականի

հունվարի 17-ի որոշմամբ Ի. Փաշյանի բողոքը բավարարել է և վերացրել քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2018 թվականի հոկտեմբերի 6-ի որոշումը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 17-ի որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է՝ վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ վարույթ է ընդունվել¹:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վերաքննիչ բողոքի ներածական մասի համաձայն՝ այն հասցեագրվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ Վ.Ռշտունուն²:

6. Վերաքննիչ դատարանը, իր դատական ակտում վկայակոչելով մինչև «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 13-ի՝ թիվ ՀՕ-155-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը գործող վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջները, Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ դատախազի բողոքը վարույթ ընդունելը մերժել է՝ հետևյալ հիմնավորմամբ. «(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ թիվ ԵԴ/0605/11/18 գործով ներկայացված բողոքը չի համապատասխանում Վերաքննիչ բողոքին ներկայացվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանված պահանջին, մասնավորապես, այն հասցեագրված է ՀՀ վերաքննիչ

¹ Ծանոթություն. Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

² Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 2-11:

դատարանի նախագահին, ուստի՝ բողոքը չի կարող ընդունվել վարույթ և նշանակվել քննության, այլ պետք է դրա վարույթ ընդունելը մերժել»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակ՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, ինչի արդյունքում կայացվել է անհիմն և անօրինական դատական ակտ:

Մասնավորապես, բողոքաբերը, մեջբերելով արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, եզրահանգել է, որ ներկայացված վերաքննիչ բողոքում դատարանին հասցեագրված լինելու ձևական պահանջը պահպանված չլինելու հիմքով բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում կայացնելով՝ Վերաքննիչ դատարանն անհամաչափորեն սահմանափակել է դատախազության՝ դատական ակտերի բողոքարկման իրավունքը:

8. Վերոշարադրյալի հիման վրա, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի որոշումը, և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջը չպահպանելու պատճառաբանությամբ բողոքը վարույթ ընդունելը մերժելն արդյո՞ք հանգեցրել է դատախազի՝ սահմանադրորեն ամրագրված դատական ակտերի բողոքարկման գործառույթի իրացման խախտմանը:

10. ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *«Բարախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ (. . .) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները»:*

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 16-17:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է՝

(...) բողոքարկել դատարանի դատավճիռները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումներ»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից հետևում, որ դատախազը, լինելով հանրային իշխանության մարմին, քրեական դատավարությունում հանդես է գալիս որպես մեղադրանքի կողմ և օժտված է որոշակի լիազորություններով, որոնց թվում է նաև՝ դատարանի դատավճիռները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումները բողոքարկելու լիազորությունը: Դատական ակտերը բողոքարկելու դատախազի իրավունքը սերտորեն փոխկապված է դատախազության ընդհանուր գործառույթի հետ, քանի որ այն օրենքի կիրառումն ապահովելու և մինևսյն ժամանակ արդարադատության համակարգն ավելի արդյունավետ դարձնելուն օժանդակող միջոցներից մեկն է¹:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող պահանջների պահպանումը չպետք է այնպես մեկնաբանվի և այն աստիճան *ձևականացվի* (excessive formalism), որ դատախազի՝ դատական ակտերը բողոքարկելու սահմանադրորեն ամրագրված գործառույթը ոչ իրավաչափորեն սահմանափակվի: Այլ կերպ՝ բողոքը վարույթ ընդունելը մերժելու (բողոքն առանց քննության թողնելու) մասին որոշումը պետք է հիմնված լինի վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող պահանջների պահպանված չլինելու մասին փաստերի բովանդակային գնահատման վրա:

11. Մինչև «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 13-ի՝ թիվ ՀՕ-155-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝

1) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը (...):»:

12. Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՄԴՌ-1420 որոշմամբ փաստել է. «(...) [Վ]երաքննիչ բողոքում հայրնաբերված թերությունների կամ սխալների նկարումնաբ պետք է դրսևորվի փարբերակված մտրեցում, ինչի հերևանքով անհրաժեշտ կլինի նաև սահմանազարել դրանցից հերևող հնարավոր իրավական հերևանքները: Եթե ձևական պահանջների խախուման դեպքում

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Նարեկ Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՆԴ/0081/01/14 որոշումը:

չափազանց խիստ հեղինակներ նախատեսելը կասկածանափակի անձի հիմնական իրավունքի իրացման հնարավորությունը, սպա բովանդակային պահանջների խախտման հանդեպ անհամաչափ մեղմ գնահատականը կարող է այդ իրավունքի չարաշահման նախադրյալներ սրելով:

(...)

Այսպիսով, եթե վերաքննիչ բողոք ներկայացրել է այն անձը, ով չունի այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանոց է (բացակայում է այն վերականգնելու հիմնավոր որևէ պարճատ), կամ այն բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման և նման այլ այնպիսի հիմքերի առկայությամբ, երբ անձը վերաքննիչ դատարանի գնահատմամբ փաստի ուժով, իրավական տեսանկյունից օբյեկտիվորեն անկարող է իրացնել դատական բողոքարկման իր իրավունքը, սպա վերջինիս իրացման արգելքը, ինչը նախատեսված է [ՀՀ քրեական դատավարության] [օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասում, իրավական պարզաձ գործընթացի արդյունքում կարող է գնահատվել իրավաչափ: Մինչդեռ, վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական որևէ նախապայմանի խախտման հիմքով, երբ սուկա է այն շրջելու իրավական ողջամիտ հնարավորություն, անձին Սահմանադրությամբ երաշխավորված դատական բողոքարկման իր իրավունքի իրացումից զրկելը, սահմանափակելը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ չի կարող բիել մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման և իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներից, ինչպես նաև այդ բնագավառում հանրային իշխանությանն առաջադրված սահմանադրափրավական նպատակներից: Հերևաբար, Սահմանադրական դատարանը գրնում է, որ, վեճի առարկա իրավակարգավորմամբ նախատեսված ձևական պահանջների չպահպանման հիմքով սահմանափակելով անձի հիմնական իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, այդ թվում՝ արդարադատության մարչելիության իրավունքը, խախտվել է Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքը: Սահմանադրության 75-րդ հոդվածի սահմանադրափրավական բովանդակության տեսանկյունից այդ իրավակարգավորումը չի համապարախանում իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման ընթացակարգի չափանիշներին (...):»¹:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ

¹Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՌ-1420 որոշման 4.3-4.5-րդ կետերը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 17-ի որոշման դեմ դատախազի բողոքը վարույթ ընդունելը մերժվել է՝ մինչև «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 13-ի՝ թիվ ՀՕ-155-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջը պահպանված չլինելու պատճառաբանությամբ¹:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքը գնահատելով սույն որոշման 10-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ եթե անգամ կոնկրետ դեպքում առկա է եղել վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական նախապայմանի խախտում, ապա այն շտկելու ողջամիտ հնարավորության առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից դատախազի բողոքը վարույթ ընդունելը մերժելը հիմնավոր համարվել չի կարող:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող պահանջի պահպանվածությանը տրված նման մեկնաբանությամբ դատախազի բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում կայացնելով, *prima facie* ոչ իրավաչափորեն սահմանափակել է դատախազի՝ սահմանադրորեն ամրագրված դատական ակտերի բողոքարկման գործառույթի իրացումը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջը չպահպանելու պատճառաբանությամբ բողոքը վարույթ ընդունելը մերժելը հանգեցրել է դատախազի՝ սահմանադրորեն ամրագրված դատական ակտերի բողոքարկման գործառույթի իրացման խախտմանը:

15. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության²:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի դատախազի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ

¹Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Իննա Ռաֆիկի Փաշյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0580/01/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ Ֆարշիդ Ազիզովահիի Զարիֆզադեի Յեզանեհի պաշտպան Լ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի հուլիսի 31-ին քրեական գործն ըստ մեղադրանքի Ֆարշիդ Ազիզովահիի Զարիֆզադեի Յեզանեհի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով ու Ջավադ Ալի Ասգհար Գոլի Ջաֆար Աբադիի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և 2018 թվականի օգոստոսի 2-ին ընդունվել վարույթ:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), 2018 թվականի օգոստոսի 10-ին, գործը դատական քննության նախապատրաստելու փուլում,

քննության առնելով Ֆ.Յեգանեհի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցը, վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողել է անփոփոխ՝ միաժամանակ մերժելով կալանավորումը գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը:

3. Պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ բողոքը թողել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել պաշտպան Լ.Ասլանյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 16-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի օգոստոսի 10-ի որոշման եզրափակիչ մասում նշել է. «(...) Ֆարշիդ Ազիզովահիի Զարիֆզադեի Յեգանեհի (...) նկարմամբ խափանման միջոց կիրառված կալանավորումը (...) թողնել անփոփոխ (...)»¹:

6. Վերաքննիչ դատարանը, բողոքն առանց քննության թողնելու մասին որոշմամբ վկայակոչելով *Անուշ Ղափայյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԲԴԴ/0299/01/08 որոշումը, արձանագրել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի տրուստի մեկնաբանման արդյունքում սրացվում է, որ դատական կարգով բողոքարկման ենթակա են միայն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումները: Քրեադատավարական օրենքը որևէ նշում չի պարունակում որպես խափանման միջոց ընտրված կալանքն անփոփոխ թողնելու մասին որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության մասին (...):

(...) Նկարի ունենալով, որ քրեական գործի դատական քննության ընթացքում ամբաստանյալի նկարմամբ ընտրված խափանման միջոցն անփոփոխ թողնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն այնպիսի դատական ակտ է, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 10-ի որոշման դեմ ամբաստանյալ Ֆարշիդ

¹ Տե՛ս նյութեր, թերթ 37:

*Ազիզոլահիի Զարիֆգադեի Յեգանեհի պաշտպան Լուսինե Ասլանյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության (...)*¹:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքարկի պնդմամբ՝ սույն գործով Վերաքննիչ դատարանը խախտել է Ֆ.Յեգանեհի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները, ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների պահանջները: Բողոքարկերը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, նշել է, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի իրեն ազատությունից զրկելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու իրավունք, մինչդեռ Վերաքննիչ դատարանը ներկայացված բողոքը թողել է առանց քննության՝ թույլ տալով Ֆ.Յեգանեհի իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

7.1. Բացի այդ, անդրադառնալով Ֆ.Յեգանեհի նկատմամբ խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշմանը, բողոքի հեղինակը գտել է, որ այն ևս անհիմն է և չպատճառաբանված: Ինչ վերաբերում է այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառմանը, բողոքարկերը գտել է, որ իր պաշտպանյալի անձը բնութագրող տվյալները, այն, որ նա շուրջ ութ տարի բնակվել է Հայաստանի Հանրապետությունում, նախկինում չի եղել դատապարտված, ինքնական ներկայացել է ոստիկանություն, վկայում են այն մասին, որ քննության տվյալ փուլում վերջինիս պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել նաև այլընտրանքային խափանման միջոցի կիրառմամբ:

8. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 28-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնելով Ֆարշիդ Ազիզոլահիի Զարիֆգադեի Յեգանեհի նկատմամբ խափանման միջոց ընտրված կալանավորումը և նրան ազատել արգելանքից կամ վերջինիս նկատմամբ կիրառել գրավ՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց:

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 58-60:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից Ֆ.Յեզանեհի պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ՝ այն դեպքում, երբ բողոքարկվել է գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին որոշումը:

10. ՀՀ սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՌ-1421 որոշմամբ անդրադառնալով գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու կամ կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննության արդյունքում կայացված որոշման բողոքարկման հնարավորությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Գ]ործը դատական քննության նախապատրաստելու փուլում վիճարկվող իրավակարգավորման ուժով մեղադրյալի նկատմամբ անձնական ազատության իրավունքի սահմանափակում նախատեսող խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունվում է որոշում (Օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մաս), որն, ի թիվս այլնի, Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետի, ինչպես նաև Օրենսգրքի 73-րդ հոդվածի 15-րդ կետի ուժով կարող է բողոքարկվել մեղադրյալի, նրա պաշտպանի կողմից (...): Ուստի, Սահմանադրական դատարանը գտնում է, որ (...) [ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 300-րդ հոդվածով նախատեսված՝ վիճարկվող իրավակարգավորումը խնդրահարույց չէ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համարեքստում այն ստումով, որ Օրենսգրքում, մասնավորապես, առկա են կալանքի՝ որպես խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունված որոշման դատական բողոքարկման (ստուգման) օրենսդրական երաշխիքներ (...)]»¹:

11. ՀՀ սահմանադրական դատարանի՝ նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը, վերանայելով *Անուշ Ղավալյանի* գործով արտահայտած իրավական

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՌ-1421 որոշման 4.2-րդ կետը:

դիրքորոշումները¹, *Գարիկ Սարգսյանի* գործով փաստել է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու (այդ թվում նաև՝ կալանավորումը վերացնելու կամ այլ խափանման միջոցով փոխարինելու միջնորդությունը մերժելու) մասին որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով²:

12. ՀՀ սահմանադրական դատարանը, 2019 թվականի նոյեմբերի 6-ի թիվ ՍԴՈ-1487 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Ելնելով մարդու հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական գործողության սահմանադրական պահանջից, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, մինչև Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ գործի դատական քննության փուլում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումները ենթակա են վերաքննության կարգով անմիջական բողոքարկման՝ առաջին արյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու որոշումների բողոքարկման համար Օրենսգրքով սահմանված կարգով՝ առաջնորդվելով անձնական ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրացման ապահովման անհրաժեշտությամբ (...)»³:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը գործը դատական քննության նախապատրաստելու փուլում որոշում է կայացրել Ֆ.Յեզանեհի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին⁴: Նշված որոշման դեմ պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանը թողել է առանց քննության՝ այն պատճառաբանությամբ, որ պաշտպանի կողմից վերաքննության կարգով բողոքարկվել է որոշում, որը ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Անուշ Ղավալյանի* գործով 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵՔԲԴ/0299/01/08 որոշման 21-րդ կետը:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարիկ Սարգսյանի* գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԵԿԴ/0294/01/17 որոշման 14-րդ կետը:

³ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի թիվ ՍԴՈ-1487 որոշման 4.6.-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

հողվածով սահմանված՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերի ցանկում¹:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 10-12-րդ կետերում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի կողմից Ֆ.Յեգանեհի պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը՝ Առաջին աստիճանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ՝ այն դեպքում, երբ բողոքարկվել է գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրված կալանավորումն անփոփոխ թողնելու մասին որոշումը:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի՝ հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկել համար²:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առնի Ֆ.Յեգանեհի պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Ֆարշիդ Ազիզովաի Զարիֆզադեհ Յեգանեհի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0853/06/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դարավորներ՝*

Լ.ԹՎԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ
ՀՀ արդարադատության նախարարության
իրավական փոխօգնության վարչության պետ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դրնբաց դատական նիստում, քննության առնելով Աղդաս Մոզաֆարի Կարամիի (Քարամիի) վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ Աղդաս Կարամիի (Քարամիի) պաշտպան Լ.Պինգույանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Ա.Զեյնալյանի միջնորդությունը՝ Աղդաս Մոզաֆարիի Կարամիին (Քարամիին) հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ, բավարարվել է, և Ա.Կարամիի (Քարամիի) նկատմամբ կիրառվել է կալանավորում՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի մայիսի 2-ի որոշմամբ բավարարվել է Ա.Կարամիին (Քարամիին) կալանքի տակ պահելու ժամկետը 2 (երկու) ամսով երկարացնելու մասին ՀՀ արդարադատության նախարար Ա.Զեյնալյանի միջնորդությունը:

3. Վերոնշյալ որոշման դեմ Ա.Կարամիի (Քարամիի) պաշտպան Լ.Պինգուլյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի մայիսի 31-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ Ա.Կարամիի (Քարամիի) պաշտպան Լ.Պինգուլյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանը, բավարարելով Ա.Կարամիին (Քարամիին) կալանքի տակ պահելու ժամկետը 2 (երկու) ամսով երկարացնելու մասին ՀՀ արդարադատության նախարար Ա.Զեյնալյանի միջնորդությունը, իր դատական ակտի եզրափակիչ մասում արձանագրել է. «(...) *Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում*»¹:

6. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով պաշտպան Լ.Պինգուլյանի վերաքննիչ բողոքը, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) *Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը հրապարակվել է 2019 թվականի մայիսի 2-ին, որի պատճենը նույն օրը հանձնվել է Աղդաս Մոզաֆարի Կարամիի (Քարամի) պաշտպան Ֆերդինանդ Մարգայանին, իսկ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ Աղդաս Մոզաֆարի Կարամիի (Քարամի) պաշտպան Լիլիթ Պինգուլյանի կողմից փոստային ծառայության միջոցով վերաքննիչ բողոք է բերվել 2019 թվականի մայիսի 13-ին:*

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Աղդաս Մոզաֆարի Կարամիի (Քարամի) պաշտպան Լիլիթ Պինգուլյանի կողմից Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը ժամկետանց է, քանի որ այն բերվել է ինչպես Առաջին ատյանի

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 67-71:

դատարանի որոշումը հրապարակվելու պահից, այնպես էլ այն սրանալու օրվանից ավելի քան հինգ օր հետո (Առաջին աստիճանի դատարանի որոշման պատճենը պաշտպան Ֆերդինանդ Սարգսյանին հանձնելու օրվանից տասնմեկ օր հետո), այսինքն՝ չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետները¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

7.1. Մասնավորապես, բողոքաբերը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կիրառվող «կալանավորում» և «հանձնելու համար կալանավորում» հասկացությունների տարբերությունները, փաստել է, որ օրենսդիրը չի նույնացնում քննարկվող դատավարական ինստիտուտները: Մինևույն ժամանակ, բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի տեսակներով պայմանավորված, սահմանել է վերաքննիչ բողոքարկման ընդհանուր՝ տասնօրյա, և հատուկ՝ հնգօրյա ժամկետներ: Հատուկ ժամկետը նախատեսված է կալանավորման, կալանավորման ժամկետի երկարաձգման և բժշկական հաստատություններում անձանց տեղավորման վերաբերյալ որոշումների վերաքննիչ բողոքարկման համար:

7.2. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը եզրահանգել է, որ վերաքննիչ բողոքարկման հնգօրյա ժամկետը վերաբերում է բացառապես կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումների բողոքարկմանը և հետևաբար, հանձնման համար կալանավորման մասին որոշումների վերաքննիչ բողոքարկման համար կիրառելի է բողոքարկման ընդհանուր՝ տասնօրյա ժամկետը:

8. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Իրանի Իսլամական Հանրապետությունում Ա.Կարամիի (Քարամիի) վերաբերյալ կայացված դատավճիռը, «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի համաձայն, ենթակա չէ ի կատար ածման, հետևաբար, վերջինս ենթակա չէ հանձնման, ինչից էլ

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 90-91:

բխում է, որ նրա նկատմամբ չի կարող կիրառվել հանձնման համար կալանավորումը:

9. Բացի այդ, բողոք բերած անձն ընդգծել է, որ հանձնման համար կալանավորման՝ օրենքով սահմանված առավելագույն ութամսյա ժամկետը պետք է հաշվարկել անձին փաստացի արգելանքի վեցնելու պահից և արձանագրել, որ Ա.Կարամիի (Քարամիի) նկատմամբ ընտրված կալանավորման ժամկետը ևս երկու ամսով երկարաձգելու պարագայում վերջինիս կալանքի տակ մնալու ժամկետը գերազանցելու է օրենքով նախատեսված առավելագույն ժամկետը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ բողոքաբերը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է անհիմն և անօրինական որոշում:

10. Վերոշարադրյալի հիման վրա, Ա.Կարամիի (Քարամիի) պաշտպան Լ.Պինգուցյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 31-ի որոշումը, և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության, կամ կայացնել նոր դատական ակտ՝ արձանագրելով Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 5-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 31-ի որոշումներով թույլ տրված խախտումները:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած և ՀՀ տարածքում ձերբակալված անձի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կամ հանձնելու համար կալանավորում կիրառելու մասին որոշման վերաքննիչ բողոքարկման ժամկետի հաշվարկման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք Ա.Կարամիի (Քարամիի) նկատմամբ կիրառված՝ հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարացնելու մասին որոշման՝ հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա լինելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

13.1. Մեջբերված սահմանադրական նորմերի, ինչպես նաև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքն ամրագրող՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածների համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ դատական պաշտպանության իրավունքն անձի անօտարելի իրավունքներից մեկն է և միաժամանակ այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց ու երաշխիք: Դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչ է նաև դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման իրավունքը: Դատական որոշումների վերանայման և ստուգման անհրաժեշտությունը պայմանավորված է քրեական դատավարության խնդիրներով և դատական սխալների ու անօրինական դատական ակտերի բացառման և կանխման օբյեկտիվ, անընդհատ գոյություն ունեցող պահանջով:

Միաժամանակ, դատական պաշտպանության իրավունքը բացարձակ չէ, այն սահմանափակված է որոշակի օբյեկտիվ պայմաններով: Մասնավորապես, դատական ակտերը վերադասության կարգով բողոքարկելու համար օրենսդիրը սահմանել է որոշակի ժամկետներ, որոնք նպատակ են հետապնդում ապահովել քրեական դատավարության պատշաճ իրականացումը: Նշված ժամկետները, սակայն, չեն կարող լինել կամայական, դրանք պետք է լինեն ողջամիտ, ինչը ենթադրում է գործի մասնակից բոլոր անձանց շահերի հավասարակշռված հաշվառում, որպեսզի բացառվեն մի կողմից դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու անհիմն ուշացումները, մյուս կողմից՝ այդ ակտի դեմ բողոք բերելու անհամաչափ բարդությունները¹:

14. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով*
(...)

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Տիգրան Հովհաննիսյանի գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշման 17-18-րդ կետերը:

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(...)

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գրած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

(...)

37) կալանավորում՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելը.

(...)

38.1) ժամանակավոր կալանավորում՝ անձին անազատության մեջ պահել հանձնելու վերաբերյալ միջնորդությունն ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով.

38.2) հանձնելու համար կալանավորում՝ անձին անազատության մեջ պահել նրա հանձնումն ապահովելու նպատակով.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կալանավորումն օրենքով նախատեսված տեղերում և պայմաններում անձին կալանքի տակ պահելն է»:

14.1. Մեջբերված նորմերի և դրանց համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրն առանձնացրել է կալանավորման եղանակով անձնական ազատությունից զրկելու հետևյալ տեսակները՝

ա) կալանավորումը՝ որպես խափանման միջոց,

բ) կալանավորումը՝ որպես ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած ու ՀՀ տարածքում ձերբակալված անձին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով վերջինիս ազատությունը սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոց,

գ) կալանավորումը՝ որպես ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած ու ՀՀ տարածքում ձերբակալված անձի հանձնումն ապահովելու նպատակով վերջինիս ազատությունը սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոց:

14.2. Վերոշարադրյալը թույլ է տալիս եզրահանգել, որ կալանավորման եղանակով անձնական ազատությունից զրկելու նշված

տեսակներն ինքնավար են, ունեն ինքնուրույն բովանդակություն, հետապնդում են միմյանցից ըստ էության տարբերվող նպատակներ, ունեն կիրառման տարբեր հիմքեր: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ կալանավորման քննարկվող տեսակները, սակայն, ունեն էական ընդհանրություն, այն է՝ դրանք բոլորն էլ ենթադրում են համապատասխան օրենսդրական հիմքերի առկայության պարագայում որոշակի նպատակի իրացման համար անձնական ազատությունից զրկում:

15. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Ժամանակավոր կալանավորում կիրառելու կամ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը, կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Միջնորդությունը քննարկելիս դատարանը, լսելով միջնորդություն ներկայացնողին, արգելանքի վերցված անձին և նրա պաշտպանին, ստուգելով անձին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը և ուսումնասիրելով ներկայացված այլ փաստաթղթերը, որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու և հանձնման համար կալանավորում կիրառելու կամ կալանավորման ժամկետը երկարաձգելու կամ միջնորդությունը մերժելու մասին: Դատարանի որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Վերաքննիչ բողոք բերվում են՝*

(...)

3) առաջին արյանի դատարանի՝ կալանավորման (...) մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

15.1. Վերոշարադրյալ իրավական նորմերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեադատավարական օրենքը տարանջատել է կալանավորման եղանակով անձնական ազատությունից զրկելու մասին գործն ըստ էության չլուծող որոշումների բողոքարկման հատուկ՝ հնգօրյա ժամկետ: Ընդ որում, թեև գործող քրեադատավարական կարգավորումները նախատեսում են կալանավորման եղանակով անձնական ազատությունից զրկելու երեք

տարբեր տեսակներ, այդուհանդերձ, դրանց վերաբերյալ որոշումների վերաքննիչ բողոքարկման առանձնահատուկ կարգավորում առնվազն բողոքարկման ժամկետների առումով չեն սահմանում: Դա նշանակում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ կալանավորման մասին որոշման բողոքարկման հնգօրյա ժամկետի վերաբերյալ քրեադատավարական նորմի գործողությունը տարածվում է ինչպես քրեական գործով վարույթի ընթացքում կալանավորման՝ որպես խափանման միջոցի մասին, այնպես էլ ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած և ՀՀ տարածքում ձերբակալված անձին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը ստանալու, հանձնումը բացառող հանգամանքները պարզելու կամ հանձնումն ապահովելու նպատակներով կալանավորման եղանակով անձնական ազատությունից զրկելու մասին առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումների դեմ վերաքննիչ բողոքների վրա: Այլ կերպ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման հնգօրյա ժամկետը վերաբերում է ոչ միայն կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու, այլև նույն օրենսգրքի 478.2-րդ և 478.3-րդ հոդվածներով սահմանված կարգով կիրառված կալանավորման վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկմանը:

15.2. Վերոգրյալի համատեքստում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կալանավորման եղանակով անձնական ազատությունից զրկելու մասին որոշման բողոքարկման սեղմ ժամկետի նախատեսումը կարևոր դատավարական երաշխիք է՝ ապահովելու անձնական ազատության անհարկի միջամտությունից հնարավորինս սեղմ ժամանակահատվածում արդյունավետորեն պաշտպանվելու անձի իրավունքը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, Ա.Կարամիի (Քարամիի) նկատմամբ կիրառված՝ հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարացնելու մասին որոշում կայացնելով, դատական ակտի եզրափակիչ մասում սահմանել է, որ այն կարող է բողոքարկվել հնգօրյա ժամկետում¹:

Նշված դատական ակտի դեմ պաշտպանի ներկայացրած բողոքը Վերաքննիչ դատարանը թողել է առանց քննության՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը պաշտպանության կողմը ստացել է 2019 թվականի մայիսի 2-ին, իսկ նշված որոշման դեմ վերաքննիչ բողոքը փոստային առաքման միջոցով 2019 թվականի մայիսի 13-ին ուղարկվել է Վերաքննիչ դատարան, հետևաբար, վերաքննիչ բողոքը բերվել է

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

սահմանված ժամկետի խախտմամբ՝ այն ստանալու օրվանից ավելի քան հինգ օր հետո¹:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-15.2-րդ կետերում մեջբերված իրավադրոյթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, պատշաճ իրավական գնահատման ենթարկելով կալանավորման եղանակով անձնական ազատությունից զրկելու մասին գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման կառուցակարգերը, հանգել են իրավաչափ հետևության առ այն, որ Ա.Կարամիի (Քարամիի) նկատմամբ կիրառված՝ հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարացնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել Վերաքննիչ դատարան՝ հնգօրյա ժամկետում:

19. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ հիմնավոր են Ա.Կարամիի (Քարամիի) նկատմամբ կիրառված՝ հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարացնելու մասին որոշման՝ հնգօրյա ժամկետում բողոքարկման ենթակա լինելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

20. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, որը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

21. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ որոշումը վերաքննության կարգով բողոքարկվել է սահմանված ժամկետների խախտմամբ, և Վերաքննիչ դատարանը, բողոքն առանց քննության թողնելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ՝ Վճռաբեկ դատարանը հնարավորություն չունի անդրադառնալու բողոքաբերի՝ սույն որոշման 8-րդ և 9-րդ կետերում նշված փաստարկներին ու գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-րդ և 423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ադդաս Մոզաֆարի Կարամիի (Քարամիի) վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 31-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴ/0036/01/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահույթյամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 29-ի որոշման դեմ Վանիկ Աբրահամի Պողոսյանի պաշտպան Ա.Վարդևանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Յ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի մայիսի 3-ին քրեական գործն ըստ մեղադրանքի Վանիկ Աբրահամի Պողոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-235-րդ հոդվածի 1-ին մասով, ուղարկվել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և 2019 թվականի մայիսի 6-ին ընդունվել վարույթ:

2. Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), 2019 թվականի մայիսի 14-ին, գործը դատական քննության նախապատրաստելու փուլում, քննության առնելով Վ.Պողոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցը, վերջինիս նկատմամբ

որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողել է անփոփոխ, և միաժամանակ մերժել մեղադրյալ Վ.Պողոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու կամ գրավով փոխարինելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը:

3. Առաջին ատյանի դատարանի վերը նշված դատական ակտի դեմ պաշտպան Ա.Վարդևանյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի մայիսի 29-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել պաշտպան Ա.Վարդևանյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանը, 2019 թվականի մայիսի 14-ի՝ «Մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու կամ փոփոխելու, ինչպես նաև ընտրված կալանավորում խափանման միջոցի հիմնավորվածության հարցը քննության առնելու վերաբերյալ» որոշման եզրափակիչ մասում նշել է. «(...) *Վանիկ Աբրահամի Պողոսյանի նկարմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ (...)*»¹:

6. Վերաքննիչ դատարանը, բողոքն առանց քննության թողնելու մասին որոշմամբ վկայակոչելով *Անուշ Ղավայյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 28-ի՝ թիվ ԵԲԲԴ/0299/01/08 որոշումը, արձանագրել է. «(...) *Մեղադրյալ Վ.Պողոսյանի պաշտպան Ա.Վարդևանյանի վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ բողոքարկված լինելու պարճատարանությամբ (...)*»²:

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ ամբաստանյալ Վ.Պողոսյանի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է կիրառվել գրավը՝ 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամի չափով³:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 52:

² Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 55:

³ Տե՛ս Դատական տեղեկատվական համակարգ (www.datalex.am), թիվ ԱՎԴ/0036/01/19 քրեական գործը:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի էլքի վրա: Մասնավորապես, բողոքաբերի պնդմամբ, ստորադաս դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 27-րդ և 63-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի պահանջները:

Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշմամբ խախտվել են Վ.Պողոսյանի սահմանադրական և կոնվենցիոն հիմնարար այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են՝ ազատության ու անձնական անձեռնմխելիության, արդար դատաքննության իրավունքը: Բողոքաբերը փաստել է, որ կալանավորման մասին որոշումը՝ որպես անձի ազատության իրավունքի սահմանափակմանն առնչվող դատական ակտ, պետք է ենթակա լինի բողոքարկման այն հիմնավորմամբ, որ վերաբերում է անձի հիմնարար իրավունքին, բացի այդ, նման հնարավորություն արդեն իսկ նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով:

8.1. Անդրադառնալով Վ.Պողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորմանը՝ բողոքաբերը նշել է, որ դրա անհրաժեշտությունն այլևս առկա չէ, քանի որ հանցագործության կատարման մեջ ենթադրաբար ներգրավված բոլոր անձինք բացահայտվել և հայտնաբերվել են, ամբողջ ծավալով իրականացվել են քննչական գործողությունները և օպերատիվ-հետախուզական միջոցառումները, հետևաբար բացակայում է գործի քննությանը խոչընդոտելու և վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հավանականությունը:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 29-ի որոշումը, Վ.Պողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացնել և նրան ազատել արգելանքից, կամ գրավի կիրառումը ճանաչել թույլատրելի:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից Վ.Պողոսյանի պաշտպան Ա.Վարդևանյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը՝ Առաջին ատյանի

դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ՝ այն դեպքում, երբ բողոքարկվել է գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին որոշումը:

11. ՀՀ սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԳՌ-1421 որոշմամբ անդրադառնալով գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու կամ կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննության արդյունքում կայացված որոշման բողոքարկման հնարավորությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Գ]ործը դատական քննության նախապատրաստելու փուլում վիճարկվող իրավակարգավորման ուժով մեղադրյալի նկատմամբ անձնական ազատության իրավունքի սահմանափակում նախարեսող խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունվում է որոշում (Օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մաս), որն, ի թիվս այլնի, Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետի, ինչպես նաև Օրենսգրքի 73-րդ հոդվածի 15-րդ կետի ուժով կարող է բողոքարկվել մեղադրյալի, նրա պաշտպանի կողմից (...): Ուստի, Սահմանադրական դատարանը գտնում է, որ (...) [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածով նախարեսված՝] վիճարկվող իրավակարգավորումը խնդրահարույց չէ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համարեքսպում այն առումով, որ Օրենսգրքում, մասնավորապես, առկա են կալանքի՝ որպես խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունված որոշման դատական բողոքարկման (ստուգման) օրենսդրական երաշխիքներ (...)»¹:

12. ՀՀ սահմանադրական դատարանի՝ նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը, վերանայելով *Անուշ Ղափայանի* գործով արտահայտած իրավական դիրքորոշումները², *Գարիկ Սարգսյանի* գործով փաստել է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու (այդ թվում նաև՝ կալանավորումը վերացնելու կամ այլ

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԳՌ-1421 որոշման 4.2-րդ կետը:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Անուշ Ղափայանի* գործով 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԲՐԴ/0299/01/08 որոշման 21-րդ կետը:

խափանման միջոցով փոխարինելու միջնորդությունը մերժելու) մասին որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով¹:

13. ՀՀ սահմանադրական դատարանը, 2019 թվականի նոյեմբերի 6-ի թիվ ՍԴՈ-1487 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Ելնելով մարդու հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական գործողության սահմանադրական պահանջից, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, մինչև Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մտրեցմամբ, որ գործի դատական քննության փուլում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումները ենթակա են վերաքննության կարգով անմիջական բողոքարկման՝ առաջին արյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու որոշումների բողոքարկման համար Օրենսգրքով սահմանված կարգով՝ առաջնորդվելով անձնական ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրացման ապահովման անհրաժեշտությամբ (...)»²:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, գործը դատական քննության նախապատրաստելու փուլում, որոշում է կայացրել Վ.Պողոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին³: Վերաքննիչ դատարանը, պաշտպան Ա.Վարդևանյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ այն պատճառաբանությամբ, որ պաշտպանի կողմից վերաքննության կարգով բողոքարկվել է Առաջին ատյանի դատարանի որոշումը, որը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածով⁴:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի կողմից Վ.Պողոսյանի պաշտպան

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գարիկ Սարգսյանի գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԵԿԴ/0294/01/17 որոշման 14-րդ կետը:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի թիվ ՍԴՈ-1487 որոշման 4.6.-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Ա.Վարդևանյանի ներկայացրած վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ՝ այն դեպքում, երբ բողոքարկվել է գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին որոշումը:

16. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի՝ հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկել համար¹:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առնի Վ.Պողոսյանի պաշտպան Ա.Վարդևանյանի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Վանիկ Աբրահամի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0231/13/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի որոշման դեմ դատապարտյալ Հասմիկ Սեյրանի Պապոյանի պաշտպան Լ. Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 11-ի դատավճռով Հասմիկ Սեյրանի Պապոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասին 1-ի կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով դատապարտվել ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով և տուգանքի՝ 800.000 ՀՀ դրամի չափով:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության Կոտայքի մարզային բաժնի պետի միջնորդությունը բավարարվել է, և

դատապարտյալ Հասմիկ Պապոյանի նկատմամբ վերը նշված դատավճռով նշանակված 800.000 ՀՀ դրամ տուգանք պատժատեսակը փոխարինվել է 2.200 ժամ տևողությամբ հանրային աշխատանքներ պատժատեսակով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ մերժվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ նշանակված՝ 2.200 ժամ տևողությամբ հանրային աշխատանքները տուգանքով փոխարինելու և այն մեկ տարի ժամկետով տարաժամկետելու մասին դատապարտյալ Հ. Պապոյանի միջնորդությունը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ դատապարտյալ Հ. Պապոյանի պաշտպան Լ. Ասլանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 2-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ դատապարտյալ Հ. Պապոյանի պաշտպան Լ. Ասլանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ վարույթ է ընդունվել¹:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանը, մերժելով դատապարտյալ Հ. Պապոյանի՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ նշանակված հանրային աշխատանքները տուգանքով փոխարինելու և այն մեկ տարի ժամկետով տարաժամկետելու մասին վեջինիս միջնորդությունը, իր դատական ակտում արձանագրել է. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթներից պարզ է դառնում, որ դրանում, ինչպես նաև գործող որևէ այլ իրավակարգավորումներով առկա չէ օրենսդրական նորմ, որը կարող է վերաբերել հանրային աշխատանքներ պարժատեսակը փուգանքով փոխարինելուն:

¹ Ծանոթություն. Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

Հերևաբար, դատարանը փաստում է, որ արդեն իսկ Հ.Պապոյանի նկարմամբ ՀՀ Կոստայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված որոշումը՝ փուզանք պարժարեսակը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին, անդառնալի է, ուստի, վերջինիս նկարմամբ նշանակված՝ 2200 (երկու հազար երկու հարյուր) ժամ հանրային աշխատանքները չեն կարող կրկին փոխարինվել 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ փուզանքով՝ օրենքով սահմանված նման ընթացակարգի բացակայության հիմքով»¹:

6. Վերաքննիչ դատարանը, միանձնյա կարգով քննարկելով պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը, արձանագրել է. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի քննարկվող իրավահարաբերությունները կանոնակարգող նորմերի վերլուծությունից հետևում է, որ դրանցում նախատեսված չեն այնպիսի կանոնակարգումներ, որոնք հնարավորություն կրան դատարանին փուզանք պարժարեսակը հանրային աշխատանքներով փոխարինելուց հետո այն կրկին փուզանք պարժարեսակով փոխարինելու մասին, հերևաբար, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ իրավաչափ են Առաջին արյանի դատարանի պարժարեսակությունները (...)»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, ինչի արդյունքում կայացվել է անհիմն և անօրինական դատական ակտ:

Ի հիմնավորումը վերոգրյալի՝ բողոքի հեղինակը փաստարկել է, որ հանրային աշխատանքներ պատժատեսակը տուգանք պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատապարտյալ Հ.Պապոյանի միջնորդության քննարկման արդյունքում կայացված որոշումը ևս գործն ըստ էության լուծող դատական ակտ է, և դրա դեմ բերված վերաքննիչ բողոքը պետք է քննարկվի կոլեգիալ կազմով, իսկ բողոքարկման համար պետք է կիրառվի դատավճիռների բողոքարկման համար սահմանված ընթացակարգը:

8. Վերոշարադրյալի հիման վրա, դատապարտյալ Հ.Պապոյանի պաշտպան Լ.Ասլանյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի որոշումը, և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 39-44:

² Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 44-47:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք դատապարտյալ Հ.Պապոյանի նկատմամբ որպես պատիժ նշանակված հանրային աշխատանքները տուգանքով փոխարինելու և այն մեկ տարի ժամկետով տարաժամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին Առաջին աստիանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կարգով քննության առնելը:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետի համաձայն՝ *«(Գ)ործն ըստ էության լուծող դատական ակտեր [են/ առաջին աստիանի դատարանի դատավճիռ[ը], քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում[ը], բժշկական քննյթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշում[ը], ինչպես նաև այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտեր[ը], ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 4.Վերաքննիչ դատարանում գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բողոքները քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով (...):»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի համաձայն՝ *«Գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերաքննիչ դատարանում վերանայվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով (...):»:*

10.1 Վերը նշյալ իրավանորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ դատարանի այն որոշումը, որտեղ քննարկվում և իրենց լուծումն են ստանում դատավճռին վերաբերող այնպիսի հարցեր, ինչպես օրինակ՝ պատժատեսակի և պատժաչափի որոշումը, ևս գործն ըստ էության լուծող դատական ակտ է և ենթակա է բողոքարկման այն նույն դատավարական ընթացակարգով, ինչպիսին կիրառվում է դատավճիռները բողոքարկելիս: Այսինքն՝ նման դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելիս և վերաքննիչ բողոքը քննելիս ենթակա են կիրառման, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով և 387-րդ հոդվածով սահմանված դատավարական պահանջներ¹:

¹ Տե՛ս Արսեն Արծրունու գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՎԲ-16/11 որոշման 11-րդ կետը, Գարեգին Ղազարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԱՐԱԳ/0017/13/12 որոշման 11.1-րդ կետը, Արթուր Ավերիսյանի

11. Հինք ընդունելով վերոնշյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանրային աշխատանքները տուգանքով փոխարինելու մասին դատապարտյալի (պաշտպանի) միջնորդությունը քննարկելիս դատարանն անդրադառնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածով նախատեսված այնպիսի իրավական հարցերի (պատժատեսակի և պատժաչափի որոշում), որոնք օրենքի ուժով (ex lege) վերապահված են գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ դատավճռի լուծմանը, հետևաբար նշված միջնորդության քննարկման արդյունքում կայացվող դատական ակտը պետք է բողոքարկվի և բողոքը քննության առնվի այն նույն դատավարական ընթացակարգով, ինչը նախատեսված է գործն ըստ էության լուծող դատական ակտի համար: Այլ կերպ՝ քննարկման առարկա դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելիս կիրառման են ենթակա, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով, 379-րդ և 387-րդ հոդվածներով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկմանը ներկայացվող պահանջները¹:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը մերժել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ նշանակված՝ 2.200 ժամ տևողությամբ հանրային աշխատանքները տուգանքով փոխարինելու և այն մեկ տարի ժամկետով տարաժամկետելու մասին դատապարտյալ Հ. Պապոյանի միջնորդությունը²:

Վերաքննիչ դատարանը, վերը նշյալ դատական ակտի դեմ պաշտպանի կողմից ներկայացրած բողոքը միանձնյա կարգով քննության առնելով, մերժել է այն³:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-11-րդ կետերում վկայակոչված իրավադրոյթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 2-ի որոշումը՝ որպես գործն ըստ էության լուծող, պետք է բողոքարկվեր և քննության առնվեր, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով և 387-րդ հոդվածով սահմանված պահանջների պահպանմամբ, այն է՝

գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԼԴ/0125/13/17 որոշման 13-րդ կետը:

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Էդիկ Ծոնվերանցի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵՇԴ/0049/01/12 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերը:

³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

վերաքննիչ բողոքը պետք է քննության առնվեր կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով՝ այդ կերպ ապահովելով օրինականության սկզբունքի և արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի առկայության պահանջը¹:

14. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Հ.Պապոյանի նկատմամբ որպես պատիժ նշանակված հանրային աշխատանքները տուգանքով փոխարինելու և այն մեկ տարի ժամկետով տարաժամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կարգով քննության առնելն իրավաչափ չէ:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի և 387-րդ հոդվածի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք են²:

Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է կոլեգիալ կազմով քննության առնի պաշտպանի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-րդ և 423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Հասմիկ Սեյրանի Պապոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

¹ Մանրամասն տե՛ս *Էդիկ Ծոնվերանցի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵՇԳ/0049/01/12 որոշումը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Հրայր Հովսեփյանի* վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԳ/0426/11/18 որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարեցում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ/0002/06/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահույթյամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ԱԼԻԽԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 4-ի որոշման դեմ մեղադրյալ Արման Արարատի Մադաթյանի պաշտպան Ա.Ալիխանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի փետրվարի 11-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 46154519 քրեական գործը:

1.1. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մարտի 11-ի որոշմամբ Արման Արարատի Մադաթյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով, 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 324-րդ հոդվածի 2-րդ մասով:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2019 թվականի մարտի 12-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Մադաթյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 8-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Մադաթյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը երկարացվել է՝ երկու ամիս ժամկետով:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի հունիսի 4-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Մադաթյանի պաշտպան Ա.Ալիխանյանի վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Ա.Մադաթյանի պաշտպան Ա.Ալիխանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ ընդունվել է վարյոթ¹:

Արմավիրի մարզի դատախազության դատախազ Ծ.Մնացականյանի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոքի պատասխան, որով վերջինս խնդրել է մերժել մեղադրյալ Ա.Մադաթյանի պաշտպան Ա.Ալիխանյանի բողոքը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 8-ի որոշման եզրափակիչ մասում արձանագրվել է. «Բավարարել ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի պետի տեղակալ Վ.Բազունցի միջնորդությունը:

Թիվ 46154519 քրեական գործով մեղադրյալ Արման Արարատի Մադաթյանին (...) կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնել 2 (երկու) ամիս ժամկետով մինչև 2019թ. հուլիսի 12-ը:

(...)

*Որոշումը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ տրանսպարտ ժամկետում (...)*²:

6. Մեղադրյալ Ա.Մադաթյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երակարացնելու վերաբերյալ Առաջին

¹ Ծանոթություն. վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՄԴԱՈ-66 որոշումը ստանալուց հետո:

² Տե՛ս, նյութեր, հատոր 1-ին, թերթ 76:

ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 8-ի որոշման օրինակը պաշտպան Ա.Ալիխանյանը ստացել է նույն օրը՝ **2019 թվականի մայիսի 8-ին**¹:

7. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ մեղադրյալ Ա.Մադաթյանի պաշտպան Ա.Ալիխանյանի վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել **2019 թվականի մայիսի 20-ին**², որը փոստային առաքման միջոցով Վերաքննիչ դատարան է ստացվել **2019 թվականի մայիսի 21-ին**³:

8. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով մեղադրյալ Ա.Մադաթյանի պաշտպան Ա.Ալիխանյանի վերաքննիչ բողոքը, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) /S/վյալ դեպքում պաշտպան Ալիխանյանի կողմից չեն պահպանվել վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետները, այն է՝ բողոքը ներկայացվել է որոշումը հասանելի լինելուց տասներկու օր անց:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտը պաշտպան Ա.Ալիխանյանը ստացել է 2019 թվականի մայիսի 08-ին, և վերջինիս համար այդ դատական ակտի բողոքարկման ժամկետն ավարտվել է 2019 թվականի մայիսի 13-ին՝ ժամը 24:00-ին (...):

Սույն դատական գործի նյութերից երևում է, որ պաշտպան Ա.Ալիխանյանը հիշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնել 2019 թվականի մայիսի 20-ին, այսինքն՝ վերաքննիչ բողոք բերելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետի խախտմամբ: Այլ կերպ՝ վերաքննիչ բողոքը ժամկետանց է, ուստի այն պետք է թողնել առանց քննության:

(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ տվյալ դեպքում պաշտպան Ա.Ալիխանյանը, վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետը բաց թողնելու փաստի ուժով, իրավական տեսանկյունից օբյեկտիվորեն անկարող է իրացնել դատական բողոքարկման իր իրավունքը, հետևաբար վերջինիս կողմից ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության՝ բողոքը ժամկետանց լինելու հիմքով(...)»⁴:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս, նյութեր, հատոր 1-ին, թերթ 76:
² Տե՛ս, նյութեր, հատոր 1-ին, թերթ 100:
³ Տե՛ս, նյութեր, հատոր 1-ին, թերթ 87:
⁴ Տե՛ս, նյութեր, հատոր 1-ին, թերթ 106:

9. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Մասնավորապես, ստորադաս դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 6-րդ, 18-րդ և 19-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 6-րդ և 13-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ և 398-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումը վերոհիշյալի՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 8-ի որոշման եզրափակիչ մասում նշված վերաքննության կարգով բողոքարկման տասնօրյա ժամկետը թյուրիմացության մեջ է գցել իրեն, որի պատճառով բողոքարկման ժամկետը բաց է թողնվել ոչ պաշտպանության կողմի մեղքով: Վերաքննիչ դատարանը՝ 2019 թվականի հունիսի 4-ի որոշմամբ անդրադարձ չի կատարել վերը նշված փաստին և եկել սխալ եզրահանգման՝ բողոքը թողնելով առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Արման Մադաթյանի դատական պաշտպանության իրավունքը և դատարանի մեղքով բաց է թողնվել բողոքարկման ժամկետը, ուստի պաշտպանության կողմն ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ էթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է՝ «(...) [Ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ դատարանի (...) որոշումը (...), որոշում կայացնել (...) վերաքննիչ բողոքը քննության առնելու մասին, և բողոքի քննարկումն ուղարկել (...) Վերաքննիչ քրեական դատարան (...), իսկ բողոքի ժամկետի քննարկման սկիզբը հաշվարկել սկզբնական ներկայացման օրը՝ 20.05.2019 թվականը»:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք մեղադրյալ Ա.Մադաթյանի պաշտպան Ա.Ալիխանյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

12. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկասի և անսաչտ դատարանի կողմից իր գործի

արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկարմամբ կայացված դատավճի՛ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական արյանի կողմից վերանայման իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) դատաքննության իրավունք»:

Կոնվենցիային կից թիվ 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիհը վերանայվի վերադաս դատական արյանի կողմից: Այդ իրավունքի իրականացումը, ներառյալ դրա իրականացման հիմքերը, կարգավորվում է օրենքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին: Ժամկետն ամիսներով կամ տարիներով հաշվելիս ժամկետը վերջանում է վերջին ամսվա համապատասխան օրը (...): Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը (...):

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքը ներկայացվում է վերաքննիչ դատարան, իսկ դրա պարզենը՝ դատական ակտ կայացրած դատարան (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 3) առաջին արյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից

հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

13. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը¹,

- դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն²,

- ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա³,

- դատարանի մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի⁴:

14. ՀՀ սահմանադրական դատարանը 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՄԴՈ-1420 որոշմամբ դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Starosczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Khalifaoui v. France* գործով 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, 36-րդ կետ, *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Efstathiou and others v. Greece* գործով 2006 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ:

արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարանի դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի ինստիտուցիոնալ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման¹:

15. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի բացառիկ նշանակությունն անձի իրավունքների պաշտպանության իրավական համակարգում²՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել այն մասին, որ վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող ձևական բնույթի չափանիշների և պահանջների չպահպանումը չպետք է այնպես մեկնաբանվի, որ անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը ենթարկվի անհամաչափ սահմանափակման՝ հանգեցնելով այդ իրավունքի բուն էության խաթարմանը: Այլ կերպ՝ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը պետք է հիմնված լինի վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող ձևական բնույթի չափանիշների և պահանջների պահպանված չլինելու մասին փաստերի բովանդակային գնահատման վրա՝ ապահովելու համար բողոքարկման իրավունքի սահմանափակման և հետապնդվող նպատակի միջև համարժեք հարաբերակցությունը³:

16. ՀՀ վճռաբեկ դատարանը «Արդշինիսվետարանակ» փակ բաժնետիրական ընկերության գործով վերահաստատելով և զարգացնելով

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՌ-1420 որոշման 4.1-րդ կետը:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Այվազյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴՂ/0007/15/12 որոշումը, Լևոն Հարությունյանի գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշումը, Նսիրի Գևորգյանի գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ՍԴԿ/0088/01/12 որոշումը:

³ Տե՛ս Անդրանիկ Խաչատրյանի գործով 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ ՇԴՂ/0049/01/17 որոշման 16-րդ կետը:

Արման Դավթյանի և Սոնա Մկրտչյանի գործով արտահայտված իրավական դիրքորոշումները, արձանագրել է՝ «(...) [Ի]րավասու մարմնի կողմից ինչպես իր կայացրած որոշման բողոքարկման ընթացակարգի մասին պարզաբանումներ ընդհանրապես չիրամատրելը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումներին չհամապատասխանող, ոչ ամբողջական, անորոշ և դատավարության մասնակիցներին մոլորության մեջ գցող պարզաբանումներ փրամատրելը հավասարապես հակասում են օրինականության սկզբունքին և հանգեցնում անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման (...)»¹:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 8-ի որոշման եզրափակիչ մասում արձանագրվել է վերաքննության կարգով դատական ակտի բողոքարկման **տասնօրյա ժամկետ**²,

- Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 8-ի որոշումը մեղադրյալ Ա.Մաղաթյանի պաշտպան Ա.Ալիխանյանը ստացել է նույն օրը՝ **2019 թվականի մայիսի 8-ին**³,

- Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ մեղադրյալ Ա.Մաղաթյան պաշտպան Ա.Ալիխանյանի վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել **2019 թվականի մայիսի 20-ին**⁴, որը փոստային առաքման միջոցով Վերաքննիչ դատարանում է ստացվել 2019 մայիսի 21-ին⁵,

- Վերաքննիչ դատարանը 2019 թվականի հունիսի 4-ի որոշմամբ պաշտպան Ա.Ալիխանյանի բողոքը թողել է առանց քննության՝ փաստելով, որ որոշման բողոքարկման ժամկետն ավարտվել է **2019 թվականի մայիսի 13-ին՝ ժամը 24:00-ին**, մինչդեռ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել **2019 թվականի մայիսի 20-ին**⁶:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-16-րդ կետերում վկայակոչված իրավադրությունների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև կալանքի ժամկետի երկարացման որոշումների համար օրենքը հստակ սահմանում է բողոքարկման **հնգօրյա ժամկետ**, սակայն Առաջին ատյանի դատարանի՝

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի՝ «Արդշինիսիավեսարանկ» ՓԲԸ-ի գործով թիվ ԳԳ3/0001/11/14 որոշման 15-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁶ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

2019 թվականի մայիսի 8-ի որոշման եզրափակիչ մասում տեղ գտած ձևակերպումը՝ դատական ակտի վերաքննության կարգով բողոքարկման **տասնօրյա ժամկետի** վերաբերյալ կարող էր պաշտպանական կողմին հանգեցնել տարընկալման՝ բողոքարկման ժամկետի ավարտման վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ անդրադարձ չի կատարվել Առաջին ատյանի դատարանի կողմից արձանագրված՝ դատական ակտի վերաքննության կարգով բողոքարկման ժամկետին, ուստի և քննության չառնելով վերոնշյալը, անհամաչափորեն սահմանափակվել է մեղադրյալ Ա.Մադաթյանի՝ դատարանի մատչելիության իրավունքը:

19. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղադրյալ Ա.Մադաթյանի պաշտպան Ա.Ալիխանյանը՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը 2019 թվականի մայիսի 8-ին ստացած լինելու պարագայում, ղեկավարվելով դատարանի կողմից արձանագրված՝ բողոքարկման տասնօրյա ժամկետով, վերաքննիչ բողոքը ներկայացրել է՝ 2019 թվականի մայիսի 20-ին, քանի որ որոշումը ստանալուն հաջորդող օրվանից՝ 2019 թվականի մայիսի 9-ից հաշվարկելու դեպքում այն վերջանում էր նույն թվականի մայիսի 19-ին, և նկատի ունենալով, որ ժամկետի լրանալը համընկնում էր ոչ աշխատանքային օրվա հետ, ժամկետի վերջին օրը պետք է հաշվվեր դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ 2019 թվականի մայիսի 20-ը: Հետևաբար պաշտպանի կողմից պահպանվել է Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված բողոքարկման տասնօրյա ժամկետը:

19.1. Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ մեղադրյալ Ա.Մադաթյանի պաշտպան Ա.Ալիխանյանի ներկայացված բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելիս Վերաքննիչ դատարանն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի անհարկի սահմանափակումներից խուսափելու նպատակով, պետք է գնահատականի արժանացնել Առաջին ատյանի դատարանի կողմից որոշման եզրափակիչ մասում սխալ արձանագրված՝ վերաքննության կարգով բողոքարկման ժամկետի հարցին:

20. Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է

Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 4-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար¹:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ա.Մաղաթյանի պաշտպան Ա.Ալիխանյանի բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 4-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առնի պաշտպանի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Արման Արարատի Մաղաթյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԿ/0426/11/18 որոշումը:

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0306/06/19

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սարգիս Վլադիմիրի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 14-ի որոշման դեմ մեղադրյալ Սարգիս Մանուկյանի պաշտպան Լ.Ասլանյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում հարուցվել է թիվ 12121218 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

2019 թվականի մայիսի 18-ին Սարգիս Վլադիմիրի Մանուկյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 21-ի որոշմամբ Ս.Մանուկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի մայիսի 21-ի որոշմամբ Ս.Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

3. Ս.Մանուկյանի պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի հունիսի 14-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 21-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ Ս.Մանուկյանի պաշտպան Լ.Ասլանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ վարույթ է ընդունվել¹:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 21-ի դատական նիստի արձանագրության համաձայն (ժամը 20:14-ից)՝ պաշտպանության կողմը, հայտարարելով, որ ժամանակի սղության պատճառով չի կարողացել մեղադրյալ Ս.Մանուկյանի ձերբակալման դեմ գրավոր բողոք ներկայացնել, միջնորդել է վերջինիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդության քննության ընթացքում անդրադառնալ նաև Ս.Մանուկյանի ձերբակալման իրավաչափության հարցին՝ խնդրելով ձերբակալումը ճանաչել ոչ իրավաչափ²:

6. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) *Քննության առնելով միջնորդությունը, ուսումնասիրելով միջնորդությանը կից ներկայացված նյութերը, լսելով կողմերի բացատրությունները, դատարանը գտնում է, որ ներկայացված նյութերը, մասնավորապես՝*

- (...) պարունակում են տեղեկություններ առ այն, որ մեղադրյալ Սարգիս Վլադիմիրի Մանուկյանը հնարավոր է առնչություն ունի իրեն

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է առնվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

² Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 126, դատական նիստի արձանագրության լագերային կրիչը:

մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նախատեսված ենթադրյալ արարքի հետք.

- միջնորդությանը կից ներկայացված նյութերի ուսումնասիրությամբ ենթադրվում է, որ մեղադրյալը մնալով ազատության մեջ հնարավոր է կատարի քրեական օրենքով արգելված նոր արարք, հաշվի առնելով այն, որ մեղադրյալը նախկինում դատապարտված է եղել համասեռ այլ արարքի կատարման համար, ինչպես նաև հնարավոր է թաքնվի վարույթն իրականացնող մարմնից, քանի որ նախկինում դատապարտվել է ազատագրկման վայրից փախուստի փորձ կատարելու և ազատագրկման վայրից փախուստ կատարելու նախապարտատրության համար:

- քրեական գործով մինչդարական վարույթին խոչընդոտելու վերաբերյալ ունեցած մրավախոթությունները հիմնավորող փաստարկներ քննիչի կողմից դատարանին չներկայացվեցին, հետևաբար նշված հիմքը չի կարող դրվել անձի կալանավորման հիմքում, հաշվի առնելով նաև այն, որ մեղադրյալը դեպքի հանգամանքների վերաբերյալ փյվել է ցուցմունքներ, որոնց արժանահավատության վերաբերյալ որևէ կասկածներ առկա չեն:

- ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ և 177-րդ հոդվածի 3-րդ մասերի համաձայն մեղսագրվող արարքը դատվում է ծանր հանցագործությունների շարքին, որի համար նախատեսված է ազատագրկման ձևով պարիժ մեկ փարուց ավելի ժամկետով:

Այսպիսով, (...) հաշվի առնելով գործի փաստական բոլոր հանգամանքները, դատարանը գտնում է, որ դրանք իրենց համակցության մեջ հիմք են տալիս ենթադրություն կատարելու, որ Սարգիս Վլադիմիրի Մանուկյանը հնարավոր է առնչություն ունի իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքի կատարման հետ, իսկ ազատության մեջ մնալով կարող է խոչընդոտել մինչդարական վարույթում գործի քննությանը, ուստի հիմք ընդունելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջները, դրա վերաբերյալ [ՄԻԵԴ] (...) ու ՀՀ Վճռարեկ դատարանի հայրնած իրավական դիրքորոշումները՝ [Ս.Մանուկյանի] (...) պարզաձ վարքագիծն ապահովելու նպատակով նրա նկատմամբ որպես խափանման միջոց պետք է ընտրել կալանավորումը երկու ամիս ժամկետով:

Անդրադառնալով պաշտպանի հայրնած դիրքորոշմանը՝ ձերբակալման ոչ իրավաչափ լինելը հաստատելու վերաբերյալ, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 289.1-289.5-րդ հոդվածներով նման հարցերի հարակ ընթացակարգ է սահմանված,

ինչպիսին սույն դեպքում պահպանված չէ, դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա չէ քննարկման: (...)»¹:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Անդրադատնալով վերաքննիչ բողոքի այն պարճատարանությանը, թե «(...) [Ձ]երբակալման իրավաչափության վիճարկումը առաջնահերթ է և ենթակա է սեղմ ժամկետում քննարկման, ինչը չպետք է պայմանավորվի ձևական նկարատումներով, այն է՝ գրավոր բողոք բերելու [պայմանը] պահպանած լինելու հանգամանքով», Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործող քրեադատարական օրենսդրությանը ձերբակալման բողոքարկման այլ ձև, քան դատարան գրավոր բողոքի ներկայացումն է, նախարեակված չէ, և այն զուր ձևական պահանջ չէ:

(...) Սույն գործով Առաջին արյանի դատարանը, քննության առնելով մեղադրյալ Ս.Մանուկյանի նկարումը կալանավորումը որպես խախտման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը, արձանագրելով, որ ներկայացված նյութերը իրենցում պարունակում են տեղեկություններ առ այն, որ մեղադրյալը հնարավոր է առնչություն ունի իրեն մեղագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նախարեակված ենթադրյալ արարքի հետ և մեղադրյալը մնալով ազատության մեջ հնարավոր է կարարի քրեական օրենքով արգելված նոր արարք, հաշվի առնելով այն, որ մեղադրյալը նախկինում դատարարված է եղել համասեռ այլ արարքի կարարման համար, ինչպես նաև հնարավոր է թաքնվի վարույթն իրականացնող մարմնից, քանի որ նախկինում դատարարվել է ազատագրկման վայրից փախուտարի փորձ կարարելու և ազատագրկման վայրից փախուտար կարարելու նախարարարարության համար, միևնույն ժամանակ արձանագրելով, որ քրեական գործով մինչդարական վարույթին խոչընդորելու վերաբերյալ ունեցած մրավախոթությունները հիմնավորող փաստարկներ քննիչի կողմից դատարանին չներկայացվեցին և հետևարար նշված հիմքը չի կարող դրվել անձին կալանավորման հիմքում, հաշվի առնելով նաև այն, որ մեղադրյալը դեպքի հանգամանքների վերաբերյալ տվել է ցուցմունքներ, որոնց արժանահավարության վերաբերյալ որևէ կասկածներ առկա չեն, մեղադրյալին մեղագրվող արարքը դատվում է ծանր հանցագործությունների շարքին գտնելով, որ գործի փաստական բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ հիմք են տալիս ենթադրություն կարարելու, որ Ս.Մանուկյանը հնարավոր է առնչություն ունի իրեն մեղագրվող ենթադրյալ արարքի կարարման հետ, իսկ ազատության մեջ մնալով կարող է խոչընդորել մինչդարական վարույթում գործի քննությանը, ուարի հիմք ընտրնելով «Մարդու իրավունքների և

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 127-131:

հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջները, դրա վերաբերյալ [ՄԻԵԴ] (...) ու ՀՀ Վճռաբեկ դատարանի հայրենաձ իրավական դիրքորոշումները և արձանագրելով, որ վերջինիս պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակով նրա նկատմամբ որպես խափանման միջոց պետք է ընտրել կալանավորումը, օրինական և հիմնավորված որոշում է կայացրել միջնորդությունը բավարարելու մասին:

Անդրադառնալով վերաքննիչ բողոքում ներկայացված՝ մեղադրյալ Ս.Մանուկյանի անձը բնութագրող տվյալներին այն մասին, որ «... վերջինս իր ինամքին ունի 2 անչափահաս երեխա 7 տարեկան և 9 ամսական, նրա ինամքին է գրնվում 28 շաբաթական հղիության վիճակում գրնվող կինը, որի վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր են ներկայացվել, Ս.Մանուկյանը հանդիսանում է իր ընտանիքի միակ ինամող ուժը, իսկ նրան ազատությունից զրկելը կվարթարացնի նրա ընտանիքի դրությունը», Վերաքննիչ դատարանը գրնում է, որ մեղադրյալի անձին վերաբերվող վերոնշյալ հանգամանքը վերնում նշված հանգամանքների առկայության պայմաններում որոշիչ դեր ունենալ չի կարող որպես խափանման միջոց ընտրված կալանքը վերացնելու համար:

Այսպիսով, դատական արուզման արդյունքում վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ մեղադրյալ Ս.Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին միջնորդությունը քննության առնելիս՝ թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, ուստի պաշտպան Ս.Սարգսյանի վերաքննիչ բողոքը բավարարելու և Առաջին աստի դատարանի որոշումը բեկանելու հիմքեր չկան: (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, քանի որ գրավոր բողոքի բացակայության պատճառաբանությամբ չանդրադառնալով՝ ձերբակալման իրավաչափության վերաբերյալ պաշտպանության կողմի փաստարկներին՝ խախտել է անձին ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու երաշխիքը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքն ունի անհետաձգելի և առաջնահերթ բնույթ, ենթակա է անհապաղ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 33-45:

կենսագործման, հետևաբար քննարկվող դեպքում հայցվող իրավական պաշտպանությունը չպետք է պայմանավորել ձևական՝ գրավոր բողոքի առկայության հանգամանքով, և դատարանը պետք է անհապաղ քննարկման առարկա դարձնել անձին ազատությունից զրկելու իրավաչափության հարցը, ինչի արդյունքում առավելագույնս կնվազեցվեր անձի ազատության իրավունքին ցանկացած չիմնավորված միջամտություն:

8.1. Բացի այդ, բողոքաբերը գտել է, որ քրեադատավարական կարգավորումները չեն բացառում ձերբակալման իրավաչափության հարցը գրավոր բողոքի բացակայության պայմաններում դատական վերահսկողության առարկա դարձնելու հնարավորությունը, հակառակ դեպքում կրթվանդակագրկվեն քննարկվող ինստիտուտի նպատակներն ու երաշխիքները:

Արդյունքում, բողոքաբերը եզրահանգել է, որ դատարանը պարտավոր էր անդրադառնալ դատական նիստի ժամանակ պաշտպանության կողմի բարձրացրած՝ ձերբակալության իրավաչափության հարցին:

9. Անդրադառնալով Ս.Մանուկյանի ձերբակալման իրավաչափության հարցին՝ բողոքաբերը նախ՝ նշել է, որ ձերբակալման արձանագրության մեջ նշված «քրեական հետապնդման մարմնից թաքնվելը կանխելը»՝ որպես ձերբակալման նպատակ, նախատեսված չէ քրեական դատավարության օրենսգրքով: Ինչ վերաբերում է վկայակոչված մյուս նպատակներին, ապա բողոքաբերի պնդմամբ՝ սույն գործի փաստական տվյալների ուսումնասիրությունից հետևում է, որ Ս.Մանուկյանը քննչական բաժին է ներկայացել մեղադրանքում նշված արարքի կատարման օրվանից շուրջ 6 ամիս անց, ընդ որում, վերջինս բերման չի ենթարկվել կամ ձերբակալվել հանցագործությունը կատարելիս, հետևաբար, անհիմն է Ս.Մանուկյանի ձերբակալման՝ հանցագործության կատարումը կանխելու նպատակը: Բացի այդ, Ս.Մանուկյանն իրեն մեղսագրված ենթադրյալ արարքը կատարելուց հետո տևական ժամանակ անց վարույթն իրականացնող մարմնի բանավոր կանչով ներկայացել է քննչական մարմին, ինչից, ըստ բողոքաբերի, հետևում է, որ ձերբակալման՝ փախուստը կանխելու նպատակը ևս իրավաչափ չէ:

Արդյունքում, բողոքաբերը եզրահանգել է, որ Ս.Մանուկյանին ձերբակալելը չի հետապնդել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակը:

10. Բողոքաբերը, անդրադառնալով կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու իրավաչափությանը, արձանագրել է, որ ստորադաս դատարանները հաշվի են առնել միայն նախկինում դատապարտված լինելու հանգամանքը, պատշաճ չեն գնահատել այն

փաստը, որ Ս.Մանուկյանը, 6 ամիս մնալով ազատության մեջ, որևէ հակաօրինական արարք չի կատարել, կամովին ներկայացել է վարույթն իրականացնող մարմին: Հետևաբար, բողոքաբերի կարծիքով, միայն այն փաստը, որ Ս.Մանուկյանը նախկինում համասեռ արարքների համար դատապարտված է եղել, բավարար չէ հիմնավորելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությունը:

10.1. Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն անհամաչափ գնահատական է տվել այն հանգամանքին, որ Ս.Մանուկյանի խնամքին են երկու անչափահաս երեխաները և 28 շաբաթական հղիության վիճակում գտնվող կինը:

10.2. Բողոք բերած անձը, մեջբերելով Վերաքննիչ դատարանի որոշման այն հատվածը, որ. «(...) *[Գ]ործի փաստական բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ հիմք են տալիս ենթադրություն կատարելու, որ Ս.Մանուկյանը (...) ազատության մեջ մնալով կարող է խոչընդոտել մինչդասական վարույթում գործի քննությանը (...)*», փաստել է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի կողմից մատնանշված՝ կալանավորման երկու հիմքերից բացի արձանագրել է ևս մեկ հիմք, այն է՝ գործի քննությանը խոչընդոտելը՝ թույլ տալով քրեադատավարական օրենքի էական խախտում:

11. Վերոշարադրյալի հիման վրա՝ Ս.Մանուկյանի պաշտպան Լ.Ասլանյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 14-ի որոշումը, Ս.Մանուկյանի ձերբակալումը համարել ոչ իրավաչափ և արձանագրել Ս.Մանուկյանի իրավունքների ու ազատությունների խախտումը, կամ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության, կամ Ս.Մանուկյանին ազատ արձակել կալանքից:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *իրավաչափ է արդյոք ստորադաս դատարանների կողմից Ս.Մանուկյանի ձերբակալման իրավաչափության հարցը դատական վերահսկողության առարկա չդարձնելը:*

13. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...)*

նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) դատաքննության իրավունք»:

14. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը¹,

- դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն²,

- ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա³,

- դատարանի մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի⁴:

15. ՀՀ Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՄԴՈ-1420 որոշմամբ անդրադառնալով դատարանի մատչելիության իրավունքին, փաստել է, որ.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի

¹ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

² Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Khalifaoui v. France* գործով 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, 36-րդ կետ, *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ:

³ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

⁴ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Efstathiou and others v. Greece* գործով 2006 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ:

արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման¹:

16. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել այն մասին, որ այդ իրավունքն ունի բացառիկ նշանակություն՝ անձի իրավունքների պաշտպանության իրավական համակարգում, այն ենթադրաբար խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման հիմնական նախապայմանն է, որի միջոցով է կենսագործվում դատարան դիմելու (*locus standi*) և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու անձի իրավունքը:

Ելնելով վերոնշյալ առանձնահատկությունից՝ դատական պաշտպանության իրավունքի իրացմանը ներկայացվող ձևական բնույթի կարգավորումները չպետք է այն աստիճան չափազանցվեն (*excessive formalism*), որ դատական պաշտպանության իրավունքից օգտվելու չափանիշների և պահանջների չպահպանման արդյունքում վրա հասնող իրավական հետևանքն անհամաչափորեն սահմանափակի անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը: Այսինքն՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է հանգեցնեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների էության խախտման²:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՌ-1420 որոշման 4.1-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Այվազյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշման 16-րդ կետը, *Լևոն Հարությունյանի* գործով

17. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է»:

18. Եվրոպական կոնվենցիա 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ «քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ. անձի օրինական կայանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում՝ նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում «երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կայանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ «որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն (...):»:

Եվրոպական դատարանը վերոնշյալ երաշխիքի համատեքստում իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ.

- ազատությունից զրկվելուց հետո դատարանի առջև կանգնելու և ազատությունից զրկվելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունն ապահովում է քրեական հանցանք կատարելու կասկածով ձերբակալված անձանց համար երաշխիքներ կամայական կամ չհիմնավորված ազատությունից զրկվելու դեմ¹,

- ազատությունից զրկվելու սկզբնական փուլում դատական վերահսկողությունը երաշխիք է՝ ա) վատ վերաբերմունքի ենթարկվելու վտանգի դեմ. որի դրսևորման հնարավորությունն ազատությունից զրկվելու նախնական փուլում առավել բարձր է. բ) ոստիկանության ծառայողների կամ մեկ այլ մարմնի կողմից իրենց վերապահված այն լիազորությունների չարաշահման դեմ. որոնք պետք է իրականացվեն սահմանափակ

2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԳ/0337/06/15 որոշման 13-րդ կետը, Նաիրի Գևորգյանի գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ՄԴ/0088/01/12 որոշման 14-րդ կետը:

¹ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Aquilina v. Malta* գործով 1999 թվականի ապրիլի 29-ի վճիռը, գանգատ թիվ 25642/94, 47-րդ կետ, *Stephens v. Malta* (թիվ 2) գործով 2009 թվականի ապրիլի 21-ի վճիռը, գանգատ թիվ 33740/06, 52-րդ կետ:

նպատակներով և սահմանված ընթացակարգերի հետ խիստ համապատասխանության պայմաններում¹,

- ձերբակալված անձին առաջին անգամ դատարան ներկայացնելու ժամանակ իրականացվող դատական վերահսկողությունը պետք է նախևառաջ լինի արագ, որպեսզի հնարավոր լինի բացահայտել վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորում և առավելագույնս նվազեցնել անձի ազատության իրավունքի նկատմամբ ցանկացած չհիմնավորված միջամտություն: Այդ պահանջով ամրագրված ժամանակային խիստ սահմանափակումը բացառում է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի ճկուն մեկնաբանման հնարավորությունը, այլապես, ի վնաս անհատի, հարվածի տակ կղրվի տվյալ հոդվածով ամրագրված ընթացակարգային երաշխիքը՝ հանգեցնելով նույն հոդվածով պաշտպանվող իրավունքի էությանը հակառակ հետևանքների²:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 289.1-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ձերբակալումը կարող է բողոքարկվել դատական կարգով: Ձերբակալման բողոքարկումն իրականացվում է սույն գլխով սահմանված կարգով՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկություններով:

(...)

3. Ձերբակալման դեմ բողոք կարող է ներկայացվել անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից մեկամյա ժամկետում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 289.2-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ձերբակալման դեմ բողոքը պարունակում է՝

- 1) իրավասու դատարանի անվանումը.
- 2) բողոքարկողի անունը, հայրանունը, ազգանունը, ունենալու դեպքում՝ կարգավիճակը.
- 3) բողոքը դատարան ներկայացնելու փաթիկն, ամիսը, օրը, ժամը.
- 4) առկայության դեպքում գործի վարույթի համարը.
- 5) առկայության դեպքում՝ ձերբակալման որոշումը կամ արձանագրությունը.
- 6) բողոքի փաստարկները և պահանջը.
- 7) սույն օրենսգրքի 289.4-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը հիմնավորող փաստեր.
- 8) բողոքին կցվող նյութերի ցանկը»:

Նույն օրենսգրքի 289.4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Եթե մինչև ձերբակալման դեմ բողոքը ներկայացնելը դատարան է ներկայացվել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ

¹ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Ladent v. Poland* գործով 2008 թվականի մարտի 18-ի վճիռը, գանգատ թիվ 11036/03, 72-րդ կետ:

² Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *McKay v. The United Kingdom* գործով 2006 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 543/03, 33-րդ կետ:

միջնորդություն, ապա ձերբակալման դեմ բողոքը պետք է ներկայացվի դատարան նիստի տեղի և ժամանակի մասին պարզաձև ձևով ծանուցվելուց հետո՝ մինչև դատարան նիստը կամ դատարան նիստի ընթացքում»:

19. Ձերբակալման նկատմամբ հետագա դատական վերահսկողության կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ազատությունից զրկվելուց հետո դատարանի առջև կանգնելու և ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու երաշխիքը կրում է բացառիկ նշանակություն՝ անձի ազատության իրավունքի պաշտպանության համակարգում՝ ապահովելով ազատությունից զրկված անձի լաված լինելու իրավունքն անկախության երաշխիքով օժտված այնպիսի մարմնի առջև, որն ունի վերջինիս անհապաղ ազատ արձակելու կարգադրություն տալու իրավասություն: Փաստացի արգելանքի վերցվելու պահից ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու արդյունավետությունը պայմանավորված է ոստիկանության ծառայողների կամ իրավապահ մարմինների այլ աշխատակիցների կողմից հնարավոր ոչ իրավաչափ վարքագծին օպերատիվ արձագանքելու հնարավորության ապահովմամբ: Ազատությունից զրկվելուց հետո դատարանի առջև կանգնելու և ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքն օժտված է անհետաձգելի բնույթով. ենթակա է կենսագործման անհապաղ՝ ազատությունից զրկվելու սկզբնական փուլում ձերբակալվածի կողմից հայցվող իրավական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Ելնելով վերոնշյալ առանձնահատկությունից՝ բոլոր այն դեպքերում, երբ ազատությունից զրկված անձն առաջին անգամ դատարանի առջև բարձրացնում է իր ձերբակալման իրավաչափության հարցը, կամ դատարանը սեփական նախաձեռնությամբ (*proprio motu*) հայտնաբերում է անձին ազատությունից զրկելու ընթացակարգի խախտում՝ անկախ ձերբակալված անձի բողոքի առկայության հանգամանքից, դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի անձին ազատությունից զրկելու իրավաչափության հարցը¹:

20. Վկայակոչված քրեադատավարական նորմերից հետևում է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ ձերբակալման իրավաչափության նկատմամբ հետագա դատական վերահսկողության հիմքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 289.2-րդ հոդվածով նախատեսված պահանջներին համապատասխան ներկայացված բողոքն է: Ինչ վերաբերում է բողոք ներկայացնելու դատավարական կարգին, ապա

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արդակ Մացակյանի* գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԿԴ3/0001/06/17 որոշումը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է ձերբակալման բողոքարկման տարբեր իրավական ընթացակարգեր, երբ ձերբակալման դեմ բողոքը կարող է ներկայացվել անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից կամ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդության քննության ժամանակ՝ մինչև դատական նիստը կամ դատական նիստի ընթացքում: Սույն որոշման 13-19-րդ կետերում ներկայացված նորմերի և իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ձերբակալման իրավաչափությունը վիճարկելու իրավունքի իրացմանը ներկայացվող վերոնշյալ կարգավորումները չպետք է այն աստիճան չափազանցվեն (excessive formalism), որ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդության քննության ընթացքում զուտ գրավոր բողոքի բացակայության նկատառումներով ձերբակալման իրավաչափության վերաբերյալ պաշտպանության կողմի փաստացի բողոքը թողնվի առանց քննության՝ բացառելով ձերբակալման օրինականության նկատմամբ դատական վերահսկողություն սպառնալից միջազգային և ներպետական պահանջը: Հակառակ մեկնաբանության դեպքում, կխախտվի անձի՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հիմնարար սահմանադրական և կոնվենցիոնալ իրավունքը:

Ուստի, կալանավորման միջնորդությունը քննելիս, ձերբակալման ընթացակարգի խախտման վերաբերյալ պաշտպանության կողմի յուրաքանչյուր փաստարկ դատարանի կողմից պետք է արժանանա համարժեք իրավական գնահատականի և հանգեցնի համապատասխան իրավական հետևանքների՝ երաշխավորելու համար արգելանքի վերցված անձի իրավունքների և ազատությունների իրական և արդյունավետ պաշտպանությունը:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Ս.Մանուկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդության քննության ընթացքում պաշտպանության կողմը, հայտարարելով, որ ժամանակի սղության պատճառով չի կարողացել մեղադրյալ Ս.Մանուկյանի ձերբակալման դեմ գրավոր բողոք ներկայացնել, միջնորդել է քննության առարկա դարձնել նաև Ս.Մանուկյանի ձերբակալման իրավաչափության հարցը՝ խնդրելով ձերբակալումը ճանաչել ոչ իրավաչափ¹:

Առաջին ատյանի դատարանը, փաստելով, որ կոնկրետ դեպքում պահպանված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 289.1-289.5-րդ

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

հողվածներով սահմանված ձերբակալման իրավաչափության բողոքարկման դատավարական ընթացակարգը, արձանագրել է, որ մեղադրյալ Ս.Մանուկյանի ձերբակալման օրինականության վերաբերյալ պաշտպանության կողմի փաստարկը ենթակա չէ քննարկման¹:

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ գործող քրեադատավարական օրենսդրությամբ ձերբակալման բողոքարկման այլ ձև, քան դատարան գրավոր բողոքի ներկայացումն է, նախատեսված չէ: Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը, քննարկման առարկա չդարձնելով պաշտպանության կողմի բարձրացած հարցը, հանգել է ճիշտ հետևության²:

22. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, Ս.Մանուկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը քննելիս ձերբակալման բողոքարկման դատավարական կարգը պահպանված չլինելու հիմքով վերջինիս ձերբակալման իրավաչափության վերաբերյալ պաշտպանության կողմի փաստարկները քննության առարկա չդարձնելով, պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել այն, որ դատարանի առջև կանգնելու և ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի անձի իրավունքը՝ դատական պաշտպանության հիմնարար իրավունքի կարևորագույն պահանջն է:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրյալ Ս.Մանուկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդության քննության ընթացքում զուտ գրավոր բողոքի բացակայացության պատճառաբանությամբ վերջինիս ձերբակալման իրավաչափության վերաբերյալ պաշտպանության կողմի փաստարկներին չանդրադառնալն անհամաչափորեն սահմանափակել է Ս.Մանուկյանի՝ ազատությունից զրկվելու իրավաչափությունը վիճարկելու կապակցությամբ արդյունավետ դատական պաշտպանություն հայցելու իրավունքը:

23. Հետևաբար, կոնկրետ դեպքում ստորադաս դատարանների կողմից Ս.Մանուկյանի ձերբակալման իրավաչափության հարցը դատական վերահսկողության առարկա չդարձնելն իրավաչափ չէ:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

24. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն որոշմամբ արձանագրված դատավարական խախտման պայմաններում հնարավոր չէ անդրադառնալ բողոքաբերի բարձրացրած՝ Ս.Մանուկյանի ձերբակալման իրավաչափության վերաբերյալ փաստարկներին¹:

25. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 10-րդ և 10.1-րդ կետերում բարձրացված՝ կալանավորման իրավաչափության վերաբերյալ փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, քննության առնելով մեղադրյալ Ս.Մանուկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը և դրան կից ներկայացված նյութերը, հիմնավոր եզրահանգում են արել քրեական օրենքով արգելված նոր արարք կատարելու և քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու՝ կալանավորման հիմքերի առկայության մասին²:

26. Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 10.2-րդ կետում ներկայացված այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանն արձանագրել է կալանավորման նոր՝ Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ չնշված՝ քրեական վարույթի ընթացքին խոչընդոտելու հիմքը, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, իր համաձայնությունն արտահայտելով Առաջին ատյանի դատարանի՝ քրեական օրենքով արգելված նոր արարք կատարելու, քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կալանավորման հիմքերի առկայության ու քրեական վարույթի ընթացքին խոչընդոտելու հիմքի բացակայության մասին իրավական դիրքորոշման հետ և վերարտադրելով այն իր դատական ակտում, այնուամենայնիվ իր որոշման պատճառաբանական մասի եզրափակիչ հատվածում, ակնհայտ տեխնիկական վրիպակի արդյունքում, վկայակոչել է խոչընդոտելու հիմքի առկայությունը: Ընդ որում, նույն տեխնիկական վրիպակն առկա է նաև Առաջին ատյանի դատարանի որոշման պատճառաբանական մասում:

27. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Ս.Մանուկյանին ձերբակալելու իրավաչափությունը քննարկման առկա չդարձնելու առումով Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը թույլ են տվել քրեադատավարական օրենքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ կարող էր ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը՝ ձերբակալման իրավաչափության վերաբերյալ բողոքը

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը:

քննության չառնելու մասով բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար¹:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է քննության առարկա դարձնի Ս.Մանուկյանի ձերբակալման իրավաչափության վերաբերյալ պաշտպանության կողմի փաստարկները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-րդ և 423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Սարգիս Վլադիմիրի Մանուկյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի մայիսի 21-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 14-ի որոշումը մասնակիորեն՝ ձերբակալման իրավաչափության վերաբերյալ բողոքը քննության չառնելու մասով բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ2/0056/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
պաշտպաններ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Տ.ԵՆՈՔՅԱՆԻ
Լ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Ե.ՎԱՐՈՍՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Վարդան Վաղենակի Անտոնյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 19109815 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

2015 թվականի հոկտեմբերի 20-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Վարդան Վաղենակի Անտոնյանին ՀՀ քրեական

օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ Վ.Անտոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2016 թվականի հունվարի 14-ին Վ.Անտոնյանը հայտնաբերվել է, և հունվարի 15-ին նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ Վ.Անտոնյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նոր մեղադրանք է առաջադրվել:

2016 թվականի հոկտեմբերի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճռով Վ.Անտոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 12 (տասներկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնների կիրառմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատժից 6 (վեց) ամիսը գումարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նշանակված պատժի ժամկետին և Վ.Անտոնյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 13 (տասներեք) տարի ժամկետով: Վ.Անտոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ պատժի սկիզբը հաշվվել է 2016 թվականի հունվարի 14-ից:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի մարտի 25-ի որոշմամբ ամբաստանյալ Վ.Անտոնյանի պաշտպաններ Լ.Սահակյանի և Ե.Վարդայանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճիռը բեկանվել և փոփոխվել է. Վ.Անտոնյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով մեղադրված արարքը վերադրակվել է ՀՀ քրեական օրենսգրքի

137-րդ հոդվածի 1-ին մասով, և նա ազատվել է քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Վ.Անտոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատագրկյան ևնով պատժին, ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված կանոնների կիրառմամբ, հաշվակցվել է 2016 թվականի հունվարի 14-ից մինչև 2019 թվականի մարտի 25-ը կալանքի տակ գտնվելու 3 (երեք) տարի 2 (երկու) ամիս 11 (տասնմեկ) օր ժամկետը, և նա ազատ է արձակվել դատարանի դահլիճում: Ամբաստանյալ Վ.Անտոնյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցով՝ մինչև Վերաքննիչ դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ալանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Վ.Անտոնյանի պաշտպաններ Լ.Սահակյանը և Ե.Վարդյանը ներկայացրել են վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Վարդան Անտոնյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն/ա 2015թ. հոկտեմբերի 11-ին շարերի կյանքի համար վրանգավոր եղանակով, սպորինի կերպով ձեռք բերած, պահած, կրած և փոխադրած ինքնաձիգով փորձել է դիպավորությամբ սպորինաբար կյանքից զրկել Վահագն Արզարյանին, սակայն հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով:

Այսպես.

2015թ. հոկտեմբերի 11-ի երեկոյան Վարդան Անտոնյանը ծանոթի՝ Արմեն Հարությունյանի հետ, վերջինիս պարկանող «Մերսեդես Բենց Ց 180» մակնիշի 34 SZ 363 համարանիշի ավտոմեքենայով շրջել է Ալավերդի քաղաքում, որտեղ՝ Թումանյան փողոցի վրա տեսել է համարադասի Վահագն Արզարյանին պարկանող «Համեր» մակնիշի 91 OT 999 համարանիշի ավտոմեքենան և դրա հետևից ընթացող՝ նրա ընկեր Արթուր Մնացականյանին պարկանող «Նիսան Տիանա 280JK» մակնիշի 92 NM 999 համարանիշի ավտոմեքենան, սպա Արմեն Հարությունյանից

թաքցնելով Վահագն Արզարյանին սպանելու իր հանցավոր մտադրությունը՝ խնդրել է վերջինիս մեքենան վարել նրանց հետևից:

Նույն օրը՝ ժամը 20:30-ի սահմաններում, շրջանցելով հիշյալ ավտոմեքենաներին և հասնելով Ալավերդի-Թրիլիսի ավտոճանապարհի 16-րդ կմ հատվածում գրավող Լոռու մարզի Ախթալա քաղաք փանող կամրջին՝ Վարդան Ասրոնյանի խնդրանքով Արմեն Հարությունյանն ավտոմեքենան կայանել է կամրջի վերջնամասում: Որոշ ժամանակ անց փեննելով նույն կամրջի վրայով հանդիպակաց ուղղությամբ ընթացող «Համեր» և «Երսան Տիանա 280JK» մակնիշների ավտոմեքենաները՝ Վարդան Ասրոնյանը մեքենայից վերցրել է քննությամբ չպարզված հանգամանքներում ձեռք բերած, պահած և հագուստով քողարկելու միջոցով Արմեն Հարությունյանի ավտոմեքենայի մեջ դրած ինքնաձիգը, սպա քննությամբ չպարզված շարժառիթով Վահագն Արզարյանին կյանքից զրկելու դիտավորությամբ, մութ լինելու և «Համեր» մակնիշի ավտոմեքենայի ապակիները մզեցված լինելու պայմանով չիմանալով, որ վերջինիս փոխարեն ավտոմեքենայում է գրավում նրա ընկեր Էդուարդ Պողոսյանը, ինչպես նաև այն, թե նշված երկու ավտոմեքենաներում քանի հոգի են գրավում, շարերի կյանքի համար վրանգավոր եղանակով ինքնաձիգից բազմաթիվ կրակոցներ է արձակել կամրջի վրա գրավող «Համեր» և անմիջապես հետևից ընթացող՝ Արթուր Մնացականյանի վարած «Երսան Տիանա 280JK» ավտոմեքենաների ուղղությամբ, սակայն Վարդան Ասրոնյանը հանցավոր արարքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ արձակված կրակոցները չեն դիպել Էդուարդ Պողոսյանին և Արթուր Մնացականյանին, այլ կրակոցները դիպել են «Համեր» մակնիշի ավտոմեքենայի փարթեր հարվածներին և նշված երկու ավտոմեքենաների հետևի հարվածում գրավող ժայռաքեկորներին»¹:

6. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2018 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճռում արձանագրել է հետևյալը. «(...) Ամբաստանյալ Վարդան Ասրոնյանը դատարանում փված իր ցուցմունքով ըստ էության ընդունում է այն հանգամանքը, որ հրազեն հանդիսացող ինքնաձիգով ինքն է կրակոցներ արձակել Վահագն Արզարյանին պայրկանող «Համեր» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ: Իսկ նրա այն պայրճառարանությունները, թե ինքը շարերի կյանքի համար վրանգավոր եղանակով սպանության փորձ չի կատարել, այլ ավտոմեքենայում գրավող Էդուարդ Պողոսյանին վախեցնելու նպատակով է կրակել այդ ավտոմեքենայի վրա, իմանալով, որ «Համեր» մակնիշի ավտոմեքենան գրահասպար է, իսկ «Երսանը» կրակոցի պահին գրավում է «Համերի»

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթեր 117-120:

ելրևում և կրակոցները որևէ մեկի չեն կարող վնասել՝ անհիմն են: Եման ցուցմունքով Վարդան Անրոնյանը նպատակ է հետապնդում խուսափելու ծանրացուցիչ հանգամանքներում սպանության փորձ կատարելու համար նախատեսված քրեական պարասխանարվությունից ու պատրժից:

(...)

[Ա]մբաստանյալ Վարդան Վաղենակի Անրոնյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով իրեն մեղսագրված հանցավոր արարքները:

(...) Ամբաստանյալ Վարդան Անրոնյանի կողմից Վահագն Արգարյանին սպանելու դիտավորությունը հաստատվում է նրանով, որ նա Վահագն Արգարյանին սպանելու նպատակով նախապես իր հետ վերցրել է հրազեն հանդիսացող ինքնաձիգ և այն պահել ավրոմեքենայում, սպա Ալավերդի քաղաքում փենսելով Վահագն Արգարյանի «Համեր» մակնիշի ավրոմեքենան, ենթադրել է, որ ավրոմեքենան վարում է Վահագն Արգարյանը կամ նա գրնվում է ավրոմեքենայի մեջ, որից հետո Արմեն Հարությունյանին հրահանգել է հետապնդել այդ ավրոմեքենան, որպեսզի պարզեն, թե ավրոմեքենան ուր է գնում: (...) Իր հանցավոր նպատակն իրականացնելու հարմար րեղ ընտրելով Ախթալա քաղաք րանող կամուրջը՝ Վ.Անրոնյանը կրակելուց առաջ կանգնել է այնպես, [որ] ավրոմեքենայի վրա կրակի դիմահար: Այսպես՝ Վարդան Անրոնյանը Ախթալա րանող կամրջի վերջնամասում սպասելով այնքան, որ ավրոմեքենաները հասնեն կամրջին, Արմեն Հարությունյանի ավրոմեքենայից վերցրել է իր կողմից այնրեղ դրված ինքնաձիգը և շուրջ 5 մետր ընդառաջ գնալով «Համեր» մակնիշի ավրոմեքենային, մուր րարածությունից Վահագն Արգարյանին սպանելու նպատակով ավրոմեքենայի առջևից ինքնաձիգից շուրջ 20 կրակոց է արձակել «Համեր» մակնիշի ավրոմեքենայի վրա, սակայն արձակված գնակները իր կամքից անկախ պարճառներով չեն կպել «Համեր» և «Երսան» մակնիշի ավրոմեքենաներում գրնվող անձանց և Վարդան Անրոնյանը սպանությունն ավարտին չի հասցրել:

Եթե Վարդան Անրոնյանը, ինչպես ինքն է պնդել, Վահագն Արգարյանին սպանելու նպատակ չի ունեցել, այլ նրա ավրոմեքենայի վրա կրակել է, ըստ իրեն՝ ավրոմեքենայում գրնվող Էդուարդ Պողոսյանին վախեցնելու նպատակով, սպա նա կարող էր դա կատարել ճանապարհին այլ եղանակով՝ ցուցադրաբար օդ կրակելով, այլ ոչ թե նախապես դիրքավորվելով և դիմացից ավրոմեքենայի մեջ գրնվող անձանց ուղղությամբ ինքնաձիգից կրակահերթ արձակելով:

Այն, որ Վարդան Անրոնյանը այլ անձանց կյանքն իրական վրանգի րակ դնելով է փորձել սպանել Վահագն Արգարյանին, հիմնավորվում է գործի քննությամբ հաստատված այն փաստով, որ Վ.Անրոնյանը

ինքնաձիգով կրակահերթ է արձակել «Համեր» մակնիշի ավտոմեքենայի վրա, անրեսելով, որ այդ ավտոմեքենայի երևից ընթանում է] Արթուր Մնացականյանի «Նիսան Տիանա» մակնիշի ավտոմեքենան, որի մեջ գրնվող Արթուր Մնացականյանը նույնպես կարող է վնասվել: (...)»¹:

Անդրադառնալով տուժողներ Ա.Մնացականյանի և Է.Պողոսյանի, ամբաստանյալ Վ.Աստոնյանի ցուցմունքների արժանահավատությանը՝ Առաջին ատյանի դատարանն արձանագրել է. «Գնահատելով և վերլուծելով փուժողներ Արթուր Մնացականյանի և Էդուարդ Պողոսյանի ցուցմունքները, ըստ որոնց նրանք Ախթալայի կամրջի վրա կրակոցների ձայներ չեն լսել և չեն տեսել, որ կրակում են իրենց ավտոմեքենաների ուղղությամբ, ինչպես նաև որ կամրջի վրա ավտոմեքենաները կանգնեցրել և դուրս են եկել ավտոմեքենաներից, Դադարանը արժանահավատ չի համարում, քանի որ նրանք, մասնավորապես՝ Էդուարդ Պողոսյանը չէր կարող չլսել և չտեսնել անմիջականորեն իր կողմից վարվող ավտոմեքենայի առջևից արձակվող կրակահերթը և հետևաբար այդ պայմաններում նրանք չէին համարձակվի դուրս գալ ավտոմեքենաներից: Դադարանը գրնում է, որ այդ մասին նրանց ցուցմունքները չեն համապատասխանում վկա Արմեն Հարությունյանի ցուցմունքներին, ըստ որոնց՝ կրակոցները դադարելուց հետո երկու ավտոմեքենաներն էլ շրջվել են և գնացել դեպի Ալավերդի:

Ինչ վերաբերում է այդ մասին Վարդան Աստոնյանի կողմից փոխադրված ցուցմունքին, սպա դադարանը գրնում է, որ դա նույնպես ճիշտ չէ, Վարդան Աստոնյանը իր ցուցմունքը այդ մասով հարմարացնելով փուժողների ցուցմունքներին, փորձել է հաստատել իր կողմից վկայակոչած փաստարկն այն մասին, որ ինքը կրակել է վահեցնելու նպատակով և որևէ մեկին սպանելու մտադրություն չի ունեցել, եթե ունենար, սպա կսպաներ այն ժամանակ, երբ նրանք իբր իջել են ավտոմեքենաներից»²:

6.1. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռի հիմքում դրել է.

- ամբաստանյալ Վարդան Աստոնյանի մասնակի խոստովանական ցուցմունքներն այն մասին, որ. «(...) [Ե]րբևէ որևէ մեկին սպանելու ցանկություն, նպատակ չի ունեցել, սպանելուն ուղղված որևէ քայլ չի կատարել: 2015 թվականի հունիս ամսին Ալավերդի քաղաքում տեղի են ունեցել քաղաքացիների ընտրություններ, որից հետո քաղաքում լարվել է մթնոլորտ: (...) [Ա]յդ լարվածությունը հասել է նաև իրեն, ինչը դրսևորվել է Ալավերդու բնակիչներ Էդուարդ Պողոսյանի ու Վարդան Ավագյանի կողմից իր ու իր մի քանի ընկերների նկատմամբ բացահայտ թշնամական վերաբերմունքով: (...) Վ.Ավագյանն ու Է.Պողոսյանը սկսել են իրեն հետևել և դա անում էին (...) այնպես, որ ինքը դա տեսնի և (...) իրենց կարծիքով՝

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 12, թերթեր 173-191:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 12, թերթ 178:

վախենա դրանից: (...) [Ե]րանք երկուսով մի անգամ դարանակալել են իրեն շենքի մուտքում ու հարձակվել իր վրա, որի ընթացքում հարվածներ են հասցրել իրեն (...) ու փախել: Դրանից հետո էլ նրանք չեն հանգարացել, (...) Է.Պողոսյանը միտումնավոր, վախեցնելու նպատակով ավրոմեքենան վարել էր իր ընտանիքի անդամների ուղղությամբ: Հասկանալով, որ այդ իրավիճակը լավ բանի չի հանգեցնի, որոշել է սասրել նրանց, վախեցնել, որ իրենից ու իր ընտանիքից հեռու մնան: Հոկտեմբերի 11-ին նկատել է, որ Ալավերդու բնակիչ Վահագն Աբգարյանին պատկանող «Համեր» մակնիշի գրահապար ավրոմեքենայի դեկին էդուարդ Պողոսյանն է: Այդ օրը պարահարար հանդիպած համաքաղաքացի Արմեն Հարությունյանին խնդրել է, որ հեղևի «Համերին»: Ախթալա չհասած ինքը Արմենին խնդրել է, որ նա անցնի «Համեր» մակնիշի ավրոմեքենային: Անցնելով կամուրջը, խնդրել է կանգնել: Երբ «Համեր» մակնիշի ավրոմեքենան հայրավել է կամրջի վրա, իսկ «Երասանը» նրա հեղևում, և հասկանալով, որ «Երասանը» չի վնասվի, «Համերի» դիմացից մի քանի անգամ կրակել է այդ գրահապար ավրոմեքենայի ուղղությամբ: Այդ պահին «Համերից» բացի որևէ այլ մեքենա կամ մարդ կրակոցների ուղղությամբ չկային, «Երասան» մակնիշի ավրոմեքենան գրահապար մեքենայի հեղևում էր, իսկ այդ ավրոմեքենայի հեղևի հարվածում մեծ ժայռեր են և պարզ էր, որ որևէ մեկին վնասել չէր կարող: Երբ սկսել է կրակել, «Համերի» վարորդի դուռը բացվել է, որից հետո անմիջապես դադարեցրել է կրակը, որպեսզի հանկարծ որևէ մեկի չվնասի: Երկու մեքենաների վարորդներն էլ իջել են մեքենաներից, նայել շուրջ բոլորը և նորից նսրել մեքենան: Այնուհետև «Համերն» ու նրա հեղևից գնացող «Երասանը» շարժվել են: Երբ արդեն Արմենի ավրոմեքենայով վերադառնում էին Ալավերդի, Ախթալայի կամրջից քիչ անց նկատել է, որ «Համերն» ու «Երասանը» ճանապարհին կանգնած են, Է.Պողոսյանն էլ կանգնած է «Համերի» մոտ: (...) [Կ]րակել է գրահապար ավրոմեքենայի վրա, որպեսզի Է.Պողոսյանը հասկանա, որ իր ընտրած գործելաոճը պետք է դադարեցնի: Եթե ուզենար նրան կամ որևէ մեկին սպանել, սպա շար հանգիստ կարող էր դա անել, թե այն ժամանակ, երբ նա չլիներ գրահապար ավրոմեքենայի մեջ, թե կամրջի վրա, երբ վարորդները բացել են դուռն ու իջել մեքենայից, թե այն ժամանակ, երբ կանգնած էին ճանապարհին: Այն, որ «Համեր» մակնիշի ավրոմեքենան գրահապար է, գիտի ամբողջ քաղաքը, ավելին ավրոմեքենան կետում ինքն անձամբ մինչ այդ համոզվել էր դրանում: Իսկ այն, որ ինքը սպանելու դիտավորություն չի ունեցել, դեպքից հետո ասել է նաև Արմենին և եղբորը»,

- րուժողներ Արթուր Մասցականյանի և ներկայումս հանգուցյալ Էդուարդ Պողոսյանի նույնաբովանդակ ցուցմունքներն այն մասին, որ 2015 թվականի հոկտեմբերի 11-ին Վ.Աբգարյանին տարել են տուն, իսկ իրենք

որոշել են գնալ Ճոճկան գյուղում գտնվող իրենց տուն: «Համեր» մակնիշի մեքենայի մեջ եղել է միայն Է.Պողոսյանը, իսկ «Նիսան Տիանա 280 JK» մակնիշի մեքենայի մեջ՝ Ա.Մնացականյանը: Երբ հասել են Ախթալա քաղաք տանող կամուրջ, մեքենայի ցուցիչները սկսել են աշխատել անկանոն, իսկ մեքենայի դիմացից կայծեր և ծուխ է երևացել: Իրենք արգելակել են մեքենաները: Նույն պահին «Համեր» մակնիշի մեքենան հետ է շարժվել և բախվել Ա.Մնացականյանի մեքենային, քանի որ Է.Պողոսյանը մոռացել է մեքենայի փոխանցման տուփը ճիշտ դիրքի վրա դնել: Նշված տարածքից մի քիչ հեռանալուց հետո «Համեր» մակնիշի մեքենան խափանվել է, որից հետո կանչել են ավտոքարշակ և այն տեղափոխել քարշակով: Ախթալայի կամրջի վրա կրակոցի ձայներ չեն լսել, այնտեղ ոչ մեկին չեն տեսել, քանի որ ըստ Է.Պողոսյանի՝ «Համեր» մակնիշի ավտոմեքենան զրահապատ է և ձայնամեկուսիչ, իսկ Ա.Մնացականյանն էլ նշել է, որ իր մեքենայի մեջ միացված է եղել բարձր երաժշտություն,

- տուժող *Վահագն Արզարյանը* տուժողներ Ա.Մնացականյանի և Է.Պողոսյանի ցուցմունքներին նույնաբովանդակ ցուցմունքներ է տվել: Ընդգծել է, որ հետագայում է ինտերնետային կայքերից տեղեկացել, որ Ախթալա քաղաք տանող կամրջի վրա կրակոցներ են եղել, և կրակել են իրեն պատկանող «Համեր» մակնիշի ավտոմեքենայի վրա: Ինքը չգիտի՝ ով է եղել կրակողը, ինչ պատճառով են կրակել իր ավտոմեքենայի վրա և ում են ուղղված եղել այդ կրակոցները: **Իր «Համեր» մակնիշի ավտոմեքենայի վրա նախկինում որևէ վնասվածք չի եղել, ավտոմեքենան եղել է անթերի վիճակում,**

- վկա *Արմեն Հարությունյանի* ցուցմունքներն այն մասին, որ «(...) 2015 թվականի աշնանը, ճիշտ օրը չի հիշում (...) հանդիպել է Վարդան Անտոնյանին, ով միայնակ կանգնած էր փողոցում: Վարդանի ձեռքին սպորտային համազգեստին նման հագուստ կար, որը նա դրել է ավտոմեքենայի ելքի նստարեղին, իսկ ինքը նստել իր կողքին: Ավտոմեքենայով իջել են քաղաք, որտեղ «Սուպերմարկետի» մոտ հանդիպել են Վահագն Արզարյանի «Համեր» մակնիշի ավտոմեքենային: Վարդանը իրեն ասել է, որ գնան տեսնեն, թե ուր է գնում այդ ավտոմեքենան (...): Ինքը (...) անցել է այդ ավտոմեքենային և նրա ելքից գնացող «Նիսանին»: Հասնելով Ախթալայի կամրջի մոտ, Վարդանն ասել է, որ կանգնեցնի ավտոմեքենան, տեսնեն այդ ավտոմեքենան գալիս է, թե ոչ: (...): Քիչ հեկո եկել են Վահագն Արզարյանի «Համերը», իսկ դրա ելքից Արկոյի Արթուր Մնացականյանի «Նիսան Տիանա» մակնիշի ավտոմեքենան: Այդ մեքենաները հասնելով կամրջի սկզբնամասը, թեքվել են դեպի իրենց: Այդ ժամանակ Վարդան Անտոնյանը բացելով ավտոմեքենայի հեկոն դուռը, հանել է զենքը և սկսել կրակել, ինքը այդ տեսնելով, փախել է դեպի մուրակա ճուղանուղին, մտածելով, որ նա կարող

է կրակել նաև իր վրա: Փախչելով, հեռացել է մոտ 100 մետր, որի ընթացքում լսել է կրակոցի ձայները, որոնք մոտ 10 կրակոցներ էին: Այդ պահին իր հայացքը դեպի «Համերն» էր և տեսել է նաև, որ կրակոցներից ջարդվել է ավտոմեքենայի (...) լապտերը և հանգել լույսը: Կրակոցները դադարելուց հետո այդ ավտոմեքենաներից ոչ-ոք չի իջել, եթե իջնող լինել կրեաներ, ինքը չի տեսել: Կրակոցներից հետո երկու մեքենաներն էլ շրջվել են ու գնացել դեպի Ալավերդի, իսկ ինքը վերադարձել է իր ավտոմեքենայի մոտ: Տեսնելով, որ Վարդան Անտոնյանը չի երևում, նրան ձայն է փվել: Վարդանը եկել է, նստել ավտոմեքենան (...) : Վարդան Անտոնյանի հետ գնացել [են] դեպի Ալավերդի: Ճանապարհին տեսել է, որ «Համերը» կանգնած է, իսկ ավտոմեքենայի մոտ մարդիկ չկան: (...) Վերադառնալով Ալավերդի, Վարդան Անտոնյանին իջեցրել է ավտոմեքենայից, իսկ [ինքը] քարձրացել Սանսահին Սարահարթ թաղամաս՝ իրենց փուն: (...) Առավոտյան գնացել է աշխատանքի և դեպքի մասին քարի արտադրամասում պարմել է եղբորը՝ Գարեգին Հարությունյանին: Այնուհետև իրենց մոտ է գնացել Վարդան Անտոնյանը: Ինքը Վարդանին ասել է, որ նրանք տեսել են իր ավտոմեքենան, ինչ պետք է անի ինքը: Վարդանն ասել է, որ «տեսնեն ինչ է լինում», որից հետո հեռացել է: Որոշ ժամանակ հետո զանգահարել է նրան, սակայն նա եղել է անհասանելի: Հետո գնացել է իրենց փուն և նույն օրը՝ երեկոյան իր հոր ու եղբոր հետ, հոր ավտոմեքենայով գնացել է Վրաստանի Բրդաձոր գյուղի՝ իրենց փուն: Ինքը մնացել է այնտեղ, իսկ եղբայրն ու հայրը վերադարձել են: (...) Բոլորը գիտեն, որ Վահագն Արզարյանի «Համերը» (...) գրահապար [է]: Վարդան Անտոնյանի կրակոցներն ուղղված էին այդ ավտոմեքենային, սակայն ինքը չգիտի կրակելու նպատակը: Կարծում է, որ «Տիանա» մակնիշի ավտոմեքենայով եղել է Արթուր Մասցականյանը, իսկ «Համերում» երևի Վահագն էր: Վարդանը դեպքից առաջ ճանապարհին գնալիս, իրեն հարցրել է, վահանում է, թե ոչ, որին պատասխանել է, որ չի վահանում: Եթե ինքն իմանար, որ այդպիսի բան է լինելու, չէր գնա, կամ մեքենան կրար Վարդան Անտոնյանին, որ նա գնար ուր ուզում էր: (...) Վարդան Անտոնյանը, վերնազգեստը, որը դրել է ավտոմեքենայի երևի նստավայրին վերցրել է Տարոն Արզարյանի քարի արտադրամասից, որտեղ ինքն էր աշխատում: (...) «Համերի» վրա կրակելուց առաջ Վարդանը մտավորապես այսպիսի արտահայտություն է արել՝ «Վահագ արի ասեմ» ու կրակել է: (...) Վարդան Անտոնյանը իրեն չի ասել, որ վահանելու նպատակով է կրակել «Համերի» վրա, չի ասել նաև, թե ինչ նպատակով է կրակել»,

- վկա Գարեգին Հարությունյանի ցուցմունքներն այն մասին, որ «(...) [Իր եղբայր] Արմենը պարմել է, որ [դեպքի օրը] (...) հանդիպել է Վարդան Անտոնյանին և նրա հետ իջել քաղաք (...): Այնտեղ տեսել են Վահագենց

«Համերը»: Վարդանն ասել է, որ տեսնեն ուր է գնում այդ մեքենան և ավտոյի հետևից քշել է: Հասնելով Ախթալա, սպասել են, մինչև եկել են Վահագենց մեքենաները: Վարդանը (...) հանել է ավտոմատը ու կրակել: (...) Հաջորդ օրը ինքը զանգահարել է Վարդան Անտոնյանին, կանչել քարի արտադրամաս և հարցրել, թե «էս ինչ եղավ», «ոնց պրի ըլնի», «կրակը գցեցիր ախպորս», իսկ նա ասել է. «էսա կիտասանք»: (...) Մրաժել է, որ եղբայրը «կրակի մեջ կրնկնի», ավելի լավ է մի որոշ ժամանակ հեռու մնա, որպեսզի տեսնեն ինչ է պարզվում: Այդ պատճառով նրան փարել են Վրաստան, սակայն երբ ոստիկանությունում ասել են, որ Արմենը թաքնվելով անտեղի իր «գլխին գործա բացում», գնացել ու նրան բերել է Վրաստանից: (...) [Ե]րբ Վարդանի հետ առանձին զրուցել են (...), նա պարասխանել է [, որ] (...) ինքը գիրի ինչ է արել: Ինքը նրան հարցրել է. «բա չգիրեիր, որ (...) [մեքենան զրահապար] է, ինչու էիր կրակում», որին նա պարասխանել է. «(...) [այդպես] էր պետք»: Ինքը դրանից ենթադրում է, որ նա վահագենցելու նպատակով է կրակել»,

- վկա Գագիկ Հարությունյանի ցուցմունքներն այն մասին, որ «(...) 2015թ. հոկտեմբերի 12-ին՝ երեկոյան իր որդիներ Գարեգինն ու Արմենը խնդրել են իրենց փանել Վրաստան՝ Արմենի ավտոմեքենայի համար պահեստամասեր գնելու: Հաջորդ օրը՝ առավոտյան մեկնել են Վրաստանի Բրդաձոր գյուղ՝ իր աներոջ տուն: Հասնելով այնտեղ, Արմենը ցանկություն է հայտնել մնալ պապիկի փանը, իսկ ինքը և Գարեգինը վերադարձել են Ալավերդի: Ճանապարհին մի քանի անգամ հարցրել է Գարեգինին, թե ինչ է պարսեղ, որ Արմենը չցանկացավ վերադառնալ Ալավերդի: Այդ ժամանակ միայն Գարեգինը պարմել է, որ 2015 թվականի հոկտեմբերի 11-ին Արմենի մեքենան է նսրել մի տղա, ով աշխարել է քարի արտադրամասում և խնդրել է փանել Ախթալա քաղաք: Երբ հասել են Ախթալա քաղաք փանող կամրջի մոտ, այդ տղան խնդրել է կանգնեցնել մեքենան, որից հետո նա ինքնաձիգով կրակել է Վահագն Արզարյանի մեքենայի վրա»,

- դեպքի վայրի զննության մասին արձանագրությունը, համաձայն որի՝ «(...) [Դ]եպքի վայրը գրնվում է Ալավերդի-Թրիխի ավտոճանապարհի 16 կմ հարվածում Ախթալա քաղաք փանող կամրջի մոտ: Ավտոճանապարհի աջ հարվածում գրնվող ժայռի վրա հայտնաբերվել են թվով 8 վնասված հարվածներ, որտեղից մասնագետի կողմից վերցվել են նմուշներ: Զննությանը մասնակից Արմեն Հարությունյանը մատնացույց է արել Ախթալա քաղաք փանող կամրջի վերջնամասը և հայտնել է, որ նշված հարվածում է կայանել մեքենան, որտեղ Վարդան Անտոնյանն իր մեքենայից վերցնելով ինքնաձիգը, կրակահերթ է արձակել դեպի Ախթալա քաղաք ընթացող և կամրջի վրա

գրնվող Վահագն Արզարյանի «Համեր» և նրա հետևից ընթացող «Եխան Տիանա» մակնիշների ավտոմեքենաների ուղղությամբ»,

- տրանսպորտային միջոցը գննելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ «(...) [Զ]ննության է ենթարկվել «Համեր» մակնիշի 91 OT 999 համարանիշի ավտոմեքենան, որի արդյունքում պարզվել է, որ մեքենայի հետին ձախ անկյունային հարվածը դեֆորմացված է, որի վրա առկա է սև ներկանյութ, իսկ նույն հարվածում գրնվող ձախ անկյունային հարվածի բացվածքի մեջի «լուսյակը» գրնվում է ծոված վիճակում: Մեքենայի դիմապակու աջ ստորին անկյունային հարվածում առկա է ապակու արտաքին շերտի, իսկ դիմապակու ձախ կողմում գրնվող անձրևամաքիչ սարքի ձախ մասում վնասված տեղամասեր: Մեքենայի առջևի ձախ լուսարձակի մոտ առկա է ապակու միջանցիկ վնասված տեղամաս, իսկ լուսարձակի լապտերը վնասված վիճակում է: Նշված տեղամասից դեպի ձախ՝ լուսամղիչի ստորին հարվածում առկա է դեֆորմացված տեղամաս, որի ստորին հարվածում միջանցիկ անցք: Մեքենայի համարանիշի վրա առկա է անկանոն եզրերով միջանցիկ անցք: Համարանիշների հետնամասում թափարգելի վրա գրնվող սև գույնի պոլիմերային նյութից պարասարված դեպարը կոտրված է, իսկ դրա հետնամասում գրնվող թափարգելի վրա առկա է կոտրվուն վնասվածք: Մեքենայի առջևի թափարգելի ձախ կողմի անկյունային հարվածի մոտ առկա է վնասված տեղամաս, որի վերին ձախակողմյան հարվածում միջանցիկ անցք: **Պարզվել է նաև, որ մեքենայի ապակիները մզեցված են և դրսից մեքենայի ներսը տեսանելի չէ**»,

- քննչական փորձարարություն կատարելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ «(...) [Փ]որձարարության մասնակից Արմեն Հարությունյանը մատնացույց է արել Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցի վրա գրնվող երթուղային տաքսիների կանգառը և հայտարարել է, որ նշված հարվածում Վարդան Անտոնյանի հետ տեսել են Վահագն Արզարյանի «Համեր» մակնիշի ավտոմեքենան, որից հետո վերջինիս խնդրանքով մեքենան վարել է քաղաքից դուրս եկող մեկ այլ ճանապարհով, ապա Ալավերդի-Թբիլիսի ավտոճանապարհի 3 կմ հարվածում նա հայտարարել է, որ նշված վայրում տեսել են դեպի Ախթալա քաղաքի ուղղությամբ ընթացող Վահագն Արզարյանի «Համեր» մակնիշի մեքենան և Վարդան Անտոնյանի խնդրանքով վազանցել է այդ ավտոմեքենան: Այնուհետև Արմեն Հարությունյանը մատնացույց է արել Ախթալա քաղաք տանող կամրջի վերջնամասը, ապա կամրջի սկզբնամասը և հայտարարել է, որ իրենք մեքենան կայանել են կամրջի վերջնամասում, ապա Վարդան Անտոնյանն իր մեքենայից վերցնելով ինքնաձիգը, քայլել է մոտ 5 մետր, որից հետո ինքնաձիգով կրակահերթ է

արձակել կամրջի սկզբնամասում հայտնված Վահագն Արզարյանի «Համեր» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ»,

- դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննության թիվ 3099-15 եզրակացությունը, համաձայն որի՝ «(...) [Փ]որձաքննությանը ներկայացված «Համեր» մակնիշի 91 OT 999 համարանիշի ավտոմեքենայի վրա՝ ավտոմեքենայի առջևի վահանի աջ մասում, առջևի համարանիշի, ձախ լապտերի գրեթե կենտրոնական հատվածում առկա վնասվածքները հանդիսանում են հրազենային գնդակային թափանցող վնասվածքներ, պարճառվել են հավանաբար 5.45մմ տրամաչափի երեք գնդակներով (հնարավոր է նաև անդրադարձի ենթարկված գնդակներով), լիցքի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից կամ արգելաշեղքի միջոցով կարարված երեք կրակոցների արդյունքում: Ավտոմեքենայի վրա՝ առջևի դիմապակու ձախ ապակեմաքրիչի վրա, ապակեմաքրիչից դեպի ներքև՝ դիմապակու վրա առկա վնասվածքները առաջացել են համեմատաբար պինդ առարկայի ներգործության (հարված, շփում և այլն) հետևանքով, սակայն կոնկրետ պարզել, թե վնասվածքները հրազենային են, թե՛ ոչ, հնարավոր չէ, քանի որ դրանք իրենց մեջ չեն պարունակում հրազենային վնասվածքներին բնորոշ անհրաժեշտ հատկանիշներ (ձև, չափ, սահքի հետք, մետաղացման հետքեր և այլն): Վերը նկարագրված հրազենային վնասվածքները կարող էին պարճառվել սույն քրեական գործով մեկ այլ փորձաքննությանը ներկայացված (3250-15 եզրակացություն) 5.45մմ (5.45x39) տրամաչափի փամփուշների կրակված պարկուճների գնդակներով»,

- դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննության թիվ 3020-15 եզրակացությունը, համաձայն որի՝ «(...) Ալավերդի-Թբիլիսի ավտոճանապարհի 16կմ հատվածում Ախթալա քաղաքի կամրջի մոտ առկա քարաժայռի վրա հայտնաբերված թվով 8 վնասվածքները հանդիսանում են հրազենային գնդակային կույր վնասվածքներ, պարճառվել են լիցքի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից կամ արգելաշեղքի միջոցով կարարված ութ կրակոցների արդյունքում: (...) [Քարաժայռին առկա հրազենային 8 վնասվածքները տեղակայված են գետնից՝ 180սմ, 130սմ, 158սմ, 140սմ, 195սմ, 173սմ, 215սմ և 200սմ բարձրության վրա] (...)»,

- առգրավում կատարելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ «(...) Լոռու մարզային քննչական վարչությունում Սուրեն Մարտիրոսի Մարտիրոսյանից առգրավվել է կարմրավուն գույնի թափանցիկ պոլիէթիլենային տոպրակ, որի մեջ առկա են կանաչավուն գույնի 20 հար պարկուճներ: Սուրեն Մարտիրոսյանը հայտարարել է, որ ներկայացրած պարկուճներն ինքը հայտնաբերել է (...) Ախթալա քաղաքի կամրջի մոտ (...)»,

- դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննության թիվ 3250-15 եզրակացությունը, համաձայն որի՝ «(...) [Փ]որձաքննությանը ներկայացված թվով 20 հատ պարկուճները հանդիսանում են «ԱԿ-74» ինքնաձիգների, «ՌՊԿ-74» տեսակի ձեռքի գնդացիների, դրանց մողիֆիկացիաների և համապատասխան տրամաչափի այլ ակոսափող զենքերի համար նախատեսված գործարանային արտադրության 5,45մմ (5.45x39) տրամաչափի մարտական փամփուշների մասեր՝ կրակված պարկուճներ, կրակվել են միևնույն զենքից (...): Դրանց վրա առկա կրակման հետքերը բնորոշ են 5.45մմ տրամաչափի Կալաշնիկովի կոնստրուկցիայի զենքերից կրակված պարկուճների վրա առաջացող հետքերին և պիտանի են կրակող զենքի նույնացման համար (...):»:

7. Վերաքննիչ դատարանն իր՝ 2019 թվականի մարտի 25-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Առաջին արյանի դատարանն ամբաստանյալ Վարդան Անտոնյանի դիտավորության ուղղվածության վերաբերյալ իր դատողությունները չի կառուցել գործում առկա փաստական փյվյալներից բխող ողջամիտ ենթադրությունների վրա, ինչի արդյունքում հանգել է սխալ հերևության ամբաստանյալի արարքի քրեաիրավական որակման վերաբերյալ: Մասնավորապես անդրադառնալով ամբաստանյալ Վ.Անտոնյանին մեղաազրված արարքը որակյալ դարձնող հարկանիշին՝ հանցանքը շարերի կյանքի համար վրանգավոր եղանակով կատարելուն, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ (...) դեպքի վայրի զննության արձանագրությամբ, ինչպես նաև դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննության եզրակացությամբ հաստատվել է՝ ամբաստանյալ Վ.Անտոնյանի կողմից արձակված կրակոցների ուղղությամբ որևէ բնակավայր չի եղել, ավելին՝ կրակոցները դիպել են Լոռու մարզի Ալավերդի-Թբիլիսի ավտոձանապարհի 16 կմ հարվածում Ախթալա քաղաքի կամրջի մոտ գտնվող քարաժայռին:

(...) [Ե]ման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ՝

- (...) ամբաստանյալի դատաքննական ցուցմունքներով, հաստատվում է, որ (...) իր կրեմբերի 11-ին նկարել է, որ Վահագն Արզարյանին պարկանող «Համեր» մակնիշի ավտոմեքենայի դեկին եղել է Էդրուարդ Պողոսյանը: (...) [Ա]մբաստանյալի մարնանշած հանգամանքը հերքող որևէ փաստական փյվյալ գործում առկա չէ (այդ թվում նաև վկա Արմեն Հարությունյանի ցուցմունքներում, ով դեպքի պահին և դրանից հետո, ըստ էության գտնվել է ամբաստանյալի հետ) (...):

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 12, թերթեր 173-191:

- Վարդան Անտոնյանի կողմից կրակոցների արձակման դիրավորության վերաբերյալ, բացի ամբաստանյալի ցուցմունքներից այլ ապացույցներ ձեռք չեն բերվել (...), ինչը թույլ է տալիս գալ այն հետևություն, որ ամբաստանյալի գործողություններն ուղղված են եղել բուժօգնության վրա հոգեբանական բնության գործադրմանը: Վկա Արմեն Հարությունյանն իր ցուցմունքներով նշել է, որ Վարդան Անտոնյանն իրեն կրակելու նպատակի մասին չի ասել, բացի այդ հաստատել է ամբաստանյալի ցուցմունքներն առ այն, որ դեպքից առաջ ինչ-որ անձինք հարձակվել են վերջինի վրա և հարվածել գլխին:

- Ինչ վերաբերում է վկա Արմեն Հարությունյանի դատաքննական ցուցմունքին առ այն, որ. «(...) «Համերի» վրա կրակելուց առաջ Վարդանը մտրավորապես այսպիսի արտահայտություն է արել՝ «Վահագ արի ասեմ» ու կրակել է», Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վկան իր նախաքննական ցուցմունքներում վերը նշված հանգամանքի մասին երբևէ չի նշել և միայն դատաքննության փուլում է վերը նշված հանգամանքի մասին հայտնել, ինչը (...) որոշակի փարակուսանք է առաջացնում վկայի մարտանշած հանգամանքի արժանահավատության վերաբերյալ: Ավելին՝ (...) Արմեն Հարությունյանի կողմից մարտանշված արտահայտությունը (եթե անգամ ընդունենք, որ այդպիսին եղել է), չի կարող ողջամիտ հիմք հանդիսանալ ամբաստանյալ Վարդան Անտոնյանի մտր սպանության դիրավորության սուկայության մասին: Հակառակը, նման արտահայտությունը կարող է վկայել նաև այն մասին, որ ամբաստանյալ Վարդան Անտոնյանի դիրավորությունն ուղղված է եղել ոչ թե բուժօգնության կյանքից զրկելուն, այլ վերջինի մտր սեփական կյանքի համար փագնապի զգացողություն առաջացնելուն:

- Անդրադառնալով բուժօգնության Էդուարդ Պողոսյանի, Արթուր Մասցականյանի և վկա Արմեն Հարությունյանի ցուցմունքներում սուկա հակասություններին (մասնավորապես՝ բուժօգնությունը նշել են, որ իջել են ավտոմեքենայից, իսկ վկա Արմեն Հարությունյանը ցուցմունք է տվել այն մասին, որ կրակոցներն արձակելուց հետո «Համեր» և «Եհան Տիանա 280 JK» մակնիշի ավտոմեքենաները շրջվել են և գնացել դեպի Ալավերդի), Վերաքննիչ դատարանը փաստում է, որ բուժօգնության ցուցմունքներին նույնարժանողակ փաստական փյուջներ է հայտնել նաև ամբաստանյալ Վարդան Անտոնյանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված ցուցմունքների միջև սուկա են հակասություններ, որոնք սույն դատաքննության շրջանակներում չեն կարող փարապրվել (...) դրանք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետք է մեկնաբանվեն հոգուր ամբաստանյալ Վարդան Անտոնյանի:

- Դատաձգարանական և դատաքիմիական փորձաքննության թիվ 3099-15 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ներկայացված «Համեր» մակնիշի ավտոմեքենայի վրա հրազենային վնասվածքները տեղակայված են եղել ավտոմեքենայի առջևի վահանի աջ մասում, առջևի համարանիշի, ձախ լապտերի կենտրոնական մասում՝ այսինքն հրազենային վնասվածքների տեղակայման հիմնական վայրն ավտոմեքենայի շարժիչի հարվածում է եղել, ինչը (...) թույլ է տալիս ողջամիտ եզրակացության հանգել առ այն, որ ամբաստանյալը կրակոցներն ուղղել է գրահապար ավտոմեքենայի այնպիսի հարվածներին, որը կբացառեր գնդակի ներթափանցումը արահ:

- «Երասն Տրանս 280 JK» ավտոմեքենայի վրա որևէ հրազենային վնասվածք ստկա չի եղել, ինչը հաստատում են ամբաստանյալի դատաքննական ցուցմունքները, այն մասին, որ «Երասն Տրանս 280 JK» ավտոմեքենան գրնվել է «Համերի» հետևում, և կրակոցներից վերջինը չէր վնասվի:

- Առաջին ստյանի դատարանը պարզաճ գնահատականի չի արժանացրել նաև վկա Գարեգին Հարությունյանի ցուցմունքներն առ այն, որ (...) ամբաստանյալ Վ.Անտոնյանը տեղյակ է եղել, որ «Համեր» մակնիշի ավտոմեքենան գրահապար է:

Վերը նշված դատողությունների և վերլուծությունների լույսի ներքո (...) գործով ձեռք բերված ապացույցների ամբողջությունը բավարար չէ ամբաստանյալ Վարդան Անտոնյանի անմեղության կանխավարկածը հաղթահարելու և հաստատված համարելու ամբաստանյալի՝ շարժերի կյանքի համար վրանգավոր եղանակով սպանություն կատարելու դիրավորության առկայությունը:

Անդրադառնալով ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ԲՀԲ-ի պետ Լ.Գրգոյանի 2015 թվականի հոկտեմբերի 14-ի զեկուցագրին, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Ա.Տիրանյանի 2015 թվականի հոկտեմբերի 15-ի զեկուցագրին, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնից 2015 թվականի հոկտեմբերի 16-ին սրացված թիվ 60/2-4412 գրությանը, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչությունից 2015 թվականի նոյեմբերի 5-ին սրացված թիվ 57/3-3626 գրությանը, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ապացույցների տեսակները հստակ նշված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածում, իսկ օպերատիվ տեղեկությունները չեն կարող դիրվել ապացույց և դրվել մեղադրանքի հիմքում:

(...) [Գ]ործում առկա փաստական տվյալների ամբողջությունը վկայում է այն մասին, որ ամբաստանյալ Վարդան Անտոնյանի կողմից

կրակոցներն արձակվել են ոչ թե սպանության, այլ փրօժողի՝ Էդ. Պողոսյանի մոտ սեփական կյանքի համար տագնապի զգացողության առաջացման նպատակով. ամբաստանյալի դիրավորությունն ուղղված է եղել փրօժողի նկարմամբ հոգեբանական բռնության դրսևորմանը: Այսինքն ամբաստանյալ Վարդան Ասրոնյանի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-րդ մասով նախատեսված հանցագործություն հարկանիշներ: (...) [Իսկ] (...) ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պարասխանարվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը նշել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 25-ի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ: Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, պատշաճ վերլուծության չենթարկելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները և դրանք իրենց համակցության մեջ չզննահատելով, Վ.Անտոնյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով՝ դրանով իսկ թույլ տալով արդարադատության բուն էությունը խաթարող դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

8.1. Մասնավորապես, բողոքաբերն ընդգծել է, որ Վ.Անտոնյանը քսան կրակոց է արձակել «Համեր» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ, որը չի կարող նույնացվել սպառնալիք տալու հետ, քանի որ ֆիզիկական այնպիսի գործողություններ կատարելը, ինչպիսին կրակոցներ արձակելն է, այն էլ տուժողի ուղղությամբ, չի կարող ուղղված լինել բացառապես տուժողի հոգեկան առողջությանը վնաս պատճառելուն և սեփական կյանքի համար տագնապի զգացողություն առաջացնելուն:

8.2. Բողոքաբերն իր դիրքորոշումը հիմնավորել է վկա Ա.Հարությունյանի այն ցուցմունքներով, որ Վ.Անտոնյանն իրեն չի ասել, որ վախեցնելու նպատակով է կրակել «Համեր» մակնիշի ավտոմեքենայի վրա, ավտոմեքենայի ուղղությամբ արձակել է 10-ից ավելի մենահատ կրակոց և կրակելուց առաջ կատարել է արտահայտություն «Վահագ արի ասեմ» բովանդակությամբ, ինչպես նաև դեպքի վայրի գնտության

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 69-101:

արձանագրությամբ, առգրավում կատարելու մասին որոշմամբ և արձանագրությամբ, դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննության թիվ 3099-15, 3020-15 և 3250-15 եզրակացություններով:

8.3. Բողոքաբերի պնդմամբ՝ նշված ապացույցները վերլուծելիս Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ ամբաստանյալը կրակոցներն ուղղել է զրահապատ ավտոմեքենայի այնպիսի հատվածներին, որը կբացառեր գնդակի ներթափանցումը սրահ առանց պատճառաբանելու, թե այդ դեպքում ինչու են այդ կրակոցները դիպել նաև ավտոմեքենայի հետնամասում գտնվող ժայռաբեկորներին: Եթե Վ.Անտոնյանը ունեցել է բավարար մարտական պատրաստվածություն կրակոցներն ուղղելու միայն «Համեր» մակնիշի ավտոմեքենայի դիմացի հատվածին, ապա ժայռաբեկորներին առկա հրազենային վնասվածքները տեղակայված են եղել գետնից 180սմ, 130սմ, 158սմ, 140սմ, 195սմ, 173սմ, 215սմ և 200սմ բարձրության վրա, իսկ նման բարձրության վրա առկա հրազենային վնասվածքը կարող էր խոցել ավտոմեքենաներում գտնվող ցանկացած կենդանի թիրախ:

8.4. Բողոքի հեղինակն արժանահավատ չի համարել նաև Վ.Անտոնյանի ցուցմունքի այն հատվածը, որ կրակոցները դադարեցրել է, երբ երկու ավտոմեքենաներից էլ մարդիկ են իջել, որպեսզի ոչ մեկին չվնասի: Բողոքաբերն իր դիրքորոշումը հիմնավորել է նրանով, որ նախ՝ ըստ վկա Ա.Հարությունյանի ցուցմունքների՝ ավտոմեքենաներից որևէ անձ չի իջել, և բացի այդ, եթե անգամ կրակոցներից հետո Է.Պողոսյանը և Ա.Մնացականյանն իջել են ավտոմեքենաներից և չեն տուժել, դա ևս հիմնավորում է այն, որ Վ.Անտոնյանը ուղղակի դիտավորությամբ ցանկացել է ապօրինաբար կյանքից զրկել ոչ թե Է.Պողոսյանին, այլ՝ Վ.Աբգարյանին, ինչը նրան չի հաջողվել: Բողոքաբերը նշել է նաև, որ Վ.Անտոնյանը նույնիսկ չի իմացել, որ Վ.Աբգարյանը դեպքի պահին ավտոմեքենայում չի գտնվել, քանի որ ավտոմեքենայի ապակիները եղել են մզեցված, իսկ դեպքը տեղի է ունեցել երեկոյան ժամի:

8.5. Ինչ վերաբերում է Վ.Անտոնյանի վրա հարձակվելու և հարվածներ հասցնելու հանգամանքին, ապա բողոքաբերը նշել է, որ եթե նույնիսկ առերևույթ նման դեպք եղել է, ապա դա կարող էր առիթ լինել Վ.Աբգարյանին կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ «Համեր» մակնիշի ավտոմեքենայի վրա կրակոցներ արձակելու համար:

8.6. Բողոք բերած անձը նաև ընդգծել է, որ Վ.Անտոնյանն ի սկզբանե չէր կարող իմանալ, որ Վ.Աբգարյանի ավտոմեքենան զրահապատ է, և այդ տվյալները պաշտպանության կողմին հասու են դարձել քրեական գործի նյութերին ծանոթանալիս և պաշտպանության իրավունքը իրացնելու նպատակով համապատասխան մարտավարություն ընտրելու արդյունքում: Բողոքաբերի պնդմամբ՝ եթե նույնիսկ Վ.Անտոնյանի սուբյեկտիվ

ընկալմամբ «Համեր» մակնիշի ավտոմեքենան եղել է զրահապատ, ապա դա ևս չի կարող մեկնաբանվել հոգուտ իրեն, քանի որ վերջինս ապօրինի կրած և փոխադրած ինքնաձիգից «Համեր» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ կրակոցներ է արձակել քսան անգամ, ավտոմեքենայի հետևից ընթացել է Ա.Մնացականյանի վարած «Նիսան Տիանա 280 JK» մակնիշի ավտոմեքենան, որի վերաբերյալ ընդհանրապես տվյալներ առկա չեն, որ այն ևս եղել է զրահապատ:

8.7. Անդրադառնալով ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի օպերատիվ տեղեկությունները որպես այլ փաստաթղթեր ապացույց ճանաչելուն, բողոքաբերն իր անհամաձայնությունն է արտահայտել Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ ապացույցների տեսակները հստակ նշված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածում, իսկ օպերատիվ տեղեկությունները չեն կարող դիտվել ապացույց և դրվել մեղադրանքի հիմքում: Բողոք բերած անձը փաստարկել է, որ այդ օպերատիվ տեղեկությունները համապատասխանում են քրեական գործով ձեռք բերված ապացույցներին, այդ թվում՝ ամբաստանյալ Վ.Անտոնյանի ցուցմունքին:

8.8. Բողոքի հեղինակը նաև փաստել է, որ բողոքարկվող դատական ակտում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ, 358-րդ հոդվածների, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ, 137-րդ հոդվածների մեկնաբանությունները հակասում են հիշյալ նորմերին Վճռաբեկ դատարանի որոշումներում տրված մեկնաբանություններին:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 25-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Վ.Անտոնյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշների առկայության և նույն օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հատկանիշների բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը՝ պատժվում է (...):»*

ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցավորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով»:

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ հանցավորձ են ձևավորում միայն ուղղակի դիտավորությամբ կատարվող այն գործողությունները (անգործությունը), որոնք անմիջականորեն ուղղված են հանցանքի կատարմանը: «Անմիջականությունը» ենթադրում է, որ հանցավորձ ձեռնամուխ է լինում հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացմանը, սակայն այն ավարտին չի հասցնում իր կամքից անկախ այնպիսի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքներով, որոնք նա չէր նախատեսել կամ չէր կարողացել հաղթահարել: Այլ կերպ՝ հանցավորձի դեպքում հանցագործությունը չի ավարտվում, քանի որ կա՛մ հանցավոր արարքն ամբողջությամբ չի իրականացվում, կա՛մ արարքն իրականացվում է, սակայն չի առաջանում հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված և նրա համար ցանկալի հանրորեն վտանգավոր հետևանքը (սյուրեակա՛ն հանցակազմերի դեպքում)՝:

11.1. Սպանության փորձը սուբյեկտիվ կողմից դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ հանցավորը նախատեսում է մահվան առաջացման անխուսափելիությունը կամ իրական հնարավորությունը և ցանկանում է դրա վրա հասնելը, գիտակցում է, որ եթե համապատասխան հետևանքն առաջանա, ապա այն անմիջականորեն բխելու է իր արարքից, և դրանց միջև առկա կլինի միանշանակ պատճառական կապ: Կատարվածը սպանության փորձ որակելու համար անհրաժեշտ է, որ հանցավորն ունենա անձին կյանքից զրկելու պարզ կոնկրետացված (նախապես կամ հանկարծակի առաջացած) դիտավորություն, ինչը հնարավոր է պարզել գործի հանգամանքների համակողմանի վերլուծության արդյունքում՝ հատկապես ուշադրություն դարձնելով հանցավորի՝ նախքան հանցագործությունը, հանցանքի ընթացքում և դրանից հետո դրսևորած վարքագծին: Հանցավորի դիտավորության ուղղվածության հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հանցագործության բոլոր հանգամանքների համակցությունից և հաշվի առնել, մասնավորապես, հանցավոր արարքի կատարման եղանակը, վնասվածքներ հասցնելիս օգտագործվող գործիքները, մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (օրինակ՝ մարդու կենսականորեն կարևոր օրգանների

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գրիգոր Մանուկյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱՆԴ/0110/01/12 որոշման 16-րդ կետը, *mutatis mutandis*, *Արարապ Բաղդասարյանի* վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0168/01/10 որոշումը:

վնասումը), ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունները, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները և այլն¹:

11.2. Շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության որակյալ հանցակազմը բնութագրվում է կատարման այնպիսի եղանակով, որի հետևանքով որոշակի անձին (անձանց) կյանքից զրկելով հանդերձ՝ հանցավորը միաժամանակ իրական վտանգի տակ է դնում նաև այլ անձանց կյանքը: Սպանությունը նշված որակյալ հանցակազմով որակելու համար կարևոր է ոչ թե այն, թե որքան մարդ է զրկվել կամ կարող էր զրկվել կյանքից, այլ այն, թե բացի հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված կոնկրետ անձից կամ անձանցից, արդյոք վտանգի տակ դրվել է նաև այլ անձանց կյանքը: Ուստի արարքը քննարկվող ծանրացնող հանգամանքով որակելու համար անհրաժեշտ է, որ բացի կոնկրետ անձից (անձանցից), վտանգ սպառնա նաև այլ անձանց կյանքին, ինչը, սակայն, ամենևին էլ չի նշանակում, որ այլ անձանց ևս պետք է վնաս պատճառվի:

11.3. Սպանության՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակի բնույթը կապված է այլ մարդկանց վնաս պատճառելու՝ հնարավոր սպառնալիք պարունակող համապատասխան գործիքների ու միջոցների կիրառման, ինչպես նաև հանցանքի կատարման իրադրության և տեղի հետ, որտեղ նշված սպառնալիքը փաստացի կարող է իրագործվել: Տվյալ դեպքում սկզբունքային նշանակություն ունի նաև հանցավորի սուբյեկտիվ վերաբերմունքն իր կատարածի նկատմամբ: Քանի որ քննարկվող հանցագործությունը դասվում է դիտավորությամբ կատարվողների շարքին, անհրաժեշտ է, որ սուբյեկտը գիտակցի սպանության՝ իր կողմից կիրառվող եղանակի՝ շատերի կյանքի համար վտանգավոր լինելը, ինչպես նաև ցանկանա դրա կիրառումը կամ գիտակցաբար թույլ տա այլ անձանց վնաս պատճառելու հնարավորությունը կամ անտարբեր լինի դրա նկատմամբ:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել՝ պարժվում է (...):»*

12.1. Հիշյալ հանցակազմին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Վլադիկ Խաչատրյանի* գործով կայացված որոշմամբ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. *«(...) [Ե]շված հանցակազմի օբյեկտը հավաքական բնույթ է կրում, այն բաղկացած է մարդու կյանքի և*

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Գրիգոր Մանուկյանի* վերաբերյալ գործով վերը հիշատակված որոշման 16-րդ և 17-րդ կետերը, *Սամվել Հունիկյանի* վերաբերյալ գործով 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08 որոշումը:

առողջության, ինչպես նաև սեփականության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններից:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է ակտիվ գործողություններով սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքով: Սպառնալիքը մարդու նկատմամբ հոգեբանական հարկադրանքի ձև է, որը նպատակ է հետապնդում վախեցնել նրան, առաջացնել տագնապի, սեփական անվտանգության կամ գույքի համար անհանգստության զգացում: Այս հանցակազմի իմաստով սպառնալիքի արտահայտման եղանակները կարող են տարբեր լինել, ինչն արարքի որակման համար նշանակություն չունի: Այն կարող է արտահայտվել բանավոր, գրավոր, որոշակի գործողություններով (օրինակ՝ զենքը ցուցադրարար թափահարելով):

(...) Սուբյեկտիվ կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով արգելված արարքը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիք տալով տուժողի վրա հոգեբանական ազդեցություն է գործադրում վերջինիս մտք առաջացնելով վախի, անվստահության զգացողություն, նախապետում և ցանկանում է նշված հետևանքների առաջացումը: Հանցագործության շարժառիթները կարող են տարբեր լինել՝ վրեժ, խանդ, անձնական անբարյացակամ հարաբերություններ և այլն (...):»¹:

13. Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշման 11-12.1-րդ կետերում ներկայացված իրավանորմերը և շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպանության փորձի և սպանության սպառնալիքի հանցակազմերի տարանջատման համար առանցքային նշանակություն ունի հանցավորի դիտավորության ուղղվածությունը պարզելը: Այլ կերպ՝ հիշյալ հանցակազմերը սահմանազատելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք հանցավորի կողմից ձեռնարկված գործողություններն ուղղված են տուժողին կյանքից զրկելուն, թե սահմանափակվում են միայն այս կամ այն կերպ սպառնալիք տալով՝ նպատակ ունենալով վնաս պատճառել տուժողի հոգեկան առողջությանը, նրա մոտ սեփական կյանքի համար տագնապի զգացողություն առաջացնել: Իսկ նշված հարցի լուծումը պահանջում է համակցության մեջ վերլուծել գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ հանցագործության կատարման եղանակը, օգտագործված գործիքները, ենթադրյալ հանցանք կատարած անձի և տուժողի միջև առկա փոխհարաբերությունների բնույթը և այլն:

¹ Տե՛ս Վլադիկ Խաչատրյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԴՆ/0025/01/11 որոշման 17-19-րդ կետերը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել Վ.Անտոնյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքն առ այն, որ նա 2015 թվականի հոկտեմբերի 11-ին, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ապօրինի կերպով ձեռք բերած, պահած, կրած և փոխադրած ինքնաձիգով փորձել է դիտավորությամբ ապօրինաբար կյանքից զրկել Վ.Արզարյանին, սակայն հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով¹: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Վ.Անտոնյանի դիտավորության ուղղվածության վերաբերյալ իր դատողությունները չի կառուցել գործում առկա փաստական տվյալներից բխող ողջամիտ ենթադրությունների վրա, ինչի արդյունքում հանգել է սխալ հետևության՝ ամբաստանյալի արարքի քրեաիրավական որակման վերաբերյալ: Անդրադառնալով Վ.Անտոնյանին մեղսագրված արարքը որակյալ դարձնող հատկանիշին՝ հանցանքը շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարելուն, Վերաքննիչ դատարանը նշել է, որ դեպքի վայրի զննության արձանագրությամբ, ինչպես նաև դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննության եզրակացությամբ հաստատվել է, որ Վ.Անտոնյանի կողմից արձակված կրակոցների ուղղությամբ որևէ բնակավայր չի եղել, ավելին՝ կրակոցները դիպել են Ախթալա քաղաքի կամրջի մոտ գտնվող ժայռին: Վերաքննիչ դատարանը գտել է, որ գործով ձեռք բերված ապացույցների ամբողջությունը բավարար չէ ամբաստանյալ Վ.Անտոնյանի անմեղության կանխավարկածը հաղթահարելու և հաստատված համարելու նրա՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն կատարելու դիտավորության առկայությունը: Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ գործում առկա փաստական տվյալների ամբողջությունը վկայում է այն մասին, որ Վ.Անտոնյանի կողմից կրակոցներն արձակվել են ոչ թե սպանության, այլ տուժողի՝ Է.Պողոսյանի մոտ սեփական կյանքի համար տագնապի զգացողություն առաջացնելու նպատակով, այսինքն՝ ամբաստանյալի դիտավորությունն ուղղված է եղել տուժողի նկատմամբ հոգեբանական բռնության դրսևորմանը, հետևաբար՝ ամբաստանյալ Վ.Անտոնյանի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշները²:

15. Սույն որոշման 5-7-րդ և 14-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում ներկայացված իրավանորմերի և արտահայտված իրավական

¹ Տե՛ս սույն որոշման 6-6.1-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Վ.Անտոնյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետից վերաորակելով ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, անտեսել է վերջինիս արարքում շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձի հատկանիշների առկայության մասին վկայող, գործով հաստատված փաստական տվյալների համակցությունը:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն անտեսել է Վ.Անտոնյանի մոտ Վ.Աբգարյանին շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կյանքից զրկելու դիտավորության առկայության մասին վկայող հետևյալ հանգամանքները.

- 2015 թվականի հոկտեմբերի 11-ին Վ.Անտոնյանը նախապես իր հետ վերցրել է հրագեն հանդիսացող ինքնաձիգ և այն պահել է սույն գործով վկա Ա.Հարությունյանին պատկանող «Մերսեդես Բենց Ց 180» մակնիշի ավտոմեքենայում,

- Վ.Անտոնյանը, 2015 թվականի հոկտեմբերի 11-ի երեկոյան գտնվելով Ա.Հարությունյանի ավտոմեքենայում և Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցի վրա տեսնելով Վ.Աբգարյանի «Համեր» մակնիշի ավտոմեքենան, մթության և «Համեր» մակնիշի ավտոմեքենայի ապակիները մզեցված լինելու պատճառով չի նկատել, որ ավտոմեքենայի դեկին Է.Պողոսյանն է, այլ ոչ թե Վ.Աբգարյանը (վերոնշյալը հաստատվել է ինչպես վկա Ա.Հարությունյանի ցուցմունքներով, այնպես էլ տրանսպորտային միջոցը գննելու մասին արձանագրությամբ),

- Վ.Անտոնյանի խնդրանքով Ա.Հարությունյանը մեքենան վարել է Վ.Աբգարյանի «Համեր» և դրա հետևից ընթացող՝ Ա.Մնացականյանի «Նիսան Տիանա 280 JK» մակնիշի ավտոմեքենաների հետևից, պարզել դրանց ընթացքի ուղղությունը, ապա վազանց կատարել: Հասնելով Ախթալա քաղաք տանող կամրջին՝ Վ.Անտոնյանը խնդրել է կանգնել կամրջի վերջնամասում՝ սպասելով նրանց,

- նկատելով ավտոմեքենաները՝ Վ.Անտոնյանը Ա.Հարությունյանի ավտոմեքենայից վերցրել է իր կողմից այնտեղ նախապես դրված ինքնաձիգը և շուրջ հինգ մետր ընդատաջ գնալով՝ ինքնաձիգից առնվազն 20 կրակոց է արձակել Վ.Աբգարյանի «Համեր» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ, որպիսի հանգամանքը հաստատվել է վկա Ա.Հարությունյանի ցուցմունքներով, դեպքի վայրի զննության արձանագրությամբ, առգրավում կատարելու մասին որոշմամբ և արձանագրությամբ, դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննության թիվ 3099-15, 3250-15 և 3020-15 եզրակացություններով,

- Վ.Անտոնյանը «Համեր» մակնիշի ավտոմեքենայի վրա ինքնաձիգով կրակահերթ է արձակել՝ անտեսելով, որ դրա հետևից ընթանում է «Նիսան

Տիանա 280 յԿ» մակնիշի ավտոմեքենան, որի մեջ գտնվող անձը կամ անձինք նույնպես կարող էին վնասվել,

- դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննության թիվ 3099-15 եզրակացության համաձայն՝ «Համեր» մակնիշի ավտոմեքենայի վրա՝ առջևի վահանի աջ մասում, առջևի համարանիշի, ձախ լապտերի գրեթե կենտրոնական հատվածում առկա վնասվածքները հանդիսանում են հրազենային գնդակային թափանցող վնասվածքներ՝ կատարված երեք կրակոցների արդյունքում: Ավտոմեքենայի վրա՝ առջևի դիմապակու ձախ ապակեմաքրիչի վրա, ապակեմաքրիչից դեպի ներքև՝ դիմապակու վրա առկա վնասվածքները, առաջացել են համեմատաբար պինդ առարկայի ներգործության հետևանքով, որոնք, սակայն, հնարավոր չէ պարզել՝ հրազենային են արդյոք, թե ոչ,

- միննույն ժամանակ, տուժող Վ.Աբգարյանն իր ցուցմունքներում ընդգծել է, որ մինչև դեպքը, իրեն պատկանող «Համեր» մակնիշի ավտոմեքենայի վրա նախկինում որևէ վնասվածք չի եղել, այն գտնվել է անթերի վիճակում,

- դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննության թիվ 3020-15 եզրակացության համաձայն՝ Ախթալա քաղաքի կամրջի մոտ առկա քարաժայռի վրա հայտնաբերված թվով 8 վնասվածքները հանդիսանում են հրազենային գնդակային կոյր վնասվածքներ՝ կատարված ութ կրակոցների արդյունքում, որոնք տեղակայված են գետնից 180սմ, 130սմ, 158սմ, 140սմ, 195սմ, 173սմ, 215սմ և 200սմ բարձրության վրա,

- դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննության թիվ 3250-15 եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված թվով 20 հատ պարկուճները հանդիսանում են «ԱԿ-74» ինքնաձիգների, «ՌՊԿ-74» տեսակի ձեռքի գնդացիների, դրանց մոդիֆիկացիաների և համապատասխան տրամաչափի այլ ակոսափող զենքերի համար նախատեսված գործարանային արտադրության 5,45մմ (5.45x39) տրամաչափի մարտական փամփուշտների մասեր՝ կրակված պարկուճներ, որոնք կրակվել են միննույն զենքից,

- թվով 20 հատ պարկուճները Լոռու մարզային քննչական վարչությունում ազգրավվել են Սուրեն Մարտիրոսյանից, ով հայտարարել է, որ ներկայացրած պարկուճներն ինքը հայտնաբերել է Ախթալա քաղաքի կամրջի մոտ¹:

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործով ձեռք է բերվել վերաբերելի և թույլատրելի ապացույցների այնպիսի համակցություն, որը թույլ է տալիս գալու

¹ Տե՛ս սույն որոշման 5-6.1-րդ կետերը:

հիմնավոր հետևության առ այն, որ Վ.Անտոնյանը գործել է Վ.Աբգարյանին կյանքից զրկելու ուղղակի դիտավորությանը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չի հասել: Մասնավորապես, ամբաստանյալի դիտավորության ուղղվածությունը և բովանդակությունը բացահայտելիս Վճռաբեկ դատարանը կարևորում է սույն գործով կիրառված հանցագործության գործիքը, արձակված կրակոցների քանակն ու ուղղվածությունը, հրազենային վնասվածքների տեղակայումը, հանցագործության տեղն ու իրադրությունը, ինչպես նաև հանցավորի վարքագիծը հանցագործությունից առաջ և դրա ընթացքում:

Այսպես՝ Վ.Անտոնյանը, Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցում տեսնելով Վ.Աբգարյանի «Համեր» մակնիշի ավտոմեքենան և կարծելով, որ վերջինս ավտոմեքենայում է, Ա.Հարությունյանի հետ միասին *հեղևել և պարզել են դրա ընթացքի ուղղությունը*, այնուհետև *սուսջ անցնելով «Համեր» և դրա հեղևից ընթացող «Նիսան Տիանա 280 JK» մակնիշի ավտոմեքենաներից՝ կանգնել են Ախթալա քաղաք տանող կամրջի վերջնամասում՝ սպասելով վերջիններիս:* Կամրջի սկզբնամասում տեսնելով մոտեցող ավտոմեքենաները՝ Վ.Անտոնյանը Ա.Հարությունյանի ավտոմեքենայից *վերցրել է ինքնաձիգը և «Վահագ արի ասել»* խոսքերով մոտ հինգ մետր առաջ է գնացել, *դիրքավորվել այնպես, որպեսզի դիմահար կրակելու հնարավորություն ունենա ու մուր տարածությունից բազմաթիվ կրակոցներ է արձակել «Համեր» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ:*

Կրակոցներից առնվազն *երեքը մնասել են* ավտոմեքենայի առջևի հատվածը (առջևի վահանի աջ մասը, համարանիշը և ձախ լապտերը), իսկ թվով *ութե հրազենային վնասվածքները* հայտնաբերվել են ավտոմեքենաների հետնամասում գտնվող քարաժայռի վրա, ընդ որում, այնպիսի բարձրությամբ, որը վկայում է, որ կրակոցները ուղղված են եղել ոչ միայն «Համեր» ավտոմեքենայի ներքևի հատվածին, որպիսի եզրահանգման ոչ իրավաչափորեն եկել էր Վերաքննիչ դատարանը (վնասվածքները *տեղակայված են եղել գեղնից 180սմ, 130սմ, 158սմ, 140սմ, 195սմ, 173սմ, 215սմ և 200սմ բարձրության վրա, հեղևաբար գնդակները կարող էին ներթափանցել սրահ և խոցել ավտոմեքենաներում գտնվող անձանց):*

Դեպքի վայրից հայտնաբերվել են ու առգրավվել *20 հար պարկուճներ*, որոնք դատաձգաբանական և դատաքիմիական փորձաքննության թիվ 3250-15 եզրակացության համաձայն՝ *կրակվել են միևնույն զենքից:*

17. Այսպիսով, ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Անտոնյանը Վ.Աբգարյանին կյանքից զրկելու ուղղությամբ կատարել է իրական գործողություններ, այն է՝

հետևելով Վ.Աբգարյանի ավտոմեքենային և համապատասխան վայր ընտրելով իր դիտավորությամբ ընդգրկված հանցանքն ի կատար ածելու համար՝ «Վահագ արի ասեմ» արտահայտությամբ, մոտ տարածությունից, ինքնաձիգով առնվազն 20 դիմահար կրակոց է արձակել Վ.Աբգարյանի ավտոմեքենայի ուղղությամբ, որոնցից երեքը դիպել են ավտոմեքենային, իսկ ութը՝ դրա հետևում գտնվող քարաժայռին՝ այնպիսի բարձրությամբ, որը վկայում է ավտոմեքենան և դրանում գտնվող անձին վնաս պատճառելու իրական հնարավորության մասին: Ընդ որում, հարկ է նկատել, որ ամբաստանյալն իր հանցավոր մտադրությունն իրականացնելու համար ընտրել է այնպիսի վայր (կամրջի վրա), որտեղ էականորեն կարող էր դժվարանալ ավտոմեքենաների՝ կրակոցներից խույս տալու հնարավորությունը: Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Վ.Անտոնյանի կողմից կրակոցների արձակման դիտավորության վերաբերյալ, բացի նրա ցուցմունքներից այլ ապացույցներ ձեռք չեն բերվել, անհիմն է, չի բխում գործի փաստական հանգամանքների ամբողջությունից: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի դիտավորության ուղղվածությունը բացահայտելիս հաշվի չի առել և որևէ գնահատման չի ենթարկել սույն գործով օբյեկտիվորեն գոյություն ունեցող փաստական տվյալները, փոխարենը հիմնվել է միայն ամբաստանյալի դատաքննական ցուցմունքների վրա՝ արդյունքում անձի կատարած արարքի որակման հարցում հանգելով սխալ հետևության:

Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ կատարված գործողությունները որևէ պարագայում չեն կարող դիտարկվել որպես հոգեբանական հարկադրանք, որն ուղղված էր պարզապես անձին վախեցնելուն և իր կյանքի համար անհանգստության ու տագնապի զգացում առաջացնելուն: Այլ կերպ՝ տուժողի ուղղությամբ քսան կրակոց արձակելը չի կարող բացառապես ուղղված լինել նրա հոգեկան առողջությանը վնաս պատճառելուն, վերոնշյալ գործողությունները դուրս են սպանության սպառնալիքի շրջանակներից և արդեն իսկ ոտնձգում են անձի կյանքի անվտանգությունն ապահովող հասարակական հարաբերությունների դեմ:

17.1. Ինչ վերաբերում է «Համեր» մակնիշի ավտոմեքենայի զրահապատ լինելու մասին սույն գործում առկա ցուցմունքներին¹, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ավտոմեքենայի ուղղությամբ **ինքնաձիգով դիմահար շուրջ քսան կրակոց արձակվելու դեպքում**, դրա զրահապատ լինելու վերաբերյալ փաստարկը որևէ պարագայում չի կարող բացառել սպանության դիտավորության առկայությունը: Այս առումով Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքարկերի այն փաստարկը, որ Վ.Անտոնյանն ի սկզբանե չէր կարող

¹ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

ինմանալ, որ Վ.Արզարյանի ավտոմեքենան գրահապատ է, իսկ եթե նույնիսկ Վ.Անտոնյանի սուբյեկտիվ ընկալմամբ «Համեր» մակնիշի ավտոմեքենան եղել է գրահապատ, ապա դա ևս չի կարող մեկնաբանվել հոգուտ իրեն, քանի որ վերջինս ապօրինի կրած և փոխադրած ինքնաձիգից «Համեր» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ կրակոցներ է արձակել քսան անգամ, ավտոմեքենայի հետևից ընթացել է Ա.Մնացականյանի վարած «Նիսան Տիանա 280 JK» մակնիշի ավտոմեքենան, որի վերաբերյալ ընդհանրապես տվյալներ առկա չեն, որ այն ևս եղել է գրահապատ:

Բացի այդ, սույն գործում առկա չէ որևէ ապացույց, ինչը հիմք կտար փաստելու, որ Վ.Անտոնյանը տեղեկացված է եղել ավտոմեքենայի գրահապատ համակարգի, դրա պաշտպանվածության աստիճանի, հնարավոր խոցելիության վերաբերյալ՝ կախված կիրառվող զենքի տեսակից, արձակված կրակոցների քանակից, տարածությունից, ուղղվածությունից և այլն:

Հետևաբար Վերաքննիչ դատարանի այն փաստարկը, որ Առաջին աստիճանի դատարանը պատշաճ գնահատականի չի արժանացրել վկա Գ.Հարությունյանի ցուցմունքներն առ այն, որ Վ.Անտոնյանը տեղյակ է եղել «Համեր» մակնիշի ավտոմեքենայի գրահապատ լինելու մասին, հիմնավոր չէ:

17.2. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ վկա Ա.Հարությունյանը դատաքննական ցուցմունքով նշել է, որ «Համերի» վրա կրակելուց առաջ Վ.Անտոնյանը մոտավորապես այսպիսի արտահայտություն է արել՝ «Վահագ արի ասեմ» ու կրակել է, ինչը, սակայն, վկան իր նախաքննական ցուցմունքներում երբևէ չի նշել և միայն դատաքննության փուլում է վերը նշված հանգամանքի մասին հայտնել, ինչը, ըստ Վերաքննիչ դատարանի, որոշակի տարակուսանք է առաջացնում վկայի մատնանշած հանգամանքի արժանահավատության վերաբերյալ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դեռևս նախաքննության փուլում վկան վարույթն իրականացնող մարմինն հայտնել է, որ մինչև կրակոցներ արձակելը, Վ.Անտոնյանը հնչեցրել է հիշյալ արտահայտությունը¹, ուստի Վերաքննիչ դատարանի վերոնշյալ եզրահանգումը չի բխում գործում առկա փաստական տվյալներից: Ընդ որում, հարկ է նկատել, որ վկայի հայտնած վերոնշյալ հանգամանքը ևս վկայում է այն մասին, որ Վ.Անտոնյանը *ենթադրել է, որ Վ.Արզարյանն է վարել ավտոմեքենան կամ նա գրնվել է ավտոմեքենայի մեջ:*

18. Անդրադառնալով սպանության փորձի՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարելու որակյալ հանգամանքի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթեր 79-83:

բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանություններին, որ դեպքի վայրի զննության արձանագրությամբ, ինչպես նաև դատաձգաբանական և դատաքինիական փորձաքննության եզրակացությամբ հաստատվել է, որ ամբաստանյալ Վ.Անտոնյանի կողմից արձակված կրակոցների ուղղությամբ որևէ բնակավայր չի եղել, ավելին՝ կրակոցները դիպել են Լոռու մարզի Ալավերդի-Թբիլիսի ավտոճանապարհի 16 կմ հարվածում Ախթալա քաղաքի կամրջի մոտ գրնվող քարաժայռին, բացի այդ՝ «Նիսան Տիանա 280 JK» ավտոմեքենայի վրա որևէ հրազենային վնասվածք առկա չի եղել, ինչը հաստատում են ամբաստանյալի դատաքննական ցուցմունքներն այն մասին, որ «Նիսան Տիանա 280 JK» ավտոմեքենան գրնվել է «Համերի» հեռևում, և կրակոցներից վերջինը չէր վնասվի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը. նախ՝ Վ.Անտոնյանի համար ակնհայտ է եղել, որ բացի «Համեր» մակնիշի ավտոմեքենայից, դրա հետևում է գտնվում նաև «Նիսան Տիանա 280 JK» ավտոմեքենան, ուստի նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի այն փաստարկը, որ որևէ բնակավայր այդ վայրում չի եղել, որևէ նշանակություն չի կարող ունենալ:

Միևնույն ժամանակ, իրավաչափ չէ նաև Վերաքննիչ դատարանի այն փաստարկը, որ քանի որ «Նիսան Տիանա 280 JK» ավտոմեքենայի վրա որևէ հրազենային վնասվածք առկա չի եղել, ուստի հիմնավոր է ամբաստանյալի այն ցուցմունքը, որ վերոնշյալ ավտոմեքենան գտնվել է «Համերի» հետևում, և կրակոցներից այն չէր կարող վնասվել: Վերոնշյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշման 11.2-11.3-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ սպանության՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարելու ծանրացնող հանգամանքի առկայության համար բավարար է փաստել, որ հանցավորը կիրառել է մի եղանակ, որը, բացի իր դիտավորության մեջ ընդգրկված անձից կամ անձանցից, իրական վտանգի տակ է դրել նաև այլոց կյանքը, ընդ որում, էականն այս դեպքում վնաս պատճառելու իրական հնարավորությունն է, և ոչ թե փաստացի պատճառված վնասը, որը կարող է նաև չլինել: Իսկ կոնկրետ դեպքում, «Նիսան Տիանա 280 JK» մակնիշի ավտոմեքենայի հետևում գտնվող ժայռերի վրա առկա թվով 8 հրազենային վնասվածքները և գետնից դրանց բարձրությունը վկայում են այն մասին, որ օբյեկտիվորեն վտանգի տակ է դրվել նաև նշված ավտոմեքենայում գտնվող անձի կյանքը: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի հիմնավորումներն այս առումով ևս ընդունելի չեն:

19. Անդրադառնալով տուժողներ Ա.Մնացականյանի և Է.Պողոսյանի ցուցմունքներին, ըստ որոնց՝ նրանք Ախթալայի կամրջի վրա կրակոցների ձայներ չեն լսել և չեն տեսել, որ կրակում են իրենց ավտոմեքենաների ուղղությամբ, ինչպես նաև, որ կամրջի վրա ավտոմեքենաները կանգնեցրել

և դուրս են եկել ավտոմեքենաներից, ապա դրանք Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն արժանահավատ չի համարել¹, քանի որ, մասնավորապես Է.Պողոսյանը չէր կարող չլսել և չտեսնել անմիջականորեն իր կողմից վարվող ավտոմեքենայի առջևից արձակվող կրակահերթը, և բացի այդ, ըստ Ա.Մնացականյանի ցուցմունքների՝ «Համեր» մակնիշի ավտոմեքենայի դիմացից կայծեր և ծուխ է երևացել: Ընդ որում, ավտոմեքենաներից դուրս չգալու հանգամանքն իր ցուցմունքներում պնդել է վկա Ա.Հարությունյանը՝ նշելով, որ կրակոցները դադարելուց հետո երկու ավտոմեքենաներն էլ շրջվել են և գնացել դեպի Ալավերդի:

Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում նաև բողոքի հեղինակի փաստարկն առ այն, որ եթե անգամ կրակոցներից հետո տուժողներն իջել են ավտոմեքենաներից, որից հետո Վ.Անտոնյանը դադարեցրել է կրակոցները, ապա դա ևս հիմնավորում է այն, որ Վ.Անտոնյանը ուղղակի դիտավորությամբ ցանկացել է ապօրինաբար կյանքից զրկել ոչ թե Է.Պողոսյանին, այլ Վ.Աբգարյանին²:

Մինևույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով տուժողներ Է.Պողոսյանի, Ա.Մնացականյանի և վկա Ա.Հարությունյանի ցուցմունքներում առկա հակասություններին (մասնավորապես՝ տուժողները նշել են, որ իջել են ավտոմեքենայից, իսկ վկա Ա.Հարությունյանը ցուցմունք է տվել այն մասին, որ կրակոցներն արձակելուց հետո «Համեր» և «Նիսան Տիանա 280 JK» մակնիշի ավտոմեքենաները շրջվել են և գնացել դեպի Ալավերդի), փաստել է, որ վերոնշյալ հակասությունները սույն դատաքննության շրջանակներում չեն կարող փարատվել, ուստի դրանք պետք է մեկնաբանվեն հոգուտ ամբաստանյալ Վ.Անտոնյանի: Վերոնշյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ցուցմունքների միջև հակասության առկայության դեպքում դատարանը, դրանցից յուրաքանչյուրը ենթարկելով բազմակողմանի հետազոտման ու գնահատման, պետք է դրանց արժանահավատության հարցում գա համապատասխան հետևության՝ մասնավորապես նշելով, թե որ ցուցմունքն է առավել արժանահավատ գնահատում: Այլ կերպ՝ ցուցմունքների միջև հակասության առկայությունը դեռևս չի ենթադրում չփարատված կասկած, որը ենթակա է մեկնաբանման հոգուտ ամբաստանյալի:

19.1. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 8.7-րդ կետում բարձրացված փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հարցի վերաբերյալ Վերաքննիչ դատարանն ըստ էության եկել է ճիշտ եզրահանգման, ուստի բողոքաբերի պատճառաբանությունն այդ

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 8.4-րդ կետը:

ատումով ընդունելի չէ: Մինևույն ժամանակ, հարկ է նկատել, որ թեև որպես այլ փաստաթուղթ ճանաչված օպերատիվ տեղեկություններն Առաջին ատյանի դատարանը դրել է իր կողմից կայացված դատական ակտի հիմքում, այնուամենայնիվ դրանք ապացուցողական զանգվածից հանելը որևէ կերպ չի կարող ազդեցություն ունենալ գործի ելքի վրա:

20. Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Վ.Անտոնյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետից վերաորակելով նույն օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, պատշաճ վերլուծության և գնահատականի չի արժանացրել սույն գործի փաստական տվյալները՝ նյութափրավական նորմերի կիրառման հարցում հանգելով սխալ եզրահանգման: Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Վ.Անտոնյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշների առկայության և նույն օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հատկանիշների բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

21. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Վ.Անտոնյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետից վերաորակելով նույն օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ և 358-րդ հոդվածների պահանջները, թույլ է տվել համապատասխանաբար՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում և նույն օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում, որոնք ազդել են գործի ելքի վրա, ինչը հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավաչափորեն հաստատված է համարել, որ Վ.Անտոնյանի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմերը: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

22. Նկատի ունենալով, որ Վ.Անտոնյանը 2016 թվականի հունվարի 14-ից մինչև 2019 թվականի մարտի 25-ը սույն գործով 3 (երեք) տարի 2 (երկու) ամիս 11 (տասնմեկ) օր գտնվել է կալանքի տակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է Առաջին ատյանի դատարանի

դատավճռով նշանակված՝ 13 տարի ժամկետով ազատազրկման ձևով պատժին ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ հաշվակցել նրա կալանքի տակ գտնվելու նշված ժամկետը և Վ.Անտոնյանին թողնել կրելու 9 (ինը) տարի 9 (ինը) ամիս 19 (տասնինը) օր ժամկետով ազատազրկում՝ պատժի սկիզբը հաշվելով նրան արգելանքի վերցնելու պահից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Վարդան Վաղենակի Անտոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 25-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ Վարդան Անտոնյանի՝ 2016 թվականի հունվարի 14-ից մինչև 2019 թվականի մարտի 25-ը կալանքի տակ գտնվելու ժամկետը հաշվակցել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճռով նշանակված՝ 13 (տասներեք) տարի ժամկետով ազատազրկման ձևով պատժին և թողնել կրելու 9 (ինը) տարի 9 (ինը) ամիս 19 (տասնինը) օր ժամկետով ազատազրկում: Պատժի սկիզբը հաշվել Վ.Անտոնյանին արգելանքի վերցնելու պահից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

արորագրություն

Դատավորներ՝

արորագրություններ

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԴ5/0004/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահուությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՆՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
պաշտպան՝
ամբաստանյալ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻ
Հ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ
Վ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Վահան Արտաշեսի Մարգարյանի և Վարդան Ժորայի Ներսիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի հունվարի 22-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62201115 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ Վարդան Ներսիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ Վահան Մարգարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի մայիսի 4-ի որոշմամբ Վ.Ներսիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով և 308-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի մայիսի 5-ի որոշմամբ Վ.Մարգարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով և 308-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշմամբ թիվ 62201115 քրեական գործից Վ.Մարգարյանի և Վ.Ներսիսյանի կողմից իրենց պաշտոնական լիազորությունները չարաշահելու և Սևադա Հայրապետյանի կատարած հանցանքի դրդություն կատարելու վերաբերյալ մասն անջատվել և առանձնացվել է առանձին վարույթում շնորհելով թիվ 62211815 համարը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ Վ.Մարգարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով և 308-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ Վ.Ներսիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով և 308-րդ հոդվածի 2-րդ մասով:

2016 թվականի փետրվարի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությանը ուղարկվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 18-ի դատավճռով Վ.Մարգարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրված արարքը վերադրվել է, նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ Վ.Մարգարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Վ.Մարգարյանը ազատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար քրեական

պատասխանատվությունից, և այդ մասով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Նույն դատավճռով Վ.Ներսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված արարքը վերաորակվել է, նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ Վ.Ներսիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Վ.Ներսիսյանը ազատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվությունից, և այդ մասով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

3. Մեղադրող Վ.Լազարյանի և ամբաստանյալ Վ.Մարգարյանի պաշտպան Հ.Սուքիասյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ պաշտպանի բողոքը բավարարվել է, իսկ մեղադրողի բողոքը՝ մերժվել:

Վերաքննիչ դատարանի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 18-ի դատավճիռը բեկանվել և փոփոխվել է: Վ.Մարգարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Վ.Մարգարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ չհեռանալու մասին ստորագրությունը վերացվել է:

Նույն որոշմամբ Վ.Ներսիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ: Վ.Ներսիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ չհեռանալու մասին ստորագրությունը վերացվել է:

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 18-ի դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Վ.Մարգարյանի պաշտպան Հ.Սուքիասյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի բողոքը վարույթ ընդունելը մերժել: Պաշտպանը գտել է, որ բողոքում բացակայում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերը: Բացի այդ, պաշտպանը նշել է, որ բողոքի հիմնավորումները փաստարկված չեն, չեն բխում գործի նյութերից և գործում առկա ապացույցների համակցությունից:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Վահան Մարգարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով և 308-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «*նա, 2011 թվականի նոյեմբերի 11-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում աշխատելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնի պետի պաշտոնում, ունենալով ոստիկանության փոխգնդապետի հատուկ կոչում, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով մշտապես իրականացնելով իշխանության ներկայացուցչի լիազորություններ, սպասարկվող տարածքում կարարված հանցագործությունների բացահայտման բացասական ցուցանիշներ չունենալու, այդ ցուցանիշներն ստերնոյթ բարձր ներկայացնելու անձնական շահագրգռվածությունից, կարերիստական դրդումներով, խմբային շահերից ելնելով, իր օպերատիվ գծով տեղակալ Վարդան Ներսիսյանի հետ նախնական համաձայնությամբ պաշտոնական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի բնակիչ Սևադա Հայրապետյանին նյութապես ապահովելու խոստումներով համոզելու եղանակով դրդել են առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք բերել, իր մտք ապօրինի պահել, փոխադրել զգալի չափերով մարիխուանա տեսակի թմրամիջոց հերազայում այն, իբրև, ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունք հայրնաբերելու, իբր, թմրանյութի ապօրինի շրջանառության դեպքի բացահայտում արձանագրելու նպատակով: Սևադա Հայրապետյանի կողմից ապօրինի թմրամիջոց ձեռք բերելուց, պահելուց և փոխադրելուց հետո, պայմանավորվածության համաձայն, Վահան Մարգարյանի ու Վարդան Ներսիսյանի կազմակերպմամբ*

խեղաթյուրվել է իրականությունը, ձևակերպվել է, թե իբր, Սևադա Հայրապետյանը թմրամիջոց պահելու կասկածանքով 2014 թվականի օգոստոսի 8-ին բերման է ենթարկվել Մարտունու քաժին, և հրավիրված, մոլորության մեջ գրնվող ընթերակաների ու օպերատիվ այլ աշխատակիցների ներկայությամբ նրա անձնական խուզարկությամբ հայրնաքերվել ու առգրավվել է մարիխուանա տեսակի թմրամիջոցը, որի մասին կազմվել են համապատասխան դատավարական արձանագրություններ և կցվել իբր բացահայտված հանցագործության վերաբերյալ նախապարտադրված նյութերին: Սևադա Հայրապետյանի խոստովանական բացատրությամբ հանդերձ նյութերը, ըստ ենթակայության, ուղարկվել են Մարտունու քննչական քաժին, դեպքի առթիվ հարուցվել և քննվել է քրեական գործ, Սևադա Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու համար, քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, և ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիանի դատարանի 2014թ. հոկտեմբերի 30-ի դատավճռով 1 տարի ժամկետով ազատազրկման դատապարտվելուց հետո Սևադա Հայրապետյանը փաստացի 4 ամիս գրնվել է անազատության մեջ՝ քրեակատարողական հիմնարկում: Վահան Մարգարյանի և Վարդան Եերսիայանի վերը նշված գործողություններն էական վնաս են պատճառել Սևադա Հայրապետյանի իրավունքներին և օրինական շահերին, պետության օրինական շահերին, հեղինակագրվել է պետական իշխանության մարմինը՝ ՀՀ ոստիկանությունը, խաթարվել է արդարադատության շահը, որն էլ անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանք՝ Սևադա Հայրապետյանը դատապարտվել է ազատազրկման, որի արդյունքում խախտվել է վերջինիս ազատության իրավունքը, որպես բարձրագույն արժեք:

Այսպես՝

Վահան Մարգարյանը, հանդիսանալով հիշյալ քաժնի հանցագործությունների բացահայտման ուղղությամբ քաժնի աշխատանքները կազմակերպելու, իր ենթակա աշխատողներին գործնական օգնություն ցույց տալու, աշխատանքները վերահսկելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձ, 2014 թվականի օգոստոսի 4-ին մեկնարկած «Կանեփ-կակաչ 2014» համալիր հանրապետական օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում քաժնի ցուցանիշները բարելավելու անձնական շահագրգռվածությունից, կարիերիստական դրդումներով խմբային շահերից ելնելով, իր օպերատիվ գծով տեղակալ Վարդան Եերսիայանի հետ նախնական համաձայնությամբ 2014 թվականի օգոստոսի 6-ից 7-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության Մարտունու քաժին են հրավիրել ՀՀ Գեղարքունիքի

մարզի Վաղաշեն գյուղի բնակիչ Սևադա Հայրապետյանին, և նրա նկարումամբ, իբր, բարիդրացիական վերաբերմունքի համար փոխադարձ ծառայություններ մատուցելու հորդորով իր աշխատասենյակում համոզել, դրդել են ապօրինաբար որևէ տեղից ձեռք բերել, իր գրպանում պահել, փոխադրել զգալի չափերով մարիխուանա տեսակի թմրամիջոց, որպեսզի կարողանան իրականությունը խեղաթյուրելով ձևակերպել, թե, իբր, ձեռնարկված օպերարիվ-հեղափոխական աշխատանքների արդյունքում հիշյալ թմրամիջոցը հայտնաբերվել է նրան բերման ենթարկելուց հետո կարարված անձնական խուզարկության ժամանակ, կարողանան արձանագրել հանցագործության բացահայտման դեպք: Սևադա Հայրապետյանին հորդորել են նաև գործի քննության բոլոր փուլերով խոստովանական ցուցմունքներ տալ, քրեական վարույթն իրականացնող մյուս մարմիններից թաքցնել իրականությունը, ներկայացրել են, որ դեպքի առթիվ կհարուցվի քրեական գործ, նրան մեղադրանք կառաջադրվի, ապա դադարանը նրան կդադարադատի առանց իրացնելու նպատակի ապօրինի թմրամիջոց պահելու համար: Միաժամանակ նախապես են իրենց գործողությունների արդյունքում առաջացող ծանր հետևանքները՝ Սևադա Հայրապետյանի ազատագրվման դադարադատվելու հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավարահորեն հույս են ունեցել, որ դրանք կկանխվեն, և Սևադա Հայրապետյանին երաշխավորել են, որ կչանսակվի անազատության հետ չկապված պարիթ: Սրանալով Սևադա Հայրապետյանի համաձայնությունը՝ Վահան Մարգարյանը պլանավորած հետագա գործողությունների կազմակերպումը հանձնարարել է Վարդան Ներսիսյանին:

Պայմանավորվածության համաձայն՝ Սևադա Հայրապետյանը ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի անտառամերձ հարվածում վայրի աճած կանեփի բույսից քաղել, ապօրինի ձեռք է բերել և իր մոտ ապօրինի պահել, փոխադրել է զգալի չափերով մարիխուանա տեսակի 0.61 գրամ թմրամիջոց: Դրանից հետո՝ 2014 թվականի օգոստոսի 8-ին ժամը 15:50-ի սահմաններում, Վարդան Ներսիսյանը նույն բաժնի ՔՀ բաժանմունքի օպերիվագոր Ավետիք Դանիելյանի միջոցով Սևադա Հայրապետյանին հրավիրել է ՀՀ ոստիկանության Մարտունու բաժին, որտեղ կազմվել է ապօրինի թմրամիջոց օգտագործելու և պահելու կասկածանքով վերջինիս բերման ենթարկելու մասին իրականությանը չհամապատասխանող արձանագրություն: Ապա հրավիրված և իրականության մասին չտեղեկացված ընթերականների ներկայությամբ Սևադա Հայրապետյանը ենթարկվել է անձնական խուզարկության, որի արդյունքում նրա գրպանից հայտնաբերվել է 0.61 գրամ կանեփաման գանգված, այդ մասին ևս կազմվել է անձնական խուզարկության ենթարկելու արձանագրություն:

Նշված գործողությունների և դրանց արդյունքների մասին Վարդան Ներսիսյանը գեկուցել է Վահան Մարգարյանին:

Դրանից հետո Վահան Մարգարյանի և Վարդան Ներսիսյանի կողմից ՀՀ նախկինության հերթապահ մասի միջոցով ներկայացվել է թմրամիջոցի հայրնաբերման և բացահայրման մասին օպերատիվ ամփոփագիր:

Այնուհետև Սևադա Հայրապետյանի կողմից ապօրինի թմրամիջոց պահելու դեպքի առթիվ ՀՀ նախկինության Մարտունու բաժնում նախապարտադրված նյութերի հիման վրա ՀՀ ՔԿ Մարտունու քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ, որի նախաքննության ընթացքում Սևադա Հայրապետյանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, խոստովանել կատարած հանցանքը, և գործն ուղարկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին արջանի դատարան: 2014 թվականի հոկտեմբերի 30-ի դատավճռով 1 տարի ժամկետով ազատազրկման դատապարտվելուց հետո Սևադա Հայրապետյանը փաստացի շուրջ 4 ամիս գրնվել է անազատության մեջ՝ քրեակատարողական հիմնարկում:

Սևադա Հայրապետյանի՝ ազատազրկման վայրում գրնվելու ընթացքում վերջինիս կնոջ՝ Նորեդրա Էլոյանի բողոքի հիման վրա ՀՀ նախկինության ներքին անվտանգության վարչությունում նախապարտադրված նյութերի ընթացքում իրենց կատարած հանցավոր արարքները չբացահայրվելու, Նորեդրա Էլոյանի կողմից ներկայացված բողոքից հրաժարվելու, իրականությունը կրկին խեղաթյուրելու նպատակով Վահան Մարգարյանն անձամբ, ինչպես նաև իր մերերիմ ընկեր Արմեն Ավետիսյանի և Վարդան Ներսիսյանի միջոցով Նորեդրա Էլոյանին են տվել 5000 ԱՄՆ դոլար, 263.000 ՀՀ դրամ, երկու բջջային հեռախոս և չորս պարկ ալյուր:

Վահան Մարգարյանի և Վարդան Ներսիսյանի վերը շարադրված դիրավորյալ գործողությունների արդյունքում կատարվել է Սևադա Հայրապետյանի կատարած հանցանքի դրդություն, կազմված դատավարական փաստաթղթերում խեղաթյուրվել է օբյեկտիվ իրականությունը, էական վնաս է պատճառվել Սևադա Հայրապետյանի իրավունքներին և օրինական շահերին, պետության օրինական շահերին, հեղինակազրկվել է պետական իշխանության մարմինը՝ ՀՀ նախկինությունը, խաթարվել է արդարադատության շահը, որն էլ անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանք՝ Սևադա Հայրապետյանը դատապարտվել է ազատազրկման, որի արդյունքում խախտվել է վերջինիս ազատության իրավունքը, որպես բարձրագույն արժեք»¹:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթեր 164-168:

6. Նախաքննության մարմնի կողմից Վարդան Ներսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով և 308-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «նա, 2011 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում աշխատելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի պաշտոնում, ունենալով ոստիկանության փոխգնդապետի հատուկ կոչում, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով մշտապես իրականացնելով իշխանության ներկայացուցչի լիազորություններ, սպասարկվող տարածքում կատարված հանցագործությունների բացահայտման բացասական ցուցանիշներ չունենալու, այդ ցուցանիշներն առերևույթ բարձր ներկայացնելու անձնական շահագրգռվածությունից կարերիստական դրդումներով, խմբային շահերից ելնելով, նույն բաժնի պետ Վահան Մարգարյանի հետ նախնական համաձայնությամբ պաշտոնական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի բնակիչ Սևադա Հայրապետյանին նյութապես ապահովելու խոստումներով համոզելու եղանակով դրդել են առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք բերել, իր մոտ ապօրինի պահել, փոխադրել զգալի չափերով մարիխուանա տեսակի թմրամիջոց, հետագայում այն, իբրև, ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունք հայտնաբերելու, իբր, թմրանյութի ապօրինի շրջանառության դեպքի բացահայտում արձանագրելու նպատակով: Սևադա Հայրապետյանի կողմից ապօրինի թմրամիջոց ձեռք բերելուց, պահելուց և փոխադրելուց հետո, պայմանավորվածության համաձայն, Վարդան Ներսիսյանի ու Վահան Մարգարյանի կազմակերպմամբ խեղաթյուրվել է իրականությունը, ձևակերպվել է, թե, իբր, Սևադա Հայրապետյանը թմրամիջոց պահելու կասկածանքով 2014 թվականի օգոստոսի 8-ին բերման է ենթարկվել Մարտունու բաժին, և հրավիրված, մոլորության մեջ գրնվող ընթերակաների ու օպերատիվ այլ աշխատակիցների ներկայությամբ նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել ու առգրավվել է մարիխուանա տեսակի թմրամիջոցը, որի մասին կազմվել են համապատասխան դատավարական արձանագրություններ և կցվել, իբր, բացահայտված հանցագործության վերաբերյալ նախապարտադրված նյութերին: Սևադա Հայրապետյանի խոստովանական բացարկությամբ հանդերձ նյութերը, ըստ ենթակայության, ուղարկվել են Մարտունու քննչական բաժին, դեպքի առթիվ հարուցվել և քննվել է քրեական գործ, Սևադա Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու համար, քրեական գործը մեղադրական եզրակացությամբ

նույնպես է դադարան, և ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին արյանի դադարանի 2014թ. հոկտեմբերի 30-ի դադարվճռով 1 փարի ժամկետով ազատագրված դադարապարտվելուց հետո Սևադա Հայրապետյանը փաստացի 4 ամիս գրնվել է անազատության մեջ՝ քրեակարարողական հիմնարկում:

Վահան Մարգարյանի և Վարդան Ներսիսյանի վերը նշված գործողությունն էական վնաս են պատճառել Սևադա Հայրապետյանի իրավունքներին և օրինական շահերին, պետության օրինական շահերին, հեղինակագրվել է պետական իշխանության մարմինը՝ ՀՀ ոստիկանությունը, խաթարվել է արդարադատության շահը, որն էլ անզուգույթյամբ առաջացրել է ծանր հետևանք՝ Սևադա Հայրապետյանը դադարապարտվել է ազատագրված, որի արդյունքում խախտվել է վերջինիս ազատության իրավունքը, որպես բարձրագույն արժեք:

Այսպես՝

Վարդան Ներսիսյանը, հանդիսանալով հիշյալ բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի անմիջական ղեկավարում իրականացնող և քրեական հետախուզության գծով օպերատիվ-հետախուզական միջոցառումների կազմակերպման համար անձնական պարասիանարվություն կրող պաշտոնատար անձ, 2014 թվականի օգոստոսի 4-ին մեկնարկած «Կանելի-կակաչ 2014» համալիր հանրապետական օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում բաժնի ցուցանիշները բարելավելու անձնական շահագրգռվածությունից կարերիստական դրդումներով, խմբային շահերից ելնելով, նույն բաժնի նախկին պետ Վահան Մարգարյանի հետ նախնական համաձայնությամբ 2014 թվականի օգոստոսի 6-ից 7-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության Մարտունու բաժին են հրավիրել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի բնակիչ Սևադա Հայրապետյանին, և նրա նկարմամբ, իբր, բարիդրացիական վերաբերմունքի համար փոխադարձ ծառայություններ մատուցելու հորդորով համոզել, դրդել են սպորինսարք որևէ տեղից ձեռք բերել, իր գրպանում պահել, փոխադրել զգալի չափերով մարիխուանա տեսակի թմրամիջոց, որպեսզի կարողանան իրականությունը խեղաթյուրելով ձևակերպել, թե, իբր, ձեռնարկված օպերատիվ-հետախուզական աշխատանքների արդյունքում հիշյալ թմրամիջոցը հայտնաբերվել է նրան բերման ենթարկելուց հետո կարարված անձնական խուզարկության ժամանակ, կարողանան արձանագրել հանցագործության բացահայտման դեպք: Սևադա Հայրապետյանին հորդորել են նաև գործի քննության բոլոր փուլերով խոստովանական ցուցմունքներ տալ, քրեական վարույթն իրականացնող մյուս մարմիններից թաքցնել իրականությունը, ներկայացրել են, որ դեպքի առթիվ կհարուցվի քրեական գործ, նրան մեղադրանք կառաջադրվի, սպա

դատարանը նրան կդատարարի առանց իրացնելու նպատակի ապօրինի թմրամիջոց պահելու համար: Միաժամանակ նախատեսել են իրենց գործողությունների արդյունքում առաջացող ծանր հետևանքները՝ Սևադա Հայրապետյանի ազատազրկման դատարարվելու հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավարահորեն հույս են ունեցել, որ դրանք կկանխվեն և Սևադա Հայրապետյանին երաշխավորել են, որ կնշանակվի անազատության հետ չկապված պարիժ:

Պայմանավորվածության համաձայն՝ Սևադա Հայրապետյանը ՀՀ Քեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի անտառամերձ հատվածում վայրի աճած կանեփի բույսից քաղել, ապօրինի ձեռք է բերել և իր մոտ ապօրինի պահել, փոխադրել է զգալի չափերով մարիխուանա տեսակի 0.61 գրամ թմրամիջոց: Դրանից հետո՝ 2014 թվականի օգոստոսի 8-ին՝ ժամը 15:50-ի սահմաններում, Վարդան Եերսիսյանը նույն բաժնի ՔՀ բաժանմունքի օպերիվազոր Ավերիք Դանիելյանի միջոցով Սևադա Հայրապետյանին հրավիրել է ՀՀ ոստիկանության Մարտունու բաժին, որտեղ կազմվել է ապօրինի թմրամիջոց օգտագործելու և պահելու կասկածանքով վերջինիս բերման ենթարկելու մասին իրականությանը չհամապատասխանող արձանագրություն: Այս հրավիրված և իրականության մասին չբերելուց ընթերականների ներկայությամբ Սևադա Հայրապետյանը ենթարկվել է անձնական խուզարկության, որի արդյունքում նրա գրպանից հայրնաբերվել է 0.61 գրամ կանեփանման զանգված, այդ մասին ևս կազմվել է անձնական խուզարկության ենթարկելու արձանագրություն:

Դրանից հետո Վարդան Եերսիսյանի և Վահան Մարգարյանի կողմից ՀՀ ոստիկանության հերթապահ մասի միջոցով ներկայացվել է թմրամիջոցի հայրնաբերման և բացահայրման մասին օպերատիվ ամփոփագիր:

Այնուհետև Սևադա Հայրապետյանի կողմից ապօրինի թմրամիջոց պահելու դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Մարտունու բաժնում նախապարտադրված նյութերի հիման վրա ՀՀ ՔԿ Մարտունու քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ, որի նախաքննության ընթացքում Սևադա Հայրապետյանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, խոստովանել կատարած հանցանքը, և գործն ուղարկվել է ՀՀ Քեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան: 2014 թվականի հոկտեմբերի 30-ի դատավճռով 1 տարի ժամկետով ազատազրկման դատարարվելուց հետո Սևադա Հայրապետյանը փաստացի շուրջ 4 ամիս գրնվել է անազատության մեջ՝ քրեակարարողական հիմնարկում:

Սևադա Հայրապետյանի ազատազրկման վայրում գրնվելու ընթացքում վերջինիս կնոջ՝ Նորեյրա Էլոյանի բողոքի հիման վրա ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում

նախապատրաստված նյութերի ընթացքում իրենց կատարած հանցավոր արարքները չբացահայտվելու, Նորեդրա Էլոյանի կողմից ներկայացված բողոքից հրաժարվելու, իրականությունը կրկին խեղաթյուրելու նպատակով Վարդան Ներսիսյանը և Վահան Մարգարյանը նրան են փոխել 5000 ԱՄՆ դոլար, 263.000 ՀՀ դրամ, երկու քջջային հեռախոս և չորս պարկ այլուր:

Վահան Մարգարյանի և Վարդան Ներսիսյանի վերը շարադրված դիրավորյալ գործողությունների արդյունքում կատարվել է Սևադա Հայրապետյանի կատարած հանցանքի դրդչություն, կազմված դատավարական փաստաթղթերում խեղաթյուրվել է օբյեկտիվ իրականությունը, էական վնաս է պատճառվել Սևադա Հայրապետյանի իրավունքներին և օրինական շահերին, պետության օրինական շահերին, հեղինակագրկվել է պետական իշխանության մարմինը՝ ՀՀ ոստիկանությունը, խաթարվել է արդարադատության շահը, որն էլ անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանք՝ Սևադա Հայրապետյանը դատապարտվել է ազատագրկման, որի արդյունքում խախտվել է վերջինիս ազատության իրավունքը, որպես բարձրագույն արժեք»¹:

7. Ամբաստանյալ Վ.Մարգարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ բաժնի ցուցանիշները վատ լինելու, Ս.Հայրապետյանին թմրամիջոց առաջարկելու հարցեր Վ.Ներսիսյանի հետ չի քննարկել, Ս.Հայրապետյանին նյութական խոստումներ տալու ու շահագրգռելու ոչ մի պայմանավորվածություն Վ.Ներսիսյանի հետ չի ունեցել, և որևէ հանցավոր համաձայնության չի եկել, մինչև Ս.Հայրապետյանին ձերբակալելը վերջինիս հետ այդ գործով ոչ մի առնչություն չի ունեցել և Ս.Հայրապետյանն իր աշխատասենյակում չի եղել:

2014 թվականի հուլիս ամսին ստացել են օպերատիվ տեղեկություններ, որ Ս.Հայրապետյանն ապօրինի ձեռք է բերել և պահում է թմրամիջոց, իսկ օգոստոսի 8-ին վերջինս թմրամիջոց պահելու կասկածանքով օպերատիվ աշխատողների կողմից բերման է ենթարկվել ոստիկանության Մարտունու բաժին, ինչի մասին Վ.Ներսիսյանն իրեն գեկուցել է ներքին կապով: Նշված օրը Ս.Հայրապետյանին տեսել է Վ.Ներսիսյանի աշխատասենյակում՝ հայտնաբերված թմրամիջոցի վերաբերյալ փաստաթղթեր կազմելիս, իսկ նախորդ օրերին նրա հետ առնչություն չի ունեցել: Ս.Հայրապետյանը Վ.Ներսիսյանի մոտ խոստովանել է, որ կանեփանման զանգվածն իրենն է:

Ս.Հայրապետյանի գործով դատական նիստի օրը՝ վերջինիս ոստիկանության Մարտունու բաժնի ձերբակալվածներին պահելու վայր բերելուց հետո, Ն.Էլոյանն առաջին հարկում աղմկել է: Քանի որ չեն կարողացել նրան հանդարտեցնել, Ս.Հայրապետյանին բերել են այդտեղ,

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթեր 211-215:

որպեսզի սաստի կնոջը: Բաժնի աշխատանքները չխաթարելու համար նրանց բարձրացրել են իր աշխատասենյակ, որտեղ Ն.Էլոյանը հայտնել է, որ շատ պարտքեր ունեն և հարցրել, թե երեխաների վիճակը ինչ պետք է լինի: Ինքը խոստացել է օգնել և այդ ժամանակ Ս.Հայրապետյանի տղային հետախոս է տվել, իսկ Ն.Էլոյանի գնալուց հետո հանձնարարել է 4 պարկ այլուր տանել Ս.Հայրապետյանի տուն: Հետագայում ինքը և Վ.Ներսիսյանը տեղեկացել են, որ իրենց հետ ունեցած խոսակցությունները Ն.Էլոյանը և նրա տղան ձայնագրել են, ներկայացրել ներքին անվտանգության վարչություն, ինչից հետո իրեն և Վ.Ներսիսյանին ազատել են աշխատանքից:

Ն.Էլոյանը զանգել է իր ընկեր Արմեն Ավետիսյանին, որից հետո վերջինս հանդիպել է նրան: Նրանց միջև եղել է գումարային խոսակցություն և պայմանավորված գումարը՝ 5000 ԱՄՆ դոլարը, Ա.Ավետիսյանը մաս-մաս տվել է Ն.Էլոյանին, որից 3000 ԱՄՆ դոլարը Վ.Ներսիսյանն էր տվել: Ա.Ավետիսյանի և Ն.Էլոյանի հանդիպման մասին իմացել է հետագայում: Ըստ Ա.Ավետիսյանի խոսքերի՝ նշված գումարն օգնության կարգով է տվել, որպեսզի Ն.Էլոյանը չբողոքի: Ինքը տեղյակ չի եղել, որ Ս.Հայրապետյանի դատվածությունը մարված չէ, այնուամենայնիվ հնարավոր է, որ Ս.Հայրապետյանի դատվածության հետ կապված խոսակցություն ունեցած լինի, սակայն չի հիշում, թե կոնկրետ ինչ են խոսել:

Նախաքննության ընթացքում Վ.Մարգարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2014 թվականի օգոստոսի 6-ին կամ 7-ին Վ.Ներսիսյանը հայտնել է, որ առաջարկել է Ս.Հայրապետյանին թմրամիջոց պահել, որից հետո իրենց ծառայողները նրան կրեբեն բաժին և կձևակերպեն, թե իբր դա նրա մոտից է հայտնաբերվել: Իր այն մտահոգությանը, որ Ս.Հայրապետյանը նախկինում դատապարտված է, և կարող են խնդիրներ առաջանալ, Վ.Ներսիսյանը պատասխանել է, որ Ս.Հայրապետյանի դատվածությունը մարված է, իսկ եթե հարկ լինի, կօգնեն նրան: Մի քանի օր անց Վ.Ներսիսյանը տեղեկացրել է, որ Ս.Հայրապետյանի վերաբերյալ կազմում են փաստաթղթեր, ինչից հետո Վ.Ներսիսյանի աշխատասենյակում տեսել է Ս.Հայրապետյանին: Վերջինիս այն հարցին, թե իր վերջը ինչ է լինելու, պատասխանել է, որ լավ կլինի: Վ.Ներսիսյանն այդ քայլին գնացել է ցուցանիշներ ապահովելու նպատակով: Ինքը համաձայնվել է, քանի որ Վ.Ներսիսյանը վստահեցրել է, որ ոչ մի խնդիր չի առաջանա, կարող է այդ գործը նորմալ ավարտել: Եթե Վ.Ներսիսյանի և Ս.Հայրապետյանի միջև պայմանավորվածություն չլիներ, Ս.Հայրապետյանի մոտ թմրամիջոց չէին հայտնաբերի: Վ.Մարգարյանը

նաև նշել է, որ Վ.Ներսիսյանն է պայմանավորվել Ս.Հայրապետյանի հետ իրենց գործողությունների վերաբերյալ¹:

7.1. Ամբաստանյալ Վ.Ներսիսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ համաձայն չէ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով իրեն առաջադրված մեղադրանքի հետ, բայց գիտակցում է, որ կատարել է որոշակի արարք, որի համար ենթակա է քրեական պատասխանատվության: Վերջինս նշել է, որ եթե Վ.Մարգարյանը ոչնչից տեղյակ չէր, ապա ինչու պետք է Ս.Հայրապետյանը զանգահարեր նրան, ինչու պետք է Վ.Մարգարյանն օգներ Ս.Հայրապետյանի ընտանիքին: Եթե Վ.Մարգարյանը ոչնչից տեղյակ չլիներ, Ն.Էլոյանի բողոքելու ժամանակ իրեն կասեր՝ դու ես արել, դու էլ գնա պատասխան տուր: Եթե միայն ինքը Ս.Հայրապետյանին հանցանք կատարելուն դրդեր, Վ.Մարգարյանը և նրա ընկերները չէին միջամտի այդ հարցին:

2014 թվականի օգոստոսի 7-ին աշխատանքները վերլուծելու ժամանակ Վ.Մարգարյանը խոսել է «Կանեփ-կակաչ 2014» միջոցառման շրջանակներում թմրամիջոցի ապօրինի շրջանառության դեպք հայտնաբերելու անհրաժեշտության մասին և հայտնել, որ ըստ բաժնի օպերաշխատողի՝ Ս.Հայրապետյանն ապօրինի թմրամիջոց է պահում: Նրա հարցին, թե արդյոք ապօրինի թմրամիջոցի վերաբերյալ տեղեկություններ կան, ինքը պատասխանել է, որ Ս.Հայրապետյանի վերաբերյալ առկա է օպերատիվ հաղորդում: Վ.Մարգարյանը հանձնարարել է Ս.Հայրապետյանին բերել իր մոտ, իսկ ինքը գնացել և այդ մասին Վաղաշենում հայտնել է Ս.Հայրապետյանին, ով խոստացել է գալ գործերն ավարտելուց հետո, այնուհետև վերադարձել է բաժին: Որոշ ժամանակ անց Ս.Հայրապետյանը 2-3 անգամ զանգահարել է իրեն, սակայն զանգերին չի պատասխանել՝ մտածելով չխառնվել Վ.Մարգարյանի և Ս.Հայրապետյանի խոսակցություններին: Երբ քիչ անց Վ.Մարգարյանը ներքին հեռախոսակապով կանչել է իր աշխատասենյակ, տեսել է Վ.Մարգարյանին և Ս.Հայրապետյանին գրուցելիս: Վ.Մարգարյանը Ս.Հայրապետյանին ասել է, որ նրա օգնության կարիքը կա, իսկ իրեն ասել է, որ Ս.Հայրապետյանը թմրամիջոցով կգա, և պետք է ձևակերպեն որպես հայտնաբերում: Ինքը և Ս.Հայրապետյանը գնացել են իր աշխատասենյակ՝ հետագա անելիքները պայմանավորվելու համար: Ինքը Ս.Հայրապետյանին հարցրել է, թե արդյոք չի վախենում դատապարտվելուց, իսկ Ս.Հայրապետյանը պատասխանել է, որ ինը երեխաների հորը ով պետք է դատապարտի, բացի այդ հայտնել է, որ Վ.Մարգարյանը նրան խոստացել է, որ չեն դատապարտի: Վ.Մարգարյանն իրեն հանձնարարել է նաև պարզել Ս.Հայրապետյանի դատվածության մարվածության հանգամանքը:

¹ Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

Պարզելով, որ Ս.Հայրապետյանի դատվածությունը մարված է, այդ մասին գեկուցել է Վ.Մարգարյանին: Նույն օրը Վ.Մարգարյանը հանձնարարել է Ս.Հայրապետյանին փոխանցել, որ իրեն էլ չզանգի և կապն իր՝ Վ.Ներսիսյանի հետ պահի: Հաջորդ օրը Ս.Հայրապետյանն իր զանգերին չի պատասխանել: Ինքը օպերիվագոր Ա.Դանիելյանին ուղարկել է Ս.Հայրապետյանի հետևից: Ս.Հայրապետյանի և Ա.Դանիելյանի գալուց հետո վերջիններս մնացել են իր աշխատասենյակում, իսկ ինքը գնացել է Վ.Մարգարյանի մոտ և գեկուցել, որ Ս.Հայրապետյանն իր մոտ է, և մտը թմրամիջոց կա: Վ.Մարգարյանը հանձնարարել է նյութեր նախապատրաստել: Ինքը նախաքննության ժամանակ ցուցմունք է տվել, որ Ս.Հայրապետյանի հետ է մտել Վ.Մարգարյանի աշխատասենյակ, բայց դա այդպես չէ: Իրականում իր աշխատասենյակում արձանագրություն կազմելու ժամանակ ներս է եկել Վ.Մարգարյանը, ով Ս.Հայրապետյանի այն հարցին, թե իր վերջը ինչ է լինելու, պատասխանել է, որ ամեն ինչ լավ կլինի:

Ս.Հայրապետյանի գործով դատական նիստի նախորդ օրը՝ հոկտեմբերի 29-ին, իր աշխատասենյակի պատուհանից տեսել է Ս.Հայրապետյանին ու Վ.Մարգարյանին ոստիկանության բակում գրուցելիս: Հետագայում Վ.Մարգարյանն իրեն պատմել է, որ Ս.Հայրապետյանը եկել էր հարցնելու, թե ինչ է լինելու:

2014 թվականի հոկտեմբերի 30-ին, երբ բաժնի ձեռքակալվածներին պահելու վայր են բերել Ս.Հայրապետյանին, հերթապահ մասում Ն.Էլոյանն աղմկել է: Վ.Մարգարյանը հանձնարարել է իր աշխատասենյակ բերել Ս.Հայրապետյանին, հետո կանչել է իրեն, ապա նաև Ս.Հայրապետյանի կնոջն ու տղային: Ս.Հայրապետյանի կնոջ այն հայտարարությանը, թե պարտքեր ունեն, հաց չեն կարողանում գնել, Վ.Մարգարյանը խոստացել է այլուր ուղարկել և նույն օրն օպերիվագոր Ա.Դանիելյանի միջոցով 4 պարկ այլուր է ուղարկել Ս.Հայրապետյանի տուն: Վ.Մարգարյանը Ս.Հայրապետյանի տղային տվել է նաև հեռախոս:

Դեկտեմբերի 20-ից 23-ն ընկած ժամանակահատվածում Վ.Մարգարյանի հետ ունեցած հեռախոսագրույցի ժամանակ, վերջինս իրեն հասկացրել է, որ մտը գումար ունենա, որպեսզի հանդիպեն: Հանդիպմանը ներկա է եղել նաև Վ.Մարգարյանի ընկեր Ա.Ավետիսյանը: Զրույցի ժամանակ Վ.Մարգարյանն ասել է, որ Ն.Էլոյանին համոզել են գրել, որ բողոք չունի, և համաձայնվել են հարցը լուծել 7000 ԱՄՆ դոլարով, որից ինքը պետք է տա 3500 ԱՄՆ դոլար: Ինքը 2000 ԱՄՆ դոլար տվել է Վ.Մարգարյանին, իսկ հաջորդ օրը 1000 ԱՄՆ դոլար տվել է Ա.Ավետիսյանին՝ խնդրելով իր փոխարեն տալ մնացած 500 ԱՄՆ դոլարը՝ հետագայում վերադարձնելու պայմանով: Հետո իմացել է, որ Ն.Էլոյանը պահանջել է 5000 ԱՄՆ դոլար, իսկ Ա.Ավետիսյանը և Վ.Մարգարյանը

խաբելով իրենից ավելի շատ գումար են վերցրել: Բացի այդ, Ա.Ավետիսյանը, դարձյալ խաբելով, Ն.Էլոյանին ասել է, որ այդ գումարը տալիս է Վ.Մարգարյանի դեմ չբողոքելու համար, իսկ Վ.Ներսիսյանը գումար չի տալիս, ինչից ելնելով էլ Ս.Հայրապետյանը միայն իր դեմ է բողոքել: Ինքը Հատուկ քննչական ծառայության շենքում Ն.Էլոյանին հայտնել է, որ այդ գումարից 3000 ԱՄՆ դոլարն ինքն է տվել և հետ չի պահանջում: Այդ պատճառով Ս.Հայրապետյանը դատարանում հայտնել է ճշմարտությունը:

Նախաքննության ընթացքում Վ.Ներսիսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ս.Հայրապետյանի գործով դատական նիստի նախորդ օրը՝ 2014 թվականի հոկտեմբերի 29-ին, Վ.Մարգարյանն իրեն պատմել է, որ բաժնի դիմաց հանդիպել է Ս.Հայրապետյանին, ով եկել էր հետաքրքրվելու գործի քննությունից և ում նա վստահեցրել է, որ դատարանում խնդիրներ չի ունենա: Այդ օրը Վ.Մարգարյանն իրեն նույնպես վստահեցրել է, որ խնդիրներ չեն լինի, քանի որ Ս.Հայրապետյանն ինք երեխա ունի, և քիչ քանակով թմրամիջոցի համար նրան չեն կալանավորի:

2014 թվականի հոկտեմբերի 30-ին՝ դատական նիստից հետո, Վ.Մարգարյանի աշխատասենյակում Ս.Հայրապետյանը, իր ներկայությամբ դիմելով Վ.Մարգարյանին, հարցրել է, թե այս ինչ սարքեցին իր գլխին, ինչի համար դա արեցին, ինչին Վ.Մարգարյանը պատասխանել է, որ չէր սպասում, որ դատավորը կարող է նման պատիժ նշանակել: Ս.Հայրապետյանը տեղեկացրել է, որ պարտքեր ունի, որոնք իրենք խոստացել են մարել: Նույն պահին Վ.Մարգարյանը 4 պարկ այլուր է ուղարկել Ս.Հայրապետյանի տուն, իսկ հետագայում Ն.Էլոյանին տվել են նաև 263.000 ՀՀ դրամ և սննդամթերք¹:

7.2. Տուժող Ս.Հայրապետյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2014 թվականի օգոստոսի 8-ին ոստիկանությունում Վ.Մարգարյանը և Վ.Ներսիսյանը լուցկու տուփի մեջ լցված կանեփ են առաջարկել՝ ասելով, որ պետք է օգնի իրենց: Իր մտավախությանը, որ եթե չկարողանան հետո օգնել՝ կդատապարտվի, Վ.Մարգարյանը և Վ.Ներսիսյանը պատասխանել են, որ դրա համար իրեն ամենաշատը մեկ տարի դատապարտեն՝ ավելացնելով, որ կմտնի դատարանի դահլիճ և դուրս կգա: Ինքն ասել է, որ այդ պայմաններում ինչպես ցանկանում են, թող այդպես էլ անեն:

Երբ Վ.Ներսիսյանի հետ միասին գնացել են ոստիկանություն, սկզբից մտել են Վ.Մարգարյանի աշխատասենյակ: Վ.Ներսիսյանը Վ.Մարգարյանին ասել է, որ Սևադային բերել են ու հարցրել, թե հետո ինչ պետք է անեն: Այդ ժամանակ է եղել նրանց կողմից իրեն թմրամիջոց առաջարկելը:

¹ Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

Մի անգամ ոստիկանությունում հանդիպելով Վ.Մարգարյանին և Վ.Ներսիսյանին՝ ասել է, որ գործը շատ է ձգձգվում: Վերջիններս պատասխանել են, որ ոչինչ, կեսից հետ չեն կանգնելու: Այդ ժամանակ Վ.Մարգարյանը թույլատրել է բարձրասալ իր աշխատասենյակ, իսկ մնացած բոլոր հարցերով Վ.Ներսիսյանի հետ է խոսել:

Դատարանից ծանուցում ստանալուց հետո գնացել է ոստիկանություն, մոտեցել է ոստիկանության դիմաց կանգնած Վ.Մարգարյանին, տեղեկացրել է, որ իրեն դատարանից ծանուցում է եկել և հարցրել, թե նա ինչ է մտածում այդ կապակցությամբ: Վ.Մարգարյանը պատասխանել է, որ ամեն ինչ պայմանավորված է, ինչպես ասել են՝ այդպես էլ կլինի: Դատից հետո Վ.Մարգարյանի աշխատասենյակում կնոջ և որդու ներկայությամբ հարցրել է, թե ինչ է լինելու իր վերջը, չէ որ ընտանիք պետք է պահի ու շատ պարտքեր ունի: Վ.Մարգարյանը և Վ.Ներսիսյանը վստահեցրել են, որ ամեն ինչ կանեն և իր տան բոլոր հարցերը կլուծեն:

Այն ժամանակ մտածել է, որ եթե Վ.Մարգարյանը և Վ.Ներսիսյանը նման պաշտոններ են զբաղեցնում ու վստահեցնում են, որ ամեն ինչ նրանց ներկայացրածով է լինելու, հետևաբար կարելի է վստահել: Ինքը չգիտի՝ Վ.Ներսիսյանը և Վ.Մարգարյանը, առաջարկելով իրեն թմրամիջոց պահել, չարաշահել են լիազորությունները, թե ոչ, բայց կարող է ասել, որ նրանք իրեն դրդել են այդ քայլին գնալ: Մինչև դատարան գնալը ներքուստ համոզված է եղել, որ հնարավոր է, որ ազատագրվվի, բայց քանի որ ոստիկանապետը և նրա տեղակալն իրեն վստահեցրել են, որ լավ կլինի, հավատացել է նրանց:

Մինչ ներքին անվտանգության վարչություն բողոք ներկայացնելը Վ.Ներսիսյանը և Վ.Մարգարյանը տվել են 263.000 ՀՀ դրամ, 4 պարկ ալյուր և երկու բջջային հեռախոս, իսկ 5000 ԱՄՆ դոլարը տվել են բողոքելուց հետո, որպեսզի կինը բողոքը հետ վերցնի:

Ս.Հայրապետյանը հայտնել է նաև, որ Վ.Ներսիսյանը Վ.Մարգարյանի աշխատասենյակում իրեն ասել է, որ ցուցանիշների հետ կապված խնդիրներ կան: Իսկ դատական նիստից մեկ օր առաջ ոստիկանության դիմաց Վ.Մարգարյանը վստահեցրել է, որ ամեն ինչ լավ է լինելու:

Նախաքննության ընթացքում տուժող Ս.Հայրապետյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2014 թվականի օգոստոսի 8-ին Վ.Մարգարյանին չի տեսել: 2014 թվականի ընթացքում նշված թմրամիջոցի գործով նրան տեսել է մեկ անգամ հոկտեմբերի 29-ին, երբ հարցրել է, թե ինչ է լինելու իր գործը: Վ.Մարգարյանը պատասխանել է՝ «մտի դատարան, դուրս արի և տուն գնա»: Վ.Ներսիսյանն իրեն հայտնել է, որ ամեն ինչի մասին պետք տեղյակ է, այդ իսկ պատճառով հոկտեմբերի 29-ին, մոտենալով Վ.Մարգարյանին,

հարցրել է, թե իր գործն ինչ է լինելու: Ինքը Վ.Մարգարյանի հետ նրա աշխատասենյակում պայմանավորվածություն չի ունեցել թմրամիջոց պահելու հարցով:

Նախաքննական և դատաքննական ցուցմունքներում առկա հակասությունների առումով տուժողը հայտնել է, որ նախաքննության ընթացքում իր տված ցուցմունքն այն մասին, որ Վ.Մարգարյանի աշխատասենյակում չի եղել, իրականությանը չի համապատասխանում: Այդ մասին ճշմարտությունը հայտնել է դատաքննության ընթացքում, ըստ որի՝ ինքը մեկ-երկու րոպեով եղել է Վ.Մարգարյանի աշխատասենյակում¹:

7.3. Վկա Ն.Էլոյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2014 թվականի օգոստոսի 8-ին ոստիկանությունից վերադառնալուց հետո ամուսինը պատմել է, որ Վ.Ներսիսյանը և Վ.Մարգարյանն ասել են, որ թմրամիջոցի հարցով պետք է օգնի: Ինքը ցանկացել է գնալ ոստիկանություն՝ պարզելու տեղի ունեցածը, բայց Ս.Հայրապետյանը չի թողել՝ ասելով, որ պաշտոնով մարդիկ ինչու պետք է խաբեն: Ամուսնուն ասել են նաև, որ տանը պետք է չիմանան ոստիկանություն կանչելու պատճառը և հավատացրել, որ դատարանից տուն կգնա: Հոկտեմբերի 27-ին դատարանից ծանուցում են ստացել, որ դատական նիստը լինելու է նոյեմբերի 1-ին: Ս.Հայրապետյանը գնացել է ոստիկանություն, ուր նրան վստահեցրել են, որ խնդիր չունի, դատարանից տուն է գնալու: Դատական նիստի օրը՝ դատարանից Ս.Հայրապետյանին ոստիկանություն տանելուց հետո, Վ.Մարգարյանի աշխատասենյակում եղել են Վ.Ներսիսյանը, ինքը, տղան, ամուսինը: Վերջինս հարցրել է, թե ինչու այսպես ստացվեց, չէ որ իրեն ասում էին, որ ամեն ինչ լավ է լինելու, դատարանից տուն է գնալու: Վ.Մարգարյանը և Վ.Ներսիսյանը վստահեցրել են, որ բոլոր հարցերով կօգնեն: Հաջորդ օրն իրենց տանը տեսել է Վ.Մարգարյանի ուղարկած 4 պարկ այլուրը: Դատական նիստից երկու օր հետո ոստիկանության աշխատակից Ավոն իրենց տուն է բերել 100.000 ՀՀ դրամ, իսկ մեկ շաբաթ անց բերել է ևս 100.000 ՀՀ դրամ: Բացի այդ, Վ.Ներսիսյանը 63.000 ՀՀ դրամ է տվել իրեն: Իրենց տվել են նաև 2 բջջային հեռախոս:

Իր կողմից բողոք ներկայացնելուց հետո իրենց տուն է եկել Ա.Ավետիսյանը, ներկայացել որպես Վ.Մարգարյանի մտերիմ ընկեր և պահանջել ձայնագրությունները: Ինքը դրա դիմաց 5000 ԱՄՆ դոլար է պահանջել: Ա.Ավետիսյանը սկզբից տվել է 1400 ԱՄՆ դոլար և միասին գնացել են, որպեսզի ինքը բողոքը հետ վերցնի: Հետագայում իրեն տվել են նաև պահանջված գումարի մնացած մասը: Ա.Ավետիսյանն իրենից պահանջել է թղթի վրա գրել պարտք-պահանջ չունենալու մասին:

¹ Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

Ա.Ավետիսյանի կողմից գումար տալու նպատակն եղել է այն, որ ինքը չբողոքի Վ.Մարգարյանի դեմ:

Մինչև դատական նիստի օրն իր այն հարցին, թե ինչ է լինելու գործի վերջը, ամուսինը պատասխանել է, որ անհանգստանալու կարիք չկա, խոստացել են, որ լավ է լինելու: Ամուսինը հավատացել է Վ.Ներսիսյանի և Վ.Մարգարյանի խոսքերին, ովքեր վստահեցրել են, որ նրա դատվածությունը մարված է, ինը երեխա ունի, չի դատվի: Մինչ այդ գործը Վ.Մարգարյանը և Վ.Ներսիսյանն իրենց դրամական օգնություն չեն ցուցաբերել¹:

7.4. Վկա, տուժողի որդի Վահան Հայրապետյանը ցուցմունք է տվել այն մասին, որ մորից տեղեկացել են հորը ոստիկանություն կանչելու պատճառի մասին, ինչը հայրը հետագայում հաստատել է: Հորը վստահեցրել են, որ չի դատապարտվի և դատարանից տուն կգնա: Երբ գնացել են ոստիկանություն հորը տեսակցության, Վ.Ներսիսյանը և Վ.Մարգարյանը խոստացել են, որ ամեն ինչ կանեն, և լավ կլինի: Հետագայում ոստիկանության աշխատակիցներից Ավոն իր հիշելով 150.000-ից 160.000 ՀՀ դրամի չափով դրամական օգնություն է բերել, այնուհետև բերել են բրինձ, ձեթ և այլն: Դրանից հետո Ա.Ավետիսյանը, ներկայանալով որպես բարեգործ, բողոքը հետ վերցնելու համար իրենց է տվել 5000 ԱՄՆ դոլար: Գումարի մի մասը տվել է առավուտյան, երբ պետք է Ա.Ավետիսյանի հետ գնային բողոքը հետ վերցնելու, իսկ մյուս մասը՝ նույն օրը երեկոյան: Գումարը տալուց հետո իրենցից թուղթ է վերցրել Վ.Մարգարյանի նկատմամբ բողոք չունենալու վերաբերյալ:

Հայրը պատմել է, որ ոստիկանությունում Վ.Մարգարյանը և Վ.Ներսիսյանն ասել են, որ թմրամիջոցի գործն իր վրա վերցնի, որի դիմաց խոստացել են լավություն անել:

Դատական նիստի օրը Վ.Ներսիսյանի աշխատասենյակում վերջինս ասել է, որ չէին սպասում, որ հայրը կդատվի, նույն խոսակցությունը եղել է Վ.Մարգարյանի աշխատասենյակում, որտեղ Վ.Մարգարյանն իրեն նաև հեռախոս է տվել: Հետո 3-4 պարկ այրուր են բերել իրենց տուն՝ ասելով, որ այն ուղարկել են Վ.Ներսիսյանը և Վ.Մարգարյանը: Բացի իրեն տված հեռախոսից, Ավոն կրկին հեռախոս է տվել՝ ասելով, որ այն Վ.Մարգարյանն է ուղարկել²:

7.5. Վկա, տուժողի որդի Երեն Հայրապետյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ըստ մոր պատմածի՝ հորն առաջարկել են թմրամիջոցի գործ վերցնել իր վրա՝ հավաստիացնելով, որ չի դատապարտվի և դատարանից դուրս կհանեն: Հայրը թմրամիջոցի գործը վերցրել է իր վրա, իսկ նրանք չեն

¹ Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

² Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

կարողացել դատարանից ազատել հորը: Հետագայում իրենց տուն բերել են 4 պարկ այուր և 260.000 ՀՀ դրամից ավելի գումար: Մայրն ասել է, որ գումարը նրանք են ուղարկել, իսկ այուրը բերելիս ասել են, որ դա Վ.Մարգարյանն է ուղարկել: Ա.Ավետիսյանը 5.000 ԱՄՆ դոլար տվել է, որպեսզի իրենք չբողոքեն: Գումարը տալու ժամանակ Ա.Ավետիսյանն ասել է, որ Վ.Մարգարյանն իր ընկերն է, բայց գումարը տալիս է որպես երեխաներին օգնություն՝ ավելացնելով, որ չբողոքեն: Հետո Ա.Ավետիսյանը մորից թուղթ է վերցրել՝ բողոք չունենալու մասին:

Հոր վերաբերյալ թմրամիջոցի գործը Վ.Մարգարյանը և Վ.Ներսիսյանն են սարքել՝ ասելով, որ թմրամիջոցի գործ վերցնի իր վրա պայմանով, որ նրանք կազատեն հորը: Հայրը, նրանց մտերիմ համարելով, համաձայնվել է՝ հայտնելով, որ եթե կազատեն, խնդիր չկա¹:

7.6. Վկա Ժենիկ Մանուկյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ամբաստանյալներն իրեն շատ անգամներ են օգնել: Բացի իրենից, Վ.Մարգարյանը Սուսան Գրիգորյանին է օգնել 5000 ՀՀ դրամով, Նունե Սուքիասյանին՝ այուրով, Նազոյի աղջկան՝ այուրով և ձեթով: Ամեն անգամ, երբ դիմել է Վ.Մարգարյանին, նա իրեն տվել է 5000 ՀՀ դրամ: Վ.Մարգարյանն իր օգնությունների դիմաց իրենից ոչինչ չի ակնկալել և ինքն էլ հանցանք չի կատարել: Ամսեկան ամենաքիչը երկու անգամ գնացել է Վ.Մարգարյանի մոտ, և նա իրեն տվել է 1000-5000 ՀՀ դրամ²:

7.7. Վ.Մարգարյանի, Վ.Ներսիսյանի, Ա.Ավետիսյանի, Ս.Հայրապետյանի, Ա.Դանիելյանի և մյուսների մուտքային ու ելքային հեռախոսազանգերի, տեղանշման վերաբերյալ տեղեկությունները պարունակող լազերային սկավառակների և դրանց գնության արձանագրության համաձայն՝

- Ս.Հայրապետյանը 2014 թվականի օգոստոսի 7-ին՝ ժամը 14:44:52-ին և 14:45:42-ին, զանգահարել է Վ.Մարգարյանին.

- Ս.Հայրապետյանը Վ.Մարգարյանին զանգահարել է նաև 2014 թվականի հոկտեմբերի 30-ին՝ ժամը 09:18:37-ին և 09:23:03-ին.

- 2014 թվականի դեկտեմբերին Վ.Ներսիսյանի և Ա.Ավետիսյանի միջև կատարվել է շուրջ 14 հեռախոսազանգ³:

7.8. Ի տարբերություն 2013 թվականի անցկացված միջոցառման շրջանակում արձանագրված թմրամիջոց պահելու և օգտագործելու կասկածանքով բերման ենթարկելու մեկ դեպքի՝ 2014 թվականին այդ միջոցառման շրջանակում բացի Ս.Հայրապետյանից, այլ անձանց բերման ենթարկելու դեպքեր Մարտունու բաժնում չեն արձանագրվել⁴:

¹ Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

² Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթեր 100-126:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 203-204:

8. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Մեղադրանքի այն մասը, որ «Վահան Մարգարյանի և Վարդան Ներսիսյանի (...) գործողություններն էական վնաս են պատճառել Սևադա Հայրապետյանի իրավունքներին և օրինական շահերին, որն էլ անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանք՝ Սևադա Հայրապետյանը դադարապարտվել է ազատագրվման, որի արդյունքում խախտվել է վերջինիս ազատության իրավունքը, որպես բարձրագույն արժեք: (...) Միաժամանակ նախապես են իրենց գործողությունների արդյունքում առաջացող ծանր հետևանքները՝ Սևադա Հայրապետյանի ազատագրվման դադարապարտվելու հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավարահորեն հույս են ունեցել, որ դրանք կկանխվեն և Սևադա Հայրապետյանին երաշխավորել են, որ կնշանակվի անազատության հետ չկապված պարիժ, (...) որն էլ անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանք՝ Սևադա Հայրապետյանը դադարապարտվել է ազատագրվման, որի արդյունքում խախտվել է վերջինիս ազատության իրավունքը, որպես բարձրագույն արժեք», Դատարանը, ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով, որը կբացառեր հակառակի ողջամիտ հավանականությունը, հաստատված չի համարում:

(...)

Դատարանը գրնում է, որ Իվյալ պարագայում բացակայում է հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր փաստի հանդիսացող արարքի և հետևանքի միջև պատճառահետևանքային կապը՝ պաշտոնական լիազորությունները չարաշահելու որակյալ հանցակազմի մասով:

Այսպես, թեև դատաքննությամբ հետազոտված որոշ ապացույցներով ամբաստանյալներ Վ.Մարգարյանը և Վ.Ներսիսյանը բուժող հանդիսացող Ս.Հայրապետյանին հայրնել են, որ չի դադարապարտվի և դատարանի դահլիճից կգնա բուժ, սակայն, այդ արարքը պատճառահետևանքային կապի մեջ չի գրնվում բուժող հանդիսացող Ս.Հայրապետյանի դադարապարտման և պարիժ կրելու հետ, մասնավորապես, դատաքննությամբ հետազոտված վերը նշված ապացույցներից, ինչպես նաև ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքից բխում է, որ Ս.Հայրապետյանը, պայմանավորվածության համաձայն, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի անբաժանված հարվածում վայրի աճած կանեփի բույսից քաղել, ապօրինի ձեռք է բերել և իր մոտ ապօրինի պահել, փոխադրել է զգալի չափերով մարիխուանա տեսակի 0.61 գրամ թմրամիջոց: ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 30-ի դատավճռով Ս.Հայրապետյանը դադարապարտվել է ազատագրվման 1 փարի ժամկետով, վերը նշված արարքը կատարելու համար: Այսինքն, Ս.Հայրապետյանը

ազատագրված է դատապարտվել և որոշակի ժամկետով պատիժ է կրել իր կատարած հանցանքի համար և դրա արդյունքում նրա ազատության իրավունքը ոչ թե խախտվել, այլ սահմանափակվել է, այն է՝ դատարանի դատավճռով կիրառվել է պետական հարկադրանքի միջոց՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ, որը արտահայտվել է օրենքով նախատեսված անձի ազատության իրավունքի սահմանափակմամբ:

Այսինքն, տուժող հանդիսացող Ս.Հայրապետյանի ազատության իրավունքը տվյալ պարագայում չի խախտվել, այլ սահմանափակվել է, որը դրսևորվել է Դատարանի կողմից իր կատարած արարքի համար պատիժ նշանակելով և այդ պատիժը կրելով և այդ սահմանափակումը պարճառահետևանքային կապի մեջ չի գրնվում ամբաստանյալների արարքի հետ: Փաստորեն, սույն գործով ամբաստանյալների արարքում, բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը:

(...) [Տ]վյալ պարագայում ամբաստանյալների կատարած արարքի արդյունքում Ս.Հայրապետյանին անմիջականորեն չի պարճատվել և չէր էլ կարող պարճատվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային էական վնաս:

(...)

Դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով ամբաստանյալները և տուժող հանդիսացող Ս.Հայրապետյանը հանցակիցներ են ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածով նախատեսված հանցագործության մասով, մասնավորապես, Ս.Հայրապետյանը հանդիսացել է կատարող, որի համար (...) ենթարկվել է քրեական պարասահանարվության և պարճի, իսկ Վ.Մարգարյանը և Վ.Ներսիսյանը հանդիսացել են դրդիչներ, որի համար սույն քրեական գործով մեղադրվում են:

(...) Դատարանը գրնում է, որ Վահան Արտաշեսի Մարգարյանի արարքը համապարասահանում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հարկանիշներին (...):

(...) Դատարանը գրնում է, որ Վարդան Ժորայի Ներսիսյանի արարքը համապարասահանում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հարկանիշներին (...):¹:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաճայն՝ «(...) Բնչպես հետևում է (...) մեղադրանքների բովանդակային վերլուծությունից,

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 16, թերթեր 76-224:

նախաքննության մարմինը պաշտոնական լիազորությունները չարաշահելու հանցակազմի որակյալ հարկանիշի սովորությունը պայմանավորել է բացառապես նրանով, որ Սևադա Հայրապետյանը դատապարտվել է ազատազրկման՝ գրելով, որ դրա արդյունքում խախտվել է Սևադա Հայրապետյանի՝ բարձրագույն արժեք հանդիսացող ազատության իրավունքը («[Մ]աթարվել է արդարադատության շահը, որն էլ անզորությանը առաջացրել է ծանր հետևանք՝ Սևադա Հայրապետյանը դատապարտվել է ազատազրկման, որի արդյունքում խախտվել է վերջինիս ազատության իրավունքը, որպես բարձրագույն արժեք»): Այն դեպքում, երբ հենց նույն մեղադրանքների փաստական կողմերի նկարագրության մեջ նախաքննության մարմինը հենց ինքն է հաստատված համարել և փաստել, որ Սևադա Հայրապետյանը դատապարտվել է ազատազրկման ձևով պարիժ է կրել իր իսկ կատարած արարքի համար (...):»:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ վերը նշվածն արդեն իսկ բավարար հիմք է տալիս համաձայնելու Առաջին արյանի դատարանի (...) առնվազն այն դատողություններին, որ. «(...) [Տ]վյալ պարագայում բացակայում է հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր տարր հանդիսացող արարքի և հետևանքի միջև պարճառահետևանքային կապը՝ պաշտոնական լիազորությունները չարաշահելու որակյալ հանցակազմի մասով: (...) Ս.Հայրապետյանը ազատազրկման է դատապարտվել և որոշակի ժամկետով պարիժ է կրել իր կատարած հանցանքի համար և դրա արդյունքում նրա ազատության իրավունքը ոչ թե խախտվել, այլ սահմանափակվել է, այն է՝ դատարանի դատավճռով կիրառվել է պետական հարկադրանքի միջոց՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ, որը արտահայտվել է օրենքով նախատեսված անձի ազատության իրավունքի սահմանափակմամբ: Այսինքն, տուժող [ճանաչված] Ս.Հայրապետյանի ազատության իրավունքը փյույ պարագայում չի խախտվել, այլ սահմանափակվել է, որը դրսևորվել է դատարանի կողմից [նրա] կատարած արարքի համար պարիժ նշանակելով և այդ պարիժը կրելով (...):»:

(...)

Անվտոնիտով վերը շարադրվածը՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Մեղադրողի՝ (...) վերաքննիչ բողոքը բավարարելու իրավաչափ հիմքեր չկան, ուստի այն ենթակա է մերժման:

(...) [Մ]արիխուանա տեսակի թմրամիջոցի զգալի չափն այլևս սկսվում է 2.5 գրամից, իսկ առանց իրացնելու նպատակի մանր չափերով թմրամիջոց, որպիսին փյույ դեպքում հանդիսանում է 0.61 գրամ մարիխուանան, սպորինի ձեռք բերելուն, պահելուն և փոխադրելուն դրդելը հանցագործություն չի համարվում՝ ՀՀ քրեական օրենսգրքով այդպիսին նախատեսված չլինելու հիմքով (...): Այլ կերպ՝ սույն գործով

ամբաստանյալներ Վարդան Ներսիսյանին և Վահան Մարգարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով մեղաազարկող արարքում բացակայում է հանցակազմը:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ սույն գործով ամբաստանյալների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումն ինքնին ենթակա է դադարեցման հենց միայն մեղաազարկող համապատասխան արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

(...)

Առաջադրված մեղադրանքում Վահան Մարգարյանն իրեն մեղավոր չի ճանաչել և րված ցուցմունքներով հերքել է իր կողմից պաշտոնական լիազորությունների չարաշահման հանգամանքը՝ ընդհանրապես, և իրեն վերազրկող արարքի շարժառիթի իրարևասական լինելը, իր կողմից Սևադա Հայրապետյանին ապօրինի թմրամիջոց ձեռք բերելուն, պահելուն կամ փոխադրելուն որևէ կերպ դրդելու կամ այդ հարցով Վարդան Ներսիսյանի հետ որևէ պայմանավորվածություն ունենալու հանգամանքները մասնավորապես (...):

(...) [Գ]ործի նյութերից երևում է, որ Վահան Մարգարյանի մեղադրանքի առանցքային հանգամանքների վերաբերյալ Առաջին սայրյանի դատարանի հետևությունների հիմքում դրվել են ինչպես ներքին հակասություններով լի, այնպես էլ միմյանց հակասող ցուցմունքներ, այդ թվում՝ ակնհայտորեն գործի ելքով շահագրգռված և Վահան Մարգարյանի հանդեպ առերևույթ բացասական տրամադրված:

- Վարդան Ներսիսյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքները, որոնք ոչ միայն հակասում են մյուսների կողմից տրված ցուցմունքներին ու արժանահավատության տեսանկյունից կասկած չհարուցող գրավոր ապացույցներով հիմնավորվող փաստական վրվյալներին, այլև ակնհայտորեն հակասում են հենց միմյանց (...),

- Սևադա Հայրապետյանի կողմից դատաքննության ընթացքում տրված ցուցմունքները, որոնք Վահան Մարգարյանին վերաբերելի մասով ակնհայտորեն հակասում են հենց իր իսկ կողմից նախաքննության ընթացքում տրված բոլոր ցուցմունքներին (...),

- Սևադա Հայրապետյանի կնոջ ու որդիների՝ ներքին հակասություններով լի և դատաքննությամբ հետազոտված մյուս փաստական վրվյալների, այդ թվում՝ նաև հենց միմյանց ու Սևադա Հայրապետյանի կողմից տրված ցուցմունքների հետ էական հակասությունների մեջ գրնվող ցուցմունքները, որոնք դրանով հանդերձ, իրենցում կոնկրետ Վահան Մարգարյանի կողմից Սևադա Հայրապետյանին ապօրինի թմրամիջոց ձեռք բերելուն, պահելուն կամ փոխադրելուն որևէ կերպ դրդելու կամ այդ հարցով Վարդան Ներսիսյանի

հետ որևէ պայմանավորվածություն ունենալու հանգամանքների վերաբերյալ, բացի ենթադրությունից, էական նշանակություն ունեցող որևէ կոնկրետ փաստ չեն պարունակում (...):

Դրա հետ մեկտեղ, այլ աղբյուրներից ստացված և Առաջին արյանի դադարանի դադարանությանը հետազոտված մյուս տեղեկություններից [վկաներ Ա.Դանիելյանի նախաքննական և դադարանական, Ա.Ավետիսյանի դադարանական, Ժ.Մանուկյանի դադարանական ցուցմունքները] (...) ամբողջությամբ, իսկ [ապացույցների] (...) զգալի մասը (տե՛ս, օրինակ, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնի կողմից թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում հայրնաբերված հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալները, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Մարտունու քննչական բաժնի քննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2014 թվականի օգոստոսի 6-ի որոշումը, ՀՀ ԱԾ «Նուբարաշեն» ՔԿԸ-ի պետի՝ թիվ Ե-40/18-7-2439 և թիվ Ե-40/18-7-2526 գրությունները, ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի՝ 2017 թվականի փետրվարի 23-ի թիվ 3/1614 և ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետի՝ 2015 թվականի հուլիսի 9-ի թիվ 24/1959 գրությունները, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին առնաթեր ՀԿԳ ավագ քննիչի՝ 2015 թվականի հունվարի 29-ի թիվ 18-150կգ-15 գրությունը, 2015 թվականի դեկտեմբերի 4-ի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը) ընդհանուր առմամբ համընկնում և հիմնավորում են ամբաստանյալ Վահան Մարգարյանի՝ իր անմեղության վերաբերյալ պնդումները, իսկ սույն որոշման [մեջ] (...) շարադրված մյուս փաստական տվյալները՝ չեն հակասում և առնվազն չեն հերքում դրանք:

Վերոգրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դադարանը փաստում է, որ սույն գործով դադարանությանը հետազոտված ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով, որը կբացառի հակառակի ողջամիտ հավանականությունը, չեն հերքվել ամբաստանյալ Վահան Մարգարյանի անմեղության վերաբերյալ վերջինիս և նրա պաշտպանի՝ Առաջին արյանի դադարանի դադարանության ընթացքում և սույն որոշման 20-րդ կետում շարադրված վերաքննիչ բողոքում ներկայացված պնդումները: Այլ կերպ՝ առկա է ամբաստանյալ Վահան Մարգարյանի անմեղության վերաբերյալ չփարսարված կասկած, որն այն աստիճան ցածր չէ, որպեսզի հնարավորություն տար հաղթահարելու անմեղության կանխավարկածը, և բացառելով հակառակի ողջամիտ հավանականությունը, անվերապահ հետևություն անել առ այն, որ ամբաստանյալ Վահան Մարգարյանը մեղավորությամբ կարարել է նախաքննության մարմնի կողմից ՀՀ

քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով որակված, իսկ Առաջին սայանի դատարանի իրավական գնահատականի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, իրեն վերագրվող արարքը (...)¹:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը նշել է, որ ամբաստանյալներին մեղաազրվող արարքները վերաորակելու մասով մեղադրողի վերաքննիչ բողոքը մերժելով և ամբաստանյալ Վ.Մարգարյանի նկատմամբ արդարացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, չի կիրառել այն նյութական օրենքը, որը ենթակա էր կիրառման, ինչպես նաև սխալ է գնահատել գործում առկա ապացույցները:

10.1. Ըստ բողոքաբերի՝ ամբաստանյալների արարքները պատճառահետևանքային կապի մեջ են տուժող Ս.Հայրապետյանի դատապարտման և պատիժ կրելու հետ: Տվյալ դեպքում տեղի է ունեցել պետական իշխանություն կողմ անձանց կողմից անձին հանցավոր արարք կատարելու դրդչություն, որն անձը չէր կատարի առանց այդ դրդչության և դրա համար քրեական պատասխանատվության ու պատժի չէր ենթարկվի, և նրա ազատությունը չէր սահմանափակվի: Բողոքաբերը գտել է, որ ամբաստանյալների արարքներում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքը:

10.2. Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ հիմնավոր չեն Վերաքննիչ դատարանի պնդումները՝ Վ.Մարգարյանի մեղադրանքի առանցքային հանգամանքների վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի կողմից իր հետևությունները ներքին հակասություններով լի, միմյանց հակասող և ակնհայտորեն գործի ելքով շահագրգռված անձանց ցուցմունքների վրա կառուցած լինելու և այդպիսով առանց ապացույցների բավարար համակցության Վ.Մարգարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարման համար մեղադրական դատավճիռ կայացնելու վերաբերյալ:

10.3. Բողոքաբերը գտել է նաև, որ Վերաքննիչ դատարանը չի կիրառել կիրառման ենթակա քրեական օրենքը, ինչպես նաև քրեական գործով հետազոտված ապացույցներին տվել է սխալ իրավաբանական գնահատական: Արդյունքում խախտվել է ՀՀ քրեական դատավարության

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 19, թերթեր 1-102:

օրենսգրքով սահմանված՝ օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ կայացնելու պահանջը:

11. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը, Վ.Մարգարյանին և Վ.Ներսիսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, նրանց նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով և Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ վերջիններիս ազատել պատժից:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունները՝ ամբաստանյալ Վ.Ներսիսյանին մեղաազրկված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով վերադրակելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու, ինչպես նաև ամբաստանյալ Վ.Մարգարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում արդարացնելու վերաբերյալ:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապարիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը) (...):*

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ (...):»:

13.1. Քննարկվող հանցակազմի հիմնական անմիջական օբյեկտը հանրային իշխանության համակարգի որևէ օղակի նորմալ գործունեությունն է: Միաժամանակ, քննարկվող հանցակազմն ունի նաև լրացուցիչ օբյեկտ՝ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, քաղաքացիների, կազմակերպությունների, պետության գույքային, տնտեսական և այլ շահերը:

13.2. Պաշտոնական լիազորությունների չարաշահման օբյեկտիվ կողմն իր մեջ ընդգրկում է երեք պարտադիր հատկանիշ՝

ա) պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը հակառակ ծառայության շահերի օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը,

բ) հանրորեն վտանգավոր հետևանքները՝ անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին էական վնաս հասցնելու ձևով,

գ) պատճառական կապն արարքի և հետևանքների միջև:

13.3. Պաշտոնական դիրքի օգտագործումը, նախ, կարող է դրսևորվել պաշտոնատար անձի կողմից իրեն վերապահված լիազորությունները հակառակ ծառայության շահերի իրականացնելով: Պաշտոնատար անձի լիազորությունները սահմանվում են համապատասխան իրավական ակտերով: Հետևաբար, որպես պաշտոնական լիազորությունների օգտագործում՝ պետք է դիտարկել այնպիսի արարքի կատարումը, որը բխում է պաշտոնատար անձի լիազորություններից: Միևնույն ժամանակ, պաշտոնական լիազորությունների չարաշահման հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ այդ լիազորություններն օգտագործվեն հակառակ ծառայության շահերի, այսինքն՝ կատարվող արարքը չպետք է բխի ծառայողական անհրաժեշտությունից: Ընդ որում, որպես ծառայության շահեր պետք է դիտարկել ոչ միայն այն պետական մարմնի, հիմնարկի, կազմակերպության կամ ձեռնարկության շահերը, որտեղ աշխատում է տվյալ պաշտոնատար անձը, այլև առհասարակ հանրային կառավարման համակարգի շահերը:

Պաշտոնական լիազորությունների չարաշահման օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև պաշտոնից բխող հեղինակությունն օգտագործելով, երբ պաշտոնատար անձը, իր հեղինակությունն օգտագործելով, ներգործում է մեկ ուրիշ անձի վրա՝ դրդելով նրան հանցանքի կատարման: Այս պարագայում նրա արարքը պետք է որակել որպես համապատասխանաբար պաշտոնական լիազորությունների չարաշահում և այն հանցագործության դրդչություն, որի կատարմանը նա դրդել է:

13.4. Պաշտոնական լիազորությունների չարաշահման հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են հանրորեն վտանգավոր հետևանքները: Քննարկվող հանցակազմի դեպքում այդպիսի հետևանք է համարվում անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված էական վնասը: Էական վնասը կարող է դրսևորվել ոչ միայն գույքային, այլ նաև ոչ գույքային վնասի ձևով:

Այդպիսի վնաս կարող են համարվել մարդու իրավունքների ու ազատությունների ոտնահարումը, իշխանության մարմինների հեղինակագրկումը, նրանց գործունեության խաթարումը, հասարակական կարգի խախտումը, խոշոր չափերի հափշտակությունների կամ այլ ծանր հանցագործությունների պարտակումը և այլն:

Ոչ գույքային վնասի էական լինելը գնահատելիս պետք է հաշվի առնել քաղաքացիներին, հասարակությանը և պետությանը հասցված բարոյական վնասի ծանրությունը, տուժած քաղաքացիների քանակը, ոտնահարված իրավունքների ու ազատությունների կարևորությունը, դրանց ոտնահարման աստիճանը, հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության նորմալ գործունեության խաթարման աստիճանը և այլն:

13.5. Պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով: Ընդ որում, նշված հանցանքը կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

Պաշտոնեական լիազորությունների չարաշահման սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանցագործության շարժառիթը: ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածում որպես այդպիսին նշված են շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահերը:

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը՝ շահադիտական շարժառիթից ելնելով, որպես կանոն, դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից հանցանքը նյութական օգուտ ստանալու կամ ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու համար կատարելով:

Անձնական այլ շահագրգռվածությունը կարող է դրսևորվել բազմազան ձևերով: Դրա հիմնական դրսևորումներն են ապօրինի վարքագծի վրա հիմնվող կարիերիզմը, հովանավորչությունը, իրականությունը բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու ցանկությունը, փոխադարձ ծառայություն ստանալու, տեղի ունեցած իրավախախտումներն ու հանցագործությունները թաքցնելու ցանկությունը և այլն: Անձնական շահագրգռվածության դրսևորում է նաև ծառայության շահի կեղծ ընկալումը, երբ պաշտոնատար անձն արդարանում է նրանով, որ իր արարքը, իբր, չի հակասում այն կազմակերպության շահերին, որտեղ ինքն աշխատում է, դեռ ավելին, օգտակար է այդ շահերի համար: Բայց, եթե նման դեպքերում, պաշտոնատար անձի արարքը հակասում է առհասարակ հանրային կառավարման համակարգի բնականոն գործունեության շահերին, ապա քննարկվող հանցակազմն առկա է:

Խմբային շահագրգռվածությունը կարող է դրսևորվել անձանց միավորումների շահերը պաշտպանելու ցանկության ձևով:

13.6. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական պատասխանատվություն է նախատեսվում ծանրացնող հանգամանքներում պաշտոնետական լիազորությունների չարաշահման համար: Որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է անզգուշությամբ ծանր հետևանքներ առաջացնելը:

Հարկ է նշել, որ «ծանր հետևանքներ»-ն արժեքավորվող հասկացություն է: Ծանր հետևանքներ կարող են համարվել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները, խոշոր արտադրական կամ այլ բնույթի վթարը, տրանսպորտի աշխատանքի կամ արտադրական գործընթացի երկարատև խափանումը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների ու ձեռնարկությունների աշխատանքի կազմալուծումը, առանձնապես խոշոր չափերի նյութական վնասը, մարդու մահը կամ առողջությանը ծանր վնաս հասցնելը և այլն:

13.7. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պաշտոնետական լիազորությունները չարաշահելու հանցակազմը և դրա որակյալ տեսակը նյութական հանցակազմեր են, այսինքն՝ ավարտված հանցագործության առկայությունն օրենսդիրը կապում է հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացման հետ: Այլ կերպ, դրանց օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են հանդիսանում՝ արարքը, հանրորեն վտանգավոր հետևանքը, արարքի ու հետևանքի միջև պատճառահետևանքային կապը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արարքի և հանրորեն վտանգավոր հետևանքի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը հաստատելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում անդրադառնալ հետևյալ հարցերին՝

ա) հանցավորի արարքը ժամանակային առումով նախորդե՞լ է հետևանքի (հանցավոր արդյունքի) առաջացմանը, թե՛ ոչ:

բ) հանցավորի արարքն արդյո՞ք հետևանքի առաջացման անհրաժեշտ պայման է (այսինքն, այնպիսի պայման, առանց որի հետևանքը վրա չէր հասնի), թե՛ ոչ:

գ) հանցավորի արարքը տվյալ իրադրության մեջ տվյալ հետևանքն առաջացնելու իրական հնարավորություն պարունակե՞լ է, թե հետևանքն առաջացել է նրա արարքի հետ պատահականորեն կապված այլ անձի արարքի կամ այլ հանգամանքների ազդեցության արդյունքում:

Քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշի՝ արարքի և հանրորեն վտանգավոր հետևանքի միջև պատճառական կապի առկայության մասին հնարավոր է հետևության հանգել միայն վերոնշյալ երեք հարցերին դրական պատասխան տալու դեպքում: Հակառակ պարագայում, պետք է արձանագրել, որ բացակայում է

համապատասխան պատճառական կապը, հետևաբար նաև՝ հանցակազմի օբյեկտիվ կողմը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Վ.Մարգարյանին և Վ.Ներսիսյանին մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով և 308-րդ հոդվածի 2-րդ մասով¹:

- Առաջին ատյանի դատարանը, Վ.Մարգարյանին և Վ.Ներսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքները վերաորակելով ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, արձանագրել է, որ բացակայում է հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր տարրը՝ արարքի և հետևանքի միջև պատճառահետևանքային կապը՝ պաշտոնական լիազորությունները չարաշահելու որակյալ հանցակազմի մասով: Առաջին ատյանի դատարանը նշել է, որ թեև դատաքննությամբ հետազոտված որոշ ապացույցների համաձայն՝ ամբաստանյալներ Վ.Մարգարյանը և Վ.Ներսիսյանը տուժող Ս.Հայրապետյանին հայտնել են, որ չի դատապարտվի և դատարանի դահլիճից կգնա տուն, սակայն, նրանց արարքները պատճառահետևանքային կապի մեջ չեն գտնվում տուժող Ս.Հայրապետյանի դատապարտման և պատիժ կրելու հետ: Ըստ Առաջին ատյանի դատարանի՝ Ս.Հայրապետյանն ազատագրվման է դատապարտվել և որոշակի ժամկետով պատիժ է կրել իր կատարած հանցանքի համար և դրա արդյունքում նրա ազատության իրավունքը ոչ թե խախտվել, այլ սահմանափակվել է, այն է՝ դատարանի դատավճռով կիրառվել է պետական հարկադրանքի միջոց՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ, որն արտահայտվել է օրենքով նախատեսված անձի ազատության իրավունքի սահմանափակմամբ և այդ սահմանափակումը պատճառահետևանքային կապի մեջ չի գտնվում ամբաստանյալների արարքների հետ²:

- Վերաքննիչ դատարանը համաձայնվել է Առաջին ատյանի դատարանի այն դատողությունների հետ, որ ամբաստանյալների արարքները պատճառահետևանքային կապի մեջ չեն գտնվում տուժող Ս.Հայրապետյանի դատապարտման և պատիժ կրելու հետ:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը Վ.Մարգարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով արդարացրել է՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով՝ փաստելով, որ առկա է ամբաստանյալ Վ.Մարգարյանի անմեղության վերաբերյալ չփարատված կասկած, որն այն աստիճան ցածր չէ, որպեսզի հնարավորություն տար

¹ Տե՛ս սույն որոշման 5-6-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

հաղթահարելու անմեղության կանխավարկածը, և բացառելով հակառակի ողջամիտ հավանականությունը՝ անվերապահ հետևություն անել առ այն, որ ամբաստանյալ Վ.Մարգարյանը մեղավորությամբ կատարել է նախաքննության մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով որակված, իսկ Առաջին ատյանի դատարանի իրավական գնահատականի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանող արարքը¹:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 7-7.8-րդ կետերում վկայակոչված ապացույցների և 13-13.7-րդ կետերում մեջբերված իրավադրույթների ու արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռարենկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, համաձայնվելով Առաջին ատյանի դատարանի կողմից Վ.Ներսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով վերադրակելու հետ, ինչպես նաև Վ.Մարգարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում արդարացնելով, պատշաճ գնահատման չի ենթարկել գործում առկա ապացույցները, ինչպես նաև պատշաճ իրավական վերլուծության չի ենթարկել ամբաստանյալների արարքների և տուժող Ս.Հայրապետյանի դատապարտման ու պատիժ կրելու միջև պատճառահետևանքային կապի առկայության հարցը:

16. Այսպես, անդրադառնալով ամբաստանյալների արարքների և տուժող Ս.Հայրապետյանի դատապարտման ու պատիժ կրելու միջև պատճառահետևանքային կապի առկայության հարցին, Վերաքննիչ դատարանը համաձայնվել է Առաջին ատյանի դատարանի այն դատողության հետ, որ տուժող Ս.Հայրապետյանի ազատության իրավունքը տվյալ պարագայում չի խախտվել, այլ սահմանափակվել է, որը դրսևորվել է դատարանի կողմից նրա կատարած արարքի համար պատիժ նշանակելով և այդ պատիժը կրելով:

Վճռարենկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, վերոնշյալ դատողության հետ համաձայնվելով, հաշվի չի առել այն, որ ամբաստանյալների կողմից պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը դրսևորվել է նրանում, որ Ս.Հայրապետյանին նյութապես ապահովելու վերաբերյալ խոստումներով համոզելու եղանակով նրանք դրդել են վերջինիս առանց իրացնելու նպատակի թմրամիջոց ապօրինի ձեռք բերելուն, պահելուն և փոխադրելուն ու միաժամանակ երաշխավորել են, որ նա չի զրկվի ազատությունից: Այսինքն, ամբաստանյալների գործողությունների արդյունքում է Ս.Հայրապետյանի

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

մոտ ծագել հանցանք կատարելու դիտավորությունը: Այլ կերպ, առանց ամբաստանյալների դրոշխության և տված երաշխիքի, Ս.Հայրապետյանը չէր կատարի այն արարքը, որի համար ենթարկվել է քրեական պատասխանատվության և կրել է ազատազրկման ձևով պատիժ՝ փաստացի շուրջ 4 (չորս) ամիս գտնվելով անազատության մեջ՝ քրեակատարողական հիմնարկում: Այս առումով Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել քրեական գործում առկա այն փաստական տվյալները, համաձայն որոնց՝ Ս.Հայրապետյանի կողմից Վ.Մարգարյանի և Վ.Ներսիսյանի առաջարկին համաձայնվելը և առանց իրացնելու նպատակի ապօրինի թմրամիջոց ձեռք բերելը, պահելը, փոխադրելը պայմանավորված է եղել նաև բարձր պաշտոններ զբաղեցնող Վ.Մարգարյանին և Վ.Ներսիսյանին վստահելու և հավատալու հանգամանքով¹: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Մարգարյանը հանդիսացել է ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնի պետը, իսկ Վ.Ներսիսյանը՝ նույն բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալը, վերջիններս օժտված են եղել իրենց ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ կարգադրիչ լիազորություններով և կոչված լինելով կանխել, խափանել, հայտնաբերել և բացահայտել հանցագործությունները, ըստ նրանց առաջադրված մեղադրանքների, կատարել են արարքներ, որոնք ուղղակիորեն հակասում են ոստիկանության առջև դրված խնդիրներին²:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ՝ ամբաստանյալների արարքների և տուժող Ս.Հայրապետյանի դատապարտման ու պատիժ կրելու միջև պատճառահետևանքային կապի առկայության հարցը որոշելու նպատակով ստորադաս դատարանները պետք է քննարկեին այն, թե արդյո՞ք ամբաստանյալներ Վ.Մարգարյանի և Վ.Ներսիսյանի արարքները վերոնշյալ հետևանքների (տուժող Ս.Հայրապետյանի դատապարտման ու պատիժ կրելու) առաջացման անհրաժեշտ պայման են եղել (այսինքն, այնպիսի պայման, առանց որի հետևանքը վրա չէր հասնի), և արդյո՞ք ամբաստանյալների արարքները տվյալ իրադրության մեջ նշված հետևանքներն առաջացնելու իրական հնարավորություն պարունակել են, թե՞ հետևանքներն առաջացել են նրանց արարքների հետ պատահականորեն կապված այլ անձի արարքի կամ այլ հանգամանքների ազդեցության արդյունքում:

17. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝

¹ Տե՛ս նույն որոշման 7.2-7.3-րդ կետերը:

² Տե՛ս «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը:

ամբաստանյալ Վ.Մարգարյանին մեղավոր ճանաչելու մասով բեկանելով և վերջինիս արդարացնելով, ըստ էության, բավարարվել է ապացույցների թվարկմամբ և դրանցում առկա հակասությունների մասին ընդհանուր բնույթի դատողություններ անելով՝ առանց մատնանշելու, թե որոնք են այդ հակասությունները և արդյոք դրանք ունեն էական նշանակություն առաջադրված մեղադրանքը գնահատելու հարցում¹: Վերոնշյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ապացույցների միջև հակասության առկայության դեպքում դատարանները, դրանցից յուրաքանչյուրը ենթարկելով բազմակողմանի հետազոտման ու գնահատման, պետք է դրանց արժանահավատության հարցում գան համապատասխան հետևության՝ մասնավորապես նշելով, թե որ ապացույց են առավել արժանահավատ գնահատում²:

17.1. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել՝

- Վ.Մարգարյանի՝ որպես կասկածյալ տված ցուցմունքը³.

- Ս.Հայրապետյանի դատվածությունը մարված լինելու կամ չլինելու հանգամանքը պարզելու վերաբերյալ Վ.Ներսիսյանի և Վ.Մարգարյանի ցուցմունքները: Հատկանշական է, որ հետագայում, երբ Վ.Մարգարյանը չի ընդունել իրեն առաջադրված մեղադրանքը, այնուամենայնիվ նշել է, որ հնարավոր է, որ Ս.Հայրապետյանի դատվածության հետ կապված խոսակցություն ունեցած լինի,

- գործում առկա ապացույցներն այն մասին, որ 2014 թվականի հոկտեմբերի 29-ին՝ Ս.Հայրապետյանի գործով դատական նիստի նախորդ օրը, Վ.Մարգարյանը Ս.Հայրապետյանին վստահեցրել է, որ դատարանում խնդիրներ չեն առաջանա⁴,

- ամբաստանյալներ Վ.Մարգարյանի և Վ.Ներսիսյանի կողմից ու նրանց անունից տուժողի ընտանիքին նյութական օգնություն ցուցաբերելու (4 պարկ այրուր, երկու բջջային հեռախոս, 263.000 ՀՀ դրամ, 5000 ԱՄՆ դոլլար) մասին գործում առկա տվյալները: Հատկանշական է, որ տուժող Ս.Հայրապետյանի ընտանիքին ցուցաբերված օգնությունն ակնհայտորեն գերազանցում է Վ.Մարգարյանի և Վ.Ներսիսյանի կողմից այլ անձանց ցուցաբերված նյութական օգնության ծավալները⁵,

- այն փաստական տվյալները, համաձայն որոնց՝ Վ.Մարգարյանի ընկեր Ա.Ավետիսյանը նրա անունից 5.000 ԱՄՆ դոլլար է տվել Ն.Էլոյանին՝

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Վարդան Ասրուրյանի գործով 2020 թվականի մայիսի 26-ի թիվ ԼԳ2/0056/01/16 որոշման 19-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 7.1-7.2-րդ կետերը:

⁵ Տե՛ս սույն որոշման 7.6-րդ կետը:

ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչություն ներկայացրած բողոքը հետ վերցնելու համար,

- 2014 թվականի օգոստոսի 7-ին (այդ օրը, ըստ Վ.Ներսիսյանի ցուցմունքի, Վ.Մարգարյանի աշխատասենյակում հանդիպել են Ս.Հայրապետյանին) և հոկտեմբերի 30-ին (Ս.Հայրապետյանի գործով դատական քննության օրը՝ առավոտյան) Ս.Հայրապետյանի կողմից Վ.Մարգարյանին զանգահարելու վերաբերյալ գործում առկա տվյալները: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Ս.Հայրապետյանի՝ վերը նշված օրերին կատարված զանգերին Վ.Մարգարյանի չպատասխանելու հանգամանքն ստորադաս դատարանի կողմից պետք է գնահատվեր գործում առկա այն տվյալների համատեքստում, համաձայն որոնց՝ Վ.Մարգարյանն ասել է, որ Ս.Հայրապետյանն այլևս իրեն չզանգահարի և կապ պահպանի Վ.Ներսիսյանի հետ:

- «Կանեփ-կակաչ 2014» համալիր օպերատիվ կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ՀՀ ոստիկանության Մարտունու բաժնի կողմից ցուցանիշներ ապահովելու վերաբերյալ գործում առկա տվյալները: Այս առումով, հատկանշական է, որ ի տարբերություն 2013 թվականի անցկացված միջոցառման շրջանակում արձանագրված՝ թմրամիջոց պահելու և օգտագործելու կասկածանքով բերման ենթարկելու մեկ դեպքի՝ 2014 թվականին այդ միջոցառման շրջանակում բացի Ս.Հայրապետյանից, այլ անձանց բերման ենթարկելու դեպքեր Մարտունու բաժնում չեն արձանագրվել¹:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ ամբաստանյալ Վ.Մարգարյանին մեղավոր ճանաչելու մասով բեկանելով և վերջինիս արդարացնելով, կայացրել է չպատճառաբանված դատական ակտ: Մինչդեռ, դատական ակտի պատճառաբանությունները պետք է կառուցվեն տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստիև դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին²:

¹ Տե՛ս սույն որոշման 7.8-րդ կետը:

² Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Ֆրոնտիկ Գալստյանի գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, Գևորգ Խնուսյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12, Արսեն Մակարյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, Արամայիս Հակոբյանի գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14, Մարտուն Հակոբյանի գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱԲԴ/0005/11/16, Արարաբ Մարգարյանի գործով 2019 թվականի հունիսի 12-ի թիվ

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունները՝ ամբաստանյալ Վ.Ներսիսյանին մեղսագրված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով վերատրակելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու, ինչպես նաև ամբաստանյալ Վ.Մարգարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում արդարացնելու վերաբերյալ, հիմնավորված և պատճառաբանված չեն:

19. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ, 127-րդ, 358-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածների խախտումներ: Այսինքն, թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածներով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում և քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք հիմք են Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է մեղադրողի և ամբաստանյալ Վ.Մարգարյանի պաշտպանի վերաքննիչ բողոքները քննության առնի՝ հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումները:

20. Անդրադառնալով ամբաստանյալների նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վ.Մարգարյանի և Վ.Ներսիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց պետք է ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը մասնակիորեն՝ ամբաստանյալ Վահան Արտաշեսի Մարգարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և

ԵԱԴԴ/0005/01/17 որոշումները, *Գեղամ Ղազարյանի* գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԴ/0121/01/11 որոշման 19-րդ կետը:

ամբաստանյալ Վարդան Ժորայի Ներսիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալներ Վահան Արտաշեսի Մարգարյանի և Վարդան Ժորայի Ներսիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0186/11/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր երևան եկած հանգամանքի հիմքով դիմող Գագիկ Տիգրանի Վարդանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի փետրվարի 25-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202916 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերով քննիչ Գ.Միքայելյանի (այսուհետ՝ նաև Քննիչ)՝ 2016 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ Ա.Սարգսյանի և Ս.Իսրայելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ արարքներում հանցակազմի բացակայության հիմքով, և քրեական գործի վարույթը կարճվել է:

Նշված որոշման դեմ դիմող Գագիկ Տիգրանի Վարդանյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Ա.Հարությունյանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ մերժվել է:

2. Նշված որոշման դեմ Գ.Վարդանյանի բողոքը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի հունիսի 9-ի որոշմամբ մերժվել է:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2017 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ Գ.Վարդանյանի բողոքը մերժվել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 9-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերոնշյալ որոշման դեմ դիմող Գ.Վարդանյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ մերժվել է:

Գ.Վարդանյանը նոր երևան եկած հանգամանքի հիմքով բողոք է բերել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ հարուցվել է նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ, և Գ.Վարդանյանի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Քննիչի՝ 2016 թվականի օգոստոսի 25-ի որոշման համաձայն՝ «(...) [Թ]եև ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Կուրայքի մարզ[ի] (...) Եղվարդի բաժանմունքի հարկադիր կարարող Սերգեյ Իսրայելյանն անցել [է] պաշտոնեական լիազորությունները, այնուամենայնիվ [նրա] արարքի հետևանքով Գագիկ Վարդանյանին որևէ էական վնաս չի պարճատվել:

Մասնավորապես՝

(...)

Գագիկ Զաքարյանի դիմումի հիման վրա հանել է վերջինիս պարկանող՝ 5 անուն անշարժ գույքերից 1-ի վրա դրված արգելանքը: Նշված 1 անուն անշարժ գույքը՝ Կուրայքի մարզի Արգել գյուղի 4-րդ փողոցի 6/5 հասցեում գրանցվող՝ կառուցապարման իրավունքով գրանցված խանութը, թեև վաճառվել է, այնուամենայնիվ արգելանքի փակ մնացած գույքերից միայն երեքի արժեքն արդեն իսկ մի քանի անգամ գերազանցում է Գագիկ Վարդանյանի՝ 1.250.000 ՀՀ դրամ պահանջի չափը՝ կազմելով 21.851.600 ՀՀ դրամ: Նման պայմաններում որևէ կերպ փաստել, որ Սերգեյ Իսրայելյանի կողմից Գ.Զաքարյանի գույքն արգելանքից հանելու

հետևանքով Գագիկ Վարդանյանին պարճառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի պարտադիր հարկանիշ համարվող էական վնաս և իրականացնել քրեական հետապնդում հնարավոր չէ՝ Սերգեյ Իսրայելյանի արարքում հանցակազմի բացակայության հիմքով»¹:

6. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2017 թվականի հունիսի 9-ի որոշմամբ արձանագրել է. «(...) [Կարճված] քրեական գործի նյութերի բովանդակային ուսումնասիրմամբ պարզ է դառնում, որ (...) Ս.Իսրայելյանի գործողությունների արդյունքում Գ.Վարդանյանին որևէ վնաս չի պարճառվել, ինչը նշանակում է, որ վարույթն իրականացնող մարմինը եկել է փաստարկված հիմնավորման, որ (...) Ս.Իսրայելյանի արարք[ում] բացակայում [են] ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով սահմանված հանցակազմի հարկանիշերը»²:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 24-ի որոշման համաձայն՝ «(...) Առաջին արյանի դատարանը դիմող Գագիկ Վարդանյանի բողոքի քննարկման արդյունքում իրավացիորեն հանգել է ճիշդ հետևության այն մասին, որ (...) Ս.Իսրայելյանի գործողությունների արդյունքում Գ.Վարդանյանին որևէ վնաս չի պարճառվել, ինչը նշանակում է, որ վարույթն իրականացնող մարմինը եկել է փաստարկված հիմնավորման, որ (...) Ս.Իսրայելյանի արարք[ում] բացակայում [են] ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով սահմանված հանցակազմի հարկանիշերը»³:

8. Գ.Վարդանյանի կողմից որպես նոր երևան եկած հանգամանք վկայակոչված՝ Գ.Զաքարյանի սնանկության գործով կառավարիչ Ժ.Արաբյանի՝ 2019 թվականի մարտի 4-ի գրության համաձայն՝ Գ.Զաքարյանի սնանկության գործով գույքագրվել է վեց գույքային միավոր: Գույքագրված գույքի ցանկի 5-րդ և 6-րդ կետերում նշված գույքային միավորների իրացումից ստացված միջոցներն ուղղվելու են ապահովված պարտատերերի հանդեպ Գ.Զաքարյանի պարտավորությունների մարմանը⁴:

8.1 Որպես նոր երևան եկած հանգամանք վկայակոչված՝ Գ.Զաքարյանի սնանկության գործով կառավարիչ Ժ.Արաբյանի՝ 2019 թվականի մարտի 15-ի գրության համաձայն՝ գույքագրված գույքի ցանկի 1-ին կետում նշված գույքային միավորի օտարումից ստացված գումարը ուղղվելու է գույքի օտարման հետ կապված վարչական ծախսերը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հանդեպ պարտավորությունները մարելուն: 2-րդ և 3-րդ կետերում նշված գույքային միավորները գտնվում են

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 72-78:

² Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 29-42:

³ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 98-110:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 113-114:

աճուրդային փուլում, և դրանց մեկնարկային արժեքների հանրագումարը կազմում է 78.232 ՀՀ դրամ, իսկ 4-րդ կետում նշված գույքային միավորի՝ Գ.Զաքարյանին պատկանող մասի շուկայական արժեքը փորձագետի կողմից գնահատվել է 468.000 ՀՀ դրամ: Նշված գույքային միավորների արժեքների հանրագումարը 546.232 ՀՀ դրամ է, և այդ վիճակով դրանց օտարման պարագայում, Գ.Վարդանյանի պահանջի բավարարմանը հատկացվելու է գումարի 11.4 տոկոսը, այսինքն՝ 62.270 ՀՀ դրամ:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը նշել է, որ Գ.Զաքարյանի սնանկության գործով ի հայտ են եկել թե՛ քրեական հետապնդումն իրականացնող մարմնի, թե՛ դատարանների կողմից համապատասխան որոշումներ կայացնելիս անհայտ մնացած այնպիսի փաստեր, որոնք հիմք են Վճարելի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը՝ նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայելու համար:

Ի հիմնավորումը վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը, վկայակոչելով Գ.Զաքարյանի սնանկության գործով կառավարիչ Փ.Արաբյանի՝ 2019 թվականի մարտի 4-ի և 15-ի գրությունները, արձանագրել է, որ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարող Ս.Իսրայելյանի արարքով պատճառված վնասը գերազանցում է 500.000 ՀՀ դրամը: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ համաձայն սնանկության կառավարչի գրությունների՝ Գ.Զաքարյանի սնանկության գործով գույքագրված վեց գույքային միավորից միայն երեք գույքային միավորի իրացումից ստացված գումարի՝ 546.232 ՀՀ դրամի 11.4 տոկոսը, այն է՝ 62.270 ՀՀ դրամը կարող է ուղղվել իր պահանջի բավարարմանը, մինչդեռ իր հանդեպ Գ.Զաքարյանի պարտավորությունը կազմում է 1.275.000 ՀՀ դրամ:

10. Վերոշարադրյալի հիման վրա, Գ.Վարդանյանը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների որոշումները և կայացնել նոր դատական ակտ՝ վերականգնելով իր խախտված իրավունքները:

Վճարելի դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք դիմող Գ.Վարդանյանի կողմից

¹ Տե՛ս նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 115-116:

որպես նոր երևան եկած հանգամանք վկայակոչված տվյալները հիմք են Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը վերանայելու համար:

12. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարծվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կերի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը փոխյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

12.1 Անդրադատնալով «նոր երևան եկած հանգամանքներ» ձևակերպմանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ հանգամանքները, որոնք վերաբերում են գործին, գոյություն են ունեցել գործի քննության ընթացքում, մնացել են անհայտ դատարանին (թաքցվել են), հայրնի են դարձել միայն գործի քննությունից հետո, համարվում են նոր երևան եկած՝:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր երևան եկած (...) հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտնող դատական ակտը:

2. Նոր երևան եկած (...) հանգամանքներով առաջին արյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bulgakova v. Russia* գործով 2007 թվականի հունվարի 18-ի վճիռը, գանգաք թիվ 69524/01, կետ 39:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426³-րդ հոդվածի համաձայն՝ «1.Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են, եթե՝

(...)

4) ի հայտ են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչև այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կարարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է:

(...):»:

14. ՀՀ սահմանադրական դատարանի՝ թիվ ՍԴՌ-935 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասի «միայն» արտահայտությունը՝ այնքանով, որքանով բացառում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով այլ վերջնական իրավական ակտերի օրենքով սահմանված կարգով վերանայումը՝ դրանով իսկ վտանգելով անձի՝ մասնավորապես, մինչդատական վարույթում պետական իրավասու մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր¹:

14.1 Վճռաբեկ դատարանը *Ժիրայր Սեֆիրյանի* գործով որոշմամբ փաստել է, որ «(...) [Այնպիսի բացառիկ դեպքերում, երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա, անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակը գերակայում է իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքի և կրկին անգամ դարվելու անթույլատրելիության (*non bis in idem*) հիմնարար պահանջի (Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին կետ) նկատմամբ:

ՀՀ օրենսդիրը, ելնելով Եվրոպական կոնվենցիայի վերոհիշյալ դրույթներից, դրանցում նշված չափանիշներին և պայմաններին համապատասխան, նախատեսել է օրինական ուժի մեջ մերսած դատական ակտերը վերանայելու դատավարական ընթացակարգ²:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ ՍԴՌ-935 որոշումը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, *Ժիրայր Սեֆիրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշումը:

15. Նոր երևան եկած հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման հիմքերը դատարանին կամ քրեական հետապնդման մարմնին, որպես կանոն, իրենց կամքից անկախ պատճառներով, **անհայր մնացած փաստական հանգամանքներ են, որոնք պետք է անմիջական ազդեցություն ունենան գործի ելքի վրա:** Նոր երևան եկած հանգամանքները՝ որպես օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտերի վերանայման հիմքեր, հիմնականում բնութագրվում են հետևյալ միասնական հատկանիշներով.

1. դրանք պետք է անհայտ լինեն դատարանին,

2. դրանք պետք է էական նշանակություն ունենան գործի համար,

3. նոր երևան եկած հանգամանքները պետք է գոյություն ունեցած լինեն օբյեկտիվ իրականությունում՝ մինչ համապատասխան վերջնական որոշման կայացումը, սակայն բացահայտված լինեն դրա ուժի մեջ մտնելուց հետո:

15.1 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426³-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված նոր երևան եկած հանգամանքներն ընդհանուր առմամբ բաժանվում են երկու խմբի՝

ա) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստական հանգամանքներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426³-րդ հոդվածի 1-ից 3-րդ կետերով՝ սպառիչ կերպով նախատեսված հիմքեր), որոնք պարզվել են դատարանի կողմից կատարված քննության արդյունքում, իրենց բնույթով օբյեկտիվ են և վերջնական որոշման վերանայման համար չեն պահանջում լրացուցիչ քննության կատարում,

բ) այլ փաստական հանգամանքներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426³-րդ հոդվածի 4-րդ կետով՝ ոչ սպառիչ կերպով նախատեսված հիմքեր), որոնք կախված որպես նոր երևան եկած հանգամանք վկայակոչվող տվյալների բնույթից՝ կարող են լինել օբյեկտիվ և վերջնական որոշման վերանայման համար չպահանջել լրացուցիչ քննության կատարում, կամ դրանցով վիճարկվող հանգամանքների համապատասխանությունն իրականությանը պարզելու և վերջնական որոշումը վերանայելու համար պահանջել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության կատարում:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Քննիչի՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին 2016 թվականի օգոստոսի 25-ի որոշման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ թեև ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարող Ս.Իսրայելյանը, անցնելով իր պաշտոնեական լիազորությունները,

արգելանքից հանել և վաճառել է Գ.Զաքարյանի՝ արգելադրված գույքային միավորներից մեկը, սակայն արգելադրված մնացած գույքային միավորների արժեքների հանրագումարը մի քանի անգամ գերազանցում է Գ.Վարդանյանի՝ 1.250.000 ՀՀ դրամ պահանջի չափը, որպիսի պայմաններում հարկադիր կատարող Ս.Իսրայելյանի գործողությունների հետևանքով Գ.Վարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի իմաստով էական գույքային վնաս չի պատճառվել¹,

- դիմող Գ.Վարդանյանի բողոքի հիման վրա, Առաջին աստիճանի դատարանը, դատական ստուգման ենթարկելով Քննիչի վերոնշյալ որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, գտել է, որ հարկադիր կատարող Ս.Իսրայելյանի գործողությունների արդյունքում Գ.Վարդանյանին էական վնաս պատճառված չլինելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի հետևություններն իրավաչափ են²,

- Վերաքննիչ դատարանն իր հերթին, մերժելով դիմողի վերաքննիչ բողոքը, գտել է, որ Առաջին աստիճանի դատարանը բողոքի քննության արդյունքում հանգել է ճիշտ հետևության³,

- Գ.Զաքարյանի սնանկության գործի շրջանակում պարզվել է, որ Գ.Վարդանյանի պահանջի բավարարմանը ուղղվող գույքային միավորների արժեքի հանրագումարը 546.232 ՀՀ դրամ է, և դրանց օտարման պարագայում Գ.Վարդանյանի պահանջի բավարարմանը հատկացվելու է գումարի 11.4 տոկոսը, որը սակայն, պակաս է Գ.Վարդանյանի պահանջն ամբողջությամբ բավարարելու համար անհրաժեշտ գումարի չափից⁴:

17. Սույն որոշման 12-15.1-րդ կետերում շարադրված իրավական դրույթների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Զաքարյանի սնանկության գործի շրջանակում պարզված փաստերը վկայում են Առաջին աստիճանի դատարանի կողմից դիմողի բողոքը քննելիս, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին աստիճանի դատարանի որոշումը վերանայելիս անհայտ մնացած այնպիսի էական հանգամանքի մասին, որ Գ.Զաքարյանին պատկանող գույքային միավորների իրացումից առաջացած միջոցները բավարար չեն Գ.Վարդանյանի հանդեպ ունեցած՝ 1.250.000 ՀՀ դրամի չափով պարտավորությունը մարելու համար: Նման պայմաններում, հաշվի առնելով նաև այն, որ այդ փաստական հանգամանքն իր բնույթով օբյեկտիվ է և չի պահանջում լրացուցիչ քննության կատարում, ներկայացված տվյալներով նշված գումարային չափերի անհամապատասխանությունն անկհայտ է, Վճռաբեկ դատարանը,

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ և 8.1-րդ կետերը:

իր լիազորությունների շրջանակներում, բավարար հիմք է համարում 2017 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը վերանայելու համար:

18. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Զաքարյանի սնանկության գործի շրջանակներում ստացված տվյալները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426³-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի իմաստով, նոր երևան եկած հանգամանք են Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը վերանայելու, վերանայման արդյունքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 9-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 24-ի որոշումը բեկանելու ու փոփոխելու համար: Մինևույն ժամանակ, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Գագիկ Տիգրանի Վարդանյանի բողոքը պետք է բավարարել և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել վերացնելու դիմողի իրավունքի խախտումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-426.2-րդ, 426³-րդ, 426⁷-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վերանայման արդյունքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 9-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 24-ի որոշումը բեկանել ու փոփոխել:

3. Դիմող Գագիկ Տիգրանի Վարդանյանի բողոքը բավարարել՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնելու սույն որոշմամբ արձանագրված՝ դիմողի իրավունքի խախտումը:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԱԴ1/0001/14/18

ԱՐԱԴ1/0001/15/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 18-ի որոշումների դեմ Արթուր Ավագի Մնացականյանի պաշտպան Ա.Ներսիսյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 29173117 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ Արթուր Մնացականյանը նեգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու համար: Նույն օրը նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել՝ ստորագրություն չհեռանալու մասին:

2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 8-ի որոշմամբ հարուցվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու

վարույթ և նույն օրը Ա.Մնացականյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը վերացվել է:

3. 2018 թվականի մայիսի 11-ին Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև Առաջին ատյանի դատարան) նախաքննության մարմնի միջնորդության հիման վրա Ա.Մնացականյանին ճանաչել է անգործունակ:

Առաջին ատյանի դատարանի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ հաստատվել է Ա.Մնացականյանին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու անվտանգության միջոցի կիրառումը:

4. Նշված որոշումների դեմ Ա.Մնացականյանի պաշտպանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հուլիսի 18-ի որոշումներով մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի որոշումները թողնելով օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշումների դեմ Ա.Մնացականյանի պաշտպան Ա.Ներսիսյանը վճռաբեկ բողոքներ է բերել, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 25-ի որոշմամբ ընդունվել են վարույթ և միացվել մեկ վարույթում:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Արթուր Մնացականյանի վերաբերյալ ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ «(...) Ա.Մնացականյանը տառապում է «Օրգանական գառանցական (շիզոֆրենանման) խանգարում» խրոնիկ հոգեկան հիվանդությամբ: Որպես խրոնիկական հոգեկան հիվանդությամբ տառապող անձ, իրեն մեղսագրվող արարքը կատարելու ժամանակ նա չէր կարող հասկանալ իր գործողությունների փաստացի բնույթը և հասարակական վտանգավորությունը և ղեկավարել դրանք: Ուստի Ա.Մնացականյանին հարկ է կատարածի համար ճանաչել **անմեղսունակ**: Հաշվի առնելով կատարած իրավախախտման առաջնակի բնույթը, կոնկրետ անձի նկատմամբ ուղղված գառանցական մտքերի բացակայությունը, նա **նվազ սոցիալական վտանգ է ներկայացնում** շրջապատի համար և կարիք ունի հարկադրական բուժման ընդհանուր հսկողության հոգեբուժական ստացիոնարի պայմաններում: Իր ներկա հոգեկան վիճակով նա կարող է հայտնել որոշ արտաքին նկարագրական տեղեկություններ, դեպքերի որոշ հանգամանքներ, սակայն չի կարող հասկանալ քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող

հանգամանքները և տալ ճշմարտացի ցուցմունքներ, չի կարող օգտվել իր դատավարական իրավունքներից և մասնակցել դատաքննչական գործողություններին»¹:

7. Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքը կատարելու պահին Ա.Մնացականյանի՝ անմեղսունակության վիճակում գտնվելու վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը, նրան անգործունակ ճանաչելու որոշմամբ փաստել է. «(...) Հաշվի առելով, որ Ա.Մնացականյանի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, իր հոգեկան վիճակի պարճառով չի կարող մասնակցել գործի վարույթին, որի մասին կազմված է արձանագրություն, ուստի նման պայմաններում Ա.Մնացականյանին հարկ է ճանաչել անգործունակ»²:

8. Առաջին ատյանի դատարանի՝ Ա.Մնացականյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու վերաբերյալ որոշումը հաստատելու մասին որոշման համաձայն՝ «(...) Դատարանը, լսելով միջնորդությունը ներկայացրած քննիչին, քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձին, նրա օրինական ներկայացուցչին և պաշտպանին, ծանոթանալով ներկայացված նյութերին, այդ թվում՝ ամբուլատոր դարահոգեբուժական փորձաքննության թիվ 117/18 եզրակացությանը և նկարի ունենալով, որ Ա.Մնացականյանը ներկա հոգեկան վիճակով չի կարող օգտվել իր դատավարական իրավունքներից և մասնակցել դատաքննչական գործողություններին, նա **նվազ սոցիալական վրանգ է ներկայացնում շրջապարի համար** և կարիք ունի հարկադրական բուժման ընդհանուր հսկողության հոգեբուժական սրացիոնարի պայմաններում, գտնում է, որ քննիչի որոշումը ենթակա է հաստատման»³:

9. Վերաքննիչ դատարանը, ևս հիմք ընդունելով Ա.Մնացականյանի հոգեկան առողջության վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը, Առաջին ատյանի դատարանի՝ նրան անգործունակ ճանաչելու մասին որոշման իրավաչափությունը ստուգելիս փաստել է. «(...) Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության: Տվյալ դեպքում առկա է Ա.Մնացականյանին անգործունակ ճանաչելու պայմանները և հիմքերը, (...) [նա] չի կարող օգտվել իր դատավարական իրավունքներից և մասնակցել դատաքննչական գործողություններին, ինչպես նաև հարուցված է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու

¹ Տե՛ս թիվ ԱՐԱԴՆ/0001/15/18 դատական գործը, թերթեր 18-22:

² Տե՛ս թիվ ԱՐԱԴՆ/0001/15/18 դատական գործը, թերթեր 32-33:

³ Տե՛ս թիվ ԱՐԱԴՆ/0001/14/18 դատական գործը, թերթեր 34-35:

վարույթ և կազմվել է համապատասխան արձանագրություն, որը ներկայացվել է դատարանին»¹:

10. Ա.Մնացականյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հաստատությունում տեղավորելը կիրառելու՝ Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը նշել է. «(...) Առաջին արյանի դատարանը հանգել է ճիշդ հետևության: Մասնավորապես, տվյալ դեպքում առկա է Ա.Մնացականյանի նկատմամբ համապատասխան անվտանգության միջոց կիրառելու պայմանները և հիմքերը և այն հետապնդում է (...) իրավակարգավորումներով սահմանված իրավաչափ նպատակ: Մասնավորապես, առկա է քրեական օրենքով չթույլատրված ենթադրյալ արարքի հետ Ա.Մնացականյանի օբյեկտիվ կապը հասարակության բավարար տվյալներ, քրեական օրենքով չթույլատրված ենթադրյալ արարքի ենթադրաբար կատարման պահին Ա.Մնացականյանը ենթադրաբար չի կարողացել գիտակցել իր գործողության վրանգավորությունը կամ ղեկավարել դա և Ա.Մնացականյանը որոշակի սոցիալական վրանգ է ներկայացնում շրջապարի համար և համաձայն՝ վերը նշված փորձագիտական եզրակացության՝ կարիք ունի հարկադրական բուժման ընդհանուր հսկողության հոգեբուժական սրացիոնարի պայմաններում: Ի դեպ, հարկ է նշել, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածում նշված «վրանգ» բառը պետք է հասկանալ համապատասխան վրանգը իր բոլոր դրսևորումներով՝ **նվազից մինչև առավելագույնը (...)**»²:

Վճարելի բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

11. Ա.Մնացականյանին անգործունակ ճանաչելու մասին ստորարաս դատարանների դատական ակտերի դեմ ներկայացված վճարելի բողոքում պաշտպան Ա.Ներսիսյանը նշել է, որ թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական և դատավարական նորմերի խախտումներ, որոնք ազդել են ելքի վրա: Ըստ բողոքաբերի՝ Ա.Մնացականյանին անգործունակ ճանաչելու վերաբերյալ կայացվել է սխալ դատական ակտ, որը բեկանելու անհրաժեշտ և բավարար հիմքեր են առկա: Բողոքաբերը նաև նշել է, որ Ա.Մնացականյանին անգործունակ ճանաչելիս կիրառված նորմերի կապակցությամբ առկա է միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման խնդիր:

11.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Ա.Մնացականյանին անգործունակ ճանաչելու վերաբերյալ ստորադաս

¹ Տե՛ս թիվ ԱՐԱԴՆ/0001/15/18 դատական գործը, թերթեր 77-87:

² Տե՛ս թիվ ԱՐԱԴՆ/0001/14/18 դատական գործը, թերթեր 74-84:

դատարանների դատական ակտերը, և գործն ուղարկել Վերաքննիչ դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ:

12. Ա.Մնացականյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հաստատությունում տեղավորելու որոշումը հաստատելու վերաբերյալ ստորարաս դատարանների դատական ակտերի դեմ ներկայացված վճռաբեկ բողոքում պաշտպան Ա.Ներսիսյանը նշել է, որ թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական և դատավարական նորմերի խախտումներ, որոնք ազդել են ելքի վրա: Ըստ բողոքաբերի՝ Ա.Մնացականյանի նկատմամբ անվտանգության միջոց կիրառելու մասին կայացվել է սխալ դատական ակտ, որը բեկանելու անհրաժեշտ և բավարար հիմքեր են առկա: Բողոքաբերը նաև նշել է, որ Ա.Մնացականյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հաստատությունում տեղավորելու որոշումը հաստատելիս կիրառված նորմերի կապակցությամբ առկա է միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման խնդիր:

12.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Ա.Մնացականյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հաստատությունում տեղավորելու որոշումը հաստատելու վերաբերյալ ստորարաս դատարանների դատական ակտերը, և գործն ուղարկել Վերաքննիչ դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճռաբեկ դատարանի համոզմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի, 458-րդ հոդվածի 1-ին մասի և 459-րդ հոդվածի կապակցությամբ առկա է սահմանադրականության խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիմել ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան)՝ նշված նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

I. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին քրեադատավարական ընթացակարգով անգործունակ ճանաչելու ինստիտուտի սահմանադրականությունը.

14. Սույն գործով Սահմանադրական դատարանի առջև բարձրացվող *առաջին* իրավական հարցը հետևյալն է. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու

քրեադատավարական ինստիտուտն արդյո՞ք օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված է տարբերակված մտեցում ենթադրում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության, արդար դատաքննության, մեղսագրվող՝ քրեական օրենքով արգելված արարքից պաշտպանվելու հիմնարար իրավունքներն իրացնելու հնարավորությունների առումով՝ հանգեցնելով քրեական վարույթին լիարժեք մասնակցելու և հիմնարար սահմանադրական իրավունքներից օգտվելու երաշխիքների սահմանափակման:

15. ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ *«Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անսառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝*

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք.

3) իր պաշտպանությունը նախապայտարարելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք.

4) իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև, որ իր օգուտին ցուցմունք տվող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված անձինք.

5) թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու իրավունք, եթե նա չի տիրապետում հայերենին»:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

15.1. Անձի նկատմամբ խտրական վերաբերմունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները¹,

- Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ մինևույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը գորկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից²,

- խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի հունվարի 21-ի թիվ ՍԴՌ-731 որոշման 10-րդ կետը:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի մայիսի 4-ի թիվ ՍԴՌ-881 որոշման 5-րդ կետը:

նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ¹:

15.2. Անդրադառնալով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավական պաշտպանության առարկային՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ այն ներառում է դատարանում լսվելու և դատական քննությանը լիարժեք մասնակցություն ունենալու իրավունքները²:

16. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ «*Խտրականություն հաշմանդամության պարճառով*՝ նշանակում է՝ հաշմանդամության պարճառով ցանկացած փարբերակում, բացառում կամ սահմանափակում, որոնց նպատակն է սահմանափակել կամ նվազագույնի հասցնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը, կիրառումը կամ դրանցից օգտվելը քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ ցանկացած այլ ոլորտում մյուսների հետ հավասար հիմունքներով: Այն ընդգրկում է խտրականության բոլոր ձևերը՝ ներառյալ անհրաժեշտ հնարավորությունների տրամադրման մերժումը»:

Նույն կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ «*Մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել և օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար իրականացմանը՝ առանց հաշմանդամության պարճառով որևէ խտրականության: Այս նպատակով մասնակից պետությունները պարտավորվում են.*

ա. ձեռնարկել համապատասխան օրենսդրական, վարչական և այլ միջոցներ սույն Կոնվենցիայով սահմանված իրավունքների իրականացման համար.

*բ. ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, ներառյալ օրենսդրության ընդունումը, փոփոխելու կամ չեղյալ հայտարարելու համար գործող այն օրենքները, կանոնակարգերը, սովորույթները և գործելակերպերը, որոնցում առկա է խտրականություն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ. (...)*³:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ «Հոգեկան հիվանդների մասին» հանձնարարականի համաձայն՝ դատարանի որոշումները չպետք է ընդունվեն միայն բժշկական փաստաթղթերի հիման

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 7-ի թիվ ՄԴՈ-1224 որոշման 22-րդ կետը:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ի թիվ ՄԴՈ-1197 որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան:

վրա, ինչպես այլ անձի, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի համար ևս պետք է լիարժեք երաշխավորվի լաված լինելու իրավունքը¹:

Միավորված ազգերի կազմակերպության՝ «Հոգեկան հիվանդների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման» բանաձևի համաձայն՝ հոգեկան հիվանդություն ունեցող յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա իրականացնելու բոլոր քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, որոնք ճանաչված են «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում²:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» հանձնարարականի համաձայն՝ անդամ պետությունները պետք է երաշխավորեն այնպիսի կառուցակարգերի գոյությունը, որոնք կպաշտպանեն հոգեկան խանգարումներ ունեցող խոցելի անձանց, մասնավորապես այն անձանց, ովքեր համաձայնություն տալու կարողություն չունեն կամ չեն կարող դիմակայել մարդու իրավունքների խախտմանը³:

17. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ «Մույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

¹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի հորինդարանական վեհաժողովի՝ «Հոգեկան հիվանդների մասին» 1977 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 818 (1977) հանձնարարականի 17-րդ կետը:

² Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության՝ 1991 թվականի դեկտեմբերի 17-ի «Հոգեկան հիվանդների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման» թիվ 46/119 բանաձևի 1-ին սկզբունքի 5-րդ մասը:

³ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2004 թվականի սեպտեմբերի 22-ի «Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» թիվ REC(2004)10 հանձնարարականի 7-րդ հոդվածի 1-ին մասը:

Եվրոպական կոնվենցիային կից թիվ 12 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «1.Օրենքով սահմանված ցանկացած իրավունքից օգրվելը պետք է ապահովվի առանց սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելու, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի վրա հիմնված խտրականության»:

2. Ոչ մեկի նկատմամբ պետական մարմնի կողմից խտրականություն չպետք է դրսևորվի սույն հոդվածի 1-ին կետում նշված որևէ հիմքով»:

17.1. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ բժշկական բնույթի իրավական ներգործության միջոցների կիրառման գործընթացում նրանց մասնակցելու իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- հոգեկան հիվանդություն ունեցող անձը դատավարությունում ունի երկբնույթ դեր, մասնավորապես՝ նա և՛ շահագրգիռ անձ է, և՛ դատաքննության օբյեկտ: Հետևաբար նրա մասնակցությունն անհրաժեշտ է ոչ միայն գործն անձամբ ներկայացնելու, այլ նաև դատավորին հնարավորություն տալու համար իր անձնական կարծիքը ձևավորել գործի և այդ անձի հոգեկան վիճակի վերաբերյալ¹: Դատավորի համար կարևոր է առնվազն հոգեկան հիվանդություն ունեցող անձի հետ կարճ հանդիպում ունենալը և նախընտրելի է նրան հարցեր ուղղելը: Եվրոպական դատարանը գտնում է, որ դատավորի կողմից գործի լուծումը միայն փաստաթղթավորված ապացույցների հիման վրա, առանց տեսնելու կամ լսելու անձին, հանդիսանում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մրցակցության սկզբունքի խախտում²,

- Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում, եվրոպական դատարանը ելնում է այն հանգամանքից, որ հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց գործերով ներպետական դատարանները նույնպես օժտված են հայեցողության հարաբերական ազատությամբ: Օրինակ՝ նրանք կարող են ընդունել դատավարական համապատասխան միջոցներ՝ արդարադատության պատշաճ կազմակերպման, անձի առողջության պահպանման համար և այլն: Մակայն այդպիսի միջոցները չպետք է խաթարեն անձի արդար դատաքննության իրավունքի բուն էությունը՝ երաշխավորված Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով: Անձի մասնակցությունը բացառող կոնկրետ միջոցի կիրառման անհրաժեշտությունը քննարկելիս Եվրոպական

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kovalev v. Russia* գործով 2007 թվականի մայիսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 78145/01, կետեր 35-37:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Shtukaturov v. Russia* գործով 2008 թվականի մարտի 24-ի վճիռը, գանգատ թիվ 4409/05, կետեր 72-73:

դատարանը հիմք է ընդունում բոլոր համապատասխան հանգամանքները (ինչպիսիք են՝ ներպետական դատարանների կողմից քննարկվող հարցերի բնույթն ու բարդությունը, անձի համար դրանց կարևորությունը, նրա անմիջական մասնակցության պարագայում այլ անձանց կամ իր համար որևէ վտանգ ներկայացնելը և այլն)¹,

- արդարադատության պատշաճ կազմակերպման շահերից ելնելով, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ միջոցներ ձեռնարկելով (հոգեբույժի հետ հանդիպում, գործի քննությանը ներկայություն, օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցության ապահովում), պետք է ապահովվի հոգեկան հիվանդություն ունեցող անձի կողմից դատավարությունը հասկանալու հնարավորությունը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի իմաստով մեղսագրվող արարքի (մեղադրանքի) բնույթի և պատճառների մասին մանրամասն տեղեկացումը, որը կապահովի դատարանի կողմից կայացվող որոշման արդարացիությունը²:

17.2. Միևնույն ժամանակ, խտրականության արգելքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ոչ բոլոր դեպքերում է տարբերակված մոտեցումը կամ համապատասխանաբար տարբեր իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված մոտեցում չդրսևորելը համարվում խտրականություն, այլ այն դեպքերում, որոնք չունեն օբյեկտիվ հիմք և ողջամիտ արդարացում³:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի և 12-րդ արձանագրության 1-ին հոդվածի շրջանակը ներառում է նաև խտրականությունը՝ հիմնված բժշկական պայմանների վրա⁴: Դատարանը նշել է, որ ձևավորված է եվրոպական և համաշխարհային կոնսենսուս՝ պաշտպանելու հաշմանդամություն ունեցող անձանց խտրականությունից⁵: Այն ներառում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովելու

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Shtukaturov v. Russia* գործով 2008 թվականի մարտի 24-ի վճիռը, գանգատ թիվ 4409/05, կետ 68:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Vaudelle v. France* գործով 2001 թվականի հունվարի 30-ի վճիռը, գանգատ թիվ 35683/97, կետ 65:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Fabris v. France [GC]* գործով 2013 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 16574/08, կետ 56, *Molla Sali v. Greece [GC]* գործով 2018 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 20452/14, կետ 135:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kiyutin v. Russia* գործով 2011 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 2700/10, կետ 57:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Glor v. Switzerland* գործով 2009 թվականի ապրիլի 30-ի վճիռը, գանգատ թիվ 13444/04, կետ 54:

ողջամիտ պայմաններ՝ թույլ տալով հաշմանդամություն ունեցող անձանց ամբողջությամբ իրացնել իրենց իրավունքները, որի չափահավումը հավասարագոր է խտրականության¹: Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ հաշմանդամության վերաբերյալ գործերով հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ իրավական տարբերակված մոտեցում դրսևորելու հայեցողության լուսանցքն էականորեն նեղ է²:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Եթե անձը, որի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, իր հոգեկան վիճակի պարճատով չի կարող մասնակցել գործով վարույթին, քննիչը կամ դատախազն այդ մասին կազմում են արձանագրություն, որն ուղարկվում է դատավորին՝ համապարասիսան անձին անգործունակ ճանաչելու հարցը լուծելու համար»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածի համաձայն՝ *«Անձը, որի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, օգտվում է մեղադրյալի բոլոր իրավունքներից: (...)»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Եթե հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձն առողջական վիճակի պարճատով չի կարող մասնակցել գործով վարույթին, քննիչը, դատախազը դրա մասին պետք է կազմեն արձանագրություն»*:

18.1 Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավական պաշտպանությանն ուղղված միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված պահանջները, նրանց իրավական երաշխիքների կապակցությամբ կայուն նախադեպային դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ՝

- բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի ընթացքում քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձինք, չհանդիսանալով մեղադրյալ, օգտվում են մեղադրյալի իրավունքներից³,

- անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի իրավավիճակն ընդգրկում է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով երաշխավորված իրավունքները

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Cam v. Turkey* գործով 2016 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 51500/08, կետեր 65-57, *Enver Sahin v. Turkey* գործով 2018 թվականի հունվարի 30-ի վճիռը, գանգատ թիվ 23065/12, կետեր 67-69:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Glor v. Switzerland* գործով 2009 թվականի ապրիլի 30-ի վճիռը, գանգատ թիվ 13444/04, կետ 84:

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սերգեյ Սրեփանյանի* գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԳԴ5/0014/01/13 որոշումը, կետ 23:

(ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդված, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդված, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդված), այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածը նույնպես ամրագրում է, որ անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձն օգտվում է մեղադրյալի բոլոր իրավունքներից¹: Նշված պահանջն օրենսդրի կողմից նախատեսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածում՝ հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց իրավունքների նկատմամբ տարբերակված մոտեցումը բացառելու նպատակով²:

19. Գործող քրեական դատավարության օրենսգրքը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անգործունակ ճանաչելու ընթացակարգի վերաբերյալ նախատեսում է կարգավորում 451-րդ հոդվածի 4-րդ մասում: Նշված կարգավորման ուսումնասիրությունից հետևում է, որ օրենսդիրը, հիմք ընդունելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի կողմից իր վերաբերյալ ընթացող վարույթին հոգեկան վիճակի պատճառով մասնակցելու անհնարինությունը, քննիչի կամ դատախազի կողմից այդ մասին կազմված արձանագրության հիման վրա նախատեսում է նրան անգործունակ ճանաչելու ընթացակարգ: Այսինքն՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի՝ իր վերաբերյալ վարույթին մասնակցելու հնարավորության մեկանգամյա գնահատման արդյունքում քննիչի կամ դատախազի արձանագրությունը հիմք է հանդիսանում այդ անձին անգործունակ ճանաչելով, նրա մասնակցությունը, ի սկզբանե՝ մինչդատական վարույթից մինչ վարույթի ավարտը սահմանափակելու և Սահմանադրությամբ ու քրեադատավարական օրենսդրությամբ երաշխավորված իրավունքներից նրան զրկելու համար: Արդյունքում, մինչդատական վարույթից սկսած՝ վարույթն իրականացնող մարմինն իր իսկ կողմից կազմված արձանագրության հիման վրա հնարավորություն է ստանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի մասնակցություն պահանջող քննչական կամ այլ դատավարական գործողություններն իրականացնել առանց նրա մասնակցության ապահովման:

Վերոնշյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, պատճառաբանությունն առ այն, որ հոգեկան առողջության խնդիրներ ունենալու պայմաններում անձն ի վիճակի չէ մասնակցելու իր վերաբերյալ ընթացող դատավարությանը, պարունակում է հոգեկան առողջության

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արա Շուշանյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0030/01/15 որոշումը, կետ 14:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Գասպարյանի* գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԳԴՆ/0058/01/16 որոշումը, կետ 15:

խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ առանց օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի ենթադրվող խտրական վերաբերմունք: Մինչդեռ, սույն որոշման 15-18.1-րդ կետերում վկայակոչված միջազգային չափանիշներից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց դեպքում կանխավարկածը պետք է լինի ոչ թե հոգեկան հիվանդությամբ տառապելու հիմքով վերջիններիս մասնակցության և իրավունքներից օգտվելու հնարավորությունների սահմանափակումը, այլ ընդհակառակը՝ լրացուցիչ միջոցառումների ձեռնարկմամբ՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մասնակցության խրախուսումը՝ իրենց իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն առնչվող վարույթին: Ուստի, միջազգային չափանիշների հաշվառմամբ՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք առողջ անձանց հետ հավասար հիմունքներով, լրացուցիչ երաշխիքների տրամադրմամբ, պետք է հնարավորություն ունենան լիարժեք մասնակցություն ունենալու իրենց վերաբերյալ ընթացող վարույթին:

20. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ բարձրացված հարցի կապակցությամբ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ինչպես սույն գործով, քրեական դատավարությունում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի շրջանակներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու հիմքում դրվում է փորձագիտական եզրակացությունն այն մասին, որ «(...) *իրեն մեղսագրվող արարքը կատարելու ժամանակ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձը չէր կարող հասկանալ իր գործողությունների փաստացի բնույթը և հասարակական վրանգավորությունը և ղեկավարել դրանք: Ուստի նրան հարկ է ճանաչել անմեղսունակ (...)*»: Այսինքն՝ փորձագիտական եզրակացությունում փորձագետը, քննիչի կողմից իրեն առաջադրված՝ անձի՝ անմեղսունակության վիճակում ենթադրյալ հանցանքի կատարման վերաբերյալ հարցերին պատասխանելիս, եզրահանգումներ է կատարում անձի՝ անմեղսունակության վիճակում քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին: Արդյունքում, վիճարկվող օրենսդրական կարգավորման և ձևավորված պրակտիկայի պայմաններում ստացվում է, որ անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրահանգումները դրվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին քրեադատավարական ընթացակարգով անգործունակ ճանաչելու և առանց

նրա մասնակցության քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարումը կազմակերպելու հիմքում¹:

Մինչդեռ, պետք է արձանագրել, որ անգործունակությունը քրեական դատավարությունում դատարանի կողմից չի կարող ճանաչվել՝ հիմքում դնելով անձի անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրակացության հետևությունները: Մասնավորապես, անմեղսունակությունն անձին անգործունակ ճանաչելու պայման չէ: Ավելին, հարկ է ընդգծել, որ անմեղսունակության և անգործունակության վիճակները համարժեք չեն, կրում են ինքնավար բնույթ և որոշվում են տարբեր բանաձևերով, մեկի առկայությունը չի կարող նախապայման դիտարկվել մյուսը հաստատելու համար: Եթե մեղսունակությունը որոշվում է ռետրոսպեկտիվ կարգով (անցյալ ժամանակում կատարված) և միայն անհատի կյանքի որոշակի ժամանակաշրջանի նկատմամբ՝ մեղսագրվող արարքի համատեքստում, ապա գործունակությունը կապված է անձի քննադատական ունակությունների հետ, շատ թե քիչ երկարատև ժամանակի ընթացքում, և ընդգրկում է անհատի սոցիալական գործունեության բոլոր կողմերը, այդ թվում՝ հեռանկարները: Այլ կերպ, եթե անմեղսունակությունը վերաբերում է անձի՝ հոգեկան առողջության անցյալ ժամանակաշրջանին, ապա անգործունակությունը վերաբերում է անձի՝ հոգեկան առողջությանն ապագա ժամանակաշրջանում:

Հետևաբար, անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրակացությամբ անձը քրեական դատավարությունում չի կարող ճանաչվել անգործունակ և զրկվել համապատասխան գործողություններին մասնակցելուց:

21. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրակացության օգտագործմամբ անձին անգործունակ ճանաչելու քրեադատավարական ընթացակարգը, առանց օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի, հանգեցնում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության, արդար դատաքննության և մեղսագրվող՝ քրեական օրենքով արգելված արարքից պաշտպանվելու իրավունքներից օգտվելու հնարավորությունների զրկման: Ընդ որում, նույնիսկ այն բացառիկ դեպքերում, երբ անձի հոգեկան հիվանդությունն օբյեկտիվորեն արգելք է հանդիսանում նրան քննչական կամ այլ դատավարական գործողությանը մասնակից դարձնելու համար, ապա Վճռաբեկ դատարանի համոզմամբ վարույթն իրականացնող մարմինը պետք է սահմանափակվի այդ մասին

¹ Տե՛ս, ի թիվս այլնի, օրինակ՝ թիվ ԵԿԳ/0098/15/17, ԱՐԱԳ/0025/15/17, ԱՐԱԳ/0026/15/17 գործերը:

համապատասխան արձանագրության մեջ կատարվող նշմամբ՝ առանց հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգի նախաձեռնման, որի արդյունքում այդ պահից սկսած վերանում է այդ անձի՝ վարույթին մասնակցելու կարողության վերագնահատումը, նրան որևէ քննչական կամ այլ դատավարական գործողության կատարմանը մասնակից դարձնելու անհրաժեշտությունը և լեգիտիմացվում նրա մասնակցությունը պահանջող գործողությունների կատարումն առանց վերջինիս մասնակցության:

Վերոգրյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առանց անգործունակ ճանաչելու ընթացակարգի նախաձեռնման հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի՝ իր վերաբերյալ ընթացող վարույթին մասնակցության հարցի լուծման գաղափարն ընդունելի է նաև օրենսդրի կողմից: Այդ մասին է վկայում անմեղսունակ անձանց և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթների օրենսդրական կարգավորումների համեմատական ուսումնասիրությունը: Այսպես, եթե անձին անգործունակ ճանաչելու ինստիտուտը նախատեսված է անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթը կանոնակարգող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխի 451-րդ հոդվածի 4-րդ մասում, ապա այդպիսի կարգավորում օրենսդրի կողմից չի նախատեսվել դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթը կանոնակարգող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ գլխի՝ 466-րդ հոդվածի 3-րդ մասում: Այդ դեպքում օրենսդիրը սահմանել է միայն քննիչի կամ դատախազի կողմից համապատասխան արձանագրություն կազմելու կարգավորում՝ առանց հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգի նախաձեռնման: Այսինքն՝ օրենսդիրը, որպես այդպիսին, ընդունելի է համարում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին հոգեկան հիվանդությամբ տառապող անձի մասնակցության հարցի լուծումը նաև առանց նրան անգործունակ ճանաչելու ընթացակարգի: Ուստի, եթե նշված մոտեցումը կիրառելի է դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ, ապա տվյալ դեպքում բացակայում է օբյեկտիվ հիմքն ու իրավաչափ նպատակը՝ նույն մոտեցումը նաև անմեղսունակ անձանց նկատմամբ չկիրառելու համար:

22. Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին և միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված չափանիշներին համապատասխան՝ հոգեկան առողջության

խնդիրներ ունեցող անձինք ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատական պաշտպանության, արդար դատաքննության և մեղսագրվող՝ քրեական օրենքով արգելված արարքից պաշտպանվելու հիմնարար իրավունքներից օգտվելու համար, որպես կանոն պետք է մասնակցություն ունենան իրենց վերաբերյալ ընթացող վարույթին: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, բացառություն կարող են լինել այն դեպքերը, երբ նրանց վարքագիծը, հոգեկան կամ ֆիզիկական վիճակն օբյեկտիվորեն խոչընդոտ են վերջիններիս մասնակցությունը վարույթին ապահովելու համար: Այսինքն՝ առանց հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի մասնակցության իր իրավունքներին և օրինական շահերին առնչվող վարույթի անցկացումը պետք է լինի ծայրահեղ դեպքերում, որպես վերջին միջոց (*last resort*), երբ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի հոգեկան վիճակի գնահատման արդյունքում պարզ կդառնա, որ վերջինս օբյեկտիվորեն ի վիճակի չէ մասնակցելու իրեն առնչվող կոնկրետ գործողությանը: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներից օգտվելու հնարավորությունը երաշխավորելու համար, նրանց մասնակցությամբ կատարման ենթակա յուրաքանչյուր քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ պետք է վերագնահատվի նրանց՝ վարույթին մասնակցելու կարողությունը:

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- նախաքննական մարմնի միջնորդության հիման վրա Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքը կատարելու պահին Ա.Մնացականյանի՝ անմեղսունակության վիճակում գտնվելու վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը, նրան ճանաչել է անգործունակ՝ փաստելով, որ Ա.Մնացականյանի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, իր հոգեկան վիճակի պատճառով նա չի կարող մասնակցել գործի վարույթին, որի մասին կազմված է արձանագրություն¹,

- Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ նշելով, որ առկա են Ա.Մնացականյանին անգործունակ ճանաչելու պայմանները և հիմքերը, նա չի կարող օգտվել իր դատավարական իրավունքներից և մասնակցել դատաքննչական գործողություններին, ինչպես նաև հարուցված է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ և կազմվել է համապատասխան արձանագրություն, որը ներկայացվել է դատարանին²:

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

24. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-22-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը կարծում է, որ քննիչի կամ դատախազի կողմից կազմված արձանագրության և անձի անմեղատունակության մասին վկայող փորձագիտական եզրակացության հիման վրա անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգը, ի սկզբանե՝ մինչդատական վարույթից սկսած, անհամաչափորեն սահմանափակում է անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու քրեադատավարական ինստիտուտը, առանց օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի, դատական պաշտպանության, արդար դատաքննության և մեղսագրվող՝ քրեական օրենքով արգելված արարքից պաշտպանվելու հիմնարար իրավունքներից օգտվելու հնարավորությունների առումով, տարբերակված մոտեցում է ենթադրում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ՝ հանգեցնելով քրեական վարույթին լիարժեք մասնակցելու և հիմնարար սահմանադրական իրավունքներից օգտվելու՝ նրա երաշխիքների անհամաչափ սահմանափակման: Ուստի, հարկ է նշել, որ ինչպես արտասահմանյան մի շարք երկրների քրեական դատավարության օրենսգրքերում¹, այնպես էլ ներկայումս շրջանառության մեջ դրված քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում² նախատեսված չէ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգ:

II. Անվտանգության միջոցների կիրառման իրավական երաշխիքների բացակայության սահմանադրականությունը.

25. Սույն գործով Սահմանադրական դատարանի առջև բարձրացվող *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 1-ին մասով և 459-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համատեքստում հասարակության համար վտանգ ներկայացնող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու և ազատությունից զրկելու այլընտրանքային միջոցի բացակայությունը, ինչպես նաև ազատությունից զրկելու իրավաչափության պարբերական վերանայման ընթացակարգի և առավելագույն ժամկետի բացակայությունն արդյո՞ք չեն վտանգում անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ

¹ Տե՛ս Լատվիայի, Էստոնիայի, Ռուսաստանի, Վրաստանի, Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքերը:

² Տե՛ս ներկայումս շրջանառության մեջ գտնվող քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը՝ https://www.e-gov.am/ajax/gfn_mul.php?file_id=815756 հղմամբ:

երաշխավորված անձնական ազատության իրավունքի պաշտպանության հիմնարար երաշխիքները:

26. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...)

6) հանրության համար վրանգավոր վարակիչ հիվանդությունների փարածուճը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վրանգը կանխելու նպատակով:

(...)

5. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է»:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

26.1. Ազատության իրավունքի համատեքստում անդրադառնալով դատավարական հարկադրանքի միջոցներից՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելուն՝ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ՝

- կալանավորումը, լինելով խափանման միջոցներից մեկը, ունի այլընտրանք և խափանման բոլոր միջոցների շարքից ընտրվում է այն ժամանակ, երբ խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելուն առավելապես կարող է նպաստել խափանման միջոցի հենց այս տեսակը՝ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բոլոր հանգամանքները¹,

- կալանավորումը՝ որպես քրեադատավարական հարկադրանքի վերջին՝ բացառիկ միջոց (ultima ratio), **միշտ և պարտադիր կերպով պետք է այլընտրանք ունենա**: Քրեադատավարական օրենքում ամրագրվելիք այդ այլընտրանքը պետք է քրեական վարույթն իրականացնող մարմնին փաստացի հնարավորություն ընձեռի և իրավաբանական պարտականություն դնի նրա վրա՝ ի սկզբանե ընտրություն կատարել տարբեր խափանման միջոցների միջև՝ իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրելով առավել պիտանի միջոցը: Մինևույն ժամանակ այն պետք է նաև պարտադիր կարգով լինի անձի հիմնական իրավունքները և ազատություններն առավել նվազ սահմանափակողը, այսինքն՝ անհրաժեշտ միջոցը: Ուստի, Սահմանադրության տեսանկյունից անթույլատրելի է խափանման միջոցներից մեկի կիրառման հարցը քննարկել արդեն իսկ դրանցից մյուսին, ընդամին՝ ամենախիստ միջոցին նախապատվություն տալուց հետո²:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած, սակայն հասարակության համար վրանգ չներկայացնող անձի անմեղսունակության փաստը հաստատվելու պահից նա կարող է հանձնվել ազգականների, ինսամակալների, հոգաբարձուների հսկողությանը՝ այդ մասին տեղյակ պահելով առողջապահության մարմիններին:*

2. *Տվյալ միջոցն ընտրելու մասին քննիչը, դատախազը, դատարանը կայացնում են պարճառարանված որոշում»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած և հասարակության համար վրանգ ներկայացնող անձի անմեղսունակության փաստը հաստատվելու պահից նա կարող է տեղավորվել հոգեբուժական հաստատությունում:*

2. *Հոգեբուժական հաստատությունում տեղավորելը թույլատրվում է քննիչի պարճառարանված որոշմամբ, որը հաստատում է դատարանը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Եթե անձը հասարակության համար մեծ վրանգ չի ներկայացնում և կարիք չունի իր նկարմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման, դատարանը կայացնում է գործով*

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ ՍԴՌ-827 որոշումը, կետ 6:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՌ-1480 որոշումը, կետ 7.4:

վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: (...):»:

28. Նախորդ կետում մեջբերված իրավադրույթներից հետևում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթում կարող է որպես դատավարական հարկադրանքի միջոց նշանակվել ազատությունից զրկելու հետ չկապված ընտանեկան հսկողություն (ազգականների, խնամակալների և հոգաբարձուների հսկողությանը հանձնելու դեպքում) և ազատությունից զրկելու հետ կապված բժշկական հսկողություն (հոգեբուժական հաստատությունում տեղավորվելու դեպքում) անվտանգության միջոցները: Ընդ որում, օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ՝

- ընտանեկան հսկողության կիրառման հիմքն անձի՝ հասարակության համար վտանգ չներկայացնելն է,

- բժշկական հսկողության կիրառման հիմքն անձի՝ հասարակության համար վտանգ ներկայացնելն է:

Այսինքն՝ վերոնշյալ դիրքորոշումներից հետևում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ նշված անվտանգության միջոցներից կոնկրետ տեսակի ընտրությունը պայմանավորվում է այն հանգամանքով, թե արդյոք անձը հասարակության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ: Ընդ որում, օրենսդրական կարգավորումից հետևում է, որ հասարակության համար վտանգ ներկայացնելու դեպքում, **անկախ դրա աստիճանից**, անձի նկատմամբ բժշկական հսկողություն անվտանգության միջոցի կիրառումն անվերապահորեն հանգեցնում է ազատության իրավունքի սահմանափակման՝ այլընտրանքային միջոցի բացակայության պատճառով: Մինչդեռ, օրենսդրի կողմից որդեգրած այդ մոտեցումը, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, խնդրահարույց է, և ինչպես կալանավորումը, այնպես էլ բժշկական հսկողություն անվտանգության միջոցը, լինելով դատավարական հարկադրանքի միջոց, պետք է նախատեսի անձին ազատությունից զրկելու այլընտրանք: Մասնավորապես, հասարակության համար բարձր և նվազ վտանգ ներկայացնող անձանց նկատմամբ միևնույն ազատությունից զրկելու դատավարական հարկադրանքի միջոցի կիրառումն արդարացված չէ առնվազն համաչափության սկզբունքից ելնելով: Ավելին, այս առումով հաշվի առնելով նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը՝ ստացվում է, որ մի կողմից օրենսդիրը հասարակության համար մեծ վտանգ չներկայացնող անձի նկատմամբ, առանց ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային միջոցի կիրառման հնարավորության, անվերապահորեն սահմանում է հոգեբուժական հաստատությունում տեղավորելու անվտանգության միջոցի կիրառումը, մյուս կողմից՝ նախատեսում, որ հասարակության համար մեծ

վտանգ չներկայացնելու դեպքում, դատարանն անձի նկատմամբ գործի վարույթը կարճում է և քրեական հետապնդումը դադարեցնում, եթե նաև բացակայում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման կարիքը: Արդյունքում, պարզ է դառնում, որ գործող իրավական կարգավորումների պայմաններում, հասարակության համար նվազ վտանգ ներկայացնող անձը գործի մինչդատական վարույթում, ազատությունից զրկելու այլընտրանքային միջոցների բացակայության պատճառով, պարտադիր կարգով ենթակա է տեղավորման բժշկական հաստատությունում, այն դեպքում, երբ դատական քննության ընթացքում օրենսդիրը դատարանին համանման պայմաններում լիազորում է գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել, եթե անձը նաև չունի բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման կարիք: Մինչդեռ, տվյալ դեպքում, ընտանեկան հսկողությունը, օրինակ, կարող է դիտարկվել որպես անձին ազատությունից զրկելու հետ կապված անվտանգության միջոցի այլընտրանք: Ավելին, հաշվի առնելով, որ ընտանեկան հսկողություն անվտանգության միջոցը նաև դատավարական հարկադրանքի միջոց է, ուստի այն ևս պետք է ուղղված լինի անձի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի կանխմանը: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթում այն կարող է ուղղված լինել անձի՝ հասարակության համար նվազ վտանգ ներկայացնելու հանգամանքից բխող ոչ իրավաչափ վարքագծի կանխմանը:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը կարծում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի՝ ազատության իրավունքի արդյունավետ երաշխավորման տեսանկյունից՝ անվտանգության միջոցների կիրառումը ոչ թե պետք է պայմանավորվի հասարակության համար վտանգ ներկայացնելու կամ չներկայացնելու հանգամանքով, այլ առհասարակ՝ **այդպիսի վտանգի աստիճանի գնահատմամբ**, որպիսի մոտեցման պայմաններում ընտանեկան հսկողությունը կարող է դիտարկվել որպես ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային միջոց՝ բժշկական հսկողություն անվտանգության միջոցի կիրառելիության հարցը լուծելիս:

29. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման մինչդատական վարույթում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին ազատությունից զրկելու հետ կապված՝ բժշկական հսկողություն անվտանգության միջոցի պարբերական վերանայման և անազատության մեջ պահելու առավելագույն ժամկետների բացակայության խնդրին: Գործող օրենսդրական կարգավորումներով բացակայում է բժշկական հսկողություն անվտանգության միջոցի կիրառման իրավաչափության դատական պարբերական վերանայման

կառուցակարգը և այն կիրառվում է առանց առավելագույն ժամկետների սահմանման:

Մինչդեռ, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ դատարանի կողմից բժշկական հսկողության պարբերական և ավտոմատ վերանայման համակարգը, ինչպես կալանքի դեպքում, հնարավորություն է ստեղծում երաշխավորելու Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված պահանջը¹, որի համաձայն՝ ազատությունից զրկված անձն իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելն անօրինական է: Բացի այդ, հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անձի «վտանգավորության» հիմքով անժամկետ, առանց ազատագրվման օրինականության պարբերական դատական ստուգման անձին անազատության մեջ պահելն անհամատեղելի է համարում Եվրոպական կոնվենցիայի պահանջների հետ²: Նշված խնդրին անդրադարձել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը և նշել, որ օրենսդրական կարգավորման նման թերությունները հանգեցնում են այս անվտանգության միջոցի հիման վրա անձանց երկար ժամանակ հոգեբուժական կազմակերպությունում պահելուն՝ առանց դատարանի կողմից բուժման նկատմամբ համապատասխան վերահսկողության³: Այդ պատճառով էլ արտասահմանյան մի շարք երկրներում օրենսդրորեն նախատեսվում են կարգավորումներ, որոնք սահմանում են անձին բժշկական հաստատությունում տեղավորելու անվտանգության միջոցի կիրառման առավելագույն ժամկետ և պարբերական վերանայման համակարգ⁴: Այդպիսի ընթացակարգը գործում է նաև կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու կանոններն այս անվտանգության միջոցի նշանակման նկատմամբ տարածելու դեպքում: Նշված տրամաբանությամբ է կառուցվել նաև

¹ Տե՛ս *Abdulkhakov v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 1-ի վճիռը, գանգատ թիվ 14743/11, կետ 209:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *M. v. Germany* գործով 2009 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ թիվ 19359/04, *Storck v. Germany* գործով 2005 թվականի հունիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ թիվ 61603/00, *O.H. v. Germany* գործով 2011 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ թիվ 4646/08, *Kronfeldner v. Germany* գործով 2012 թվականի հունվարի 19-ի վճիռը, գանգատ թիվ թիվ 21906/09:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ հոգեկան կազմակերպություններում հոգեկան առողջական խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ 2018 թվականի արտահերթ զեկույցը, էջ 28:

⁴ Տե՛ս Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքի 599-րդ հոդվածը, Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 395.1-րդ հոդվածը, Մոլդովայի քրեական դատավարության օրենսգրքի 490-րդ հոդվածը, Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 508-րդ հոդվածը:

ներկայումս շրջանառության մեջ գտնվող քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը¹, որի կարգավորումներից ենթադրվում է, որ անձին բժշկական հաստատությունում տեղավորելու անվտանգության միջոցը կիրառվում է երկու ամիս ժամկետով և ենթակա է յուրաքանչյուր անգամ վերանայման:

Առանց ժամկետային սահմանափակման անձին բժշկական հաստատությունում տեղավորելու խնդրին անդրադարձել է նաև Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը՝ 2018 թվականի մայիսի 24-ի թիվ 20-Ու որոշմամբ և փաստել, որ անձի՝ բժշկական հաստատությունում գտնվելու ժամանակահատվածը չի կարող լինել անորոշ, դատարանները պետք է նշեն այն ժամանակահատվածը, որի ընթացքում անձը պետք է ստացիոնար ձևով գտնվի բժշկական հաստատությունում, ըստ անհրաժեշտության երկարացնելով այն՝ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու քրեադատավարական կանոնների կիրառմամբ²:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը կարծում է, որ ազատությունից զրկելու հետ կապված բժշկական հսկողություն անվտանգության միջոցի կիրառումը պետք է ենթակա լինի պարբերական վերանայման և սահմանափակված լինի որոշակի ժամկետով:

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին աստիճանի դատարանը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացությունն այն մասին, որ Ա.Մնացականյանը նվազ սոցիալական վտանգ է ներկայացնում շրջապատի համար, հաստատել է քննիչի՝ Ա.Մնացականյանին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու որոշումը՝ առանց առավելագույն ժամկետի նշման³,

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի որոշումը, փաստել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածում նշված «վտանգ» բառը պետք է հասկանալ համապատասխան վտանգն իր բոլոր դրսևորումներով՝ նվազից մինչև առավելագույնը⁴:

31. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 26-29-րդ կետերում վկայակոչված իրավադրոյթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի

¹ Տե՛ս ներկայումս շրջանառության մեջ գտնվող քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը՝ https://www.e-gov.am/ajax/gfn_mul.php?file_id=815756 հղմամբ, հոդված 140:

² Տե՛ս ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 435-րդ հոդվածի վերաբերյալ ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 24-ի թիվ 20-Ու որոշման եզրափակիչ մասի 1-ին կետը:

³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

ներքո՝ Վճռաբեկ դատարանը կարծում է, որ վտանգ ներկայացնող անձի նկատմամբ միայն ազատությունից զրկելու անվտանգության միջոցի կիրառման հնարավորությունը վտանգում է անձի ազատության սահմանադրական իրավունքը: Ելնելով հասարակության համար ներկայացվող վտանգավորության աստիճանից՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված անվտանգության միջոցի կիրառումը պետք է ունենա այլընտրանք: Ուստի, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, հասարակության համար վտանգ ներկայացնող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու և ազատությունից զրկելու այլընտրանքային միջոցի բացակայությունը, ինչպես նաև պարբերական վերանայման ընթացակարգի և ազատությունից զրկման առավելագույն ժամկետի բացակայությունը վտանգում են անձնական ազատության սահմանադրական իրավունքի պաշտպանության հիմնարար երաշխիքները:

32. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր կասկածներ ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի, 458-րդ հոդվածի 1-ին մասի և 459-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 67-րդ, և 78-րդ հոդվածներին համապատասխանության առնչությամբ, և գտնում է, որ սույն գործի լուծումը հնարավոր է այդ իրավանորմերի կիրառման միջոցով: Ուստի հաշվի առնելով, որ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է ՀՀ սահմանադրական դատարանը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիմել Սահմանադրական դատարան՝ կիրառման ենթակա նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 23-րդ և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու՝

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 67-րդ և 78-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով, որ քրեական դատավարությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու ինստիտուտը, առանց օբյեկտիվ հիմքի և իրավաչափ նպատակի, դատական պաշտպանության, արդար դատաքննության և մեղազրկող՝ քրեական օրենքով արգելված արարքից պաշտպանվելու հիմնարար իրավունքներից օգտվելու հնարավորությունների առումով տարբերակված մոտեցում է ենթադրում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ՝ հանգեցնելով քրեական վարույթին լիարժեք մասնակցելու և հիմնարար սահմանադրական իրավունքներից օգտվելու երաշխիքների անհամաչափ սահմանափակման,

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 1-ին մասի և 459-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ և 78-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ այնքանով, որքանով հասարակության համար վտանգ ներկայացնող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու և ազատությունից զրկելու այլընտրանքային միջոցի բացակայությունը, ինչպես նաև ազատությունից զրկելու իրավաչափության պարբերական վերանայման ընթացակարգի և առավելագույն ժամկետի բացակայությունը վտանգում են անձնական ազատության սահմանադրական իրավունքի պաշտպանության հիմնարար երաշխիքները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

արտրագրություն

Դատավորներ՝

արտրագրություններ

32.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0079/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝
ամբաստանյալ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ԹԱՄԲԱԶՅԱՆԻ
Լ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Լևոն Պավլուշայի Հարությունյանի, Արթուր Էդվարդի Քոչարյանի, Վալերի Սամվելի Մուրադովի և Էդգար Ավետիսի Մելքոնյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Մելքոնյանի և Լևոն Պավլուշայի Հարությունյանի պաշտպան Ա.Թամբազյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի դեկտեմբերի 3-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 58217215 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ Լևոն Պավլուշայի Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (3 դրվագով):

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ Վալերի Սամվելի Մուրադովը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մայիսի 7-ի որոշմամբ Էդգար Ավետիսի Մելքոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մայիսի 26-ի որոշմամբ Արթուր Էդվարդի Քոչարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ Լևոն Հարությունյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (3 դրվագով) և 311-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ Արթուր Քոչարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով և 313-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով:

2016 թվականի սեպտեմբերի 19-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի դատավճռով ամբաստանյալ Լևոն Հարությունյանը ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Լ.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել մեկ դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 5-րդ կետերով և երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով Լ.Հարությունյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով, երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, նրա նկատմամբ պատիժ է նշանակվել յուրաքանչյուր դրվագով՝ ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով,

պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, ամբաստանյալ Լ.Հարությունյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2015 թվականի դեկտեմբերի 15-ից: Լ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Ամբաստանյալ Արթուր Քոչարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Ամբաստանյալ Ա.Քոչարյանը մեղավոր է ճանաչվել երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-313-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ յուրաքանչյուր դրվագով պատիժ է նշանակվել տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով, ամբաստանյալ Ա.Քոչարյանի նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Ամբաստանյալ Ա.Քոչարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Ամբաստանյալ Վալերի Մուրադովը մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 34-312-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Նրա նկատմամբ խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Ամբաստանյալ Էդգար Մելքոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-312-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Է.Մելքոնյանի նկատմամբ խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Ռազմիկ Նազիսյանը:

3. Ամբաստանյալ Լ.Հարությունյանի, վերջինիս պաշտպան Ա.Թամրազյանի և ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիրեռահանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Ա.Արամյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2018 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ

բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի դատավճիռը:

«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ Ա.Քոչարյանն ազատվել է տուգանքի ձևով նշանակված վերջնական պատժից:

«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ Վ.Մուրադովն ազատվել է տուգանքի ձևով նշանակված պատժից:

«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ Է.Մելքոնյանն ազատվել է տուգանքի ձևով նշանակված պատժից:

Ամբաստանյալ Լ.Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է չեռանալու մասին ստորագրությամբ՝ մինչև դատավճիռի օրինական ուժի մեջ մտնելը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 18-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը և ամբաստանյալ Լ.Հարությունյանի պաշտպան Ա.Թամրազյանը, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 22-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Լևոն Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (3 դրվագով) և 311-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքները կատարելու համար. «(...) [Ե]ա, հանդիսանալով ՀՀ ԱԱԾ սահմանապահ գորքերի թիվ 5073 գորամասի հրամանատար (ուսումնական կենտրոնի պետ) և օժտված լինելով ղեկավարած գորամասն անհրաժեշտ կադրերով ապահովելու նպատակով պայմանագրային զինձառայության ընդունելության համար ՀՀ ԱԱԾ ՍԶ կադրերի արորաբաժանման միջոցով ՍԶ ղեկավարությանը թեկնածուներ ներկայացնելու և ղեկավարած գորամասում նրանց նշանակման վերաբերյալ միջնորդելու, ինչպես նաև ղեկավարած

ստորաբաժանման պայմանագրային զինծառայողներին պաշտոնից պաշտոն փոխարինելու միջնորդությամբ ՀՀ ԱԱԾ ՍԶ հրամանատարին դիմելու հրավասությամբ, 2013-2015 թվականների ընթացքում, չորս դեպքերով, ինչպես անձամբ, այնպես էլ միջնորդների միջոցով, կաշառք է պահանջել և ստացել ՀՀ քաղաքացիներ Արմինե Խաչատրյանից, Էդգար Մելքոնյանից, Վալերի Մուրադովից և թիվ 5073 զորամասի պայմանագրային զինծառայող Արթուր Քոչարյանից՝ նրանց օգտին իր լիազորությունների շրջանակում գործողություններ կատարելու համար: Այսպես. նպատակ ունենալով գտնել գրագիր կին-զինծառայողի հարմար թեկնածու և պայմանագրային ծառայության փոխափոխել ղեկավարած թիվ 5073 զորամասում, Լևոն Հարությունյանը դիմել է նույն զորամասի պահպանման և սպահովման վաշտի հրամանատարի պաշտոնակատար Արտյոմ Ավետիսյանին, ով 2013 թվականի փետրվարի վերջին առաջարկել է աշխատանքի փոխափոխման հարցով իրեն դիմած ծանոթուհու՝ Արմինե Խաչատրյանի թեկնածությունը: Արտյոմ Ավետիսյանի հետ կայացած զրույցի ընթացքում, Արմինե Խաչատրյանի թեկնածությունը ներկայացնելու և նրա նշանակումը թիվ 5073 զորամասում սպահովելու համար, հրամանատար Լևոն Հարությունյանը, Արտյոմ Ավետիսյանի միջոցով, Արմինե Խաչատրյանից որպես կաշառք պահանջել է խոշոր չափերով՝ 614.000 ՀՀ դրամին համարժեք 1.500 ԱՄՆ դոլար՝ ներկայացնելով, որ պահանջված գումարը նրա կողմից պետք է տրվի՝ նրան որպես պայմանագրային զինծառայող իրենց զորամասում հրամանագրելուց: Իրագեկվելով, որ Արմինե Խաչատրյանը համաձայնվել է զորամասում ծառայության փոխափոխվելու հարցը լուծել կաշառքով և տրամադրել 1.500 ԱՄՆ դոլար, 2013 թվականի մարտի 5-ին Լևոն Հարությունյանն Արմինե Խաչատրյանին հրավիրել է իր մոտ հարցազրույցի, որի արդյունքում ՀՀ ԱԱԾ ՍԶ կադրերի ստորաբաժանմանը ներկայացրել է նրա թեկնածության վերաբերյալ դրական կարծիք, և ղեկավարած զորամասում Արմինե Խաչատրյանի ընդունելության համար համապատասխան գրագիր-գործավարի ազատ հասարակական քաղաքացիության պայմաններում պարճառարանելով տվյալ թեկնածուի կարիքը, միջնորդել է ընթացք տալ նրա ծառայության ընդունելու վերաբերյալ դիմումին, և թեկնածուի հատուկ ստուգման արդյունքում, որպես պայմանագրային զինծառայող, նշանակել թիվ 5073 զորամասում: 2013 թվականի մայիսի 7-ին Լևոն Հարությունյանը հայտնել է Արտյոմ Ավետիսյանին, որ Արմինե Խաչատրյանը մոտ օրերին հրամանագրվելու է որպես թիվ 5073 զորամասի պայմանագրային զինծառայող և հրահանգել է նրանից սրանալ պայմանավորված կաշառքի գումարն ու փոխանցել իրեն, որից հետո՝ 2013 թվականի մայիսի 7-ից 13-ն ընկած ժամանակահատվածում, Արմինե Խաչատրյանի կողմից Արտյոմ

Ավերիայանի միջոցով փրված խոշոր չափերով 614.000 ՀՀ դրամին համարժեք 1.500 ԱՄՆ դոլար կաշառքի գումարը ստացել է վերջինից, թիվ 5073 գործամասի իր աշխատասենյակում: 2013 թվականի մայիսի 13-ին, Արմինե Խաչատրյանը, որպես պայմանագրային շարքային զինծառայող, ծառայության է անցել ՀՀ ԱԱԾ ՍՋ թիվ 5073 գործամասում, և այնտեղ գրագիր-գործավարի ազատ հասարիքի բացակայության պայմաններում նշանակվել գործամասի շարունարանի ծառայողական շնեթի հրահանգչի հասարիքին:

Ունենալով 2012 թվականի նոյեմբերից իրեն ամրակցված «Շերոլե-Երվա 21230L» մակնիշի 514SS02 պերհամարանիշի ծառայողական ավտոմեքենայի վարորդի կարիք՝ հրամանատար Լևոն Հարությունյանը 2014 թվականի մարտի վերջին այդ մասին հայտնել է ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի հրամանատարի ծառայողական ավտոմեքենայի վարորդ Կարեն Մարգարյանին, ով առաջարկել է ուսումնասիրել թիվ 5073 գործամասի պայմանագրային զինծառայող՝ հրաձիգ Արթուր Քոչարյանի թեկնածությունը: Հրամանատար Լևոն Հարությունյանը, հանդիսանալով ղեկավարած գործամասի պայմանագրային զինծառայողներին պաշտոնից պաշտոն փոխափոխելու միջնորդությամբ ՍՋ հրամանատարին դիմելու իրավասությամբ օժտված պաշտոնատար անձ, Արթուր Քոչարյանին կանչել է հարցազրույցի, սրուզել վերը նշված փրանսպորտային միջոցը վարելու կարողությունը, այնուհետև՝ հրաձիգի պաշտոնից նրան փոխափոխելու և որպես ծառայողական ավտոմեքենայի վարորդ նշանակման ներկայացնելու համար, նրանից անձամբ, որպես կաշառք պահանջել է Երևանի կոնյակի գործարանի արտադրության, 160.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության «Արարատ Եսիրի» 5 հար կոնյակներ, ապա 2014 թվականի մարտի վերջին, գործամասի փարածքում նրանից ստացել է ընդհանուր 105.000 ՀՀ դրամ արժողության 0,5 լիտրանոց 3 հար «Արարատ Եսիրի» կոնյակներ, որոնք վերջինը դրել է Լևոն Հարությունյանի կողմից շահագործվող ծառայողական ավտոմեքենայի մեջ, քանի որ ճշտելով նշված ռեզիդենտից խմիչքի շուկայական արժեքն ու ելնելով ֆինանսական հնարավորություններից, պահանջված 5 հար կոնյակների փոխարեն, կարողացել է փրամադրել այդքանը: 2014 թվականի մարտի 27-ին հրամանատար Լևոն Հարությունյանը գրավոր զեկուցագիր է ներկայացրել ՀՀ ԱԱԾ ՍՋ հրամանատարին՝ միջնորդելով ղեկավարած գործամասի պահպանման և ապահովման վաշտի հրաձիգ Արթուր Քոչարյանին փոխափոխել ավտոփրանսպորտային ջոկ, ավագ վարորդի հասարիքին: ՀՀ ԱԱԾ ՍՋ հրամանատարի 2014 թվականի մարտի 31-ի հրամանի համաձայն՝ Արթուր Քոչարյանն ազատվել է ուսումնական կենտրոնի հրաձիգի պաշտոնից և 2014 թվականի ապրիլի 1-ից նշանակվել որպես ուսումնական կենտրոնի ավագ վարորդ:

2015 թվականի ընթացքում թիվ 5073 զորամասի հրամանատար Լևոն Հարությունյանն իր ծառայողական ավտոմեքենայի վարորդ Արթուր Քոչարյանին տեղեկացնելով, որ ցանկանում է նշված զորամասում աշխատանքի տեղավորել պայմանագրային զինծառայողների, նրա միջնորդությամբ դիմած անձանց՝ Էդգար Մելքոնյանին և Վալերի Մուրադովին, ղեկավարած զորամասում պայմանագրային ծառայության տեղավորելու համար պահանջել և ստացել է խոշոր չափերով կաշառքի գումարներ։ 2015 թվականի մայիսի սկզբին Լևոն Հարությունյանն Արթուր Քոչարյանի կողմից իրեն առաջարկված՝ Արուսյան քաղաքի բնակիչ Էդգար Մելքոնյանի թեկնածությունը ներկայացնելու և թիվ 5073 զորամասում պայմանագրային զինծառայության նրա նշանակումն ապահովելու համար նրանից, Արթուր Քոչարյանի միջոցով, որպես կաշառք պահանջել է խոշոր չափերով 384.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար՝ պայմանով, որ նշված գումարն Էդգար Մելքոնյանի կողմից փրվի հետագայում, ՀՀ ԱԱԾ ՍՋ հրամանատարի կողմից նրան հրամանագրելու ժամանակ։ Կաշառքի պահանջի մասին Արթուր Քոչարյանը տեղեկացրել է Էդգար Մելքոնյանի համար իրեն միջնորդած պայմանագրային զինծառայող Ռազմիկ Նազինյանին, նա էլ, իր հերթին Էդգար Մելքոնյանին և վերջինը համաձայնություն է հայտնել՝ փախ պահանջված 800 ԱՄՆ դոլար կաշառքի գումարը թիվ 5073 զորամասում ծառայության տեղավորվելու համար։ Նշվածի մասին Արթուր Քոչարյանի միջոցով իրազեկված Լևոն Հարությունյանը հաջորդ օրը՝ 2015 թվականի մայիսի 6-ին, դարձյալ Արթուր Քոչարյանի միջոցով, Էդգար Մելքոնյանին կանչել է թիվ 5073 զորամաս հարցազրույցի, որի արդյունքում ՀՀ ԱԱԾ ՍՋ կադրերի ստորաբաժանմանը ներկայացրել է նրա թեկնածության վերաբերյալ դրական կարծիք՝ միջնորդելով ընթացք փախ նրա ծառայության ընդունելու վերաբերյալ դիմումին, և թեկնածուի հարուկ ստուգման արդյունքում, որպես պայմանագրային զինծառայող, նշանակել իր ղեկավարած թիվ 5073 զորամասում։ 2015 թվականի սեպտեմբերի 5-ին Լևոն Հարությունյանը տեղեկացրել է Արթուր Քոչարյանին Էդգար Մելքոնյանի մոտ օրերին սպասվող հրամանագրման մասին, պահանջել է նրանից սրանալ և իրեն փոխանցել պայմանավորված կաշառքի գումարը, որից հետո Արթուր Քոչարյանից ստացել է Էդգար Մելքոնյանի կողմից Ռազմիկ Նազինյանի միջոցով փրված խոշոր չափերով 384.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար կաշառքի գումարը։ 2015 թվականի սեպտեմբերի 7-ին Էդգար Մելքոնյանը, որպես պայմանագրային շարքային զինծառայող, հրամանագրվել է թիվ 5073 զորամասում և անցել ծառայության։

2015 թվականի հունիսի սկզբին Լևոն Հարությունյանն Արթուր Քոչարյանի կողմից իրեն առաջարկված նրա ազգական Վալերի Մուրադովի թեկնածությունը ներկայացնելու և թիվ 5073 զորամասում

պայմանագրային ծառայության նրա նշանակումն ապահովելու համար նրանից, Արթուր Քոչարյանի միջոցով, որպես կաշառք պահանջել է խոշոր չափերով 382.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար նշելով, որ այդ գումարը նույնպես պետք է փրամադրվի հետագայում, ՀՀ ԱԱԾ ՍԶ հրամանատարի կողմից Վալերի Մուրադովին հրամանագրելուց: Իրազեկելով Վալերի Մուրադովին կաշառքի պահանջի մասին և սրանալով նրա համաձայնությունը՝ փալ պահանջված գումարը թիվ 5073 գործամատում ծառայության փեղափոխելու համար, Արթուր Քոչարյանն այդ մասին փեղեկացրել է հրամանատար Լևոն Հարությունյանին: Վերջինը, դարձյալ Արթուր Քոչարյանի միջոցով, Վալերի Մուրադովին 2015 թվականի հունիսի 10-ին կանչել է թիվ 5073 գործամատ՝ հարցազրույցի, որի արդյունքում ՀՀ ԱԱԾ ՍԶ կադրերի ստորաբաժանմանը ներկայացրել է նրա թեկնածության մասին դրական կարծիք՝ միջնորդելով ընթացք փալ նրա ծառայության ընդունվելու վերաբերյալ դիմումին, և թեկնածուի հապուկ ստուգման արդյունքում, որպես պայմանագրային զինծառայող, նշանակել իր ղեկավարած թիվ 5073 գործամատում: 2015 թվականի սեպտեմբերի 23-ին, ՀՀ ԱԱԾ ՍԶ հրամանատարի հրամանով, Վալերի Մուրադովը, որպես պայմանագրային շարքային զինծառայող, նշանակվել է հրամանատար Լևոն Հարությունյանի ղեկավարած թիվ 5073 գործամատում, և նույն օրը Լևոն Հարությունյանը, Արթուր Քոչարյանի հետ կայացած զրույցի ժամանակ, պահանջել է Վալերի Մուրադովից վերցնել պայմանավորված կաշառքի գումարը և փոխանցել իրեն: 2015 թվականի սեպտեմբերի 25-ին, թիվ 5073 գործամատ Վալերի Մուրադովի ծառայության ներկայանալու օրը, Լևոն Հարությունյանն իր ծառայողական աշխատասենյակում, Արթուր Քոչարյանի միջոցով, ստացել է Վալերի Մուրադովի կողմից փրված խոշոր չափերով 382.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար կաշառքի գումարը (...):»¹:

5.1. Արթուր Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով և 313-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագով) մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքների համար. «(...) [Ե]ս, հանդիսանալով ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի թիվ 5073 գործամատի հրաձիգի պաշտոնում նշանակված պայմանագրային զինծառայող, ընկերոջը՝ ՀՀ ԱԱԾ ՍԶ հրամանատարի ծառայողական ավտոմեքենայի վարորդ Կարեն Մարգարյանին, հայրնել է իր մրադրությունը՝ փեղափոխվել որպես ՍԶ պաշտոնյաներից որևէ մեկի ծառայողական ավտոմեքենայի վարորդ, խնդրել է հետաքրքրվել այդպիսի հնարավորությամբ և 2014 թվականի մարտի վերջին նրանից փեղեկացել է, որ վերջինն իր թեկնածությունն առաջարկել է ծառայողական ավտոմեքենայի վարորդի կարիք ունեցող ՀՀ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 75-81:

ԱԱԾ ԱԶ թիվ 5073 զորամասի հրամանատար Լևոն Հարությունյանին, ով հանդիսանալով պաշտոնատար անձ և օժտված լինելով պայմանագրային զինծառայողներին պաշտոնից պաշտոն տեղափոխելու միջնորդությամբ ԱԶ հրամանատարին դիմելու իրավասությամբ, ղեկավարած զորամասի զինծառայող Արթուր Քոչարյանին կանչել է հարցազրույցի, սպա սրուզել է 2012 թվականի նոյեմբերից իրեն ամրակցված «Շնրոլե-Նիվա 21230L» մակնիշի 514SS02 պետհամարանիշի ծառայողական տրանսպորտային միջոցը վարելու կարողությունը, և հրաձիգի պաշտոնից տեղափոխելու ու ծառայողական ավտոմեքենայի վարորդի պաշտոնում նշանակման ներկայացնելու համար, Արթուր Քոչարյանից անձամբ, որպես կաշառք, պահանջել է Երևանի կոնյակի գործարանի արտադրության 160.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության «Արարատ Նաիրի» 5 հար կոնյակներ: Արթուր Քոչարյանը, ճշտելով նշված ռեզիդենտի շուկայական արժեքն ու ելնելով իր ֆինանսական հնարավորություններից, պահանջված 5 հար կոնյակների փոխարեն 2014 թվականի մարտի վերջին Երևանի «Ռոսիա» բացօթյա տոնավաճառից գնել է ընդհանուր՝ 105.000 ՀՀ դրամ արժողության 0,5 լիտրանոց 3 հար «Արարատ Նաիրի» կոնյակներ, որոնք իրենց զորամասի տարածքում տրամադրել է Լևոն Հարությունյանին դնելով դրանք վերջինի կողմից շահագործվող ծառայողական ավտոմեքենայի մեջ: 2014 թվականի մարտի 27-ին հրամանատար Լևոն Հարությունյանը գրավոր զեկուցագիր է ներկայացրել ՀՀ ԱԱԾ ԱԶ հրամանատարին՝ միջնորդելով ղեկավարած զորամասի պահպանման և ապահովման վաշտի հրաձիգ Արթուր Քոչարյանին տեղափոխել ավտոտրանսպորտային ջոկ, ավագ վարորդի հաստիքին: ՀՀ ԱԱԾ ԱԶ հրամանատարի 2014 թվականի մարտի 31-ի հրամանի համաձայն՝ Արթուր Քոչարյանն ազատվել է ուսումնական կենտրոնի հրաձիգի պաշտոնից, և 2014 թվականի ապրիլի 1-ից նշանակվել որպես ուսումնական կենտրոնի ավագ վարորդ: 2015 թվականի ընթացքում Արթուր Քոչարյանը, շարունակելով իր ծառայությունը որպես թիվ 5073 զորամասի հրամանատար՝ պաշտոնատար անձ հանդիսացող Լևոն Հարությունյանի ծառայողական ավտոմեքենայի վարորդ, և տեղեկանալով, որ վերջինը ցանկանում է նշված զորամասում աշխատանքի տեղափոխել պայմանագրային զինծառայողների, երկու դեպքերով, 2015 թվականի մայիս և հունիս ամիսներին, կատարել է կաշառքի միջնորդություն նպատակով կաշառք տվող անձանց՝ Էդգար Մելքոնյանի և Վալերի Մուրադովի, և կաշառք ստացողի՝ հրամանատար Լևոն Հարությունյանի միջև կաշառքի շուրջ համաձայնության գալուն և այդ համաձայնությունն իրականացնելուն: 2015 թվականի մայիսի սկզբին Արթուր Քոչարյանն իր ընկերոջ՝ իրենց զորամասի զինծառայող Ռազմիկ Նազինյանի խնդրանքով օգնել նշանածի եղբայր Էդգար Մելքոնյանին նույն զորամասում

պայմանագրային ծառայության տեղավորելու հարցում, միջնորդել է գործամասի հրամանատար Լևոն Հարությունյանին և վերջինին առաջարկել Էդգար Մելքոնյանի թեկնածությունը: Լևոն Հարությունյանի հետ իրենց աշխատանքի վայրում կայացած այդ գրույցի ընթացքում, վերջինը, հանդիսանալով պայմանագրային զինծառայողների թեկնածուներ ներկայացնելու և ղեկավարած գործատուում նրանց նշանակման վերաբերյալ միջնորդելու իրավասությանը օժտված պաշտոնատար անձ, թիվ 5073 գործատուում Էդգար Մելքոնյանի նշանակումն ապահովելու համար, Արթուր Քոչարյանի միջոցով, որպես կաշառք պահանջել է խոշոր չափերով 384.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար՝ պայմանով, որ նշված գումարը տրամադրվի հետագայում, ՀՀ ԱԱԾ ՍԶ հրամանատարի կողմից Էդգար Մելքոնյանին հրամանագրելու ժամանակ: Լևոն Հարությունյանի կողմից 800 ԱՄՆ դոլար պահանջելու մասին Արթուր Քոչարյանը տեղեկացրել է Ռազմիկ Նազինյանին, նա էլ, իր հերթին՝ Էդգար Մելքոնյանին, որից հետո վերջինի համաձայնության մասին տրամադրել պահանջված 800 ԱՄՆ դոլար կաշառքի գումարը, տեղեկացրել է Արթուր Քոչարյանին՝ հրամանատար Լևոն Հարությունյանին իրազեկելու համար: Կաշառք տալու պարտավորության մասին իրազեկվելով, Լևոն Հարությունյանը հաջորդ օրը՝ 2015 թվականի մայիսի 6-ին, դարձյալ Արթուր Քոչարյանի միջոցով, Էդգար Մելքոնյանին կանչել է թիվ 5073 գործամաս՝ հարցազրույցի, որի արդյունքում Էդգար Մելքոնյանի թեկնածության մասին դրական կարծիք տալով, նրան ներկայացրել է ՀՀ ԱԱԾ ՍԶ կադրերի բաժանմունք՝ միջնորդելով ընթացք տալ նրա ծառայության ընդունելու վերաբերյալ դիմումին, և թեկնածուի հասրուկ ստուգման արդյունքում, որպես պայմանագրային զինծառայող, նշանակել իր ղեկավարած թիվ 5073 գործատուում: 2015 թվականի սեպտեմբերի 5-ին Լևոն Հարությունյանը տեղեկացրել է Արթուր Քոչարյանին՝ Էդգար Մելքոնյանի մոտ օրերին սպասվող հրամանագրման մասին, պահանջելով նրանից սրանալ և իրեն փոխանցել պայմանավորված կաշառքի գումարը: Արթուր Քոչարյանն այդ մասին նշված օրը հաղորդել է Ռազմիկ Նազինյանին և, ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, նույն օրն Արտվյան քաղաքում դրսում, հանդիպել է Էդգար Մելքոնյանի և Ռազմիկ Նազինյանի հետ, որի ընթացքում վերջինը, Էդգար Մելքոնյանից վերցնելով 384.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար կաշառքի գումարը, այն տվել է Արթուր Քոչարյանին: Արթուր Քոչարյանը նշված գումարը հասցրել է Երևան, որից հետո այն ամբողջությամբ հանձնել է թիվ 5073 գործամասի հրամանատար Լևոն Հարությունյանին: 2015 թվականի սեպտեմբերի 7-ին Էդգար Մելքոնյանը հրամանագրվել է որպես պայմանագրային, շարքային զինծառայող Լևոն Հարությունյանի ղեկավարած թիվ 5073 գործատուում և անցել ծառայության: 2015 թվականի հունիսի սկզբին Արթուր Քոչարյանն

իր հեռավոր ազգական Վալերի Մուրադովի խնդրանքով օգնել ՀՀ ԱԱԾ ՍԶ թիվ 5073 գործնաստում պայմանագրային ծառայության տեղավորվելու հարցում, դիմել է իր գործնասի հրամանատար Լևոն Հարությունյանին: Պայմանագրային զինծառայողների թեկնածուներ ներկայացնելու և նշված գործնաստում նրանց նշանակման վերաբերյալ միջնորդելու իրավասությանը օժտված պաշտոնատար անձ հանդիսացող Լևոն Հարությունյանը, ղեկավարած գործնաստում Վալերի Մուրադովի նշանակումն ապահովելու համար, աշխատանքի վայրում Արթուր Քոչարյանի հետ կայացած հիշյալ զրույցի ժամանակ, նրա միջոցով Վալերի Մուրադովից, որպես կաշառք, պահանջել է խոշոր չափերով 382.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար նշելով, որ այդ գումարը նույնպես պետք է տրամադրվի հետագայում, ՀՀ ԱԱԾ ՍԶ հրամանատարի կողմից Վալերի Մուրադովին ծառայության հրամանագրելուց: Իրազեկելով Վալերի Մուրադովին կաշառքի պահանջի մասին Արթուր Քոչարյանը սրացել է նրա համաձայնությունը՝ տալ պահանջված գումարը աշխատանքի տեղավորվելու համար, և այդ մասին տեղեկացրել է հրամանատար Լևոն Հարությունյանին: Վերջինը, դարձյալ Արթուր Քոչարյանի միջոցով, Վալերի Մուրադովին 2015 թվականի հունիսի 10-ին կանչել է թիվ 5073 գործնաստ՝ հարցազրույցի: Այնուհետև՝ Վալերի Մուրադովի թեկնածության մասին դրական կարծիք տալով, Լևոն Հարությունյանը նրան ներկայացրել է ՀՀ ԱԱԾ ՍԶ կադրերի բաժանմունք և միջնորդել նրա դիմումին ընթացք տալու և ծառայության ընդունման համար դիմորդների հատուկ սրուզման արդյունքում թիվ 5073 գործնաստում նրա նշանակման վերաբերյալ: 2015 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ ԱԱԾ ՍԶ հրամանատարի կողմից Վալերի Մուրադովը հրամանագրվել է որպես պայմանագրային, շարքային զինծառայող հրամանատար Լևոն Հարությունյանի ղեկավարած թիվ 5073 գործնաստում և նույն օրը Լևոն Հարությունյանը, Արթուր Քոչարյանի հետ կայացած զրույցի ժամանակ, պահանջել է, որ Վալերի Մուրադովը ծառայության ներկայանալու օրը նախապես պայմանավորված կաշառքի գումարը բերի գործնաստ՝ իրեն փոխանցելու համար: Արթուր Քոչարյանի հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2015 թվականի սեպտեմբերի 25-ին Վալերի Մուրադովը, ներկայանալով ծառայության թիվ 5073 գործնաստ, Արթուր Քոչարյանին է տվել խոշոր չափերով 382.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար կաշառքը, որն Արթուր Քոչարյանը, հրամանատար Լևոն Հարությունյանի աշխատասենյակում, փոխանցել է նրան (...):¹:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 124-128:

5.2. Վալերի Մուրադովին ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) 2015 թվականի հունիսի սկզբին դիմել է իր հեռավոր ազգական՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի Երևանում տեղակայված թիվ 5073 զորամասի հրամանատարի ծառայողական ավտոմեքենայի վարորդ Արթուր Քոչարյանին, նրա միջնորդությամբ նույն զորամասում ծառայության ընդունվելու համար: Վերջինն այդ նպատակով դիմել է պայմանագրային զինծառայության անցնելու համար թեկնածուներ ներկայացնելու և նշված զորամասում նրանց նշանակման վերաբերյալ միջնորդելու իրավասությամբ օժտված պաշտոնատար անձ թիվ 5073 զորամասի հրամանատար (ուսումնական կենտրոնի պետ) Լևոն Հարությունյանին, ով ղեկավարած զորամասում Վալերի Մուրադովի նշանակումն ապահովելու համար, Արթուր Քոչարյանի միջոցով, որպես կաշառք նրանից պահանջել է խոշոր չափերով՝ 382.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար կաշառք՝ նշելով, որ այդ գումարը պետք է տրամադրվի ՀՀ ԱԱԾ ՍԶ հրամանատարի կողմից Վալերի Մուրադովին հրամանագրելուց հետո: Վերջինը համաձայնվել է և, Արթուր Քոչարյանի միջոցով, Լևոն Հարությունյանին հայրնել է 800 ԱՄՆ դոլար կաշառք տրամադրելու պայրաստականության մասին, որից հետո 2015 թվականի հունիսի 10-ին Լևոն Հարությունյանը նրան կանչել է հարցազրույցի և Վալերի Մուրադովի թեկնածության մասին դրական կարծիք փայտվ, նրան ներկայացրել է ՀՀ ԱԱԾ ՍԶ կադրերի բաժանմունք և միջնորդել նրա դիմումին ընթացք փայտու և ծառայության ընդունման համար դիմորդների հատուկ արուզման արդյունքում թիվ 5073 զորամասում նրա նշանակման վերաբերյալ: ՀՀ ԱԱԾ ՍԶ հրամանատարի 2015 թվականի սեպտեմբերի 23-ի հրամանով Վալերի Մուրադովը նշանակվել է հրամանատար Լևոն Հարությունյանի ղեկավարած զորամասում որպես պայմանագրային, շարքային զինծառայող: Նախապես ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ ծառայության ներկայանալու առաջին օրը՝ 2015 թվականի սեպտեմբերի 25-ին, թիվ 5073 զորամասի տարածքում, Վալերի Մուրադովն Արթուր Քոչարյանին փվել է խոշոր չափերով՝ 382.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար կաշառքի գումարը, որը վերջինը փոխանցել է հրամանատար Լևոն Հարությունյանին (...)»¹:

5.3. Էդգար Մելքոնյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) 2015 թվականի մայիսի սկզբին դիմել է իր քրոջ նշանածին՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի Երևանում տեղակայված թիվ 5073 զորամասի պայմանագրային զինծառայող Ռազմիկ Նազինյանին, նույն զորամասում

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 70-72:

աշխատանքի տեղավորվելու հարցում իրեն օգնելու խնդրանքով, ով, իր հերթին, այդ հարցով դիմել է նշված զորամասի հրամանատարի վարորդ Արթուր Քոչարյանի միջնորդությանը: Պայմանագրային զինծառայողների թեկնածուներ ներկայացնելու և նշված զորամասում նրանց նշանակման վերաբերյալ միջնորդելու իրավասությանը օժտված պաշտոնատար անձ հանդիսացող Լևոն Հարությունյանը, ղեկավարած զորամասում Էդգար Մելքոնյանի նշանակումն ապահովելու համար, Արթուր Քոչարյանի հետ գրույցի ընթացքում, նրա միջոցով, Էդգար Մելքոնյանից, որպես կաշառք, պահանջել է խոշոր չափերով՝ 384.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար՝ պայմանով, որ նշված գումարը փրամադրվի նրան՝ ՀՀ ԱԱԾ ՍԶ հրամանատարի կողմից Էդգար Մելքոնյանին հրամանագրելուց: Վերջինը համաձայնություն է փոխել՝ հարցը լուծելու համար փրամադրել 800 ԱՄՆ դոլար կաշառք, և այդ մասին, միջնորդավորված, իրազեկել է Լևոն Հարությունյանին: Հաջորդ օրը՝ 2015 թվականի մայիսի 6-ին, հրամանատար Լևոն Հարությունյանի նախաձեռնությամբ, դարձյալ Արթուր Քոչարյանի միջոցով, Էդգար Մելքոնյանը կանչվել է թիվ 5073 զորամաս՝ հարցազրույցի, որից հետո Լևոն Հարությունյանը, Էդգար Մելքոնյանի թեկնածության մասին դրական կարծիք փայլով, նրան ներկայացրել է ՀՀ ԱԱԾ ՍԶ կադրերի բաժանմունք՝ միջնորդելով ընթացք փյալ Էդգար Մելքոնյանի դիմումին և ծառայության ընդունման համար իրականացվող հարուկ ստուգման արդյունքում, որպես պայմանագրային զինծառայող, նշանակել թիվ 5073 զորամասում: 2015 թվականի սեպտեմբերի 5-ին Լևոն Հարությունյանն Արթուր Քոչարյանին հայրնել է Էդգար Մելքոնյանի մուր օրերին սպասվող հրամանագրման մասին և պահանջել է նրանից սրանալ և իրեն հանձնել պայմանավորված կաշառքի գումարը: Նույն օրն Արթուր Քոչարյանը, Ռազմիկ Նազինյանի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, մեկնել է Արուսյան քաղաք, դրսում հանդիպել նրան և Էդգար Մելքոնյանին, ով տեղում խոշոր չափերով՝ 384.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար կաշառքի գումարը փոխել է Ռազմիկ Նազինյանին, վերջինն էլ այն հանձնել է Արթուր Քոչարյանին, ով այն բերել է Երևան և փոխել թիվ 5073 զորամասի հրամանատար Լևոն Հարությունյանին: 2015 թվականի սեպտեմբերի 7-ին, որպես պայմանագրային, շարքային զինծառայող, Էդգար Մելքոնյանը հրամանագրվել է Լևոն Հարությունյանի ղեկավարած թիվ 5073 զորամասում և անցել ծառայության (...):¹

6. Առաջին առյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Լևոն Հարությունյանին երեք դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում նշված փաստական

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 106-108:

հանգամանքներից հետևում է, որ նախաքննության մարմինը հիմնավորված է համարել այն, որ Լևոն Հարությունյանը, հանդիսանալով ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի թիվ 5073 զորամասի հրամանատար (ուսումնական կենտրոնի պետ) և օժտված լինելով ղեկավարած զորամասն անհրաժեշտ կադրերով ապահովելու նպատակով պայմանագրային զինծառայության ընդունելության համար ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի կադրերի ստորաբաժանման միջոցով սահմանապահ զորքերի ղեկավարությանը թեկնածուներ ներկայացնելու և ղեկավարած զորամասում նրանց նշանակման վերաբերյալ միջնորդելու իրավասությանը, 2013-2015 թվականների ընթացքում, միջնորդների միջոցով կաշառք է պահանջել և սրացել ՀՀ քաղաքացիներ Արմինե Խաչատրյանից, Էդգար Մելքոնյանից, Վալերի Մուրադովից՝ նրանց օգտին իր լիազորությունների շրջանակում գործողություններ կատարելու համար:

Մինչդեռ, դաբարական քննության ժամանակ պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված ապացույցների, այդ թվում՝ Արմինե Խաչատրյանի, Էդգար Մելքոնյանի և Վալերի Մուրադովի ցուցմունքների վերլուծությանից հետևում է, որ նրանք միջնորդների միջոցով Լևոն Հարությունյանին վերոհիշյալ գումարները տվել են ոչ թե վերջինիս կողմից ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի կադրերի ստորաբաժանման միջոցով սահմանապահ զորքերի ղեկավարությանը իրենց թեկնածությունը ներկայացնելու և իրենց նշանակման վերաբերյալ միջնորդելու համար, այլ՝ իրենց պայմանագրային ծառայության ընդունելու համար: Ավելին՝ պայմանագրային զինծառայողներ նշանակելու վերաբերյալ միջնորդելու իրավասություն ամբաստանյալ Լևոն Հարությունյանին վերապահված լինելու հանգամանքը հաստատող որևէ ապացույց սույն քրեական գործով ձեռք չի բերվել:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ամբաստանյալ Լևոն Հարությունյանը, որպես ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի թիվ 5073 զորամասի հրամանատար (ուսումնական կենտրոնի պետ), Արմինե Խաչատրյանին, Էդգար Մելքոնյանին և Վալերի Մուրադովին պայմանագրային ծառայության ընդունելու կամ նշանակելու լիազորությամբ օժտված չի եղել, այդպիսի լիազորությամբ օժտված է եղել բացառապես ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի հրամանատարը:

(...)

Ենախաքննության մարմինն ամբաստանյալ Լևոն Հարությունյանին մեղադրել է կաշառք տվողի օգտին իր լիազորությունների մեջ մտնող գործողություն կատարելու համար կաշառք ստանալու կատարում այն դեպքում, երբ վերջինս պայմանագրային ծառայության ընդունելու կամ նշանակելու լիազորությամբ օժտված չի եղել, իսկ Արմինե Խաչատրյանը, Վալերի Մուրադովը և Էդգար Մելքոնյանը վերոհիշյալ գումարները

միջնորդի միջոցով ամբաստանյալ Լևոն Հարությունյանին փոխել են ոչ թե ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի ղեկավարությանն իրենց թեկնածությունը ներկայացնելու կամ իրենց նշանակման վերաբերյալ միջնորդելու, այլ՝ ամբաստանյալ Լևոն Հարությունյանի լիազորությունների մեջ չմտնող գործողության, այն է՝ իրենց պայմանագրային ծառայության ընդունելու համար:

Հարկանշական է, որ նախաքննության մարմինն ամբաստանյալ Լևոն Հարությունյանին առաջադրված մեղադրանքի փաստական հանգամանքներում մի դեպքում նշել է, որ Լևոն Հարությունյանը օժտված է եղել ղեկավարած զորամասն անհրաժեշտ կադրերով ապահովելու նպատակով պայմանագրային զինծառայության ընդունելության համար ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի կադրերի սրորաբաժանման միջոցով սահմանապահ զորքերի ղեկավարությանը թեկնածուներ ներկայացնելու և ղեկավարած զորամասում նրանց նշանակման վերաբերյալ միջնորդելու իրավասությամբ, իսկ Արմինե Խաչատրյանից, Էդգար Մելքոնյանից, Վալերի Մուրադովից կաշառքը պահանջել և ստացել է՝ նրանց օգտին իր լիազորությունների շրջանակում գործողություններ կատարելու համար, մյուս դեպքում՝ նույն մեղադրանքի փաստական հանգամանքներում նշել է, որ նա իր ծառայողական ավտոմեքենայի վարորդ Արթուր Քոչարյանին փեղեկացնելով, որ ցանկանում է նշված զորամասում աշխատանքի փոխադրվել պայմանագրային զինծառայողների, նրա միջնորդությամբ դիմած անձանց՝ Էդգար Մելքոնյանին և Վալերի Մուրադովին ղեկավարած զորամասում պայմանագրային ծառայության փոխադրվելու համար է պահանջել և ստացել կաշառքի գումարներ: Ավելին՝ մյուս ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքում նշված փաստական հանգամանքներում նախաքննության մարմինը հաստատել է համարել, որ ամբաստանյալ Լևոն Հարությունյանը հիշյալ գումարները վերցրել է զինծառայողների նշանակումն ապահովելու համար:

Այսպիսով, դատարանը փաստում է, որ սույն գործով առկա է անհամապատասխանություն ինչպես դատարանում հետազոտված ապացույցների և մեղադրանքի միջև, այնպես էլ՝ ամբաստանյալ Լևոն Հարությունյանին և մյուս ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքի փաստական հանգամանքների միջև, ինչից հետևում է, որ նախաքննության մարմինը չի պահպանել մեղադրանքների ձևակերպման կարևորագույն փարբերից մեկը և գործով հաստատված, ինչպես նաև ամբաստանյալ Լևոն Հարությունյանի գործողությունները կազմող փաստերը չի համադրել այդ փաստերին համապատասխանող կոնկրետ հանցակազմի հարկանիշներին: Ավելին՝ դատարանը փաստում է, որ նախաքննության մարմնի վերոգրյալ դատողությունները ոչ միայն իրարամերժ են և հակասող, զուրկ ներքին միասնությունից և

տրամաբանական կապից, այլև ամբաստանյալներին միմյանց հակասող փաստական հանգամանքներով մեղադրանք առաջադրելով՝ նախաքննության մարմինը, ըստ էության, սրեղծել է իրավական անորոշության վիճակ:

Վերոգրյալ դատողությունների համարեքստում, պայրւած իրավական ընթացակարգի շրջանակներում սրուգելով և գնահատելով սույն քրեական գործով ձեռք բերված ապացույցները՝ դադարանը գալիս է այն եզրահանգման, որ ամբաստանյալ Լևոն Հարությունյանը, հանդիսանալով ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի թիվ 5073 զորամասի հրամանատար (ուսումնական կենտրոնի պետ) և պաշտոնատար անձ, ուրիշի զգալի և խոշոր չափերի գույքի հափշտակություն կատարելու ուղղակի դիրավորությամբ, օգրագործելով իր պաշտոնեական դիրքը, դիմել է խաբեության և Արմինե Խաչատրյանի, Էդգար Մելքոնյանի և Վալերի Մուրադովի օգրին իր լիազորությունների շրջանակներում իբրև թե գործողություններ կատարելու, այն է՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերում նրանց զինվորական ծառայության ընդունելու համար, այսինքն՝ կաշառք սրանալու պարբրվակով, միջնորդի՝ Արտյոմ Ավետիսյանի միջոցով Արմինե Խաչատրյանից պահանջել և սրացել է խոշոր չափի՝ 614.000 ՀՀ դրամին համարժեք 1.500 ԱՄՆ դոլար գումար, Արթուր Քոչարյանի միջոցով՝ Էդգար Մելքոնյանից պահանջել և սրացել է զգալի չափի՝ 384.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար գումար, իսկ Վալերի Մուրադովից՝ 382.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար գումար: Այլ խոսքով՝ ամբաստանյալ Լևոն Հարությունյանի արարքները համապարասխանում են երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և մեկ դրվագով՝ 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին և նշված որակումներն ամբողջությամբ ընդգրկում են հանցակազմի ինչպես հիմնական, այնպես էլ ծանրացնող հատկանիշները:

Հետևաբար, դադարանը գալիս է այն եզրահանգման, որ հիմնավորված և պարճառաբանված չեն ամբաստանյալ Լևոն Հարությունյանի կողմից երեք դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանքները կատարելու վերաբերյալ մեղադրանքի կողմի հետևությունները և նրան մեղասգրված արարքները ենթակա են որակման երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և մեկ դրվագով՝ 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով:

(...) Դադարանը գրնում է, որ իրենց մեղասգրվող վերոհիշյալ հանցագործությունների կատարումն իրենց կամքից անկախ հանգամանքներով ամբաստանյալներ Արթուր Քոչարյանը, Ռազմիկ Նազինյանը, Էդգար Մելքոնյանը և Վալերի Մուրադովն ավարին չեն

հասցրել, քանի որ ամբաստանյալ Լևոն Հարությունյանն իր զբաղեցրած պաշտոնի բերումով որևէ լիազորություն չի ունեցել Է.Մելքոնյանին և Վ.Մուրադովին ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերում պայմանագրային ծառայության նշանակելու համար և խաբեությանը սրանալով կաշառքի առարկա հանդիսացող գումարները՝ հափշտակել է դրանք:

Այսինքն՝ դադարանը գրնում է, որ ապացուցված է ամբաստանյալ Արթուր Քոչարյանի կողմից, նրա մեղավորությամբ, երկու դրվագով կաշառքի միջնորդության փորձ կատարելը և նրա արարքները համապատասխանում են երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-313-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հարկանիշներին:

Ապացուցված է նաև ամբաստանյալներ Էդգար Մելքոնյանի և Վալերի Մուրադովի կողմից, նրանց մեղավորությամբ, խոշոր չափերով կաշառք փախու փորձ կատարելը և նրանց արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-312-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հարկանիշներին (...):

Համաձայն մեղադրական եզրակացության՝ ամբաստանյալ Լևոն Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ուղղակի և միակ ապացույցն ամբաստանյալ Արթուր Քոչարյանի ցուցմունքներն են, որոնց սրուզման և գնահատման արդյունքում դադարանը գալիս է այն եզրահանգման, որ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից դրանցով չեն հասարարվում ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքն ամբաստանյալ Լևոն Հարությունյանի կողմից կատարելու հանգամանքը:

(...)

Նախաքննական և դատաքննական ցուցմունքների հակասությունների շուրջ պարասխանելով առաջադրված հարցերին՝ ամբաստանյալ Արթուր Քոչարյանը դադարանին հայտնել է, որ իր ենթադրությունն է եղել, երբ նշել է, որ Լ.Հարությունյանը կոնյակները ուզել է որպես շնորհակալություն՝ իրեն ծառայողական ավտոմեքենայի վարորդ նշանակելու համար:

Ամբաստանյալ Լևոն Հարությունյանը, թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության ժամանակ հերքել է Արթուր Քոչարյանին հրաձիգի պաշտոնից տեղափոխելու և որպես ծառայողական ավտոմեքենայի վարորդ նշանակման ներկայացնելու համար նրանից կոնյակներ պահանջելու հանգամանքը:

Այսպիսով, ամբաստանյալ Արթուր Քոչարյանի ցուցմունքների համակարգային վերլուծությունից հետևում է, որ դրանցով չի հասարարվում սույն գործի համար կարևոր նշանակություն ունեցող այն հանգամանքը, որ

հիշյալ կոնյակներն ամբաստանյալ Լևոն Հարությունյանը նրանից պահանջել է հրաձիգի պաշտոնից նրան տեղափոխելու և որպես ծառայողական ավտոմեքենայի վարորդ նշանակման ներկայացնելու համար: Այլ խոսքով՝ ամբաստանյալ Ա.Քոչարյանի ցուցմունքները թույլ չեն տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ: Ավելին՝ ամբաստանյալ Լևոն Հարությունյանի հիշյալ գործողությունների մասով ամբաստանյալ Արթուր Քոչարյանի հայրնած այդ տեղեկությունները հնարավոր չէ ստուգել այլ ապացույցների բավարար համակցությամբ: Բացի այդ, ամբաստանյալ Արթուր Քոչարյանը դատաքննության ժամանակ պարզաբանել է, որ իր ենթադրությունն է եղել, երբ նշել է, որ Լ.Հարությունյանը կոնյակները ուզել է որպես շնորհակալություն՝ իրեն ծառայողական ավտոմեքենայի վարորդ նշանակելու համար: Մինչդեռ, հարկ է նշել, որ հանցագործության համար դատապարտումը չի կարող պայմանավորված լինել անձի հավանական մեղավորության վերաբերյալ հետևություններով կամ ենթադրություններով, այլ պետք է բխի նրա կողմից տրված արարքը կատարելու վերաբերյալ գործով ձեռք բերված ապացույցների բավարար համակցությունից, որպեսին նախաքննության մարմնի կողմից ձեռք չի բերվել:

Ինչ վերաբերում է մեղադրական եզրակացության մեջ նշված մնացած ապացույցներին, ապա հիշյալ ապացույցների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ինչպես առանձին, այնպես էլ համակցությամբ չեն հաստատում կոնկրետ գործով ապացուցման առարկան կազմող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են ամբաստանյալ Լևոն Հարությունյանի կողմից հրաձիգի պաշտոնից Արթուր Քոչարյանին տեղափոխելու և որպես ծառայողական ավտոմեքենայի վարորդ նշանակման ներկայացնելու համար վերջինիցս 160.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 5 հատ «Արարատ Եսիբի» տեսակի կոնյակներ պահանջելը և 2014թ. մարտի վերջին նրանից 105.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 3 հատ «Արարատ Եսիբի» տեսակի կոնյակներ ստանալը, ինչպես նաև նրա մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված և նրան մեղաազրված այդ արարքը կատարելու մեջ: (...):¹

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է. «(...) Առաջին արյանի դատարանը, պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 187-352:

քաղաքացիության փոխանցման, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ չհարապուղոջ բոլոր կասկածները նրա օգրին մեկնաբանելով, եկել է ճիշտ հետևության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով և 3 դեպքով ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ամբաստանյալ Լևոն Հարությունյանին առաջադրված մեղադրանքները հիմնավորված չեն:

Վերաքննիչ դադարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է մասնավորապես այն հանգամանքով, որ նախաքննական մարմինն ամբաստանյալ Լևոն Հարությունյանին մեղադրել է կաշառք փոխան օգրին իր լիազորությունների մեջ մտնող գործողություն կատարելու համար կաշառք սրանալու կատարում այն դեպքում, երբ վերջինը պայմանագրային ծառայության ընդունելու կամ նշանակելու լիազորությամբ օժտված չի եղել (պայմանագրային գինծառայողներ նշանակելու վերաբերյալ միջնորդելու իրավասություն ամբաստանյալ Լևոն Հարությունյանին վերապահված լինելու հանգամանքը հաստատող որևէ ապացույց սույն քրեական գործով ձեռք չի բերվել), իսկ Արմինե Խաչատրյանը, Վալերի Մուրադովը և Էդգար Մելքոնյանը վերոհիշյալ գումարները միջնորդի միջոցով ամբաստանյալ Լևոն Հարությունյանին փոխան են ոչ թե ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի ղեկավարությանն իրենց թեկնածությունը ներկայացնելու կամ իրենց նշանակման վերաբերյալ միջնորդելու, այլ ամբաստանյալ Լևոն Հարությունյանի լիազորությունների մեջ չմտնող գործողության, այն է՝ իրենց պայմանագրային ծառայության ընդունելու համար: Այսինքն վերոգրյալից պարզ է դառնում, որ ամբաստանյալ Լևոն Հարությունյանը, որպես ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի թիվ 5073 զորամասի հրամանատար (ուսումնական կենտրոնի պետ), Արմինե Խաչատրյանին, Էդգար Մելքոնյանին և Վալերի Մուրադովին պայմանագրային ծառայության ընդունելու կամ նշանակելու լիազորությամբ օժտված չի եղել, քանի որ այդպիսի լիազորությամբ օժտված է եղել բացառապես ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի հրամանատարը: Ինչ վերաբերում է ամբաստանյալ Լևոն Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքին, ապա Վերաքննիչ դադարանը հարկ է համարում նկատել, որ ամբաստանյալ Լևոն Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ուղղակի և միակ ապացույցն ամբաստանյալ Արթուր Քոչարյանի ցուցմունքներն են, որոնցով չի հաստատվում ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքն ամբաստանյալ Լևոն Հարությունյանի կողմից կատարելու հանգամանքը:

(...)

Վերաքննիչ դադարանը հիմնավոր է համարում նաև Առաջին արյանի դադարանի այն պարճառաբանությունները, որ ամբաստանյալներ Արթուր Քոչարյանին և Ռազմիկ Նազինյանին մեղաազրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասով, ամբաստանյալներ Վալերի Մուրադովին և Էդգար Մելքոնյանին մեղաազրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով նախապետված հանցանքները ենթակա են վերաորակման համապարասխանաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-313-րդ հոդվածի 1-ին մասով և 34-312-րդ հոդվածի 2-րդ մասով:

(...)

Վերաքննիչ դադարանն (...) եզրահանգում է, որ Առաջին արյանի դադարանը, պարշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում սպուզման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլարելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության փաստակցունից, դեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և մեկ դրվագով՝ 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 5-րդ կետերով ամբաստանյալ Լևոն Հարությունյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հերևություն:

Այսպիսով ամբաստանյալ Լևոն Հարությունյանի մեղքը երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և մեկ դրվագով՝ 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 5-րդ կետերով հաստատված է և նրա կարարած հանցանքներն ապացուցված, իսկ ամբաստանյալի և պաշտպանի պարճառաբանությունները հերքվում են քրեական գործով ձեռք բերված և պարշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում Առաջին արյանի դադարանում հերազտրված փոխկապակցված ապացույցների բավարար ամբողջությամբ:

(...)

Վերաքննիչ դադարանը գրնում է, որ Առաջին արյանի դադարանի հերևությունները հիմնավորված ու պարճառաբանված են, իսկ քրեական գործի փաստական հանգամանքների մասին Առաջին արյանի դադարանի հերևությունները հերազտրված ապացույցներին չհամապարասխանելու վերաբերյալ ամբաստանյալի և պաշտպանի փաստարկները քրեական գործի նյութերում իրենց հաստատումը չեն

*գտնում, հերևարար՝ չեն կարող հիմք հանդիսանալ Առաջին արյանի դատարանի դատական ակտը բեկանելու համար (...)*¹:

Վճարելի բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, ներկայացրած բողոքում վերլուծելով Վճարելի դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, նշել է, որ Լ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնելով, նրան ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասով՝ երեք դրվագով, առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով (1-ին դրվագով), ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (երկու դրվագով), վերաորակելով, ամբաստանյալ Ա.Բոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնելով, ինչպես նաև նրան ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագով), առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-313-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագով), վերաորակելով, Վ.Մուրադովին և Է.Մելքոնյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքները 34-312-րդ հոդվածի 2-րդ մասով վերաորակելով՝ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները սխալ են կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 25-րդ, 127-րդ և 358-րդ հոդվածներով սահմանված իրավանդությունները, ինչպես նաև չեն կիրառել կաշառք ստանալու, կաշառք տալու և կաշառքի միջնորդության համար քրեական պատասխանատվություն սահմանող օրենքի դրույթները, որոնցով թույլ է տրվել դատական սխալ, որն իր հերթին ազդել է գործի ելքի վրա և հանգեցրել է նյութական ու դատավարական օրենքների էական խախտման:

8.1. Բողոքաբերի պնդմամբ՝ քրեական գործով ձեռք բերված ապացույցների առկայության պայմաններում անհասկանալի է դատարանի այն դատողությունը, ըստ որի՝ քրեական գործով որևէ ապացույց ձեռք չի բերվել այն մասին, որ ամբաստանյալ Լ.Հարությունյանը պայմանագրային զինծառայողներ նշանակելու վերաբերյալ միջնորդելու կամ թեկնածուներ ներկայացնելու իրավասություն է ունեցել:

Այսպես՝ Լ.Հարությունյանը, հանդիսանալով 5073 զորամասի հրամանատարը, լիազորված է եղել սահմանապահ զորքերի կադրերի բաժնի միջոցով սահմանապահ զորքերի հրամանատարին ներկայացնելու

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 66-113:

թեկնածություններ՝ իր ղեկավարած գործառնատում պայմանագրային զինծառայության ընդունելու համար: Բացի այդ, հիմնավորվել է, որ գործառնատի հրամանատարի միջնորդությունը կանխորոշել է տվյալ դիմորդի հենց նշված գործառնատում հրամանագրվելու հանգամանքը:

Ըստ քրեական գործում առկա ապացույցների՝ պայմանագրային զինծառայության ընդունվելու համար կաշառք տվող անձինք, ինչպես նաև միջնորդները, կաշառքի շուրջ համաձայնությունները ձեռք բերելու ընթացքում, ինչպես նաև կաշառքը տալու ժամանակ, մանրամասն չեն քննարկել զինծառայության նշանակվելու համար առկա իրավական և ընթացակարգային կարգավորումները, չեն մանրամասնել, թե որ պաշտոնյան ինչ առանձին լիազորություններով է օժտված այդ գործընթացում:

Հակառակ դրան՝ գործով առկա փաստական տվյալներով հիմնավորվել է, որ սահմանապահ գորքերի թիվ 5073 գործառնատում պայմանագրային զինծառայության անցնելու ցանկություն ունեցող անձինք, միջնորդների միջոցով, տարբեր չափերի գումարներ են փոխանցել տվյալ գործառնատի հրամանատար Լ.Հարությունյանին՝ տվյալ գործառնատում զինծառայության ընդունվելու համար, իսկ միջնորդների գործողություններն ուղղված են եղել հենց նույն նպատակին: Այս պայմաններում, ամբաստանյալ Լ.Հարությունյանը հիշյալ անձանց հրամանագրման համար միջնորդավորված եղանակով նախ ձեռք է բերել համապատասխան հանցավոր պայմանավորվածությունները, ապա ստանալով պայմանավորված չափի վարձատրությունները, իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություններ, մասնավորապես՝ կադրերի բաժնի միջոցով ներկայացրել է անձանց թեկնածությունները, որի արդյունքում նշված անձինք հրամանագրվել են տվյալ գործառնատում զինծառայության:

Այլ կերպ՝ Լ.Հարությունյանի գործողությունները ոչ թե ուղղված են եղել խարդախության եղանակով ուրիշների գույքը հափշտակելուն, այլ նա իր ղեկավարած գործառնատում պայմանագրային զինծառայության ընդունվելու ցանկություն ունեցող անձանցից միջնորդների միջոցով պահանջել, ապա ստացել է տարբեր չափերի գումարներ, որի արդյունքում իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություններ, ապահովել է տվյալ անձանց նշանակումը պայմանագրային զինվորական ծառայության՝ հենց կոնկրետ իր ղեկավարած գործառնատում:

Բողոքի հեղինակն ընդգծել է, որ անհիմն են նաև գործով մյուս ամբաստանյալներ Արթուր Քոչարյանին, Ռազմիկ Նազինյանին, Էդգար Մելքոնյանին և Վալերի Մուրադովին առաջադրված մեղադրանքները հանցավորձի համար պատասխանատվություն նախատեսող նորմով վերաորակելու վերաբերյալ դատարանի հետևությունները:

8.2. Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալներ Լ.Հարությունյանին և Ա.Քոչարյանին առաջադրված մեղադրանքներում արդարացնելու կապակցությամբ դատարանի բերած պատճառաբանություններին, ապա, ըստ բողոքաբերի, այս մասով ստորադաս դատարանի հետևությունները ևս անհիմն են և չպատճառաբանված: Դատարանը նման հետևությունների է հանգել գործում առկա որոշ ապացույցներ չգնահատելու, իսկ որոշները՝ հատվածական, կրճատումներով, կոնտեքստից դուրս բերելու միջոցով մասնակի վերլուծելու և գնահատելու արդյունքում:

8.3. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, մասնակի բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը՝

ա) ամբաստանյալ Լևոն Պավլուշայի Հարությունյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով և 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (երեք դրվագով) նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և նշանակել հոդվածի սանկցիայով նախատեսված արդարացի պատիժ.

բ) ամբաստանյալ Արթուր Էդվարդի Քոչարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով և 313-րդ հոդվածի 1-ին մասով՝ (երկու դրվագով) նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և նշանակել հոդվածի սանկցիայով նախատեսված արդարացի պատիժ.

գ) ամբաստանյալ Վալերի Սամվելի Մուրադովին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով և նշանակել հոդվածի սանկցիայով նախատեսված արդարացի պատիժ.

դ) ամբաստանյալ Էդգար Ավետիսի Մելքոնյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով և նշանակել հոդվածի սանկցիայով նախատեսված արդարացի պատիժ:

9. Ամբաստանյալ Լ.Հարությունյանի պաշտպան Ա.Թամրազյանը ներկայացված վճռաբեկ բողոքում ընդգծել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ըստ բողոքաբերի՝ ամբաստանյալի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում ապացուցված համարելու համար պետք է հաստատված համարվեր, որ նա օժտված է եղել իր ղեկավարած գործառնան անհրաժեշտ

կադրերով ապահովելու նպատակով պայմանագրային զինծառայության ընդունելության համար ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գորքերի կադրերի ստորաբաժանման միջոցով սահմանապահ գորքերի ղեկավարությանը թեկնածուներ ներկայացնելու և ղեկավարած գործում նրանց նշանակման վերաբերյալ միջնորդելու լիազորությամբ, մինչդեռ համապատասխան օրենսդրական ակտերի և գործում առկա ապացույցների վերլուծությունը վկայում է, որ նա նման լիազորություններով օժտված չի եղել, հետևաբար նրան առաջադրված մեղադրանքը եղել է ապօրինի և անսխիմ:

Քրեական գործում առկա ապացույցներից որևէ մեկը պայմանագրային զինծառայության ընդունվել ցանկացող անձանց թեկնածությունը ներկայացնելու և նրանց նշանակումն ապահովելու համար կաշառք պահանջելու վերաբերյալ փաստական տվյալ չի պարունակում, իսկ մի շարք ապացույցներով հաստատված է, որ պայմանագրային զինծառայության ընդունվելու համար թեկնածուներն իրենց անունից դիմում են հասցեագրել սահմանապահ գորքերի հրամանատարին: Դիմումները մուտքագրվել են սահմանապահ գորքերի կադրերի բաժին, դրանց վրա մի շարք պաշտոնատար անձանց կողմից կատարվել են մակագրություններ և գրառումներ:

Լ.Հարությունյանն ի պաշտոնե գրավոր ձևով թեկնածուների մասին դրական կարծիք չի հայտնել, նրանց դիմումներին ընթացք տալու և նրանց ծառայության ընդունելու վերաբերյալ որևէ միջնորդություն չի ներկայացրել և աշխատանքի ընդունվելու ցանկություն հայտնած քաղաքացու վերաբերյալ կարծիք հայտնելու և միջնորդություն ներկայացնելու լիազորությամբ օժտված չի եղել:

Այսինքն՝ Լ.Հարությունյանը, որպես գործառնի հրամանատար, չունենալով պայմանագրային զինծառայության ընդունելու համապատասխան լիազորություն, որևէ կերպ չէր կարող կանխորոշել այս կամ այն անձի՝ պայմանագրային զինծառայության ընդունվելու հարցը:

9.1. Բողոքաբերը, անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի կողմից Լ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (երեք դրվագով) առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով (մեկ դրվագով) և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով՝ (երկու դրվագով) վերաորակելու հարցին, ընդգծել է, որ դատարանի կողմից թույլ է տրվել Լ.Հարությունյանի պաշտպանության իրավունքի խախտում:

Մասնավորապես, բողոքաբերը փաստել է, որ դատաքնության ընթացքում Լ.Հարությունյանի մեղադրանքը փոփոխելու և նրան մեղսագրվող արարքն անգամ ավելի մեղմ հողվածով վերաորակելու արդյունքում ակնհայտորեն խախտվել է նրա պաշտպանության իրավունքը:

9.2. Բողոք բերած անձը փաստել է նաև, որ Արմինե Խաչատրյանի, Արտյոն Ավետիսյանի, Արթուր Քոչարյանի, Էդգար Մելքոնյանի, Վալերի Մուրադովի և Ռազմիկ Նազինյանի կողմից քրեական գործի նախաքննության ընթացքում որպես վկա տված ցուցմունքները, որոնք մեղադրական եզրակացության համաձայն դրվել են Լ.Հարությունյանի մեղադրանքի հիմքում, ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի էական խախտումներով, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դրանք անթույլատրելի ապացույցներ են:

Բողոքաբերի պնդմամբ՝ թույլ է տրվել նաև Լ.Հարությունյանի հակընդդեմ հարցման իրավունքի խախտում, քանի որ Եվրոպական կոնվենցիայի, ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից բխում է, որ քրեական գործի նախաքննության փուլում քննիչը պարտավոր է կատարել մեղադրյալի և վկաների միջև առերես հարցաքննություն՝ նրանց ցուցմունքներում էական հակասությունների առկայության դեպքում: Այսպես՝ քրեական գործի նախաքննության ընթացքում Լ.Հարությունյանը չի ընդունել իր մեղքը, մասնավորապես՝ Է.Մելքոնյանից և Վ.Մուրադովից կաշառք կամ որևէ այլ գումար ստանալու վերաբերյալ, որպիսի պայմաններում քննիչը պարտավոր էր կատարելու առերես հարցաքննություն, որի ընթացքում Լ.Հարությունյանը կարող էր հակընդդեմ հարցման ենթարկել իր դեմ վկայած անձանց:

9.3. Բողոքաբերը նշել է նաև Լ.Հարությունյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու անհրաժեշտության մասին՝ ընդգծելով այն հանգամանքը, որ Լ.Հարությունյանը նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, ՀՀ ազգային անվտանգության մարմիններում ծառայելու ընթացքում բազմիցս պարգևատրվել է, արդեն իսկ փաստացի կրել է ազատագրկման ձևով պատժի զգալի մասը, վատառողջ է (նրա մոտ ախտորոշվել է «ՄԻՀ զարկերակային հիպերտենզիա 1-ին աստիճանի» հիվանդությունը), 2015 թվականի ընթացքում կատարվել է սրտի զարկերակների ստենտավորում, վերջինիս մոտ սրտի անոթների ստենտավորումներ են կատարվել նաև 2018 թվականի մարտի 2-ին, առկա են նաև այլ հիվանդություններ:

Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր կիրառել համաներման մասին ՀՀ օրենքը և Լ.Հարությունյանին ազատել պատժից, սակայն թույլ է տվել նյութական իրավունքի խախտում և նրան պատժից չի ազատել:

9.4. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բավարարել ներկայացված բողոքը, դատական ակտը մասնակի բեկանել և փոփոխել, ճանաչել և հռչակել Լ.Հարությունյանի անմեղությունը ՀՀ

քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով (մեկ դրվագով) և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (երկու դրվագով) առաջադրված մեղադրանքում, կամ դատական ակտը բեկանել պատժի մասով, Լ.Հարությունյանին ազատել պատժից՝ 2018 թվականի համաներման մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիմքով, կամ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով առաջադրված մեղադրանքի համար երեք տարի ժամկետով ազատազրկման ձևով պատժից Լ.Հարությունյանին ազատել 2013 թվականի համաներման ակտի կիրառման հիմքով, կամ նրա նկատմամբ նշանակել արդարացի և համաչափ պատիժ՝ տուգանքի ձևով՝ հաշվի առնելով փաստացի կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը, կամ ազատազրկման ձևով նշանակված պատժաչափը կրճատել, կամ ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *սուաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալ Լ.Հարությունյանի արարքում խարդախության հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«1. Պաշտոնատար անձի կողմից կաշառք սրանալը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն սրանալը կամ պահանջելը կամ սրանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք փոխելի կամ նրա ներկայացրած անձի օգուտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողությունների համար (...):*

2. Պաշտոնատար անձի կողմից կաշառք սրանալը՝ կաշառք փոխելի կամ նրա ներկայացրած անձի օգուտին ակնհայտ ապօրինի գործողության կամ անգործության համար (...):»:

Մեջբերված նորմի վերլուծությունից բխում է, որ կաշառք ստանալու հանցակազմն օբյեկտիվ կողմից դրսևորվում է կաշառք ստանալով կամ այն պահանջելով կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելով, ընդ որում, պաշտոնատար անձը կաշառք է ստանում կաշառք տվողի կամ նրա

ներկայացրած անձի օգտին օրենքով հստակ նկարագրված որոշակի գործողություններ կատարելու կամ չկատարելու պայմանով, այն է՝

- իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու համար,

- իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու համար,

- ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար,

- ակնհայտ ապօրինի գործողության կամ անգործության համար:

11.1. Անդրադառնալով պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու համար կաշառք ստանալու հանցակազմին՝ Վճռաբեկ դատարանն *Ալեքսանդր Այվազյանի և մյուսների վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրել է հետևյալը. «Պաշտոնատար անձի կողմից իր իրավասության շրջանակում որոշակի գույքային առավելության դիմաց օրինական գործողության կատարման համար ևս քրեական պարասխանաբարություն սահմանելու գաղափարն ամրագրված է նաև Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայում՝ (այսուհետ՝ նաև Կոնվենցիա): Կոնվենցիայով նախատեսված՝ կաշառակերության (ակտիվ կամ պասիվ) համար քրեական պարասխանաբարություն նախատեսելու պահանջի բնույթը, այդ նույն Կոնվենցիայի բացատրական գեկույցի համաձայն, անհրաժեշտ չի համարվում պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունները խախտելու լրացուցիչ տարրի նախատեսումը: Եշված գեկույցի համաձայն՝ այս իրավահարմար հիմնական տարրը ոչ թե պաշտոնատար անձի՝ այս կամ այն կերպ գործելու լիազորության առկայությունը կամ բացակայությունն է, այլ այն, որ դրա համար պաշտոնատար անձը ստացել, կամ վերջինիս առաջարկվել կամ խոստացվել է կաշառք»²:*

12. Զարգացնելով մեջբերված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու համար կաշառքը տրվում է պաշտոնատար անձի այնպիսի կոնկրետ գործողության կամ անգործության համար, որը մտնում է վերջինիս լիազորությունների մեջ և օրինական է: Այսպես՝ պաշտոնատար անձի լիազորություններն օրենքներով, ենթաօրենսդրական կամ այլ

¹ Տե՛ս Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա (ընդունվել է 27.01.1999թ., ուժի մեջ է մտել 01.07.2002թ., Հայաստանի Հանրապետության համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 01.05.2006թ.), ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր 2006.12.28/8(16)2:

²Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ալեքսանդր Այվազյանի և մյուսների* գործով 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ԵԷԴ/0040/01/16 որոշման 19.1-րդ կետը:

իրավական ակտերով սահմանված վերջինիս իրավագործությունների շրջանակն է, նրա իրավունքների և պարտականությունների ամբողջությունը: Ուստի, վերոնշյալ հոդվածով մեղադրանք առաջադրելու յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հստակեցնել պաշտոնատար անձի ծառայողական լիազորությունների բնույթն ու շրջանակը, դրանք ամրագրող համապատասխան իրավական ակտերը՝ հստակ սահմանելով, թե կոնկրետ ինչպիսի լիազորություն է գործադրել պաշտոնատար անձը շահագրգիռ անձանց օգտին համապատասխան գործողության կամ անգործության համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքի որակման հարցում որևէ նշանակություն չունի, թե համապատասխան շահագրգիռ անձը՝ կաշառք տվողը, արդյոք մանրամասնորեն տեղեկացված է եղել պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակի, իր օգտին գործադրվող կոնկրետ լիազորության, դրա իրավական և ընթացակարգային կարգավորումների առանձնահատկությունների, ինչպես նաև համապատասխան պաշտոնատար անձանցից յուրաքանչյուրի կողմից իրականացվելիք գործողությունների մանրամասների մասին: Տվյալ դեպքում էականն այն է, որ պաշտոնատար անձն իր ծառայողական լիազորությունների շրջանակներում շահագրգիռ անձի օգտին կատարի կամ, համենայնդեպս, մտադրություն ունենա կատարելու որոշակի գործողություններ կամ դրսևորելու անգործություն: Ընդ որում, էական չէ նաև այն, թե կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին հնարավոր եղել է հասնել ցանկալի արդյունքին, թե ոչ, քանի որ կաշառք ստանալու հանցակազմը ձևական է, և համապատասխան հետևանքները հանցակազմի շրջանակից դուրս են գտնվում:

Մինևույն ժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ անձը նյութական օգուտ է ստանում այնպիսի գործողություն կատարելու կամ չկատարելու համար, որը վերջինս *իրականում չի կարող կատարել*՝ համապատասխան լիազորությունների բացակայության կամ պաշտոնական դիրքն օգտագործելու անհնարինության պատճառով, ապա այդպիսի արարքը, *նյութական արժեքները հաիշխակելու դիպրավորության սուկայության դեպքում*, պետք է որակվի որպես խարդախություն՝ պաշտոնական դիրքի օգտագործմամբ:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Լ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (3 դրվագով) մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գորքերի թիվ 5073 գորամասի հրամանատար (ուսումնական կենտրոնի պետ) և օժտված լինելով իր ղեկավարած

գորամասն անհրաժեշտ կադրերով ապահովելու նպատակով պայմանագրային զինծառայության ընդունելության համար ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանափակ գորքերի կադրերի ստորաբաժանման միջոցով սահմանափակ գորքերի ղեկավարությանը թեկնածուներ ներկայացնելու և ղեկավարած գորամասում նրանց նշանակման վերաբերյալ **միջնորդելու իրավասությամբ**, միջնորդների միջոցով կաշառք է պահանջել և ստացել Արմինե Խաչատրյանից, Էդգար Մելքոնյանից, Վալերի Մուրադովից՝ նրանց օգտին իր լիազորությունների շրջանակում գործողություններ կատարելու համար: Մասնավորապես, ըստ մեղադրանքի, Լ.Հարությունյանը միջնորդների միջոցով Ա.Խաչատրյանից, Է.Մելքոնյանից և Վ.Մուրադովից կաշառք է պահանջել ու ստացել **վերջիններիս թեկնածությունը ներկայացնելու** և թիվ 5073 գորամասում պայմանագրային զինծառայության նրանց **նշանակումն ապահովելու համար**¹:

Մինևույն ժամանակ, Է.Մելքոնյանին և Վ.Մուրադովին ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքների համար, որ վերջիններս կաշառք են տվել Լ.Հարությունյանին՝ նրա կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանափակ գորքերի Երևանում տեղակայված թիվ 5073 գորամասում իրենց պայմանագրային զինծառայության նշանակելն **ապահովելու համար**²:

13.1. Առաջին ատյանի դատարանը Լ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (3 դրվագով) մեղսագրվող արարքները վերորակել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 5-րդ կետերով՝ մեկ դրվագով, և ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով՝ երկու դրվագով: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է հետևյալը.

- դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցների, այդ թվում՝ Ա.Խաչատրյանի, Է.Մելքոնյանի և Վ.Մուրադովի ցուցմունքների վերլուծությունից հետևում է, որ նրանք միջնորդների միջոցով Լ.Հարությունյանին գումարները տվել են ոչ թե վերջինիս կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանափակ գորքերի կադրերի ստորաբաժանման միջոցով սահմանափակ գորքերի **ղեկավարությանը իրենց թեկնածությունը ներկայացնելու և իրենց նշանակման վերաբերյալ միջնորդելու համար**, այլ իրենց պայմանագրային ծառայության **ընդունելու համար**,

- ավելին՝ պայմանագրային զինծառայողներ նշանակելու վերաբերյալ **միջնորդելու իրավասություն ամբաստանյալ Լ.Հարությունյանին**

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5.2-5.3-րդ կետերը:

վերապահված լինելու հանգամանքը հաստատող որևէ ապացույց սույն քրեական գործով ձեռք չի բերվել,

- ամբաստանյալ Լ.Հարությունյանը՝ որպես ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի թիվ 5073 զորամասի հրամանատար (ուսումնական կենտրոնի պետ), Ա.Խաչատրյանին, Է.Մելքոնյանին և Վ.Մուրադովին պայմանագրային ծառայության *ընդունելու կամ նշանակելու լիազորությամբ օժտված չի եղել*, այդպիսի լիազորությամբ օժտված է եղել *բացառապես ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի հրամանատարը*,

- սույն գործով առկա է անհամապատասխանություն ինչպես դատարանում հետազոտված ապացույցների և մեղադրանքի միջև, այնպես էլ ամբաստանյալ Լ.Հարությունյանին և մյուս ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքի փաստական հանգամանքների միջև, նախաքննության մարմնի դատողությունները իրարամերժ են և հակասող, գուրկ ներքին միասնությունից ու տրամաբանական կապից,

- ամբաստանյալ Լ.Հարությունյանը, հանդիսանալով ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի թիվ 5073 զորամասի հրամանատար և պաշտոնատար անձ, ուրիշի զգալի և խոշոր չափերի գույքի հափշտակություն կատարելու ուղղակի դիտավորությամբ, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, *դիմել է խաբեության* և Ա.Խաչատրյանի, Է.Մելքոնյանի ու Վ.Մուրադովի օգտին *իր լիազորությունների շրջանակներում իբրև թե գործողություններ կատարելու*, այն է՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում նրանց զինվորական *ծառայության ընդունելու համար*, այսինքն՝ կաշառք ստանալու պատրվակով, միջնորդների՝ Ա.Ավետիսյանի միջոցով Ա.Խաչատրյանից պահանջել և ստացել է խոշոր չափի՝ 614.000 ՀՀ դրամին համարժեք 1.500 ԱՄՆ դոլար գումար, Ա.Քոչարյանի միջոցով՝ Է.Մելքոնյանից պահանջել և ստացել է զգալի չափի՝ 384.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար գումար, իսկ Վ.Մուրադովից՝ 382.000 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար գումար:

Միևնույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալներ Ա.Քոչարյանը, Է.Մելքոնյանը և Վ.Մուրադովն իրենց մեղսագրվող հանցավոր արարքների կատարումն իրենց կամքից անկախ հանգամանքներով ավարտին չեն հասցրել, քանի որ ամբաստանյալ Լ.Հարությունյանն իր զբաղեցրած պաշտոնի բերումով որևէ լիազորություն չի ունեցել Է.Մելքոնյանին և Վ.Մուրադովին ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում պայմանագրային ծառայության նշանակելու համար և խաբեությամբ ստանալով կաշառքի առարկա հանդիսացող գումարները՝ հափշտակել է դրանք: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ա.Քոչարյանին մեղսագրվող

հանցավոր արարքը վերադարձվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-313-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագով), իսկ Է.Մելքոնյանին և Վ.Մուրադովին մեղազգրվող հանցավոր արարքները՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-312-րդ հոդվածի 2-րդ մասով¹:

13.2. Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը ճիշտ հետևության է եկել առ այն, որ երեք դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ամբաստանյալ Լ.Հարությունյանին առաջադրված մեղադրանքները հիմնավորված չեն²:

14. Սույն գործում առկա, այդ թվում՝ սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալների վերլուծության արդյունքում Վճռարենկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Լ.Հարությունյանի արարքում խաբդախության հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ հանգել են սխալ հետևության: Այսպես՝ գործում առկա փաստական տվյալների համաձայն՝

- Լ.Հարությունյանն Ա.Խաչատրյանից, Է.Մելքոնյանից և Վ.Մուրադովից միջնորդների միջոցով գումարներ է պահանջել և ստացել իր ղեկավարած՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ գործերի թիվ 5073 զորամասում վերջիններին պայմանագրային զինծառայության տեղավորելու նպատակով,

- անձամբ հանդիպել է թեկնածուներին և նրանց հետ որոշակի գրույց ունենալուց հետո ուղարկել է ՀՀ ԱԱԾ սահմանապահ գործերի կադրերի բաժին՝ աշխատանքի տեղավորման համար դիմումներ ներկայացնելու,

- կապ է պահպանել կադրերի բաժնի համապատասխան աշխատակիցների հետ, իր դրական կարծիքն է արտահայտել նշված անձանց թեկնածության վերաբերյալ,

- բոլոր դեպքերում ընդգծվել է, որ գումարները վերոնշյալ անձինք պետք է վճարեն միայն հրամանագրվելուց հետո,

- Ա.Խաչատրյանը, Է.Մելքոնյանը և Վ.Մուրադովը վճարել են պահանջված գումարները և փաստացի անցել են պայմանագրային զինծառայության՝ Լ.Հարությունյանի ղեկավարած՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գործերի թիվ 5073 զորամասում³:

Մեջբերված փաստական տվյալների համակցության համակարգված վերլուծությունը ցույց է տալիս, որ ամբաստանյալ Լ.Հարությունյանի մոտ ուրիշի գույքին խաբեության եղանակով տիրանալու նախնական դիտավորությունը բացակայել է, այլ կերպ՝

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 73-155:

գործում առկա չեն փաստական տվյալներ խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայության վերաբերյալ: Ընդհակառակը, գործում առկա տվյալներից երևում է, որ Լ.Հարությունյանն իր ղեկավարած գործառնան անհրաժեշտ կադրերով համալրելու իրական մտադրություն է ունեցել, ինչի մասին պարբերաբար հայտնել է Ա.Քոչարյանին, իսկ երբ վերջինս համապատասխան թեկնածուներ է ներկայացրել, խոստացել է գումարի դիմաց նրանց տեղավորել պայմանագրային զինծառայության և, ի վերջո, վերոնշյալ անձինք աշխատանքի են ընդունվել թիվ 5073 գործառնատում: Նույն կերպ Լ.Հարությունյանը խոստացել է նաև Արտյոմ Ավետիսյանին՝ Արմինե Խաչատրյանի թեկնածության վերաբերյալ: Ավելին, ըստ պայմանավորվածության, վերոնշյալ անձինք գումարները պետք է փոխանցեին հրամանագրվելուց հետո միայն, ինչը ևս վկայում է, որ Լ.Հարությունյանն ուրիշի գույքին խաբեությամբ տիրանալու, տված խոստումը չկատարելու և խարդախությամբ գույքը հասիշտակելու դիտավորություն չի ունեցել:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն առարկայագուրկ է համարում անդրադառնալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ կետով և 5-րդ կետով ամրագրված խարդախության որակյալ հատկանիշների բովանդակության և ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սահմանազատման հարցի քննարկմանը:

15. Ինչ վերաբերում է խարդախության օբյեկտիվ կողմի առկայության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևություններին այն առումով, որ Լ.Հարությունյանը խաբեությամբ մոլորության մեջ է գցել Ա.Խաչատրյանին, Է.Մելքոնյանին և Վ.Մուրադովին իր ունեցած լիազորությունների բնույթի վերաբերյալ, մասնավորապես՝ գումարներ է վերցրել ոչ թե վերջիններիս *թեկնածությունը ներկայացնելու* և թիվ 5073 գործառնատում պայմանագրային զինծառայության նրանց *նշանակումն սպահովելու համար*, ինչպես որ նկարագրված է առաջադրված մեղադրանքում, այլ նշված անձանց գործառնատում պայմանագրային զինծառայության *ընդունելու համար*, այնինչ նման լիազորությամբ Լ.Հարությունյանն օժտված չի եղել, և այն պատկանել է բացառապես ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գործերի հրամանատարին, սպա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Խարդախության հանցակազմի առկայությունը և միևնույն ժամանակ կաշառք ստանալու հանցակազմի բացակայությունը չի կարող պայմանավորվել զուտ այն հանգամանքով, որ կաշառք տվող անձն ամենայն մանրամասնությամբ չի տեղեկացվել և չի պատկերացրել պաշտոնատար անձի լիազորությունների բնույթի ու շրջանակի, իր օգտին

համապատասխան գործողության կամ անգործության իրականացման իրավական և ընթացակարգային առանձնահատկությունների, պաշտոնատար անձանցից յուրաքանչյուրի կոնկրետ լիազորությունների և դրա շրջանակներում կատարվելիք կոնկրետ գործողությունների բնույթի վերաբերյալ: Տվյալ դեպքում էականն այն է, որ կաշառք տվողն ընդհանուր առմամբ տեղեկացված լինի, որ համապատասխան պաշտոնատար անձն իր ծառայողական լիազորությունների գործադրման արդյունքում իր կամ իր ներկայացրած անձի օգտին կատարելու է որոշակի գործողություն կամ ձեռնպահ է մնալու դրա կատարումից, իսկ պաշտոնատար անձն էլ իր հերթին կատարի կամ իրական մտադրություն ունենա իր լիազորությունների շրջանակներում կատարելու խոստացված գործողությունը (անգործությունը):

Մասնավորապես, սույն գործում առկա փաստական տվյալներից հետևում է, որ Լ.Հարությունյանին գումարներ են տրվել՝ վերջինիս կողմից Ա.Խաչատրյանի, Է.Մելքոնյանի, Վ.Մուրադովի աշխատանքի ընդունվելու հարցը լուծելու համար, իսկ աշխատանքի ընդունման իրավական և ընթացակարգային առանձնահատկությունների, մասնավորապես՝ յուրաքանչյուր պաշտոնային կողմից գործադրվող լիազորությունների վերաբերյալ, նրանք մանրամասնորեն տեղեկացված չեն եղել: Ավելին՝ Է.Մելքոնյանն իր ցուցմունքներում ընդգծել է, որ իմացել է՝ աշխատանքի ընդունվելու համար գումար են պահանջում, սակայն չի իմացել և իրեն չի էլ հետաքրքրել, թե ում պետք է տրվեր այդ գումարը, նույնիսկ կոնկրետ չի իմացել, թե ինչ ծառայություն է իրականացնելու¹: Բացի այդ, վերոնշյալ անձինք տեղեկացված են եղել, որ աշխատանքի ընդունվելու համար դեռևս պետք է ազգային անվտանգության ծառայության պոլիկլինիկայում համապատասխան բժշկական հետազոտություն անցնեն, իսկ կադրերի աշխատակիցներն իրականացնեն ներկայացված փաստաթղթերի հատուկ ստուգում՝ թեկնածուների համապատասխանությունը պարզելու նպատակով²:

15.1. Ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին աստիճանի դատարանի կողմից Լ.Հարությունյանին մեղսագրվող արարքը խարդախություն վերադրակելը գուտ այն պատճառաբանությամբ, որ վերջինս համապատասխան անձանցից գումար է պահանջել և ստացել ոչ թե ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գորքերի կադրերի ստորաբաժանման միջոցով սահմանապահ գորքերի ղեկավարությանը նրանց թեկնածությունը

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 81:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 73-155:

ներկայացնելու և նրանց նշանակման վերաբերյալ միջնորդելու համար, այլ հենց պայմանագրային ծառայության **ընդունելու համար**, իրավաչափ չէ, և խարդախության ու կաշառք ստանալու հանցակազմերի իրավական հատկանիշների սխալ մեկնաբանման արդյունք է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Լ.Հարությունյանի արարքում խարդախության հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. պատճառաբանվա՞ծ է արդյոք Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումն առ այն, որ ամբաստանյալ Լ.Հարությունյանին պայմանագրային գինծառայողներ նշանակելու վերաբերյալ միջնորդելու իրավասություն վերապահված լինելու հանգամանքը հաստատող որևէ ապացույց սույն քրեական գործով ձեռք չի բերվել:

17. ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ *«գումարտակի հրամանատարը պարտավոր է (...)*

- իրականացնել զինվորական ծառայության, ինչպես նաև ռազմական ուսումնական հասարակություններ ընդունվելու համար թեկնածուների ընտրությունը»:

2017 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին ուղղված փաստաբանական հարցմանն ի պատասխան տրամադրված գրության համաձայն՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի թիվ 5073 զորամասի հրամանատարի իրավունքները և պարտականությունները նախատեսված են ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 129-րդ և 130-րդ հոդվածներով, ինչպես նաև սահմանապահ զորքերի հրամանատարի կողմից հաստատված ֆունկցիոնալ պարտականություններով: Նույն գրությամբ ընդգծվել է, որ թիվ 5073 զորամասի հրամանատարի ֆունկցիոնալ պարտականությունների մեջ մտնում են նաև **ենթակա սորոսաբաժանման համար կադրերի ընտրությունը**: Ելնելով ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ստորաբաժանումներում կադրերի անհրաժեշտությունից և ծառայության առանձնահատկություններից՝ ընդունվում են նաև **սորոսաբաժանումների հրամանատարների բանավոր ներկայացումները** այս կամ այն թեկնածուի վերաբերյալ¹:

Միևնույն ժամանակ, ամբաստանյալ Լ.Հարությունյանն իր դատաքննական ցուցմունքներում ընդգծել է, որ ՀՀ զինված ուժերի ներքին

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 81:

ծառայության կանոնագրքի 129-րդ հոդվածի համաձայն՝ իր զբաղեցրած պաշտոնը համապատասխանում է *գումարարակի հրամանատարի պաշտոնին*, և իր պարտականությունների մեջ, որպես գումարտակի հրամանատար, *մերկ է թեկնածուների ընտրությունը*¹՝ զինվորական ծառայության և ռազմական ուսումնական հաստատություն ընդունվելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ 5073 զորամասում ազատ հաստիքներ են եղել, ինչի պատճառով զինծառայողների ծանրաբեռնվածությունը շատ է եղել, և հիմք ընդունելով ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով սահմանված իր պարտականությունները, ազատ հաստիքները լրացնելու համար 2014 թվականի դեկտեմբերին՝ տոներից առաջ, զինծառայողներին տեղեկացրել է, որ եթե ունեն ծանոթներ, ովքեր ցանկանում են ծառայության անցնել, կարող են նրանց ներկայացնել: Դրանից առաջ զրուցել է կադրերի գծով տեղակալ, գնդապետ Մարտիրոսյանի և գեներալ-մայոր Աբրահամյանի հետ, ովքեր ասել են, որ դիմողներ չկան և պետք է իրենք դիմորդներ գտնեն ծառայության ընդունելու համար: Այնուհետև, զինծառայողները թեկնածուներ են ներկայացրել և մինչև կադրերի բաժին նրանց ուղարկելը, զրուցել է նրանց հետ, քանի որ ցանկացել է, որ իր զորամաս ծառայության ընդունվեն նորմալ զինծառայողներ, ինչպես նաև ստուգել է թեկնածուների զինվորական գրքույկում առողջական վիճակի մասին նշումները: Թեկնածուների հետ զրուցելուց հետո, երբ նրանց մասին կազմել է դրական կարծիք, նրանց ուղարկել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի կադրերի բաժանմունք՝ դիմում գրելու: *Իր յիսագորությունը սահմանափակվել է միայն թեկնածուին կադրերի բաժանմունք ներկայացնելով*, որից հետո թեկնածուն պետք է անցներ հատուկ ուսումնասիրություն, իսկ այդ հարցերի լուծումն իր պարտականությունների մեջ չի մտել¹:

Բացի այդ, ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի կադրերի բաժանմունքի համապատասխան աշխատակիցների, այդ թվում՝ նաև նշված ոլորտը համակարգող սահմանապահ զորքերի հրամանատարի տեղակալի դատաքննական ցուցմունքներով հաստատվում է այն փաստը, որ զորամասի հրամանատարի, այդ թվում՝ Լ.Հարությունյանի կողմից *իր ղեկավարած սրորաբաժանումում ծառայության ընդունվելու համար թեկնածուներ ներկայացնելը կանխորոշել է նրանց՝ հենց փյալ սրորաբաժանումում հրամանագրվելու հանգամանքը*²:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 101-102:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 73-155:

18. Մեջբերված փաստական տվյալներից հետևում է, որ Լ.Հարությունյանն իր ղեկավարած գործառնական հանրաժեշտ կադրերով համալրելու նպատակով օրենքով սահմանված կարգով *օժտված է եղել կադրեր ընտրելու իրավասությանը*, ինչն ինքնատիքյան ենթադրում է նաև աշխատանքի ընդունելու լիազորություն ունեցող համապատասխան անձանց տվյալ թեկնածուին ներկայացնելու հնարավորություն, հակառակ պարագայում, օրենքով նախատեսված՝ գումարտակի հրամանատարի վերոնշյալ պարտականությունը կկրեր ինքնանպատակ բնույթ: Ավելին, համաձայն ազգային անվտանգության ծառայության տնօրենի գրության, ելնելով անհրաժեշտությունից և ծառայության առանձնահատկություններից՝ թեկնածուների ընդունելության հարցում ընդունվում են նաև համապատասխան *սպորտաբաժանման հրամանատարի բանավոր ներկայացումները*, որպիսին տեղի է ունեցել նաև սույն գործով: Վերոնշյալ գրությամբ ընդգծվել է նաև, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գործերում ծառայության անցնելու համար թեկնածուների ընտրության և ուսումնասիրման կարգերը սահմանված են ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի հրամաններով, որոնք ունեն գաղտնիության համապատասխան դրոշմագիր:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, գալով եզրահանգման առ այն, որ Լ.Հարությունյանի՝ պայմանագրային զինծառայողներ նշանակելու համար միջնորդելու իրավասության վերաբերյալ սույն գործով որևէ ապացույց ձեռք չի բերվել, իր դատական ակտում որևէ գնահատման և վերլուծության չի ենթարկել սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալների համակցությունը: Վերաքննիչ դատարանն իր հերթին, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ևս անդրադարձ չի կատարել վերոնշյալ հարցին:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները, որևէ կերպ չհիմնավորելով և չպատճառաբանելով իրենց դիրքորոշումը, զրկել են վերադաս ատյանին վիճարկվող դատական ակտերը վերանայման ենթարկելու և պատճառաբանված դատական ակտ կայացնելու հնարավորությունից: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումն առ այն, որ ամբաստանյալ Լ.Հարությունյանին պայմանագրային զինծառայողներ նշանակելու վերաբերյալ միջնորդելու իրավասություն վերապահված լինելու հանգամանքը հաստատող որևէ ապացույց սույն քրեական գործով ձեռք չի բերվել, պատճառաբանված չէ:

19. Ինչ վերաբերում է ամբաստանյալ Լ.Հարությունյանի պաշտպանի վճռաբեկ բողոքում բերված այն փաստարկներին, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի գրությունից հետևում է, որ

Լ.Հարությունյանը թեկնածուի ընտրության փուլում չէր կարող կանխորոշել՝ արդյոք վերջինս զինվորական ծառայության համար պիտանի կճանաչվի և կհամապատասխանի նախատեսված պայմաններին, թե ոչ, բացի այդ, Լ.Հարությունյանը ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գործերի կադրերի բաժանմունքի աշխատակիցների նկատմամբ չի ունեցել կարգադրիչ լիազորություններ, ուստի որևէ կերպ չէր կարող իր լիազորությունների շրջանակում ազդեցություն ունենալ այս կամ այն թեկնածուի ծառայության ընդունվելու գործընթացի վրա, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հանգամամբները որևէ կերպ չեն կարող ազդեցություն ունենալ արարքի որակման վրա: Այսպես՝ կաշառք ստանալու հանցակազմը ձևական է, և համապատասխան հետևանքները հանցակազմի շրջանակից դուրս են գտնվում, այլ կերպ՝ արարքի որակման առումով էական չէ՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին հնարավոր եղել է հասնել ցանկալի արդյունքի, թե ոչ: Տվյալ դեպքում էականն այն է, որ պաշտոնատար անձն իր ծառայողական լիազորությունների շրջանակներում շահագրգիռ անձի օգտին կատարի կամ մտադրություն ունենա կատարելու որոշակի գործողություններ կամ դրսևորելու անգործություն, իսկ թե հետագայում դա ինչ հետևանք կունենա, հանցակազմի հատկանիշներից դուրս է գտնվում:

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երրորդ* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ամբաստանյալ Լ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով և Ա.Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով արդարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների դիրքորոշումները:

21. Սույն գործի փաստական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Լ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ, նա լինելով ղեկավարած զորամասի պայմանագրային զինծառայողներին պաշտոնից պաշտոն տեղափոխելու միջնորդությամբ սահմանապահ գործերի հրամանատարին դիմելու իրավասությամբ օժտված պաշտոնատար անձ, Ա.Քոչարյանին հրաձիգի պաշտոնից տեղափոխելու և որպես ծառայողական ավտոմեքենայի վարորդ նշանակման ներկայացնելու համար նրանից անձամբ, որպես կաշառք, պահանջել է Երևանի կոնյակի գործարանի արտադրության՝ 160.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության «Արարատ Նաիրի» 5 հատ կոնյակ, ապա 2014 թվականի մարտի վերջին՝ զորամասի տարածքում, նրանից ստացել է ընդհանուր 105.000 ՀՀ դրամ արժողության 0,5 լիտրանոց 3 հատ «Արարատ Նաիրի» կոնյակ, որոնք

Ա.Քոչարյանը դրել է Լ.Հարությունյանի կողմից շահագործվող ծառայողական ավտոմեքենայի մեջ:

Ամբաստանյալ Ա.Քոչարյանին, համապատասխանաբար, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով¹:

Առաջին ատյանի դատարանը, Լ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող հանցավոր արարքում արդարացնելով, արձանագրել է, որ վերջինիս առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ուղղակի և միակ ապացույցն ամբաստանյալ Ա.Քոչարյանի ցուցմունքներն են, որոնց ստուգման և գնահատման արդյունքում դատարանը եկել է այն եզրահանգման, որ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից դրանցով չի հաստատվում ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքն ամբաստանյալ Լ.Հարությունյանի կողմից կատարելու հանգամանքը: Ավելին՝ ամբաստանյալ Լ.Հարությունյանի հիշյալ գործողությունների մասով ամբաստանյալ Ա.Քոչարյանի հայտնած տեղեկությունները հնարավոր չէ ստուգել այլ ապացույցների բավարար համակցությամբ: Բացի այդ, ամբաստանյալ Ա.Քոչարյանը դատաքննության ժամանակ պարզաբանել է, որ իր ենթադրությունն է եղել, որ Լ.Հարությունյանը կոնյակներն ուզել է որպես շնորհակալություն՝ իրեն ծառայողական ավտոմեքենայի վարորդ նշանակելու համար: Վերոնշյալ պատճառաբանությամբ Առաջին ատյանի դատարանն արդարացրել է նաև ամբաստանյալ Ա.Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքում²:

22. Ամբաստանյալ Ա.Քոչարյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել առ այն, որ թիվ 5073 գորամասի հրամանատար Լ.Հարությունյանը ծառայողական ավտոմեքենայի վարորդ չի ունեցել և ավտոմեքենան վարել է անձամբ, վերջինս Կ.Սարգսյանի մոտ արտահայտվել է, որ ցանկանում է վարորդ ունենալ, ուստի Կ.Սարգսյանն առաջարկել է իր թեկնածությունը: Լ.Հարությունյանն իրեն կանչել է աշխատասենյակ, մասնագիտական և այլ հարցեր ուղղել: Նույն օրն իրեն տվել է ծառայողական՝ «Նիվա Շևրոլե» մակնիշի ավտոմեքենայի բանալիները՝ ասելով, որ նշված օրվանից ինքը վարելու է նրա ավտոմեքենան: Այդ օրվա դրությամբ իրեն վարորդ նշանակելու հրաման չի եղել, սակայն ինքն ավտոմեքենան կարգի է բերել, մաքրել, սակայն չի վարել, իսկ հաջորդ օրը հրամանատար Լ.Հարությունյանի ցուցումով իրենք մեկնել են ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշեն գյուղ: Հաջորդ կամ դրա մյուս օրը,

¹ Տե՛ս սույն որոշման 5-5.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

երբ ինքը ծառայողական հարցով մտել է Լ.Հարությունյանի աշխատասենյակ, նա ասել է՝ «Ապեր, դե մի 5 հատ Նաիրի կոնյակ է պետք, կարա՞ս բերես»: Լ.Հարությունյանը հասկացրել է, որ իրեն որպես ծառայողական մեքենայի վարորդ նշանակելու համար, որպես շնորհակալություն, պետք է կոնյակ տա: Պատասխանել է՝ «վավ»: Այդ պահանջը հրամանատարը հայտնել է 2014 թվականի մարտի վերջին, սակայն ստույգ ամսաթիվը հայտնել չի կարող: Լ.Հարությունյանի ծառայողական ավտոմեքենայի մեջ կոնյակի շշերը դնելով՝ մտել է նրա աշխատասենյակ ու տեղեկացրել, որ 5 շիշ բերել չի կարողացել, քանի որ թանկ էր, սակայն նրա ավտոմեքենայի մեջ դրել է 3 շիշ «Նաիրի» կոնյակ: Նա ասել է՝ «ապրես, տղես»: Ա.Քոչարյանն ընդգծել է, որ եթե կոնյակն ինքը չտար, իր և Լ.Հարությունյանի միջև հաստատ լինելու էր լարվածություն, նա վատ էր տրամադրվելու իր հանդեպ: ***Դատաքննության ընթացքում Ա.Քոչարյանն*** ընդգծել է, որ ինքը կարծել է, որ Լ.Հարությունյանն իրենից կոնյակ է ուզում՝ որպես «շնորհակալություն» և եթե այդ կոնյակները չտար, համոզված է, որ Լ.Հարությունյանն իրեն աշխատանքից չէր հանի, սակայն իրենց հարաբերությունները կլարվեին: Նշել է, որ իր ենթադրությունն է եղել, որ Լ.Հարությունյանը կոնյակներ է ուզել իրեն աշխատանքի ընդունելու համար¹:

Ամբաստանյալ Լ.Հարությունյանը դատաքննության ընթացքում ընդհանրապես հերքել է Ա.Քոչարյանից կաշառք պահանջելու և ստանալու հանգամանքը, իսկ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներում նշել է, որ Ա.Քոչարյանին որպես վարորդ աշխատանքի ընդունելու համար նրանից կոնյակներ չի պահանջել և ստացել: Աշխատանքի ընթացքում Ա.Քոչարյանը ***հնարավոր է, որ բերել և ինչ-որ բան դրել է մեքենայի բեռնահիցիկում՝ որպես շնորհակալություն***, որը կապված չի եղել նրան որպես վարորդ աշխատանքի ընդունելու հետ²:

Վկա Կ.Սարգսյանը նախաքննության ընթացքում ընդգծել է, որ 2015 թվականի դեկտեմբերի վերջին է տեղեկացել այն մասին, որ Լ.Հարությունյանը Ա.Քոչարյանից պահանջել և ստացել է «Նաիրի» կոնյակ: Մասնավորապես, Ա.Քոչարյանը ներկայացրել է, որ 2014 թվականի մարտին Լ.Հարությունյանն իրեն ծառայողական մեքենայի վարորդ նշանակելու համար 5 շիշ «Նաիրի» կոնյակ է պահանջել, սակայն հնարավորություն չունենալով գնել պահանջված քանակը, գնել է 3 շիշ և տվել հրամանատարին: Լսելով Արթուրի այդ խոստովանությունը՝ վրդովվել է, թե ինչու այդ պահանջի մասին իրեն այդ ժամանակ չի ասել, վերջինս էլ պատասխանել է, որ չէր կարող այն չտալ, քանի որ նրա հետ պետք է

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 104-106:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 101-104:

աշխատեր: Դատաքննության ընթացքում Կ.Սարգսյանն ըստ էության պնդել է նախաքննական ցուցմունքները¹:

23. Սույն որոշման 21-22-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքների համակարգված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ա.Քոչարյանի ցուցմունքները չի դիտարկել և պատշաճ գնահատման չի ենթարկել գործում առկա, սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալների համատեքստում: Մասնավորապես, Ա.Քոչարյանի ցուցմունքներին նույնաբովանդակ ցուցմունքներ է տվել նաև Կ.Սարգսյանը, որը թեև դեպքի մասին տեղեկացել է Ա.Քոչարյանի պատմածով, այնուամենայնիվ թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության ընթացքում պնդել է դրանք: Մինևույն ժամանակ, Ա.Քոչարյանի ցուցմունքներն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ վերջինս դրանով փաստացի վկայել է ոչ միայն Լ.Հարությունյանի, այլ նաև իր կողմից կատարված հանցավոր արարքի մասին, պնդել է դրանք թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության ընթացքում, ինչպես նաև գրեթե նույնությամբ ներկայացրել է Կ.Սարգսյանին:

Ինչ վերաբերում է Լ.Հարությունյանի ցուցմունքներին, ապա նա դատարանում թեև կտրականապես բացատրել է կաշառք պահանջելու և ստանալու հանգամանքը, այնուամենայնիվ նախաքննության ընթացքում տված ցուցմունքներով ընդունել է, որ հնարավոր է, որ Ա.Քոչարյանը բերել և ինչ-որ բան դրել է մեքենայի բեռնախցիկում՝ որպես շնորհակալություն՝ ընդգծելով, սակայն, որ դա կապված չի եղել նրան որպես վարորդ աշխատանքի ընդունելու հետ:

Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշմանը, որ Ա.Քոչարյանն իր ենթադրությունն է արտահայտել, որ Լ.Հարությունյանը կոնյակներ է ուզել նրան աշխատանքի ընդունելու համար, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ կաշառք ստանալու հանցակազմն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ պաշտոնատար անձն ուղղակիորեն կաշառք է պահանջում որևէ գործողության կամ անգործության համար, այլ նաև այն դեպքում, երբ վերջինիս գործողությունները քողարկված բնույթ են կրում, այն է՝ կոնկրետ չի նշվում՝ ինչի համար է այս կամ այն գույքային պահանջը ներկայացվել, այնուամենայնիվ գործի օբյեկտիվ հանգամանքներից ակնհայտորեն բխում է, որ այն պահանջվել է շահագրգիռ անձի օգտին հենց որոշակի գործողության կամ անգործության համար:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 117-118:

Սույն գործով էական է այն, որ կոնյակները Լ.Հարությունյանի կողմից պահանջվել են Ա.Քոչարյանին ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գործերի թիվ 5073 գործառնասում ավագ վարորդի հաստիքին աշխատանքի տեղափոխելու ժամանակ, մասնավորապես, վերոնշյալ դեպքն անմիջապես նախորդել է Ա.Քոչարյանին վերը նշված հաստիքին նշանակելուն, ինչին հետևել է Լ.Հարությունյանի կողմից համապատասխան զեկուցագիր ներկայացնելը, որի հիման վրա էլ կատարվել է հրամանագրումը: Ընդ որում, Ա.Քոչարյանը պնդել է, որ բացի նշված դեպքից, Լ.Հարությունյանն այլևս երբեք նրանից որևէ գույք չի պահանջել: Բացի այդ, Ա.Քոչարյանն իր ցուցմունքներում ընդգծել է, որ Լ.Հարությունյանն իրենից կոնյակ է ուզել որպես «շնորհակալություն», և եթե այդ կոնյակները չտար, համոզված է, որ իրենց հարաբերությունները կլարվեին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ գնահատման և վերլուծության չեն ենթարկել վերոնշյալ փաստական տվյալները, հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Լ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով և Ա.Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով արդարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների դիրքորոշումները հիմնավորված և պատճառաբանված չեն:

24. Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշման 10-23-րդ կետերում մեջբերված իրավանդումները, դրանց վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն որոշման շրջանակներում մեջբերված և վերլուծված գործի փաստական տվյալները, արձանագրում է, որ ստորադաս դատարանները Լ.Հարությունյանի արարքում խարդախության հանցակազմի հատկանիշների առկայության հարցում եկել են սխալ եզրահանգման՝ արդյունքում թույլ տալով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի հատկանիշների սխալ մեկնաբանում և կիրառում:

Միևնույն ժամանակ, ստորադաս դատարանները, արձանագրելով Լ.Հարությունյանի արարքում կաշառք ստանալու հանցակազմի հատկանիշների բացակայությունը և, համապատասխանաբար, Ա.Քոչարյանի, Վ.Մուրադովի և Է.Մելքոնյանի արարքներում կաշառքի միջնորդության փորձի և կաշառք տալու փորձի հատկանիշների առկայությունը, ինչպես նաև Լ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով և Ա.Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելով, պատշաճ վերլուծության և գնահատման չեն ենթարկել գործում առկա փաստական տվյալների ամբողջությունը՝ արդյունքում կայացնելով չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտեր:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես, սխալ է մեկնաբանվել և կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածը, ինչպես նաև խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ և 358-րդ հոդվածների պահանջները, որոնք իրենց բնույթով էական են և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Լ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չեռանալու մասին ստորագրությունը պետք է թողնել անփոփոխ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, մեղադրանքի և պաշտպանության կողմից բերված փաստարկները, պետք է ամբաստանյալներ Լ.Հարությունյանի, Ա.Քոչարյանի, Է.Մելքոնյանի և Վ.Մուրադովի արարքների իրավաբանական որակման հարցում հանգի համապատասխան հետևության:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Լ.Հարությունյանի պաշտպանի՝ սույն որոշման 9.3-րդ կետում մեջբերված փաստարկներին հնարավոր կլինի անդրադառնալ միայն վերոնշյալ խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալներ Լևոն Պավլուշայի Հարությունյանի, Արթուր Էդվարդի Քոչարյանի, Վալերի Սամվելի Մուրադովի և Էդգար Ավետիսի Մելքոնյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը բեկանել

և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Լևոն Պավլուշայի Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարից հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0049/11/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետ Է. Գրիգորյանը 2019 թվականի հունվարի 11-ին կայացրել է դատապարտյալ Արմեն Սահակի Տեր-Սահակյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը դատարան չներկայացնելու մասին թիվ 4 որոշումը:

2. Դատապարտյալ Արմեն Տեր-Սահակյանի պաշտպան Ս.Սարգսյանի և ներկայացուցիչ Ա.Գալստյանի բողոքի քննության արդյունքում Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2019 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ բողոքը բավարարել է և արձանագրել ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն»

քրեակատարողական հիմնարկի պետի կողմից 2019 թվականի հունվարի 11-ին կայացված՝ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Ա.Տեր-Սահակյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը դատարան չներկայացնելու մասին թիվ 4 որոշման համար հինք հանդիսացած զեկույցներով թույլ տրված՝ Ա.Տեր-Սահակյանի իրավունքների խախտումը:

3. Վերոնշյալ որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի մայիսի 24-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ վարույթ է ընդունվել¹:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 16-ի որոշումը ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում ստացվել է 2019 թվականի ապրիլի 29-ին²:

6. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գ.Իսախանյանի վերաքննիչ բողոքը, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Առաջին արյանի դատարանի որոշմանը (...) պարճենը ՀՀ գլխավոր դատախազությունում արացվել է 2019 թվականի ապրիլի 29-ին, իսկ Առաջին արյանի դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազության պարիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության

¹ Ծանոթություն. Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

² Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 18:

վարչության դատախազ Գ.Իսախանյանի կողմից վերաքննիչ բողոք է բերվել 2019 թվականի մայիսի 10-ին:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազության պարիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գ.Իսախանյանի կողմից Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը ժամկետանց է, քանի որ այն բերվել է ինչպես Առաջին ատյանի դատարանի որոշումը հրապարակվելու պահից, այնպես էլ այն ՀՀ գլխավոր դատախազությունում արացվելու օրվանից ավելի քան տասն օր հետո (ՀՀ գլխավոր դատախազությունում արացվելու օրվանից տասնմեկ օր հետո), այսինքն չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետները»¹:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման տասնօրյա ժամկետի լրանալը համընկել է ոչ աշխատանքային օրվա հետ, մասնավորապես, 2019 թվականի մայիսի 9-ի, ուստի՝ բողոքը բերվել է հաջորդ աշխատանքային օրը՝ նույն թվականի մայիսի 10-ին, հետևաբար, Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոքը բերվել է ժամկետի պահպանմամբ:

8. Վերոշարադրյալի հիման վրա, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 24-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք ՀՀ գլխավոր դատախազության պարիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 22-23:

դատախազ Գ.Իսախանյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

10. ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *«Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ (...) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ *«Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է՝*

(...) բողոքարկել դատարանի դատավճիռները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումներ»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից հետևում, որ դատախազը, լինելով հանրային իշխանության մարմին, քրեական դատավարությունում հանդես է գալիս որպես մեղադրանքի կողմ և օժտված է որոշակի լիազորություններով, որոնց թվում է նաև՝ դատարանի դատավճիռները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումները բողոքարկելու լիազորությունը: Դատական ակտերը բողոքարկելու դատախազի իրավունքը սերտորեն փոխկապված է դատախազության ընդհանուր գործառույթի հետ, քանի որ այն օրենքի կիրառումն ապահովելու և միևնույն ժամանակ արդարադատության համակարգն ավելի արդյունավետ դարձնելուն օժանդակող միջոցներից մեկն է¹:

10.1 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին: (...) Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը (...)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *«առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հասարարությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով դատախազի՝ դատական ակտերի բողոքարկման գործառույթը, միևնույն ժամանակ նախատեսել է դրա իրականացման

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Նարեկ Հարությունյանի գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՆԴ/0081/01/14 որոշումը:

Ժամանակային սահմանափակում: Ընդ որում, որպես նշված գործառույթի ապահովման երաշխիք՝ օրենսդիրը սահմանել է նաև հիշյալ սահմանափակման կիրառման հստակ կանոններ: Այսպես, ընդհանուր կանոնի համաձայն՝ ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքը սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին: Բողոքարկման ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե վերաքննիչ բողոքարկման ժամկետի վերջին օրը համընկել է ոչ աշխատանքային օրվան, իսկ բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստային առաքման միջոցով կամ առձեռն դատարանին հանձնվել է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 16-ի որոշումը ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է **2019 թվականի ապրիլի 29-ին**¹,

- Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքը դատախազ Գ.Իսախանյանի կողմից բերվել է **2019 թվականի մայիսի 10-ին**²:

- Վերաքննիչ դատարանը դատախազ Գ.Իսախանյանի բողոքը թողել է առանց քննության՝ նշելով, որ վերաքննիչ բողոքը բերվել է այն ՀՀ գլխավոր դատախազությունում ստանալու օրվանից ավելի քան տասն օր հետո³:

12. Վերլուծելով վերոշարադրյալ փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է 2019 թվականի ապրիլի 29-ին, հետևաբար վերաքննիչ բողոք բերելու ժամկետը, որոշումը ստանալուն հաջորդող օրվանից՝ 2019 թվականի ապրիլի 30-ից հաշվարկելու դեպքում, վերջանում էր նույն թվականի մայիսի 9-ին և նկատի ունենալով, որ ժամկետի լրանալը համընկնում էր ոչ աշխատանքային օրվան, ժամկետի վերջին օրը պետք է հաշվվեր դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ 2019 թվականի մայիսի 10-ը⁴: Ուստի, Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքը, դատախազ Գ.Իսախանյանը 2019 թվականի մայիսի 10-ին վերաքննիչ դատարան ուղարկելով, այն ներկայացրել է սահմանված ժամկետում:

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁴ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ 2019 թվականի մայիսի 9-ը հանդիսացել է ոչ աշխատանքային օր:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով այն, որ վերաքննիչ բողոքարկման ժամկետի վերջին օրը՝ 2019 թվականի մայիսի 9-ը ոչ աշխատանքային օր լինելու պատճառով բողոք բերելու վերջին օր պետք է դիտարկվեր նույն թվականի մայիսի 10-ը, ոչ իրավաչափ հետևություն է արել բողոքը ժամկետանց լինելու մասին:

13. Ուստի, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գ.Իսախանյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

14. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 24-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար¹:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի դատախազի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-րդ և 423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Արմեն Սահակի Տեր-Սահակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ/0152/01/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահույթյամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹՎԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալներ Արման Արարատի Մաղաթյանի և Արքա Սարիվանի Մաղաթյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնում 2019 թվականի փետրվարի 11-ին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 46154519 քրեական գործը և հետագա նախաքննության կատարման համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչություն:

Նախաքննության մարմնի որոշումներով Արման Մաղաթյանը և Արքա Մաղաթյանը ներգրավվել են որպես մեղադրյալ. Արման

Մադաթյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով, 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, իսկ Արքա Մադաթյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով և 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

Նույն քրեական գործով որպես մեղադրյալ են ներգրավվել նաև Վահան Ստեփանի Իսահակյանը և Անդրանիկ Վոլոդյայի Հարությունյանը:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի մարտի 12-ի և 15-ի որոշումներով համապատասխանաբար մեղադրյալներ Արման Մադաթյանի և Արքա Մադաթյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2019 թվականի հոկտեմբերի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ մեղադրյալներ Արման Մադաթյանի և Արքա Մադաթյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ: Նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալ Արքա Մադաթյանի նկատմամբ կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու վերաբերյալ նրա պաշտպան Ց.Մարգարյանի միջնորդությունը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ քրեական գործն ըստ ընդդատության ուղարկվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

3. Արման Մադաթյանի պաշտպան Ա.Ալիխանյանի և Արքա Մադաթյանի պաշտպան Ց.Մարգարյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ բողոքները բավարարել է, Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել, մեղադրյալներ Արման Մադաթյանի և Արքա Մադաթյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացրել է և նրանց անհապաղ ազատ արձակել:

4. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Արման և Արքա Մադաթյանները՝ խնդրելով վճռաբեկ բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Արման Մադաթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով, 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «*Իյր ընկերներ՝ Անդրանիկ Հարությունյանի, Վահան Բասահյանի և Արքա Մադաթյանի հետ նախնական համաձայնությամբ, 2019 թվականի փետրվարի 11-ին՝ ժամը 03:00-ի սահմաններում, խմբի կազմում, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ուղեփակոցի ելքի հարվածում Վահան Բասահյանի մորաքրոջ որդի Սահակ Խաչատրյանի նկարմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, դեպի Կուրայքի մարզի Եղվարդ քաղաք տեղափոխելու հանցավոր մտադրությամբ, Ս.Խաչատրյանի կողմից վարվող «Հյունդայի Սոլարիս» մակնիշի ավտոմեքենայով գաղտնի առևանգել է վերջինիս և հասնելով Երևան քաղաքի Մալաթիա Սերասրիս վարչական շրջանում գրնվող չպարզված վայր՝ վերջինիս ազգական Գարուշ Խաչատրյանին սեփականության իրավունքով պարկանող առանձնապես խոշոր չափերի՝ «Պորշ Կայեն» մակնիշի ավտոմեքենայի նկարմամբ իրավունքը իրենցից մեկին հանձնելու պահանջով, նույն խմբի կազմում բռնություն է գործադրել Ս.Խաչատրյանի նկարմամբ, ապա շարունակելով իր հանցավոր նպատակին հասնելու մտադրությունը՝ Ս.Խաչատրյանին իր կամքին հակառակ, նույն տրանսպորտային միջոցով հասցնելով Կուրայքի մարզի Եղվարդ քաղաքի Երևանյան 10 հասցե՝ նույն խմբի կազմով շարունակել է Գարուշ Խաչատրյանին սեփականության իրավունքով պարկանող առանձնապես խոշոր չափերի՝ «Պորշ Կայեն» մակնիշի ավտոմեքենան իրենցից մեկին հանձնելու գույքային պահանջ ներկայացնել Սահակ Խաչատրյանին»¹:*

6. Արքա Մադաթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով և 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «*Իյր ընկերներ՝ Անդրանիկ Հարությունյանի, Վահան Բասահյանի և Արման Մադաթյանի հետ նախնական համաձայնությամբ 2019 թվականի փետրվարի 11-ին՝ ժամը 03:00-ի սահմաններում, խմբի կազմում «Զվարթնոց» միջազգային*

¹ Տե՛ս գործի նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 94-97:

օղանալվակայանի ուղեփակոցի ելքի հատվածում Վահան Բասահայանի մորաքրոջ որդի Սահակ Խաչատրյանի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, դեպի Կուրայքի մարզի Եղվարդ քաղաք տեղափոխելու հանցավոր մտադրությամբ, Ս.Խաչատրյանի կողմից վարվող «Հյունդայի Սոլարիս» մակնիշի ավտոմեքենայով գաղտնի առևանգել է վերջինիս և հասնելով Երևան քաղաքի Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանում գրնվող չպարզված վայր՝ վերջինիս ազգական Գարուշ Խաչատրյանին սեփականության իրավունքով պարկանող առանձնապես խոշոր չափերի՝ «Պորշ Կայեն» մակնիշի ավտոմեքենայի նկատմամբ իրավունքը իրենցից մեկին հանձնելու պահանջով, նույն խմբի կազմում բռնություն է գործադրել Ս.Խաչատրյանի նկատմամբ, սպա շարունակելով իր հանցավոր նպատակին հասնելու մտադրությունը՝ Ս.Խաչատրյանին՝ իր կամքին հակառակ, նույն տրանսպորտային միջոցով հասցնելով Կուրայքի մարզի Եղվարդ քաղաքի Երևանյան 10 հասցե՝ նույն խմբի կազմով շարունակել է Գարուշ Խաչատրյանին սեփականության իրավունքով պարկանող առանձնապես խոշոր չափերի՝ «Պորշ Կայեն» մակնիշի ավտոմեքենան իրենցից մեկին հանձնելու գույքային պահանջը, որտեղ իր մտք պահած, գործով չպարզված, որպես զենք օգտագործվող դանակի գործադրմամբ հարձակվել է Ս.Խաչատրյանի վրա և ավազակությամբ հատիչրակել՝ 750.000 ՀՀ դրամ արժողությամբ, 49 գրամ զանգվածով «Լորի» գործվածքով ոսկյա շղթան և 1.125.000 ՀՀ դրամ արժողությամբ, 49 գրամ զանգվածով, «Հիսուս Քրիստոսի» պարկերով ոսկյա խաչը՝ Սահակ Խաչատրյանին պարձատելով ընդհանուր խոշոր չափի հասնող 1.875.000 ՀՀ դրամի գույքային և բարոյական վնաս, որոնք ընդգրկված չեն եղել խմբի անդամներ՝ Անդրանիկ Հարությունյանի, Վահան Բասահայանի և Արման Մադաթյանի դիմազրկության մեջ»¹:

7. Առաջին ատյանի դատարանը, անփոփոխ թողնելով մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը, փաստել է. «(...) [Ք/ննարկելով մեղադրյալներ Արման Արարատի Մադաթյանի և Արքա Սարիվանի Մադաթյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորման հիմնավորվածության հարցը՝ Դատարանը նախ՝ արձանագրում է, որ մեղադրյալներին մեղաազրված արարքների կատարմանը նրանց առնչվելու վերաբերյալ կասկածը պահպանվել և շարունակում է մնալ հիմնավոր:

Ինչ վերաբերում է մեղադրյալներին կալանքի փակ պահելու հիմքերի հիմնավորվածությանը, սպա իրենց համակցության մեջ հաշվի առնելով մեղադրյալներին մեղաազրվող հանցագործությունների բնույթը, մեղաազրվող հանցագործությունների վտանգավորության աստիճանը,

¹ Տե՛ս գործի նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 98-103:

մասնավորապես՝ այն, որ նրանք մեղադրվում են մեծամասամբ ծանր հանցագործություններ կատարելու մեջ (...), որոնց համար նախատեսված է ազատագրվման ձևով պարիժ (...), Գատարանը փաստում է, որ բարձր է հավանականությունը, որ նրանք կարող են թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, ինչպես նաև կատարել նոր հանցավոր արարք, բացի այդ ճնշում գործադրել դատավարության մյուս մասնակիցների վրա: Վկայակոչված փաստարկները Գատարանի գնահատմամբ ծանրակշիռ են, բխում են գործի նյութերից և բավարար են՝ մեղադրյալների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վերագրյալ գործողությունները կատարելու հավանականության վերաբերյալ արժանահավասար հետևության հանգելու համար:

(...) Գատարանը գրնում է, որ քրեական գործում առկա նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալների՝ ազատության մեջ հայրնվելու դեպքում ոչ պարզաձև վարքագիծ դրսևորելու, մասնավորապես՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և նոր հանցավոր արարք կատարելու հավանականությունը բարձր է: Հեղևարար, Գատարանը հանգում է նրան, որ մեղադրյալներ Արման Արարարի Մադաթյանի և Արքա Մարիվանի Մադաթյանի նկարմամբ կալանավորման ձևով կիրառված խափանման միջոցը վերացնելու կամ փոփոխելու հիմքեր առկա չեն: Այլ կերպ՝ նրանց նկարմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը պերք է թողնել անփոփոխ:

Գատարանն անդրադառնալով Արքա Մադաթյանի պաշտպան Յոլակ Մարգարյանի կողմից արված միջնորդությանը՝ (...) գնահատելով սույն գործով առկա փաստական տվյալները, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի համարեքարում քննարկված՝ մեղադրյալին կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները, գրնում է, որ սույն դեպքում դրանք բավարար են մեղադրյալին կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու համար: (...)»¹:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը, Առաջին ապյանի դատարանի որոշման (...) հիմնավորումները դիտարկելով (...) [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի] և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, գրնում է, որ այդ հիմնավորումները չեն բխում դրանցից, որպիսի պայմաններում այդ հիմնավորումներն ընդունելի չեն Վերաքննիչ դատարանի համար:

¹ Տե՛ս գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 24-28:

Վերաքննիչ դատարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է մասնավորապես այն հանգամանքով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մեղադրյալի հավանական գործողությունների մասին Առաջին արյանի դատարանի հետևությունները հիմնված չեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա, ուստի Առաջին արյանի դատարանի հիմնավորումներն ամենևին բավարար չեն մեղադրյալներ Արման Մադաթյանի և Արքա Մադաթյանի ազատության կանխավարկածը հաղթահարելու և նրանց նկարմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումն անփոփոխ թողնելու համար, իսկ նման պայմաններում մեղադրյալներ Արման Մադաթյանին և Արքա Մադաթյանին ազատությունից զրկելը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիման վրա ձևավորված նախադեպային իրավունքի իմաստով կոհիբի կամայականություն: Վերաքննիչ դատարանը միաժամանակ հարկ է համարում նկատել, որ սույն գործով չեն ներկայացվել բավարար փաստական փյվյալներ առ այն, որ խափանման մյուս միջոցները քրեական գործով վարույթի ընթացքում չեն կարող ապահովել մեղադրյալներ Արման Մադաթյանի և Արքա Մադաթյանի պարզաձ վարքագիծը:

(...) Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս հաշվի է առնում նաև մեղադրյալներ Արման Մադաթյանի և Արքա Մադաթյանի անձը, մասնավորապես այն, որ Արման Մադաթյանը երիտասարդ է, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրականորեն, ունի մշտական բնակության վայր, «Ֆիդայիներ» միության նախագահի կողմից պարզևարտվել է «Հայապահպանության համար» պարվոգրով, հայրը՝ Արարատ Մադաթյանը, Արցախյան պարերազմի մասնակից է:

(...)

[Ի]նչ վերաբերում է մեղադրյալներ Արման Մադաթյանի և Արքա Մադաթյանի նկարմամբ որևէ այլ խափանման միջոց ընտրելուն, ապա Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ ԱՐԳ/0152/01/19 (...) քրեական գործը գրնվում է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի վարույթում, գրնում է, որ փյվյալ դեպքում ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանը կարող է ըստ անհրաժեշտության նրանց նկարմամբ որևէ այլ խափանման միջոց ընտրել: (...)¹:

¹ Տե՛ս գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 102-108:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածը, ինչն ազդել է գործի ելքի վրա՝ կայացվել է անօրինական և անհիմն դատական ակտ, որը հակասում է Վճռաբեկ դատարանի կողմից մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը վերլուծության չի ենթարկել Արման և Արքա Մադաթյանների անձը, նրանց մեղաագրվող հանցանքների տեսակը, դրանց ծանրությունն ու վտանգավորության աստիճանը, կոնկրետ հանցանքի կատարման պահին նրանց դրսևորած վարքագիծը, որպիսի հանգամանքները ևս էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելու հարցում: Մինչդեռ, հաշվի առնելով մեղադրյալներին մեղաագրվող հանցանքների բնույթը և նրանց անձը՝ առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ մնալով ազատության մեջ՝ նրանք կարող են անօրինական ազդեցություն ունենալ դատավարության մյուս մասնակիցների վրա:

9.1. Բողոք բերած անձն ընդգծել է նաև, որ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելիս հիմք է ընդունել Արման և Արքա Մադաթյանների անձը, մասնավորապես այն, որ Արման Մադաթյանը երիտասարդ է, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, ունի մշտական բնակության վայր, «Ֆիդայիներ» միության նախագահի կողմից պարգևատրվել է «Հայապահպանության համար» պատվոգրով, հայրը Արցախյան պատերազմի մասնակից է, սակայն Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի հիմնավորել, թե Արման Մադաթյանի հոր՝ Արցախյան պատերազմի մասնակից լինելն ինչ առնչություն կարող է ունենալ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի տեսակն ընտրելու հարցում և ինչքանով է տվյալ հանգամանքն ազդում նրա պատշաճ վարքագիծն ապահովելու ուղղությամբ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն առհասարակ չի անդրադարձել Արքա Մադաթյանի անձը բնութագրող տվյալներին՝ մասնավորապես գնահատականի չի արժանացրել այն, որ վերջինս ՌԴ-ում դատապարտվել է ազատազրկման մի շարք հանցագործությունների համար և պատիժը կրելուց ազատվել է 2018 թվականին, որպիսի հանգամանքը ևս վկայում է անձի բարձր հանրային վտանգավորության, ինչպես նաև գործի քննությանը խոչընդոտելու հավանականության մասին:

9.2. Բողոքաբերի կարծիքով, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն, որ դատաքննությունը դեռևս չի սկսվել, որևէ ապացույց

դատաքննությամբ չի հետազոտվել, մինչդեռ հաշվի առնելով ինչպես մեղադրյալներին մեղսագրվող հանցանքների բնույթը, այնպես էլ նրանց անձը՝ առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ մնալով ազատության մեջ՝ վերջիններս կարող են անօրինական ազդեցություն ունենալ դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումն ու Արման Մադաթյանի և Արքա Մադաթյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Արման և Արքա Մադաթյանների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

12. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար. (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «1.Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և անձնական ազատության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: (...):»:

Նույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խափանման միջոց կարող է կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չնեղկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պարասխանատվությունից և նշանակված պարիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկարումամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1) վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության ստրիճանը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը. (...):»:

13. Մեջբերված տրամերի վերլուծության շրջանակներում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, հարուցված քրեական գործի, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայություն և այլն) վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝

հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով¹:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն *Արամ Ճուղորյանի* վերաբերյալ գործով որոշմամբ փաստել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հասարակում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված՝ մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական փոխախնդրություններ»²:

14. Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում անդրադառնալով անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելիս նրան վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը հաշվի առնելու կարևորությանը, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ թեև մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս: Մեղսագրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ

¹ Տե՛ս, մասնավորապես, Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, ԱՎԳ/0022/06/08, ԼԳ/0197/06/08, ԵԿԳ/0580/06/09, ԵԿԳ/0678/06/10, ՏԳ/0052/06/14, ԵԱԲԳ/0386/06/15 և այլ գործերով կայացված որոշումները:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Ճուղորյանի* վերաբերյալ գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը:

անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին¹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- **Արման Մաղաթյանին** մեղադրանք է առաջադրվել՝ (ա) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, զենքի գործադրմամբ, շահադիտական դրդումներով մարդուն գաղտնի առևանգելու համար, (բ) առանձնապես խոշոր չափերով շորթում կատարելու համար²,

- **Արքա Մաղաթյանին** մեղադրանք է առաջադրվել՝ (ա) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, խոշոր չափի զույք հափշտակելու նպատակով, զենքի գործադրմամբ ավագակություն կատարելու համար, (բ) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, զենքի գործադրմամբ, շահադիտական դրդումներով մարդուն գաղտնի առևանգելու համար, (գ) առանձնապես խոշոր չափերով շորթում կատարելու համար³,

- Առաջին ատյանի դատարանը, օրենքով սահմանված կարգով գործը վարույթ ընդունելուց հետո անդրադառնալով մեղադրյալներ Արման և Արքա Մաղաթյանների խափանման միջոցի հարցին, 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ նրանց նկատմամբ կիրառված կալանավորումը թողել է անփոփոխ՝ եզրահանգելով, որ բարձր է հավանականությունը, որ նրանք կարող են ճնշում գործադրել դատավարության մյուս մասնակիցների վրա, թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, կատարել նոր հանցավոր արարք՝ հաշվի առնելով, մասնավորապես, վերջիններիս մեղսագրվող հանցագործությունների բնույթն ու վտանգավորության աստիճանը՝ այն, որ նրանք մեղադրվում են ծանր հանցանքներ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է ազատագրկման ձևով պատիժ: Առաջին ատյանի դատարանն ընդգծել է, որ վերոնշյալ փաստարկները բավարար են մեղադրյալների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կատարելու հավանականության վերաբերյալ արժանահավատ հետևության գալու համար⁴,

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վահագն Պողոսյանի վերաբերյալ գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ1/0062/06/12 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

- Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնված չեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա, և դրանք բավարար չեն մեղադրյալներ Արման Մադաթյանի և Արքա Մադաթյանի ազատության կանխավարկածը հաղթահարելու և նրանց նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումն անփոփոխ թողնելու համար: Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ որոշում կայացնելիս հաշվի է առնում նաև մեղադրյալներ Արման Մադաթյանի և Արքա Մադաթյանի անձը, մասնավորապես այն, որ Արման Մադաթյանը երիտասարդ է, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, ունի մշտական բնակության վայր, «Ֆիդայիներ» միության նախագահի կողմից պարզևատրվել է «Հայապահպանության համար» պատվոգրով, հայրը՝ Արարատ Մադաթյանը, Արցախյան պատերազմի մասնակից է¹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալներ Արման Մադաթյանի և Արքա Մադաթյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց անփոփոխ թողնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատման չի ենթարկել մի շարք հանգամանքներ:

Մասնավորապես, խափանման միջոցը հարցը լուծելիս Առաջին ատյանի դատարանը, հանդես գալով որպես գործով վարույթն իրականացնող մարմին, գնահատման է ենթարկել մեղադրյալների կողմից գործի քննության ընթացքում ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, այն է՝ դատավարության մասնակիցների վրա ճնշում գործադրելու, վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և նոր հանցավոր արարք կատարելու հնարավոր ռիսկերը: Այսպես՝ անհրաժեշտ է նկատել, որ Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրյալների խափանման միջոցի հարցը լուծելիս սույն գործով դատաքննությունը դեռևս չէր սկսվել, որևէ ապացույց դատաքննությամբ չէր հետազոտվել, իսկ Արման և Արքա Մադաթյաններին մեղսագրվում են մի շարք հանցավոր արարքներ, որոնք ենթադրաբար կատարվել են խմբի կազմում (չորս անդամ), հետևաբար Առաջին ատյանի դատարանը, գնահատելով գործի հանգամանքները, բավարար հիմքեր է ունեցել ենթադրելու, որ վերջիններս, մնալով ազատության մեջ, կարող էին անօրինական ազդեցություն ունենալ դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ:

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Միևնույն ժամանակ, մեղադրյալներին մեղսագրվում են մի շարք ծանր հանցագործություններ, մասնավորապես՝ Արման Մադայանին՝ ծանրացուցիչ հանգամանքներում անձի առևանգում և շորթում ենթադրյալ հանցավոր արարքների կատարում, իսկ Արքա Մադայանին, բացի վերոնշյալներից, նաև ծանրացուցիչ հանգամանքներում ավագակության կատարում: Վճռաբեկ դատարանն իր նախադեպային դիրքորոշումներում բազմիցս նշել է, որ մեղսագրվող հանցավոր արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը և ակնկալվող պատժի խստությունը, գործի նյութերից բխող մյուս հանգամանքների համատեքստում, հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր:

Ուստի, հիմք ընդունելով վերոշարադրյալը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ մեղադրյալների հնարավոր ոչ պատշաճ վարքագիծ վերաբերյալ ենթադրությունները հիմնավոր են և բխում են գործի փաստական տվյալների ամբողջությունից:

17. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ որոշում կայացնելիս հաշվի է առնում նաև մեղադրյալների անձը, ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանը շարադրել է միայն Արման Մադայանի անձը բնութագրող տվյալները, որոնք, սակայն, սույն որոշմամբ արձանագրված փաստական տվյալների պայմաններում չեն կարող բացառել ազատության մեջ գտնվելու դեպքում վերջինիս կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու հավանականությունը: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը հաշվի է առել նաև Արման Մադայանի հոր՝ Արարատ Մադայանի՝ Արցախյան պատերազմի մասնակից լինելու հանգամանքը, որը խափանման միջոցի հարցը լուծելիս որևէ նշանակություն չէր կարող ունենալ:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը որևէ գնահատման չի ենթարկել Արքա Մադայանի անձը, մասնավորապես այն, որ վերջինս ունի չմարված դատվածություն՝ նախկինում նույնաբնույթ հանցավոր արարքներ կատարելու համար¹, որպիսի հանգամանքը կարևոր նշանակություն ունի ազատության մեջ գտնվելու դեպքում նրա կողմից պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը գնահատելու տեսանկյունից:

18. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և վերացնելով մեղադրյալների նկատմամբ անփոփոխ թողնված խափանման միջոց կալանավորումը, պատշաճ

¹ Տե՛ս գործի նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 116-117:

վերլուծության չի ենթարկել մեղադրյալներին մեղսագրվող արարքների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, վերջիններիս անձը, որոնք գործի նյութերից բխող տվյալների համատեքստում ողջամտորեն կարող էին վկայել մեղադրյալների՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու հավանականության մասին:

Նման պայմաններում, Առաջին ատյանի դատարանի այն եզրահանգումը, որ գործի քննության ընթացքում մեղադրյալներ Արման և Արքա Մադաթյանների կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու հավանականությունը բարձր է, հիմնավոր է և բխում է գործի նյութերում առկա փաստական տվյալներից:

18.1. Ավելին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի՝ մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքն անփոփոխ թողնելու մասին որոշումը, հաշվի չի առել այն հանգամանքը, որ վերոնշյալ որոշումը կայացնելիս Առաջին ատյանի դատարանը հանդես է եկել որպես վարույթն իրականացնող մարմին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ որպես վարույթն իրականացնող մարմին հանդես եկող Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելիս Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը պետք է հիմնված լիներ ծանրակշիռ փաստական հանգամանքների վրա և ունենար պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ: Հակառակ մտտեցումը, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, կարող է իր բացասական ազդեցությունը թողնել առաջին ատյանի դատարանում հիմնական քրեական գործի քննության բնականոն ընթացքի վրա՝ դրանով իսկ սահմանափակելով առաջին ատյանի դատարանի ներքին անկախությունը: Մինչդեռ, տվյալ դեպքում որպես վարույթն իրականացնող մարմին հանդես եկող Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելիս Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը չի համապատասխանել վերոնշյալ չափանիշին:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արման և Արքա Մադաթյանների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

19. Այսպիսով, անփոփոխվելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջների խախտում, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մինևույն

Ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արման և Արքա Մադաթյանների նկատմամբ կալանավորումն անփոփոխ թողնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, մեղադրյալների նկատմամբ խափանման միջոցի հարցը քննելիս Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատման և վերլուծության է ենթարկել գործի փաստական հանգամանքների ամբողջությունը, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշմանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալներ Արման Արարատի Մադաթյանի և Արքա Սարիվանի Մադաթյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ նրանց նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0026/15/09

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹՎԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դատապարտյալ Ռաֆայել Գևորգի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման դեմ պաշտպան Արսեն Մկրտչյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճռով Ռաֆայել Գևորգի Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում, և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով՝ առանց գույքի բռնագրավման: Պատժի սկիզբը հաշվվել է 2008 թվականի հունիսի 4-ից:

Ռ.Խաչատրյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անսկզբի՝ մինչև դատավճի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատապարտյալ Ռ.Խաչատրյանին պատժի հետագա կրումից ազատելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդության հիման վրա, վերջինս, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ, պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդության հիմքով, ազատվել է պատժի չկրած մասը՝ 5 (հինգ) տարի 1 (մեկ) ամիս 13 (տասներեք) օր ազատագրվումը կրելուց:

Դատախազ Զ.Ստեփանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, 2009 թվականի մայիսի 8-ի որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 21-ի որոշումը բեկանել է՝ մերժելով Ռ.Խաչատրյանին պատժի հետագա կրումից ազատելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը:

Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 29-ի որոշմամբ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի մայիսի 8-ի որոշման դեմ դատապարտյալ Ռ.Խաչատրյանի պաշտպան Ռ.Թովմասյանի կողմից բերված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ դատապարտյալ Ռ.Խաչատրյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2. 2018 թվականի դեկտեմբերի 10-ին Ռ.Խաչատրյանի պաշտպան Ա.Մկրտչյանը Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշման դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ բողոքը թողնվել է առանց քննության:

3. 2019 թվականի մարտի 27-ին Ռ.Խաչատրյանի պաշտպան Ա.Մկրտչյանը Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ դատապարտյալ Ռ.Խաչատրյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում՝ վերջինիս գտնվելու վայրն անհայտ լինելու և նրա կողմից պատիժը կրելուց խուսափելու հիմքերով¹:

4.1. 2009 թվականի դեկտեմբերի 30-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնից Առաջին ատյանի դատարան գրություն է ստացվել այն մասին, որ Ռ.Խաչատրյանը մեկնել է Ֆրանսիայի Հանրապետություն², իսկ 2010 թվականի հունիսի 25-ին՝ գրություն այն մասին, որ Ռ.Խաչատրյանը Ֆրանսիայում ձերբակալվել է և վերցվել մինչէքստրադիցիոն կալանքի³:

4.2. 2010 թվականի դեկտեմբերի 17-ին Առաջին ատյանի դատարանում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնից ստացված գրության համաձայն՝ ՀՀ ոստիկանության Ինտերպոլի Ազգային կենտրոնական բյուրոյից ստացվել է գրություն առ այն, որ 2010 թվականի նոյեմբերի 23-ին Ֆրանսիայի Ռիոմի վերաքննիչ դատարանը մերժել է ՀՀ իրավասու մարմինների՝ Ռ.Խաչատրյանին արտահանձնելու վերաբերյալ միջնորդությունը⁴:

5. Ռ.Խաչատրյանի պաշտպան Ա.Մկրտչյանը 2018 թվականի նոյեմբերի 16-ին դիմել է Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով տրամադրել նույն դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումն ու դրան առնչվող փաստաթղթերը⁵, որոնք վերջինիս տրամադրվել են 2018 թվականի նոյեմբերի 30-ին⁶:

6. Ռ.Խաչատրյանի պաշտպան Ա.Մկրտչյանն Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշման դեմ 2018 թվականի դեկտեմբերի 10-ին ներկայացրած վերաքննիչ բողոքում միջնորդել է նաև հարգելի համարել բողոք բերելու բաց թողնված ժամկետը՝ Ռ.Խաչատրյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման մասին պաշտպանական կողմին 2018 թվականի նոյեմբերի 30-ին հայտնի դառնալու պատճառաբանությամբ⁷:

¹ Տե՛ս նյութեր, թերթ 29:

² Տե՛ս նյութեր, թերթ 40:

³ Տե՛ս նյութեր, թերթ 55:

⁴ Տե՛ս նյութեր, թերթ 58:

⁵ Տե՛ս նյութեր, թերթ 77:

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ Տե՛ս նյութեր, թերթ 87:

7. Վերաքննիչ դատարանը 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ պաշտպան Ա. Մկրտչյանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ արձանագրելով հետևյալը. «(...) [Այն դեպքում, երբ շահագրգիռ անձը տեղեկանում է (իրական հնարավորություն է ունենում տեղեկանալ) դատական ակտի առկայության մասին, ապա դրանից հետո նրա կողմից դատական ակտը բողոքարկելու ժամկետները չեն կարող անսահմանափակ լինել, քանի որ հակառակ մտրեցումը կհակասի *res judicata* սկզբունքին, որը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը՝ որպես իրավական որոշակիության արդյունք, ենթակա է հարգանքի: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նման իրավիճակներում, երբ շահագրգիռ անձը տեղեկանում է (իրական հնարավորություն է ունենում տեղեկանալ) դատական ակտի առկայության մասին և, չունենալով իր տրամադրության տակ, ցանկանում է վերաքննության կարգով բողոքարկել այն, ապա այն բողոքարկելու ժամկետների ընթացքում առնվազն պետք է միջոցներ ձեռնարկի փյվյալ դատական ակտն իր տրամադրության տակ ունենալու ուղղությամբ (օրինակ՝ դիմում ներկայացնի իրավասու մարմնին՝ դատական ակտը սրանալու համար), որից հետո սրանալով դատական ակտը՝ օրենքով նախատեսված ժամկետում ներկայացնի վերաքննիչ բողոք:

Վերոգրյալի համարեքսպում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ շահագրգիռ կողմի (մասնավորապես՝ հետախուզման մեջ գրավող դատապարտյալի) կողմից բողոքարկվող դատական ակտն իր տրամադրության տակ ունենալու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու (օրինակ՝ դատական ակտը սրանալու համար իրավասու մարմնին չդիմելու) հետևանքով դատական ակտն իր տրամադրության տակ ուշ ունենալը չի կարող համարվել վերաքննիչ բողոք բերելու սահմանված ժամկետը բաց թողնելու հարգելի պարճատ և հիմք հանդիսանալ բաց թողնված ժամկետը վերականգնելու համար: Հակառակ մտրեցման պարագայում կարող է սրացվել մի իրավիճակ, երբ շահագրգիռ անձը, տեղեկանալով դատական ակտի առկայության մասին, դրա պարճներ սրանալու իր իրավունքից ցանկանա օգտվել միայն մի քանի տարի անց (ինչպես սույն դեպքում) և սրանալով դատական ակտի պարճներ՝ դրա դեմ ներկայացնի վերաքննիչ բողոք, ինչը Վերաքննիչ դատարանի գնահատմամբ անթույլատրելի է:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ բողոքարկվող Որոշման կայացման ժամանակ փաստարան Արսեն Մկրտչյանը չի հանդիսացել դատապարտյալ Ռաֆայել Խաչատրյանի պաշտպանը, հետևաբար նրա համար Որոշման դեմ

վերաքննիչ բողոք բերելու ժամկետները պետք է հաշվարկվեն նույն կերպ, ինչ դատապարտյալ Ռաֆայել Խաչատրյանի դեպքում:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը դատապարտյալ Ռաֆայել Խաչատրյանի պաշտպան Արսեն Մկրտչյանի կողմից բաց չի թողնվել հարգելի պարճառով, քանի որ Ռաֆայել Խաչատրյանը, դեռևս 2010 թվականից տեղյակ լինելով բողոքարկվող Որոշման առկայության մասին, շուրջ 8 տարի միջոցներ չի ձեռնարկել տվյալ դատական ակտն իր տրամադրության տակ ունենալու ուղղությամբ, մասնավորապես՝ դիմում չի ներկայացրել իրավասու մարմնին՝ դատական ակտը սրանալու համար (դատական ակտը սրանալու համար Ռաֆայել Խաչատրյանի պաշտպան Արսեն Մկրտչյանը դատական ակտը կայացրած դատարան է դիմել միայն 2018 թվականի նոյեմբերի 16-ին):

Վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին պաշտպան Արսեն Մկրտչյանի միջնորդությունը մերժելու պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերջինի կողմից Որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը ժամկետանց է, քանի որ այն բերվել է ինչպես բողոքարկվող որոշումը հրապարակվելու պահից, այնպես էլ այն Ռաֆայել Խաչատրյանին հայտնի դառնալուց ավելի քան տասն օր հետո, այսինքն՝ չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետները: (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի կողմից մի շարք որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները, գտել է, որ ձևական առումով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելն անթույլատրելի է: Բողոքի հեղինակը նշել է, որ քրեական գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Ռ.Խաչատրյանը տեղյակ է եղել իր նկատմամբ հետախուզում հայտարարելու որոշման մասին և ստացել է այն, իսկ այդ որոշմանը տիրապետելու պահից ձեռնամուխ է եղել այն սահմանված կարգով բողոքարկելուն: Ըստ բողոք բերած անձի՝ Վերաքննիչ դատարանի որոշմամբ թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 100-102:

8.1. Բողոքաբերը նաև գտել է, որ բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ անձն իր վերաբերյալ կայացված որոշումները պետք է կարողանա սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկել:

8.2. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք պաշտպան Ա.Մկրտչյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

10. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

10.1. ՀՀ սահմանադրական դատարանը, դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում անդրադառնալով դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման ժամկետային սահմանափակումներին, 2012 թվականի հոկտեմբերի 16-ի ՍԴՈ-1052 որոշման մեջ արձանագրել է, որ. *«(..) [Մ]տորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է՝ ելնելով անձի դատարանի մարչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գրնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կահված է այն հանգամանքից, թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ*

ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար¹:

(...)

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հիմնավորված չի համարում բողոքարկվող դատական ակտի փաստացի ուշ արանալու հիմքով բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարաններին լայն հայեցողական լիազորության տրամադրումը: Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մարչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, փյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել փյալ ժամկետը, կոնկրետ դեպքում հնգօրյա և փասնօրյա ժամկետները, սալա նշված ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից:

(...):

ՀՀ սահմանադրական դատարանը գրնում է, որ մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով նշված դեպքերում բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (*ex jure*) պետք է համարվի հարգելի, ինչը կերաշխավորի անձի՝ դատարանի մարչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը (...)²:

10.2. Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՌ-1420 որոշմամբ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ, նշել է.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԴՌ-1052 որոշումը, 8-րդ կետ:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԴՌ-1052 որոշումը, 10-րդ կետը:

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման¹:

11. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնական իրավունքների խախտման դեպքում, ունի ներպետական իրավասու արյանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք»: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

ա) ցանկացած այն անձի համար, որի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կարարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.

բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանությունը պահանջող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը դրանք տրամադրելու դեպքում»:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա արեղծված անկախ ու

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԳՈ-1420 որոշումը, 4.1-րդ կետը:

անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, նույնիսկ, եթե նման խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

12.1. Դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետև՝ նաև Եվրոպական դատարան) Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի գործով նշել է, որ. «(...) «/Դ/ատարանի իրավունքը», որի մի մասն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ: Այն ենթակա է սահմանափակումների, մասնավորապես, երբ քննարկվում են բողոքի ընդունելիության պայմանները, քանի որ այն իր բնույթով թողնված է պետության կարգավորմանը, որն այս առնչությամբ ունի հայեցողության որոշակի սահման: Սակայն այդ սահմանափակումները չպետք է անձի դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակեն կամ նվազեցնեն այն կերպ կամ այն չափով, որ խախտվի իրավունքի բուն էությունը, վերջապես նման սահմանափակումները չեն համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե դրանք չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև առկա չէ ողջամիտ համամասնություն (...): Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամտող իրավական ակտը վիճարկելու հարակ և իրական հնարավորություն ունենա (...):

Դիմումների, բողոքների կամ այլ գանգառների ներկայացման համար սահմանված ժամկետները, անկասկած, նպատակ ունեն սպահովել արդարադատության պարզաձ իրականացումը և համապատասխանությունը, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքին: Շահագրգիռ անձինք պետք է ակնկալեն, որ այդ կանոնները կկիրառվեն: Սակայն, նման կանոնները կամ դրանց կիրառումը չպետք է խոչընդոտ հանդիսանան դատավարության մասնակիցների համար առկա պաշտպանության միջոցներից օգտվելիս (...):»¹:

¹ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Mamikonyan v. Armenia* գործով 2010 թվականի մարտի 16-ի վճիռը, գանգառ թիվ 25083/05, կետեր 25 և 27, *mutatis mutandis*, *Miragall Escolano and others v. Spain* գործով 2000 թվականի հունվարի 25-ի վճիռը, գանգառներ թիվ 38366/97, 38688/97, 40777/98, 40843/98, 41015/98, 41400/98, 41446/98, 41484/98, 41487/98 and 41509/98, *Béleš and others c. Czech Republic* գործով 2002 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, գանգառ թիվ 47273/99,

12.2. Եվրոպական դատարանը, գնահատելով, թե արդյոք պահպանված է ողջամիտ հավասարակշռությունը մի կողմից՝ նախատեսված սահմանափակումների, մյուս կողմից՝ իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ իրականացման պահանջների միջև, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի խախտում է դիտարկել այն իրավիճակը, երբ դիմումատուի բողոքը ներպետական դատարանի կողմից թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու հիմքով՝ այն պարագայում, երբ վերջինս հաստատապես տեղյակ չի եղել իր նկատմամբ կայացված դատական ակտի վերաբերյալ: Ընդ որում, Եվրոպական դատարանը կոնկրետ գործով քննարկել է այն հանգամանքները, որ դիմումատուն անմիջապես դիմել է իրավաբանական օգնության համար, երբ գիտակցել է, որ իր եկամուտների վրա արգելանք դնելու մասին որոշում է կայացվել, և միայն երկրորդ անգամ նշանակված փաստաբանի միջոցով է ձեռք բերել իր բացակայությամբ կայացված որոշման պատճենը: Եվրոպական դատարանը գտել է, որ դիմումատուն գործել է պատշաճ ջանասիրությամբ, և այն, որ ավելի վաղ չի դիմել իրավաբան մարմնին որոշման պատճենը ստանալու համար, չի կարող ի վնաս նրա մեկնաբանվել¹:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «1. Վերաքննիչ բողոք բերվում են (...) 3) առաջին արյանի դատարանի՝ կայանավորման, կայանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից փաստօրյա ժամկետում»:

13.1. Վճռաբեկ դատարանը *Տիգրան Հովհաննիսյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) Անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացման, մասնավորապես՝ իր շահերին առնչվող դատական ակտի դեմ հիմնավոր բողոք բերելու համար անհրաժեշտ է, որ անձն իր ձեռքի տակ ունենա վիճարկվող դատական ակտը: Մինչդեռ, դատական ակտը հրապարակելուց հետո մինչև շահագրգիռ անձի կողմից այն փաստացի սրանալն օրյակերկրորեն անցնում է որոշակի ժամանակահատված, ինչը կարող է անձի կամքից անկախ հանգամանքներում հանգեցնել սահմանված ժամկետից ուշ կամ ակնհայտ անհիմն, օրենսդրության պահանջներին չհամապատասխանող բողոքի ներկայացմանը: (...)

Erfar-Avef v. Greece գործով 2014 թվականի մարտի 27-ի վճիռը, գանգատ թիվ 31150/09, *RTBF v. Belgium* գործով 2011 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգատ թիվ 50084/06:

¹ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Affaire Raihani c. Belgique* գործով 2015 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 12019/08, 32-46-րդ կետեր:

(...) [Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում առկա՝ «հրապարակման պահից» բառակապակցությունը պետք է մեկնաբանվի որպես դատական ակտն արանայու պահը, և ժամկետների հաշվարկման ելակետը պետք է համարել որոշումը շահագրգիռ անձին հանձնելու պահը (...)]¹:

14. Վերահաստատելով նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատավարական կանոնների, այդ թվում՝ բողոքարկման ժամկետների հաշվարկի վերաբերյալ նորմերի մեկնաբանությունը չպետք է հանգեցնի ձևական մոտեցման՝ անհամաչափորեն սահմանափակելով անձի դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքը: Անձին պետք է ընձեռվի իր իրավունքներին և ազատություններին առնչվող դատական ակտը վիճարկելու հստակ և իրական հնարավորություն, ինչն իր հերթին, ի թիվս այլոց, ենթադրում է, որ տվյալ դատական ակտը պետք է անձին հասանելի լինի կամ անձը պետք է հաստատապես տեղյակ լինի դրա առկայության մասին:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ դատապարտյալ Ռ.Խաչատրյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում՝ վերջինիս գտնվելու վայրն անհայտ լինելու և նրա կողմից պատիժը կրելուց խուսափելու հիմքերով²,

- պաշտպան Ա.Մկրտչյանն Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումն ու դրան առնչվող փաստաթղթերը ստացել է 2018 թվականի նոյեմբերի 30-ին³,

- պաշտպան Ա.Մկրտչյանն Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշման դեմ 2018 թվականի դեկտեմբերի 10-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որի եզրափակիչ մասում միջնորդել է բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը համարել հարգելի⁴,

- Վերաքննիչ դատարանը 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը դատապարտյալ Ռ.Խաչատրյանի պաշտպան Ա.Մկրտչյանի կողմից բաց չի թողնվել հարգելի պատճառով, քանի որ Ռ.Խաչատրյանը դեռևս 2010 թվականից տեղյակ է եղել տվյալ որոշման առկայության մասին և միջոցներ

¹ Տե՛ս Տիգրան Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշումը, 23-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

չի ձեռնարկել այն իր տրամադրության տակ ունենալու ուղղությամբ, մասնավորապես՝ դիմում չի ներկայացրել իրավասու մարմին՝ դատական ակտը ստանալու համար, իսկ այն ստանալու համար պաշտպան Ա.Մկրտչյանը դատական ակտը կայացրած դատարան է դիմել միայն 2018 թվականի նոյեմբերի 16-ին¹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-13.1-րդ կետերում շարադրված իրավանորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելով, անհամաչափորեն սահմանափակել է բողոքաբերի դատական մատչելիության իրավունքը:

16.1. Վճռաբեկ դատարանը մասնավորապես արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Ռ.Խաչատրյանի կողմից իր վերաբերյալ կայացված դատական ակտի մասին տեղեկացված լինելու փաստը պայմանավորել է ըստ էության այն հանգամանքով, որ Ռ.Խաչատրյանը դեռևս 2010 թվականից պետք է տեղյակ լիներ Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի՝ հետախուզում հայտարարելու վերաբերյալ որոշման առկայության մասին, մինչդեռ սույն գործի նյութերում առկա չէ որևէ փաստական տվյալ այն մասին, որ բողոքարկվող դատական ակտի վերաբերյալ Ռ.Խաչատրյանը հաստատապես տեղյակ է եղել: Հարկ է նկատել, որ թեև Առաջին ատյանի դատարանում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնից 2009 թվականի դեկտեմբերի 30-ին, 2010 թվականի հունիսի 25-ին, 2010 թվականի դեկտեմբերի 17-ին ստացված գրություններում առկա են որոշակի տեղեկություններ այն մասին, որ Ռ.Խաչատրյանը մեկնել է Ֆրանսիայի Հանրապետություն², այնուհետև այնտեղ ձերբակալվել է և վերցվել մինչէքստրադիցիոն կալանքի տակ³, իսկ 2010 թվականի նոյեմբերի 23-ին Ֆրանսիայի վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ իրավասու մարմինների՝ Ռ.Խաչատրյանին արտահանձնելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է⁴, սակայն դրանք կարող են հիմք ծառայել ենթադրելու, այլ ոչ թե հաստատված համարելու, որ Ռ.Խաչատրյանն իր նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշման առկայության մասին 2010 թվականից արդեն իսկ հաստատապես տեղեկացված է եղել: Իսկ նշված ենթադրության հիման վրա վերջինիս՝ իր նկատմամբ կայացված դատական ակտի բողոքարկման իրավունքից զրկելը կհանգեցնի

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 4.1.-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 4.2.-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 4.3.-րդ կետը:

դատական պաշտպանության իրավունքի և դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակման:

17. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չեն պաշտպան Ա.Մկրտչյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

18. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ, հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար¹:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Ռաֆայել Գևորգի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԻ/0009/15/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹՎԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ռ.ՌԵՎԱԶՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դոնրաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշման դեմ դատապարտյալ Արսեն Արայի Արծրունու պաշտպան Ռ.Ռևազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի՝ 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով Արսեն Արայի Արծրունին մեղավոր է ճանաչվել 1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 72-րդ, 17-100-րդ հոդվածներով, 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով և դատապարտվել՝ 72-րդ հոդվածով՝ 12 տարի ժամկետով ազատազրկման, 17-100-րդ հոդվածով՝ 12 տարի ժամկետով ազատազրկման, 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով՝ մահապատժի:

1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի հիման վրա՝ նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժի մեջ կլանելու

սկզբունքով, Արսեն Արծրունու նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել բացառիկ պատժամիջոց՝ մահապատիժ:

ՀՀ Նախագահի՝ 2003 թվականի օգոստոսի 1-ի թիվ ՆՀ-103-Ա հրամանագրով Ա.Արծրունուն ներում է շնորհվել, և նրա նկատմամբ նշանակված մահապատիժը փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2012 թվականի հուլիսի 12-ին որոշում է կայացրել դատապարտյալ Ա.Արծրունու վերաբերյալ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի՝ 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճիռը վերանայելու և այն ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասին և 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխանեցնելու մասին: Դատապարտյալ Ա.Արծրունու նկատմամբ նշանակված պատիժը՝ ցմահ ազատազրկումը, թողնվել է նույնը:

2. 2019 թվականի հունվարի 16-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) է մուտքագրվել ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Ա.Արծրունու բողոքը, որով վերջինս խնդրել է որոշում կայացնել իր իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի պարտականության մասին, այն է՝ պարտավորեցնել ընթացք տալ իրեն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցին և ընդունել որոշում՝ իրեն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը դատարան ներկայացնելու մասին:

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Արծրունու բողոքը մերժվել է:

3. Ա.Արծրունու պաշտպան Ռ.Ռևազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ բողոքը մասնակիորեն բավարարել է, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 9-ի որոշումը բեկանել է և դատապարտյալ Ա.Արծրունու բողոքը մերժել՝ այն ընդհանուր իրավասության դատարանի քննությանը ենթակա չլինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ դատապարտյալ Ա.Արծրունու պաշտպան Ռ.Ռևազյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչ Ա.Նազարյանի կողմից դատապարտյալ Ա.Արծրունու դիմումի վերաբերյալ կազմված տեղեկանքի համաձայն՝ «(...) Դատարանի կողմից ցմահ ազատազրկման դատապարտված անձի պայմանական-վաղաժամկետ ազատման հարցը մերժելու դեպքում նույն հիմքով միջնորդություն ներկայացնելու «3 փարի անց» ժամկետը սահմանվել է 10.02.2005 թվականին, որում 23.06.2018 թվականին կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Ցմահ դատապարտյալ Արսեն Արայի Արծրունուն պարփոխ պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդություն ներկայացնելու հարցը կարող է քննարկվել օրենսդրական նշված նորմերի պահանջներին և ժամկետներին համապատասխան»¹:

6. Առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքում դատապարտյալ Ա.Արծրունին, ի թիվս այլոց, նշել է հետևյալը. «(...) Ներկայում գործող օրենսդրությունը սահմանում է երեք փարի ժամկետ՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձի պայմանական վաղաժամկետ ազատման հարցը մերժելու դեպքում միջնորդագիրը կրկին ներկայացնելու համար: Սակայն գրնում է, որ այդ ժամկետային սահմանափակումն իր նկատմամբ կիրառվել չի կարող հետևյալ պարզառարանությամբ.

(...)

Ցմահ ազատազրկումը որպես պարժամարեսակ օրենսդրության մեջ ներդրվելուց հետո, և ընդհուպ՝ մինչև 2005 թվականի փետրվարի 10-ը, օրենսդրությունը նախատեսում էր, որ ցմահ ազատազրկվածներին պարփոխ պայմանական վաղաժամկետ ազատումը դատարանի կողմից մերժվելու դեպքում այդ հարցի վերաբերյալ միջնորդագրի կրկին քննարկում կարող է փետի ունենալ ոչ շուր, քան մերժման վերաբերյալ որոշում ընդունելու օրվանից 6 ամիս անց: Այս նորմը խախտվել է 10.02.2005 թվականին ուժի մեջ մտած փոփոխությունների արդյունքում և մինչև այդ՝ ցմահ ազատազրկման դատապարտվածների համար հետադարձ ուժ ունենալ չի կարող (...)²:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 7:

² Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 2-6:

7. Առաջին ատյանի դատարանը, մերժելով դատապարտյալ Ա.Արծրունու բողոքը, արձանագրել է. «(...) ՀՀ ԱԾ «Արմավիր» քրեակարարողական հիմնարկի ադմինիստրացիան պահպանել է ՀՀ Սահմանադրության, քրեական դատավարության օրենսգրքի և քրեակարարողական օրենսգրքի պահանջները, ղեկավարվել՝ օրենքի պահանջների և փառին համապատասխան, որի պայմաններում [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ ՀՀ ԱԾ «Արմավիր» ՔԿ հիմնարկի դատապարտյալ Արսեն Արծրունու բողոքը բավարարելու հիմքեր չկան (...)»¹:

8. Վերաքննիչ դատարանը, առանց ըստ էության քննության առնելու դատապարտյալ Ա.Արծրունու ներկայացուցչի բողոքի փաստարկները և հղում կատարելով ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՄԴՌ-1439 որոշմանը, իր դատական ակտով փաստել է. «(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Ա.Արծրունու սկզբնական բողոքը քննարկելիս և լուծելիս Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի գործել որպես «օրենքի հիման վրա սրեղծված» դատարան, հետևաբար՝ քրեակարարողական հիմնարկի պետի ենթադրյալ անգործությունը վիճարկած դատապարտյալ Ա.Արծրունու ներկայացուցչի Ռ.Ռևազյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումն անհրաժեշտ է բեկանել և ՀՀ ԱԾ «Արմավիր» ՔԿԿ դատապարտյալ Արսեն Արծրունու սկզբնական բողոքը մերժել՝ այն ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա լինելու պայմանադրականությամբ (...)»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Մասնավորապես, բողոքաբերը, մեջբերելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ և 438-րդ հոդվածներով նախատեսված իրավադրույթները, Վճռաբեկ դատարանի առջև իրավական հարց է բարձրացրել առ այն՝ արդյո՞ք սույն գործով կիրառելի են վերը նշված դատավարական նորմերը և դատապարտյալ Ա.Արծրունու բողոքն ընդդատյա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 35-37:

² Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 26-36:

դատարանին, թե՛ նշված նորմերը կոնկրետ դեպքում կիրառելի չեն, և վերջինիս բողոքն ընդդատյա է վարչական դատարանին:

9.1. Բացի այդ, բողոքաբերը, մեջբերելով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը դատարանի կողմից մերժելու դեպքում այդ հարցի քննարկումը կրկին դատարան ներկայացնելու վերաբերյալ ներկա և մինչ այդ գործող օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածը և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 3-րդ հոդվածը, արձանագրել է, որ գործող կարգավորումները տվյալ դեպքում անձի վիճակը վատթարացնող են, հետևաբար, հետադարձ ուժ չունեն:

10. Վերոշարադրյալի հիման վրա, դատապարտյալ Ա.Արծրունու պաշտպան Ռ.Ռևազյանը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 9-ի որոշումը և Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը ու կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական որոշումների կատարման փուլում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա գործերի (սյուֆերի) շրջանակի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ դատապարտյալ Ա.Արծրունու ներկայացրած բողոքն ընդդատյա չէ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

13. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և սպարությունների արդյունավետ դարական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անսաշտ դատարանի կողմից իր գործի (...) քննության իրավունք»:*

Մեջբերված սահմանադրական նորմերով երաշխավորվում է անձի՝ արդյունավետ դատական պաշտպանություն հայցելու իրավունքը:

Ազատությունից զրկված անձի դատական պաշտպանության նվազագույն երաշխիքները նախատեսված են նաև մի շարք միջազգային-իրավական ակտերով, որոնցից, մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» 36-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանվում է, որ *«Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա բողոքներով և պահանջներով դիմելու քրեակարարողական մարմիններին, դատական իշխանություններին կամ այլ իրավասու մարմիններին (...)»*: Բացի այդ, դատապարտյալի բողոքարկման իրավունքը՝ որպես դատապարտյալի հիմնարար իրավունքների կարևորագույն բաղկացուցիչ, նախատեսում է նաև Եվրոպական բանտային կանոնների 70.1-ին կետով, համաձայն որի՝ *«Ազատությունից զրկված անձինք պետք է հնարավորություն ունենան բողոքներ կամ պահանջներ ներկայացնելու քրեակարարողական հիմնարկի պետին կամ ցանկացած այլ իրավասու մարմին»*:

Դատարանի մատչելիության իրավունքի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ այն ունի բացառիկ նշանակություն անձի իրավունքների պաշտպանության իրավական համակարգում, ենթադրաբար խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման հիմնական նախապայմանն է, որի միջոցով է կենսագործվում դատարան դիմելու (*locus standi*) և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու անձի իրավունքը: Հետևաբար, դատարանի մատչելիության իրավունքի իրացմանն առնչվող դատավարական կարգավորումները դատարանների կողմից պետք է ճկուն մեկնաբանման ենթարկվեն՝ ելնելով դատարանի մատչելիության իրավունքի գերակայությունից՝ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգային առանձնահատկությունների նկատմամբ¹:

Դատարանի մատչելիության իրավունքի հետ անմիջականորեն առնչվող գործերի պատշաճ ընդդատության հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը կրկնում է իր՝ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ գործերի քննության ընդդատության կանոնների պահպանումն անհրաժեշտ երաշխիք է գործը վարույթ ընդունելիս

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մամվել Ղազարյանի վերաբերյալ գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԳ/0018/11/17 որոշումը:

կամայականությունների բացառման և անձի դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իրավունքների ապահովման համար¹:

14. Դատական որոշումների կատարման փուլում Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա գործերի (սյուֆերի) շրջանակին է անդրադարձել ՀՀ Սահմանադրական դատարանը՝ արձանագրելով հետևյալը. «(...) [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի «Առաջին արյանի դատարաններին ընդդատյա գործերը» վերաբերողությամբ 44-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանը քննում է բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (սյուֆեր), ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում քրեական գործի մինչդատարանական վարույթի նկատմամբ:

Համադրելով վերոգրյալ դրույթը՝ [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի 41-րդ հոդվածում ոչ սպառիչ թվարկված դատարանի լիազորությունների հետ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավճիռն ի կատար ածելու ուղարկելը, ինչպես նաև դատավճիռն ի կատար ածելիս ծագող հարցեր լուծելն առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանն իրականացնում է քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործերի (սյուֆերի) քննության շրջանակներում: Իսկ քրեադատավարական օրենսդրությամբ դատարանի այդ լիազորությունների իրականացման կարգը սահմանված է [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի «Դատական որոշումների կատարումը» վերաբերողությամբ 49-րդ գլխում, որին համապատասխան՝ դատարանի կողմից լուծման ենթակա հարցերը վերաբերում են, մասնավորապես, դատարանի որոշումը կատարման հանձնելու կարգադրությանը, դատական որոշումն ի կատար ածելու փուլում դատապարտյալի իրավունքների ապահովմանը՝ կապված դատական որոշման կատարման հետ, դատական որոշման վերաբերյալ կասկածների և անհարակոթյունների լուծմանը, դատական որոշման կատարման հետաձգմանը, տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելուն, պարիժը կրելուց ազատելուն հիվանդության պարճառով, այն դատապարտյալին պարիժից ազատելուն, որի նկատմամբ դատական որոշման կատարումը հետաձգված է, ինչպես նաև դատական որոշման կատարման հետաձգումը վերացնելուն, պարիժից պայմանական վաղալեզ ազատելուն և պարիժն ավելի մեղմ պարժով փոխարինելուն, դատապարտյալի հեղափոխումները, բուժական հիմնարկում գրնվելու ժամանակի հաշվանցմանը պարիժի ժամկետի մեջ:

¹ Ընդդատության վերաբերյալ տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Գևորգ Հարությունյանի և մյուսների վերաբերյալ գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը:

Ինչ վերաբերում է [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետին, համաձայն որի՝ դատարանի լիազորությունների շարքին է դասվում նաև «օրենքով նախատեսված դեպքերում այլ հարցեր լուծելը», այս Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեադատարանական օրենսդրությամբ, այդ թվում՝ այլ օրենքով, այս կամ այն հարցի, գործի կամ նյութի քննությունը կհամարվի դատարանի ընդդատությանը վերապահված, եթե այդ օրենքով այն ուղղակիորեն նախատեսված կլինի որպես քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանի լիազորություն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, վերոհիշյալ կանոնակարգումների համաձայն, առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են պատժի կատարման հետ կապված միայն օրենքով նախատեսված գործերը: Այդ պարագայում սահմանադրական օրենքը քրեական մասնագիտացման դատավորին ընդդատյա՝ պատժի կատարման հետ կապված գործերը որոշակիացնելու համար ընտրել է օրենքով հատուկ նախատեսված լինելու կանխատեսելի չափանիշը:

Երկայիս օրենսդրական կարգավորումների պայմաններում այդպիսին են [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի 49-րդ գլխով սահմանված հարցերը կամ գործերը (...):¹:

Արդյունքում, ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «մինչև Ազգային ժողովի կողմից սույն որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակարարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հարակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին»²:

14.1. Այսպիսով, ՀՀ Սահմանադրական դատարանը փաստել է, որ մինչև համապատասխան օրենսդրական փոփոխությունները, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործողությունների կամ անգործության դեմ ներկայացված բողոքները ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, եթե, իհարկե, կոնկրետ գործը կամ նյութը օրենսդրորեն չի վերապահվել քրեական գործեր քննող ընդհանուր

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1439 որոշումը:

² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ սույն որոշումը:

իրավասության դատարանին: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում հստակ ամրագրված են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա՝ պատժի կատարման հետ կապված գործերը: Հարկ է նկատել, որ վերոնշյալ գործերի թվին են դասվում նաև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու և պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատիժը կատարող հիմնարկի ղեկավարը Հայասրանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված դեպքերում և կարգով, դատասպարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը ներկայացնում է դատարան: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 437-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հիվանդության կամ հաշմանդամության պարճառով պատիժը կրելուց ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցերը լուծվում են դատասպարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի որոշմամբ, անկախ այն բանից, թե որ դատարանն է կայացրել դատական որոշումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 3.1. Դատասպարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարանի կողմից միանձնյա կարգով քննվում է պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը կամ Հայասրանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում՝ դատասպարտյալի բողոքն սրանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին պարզաճ ծանուցելով դատասպարտյալին, դատախազին, տուժողին (տուժողի իրավահաջորդին), պրոբացիայի ծառայությանը և քրեակատարողական ծառայությանը:

(...)

3.6. Դատասպարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցի քննության արդյունքում դատարանը որոշում է կայացնում՝

1) դատասպարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին, կամ՝

2) պարտից պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պարտի չկրած մասն ավելի մեղմ պարժարեսակով փոխարինելը մերժելու մասին»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «(...) Եթե քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցները բացասական են, ապա պարտիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկարմամբ նշանակված պարտի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխարանքային օրվա ընթացքում, ընդունում է դատապարտյալին պարտիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պարտի չկրած մասն ավելի մեղմ պարժարեսակով փոխարինելու հարցը դատարան չներկայացնելու մասին որոշում: Սույն մասով նախարեսակված դեպքում պարտիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալին գրավոր ծանուցում է պարտիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պարտի չկրած մասն ավելի մեղմ պարժարեսակով փոխարինելու հարցը կրկին քննարկելու կարգի, ինչպես նաև պարտիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշումը բողոքարկելու իրավունքի մասին: Որոշումը կարող է բողոքարկվել առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարան որոշումն արանալուց հետո՝ տրանսորյա ժամկետում»:

16. Նախորդ կետում մեջբերված իրավանորմերի համադրված վերլուծության, ինչպես նաև սույն որոշման 14-րդ կետում մեջբերված ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշման հաշվառմամբ՝ Վճռարենկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը դատական որոշումների կատարման փուլում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից լուծման ենթակա հարցերի շարքին է դատում նաև դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատտի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը՝ նախատեսելով նշված լիազորության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Այսպես՝ գործող օրենսդրական կարգավորումների համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատտի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը քննում է ինչպես դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատտի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին պատիժը կատարող հիմնարկի **վարչակազմի միջնորդագրի**, այնպես էլ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատտի

չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան չներկայացնելու մասին պատիժը կատարող հիմնարկի **վարչակազմի որոշման դեմ բերված բողոքի դեպքում**: Այլ կերպ՝ թե՛ միջնորդագրի, թե՛ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի վերը նշված որոշման դեմ բերված բողոքի դեպքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննվում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը՝ համապատասխանաբար կայացնելով դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կամ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը մերժելու մասին որոշում:

17. Մինևույն ժամանակ, պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինումը դատարանի կողմից մերժվելու դեպքում վերոնշյալ հարցերի կրկին քննարկումը հնարավոր է միայն որոշակի ժամանակահատված անց: Այլ կերպ՝ համապատասխան ժամկետներն անցած լինելը պարտադիր նախապայման է դատապարտյալի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համապատասխան օրենսդրական կառուցակարգերը կրկին գործադրելու և դատարանի առջև վերոնշյալ հարցը բարձրացնելու համար, հակառակ դեպքում նշված հարցի քննության հնարավորությունը բացառվում է:

Վերոշարադրյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ բոլոր այն դեպքերում, երբ առաջանում է համապատասխան ժամկետներն անցած լինելու կամ չլինելու վերաբերյալ իրավական վեճ, դատապարտյալը պետք է դատարանի առջև վերոնշյալ հարցը բարձրացնելու հնարավորություն ունենա՝ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի համապատասխան գործողությունը կամ անգործությունը վիճարկելու միջոցով: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի խնդրո առարկա գործողության կամ անգործության դեմ դատապարտյալի կողմից ներկայացված բողոքը ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից: Այսպես՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը կրկին քննարկման առարկա դարձնելու և դատարանի առջև բարձրացնելու համապատասխան ժամկետների հետ կապված իրավական վեճն ուղղակիորեն վերաբերում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի

չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցին, հանդիսանում է այդ ինստիտուտի կենսագործման համար անհրաժեշտ նախադրյալ, ուստի դրա վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի գործողության կամ անգործության դեմ բերված բողոքը ևս ընդդատյա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

17.1. Բացի այդ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը դատարանի կողմից մերժվելու դեպքում այդ հարցը կրկին քննարկման առարկա դարձնելու համապատասխան ժամկետները և դրանց հաշվարկման կարգն ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 3-րդ մաս): Այլ կերպ՝ քրեական դատավարության օրենսդրությամբ կանոնակարգվել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտի կրկին գործադրման համար անհրաժեշտ նվազագույն ժամկետները և դրանց հաշվարկման կարգը, ուստի այդ ժամկետներն անցած լինելու կամ չլինելու կապակցությամբ առաջացած հարցերը ենթակա են քննության և լուծման քրեադատավարական տիրույթում՝ քրեաիրավական և քրեադատավարական կառուցակարգերի գործադրման միջոցով:

Վերոշարադրյալը համահունչ է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված՝ սույն որոշման 14-14.1-րդ կետերում մեջբերված այն իրավական դիրքորոշմանը, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործողությունների կամ անգործության դեմ ներկայացված բողոքները ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, եթե, իհարկե, **կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենսդրորեն չի վերապահվել** քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում՝ որպես դատական որոշումների կատարման հետ կապված գործեր, սահմանվել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու և պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերը: Ընդ որում, վերոնշյալ գլխում կանոնակարգվել են նաև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտի կրկին գործադրման համար անհրաժեշտ համապատասխան ժամկետները, հետևաբար դրանց վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի գործողության կամ անգործության դեմ բերված բողոքները ենթակա են քննության քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումների շրջանակներում՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ

- ի պատասխան դատապարտյալ Ա.Արծրունու դիմումի՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից կազմվել է տեղեկանք առ այն, որ դատապարտյալ Ա.Արծրունուն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը կարող է կրկին քննարկվել գործող օրենսդրությամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո¹,

- Առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքով դատապարտյալ Ա.Արծրունին փաստել է, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից տեղեկանքում վկայակոչված՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը կրկին քննարկման ներկայացնելու գործող օրենսդրությամբ սահմանված ժամկետային սահմանափակումը չի կարող տարածվել իր վրա, քանի որ հանցավոր արարքի փաստացի կատարումից հետո ընդունված՝ իր համար վատթարացնող հետևանք առաջացնող կարգավորումը չի կարող տարածվել նախքան այդ օրենքի ընդունումը ծագած հարաբերությունների նկատմամբ²,

- Առաջին ատյանի դատարանը մերժել է ներկայացված բողոքը՝ գտնելով, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հետևություններն իրավաչափ են³,

- Վերաքննիչ դատարանը, ըստ էության քննության չենթարկելով ներկայացված բողոքի փաստարկները, վկայակոչել է ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՌ-1439 որոշումը, բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և մերժել դատապարտյալ Ա.Արծրունու բողոքը՝ այն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը ենթակա չլինելու պատճառաբանությամբ⁴:

19. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-17.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատապարտյալ Ա.Արծրունու բողոքի ընդդատության հարցի կապակցությամբ եկել է սխալ եզրահանգման: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը, մեջբերելով ՄԴՌ-1439 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և արձանագրելով, որ Ա.Արծրունու սկզբնական բողոքը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը, պատշաճ վերլուծության չի ենթարկել այն, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ենթադրյալ անգործության դեմ ներկայացված

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

բողոքն ըստ էության վերաբերում է հարցերի այնպիսի շրջանակի, որի քննության իրավասությունը վերապահված է քրեական գործ քննող առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանին: Այսպես՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի անգործության դեմ ներկայացված բողոքով դատապարտյալ Ա.Արծրունին բարձրացրել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ինստիտուտի կրկին գործադրման համար անհրաժեշտ նվազագույն ժամկետը լրացած լինելու, հետևաբար՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու հարցը կրկին քննարկելու ու դատարանի առջև բարձրացնելու հիմնավանդիրը:

Հիմք ընդունելով սույն որոշման 17-17.1-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հարցն ուղղակիորեն վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի շրջանակին, հանդիսանում է դրանց կենսագործման համար պարտադիր նախադրյալ, ուստի դրա վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի գործողության կամ անգործության դեմ բերված բողոքը ևս ընդդատյա է առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանին:

Մինևույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել են այն ժամկետները, որոնց լրանալու պարագայում միայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը կարող է կրկին քննարկման առարկա դառնալ: Այլ կերպ՝ քրեական դատավարության օրենսդրությամբ հստակ կանոնակարգվել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտի կրկին գործադրման համար անհրաժեշտ նվազագույն ժամկետները և դրանց հաշվարկման կարգը, ուստի այդ ժամկետներն անցած լինելու կամ չլինելու կապակցությամբ առաջացած հարցերը ենթակա են քննության և լուծման քրեադատավարական տիրույթում՝ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումների շրջանակներում:

20. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ դատապարտյալ Ա.Արծրունու ներկայացրած բողոքն ընդդատյա չէ առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել

քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ և 434-րդ հոդվածների խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար¹:

Գործի նոր քննության արդյունքում, Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, պետք է քննարկման առարկա դարձնի դատապարտյալ Ա.Արծրունու ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոքում բարձրացված փաստարկները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Արսեն Արայի Արծրունու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

37. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/2640/07/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 29-ի և հուլիսի 10-ի որոշումների դեմ մեղադրյալ Արա Միքայելի Մինասյանի պաշտպան Տիգրան Ղազարյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրեռհանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Ռ.Վարդանյանի (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին)՝ 2018 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 325-րդ հոդվածի 2-րդ մասի և 214-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 69104518 քրեական գործը:

2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ Արա Միքայելի Մինասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական

օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), 2018 թվականի նոյեմբերի 4-ին թիվ ԵԴ/2640/07/18 դատական գործով քննության առնելով Նախաքննության մարմնի միջնորդությունը՝ թիվ 69104518 քրեական գործով բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն առգրավելու թույլտվություն ստանալու վերաբերյալ, որոշել է այն բավարարել:

4. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

5. 2019 թվականի մայիսի 23-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է պաշտպան Տ.Ղազարյանի միջնորդությունը՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի թիվ ԵԴ/2640/07/18 որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի հունիսի 5-ի որոշմամբ թիվ ԵԴ/0063/15/19 դատական գործով մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանի վերոնշյալ միջնորդությունը մերժվել է:

6. Պաշտպան Տ.Ղազարյանը Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 5-ի որոշման դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

7. Վերաքննիչ դատարանի՝ թիվ ԵԴ/2640/07/18 դատական գործով՝ 2019 թվականի ապրիլի 29-ի և թիվ ԵԴ/0063/15/19 դատական գործով՝ 2019 թվականի հուլիսի 10-ի որոշումների դեմ պաշտպան Տ.Ղազարյանը բերել է վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ համապատասխանաբար 2019 թվականի օգոստոսի 26-ի և 2019 թվականի օգոստոսի 28-ի որոշումներով ընդունվել են վարույթ, և նշված երկու գործերը միացվել են մեկ վարույթում՝ թիվ ԵԴ/2640/07/18 համարի տակ:

1 Ծանոթություն. Վերոնշյալ վճռաբեկ բողոքները քննության են նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԳԱՈ-66 որոշումը ստանալուց հետո:

Վճարելի բողոքների պատասխաններ դատավարության մասնակիցների կողմից չեն ներկայացվել:

Վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանը, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշման դեմ 2019 թվականի ապրիլի 8-ին փոստային եղանակով ներկայացված վերաքննիչ բողոքում նշել է հետևյալը. «(...) Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ հիշյալ որոշումը հասանելի է դարձել պաշտպանության կողմին միայն 2019 թվականի մարտի 4-ին (...): Ուստի խնդրում ենք վերաքննիչ բողոք բերելու ժամկետը հաշվել 2019 թվականի մարտի 4-ից (...)»:

9. 2019 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրել է հետևյալը. «(...) 2019 թվականի ապրիլի 8-ին փոստին հանձնելու միջոցով վերաքննիչ բողոք է ներկայացրել մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանը՝ խնդրելով բեկանել Առաջին ատյանի դադարանի 04.11.2018 թվականի որոշումը և ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիբեռհանցագործությունների քննության վարչության պետի Գեղակալ Ռ.Վարդանյանի միջնորդությունը մերժել: Միևնույն ժամանակ բողոքաբերը նշել է, որ բողոքարկվող դատական ակտը պաշտպանության կողմին հասանելի է դարձել 2019 թվականի մարտի 4-ին, ուստի խնդրել է բողոքարկման ժամկետը հաշվել 04.03.2019 թվականից:

(...)

Ըստ բողոքաբերի հայրնածի՝ Առաջին ատյանի դադարանի որոշումը պաշտպանության կողմին հասանելի է դարձել 2019 թվականի մարտի 4-ին և դրա դեմ պաշտպան Տ.Ղազարյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել 2019 թվականի ապրիլի 8-ին (որոշման բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետն ավարտվել է 2019 թվականի մարտի 14-ին՝ ժամը 24:00-ին), այսինքն՝ վերաքննիչ բողոք բերելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ:

Այլ կերպ ասած՝ բողոքաբերը բաց է թողել նաև դատական ակտը իրեն հասանելի դառնալու պահից 10-օրյա ժամկետում բողոք ներկայացնելու ժամկետը: Բողոքաբերը թեև միջնորդել է որոշման բողոքարկման բաց թողնված ժամկետը հարգելի համարել և հաշվել

¹ Տե՛ս թիվ ԵԴ/2640/07/18 դատական գործի նյութեր, հատոր 2, թերթ 7:

04.03.2019 թվականից, սակայն բողոքը ներկայացրել է օրենքով սահմանված ժամկետից շատ ավելի ուշ:

Ելնելով վերագրյալից և հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՄԳՈ-1394 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Առաջին արյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշման դեմ մեղադրյալ Արա Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ ժամկետանց լինելու հիմքով: (...)¹:

10. 2019 թվականի մայիսի 23-ին Առաջին ատյանի դատարան ներկայացված՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդության մեջ պաշտպան Տ.Ղազարյանը նշել է հետևյալը. «(...) Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի նոյեմբերի 04-ի թիվ ԵԴ/2640/07/18 որոշումը պաշտպանության կողմը սրացել է 2019 թվականի ապրիլի 4-ին, սակայն տեխնիկական վրիպակի պատճառով վերաքննիչ բողոքում նշվել է, որ պաշտպանության կողմին հասու է դարձել 2019 թվականի մարտի 4-ին: Այս փաստը պետք է արտացոլված լինի նաև սույն քրեական գործի նյութերում, սակայն նշված տեխնիկական վրիպակի պատճառով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը կայացրել է վերաքննիչ բողոքը առանց քննության թողնելու մասին որոշում, որը պաշտպանության կողմին հասու է դարձել 2019 թվականի մայիսի 15-ին»²:

11. Պաշտպան Տ.Ղազարյանի կողմից Վճռաբեկ դատարան ներկայացված ստացականի պատճենից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը պաշտպանության կողմին հասանելի է դարձել 2019 թվականի ապրիլի 4-ին³:

Նույն ստացականի պատճենը 2019 թվականի հունիսի 3-ին պաշտպան Տ.Ղազարյանի դիմումի հետ միասին մուտքագրվել է Առաջին ատյանի դատարանի գրասենյակ և առկա է թիվ ԵԴ/0063/15/19 դատական գործի նյութերում⁴:

12. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 5-ի որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «(...) Համաձայն դատարանին ներկայացված փաստաթղթերի՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը Տիգրան Ղազարյանը սրացել է 04.04.2019 թվականին, որի վերաբերյալ առկա է վերջինիս ստորագրությունը:

¹ Տե՛ս թիվ ԵԴ/2640/07/18 դատական գործի նյութեր, հատոր 2, թերթեր 11-13:

² Տե՛ս թիվ ԵԴ/0063/15/19 դատական գործի նյութեր, թերթեր 2-3:

³ Տե՛ս թիվ ԵԴ/2640/07/18 դատական գործի նյութեր, հատոր 2, թերթ 48:

⁴ Տե՛ս թիվ ԵԴ/0063/15/19 դատական գործի նյութեր, թերթ 14:

Փաստորեն, դատարանի 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշմանը ծանոթանալու, այն բողոքարկելու իրավունքներից Տ.Ղազարյանը սահմանված ժամկետում չի օգտվել:

Հերևաբար դիմողի պարճառաբանությունն այն մասին, որ վրիպակի արդյունքում է նշվել, որ դատական ակտը սրացել է 04.04.2019 թվականին և դրա պարճառով բողոքարկման ժամկետը բաց է թողել՝ անհիմն է, քանի որ Տ.Ղազարյանի կողմից, հարգելի պարճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու վերաբերյալ որևէ հիմնավոր փաստարկ կամ ապացույց դատարանին չի ներկայացվել, ուստի միջնորդությունը ենթակա է մերժման»¹:

13. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 10-ի որոշման համաձայն. «(...) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի նոյեմբերի 04-ի թիվ ԵԴ/2640/07/18 որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ առկա է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2019 թվականի ապրիլի 29-ի որոշումը, որով մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տիգրան Ղազարյանի միջնորդությունը մերժվել է: Դիմողի կողմից վճռաբեկության կարգով այն չի բողոքարկվել և որոշումը մերժել է օրինական ուժի մեջ: Տվյալ պայմաններում անկախ որոշման հիմքերից ու դիմողի կողմից դրանց հետ չհամաձայնելու հանգամանքից, ինչպես առաջին աստիճանի դատարանի, այնպես էլ վերաքննիչ դատարանի կողմից նույն հարցի վերաբերյալ նոր որոշում կայացնելը իրավաչափ չէ և հակասում է ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջներին»²:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Բողոքաբերը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, թույլ տալով քրեական վարույթն իրականացնող մարմնին կատարել ազդրավում, խախտել է օրինականության պահանջը՝ ոչ իրավաչափորեն սահմանափակելով մեղադրյալ Ա.Մինասյանի հիմնական իրավունքներն ու ազատությունները:

15. Բողոքի հեղինակն ընդգծել է, որ արդար դատական քննության իրավունքը նախ և առաջ ենթադրում է դատարանի մատչելիությունը, ուստի անձը պետք է վստահ լինի, որ իր ներկայացրած վերաքննիչ բողոքն առանց քննության չի թողնվի, օրինակ՝ բողոքին ներկայացվող ձևական

¹ Տե՛ս թիվ ԵԴ/0063/15/19 դատական գործի նյութեր, թերթեր 30-32:

² Տե՛ս թիվ ԵԴ/0063/15/19 դատական գործի նյութեր, թերթեր 49-52:

պահանջները չպահպանելու կամ գործի նյութերը դատարանի կողմից չուսումնասիրելու արդյունքում:

15.1 Բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը պաշտպանության կողմը ստացել է 2019 թվականի ապրիլի 4-ին, սակայն տեխնիկական վրիպակի պատճառով վերաքննիչ բողոքում նշվել է, որ դատական ակտը պաշտպանության կողմին հասանելի է դարձել 2019 թվականի մարտի 4-ին, ինչն արտացոլված է նաև քրեական գործի նյութերում, սակայն հիշյալ տեխնիկական վրիպակի պատճառով Վերաքննիչ դատարանը կայացրել է վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում: Բողոքաբերի պնդմամբ՝ բողոքարկվող որոշումը պաշտպանության կողմին հասանելի դառնալու հանգամանքը չուսումնասիրելու արդյունքում Վերաքննիչ դատարանը կայացրել է բողոքն առանց քննության թողնելու մասին անհիմն դատական ակտ:

15.2. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները չեն կարող կայացնել որոշումներ՝ հիմնված բացառապես կողմերից մեկի ներկայացրած դիրքորոշման վրա՝ չուսումնասիրելով քրեական գործով ձեռք բերված օբյեկտիվ տվյալները: Բողոքաբերը փաստել է, որ իրավական նշանակություն ունեցող ցանկացած եզրահանգում, այդ թվում՝ դատավարական ժամկետը բաց թողնված լինելու կամ չլինելու մասին, պետք է հիմնված լինի օբյեկտիվ տվյալների վրա, այլ ոչ թե կողմերից մեկի դիրքորոշման:

16. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել թիվ ԵԴ/2640/07/18 դատական գործով Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 29-ի որոշումը, ինչպես նաև Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը և մերժել նախաքննության մարմնի միջնորդությունը՝ Ա.Մինասյանի՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն առգրավելու թույլտվություն ստանալու վերաբերյալ, կամ գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

17. Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 5-ի որոշմանը՝ բողոքաբերը նշել է, որ դատարանը խեղաթյուրել է պաշտպանության կողմի ներկայացրած միջնորդության բովանդակությունը և արդյունքում կայացրել է ոչ օրինական, չպատճառաբանված և անհիմն դատական ակտ:

18. Վճռաբեկ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 10-ի որոշումը նույնպես ոչ իրավաչափ է, քանի որ չի վերաբերում ներկայացված վերաքննիչ բողոքի առարկային, հիմքերին և հիմնավորումներին:

19. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել թիվ ԵԴ/0063/15/19 դատական գործով Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 5-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 10-ի դատական ակտերը և կայացնել նոր դատական ակտ, այն է՝ վերականգնել վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *սուսջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշման դեմ մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց է:

21. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

21.1. ՀՀ սահմանադրական դատարանը, դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում անդրադառնալով դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման ժամկետային սահմանափակումներին, 2012 թվականի հոկտեմբերի 16-ի ՍԴՈ-1052 որոշման մեջ արձանագրել է, որ. *«(...) [Մ]տորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է՝ ելնելով անձի դատարանի մարչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գրնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կահված է այն հանգամանքից, թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար:*

(...)

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հիմնավորված չի համարում բողոքարկվող դատական ակտի փաստացի ուշ արանալու հիմքով բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարաններին լայն հայեցողական լիազորության տրամադրումը: Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, փյվյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել փյվյալ ժամկետը, կոնկրետ դեպքում հնգօրյա և տասնօրյա ժամկետները, սպա նշված ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից:

(...):

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով նշված դեպքերում բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (*ex jure*) պետք է համարվի հարգելի, ինչը կերաշխավորի անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը (...):»¹:

21.2 Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՄԴՈ-1420 որոշմամբ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ նշել է.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՄԴՈ-1052 որոշումը, 8-րդ և 10-րդ կետեր:

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման¹:

22. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնական իրավունքների խախտման դեպքում, ունի ներպետական իրավասու արջանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք»:*

23. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.*

ա) ցանկացած այն անձի համար, որի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կարարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.

բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն պահանջող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը դրանք տրամադրելու դեպքում»:

24. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև*

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՌ-1420 որոշումը, 4.1-րդ կետը:

իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, նույնիսկ, եթե նման խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

24.1. Դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետև՝ նաև Եվրոպական դատարան) Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի գործով նշել է, որ. «(...) «[Դատարանի իրավունքը], որի մի մասն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ: Այն ենթակա է սահմանափակումների, մասնավորապես, երբ քննարկվում են բողոքի ընդունելիության պայմանները, քանի որ այն իր բնույթով թողնված է պետության կարգավորմանը, որն այս առնչությամբ ունի հայեցողության որոշակի սահման: Սակայն այդ սահմանափակումները չպետք է անձի դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակեն կամ նվազեցնեն այն կերպ կամ այն չափով, որ խախտվի իրավունքի բուն էությունը, վերջապես նման սահմանափակումները չեն համապարասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե դրանք չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև առկա չէ ողջամիտ համամասնություն (...): Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամտող իրավական ակտը վիճարկելու հարակ և իրական հնարավորություն ունենա (...):

Դիմումների, բողոքների կամ այլ գանգառների ներկայացման համար սահմանված ժամկետները, անկասկած, նպատակ ունեն սպահովել արդարադատության պայքաճ իրականացումը և համապարասխանությունը, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքին: Շահագրգիռ անձինք պետք է ակնկալեն, որ այդ կանոնները կիրառվեն: Սակայն, նման կանոնները կամ դրանց կիրառումը չպետք է խոչընդոտ հանդիսանան դատավարության մասնակիցների համար առկա պաշտպանության միջոցներից օգտվելիս (...):¹:

24.2. Եվրոպական դատարանն ընդգծել է, որ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է, որ դատավարության կողմերը պետք է կարողանան օգտվել իրենց բողոքարկման իրավունքից այն պահից, երբ փաստացի ծանոթացել են

¹ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Mamikonyan v. Armenia* գործով 2010 թվականի մարտի 16-ի վճիռը, գանգառ թիվ 25083/05, կետեր 25 և 27, *mutatis mutandis*, *Miragall Escolano and others v. Spain* գործով 2000 թվականի հունվարի 25-ի վճիռը, գանգառներ թիվ 38366/97, 38688/97, 40777/98, 40843/98, 41015/98, 41400/98, 41446/98, 41484/98, 41487/98 and 41509/98, *Béleš and others c. Czech Republic* գործով 2002 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, գանգառ թիվ 47273/99, *Erfar-Avef v. Greece* գործով 2014 թվականի մարտի 27-ի վճիռը, գանգառ թիվ 31150/09, *RTBF v. Belgium* գործով 2011 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգառ թիվ 50084/06:

դատական որոշումների հետ, որոնք կարող էին խախտել իրենց օրինական իրավունքները կամ շահերը¹:

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վերաքննիչ բողոք բերվում են՝

(...)

3) առաջին աստիճանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հասարակությունում անձանց տեղափոխման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, իսկ կալանքի տակ գրնվող կամ բժշկական հասարակությունում տեղափոխված անձանց համար, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը կալանավորվածներին պահելու վայրի կամ բժշկական հասարակության վարչակազմին հանձնված է մինչև ժամկետը լրանալը: Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով, իսկ կալանավորվածներին պահելու վայրի կամ բժշկական հասարակության վարչակազմին հանձնելու ժամանակը՝ այդ հասարակությունների գրասենյակների կամ պաշտոնատար անձանց կարարած նշումով:

5. Պաշտոնատար անձանց կողմից սահմանված ժամկետը պահպանելը հաստատվում է դատավարական փաստաթղթերում համապատասխան նշումով: Քրեական դատավարությանը մասնակցող անձանց հանձնման ենթակա փաստաթղթերի սրացման փաստը հաստատվում է գործին կցված նրանց արտագրությամբ»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կայի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»:

26. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ քրեադատավարական ժամկետները քրեական վարույթի պատշաճ ընթացքն ապահովող կարևոր նախադրյալներից են: Դրանք իրենցից ներկայացնում են օրենքով սահմանված որոշակի ժամանակահատված, որի ընթացքում դատավարությանը ներգրավված անձինք իրավունք ունեն կամ պարտավոր են կատարել որոշակի քրեադատավարական գործողություն: Սակայն

¹ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Miragall Escolano and Others v. Spain* գործով վերը հիշատակված վճռի 37-րդ կետը:

դատավարական կանոնների, այդ թվում՝ բողոքարկման ժամկետների հաշվարկի վերաբերյալ նորմերի մեկնաբանությունը չպետք է հանգեցնի ձևական մոտեցման՝ անհամաչափորեն սահմանափակելով անձի դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքը: Անձին պետք է ընձեռվի իր իրավունքներին և ազատություններին առնչվող դատական ակտը վիճարկելու հստակ և իրական հնարավորություն, ինչն իր հերթին, ի թիվս այլոց, ենթադրում է, որ տվյալ դատական ակտը պետք է անձին հասանելի լինի կամ անձը պետք է հաստատապես տեղյակ լինի դրա առկայության մասին: Ընդ որում, դատական պաշտպանության դիմելու ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե դատական ակտը փաստացի հասանելի դառնալու պահից դրա դեմ բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը, իսկ բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով¹:

27. Թիվ ԵԴ/2640/07/18 դատական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշման դեմ մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանը փոստային ծառայությանը հանձնելու միջոցով վերաքննիչ բողոք է բերել 2019 թվականի ապրիլի 8-ին՝ նշելով, որ դատական ակտը պաշտպանության կողմին հասանելի է դարձել 2019 թվականի մարտի 4-ին, ուստի խնդրել է վերաքննիչ բողոք բերելու ժամկետը հաշվել 2019 թվականի մարտի 4-ից²,

- 2019 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ըստ բողոքաբերի հայտնած տվյալների՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը պաշտպանության կողմին հասանելի է դարձել 2019 թվականի մարտի 4-ին, և դրա դեմ պաշտպան Տ.Ղազարյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել 2019 թվականի ապրիլի 8-ին, այսինքն՝ բողոքաբերը բաց է թողել դատական ակտն իրեն հասանելի դառնալու պահից 10-օրում բողոք ներկայացնելու ժամկետը³:

27.1. Թիվ ԵԴ/0063/15/19 դատական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Տ.Ղազարյանը 2019 թվականի մայիսի 23-ին Առաջին ատյանի դատարան է ներկայացրել վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն՝ նշելով, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռարենկ դատարանի՝ *Թաֆայել Խաչատրյանի* գործով 2020 թվականի մայիսի 26-ի որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

պաշտպանության կողմը ստացել է 2019 թվականի ապրիլի 4-ին, սակայն տեխնիկական վրիպակի պատճառով վերաքննիչ բողոքում նշվել է, որ այն պաշտպանության կողմին հասու է դարձել 2019 թվականի մարտի 4-ին, և բողոքում իր կողմից թույլ տրված հիշյալ տեխնիկական վրիպակի պատճառով Վերաքննիչ դատարանը 2019 թվականի ապրիլի 29-ին կայացրել է վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում¹,

- 2019 թվականի հունիսի 3-ին պաշտպան Տ.Ղազարյանը համապատասխան դիմումի հետ միասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի գրասենյակ է մուտքագրել իր ստորագրությամբ ստացականի պատճենը, որի բովանդակությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը պաշտպան Տ.Ղազարյանը ստացել է 2019 թվականի ապրիլի 4-ին²:

28. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքների վերլուծությունից բխում է, որ մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանը Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը ստացել է 2019 թվականի ապրիլի 4-ին, սակայն այդ հանգամանքը հիմնավորող ապացույց թիվ ԵԴ/2640/07/18 դատական գործով Վերաքննիչ դատարան չի ներկայացրել, թեև բողոքը հիմնավորելու պարտականությունը՝ այդ թվում բողոքը ժամկետանց չլինելու առնչությամբ, կրում է հենց բողոքաբերը: Վերջինս վերաքննիչ բողոքում նշել է, որ դատական ակտը պաշտպանության կողմին հասանելի է դարձել 2019 թվականի մարտի 4-ին և խնդրել է վերաքննիչ բողոք բերելու ժամկետը հաշվել նշված ժամկետից: Իսկ Վերաքննիչ դատարանի տրամադրության տակ եղած նյութերում բացակայել է ապացույցն առ այն, թե երբ է պաշտպանության կողմին հասանելի դարձել բողոքարկված դատական ակտը:

28.1. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ներկայացված բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելիս դատարանները, հնարավոր տեխնիկական վրիպակների պատճառով անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի անհարկի սահմանափակումներից խուսափելու նպատակով, պետք է բողոքը փոստային ծառայությանը հանձնելու ժամանակը որոշելիս հիմք ընդունեն ոչ միայն փոստային ծրարի դիմային երեսի վրա առկա դրոշմը, այլ նաև միջոցներ ձեռնարկեն այն ստուգելու ուղղությամբ (բողոքը փոստին հանձնելու օրը կարող է պարզվել փոստային

¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

անդորրագրի, «Հայփոստ» ՓԲԸ-ի կայքէջի, համապատասխան հարցում կատարելու և այլ միջոցներով):

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պետք է միջոցներ ձեռնարկեր՝ պարզելու պաշտպանության կողմին բողոքարկվող դատական ակտը փաստացի հասանելի դառնալու ժամկետը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, կոնկրետ դեպքում հիմնվել է բացառապես բողոքում նշված տվյալների վրա, որոնք, ինչպես հետագայում պարզվել է, չեն արտացոլել օբյեկտիվ իրականությունը և եղել են վրիպակի հետևանք: Արդյունքում, վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելով, Վերաքննիչ դատարանն անհարկի սահմանափակել է բողոքաբերի դատական մատչելիության իրավունքը:

Այս առումով Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի այն փաստարկը, որ դատարանի՝ իրավական նշանակություն ունեցող ցանկացած եզրահանգում, այդ թվում՝ դատավարական ժամկետը բաց թողնված լինելու կամ չլինելու մասին, պետք է հիմնված լինի օբյեկտիվ տվյալների վրա²:

29. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշման դեմ մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց է:

30. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյո՞ք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու վերաբերյալ մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանի միջնորդությունը բավարարման ենթակա չէ:

30. Թիվ ԵԴ/0063/15/19 դատական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի հունիսի 5-ի որոշմամբ փաստել է, որ թիվ ԵԴ/2640/07/18 դատական գործով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը Տ.Ղազարյանը ստացել է 2019 թվականի ապրիլի 4-ին և դրա դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել 2019 թվականի ապրիլի 8-ին: Նույն որոշմամբ, Առաջին ատյանի դատարանը սակայն, մերժել է բողոքարկման համար սահմանված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը՝ նշելով, որ 2018

¹ Տե՛ս *Անդրանիկ Խաչատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ ԵԴ2/0049/01/17 որոշման 19-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 15.2-րդ կետը:

թվականի նոյեմբերի 4-ի որոշմանը ծանոթանալու, այն բողոքարկելու իրավունքներից Տ.Ղազարյանը սահմանված ժամկետում փաստորեն չի օգտվել, հետևաբար նրա պատճառաբանությունն անհիմն է, քանի որ բողոքարկման համար սահմանված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու վերաբերյալ որևէ հիմնավոր փաստարկ կամ ապացույց դատարանին չի ներկայացրել¹,

- Վերաքննիչ դատարանը 2019 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ արձանագրել է, որ նույն հարցի, այն է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ առկա է Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 29-ի որոշումը, որով մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանի միջնորդությունը մերժվել է: Վերջինիս կողմից դատական ակտը վճռաբեկության կարգով չի բողոքարկվել և որոշումը մտել է օրինական ուժի մեջ, ուստի տվյալ պայմաններում ինչպես Առաջին ատյանի դատարանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանի կողմից նույն հարցի վերաբերյալ նոր որոշում կայացնելն իրավաչափ չէ²:

31. Նախորդ կետում շարադրված փաստական տվյալների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը՝ բողոքարկման համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ պաշտպան Տ.Ղազարյանի միջնորդությունը մերժելով, իսկ Վերաքննիչ դատարանը՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելով, պատշաճ գնահատականի չեն արժանացրել Տ.Ղազարյանի՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդությամբ ներկայացված պատճառաբանությունները, և մասնավորապես՝ ի հիմնավորումն վերոնշյալ միջնորդության ներկայացված համապատասխան փաստաթուղթը՝ ստացականը³, որով հաստատվում է Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը 2019 թվականի ապրիլի 4-ին ստանալու հանգամանքը:

31.1. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 10-ի որոշման այն եզրահանգմանը, որ նույն հարցի վերաբերյալ նոր որոշում կայացնելն իրավաչափ չէ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Տ.Ղազարյանը 2019 թվականի ապրիլի 8-ին ներկայացված վերաքննիչ բողոքում կամ դրան կից չի ներկայացրել բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ որևէ միջնորդություն, այլ իր բողոքում ընդամենը նշել է, որ դատական ակտը պաշտպանության կողմին

¹ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետերը:

հասանելի է դարձել 2019 թվականի մարտի 4-ին՝ խնդրելով վերաքննիչ բողոք բերելու ժամկետը հաշվել նշված ժամկետից: Սույն գործի փաստական տվյալներից բխում է, որ իրավաչափ չէ նաև Վերաքննիչ դատարանի՝ քննարկվող որոշման մեջ տեղ գտած այն պնդումը, որ թիվ ԵԴ/2640/07/18 դատական գործով Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 29-ի որոշումը վճռաբեկության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ¹:

32. Հետևաբար, հիմնավորված չեն ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու վերաբերյալ մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանի միջնորդությունը բավարարման ենթակա չէ:

33. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունն Առաջին ատյանի դատարանի կողմից մերժելու և Վերաքննիչ դատարանի կողմից պաշտպան Տ.Ղազարյանի բողոքն առանց քննության թողնելու պայմաններում, մեղադրյալ Ա.Մինասյանը զրկվել է իր իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումները վիճարկելու հնարավորությունից, դատական պաշտպանության իրավունքի իրացման ժամանակային սահմանափակումները կիրառվել են ոչ իրավաչափորեն, ինչի արդյունքում անձի իրավունքների սահմանափակման և հետապնդվող նպատակի միջև արդարացի հավասարակշռությունը չի ապահովվել:

34. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ա.Մինասյանի պաշտպան Տ.Ղազարյանի վերաքննիչ բողոքներն առանց քննության թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 29-ի և 2019 թվականի հուլիսի 10-ի որոշումներն օրինական և հիմնավորված չեն: Այդ որոշումները կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ, հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 4-5-րդ մասերի, 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար²:

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Մեղադրյալ Արա Միքայելի Մինասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 29-ի և 2019 թվականի հուլիսի 10-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

38. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴԻ/0120/12/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահույթյամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 7-ի որոշման դեմ Աշոտ Աշոտի Բաղայանի պաշտպան Տ.Ղազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 14-ի դատավճռով Աշոտ Աշոտի Բաղայանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 5-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

2. 2017 թվականի նոյեմբերի 24-ին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան», «Սևան» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկները սպասարկող անկախ հանձնաժողովը Ա.Բաղայանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու

և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ տվել է դրական եզրակացություն:

3. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), 2018 թվականի հունվարի 23-ին կայացրած որոշմամբ դատապարտյալ Ա.Բադալյանին պայմանական վաղաժամկետ ազատել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 14-ի դատավճռով նշանակված՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատագրվում պատժից դատապարտյալի չկրած՝ 2 (երկու) ամիս 14 (տասնչորս) օր ժամկետով ազատագրվումը կրելուց:

4. Վերոնշյալ դատական ակտի դեմ դատախազ Ա.Զաքարյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 հունվարի 23-ի որոշումը բեկանել է և դատապարտյալ Ա.Բադալյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը՝ վերացրել:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դատապարտյալ Ա.Բադալյանի պաշտպան Տ.Ղազարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նախագահին հասցեագրված՝ ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի պետի գրության համաձայն՝ դատարանի քննարկման է ներկայացվել «*Աշուր Աշուրի Բադալյանին պարիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու (պարիժի չկրած մասն ավելի մեղմ պարիժով փոխարինելու) հարցը*»²:

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «*(...) Դատարանն արձանագրում է, որ [Ա.Բադալյանն] ունի բարձրագույն կրթություն, հանցանքը կատարել է 24 տարեկանում, կատարած հանցանքի*

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է առնվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

² Տե՛ս նյութեր, թերթ 2:

համար գղջացել է, պարտաստանություն է հայտնել պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում շարունակել զինվորական ծառայությունը ՀՀ զինված ուժերում, քրեակարարողական հիմնարկի ռիսկային հաշվառումներով չի անցնում, չի ընդունում հանցավոր աշխարհի ավանդույթները, քաղաքացիական հայց կամ այլ գույքային պարտավորություններ չունի, վնասակար կախվածություններ, հսկումներ չունի:

Հարկ է նաև արձանագրել, որ թեև դատապարտյալի անձնական գործից տրված տեղեկանքում նշված է, որ Աշոտ Աշոտի Բաղայանը նախկինում 21.06.2017թ. և 04.08.2017թ. ենթարկվել է կարգապահական տույժի, սակայն Դատարանը գտնում է, որ այն չի կարող սույն դեպքում խոչընդոտ հանդիսանալ պարժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար: Եման եզրահանգման գալիս Դատարանը հաշվի է առնում դատապարտյալի անձը, պարժի նպատակների կատարված լինելու հանգամանքները, ինչպես նաև այն, որ դատապարտյալը, պարժիժը կրելով փակ ուղղիչ հիմնարկում, նշված տույժերը սրացել է բջջային հեռախոս պահելու համար:

Ավելին, դատարանն արձանագրում է, որ պարժիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պարժի չկրած մասն ավելի մեղմ պարժարեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովը հաշվի առնելով Աշոտ Աշոտի Բաղայանի վարքագիծը և նոր հանցագործություն կատարելու հավանականությունը բնորոշող հանգամանքները, 2017 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ նրա վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

Վերոգրյալ հանգամանքների համակցության մեջ գնահատելով նաև դատապարտյալի կատարած հանցագործության բնույթը և հանրության համար վրանգավորության աստիճանը, հանցանքի կատարման դրդապարձառները, փաստացի կրած պարժի ժամկետը՝ Դատարանը գտնում է, որ Աշոտ Աշոտի Բաղայանի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը ցածր է:

(...) [Պ]արժի հետագա կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու տեսանկյունից հնարավոր է փաստել, որ Աշոտ Աշոտի Բաղայանի կողմից օրինապահ վարքագիծ դրսևորելու հավանականության աստիճանը բավարար է թե՛ հասարակական անվրանգության և թե՛ հասարակությունում նրա վերահնարեզրման տեսանկյունից, իսկ պարժի նպատակները հնարավոր է վերջնականապես իրագործել համապարասխան վերահսկողության ներքո դատապարտյալի ազատության մեջ գտնվելու պայմաններում: Ուստի, Դատարանը գտնում է, որ դատապարտյալ Աշոտ Աշոտի Բաղայանին պետք է պայմանական վաղաժամկետ ազատել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության

դատարանի 2017 թվականի հունիսի 14-ի դատավճռով նշանակված ազատագրկման ձևով պարժի՝ 2 (երկու) ամիս 14 (տասնչորս) օր չկրած մնաից (...)¹:

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Դատապարտյալ Աշոտ Բաղայանին պարժից պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության հարցը լուծելիս նրա կողմից պարժի կրման ընթացքում պարժած վարքագիծ դրսևորելու մնաին Առաջին ասյանի դատարանի հեյրևությունը հիմնված չէ քրեակարարողական հիմնարկում դատապարտյալի գրնված լինելու ամբողջ ժամանակահարվածում վերջինիս անձի և վարքի մնաին րվյալների բազմակողմանի ուսումնասիրության վրա: Մասնավորապես՝ վիճարկվող որոշումը կայացնելիս Առաջին ասյանի դատարանի կողմից ըստ էության բավարար չստիով չեն վերլուծվել և համակցության մեջ պարժած չեն գնահարվել դատապարտյալ Աշոտ Բաղայանի կողմից պարժի կրման ողջ ընթացքում վերջինիս դրսևորած վարքագծի վերաբերյալ գործում սոկա րեղեկությունները, մասնավորապես այն, որ դատապարտյալ Աշոտ Բաղայանը պարիժը կրում է փակ ուղղիչ հիմնարկում: Պարժի կրման ընթացքում դատապարտյալը կարճ ժամանակահարվածի ընթացքում երկու անգամ ենթարկվել է կարգապահական րույժի, չի խրախուսվել, չի աշխարել, քրեակարարողական հիմնարկում գործող ինքնագործ միավորումներին, վերասոցիալականացման՝ այդ թվում նաս անձնական զարգացման միջոցառումներին չի մասնակցել:

Վերաքննիչ դատարանի գնահարմամբ՝ նշյալ հանգամանքները, այդ թվում նաս՝ պարիժը կրելու ընթացքում դատապարտյալի կողմից չմարված կարգապահական րույժի սոկայության պայմաններում կրկին կարգապահական րույժի ենթարկվելն (ընդ որում վերջինը՝ վիճարկվող որոշման կայացման օրվա դրությանը դեռևս մարված չի եղել) ավելի քան վկայում են պարժի կրման ընթացքում դատապարտյալի կողմից ոչ պարժած վարքագիծ դրսևորելու և պարիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման անթույլատրելիության մնաին (...)²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերի կարծիքով, Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 76-77-րդ հոդվածների պահանջները:

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 32-33:

² Տե՛ս նյութեր, թերթեր 111-112:

9.1. Ի հիմնավորումն վերը նշվածի՝ բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և չպատճառաբանված, քանի որ վերաքննության կարգով գործի դատական քննության ընթացքում Վերաքննիչ դատարանն ուշադրություն չի դարձրել Ա.Բադալյանի ուղղման մասին վկայող այնպիսի փաստերին, ինչպիսիք են՝ կատարած արարքի համար գոջալը, բանակում ծառայելու ցանկությունը, երիտասարդ տարիքը, ինչպես նաև փորձաշրջանի ընթացքում դրական վարքագիծ դրսևորելը: Ինչ վերաբերում է Ա.Բադալյանի նկատմամբ նշանակված կարգապահական տույժերին, բողոքաբերը նշել է, որ դրանց Ա.Բադալյանը ենթարկվել է նույնաբնույթ արարքների՝ հեռախոսից օգտվելու համար, քանի որ ցանկություն է ունեցել կապ հաստատել ընտանիքի անդամների հետ:

9.2. Բացի այդ, բողոքաբերն ընդգծել է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան», «Սևան» և «Արվյան» քրեակատարողական հիմնարկները սպասարկող՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովն Ա.Բադալյանի վերաբերյալ տվել է դրական եզրակացություն՝ ինչպես պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, այնպես էլ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի առնչությամբ: Առաջին ատյանի դատարանը, որոշում կայացնելով Ա.Բադալյանին չկրած պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ, չի անդրադարձել պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցին: Վերաքննիչ դատարանը, ստուգելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, քննության առարկա է դարձրել միայն այն հարցը, թե որքա՞նով է իրավաչափ Ա.Բադալյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին հետևությունը, և որևէ անդրադարձ չի կատարել ու հաշվի առնելով վերաքննության սահմանները՝ չէր էլ կարող անդրադարձ կատարել Ա.Բադալյանի պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցին: Արդյունքում ստորադաս դատարանները քննության առարկա չեն դարձրել Ա.Բադալյանի պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը՝ սահմանափակելով վերջինիս դատական պաշտպանության իրավունքը:

9.3. Բացի այդ, բողոքաբերը, վկայակոչելով **Ա. Արծրունու** և **Է. Ծոնվերանցի** գործերով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, փաստել է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը պետք է քննվեր կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, մինչդեռ այն քննվել է միանձնյա կարգով՝ չապահովելով արդար դատաքննության իրավունքի

բաղադրիչը կազմող՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի առկայությունը:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 7-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 23-ի որոշմանը, կամ գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության՝ Ա.Բադայանի պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը քննարկելու նպատակով, կամ գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ կոլեգիալ կազմով նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ր է արդյոք պատժի կրումից դատապարտյալ Ա.Բադայանին պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի (դատապարտյալ Ա.Բադայանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննարկման պահին գործող խմբագրությամբ) համաձայն՝ «1. Ազատագրված կամ կարգապահական գումարարկում պահելու ձևով պարփոժ կրող անձը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պարփոժի նվազագույն ժամկետը կրելուց հետո դատարանի կողմից կարող է պարփոժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը սույն հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով նախատեսված հանգամանքների վերաբերյալ պարփոժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պարփոժի չկրած մասն ավելի մեղմ պարժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի (այսուհետ՝ անկախ հանձնաժողով) եզրակացության կամ կարգապահական գումարարկի հրամանատարի միջնորդագրի քննարկման արդյունքում հանգում է հետևության, որ ուղղվելու համար դատապարտյալը նշանակված պարփոժի մնացած մասը կրելու կարիք չունի, քանի որ՝

1) պարփոժի կրման ընթացքում դրսևորել է պարշաճ վարքագիծ, և

2) դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու

հավանականությունը ցածր է:

(...):

1.1. Դատապարտյալի պարշաճ վարքագիծը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

1) պարփոժի կրման ընթացքում խրախուսանքի առկայությունը.

2) պատժի կրման ընթացքում կարգապահական տույժի առկայությունը.

3) պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը, եթե առկա է եղել նման հնարավորություն.

4) պատժի կրման ընթացքում առնվազն երեք ամիս աշխատելը, եթե առկա է եղել աշխատելու հնարավորություն, կամ եթե չաշխատելը պայմանավորված չի եղել դատապարտյալի առողջական խնդիրներով.

5) դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատող այլ հանգամանքներ:

1.2. Դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

1) դատապարտյալի տարիքը, դատապարտյալի տարիքը հանցագործություն կատարելու պահին.

2) հանցագործության բնույթը և հանրային վրանգավորությունը.

3) ռեցիդիվի առկայությունը.

4) իր կատարած հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը.

5) հանցագործությամբ պարճառած վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած լինելը կամ պարճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու վերաբերյալ գրավոր պարտավորություն ստանձնելը.

6) նրա վերաբերմունքը քրեական ենթամշակույթի նկատմամբ.

7) որոշակի հակումները, հնարավոր կախվածությունները, նախասիրությունները.

8) մասնակցությունը վերասոցիալականացման, այդ թվում անձնական զարգացման միջոցառումներին.

9) ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը կամ խնամքի տակ գրնվող անձանց առկայությունը.

10) սոցիալական միջավայրը.

11) առողջական, այդ թվում հոգեկան առողջության վիճակը, հարկադիր բուժման մեջ գրնվելը և հարկադիր բուժման արդյունքը.

12) դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատող այլ հանգամանքներ:

(...)

3. Պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

(...)

2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը.

(...)»:

13. Վերլուծելով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ վերոշարադրյալ քրեախրավական նորմերը՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ դատապարտյալին վաղաժամկետ ազատելու համար անհրաժեշտ է, որ՝

1) դատապարտյալը փաստացի կրած լինի իր նկատմամբ նշանակված պատժի՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով սահմանված նվազագույն ժամկետը.

2) օրենքով նախատեսված հանգամանքների վերաբերյալ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի եզրակացության քննարկման արդյունքում դատարանը հանգի հետևության, որ ուղղվելու համար դատապարտյալը նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի:

Ընդ որում, վերը նշված երկրորդ պայմանի հետ կապված՝ օրենսդիրը սահմանել է այն հիմնական չափանիշները, որոնց հիման վրա դատարանը կարող է գալ եզրահանգման դատապարտյալի՝ պատժի հետագա կրման աննպատակահարմարության վերաբերյալ, այն է՝ պատժի կրման ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելը և դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականության ցածր լինելը: Դեռ ավելին, օրենսդիրը ոչ միայն սահմանել է պատժի հետագա կրման նպատակահարմարությունը որոշելու հիմնական չափանիշները, այլև մանրամասնել է այն հանգամանքները, որոնք դատարանը պարտավոր է պատշաճ վերլուծության ենթարկել այդ չափանիշներից յուրաքանչյուրի առկայության կամ բացակայության մասին օրինական և հիմնավորված եզրահանգում անելու համար¹:

13.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող ինստիտուտի գործադրմամբ անձը պատժից ազատվում է պայմանական (ազատվող դատապարտյալի վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում դատարանը կարող է վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին որոշում կայացնել), ինչը ենթադրում է, որ պատժի նպատակները, ներառյալ՝ անձի ուղղումը, դեռ լիովին իրականացած չեն: Հետևաբար, պայմանական վաղաժամկետ ազատման ենթակա է այն դատապարտյալը, ում անձի, դրսևորած վարքագծի վերաբերյալ տվյալների և այլ հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նա կանգնած է ուղղման ճանապարհին: Այլ խոսքով՝ դատարանը պետք է համոզվի, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում անձի կողմից

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Արմենյանի* գործով 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ՇԴ/0014/12/17 որոշման 14-րդ կետը, *Արմեն Եղոյանի* գործով 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ՍԴ3/0010/12/18 որոշման 13-րդ կետը:

օրինապահ վարքագիծ դրսևորելու հավանականության աստիճանը բավարար է՝ թե՛ հասարակական անվտանգության և թե՛ հասարակությունում նրա վերաինտեգրման տեսանկյունից, իսկ պատժի նպատակները հնարավոր է վերջնականապես իրագործել՝ համապատասխան վերահսկողության ներքո դատապարտյալի՝ ազատության մեջ գտնվելու պայմաններում: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման արդյունքում դատարանի կայացրած որոշումը պետք է հիմնված լինի օրենքով սահմանված պայմանների և չափանիշների ու դրանցից բխող պատճառաբանված եզրահանգումների վրա: Ընդ որում, պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և փաստական տվյալներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա՝ իր մեջ չընդգրկելով վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ, քանի որ հակառակ պարագայում այդպիսի դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին¹:

14. Սույն գործի նյութերից երևում է, որ.

- Ա.Բաղայանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ՀՀ արդարադատության նախարարության «Հրագրան», «Սևան» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկները սպասարկող անկախ հանձնաժողովն Ա.Բաղայանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցով 2017 թվականի նոյեմբերի 24-ին տվել է դրական եզրակացություն²,

- Առաջին ատյանի դատարանը դատապարտյալ Ա.Բաղայանին պայմանական վաղաժամկետ ազատել է պատժի չկրած մասը կրելուց՝ իր դիրքորոշումը հիմնավորելով նրանով, որ Ա.Բաղայանի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը ցածր է, բացի այդ, նրա կողմից օրինապահ վարքագիծ դրսևորելու հավանականության աստիճանը բավարար է՝ թե՛ հասարակական անվտանգության և թե՛ հասարակությունում նրա վերաինտեգրման տեսանկյունից, իսկ պատժի նպատակները հնարավոր է վերջնականապես իրագործել՝ համապատասխան վերահսկողության ներքո դատապարտյալի՝ ազատության մեջ գտնվելու պայմաններում³,

- Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից ըստ էության պատշաճ չեն վերլուծվել

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Ղազարյանի* գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱԲԱԳ/0002/12/16 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

և համակցության մեջ չեն գնահատվել դատապարտյալ Ա.Բաղայանի կողմից պատժի կրման ողջ ընթացքում վերջինիս դրսևորած վարքագծի վերաբերյալ գործում առկա տեղեկությունները, մասնավորապես այն, որ դատապարտյալը պատժի կրման կարճ ժամանակահատվածի ընթացքում երկու անգամ ենթարկվել է կարգապահական տույժի, չի խրախուսվել, չի աշխատել, քրեակատարողական հիմնարկում գործող ինքնագործ միավորումներին, վերասոցիալականացման՝ այդ թվում նաև անձնական զարգացման միջոցառումներին չի մասնակցել¹:

15. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13.1-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնված է օրենքով սահմանված չափանիշների ու դրանց հիմքում դրված հանգամանքների վերաբերյալ պատշաճ պատճառաբանված եզրահանգումների վրա:

16. Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը Ա.Բաղայանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու անհնարինությունն իրավաչափորեն պայմանավորել է նրանով, որ վերջինս պատժի կրման ընթացքում երկու անգամ ենթարկվել է կարգապահական տույժի, ընդ որում երկրորդ կարգապահական խախտումը թույլ է տվել դեռևս չմարված կարգապահական տույժի առկայության պայմաններում, չի խրախուսվել, չի աշխատել, չի մասնակցել քրեակատարողական հիմնարկում գործող ինքնագործ միավորումներին, վերասոցիալականացման՝ այդ թվում անձնական զարգացման միջոցառումներին:

16.1. Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում բողոքաբերի՝ սույն որոշման 9.1-րդ կետում ներկայացված փաստարկներին:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատժի կրումից դատապարտյալ Ա.Բաղայանին պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Առաջին աստիճանի դատարանի որոշումն իրավաչափ չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր է:

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից Ա.Բաղայանի՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը քննության չառնելը՝ պայմանական վաղաժամկետ ազատելը վերացնելու պայմաններում:

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

19. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք(...):»:

Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, նույնիսկ, եթե նման խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի (դատապարտյալ Ա.Բադալյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննարկման պահին գործող խմբագրությամբ) համաձայն՝ «1. Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատագրվում կրող անձի պարժի չկրած մասը դատարանը կարող է փոխարինել ավելի մեղմ պարժարեսակով՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով նախարեսաված և պարժառված վնասը հարթելու հանգամանքները: Ընդ որում, անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել լրացուցիչ պարժից: Պարժի չկրած մասն ավելի մեղմ պարժարեսակով փոխարինելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև պրոբացիայի պետական ծառայության կողմից դատարանի կամ անկախ հանձնաժողովի պահանջի հիման վրա ներկայացված՝ պարժի չկրած մասն ավելի մեղմ պարժարեսակով փոխարինելու վերաբերյալ խորհրդարկական զեկույցը:

2. Պարժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պարժարեսակով դատապարտյալի կողմից պարժի ոչ պակաս, քան մեկ երրորդը փաստացի կրելուց հետո: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարիժը կատարող հիմնարկի ղեկավարը Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախարեսաված դեպքերում և կարգով, դատապարտյալին պարիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պարժի

չկրած մասն ավելի մեղմ պատժաբեասակով փոխարինելու հարցը ներկայացնում է դատարան (...):»:

20. Ներկայացված օրենսդրական կարգավորումների վերլուծության լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելը և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը ինքնուրույն ինստիտուտներ են, սակայն, քրեական վարույթի ընթացքում, որպես կանոն, դատապարտյալի նկատմամբ դրանց թույլատրելիության (կիրառելիության) հարցը քննարկվում է մեկ միասնական միջնորդության շրջանակում: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թե պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու և թե պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու նպատակահարմարությունը գնահատելիս դատարանը պետք է հաշվի առնի քրեական օրենքով նախատեսված միևնույն հանգամանքները: Այլ կերպ՝ լինելով սկզբունքորեն ոչ տարբեր ինստիտուտներ՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելը և թե պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելն ունեն կիրառության միևնույն իրավական հիմքեր: Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ տվյալ ինստիտուտը պատժից ազատելու ինքնուրույն տեսակ է, որի գործադրման համար անհրաժեշտ է դատարանի համոզվածությունն առ այն, որ դատապարտյալն ուղղվելու համար իր նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված մնացած մասը կրելու կարիք չունի, և այն կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով՝ հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով նախատեսված հանգամանքները¹:

21. Սույն գործի նյութերի համաձայն՝ Ա.Բաղայանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարան են ներկայացվել երկու՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցեր²: Առաջին ատյանի դատարանը, միջնորդության քննության արդյունքում Ա.Բաղայանին ազատելով պատժի հետագա կրումից, իրավացիորեն անդրադարձ չի կատարել նվազ բարենպաստ հետևանք առաջացնող՝ Ա.Բաղայանի պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցին: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, քննության առնելով Ա.Բաղայանի անձը բնութագրող հատկանիշները, դրսևորած վարքագիծը, այդպիսիք դիտարկել է միայն դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի տիրույթում՝ քննության առարկա

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Անուշ Մարտիրոսյանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ԿԴ-2/0008/12/17 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

չդարձնելով Ա.Բաղայանի պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը: Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով Ա.Բաղայանի պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցին, գրկել է վերջինիս նվազ բարենպաստ հետևանք առաջացնող՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը քննարկելու հնարավորությունից: Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ վերաքննության սահմաններով պայմանավորված՝ Վերաքննիչ դատարանը չէր էլ կարող անդրադառնալ այդ հարցին, քանի որ դա չէր քննարկվել Առաջին ատյանի դատարանի կողմից¹, ապա Վճռաբեկ դատարանը նշված փաստարկը ոչ իրավաչափ է համարում՝ այն պատճառաբանությամբ, որ թե՛ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու և թե՛ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը քննարկելիս գնահատման ենթակա են նույն հանգամանքները: Իսկ սույն գործով այդ հանգամանքները Առաջին ատյանի դատարանի կողմից արդեն իսկ քննարկման առարկա դարձվել են:

22. Սույն որոշման 19-20-րդ կետերում ներկայացված իրավական նորմերի և շարադրված իրավական վերլուծության հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Ա.Բաղայանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և չանդրադառնալով պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցին, Ա.Բաղայանին գրկել է իր իրավունքների և օրինական շահերի արդյունավետ դատական պաշտպանության՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքից:

23. Սույն որոշման 20-րդ կետի հաշվառմամբ անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը պետք է քննվեր կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, մինչդեռ այն քննվել է միանձնյա կարգով՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը ևս պատժից ազատելու ինստիտուտի առանձին տեսակ է, որի մասին որոշում կայացնելիս դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման ենթարկի դատապարտյալի անձի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև նրա նկատմամբ ավելի մեղմ պատժատեսակի կիրառման դեպքում պատժի նպատակների իրականացման հնարավորությունը: Դատապարտյալի անձի վերաբերյալ տվյալները գնահատելիս դատարանը, ի թիվս այլոց, պետք է հաշվի առնի

¹ Տե՛ս սույն որոշման 9.2-րդ կետը:

քրեակատարողական հիմնարկում նրա դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ կարգապահական տույժերի բացակայությունը, կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ, ռիսկայնության աստիճանը, ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները, կարգապահությունը, մասնակցությունը կրթական, մշակութային և այլ ծրագրերին, ներգրավվածությունը աշխատանքին, որպիսիք հաշվի են առնվում նաև պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս¹: Հետևաբար, այդ որոշումը ևս գործն ըստ էության չլուծող դատական ակտ է և ենթակա է վերանայման նույն ընթացակարգով, ինչպիսին կիրառվում է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշումները վերանայելիս: Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից վկայակոչված՝ **Ա. Արծրունու և Է. Ծոնվերանցի** գործով Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին, ապա այդպիսիք սույն գործով կիրառելի չեն, քանի որ դրանք վերաբերում են նոր ընդունված քրեական օրենքի կիրառման մասին դատարանի կայացրած որոշումների բողոքարկման ընթացակարգին:

24. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 61-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 7-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար²:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումներն ու հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Մկրտչյանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԱՐԱԴ/0031/12/13 որոշումը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Հրայր Հովսեփյանի* վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴԿ/0426/11/18 որոշումը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Աշոտ Աշոտի Բաղայանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 7-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

39. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0095/06/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահույթյամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Հայկ Վարդանի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 11-ի որոշման դեմ պաշտպան Հ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի հունվարի 29-ին ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Արուսյանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 7-րդ, 10-րդ կետերով, 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ, 10-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցվել է թիվ 20101519 քրեական գործը:

2019 թվականի հունվարի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 69100319 քրեական գործը, որը նույն օրը միացվել է թիվ 20101519 քրեական գործին:

2. 2019 թվականի փետրվարի 15-ին Հայկ Վարդանի Մանուկյանը ձերբակալվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր արարք կատարելու կասկածանքով:

3. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ Հայկ Մանուկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան), քննության առնելով կասկածյալ Հ.Մանուկյանի ձերբակալման իրավաչափության վերաբերյալ պաշտպան Զ.Հարությունյանի բողոքը և Հ.Մանուկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը, 2019 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ պաշտպանի բողոքը և քննիչի միջնորդությունը մերժել է:

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 16-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերի քննության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Ա.Բարսեղյանը:

6. ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան), 2019 թվականի հունիսի 10-ի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասի և 394-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի լուծման խնդրանքով: Դատական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև ՀՀ սահմանադրական դատարանի համապատասխան որոշման ուժի մեջ մտնելը:

7. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 21-ի թիվ ՍԴԱՌ-54 աշխատակարգային որոշմամբ գործի քննության ընդունումը մերժվել է:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 26-ի որոշմամբ դատական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

9. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ դատախազի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 16-ի որոշումը բեկանվել է և դատական գործն ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ քննիչի միջնորդությունն այլ կազմով նոր քննության ենթարկելու համար:

10. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 11-ի որոշման դեմ մեղադրյալ Հ.Մանուկյանի պաշտպան Հ.Սարգսյանը բերել է վճռաբեկ

բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

11. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Վ]արույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված փեղեկությունները բավարար չեն հավասարելու Հ.Մանուկյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքով հանցանք կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածը և նրան կալանավորելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է մերժման:

Հանգելով հետևության, որ Հ.Մանուկյանի նկարմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը ենթակա է մերժման հիմնավոր կասկածի բացակայության հիմքով, Դատարանը չի անդրադառնում կալանավորման հիմքերին: (...)»²:

12. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է փվել այնպիսի դատական սխալ, որն ազդել է սույն դատական գործի էլքի վրա և որը հնարավոր չէ ուղղել վերանայման վարույթի շրջանակներում:

Բանն այն է, որ Առաջին ատյանի դատարանը բավարար չափով չի գնահատել «հիմնավոր կասկածի» առկայության մասին վկայող նյութերում առկա ապացուցողական զանգվածը և անտեսել է հիմնավոր կասկածի ապացուցվածության աստիճանին ներկայացվող չափանիշները:

Նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ առկա են բավարար փաստական փյուջաներ առ այն, որ մեղադրյալն առնչություն ունի իրեն մեղադրված ենթադրյալ հանցագործությանը, որ այդ դեպքը, իրադարձությունն առերևույթ համապարասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հարկանիշներին:

Գործով հաստատված է այն հանգամանքը, որ փեղի է ունեցել զենքի գործադրմամբ ենթադրաբար կատարված խուլիգանության դեպք, որին

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառված նորմերի հետ փոխկապակցված քրեադատավարական նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

² Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 120-126:

առերևույթ առնչություն ունի նաև մեղադրյալը: Այս հանգամանքը չի հերքել նաև Առաջին արյանի դատարանը, այլ պարզապես գնահատականներ տալուց ցուցաբերել է բավականին խիստ մոտեցում: Գատարանը մասնավորապես վկայակոչելով նյութերում առկա սպացուցողական տվյալները, նշել է, որ «Վերը թվարկված վկաներից ոչ որի ցուցմունքներում առկա չեն այնպիսի փաստական տվյալներ, որ Հ.Մանուկյանի մոտ առկա է եղել, կամ վերջինիս կողմից գործածվել է զենք, կամ զենքին նմանվող առարկա, բացակայում են տեղեկություններ նաև այն մասին, որ Հ.Մանուկյանը իմացել կամ գիտակցել է, որ մասնակցում է խմբի կազմով զենք, կամ զենքին նմանվող առարկայի գործադրմամբ խուլիգանության կատարմանը: Թերևս, վերը թվարկված վկաների ցուցմունքներից բացառություն են կազմում միայն Գարիկ Գրիգորյանի ցուցմունքները, որով վերջինս նշում է միայն, որ Հ.Մանուկյանը փորձել է հարվածել կամ բռնել օձիքից: Ինչ վերաբերվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների վերաբերյալ գրություններին, ապա դրանցում միայն նշվում է, որ Հ.Մանուկյանը մասնակից է եղել տվյալ դեպքին»:

Չհամաձայնելով Առաջին արյանի դատարանի հետևություններին պետք է փաստել, որ նախևառաջ դատարանը հակասել է ինքնիրեն, քանի որ հաստատված համարելով մեղադրյալի մասնակցությունը դեպքին, մասնավորապես այն, որ նա փորձել է հարվածել կամ բռնել վեճի մասնակից այլ անձի օձիքից, միաժամանակ հաստատված չի համարել հիմնավոր կասկածի առկայությունը: Մինչդեռ այդ հանգամանքը բավարար էր քննության սկզբնական փուլում հիմնավոր կասկածի առկայության մասին հետևություն անելու համար:

Առավել խնդրահարույց է այն հանգամանքը, որ դատարանը կալանավորման կիրառման համարեքարում քննության առարկա է դարձրել մեղադրյալի մեղավորության, նրա դիտարկության հարցերը, մինչդեռ դրանք գործն ըստ էության քննելու փուլում լուծման ենթակա հարցեր են: Հաշվի առնելով, որ ըստ նյութերում առկա փաստական տվյալների՝ մեղադրյալի մասնակցությունն ու առնչությունը քննության առարկա դեպքին հաստատված է, որն առերևույթ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներին՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հիմնավոր չեն Առաջին արյանի դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի բացակայության մասին, ուստի այս մասով բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

(...) Անդրադատնալով բողոքարկի այն փաստարկներին, որոնք վերաբերում են Վերաքննիչ դատարանի կողմից կալանավորման հիմքերի և այլ պայմանների առկայությանը՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ այդ հարցերին իրավասու չէ անդրադատնալ, քանի որ վերաքննիչ դատարանը, հանդես գալով որպես վերանայման արյան, պետք է որոշի

արդեն իսկ կայացված դատական ակտի իրավաչափության հարցը՝ համապատասխան բողոքի առկայության դեպքում և այդ բողոքի առարկայի շրջանակներում, քանի որ օրենսդիրը վերաքննիչ դատարանի համար պահպանել է սահմանափակ վերանայման ընդհանուր կանոնը, մինչդեռ, եթե Վերաքննիչ դատարանն անդրադառնա կալանավորման հիմքերին և այլ պայմաններին, ապա կհասխարհի մի շարք հիմնարար սկզբունքներ:

(...)

(...) [Դ]ատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի իմաստով՝ վերաքննությունը չի կարող քննության առարկա դարձնել և ըստ էության լուծում տալ այնպիսի հարցերի, որոնք տվյալ գործով քննության ենթակա չէին առաջին աստիճանի դատարանում, քանի որ դրանով ապահովվում է դատական արյանների միջև գործառույթային կապերի փրամաքանական բնույթը և հարակ ընդգծում առաջին արյանի դատարանի կայացրած որոշման նշանակությունը: Կոնկրետ ձևավորած իրավակիրառ պրակտիկայի պայմաններում, երբ հիմնավոր կասկածի հարցը քննարկելուց դատարանը հանգում է հետևության, որ այն բացակայում է և դրանով պայմանավորված չի անդրադառնում կալանավորման մյուս պայմանների և հիմքերի հարցերին, ապա այդ ակտի դեմ բողոքի դեպքում, երբ վերաքննիչ դատարանը հաստատված է համարում հիմնավոր կասկածի առկայությունը, ապա չի կարող այլ բան անել, քան բեկանել առաջին արյանի դատարանի որոշումը և նյութն ուղարկել նույն դատարան այլ կազմով նոր քննության՝ ինչպես Է.Եղիազարյանի որոշումը արվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից:

(...)

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պետք է ղեկավարվել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորած իրավական դիրքորոշումներով և լուծել կոնկրետ սույն բողոքի վերջնական ընթացքը, այն է՝ բեկանել դատական ակտը և նյութն ուղարկել նույն դատարան՝ քննիչի միջնորդությունը ՀՀ Սահմանադրությանը, ՄԻԵԿ-ին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին, ՀՀ վճռաբեկ դատարանի և ՄԻԵԿ-ի կողմից ձևավորած իրավական դիրքորոշումներին և չափանիշներին համապատասխան այլ կազմով քննարկելու և վերջնական եզրահանգման գալու համար (...):¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 63-74:

13. Բողոքաբերը նշել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 11-ի որոշումը կայացվել է ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթների խախտումներով:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարան ներկայացված նյութերը բավարար չէին հիմնավորված համարելու մեղադրյալ Հայկ Մանուկյանի առնչությունը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքին, իսկ Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունները՝ հիմնավոր կասկածի բացակայության մասին, բավարար չափով փաստարկված և հիմնավորված են:

14. Բողոքաբերը գտել է, որ բողոքարկվող դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու անհրաժեշտությունը պայմանավորված է օրենքի միատեսակ կիրառության ապահովման, մասնավորապես՝ իրավունքի զարգացման գործառնությունով՝ կապված Վերաքննիչ դատարանի այն հետևությունների հետ, որ եթե Առաջին ատյանի դատարանը չի անդրադարձել կալանավորման հիմքերից որևէ մեկին, ապա Վերաքննիչ դատարանը զրկված է առկա նյութերի հիման վրա այդ հարցի կապակցությամբ գնահատական տալու հնարավորությունից:

15. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 16-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունը՝ մեղադրյալ Հ.Մանուկյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ:

17. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(...):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում՝ նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատագրվման ձևով պարժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն: (...):

18. Հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը Վահրամ Գևորգյանի գործով իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(...) Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը (...):

(...) [Յ]ուրաքանչյուր դեպքում [հանցանք կատարած լինելու կասկածը] պետք է լինի ողջամիտ:

(...) «[Հ]անցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը փյվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: (...) [Կ]ասկածը հիմնավոր կհամարվի (...) ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի փաստաթղթերի ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու

վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կարարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կարարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին:

(...) [Այսպիսով,] Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պարզաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պարզաճատարանված»¹:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

ա) Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված տեղեկությունները բավարար չեն հավաստելու Հ.Մանուկյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքը կատարելու հիմնավոր կասկածը, և նրան կալանավորելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է մերժման²:

բ) Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը բավարար չափով չի գնահատել «հիմնավոր կասկածի» առկայության մասին վկայող՝ նյութերում առկա ապացուցողական զանգվածը և անտեսել է հիմնավոր կասկածի ապացուցվածության աստիճանին ներկայացվող չափանիշները: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ առկա են բավարար փաստական տվյալներ առ այն, որ մեղադրյալն առնչություն ունի իրեն մեղսագրված ենթադրյալ հանցագործությանը, և որ այդ դեպքն առերևույթ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներին: Վերաքննիչ դատարանը նշել է, որ գործով հաստատված է այն հանգամանքը, որ տեղի է ունեցել զենքի գործադրմամբ ենթադրյալ խուլիգանության դեպք, որին առերևույթ առնչություն ունի նաև

¹ Տե՛ս Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-23-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

մեղադրյալը: Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ այս հանգամանքը չի հերքել նաև Առաջին ատյանի դատարանը, այլ պարզապես գնահատականներ տալուց ցուցաբերել է բավականին խիստ մոտեցում, այն է՝ վկայակոչելով նյութերում առկա ապացուցողական տվյալները՝ նշել է, որ «(...) վկաներից ոչ ոքի ցուցմունքներում առկա չեն այնպիսի փաստական փոխալներ, որ Հ.Մանուկյանի մոտ առկա է եղել, կամ վերջինիս կողմից գործածվել է զենք, կամ զենքին նմանվող առարկա, բացակայում են փորձակություններ նաև այն մասին, որ Հ.Մանուկյանը իմացել կամ գիտակցել է, որ մասնակցում է իսրի կազմով զենք, կամ զենքին նմանվող առարկայի գործադրմամբ խուլիգանության կատարմանը: Թերևս, վերը թվարկված վկաների ցուցմունքներից բացառություն են կազմում միայն Գարիկ Գրիգորյանի ցուցմունքները, որով վերջինս նշում է միայն, որ Հ.Մանուկյանը փորձել է հարվածել կամ բռնել օձիքից: Ինչ վերաբերվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների վերաբերյալ գրություններին, ապա դրանցում միայն նշվում է, որ Հ.Մանուկյանը մասնակից է եղել փոխյալ դեպքին»¹:

Վերաքննիչ դատարանը նշել է, որ ստորադաս դատարանը հակասել է ինքնիրեն, քանի որ հաստատած համարելով մեղադրյալի մասնակցությունը դեպքին, մասնավորապես այն, որ նա փորձել է հարվածել կամ բռնել վեճի մասնակից այլ անձի օձիքից՝ միաժամանակ հաստատված չի համարել հիմնավոր կասկածի առկայությունը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, այդ հանգամանքը բավարար էր քննության սկզբնական փուլում հիմնավոր կասկածի առկայության մասին հետևություն անելու համար: Վերաքննիչ դատարանը գտել է, որ ըստ նյութերում առկա փաստական տվյալների՝ մեղադրյալի մասնակցությունն ու առնչությունը քննության առարկա դեպքին հաստատված է, իսկ այն առերևույթ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի հատկանիշներին²:

20. Սույն որոշման 17-18-րդ կետերում ներկայացված իրավական նորմերը և մեջբերված իրավական դիրքորոշումները կիրառելով նախորդ կետում մեջբերված փաստական տվյալների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ իրավաչափ է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ սույն գործով առկա ապացույցները բավարար են քննության սկզբնական փուլում հիմնավոր կասկածի առկայության մասին հետևություն անելու համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, գործի փաստական տվյալների վկայակոչմամբ, իր որոշման մեջ պատշաճ կերպով պատճառաբանել և հիմնավորել է

¹ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

մեղադրյալին մեղսագրվող արարքի կատարման հիմնավոր կասկածի առկայությունը:

21. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանազում է, որ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի հետևությունը՝ մեղադրյալ Հ.Մանուկյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ:

22. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. իրավասու էր արդյո՞ք Վերաքննիչ դատարանը գործն ըստ էության չլուծող դատական ակտը՝ մեղադրյալ Հ.Մանուկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց չկիրառելու վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի որոշումը բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշդ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պարզառարանված, սպա վերաքննիչ դատարանը պարզառարանում է անսխալ թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապարասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղարկվում է համապարասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ. (...)

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում քաղաքացիական հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

2. Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը

մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը՝

1) մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պարճառաբանված, ապա վճռաբեկ դատարանը պարճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ. (...)

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է համապատասխան ստորադաս դատարանի ակտը, եթե համապատասխան ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

6) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում վճռաբեկ դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին արյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պարճառաբանում է առաջին արյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պարճառաբանված:

2. Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից»:

24. ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՌ-1459 որոշման համաձայն՝ «(...) [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվող] «նոր դատական ակտ» եզրույթը չի

նույնանում՝ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դատական ակտերից որևէ մեկի հետևի և օրենսդիրը, կիրառելով «նոր դատական ակտ» եզրույթը, նկատի չի ունեցել հիշյալ հոդվածի 1-ին մասում թվարկված այն լիազորությունները, որոնք վերապահված են Վճռաբեկ դատարանին՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման դեպքերում: Սա վերաբերում է նաև միջանկյալ դատական ակտերի վերանայման՝ փիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նույնական ձևակերպման ամրագրման նպատակին: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ «նոր դատական ակտ» եզրույթն օրենսդիրը գործածել է Օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի խմատով (...):»¹:

25. Օրենքի կիրառման դատական պրակտիկայի միասնականության ապահովման սահմանադրական գործառույթի իրացման համատեքստում անդրադառնալով գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վերադաս դատական ատյանների լիազորություններին՝ Վճռաբեկ դատարանը Հրայր Հովսեփյանի գործով իրավական դիրքորոշումներ է արտահայտել այն մասին, որ. «(...) [Թ]եև գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը, որպես կանոն, պետք է ավարտվի Վճռաբեկ դատարանում՝ վերջնական որոշում կայացնելու միջոցով, սակայն որոշ դեպքերում, անձի՝ դատարանի մարչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների պաշտպանությունը, ինչպես նաև Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառույթային կապի և դատական վերանայման ծավալի վերլուծաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումը կարող է ապահովվել միայն Վճռաբեկ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու արդյունքում: Այլ կերպ, այդ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից բացառապես գործը նոր քննության ուղարկելը կարող է լինել արդյունավետ միջոց՝ հերևողականորեն երաշխավորելու վերադատության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի անխախտելիությունը:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որոշ դեպքերում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերով գործը նոր քննության ուղարկելու իրավասությունը կարող է լինել դատական վերանայման իրավունքի իրացման նախապայման և արդար դատաքննության իրավունքի (դատարանի մարչելիության, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման) երաշխիք: Նման դեպքում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի իրավաչափությունը

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1459 որոշումը:

ստուգելիս, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, պետք է կիրառելի լինեն գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերանայելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները: Մինչև սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, վերաբերելի մասով (*mutatis mutandis*), կիրառելի են նաև գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերանայելիս Վերաքննիչ դատարանի նույնաբնույթ լիազորությունների նկատմամբ¹ (...)»²:

26. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը մերժել է նախաքննության մարմնի միջնորդությունը՝ մեղադրյալ Հ.Մանուկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ³:

- Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ այն պատճառաբանությամբ, որ Առաջին ատյանի դատարանի թույլ տրված դատական սխալը Վերաքննիչ դատարանին զրկում է վերաքննիչ բողոքում մատնանշված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցը քննարկման առարկա դարձնելու հնարավորությունից⁴:

27. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 23-25-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը իրավասու էր գործն ըստ էության չլուծող դատական ակտը՝ մեղադրյալ Հ.Մանուկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց չկիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

28. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 11-ի որոշումն օրինական է և հիմնավորված: Հետևաբար, վճռաբեկ բողոքը պետք է մերժել, Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 11-

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ «Արցախբանակ» ՓԲԸ-ի գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴ/0003/11/10 որոշման 11-րդ կետը:

² Մանրամասն տե՛ս Հրայր Հովսեփյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

³ Տե՛ս սույն որոշման 4-րդ և 11-րդ կետերը:

⁴ Տե՛ս սույն որոշման 9-րդ և 12-րդ կետերը:

ի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Հայկ Վարդանի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 11-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

40. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ/0014/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման դեմ դիմող Ալյոշա Եգոռի Դավթյանի ներկայացուցիչ Ա. Խալափյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի ապրիլի 16-ին Սյունիքի մարզի դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 41200418 քրեական գործը:

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Ն.Հովհաննիսյանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշմամբ Ավետիս Սամսոնի Ավետիսյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, և քրեական գործի վարույթը կարճվել է:

Վերոնշյալ որոշման դեմ Ալյոշա Եգոռի Դավթյանի ներկայացուցիչ Ա.Խալափյանի բողոքը Սյունիքի մարզի դատախազ Վ.Հարությունյանի՝ 2018 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ մերժվել է:

2. Դիմող Ալյոշա Դավթյանի ներկայացուցիչ Ա.Խալափյանի բողոքի քննության արդյունքում Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2018 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմամբ այն մերժել է:

3. Վերոնշյալ որոշման դեմ դիմող Ա.Դավթյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դիմող Ա.Դավթյանի ներկայացուցիչ Ա.Խալափյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ վարույթ է ընդունվել¹:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող վիստերը.

5. «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև «Հայփոստ» ՓԲԸ) կողմից տրված RR259615557AM բեռնային համարով անդորրագի համաձայն՝ փոստային առաքման միջոցով 2018 թվականի հոկտեմբերի 27-ին Առաջին ատյանի դատարանի որոշման օրինակն ուղարկվել է դիմող Ա.Դավթյանին²: Մինևույն ժամանակ, «Հայփոստ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջում նշված բեռնային համարով առաքանին հասցեատիրոջը հանձնելու վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է³:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 27-ի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքում դիմող Ա.Դավթյանը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը ստացել է 2018 թվականի նոյեմբերի 5-ին⁴:

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

² Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 51-52:

³ Տե՛ս <https://www.haypost.am/hy/track-and-trace>:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 2-9:

6.1 Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով դիմող Ա.Դավթյանի վերաքննիչ բողոքը, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(․․․) Համաձայն գործի փաստական տվյալների՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը վերոնշյալ որոշումը՝ 27.10.2018թ-ի կից գրությամբ ուղարկել է բողոքաբերի կողմից նշված հասցեով՝ Սյունիքի մարզ, Կապան համայնք, Զորաստան քն., իսկ 30.10.2018-ին այն սրացվել է Ա.Դավթյանի կողմից:

(․․․)

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.10.2018թ-ի որոշման դեմ վերաքննիչ բողոքը փոստին հանձնելու միջոցով Վերաքննիչ դատարան է ուղարկվել 2018թ-ի նոյեմբերի 15-ին, այն է՝ որոշման հրատարակելու օրվանից 19 և այն սրանսալուց 16 օր հետո, հետևաբար բողոքը ժամկետանց է և պետք է թողնվի առանց քննության»¹:

7. Վճռաբեկ վարույթի ընթացքում ստացվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի տնօրենի՝ 2019 թվականի հուլիսի 25-ի գրությունը, համաձայն որի՝ RR259615557AM բեռնային համարով փոստային ծրարը հասցեատիրոջ՝ դիմող Ա. Դավթյանին է հանձնվել 2018 թվականի նոյեմբերի 6-ին²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի՝ դիմողի ներկայացուցիչ Ա.Խալափյանի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, ինչի արդյունքում խախտվել է դիմողի դատական պաշտպանության իրավունքը:

Ի հիմնավորումը վերոգրյալի՝ բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտի բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբը որոշելու հարցում հանգել է սխալ հետևության: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է հաշվեր դիմող Ա.Դավթյանի կողմից այն ստանալու պահից, այսինքն՝ 2018 թվականի նոյեմբերի 5-ից, հետևաբար, վերջինիս բողոքը նույն թվականի նոյեմբերի 15-ին փոստին հանձնելով՝ պահպանել է բողոքարկման տասնօրյա ժամկետը:

9. Վերոշարադրյալի հիման վրա, դիմող Ա.Դավթյանի ներկայացուցիչ Ա.Խալափյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ կամ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 14-15:

² Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 83:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք դիմող՝ Ա. Դավթյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

11. ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝ «1. Սույն օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվվում են ժամերով, օրերով, ամիսներով և փարիներով:

2. Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը:

3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա գրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին: Ժամկետն ամիսներով կամ փարիներով հաշվելիս ժամկետը վերջանում է վերջին ամսվա համապատասխան օրը, իսկ եթե փոխյալ ամիսը չունի համապատասխան թիվ, ժամկետը վերջանում է այդ ամսվա վերջին օրը: Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Ձերբակալման փակ պահելու ժամկետն սկսվում է արգելանքի վերցնելու պահից:

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, իսկ կալանքի փակ գրավող կամ բժշկական հաստատությունում տեղավորված անձանց համար, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը կալանավորվածներին պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնված է մինչև ժամկետը լրանալը: Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով, իսկ կալանավորվածներին պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնելու ժամանակը՝ այդ հաստատությունների գրասենյակների կամ պաշտոնատար անձանց կատարած նշումով:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վերաքննիչ բողոք բերվում են՝

(...)

3) առաջին արյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

12. Վճռաբեկ դատարանը, արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում անդրադառնալով դատական բողոքարկման դատավարական ժամկետների պահպանության ստուգման հարցին, արձանագրել է, որ անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի անհարկի սահմանափակումները բացառելու նպատակով ներկայացված բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին դատարանների եզրահանգումները պետք է կառուցվեն հստակ և որոշակի փաստական հանգամանքներից բխող հետևությունների վրա՝ ապահովելու համար բողոքարկման իրավունքի սահմանափակման և հետապնդվող նպատակի միջև համարժեք հարաբերակցությունը: Մասնավորապես, համապատասխան փաստական տվյալները կարող են ձեռք բերվել փոստային անդորրագրի, «Հայփոստ» ՓԲԸ-ի կայքէջի, համապատասխան հարցում կատարելու և այլ միջոցներով¹:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- դիմող Ա. Դավթյանը ներկայացված վերաքննիչ բողոքում նշել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը ստացել է 2018 թվականի նոյեմբերի 5-ին,

Վճռաբեկ վարույթի ընթացքում ստացված տեղեկատվության համաձայն՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումը RR259615557AM բեռնային համարով փոստային առաքման միջոցով 2018 թվականի նոյեմբերի 6-ին հանձնվել է դիմող Ա. Դավթյանին²,

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վարդգես Գասպարիի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԴ/0067/11/16 որոշումը, 15-րդ կետ, *Ադրյանիկ Խաչատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ ՇԴ2/0049/01/17 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

- Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքը դիմող Ա.Դավթյանը փոստին է հանձնել 2018 թվականի նոյեմբերի 15-ին¹,

- Վերաքննիչ դատարանը դիմող Ա.Դավթյանի բողոքը թողել է առանց քննության՝ նշելով, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումը ստացել է 2018 թվականի հոկտեմբերի 30-ին և նշված որոշման դեմ վերաքննիչ բողոքը բերվել է 2018 թվականի նոյեմբերի 15-ին՝ այն ստանալու պահից 16 օր անց, հետևաբար, ներկայացված բողոքը ժամկետանց է²:

14. Վերլուծելով վերոշարադրյալ փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը դիմող Ա.Դավթյանին հանձնելու օրվա վերաբերյալ Վերաքննիչ դատարանը հանգել է սխալ եզրահանգման: Այսպես՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը, փոստային առաքման միջոցով, թիվ RR259615557AM բեռնային համարով ուղարկվել է Ա.Դավթյանին: «Հայփոստ» ՓԲԸ-ի տնօրենի գրության համաձայն՝ նշված բեռնային համարով փոստային ծրարը դիմող Ա.Դավթյանին է հանձնվել 2018 թվականի նոյեմբերի 6-ին, որպիսի պայմաններում, սույն գործով Առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննիչ բողոքարկման 10-օրյա ժամկետը հաշվարկելու ընթացքը սկսվում է որոշումը ստանալու հաջորդ օրվանից՝ 2018 թվականի նոյեմբերի 7-ից, հետևաբար դիմող Ա.Դավթյանը վերաքննիչ բողոքը նույն թվականի նոյեմբերի 15-ին փոստին հանձնելով այն ներկայացրել է սահմանված ժամկետում:

Մինևս սույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերաքննիչ բողոքում դիմող Ա.Դավթյանը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը ստացել է 2018 թվականի նոյեմբերի 5-ին, սակայն Վերաքննիչ դատարանը նշված տեղեկատվությունը պարզելուն ուղղված միջոցներ ձեռնարկելու փոխարեն՝ ոչ իրավաչափ հետևություն է արել Առաջին ատյանի դատարանի որոշումը դիմող Ա.Դավթյանի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 30-ին ստացված լինելու մասին: Ավելին՝ Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի պատճառաբանել, թե կոնկրետ որ փաստական տվյալ(ներ)ով է հաստատված համարել Առաջին ատյանի դատարանի որոշումը դիմող Ա.Դավթյանի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 30-ին ստացված լինելու հանգամանքը:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներկայացված բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնված չէ վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող դատավարական ժամկետի պահպանված չլինելու մասին հստակ և որոշակի փաստական տվյալներից բխող եզրահանգումների վրա:

15. Նախորդ կետում կատարված վերլուծությունը գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ժամկետանց լինելու պատճառաբանությամբ դիմող Ա.Դավթյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն անհիմն սահմանափակել է դիմողի՝ դատարանի մատչելիության իրավունքը, հաշվի առնելով, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է բողոքարկման ժամկետի պահպանմամբ:

Ուստի, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ դիմող Ա.Դավթյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար¹:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-րդ և 423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Ալյոշա Եգոռի Դավթյանի ներկայացուցիչ Ա.Խալափյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

41. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՆԴ/0100/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի սեպտեմբերի 24-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 16-ի որոշման դեմ ամբաստանյալ Լևոն Դերենիկի Հակոբյանի և պաշտպան Ժ.Կոտիկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի սեպտեմբերի 5-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում հարուցվել է թիվ 60112017 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ Լևոն Դերենիկի Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ Լ.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով:

2017 թվականի դեկտեմբերի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք

վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի հունիսի 19-ի դատավճռով Լ.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 2 (երկու) տարի ժամկետով, 244-րդ հոդվածով՝ ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ առանց լրացուցիչ պատիժ նշանակելու:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կանոններով՝ հանցանքների համակցությամբ պատիժները լրիվ գումարելու միջոցով, Լ.Հակոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 2 (երկու) տարի ժամկետով: Նշանակված պատժի ժամկետի մեջ հաշվակցվել է Լ.Հակոբյանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 6-ից մինչև 2018 թվականի հունիսի 11-ը կալանքի տակ գտնվելու 9 (ինը) ամիս 5 (հինգ) օր ժամկետը, և թողնվել է կրելու ազատազրկում՝ 2 (երկու) տարի 2 (երկու) ամիս 25 (քսանհինգ) օր ժամկետով՝ զրկելով նրան տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 2 (երկու) տարի ժամկետով: Լ.Հակոբյանի նկատմամբ կիրառվել է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, և վերջինս ազատվել է ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելուց:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Արթուր Արտուշի Հակոբյանը:

3. Ամբաստանյալ Ա.Հակոբյանի պաշտպան Վ.Թադևոսյանի և ամբաստանյալ Լ.Հակոբյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի դեկտեմբերի 16-ին որոշում է կայացրել ամբաստանյալ Լ.Հակոբյանի բողոքը մերժելու, ամբաստանյալ Ա.Հակոբյանի պաշտպան Վ.Թադևոսյանի բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 19-ի դատավճիռը մասնակիորեն բեկանելու և Ա.Հակոբյանի մասով գործը ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու մասին:

4. Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 13-ի որոշումներով Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 16-ի որոշման դեմ ՀՀ

գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճարելի բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ ամբաստանյալ Լ.Հակոբյանի և պաշտպան Ժ.Կոտիկյանի բողոքը՝ ընդունվել վարույթ: Վճարելի դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ նախատեսվել է վճարելի բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Լևոն Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «*Ես, վարելով իրեն պարկանոց «HONDA ACCORD» մակնիշի 7911 HA ժամանակավոր համարանիշի ավտոմեքենան, թույլ է տվել ճանապարհային երթևեկության կանոնների խախտում, ինչի հետևանքով տեղի է ունեցել ճանապարհադրանսպորտային պարահար, որն անզգուշությամբ առաջացրել է անչափահաս Լարիսա Մկրտչյանի մահը, Քնար Սարգսյանի առողջությանն անզգուշությամբ պարճառվել է կյանքին վրանգ սպառնացող ծանր վնաս, Կարեն Մկրտչյանի առողջությանը՝ միջին ծանրության վնաս, ինչից հետո թողել է ճանապարհադրանսպորտային պարահարի վայրը:*

Այսպես.

Լևոն Դերենիկի Հակոբյանը, 2011 թվականի ապրիլի 19-ից, ունենալով «B» և «C» կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական, աշխարելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Երևան քաղաքի փրկարարական վարչության Ավանի բաժնի թիվ 11 հրշեջ փրկարարական ջոկարի օղակի հրամանատար, ունենալով փրկարար ծառայության ավագի կոչում, 2017 թվականի սեպտեմբերի 5-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, իրեն պարկանոց «HONDA ACCORD» մակնիշի 7911 HA ժամանակավոր համարանիշի ավտոմեքենայով աշխատանքի վայրից ուղևորվել է Երևան քաղաքի Աճառյան փողոց՝ ավտոմեքենան լիցքավորելու նպատակով բենզին գնելու համար: Հասնելով Աճառյան փողոցի 42 հասցեի դիմաց գրնվող «CPS» ընկերությանը պարկանոց բենզալցակայանի մոտ, ավտոմեքենան կայանել է Աճառյան 42 հասցեի դիմաց՝ դեպի Մյասնիկյան պողոտայի ուղղության երթևեկելի ուղեմասի աջակողմյան գոտիում: Բենզին գնելուց հետո աշխատանքի վայր վերադառնալու նպատակով, երթևեկության մասնակից Լևոն Դերենիկի Հակոբյանը, վերսկսել է իր կողմից վարվող «HONDA ACCORD» մակնիշի 7911 HA ժամանակավոր համարանիշի ավտոմեքենայի երթևեկությունը,

տեխնիկական տեսակետից սրելոձեղ է վթարային իրադրություն և թույլ տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի, ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված «Ճանապարհային երթևեկության կանոնների» 36, 39 և 40 կետերի և Հավելված №1-ի Ձև №2-ի «Ճանապարհային գծանշումներ» գլխի 1-ին «Հորիզոնական գծանշում» բաժնի դրոշմների պահանջներին հակասող գործողություններ, դրանցով իսկ պայմանավորել ճանապարհափորանապորտային պարահարի առաջացում՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից, մասնավորապես՝ թույլատրված վայրից հեռադարձ կարարելու փոխարեն, փորձել է հեռադարձը կարարել չթույլատրված վայրից և անգամ նման պայմաններում, վթարային իրադրություն չսրելոձեղելու և ճանապարհափորանապորտային պարահարի առաջացումը կանխելու նպատակով չմիացնելով դեպի ձախ շրջադարձի լուսային ցուցիչը, ճանապարհի բաժանարար զույգ հոժ գծանշման առկայության պայմաններում, նախապես չգրադեցնելով երթևեկության տվյալ ուղղության համար նախատեսված երթևեկելի մասի համապարասիան եզրային գործին, աջակողմյան 1-ին երթևեկելի գոտուց սկսելով ձախ մանևրի՝ հեռադարձի իրականացումը, կորագծով շարժվել է դեպի ձախ՝ նպատակ ունենալով հարել ճանապարհի բաժանարար զույգ հոժ գծանշումը և հեռադարձ կարարել՝ այդ ընթացքում ճանապարհը չզիջելով համընթաց, հարևան երթևեկության գոտիներով առանց ուղղությունը փոխելու շարժվող տրանսպորտային միջոցներին, մասնավորապես՝ տվյալ դեպքում, Արթուր Արտուշի Հակոբյանի վարած «HUMMER H2» մակնիշի 07 XX 078 հաշվառման համարանիշի ավտոմեքենային, որի արդյունքում խոչընդոտ է սրելոձեղ նշված ավտոմեքենայի երթևեկության համար և սրիպել վերջինիս վարորդ Արթուր Հակոբյանին անսպասելի փոխել շարժման ուղղությունը, ինչի հետևանքով Արթուր Հակոբյանն իր վարած ավտոմեքենան դուրս բերելով հանդիպակաց երթևեկելի ուղեմաս, ընդհարվել է այդ ուղեմասով դեպի Աբովյան քաղաքի ուղղությամբ երթևեկող, Կարեն Սուրիկի Մկրտչյանի վարած «OPEL VECTRA 1.6» մակնիշի 32 ՕԼ 127 հաշվառման համարանիշի ավտոմեքենային: Նշված ավտոմեքենայի մեջ տվյալ պահին գտնվել են ուղևորներ Քասր Սարգսի Սարգսյանը, Այա Արմենի Մուրադյանը և անչափահաս Լարիսա Կարենի Մկրտչյանը, այնուհետև՝ ընդհարվել է նույն ուղղությամբ երթևեկող, Արմեն Գագիկի Ասրյանի վարած «NISSAN X-TRAIL 2.0» մակնիշի 34 NN 210 հաշվառման համարանիշի ավտոմեքենային: Ճանապարհափորանապորտային պարահարի հետևանքով «OPEL VECTRA 1.6» մակնիշի 32 ՕԼ 127 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի ուղևոր

Հարիսա Մկրտչյանին անզգուշությամբ պատճառով է մահ, Կարեն Մկրտչյանի առողջությանը՝ միջին ծանրության, իսկ Քնար Սարգսյանի առողջությանը՝ կյանքին վրանգ պատճառող ծանր վնաս:

Նման պայմաններում, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վրանգավոր արարքի կատարումից հետո, (...), հանդիսանալով փրկարար ծառայության աշխատակից, ի պաշտոնե պարտավոր լինելով արտակարգ իրավիճակների պայմաններում, ձեռնարկել փրկարարական աշխատանքներ, իսկ որպես երթևեկության մասնակից «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ կետի դ) ենթակետով սահմանված դրույթների ուժով պարտավոր լինելով անմիջապես կանգնեցնել տրանսպորտային միջոցը, ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված կարգով միացնել վթարային լուսային ազդանշանը և չբեղաշարժել տրանսպորտային միջոցը, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ տուժածներին առաջին բժշկական օգնություն ցույց տալու, «Շտապ բժշկական օգնություն» կամ մասնագիտացված այլ ծառայություն կանչելու համար, պատահարին իր մասնակցությունը չբացահայտելու նպատակով, թողել է ճանապարհադրանապորտային պատահարի վայրը՝ շարունակելով ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը՝ չթույլատրված վայրից հետադարձ կատարելով, իր վարած «HONDA ACCORD» մակնիշի 7911 HA ժամանակավոր համարանիշի ավտոմեքենայով թողել է ճանապարհադրանապորտային պատահարի վայրը, դիմել է փահուսարի և հասնելով աշխատանքի վայր, հորդորել է իր ավտոմեքենայի ուղևոր Էդգար Ավետիսյանին կատարվածի մասի ղեկավարությանը չզեկուցել: Դեպքի առնչությամբ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում պարզելով Լևոն Հակոբյանի մասնակցությունը ճանապարհադրանապորտային պատահարին, վերջինս հետաքննության մարմնի կողմից ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին¹:

6. Առաջին ատյանի դատարանը դատավճռով արձանագրել է. «(...) Ամբաստանյալներ Լևոն Հակոբյանի (...) մեղավորությունը Գաբարյանը հաստատված է համարում հենց իր և ամբաստանյալ Ա.Հակոբյանի/ ցուցմունքներով և դատաքննության ընթացքում հետազոտված հետևյալ ապացույցներով. տուժող Քնար Սարգսի Սարգսյանի ցուցմունքներով (...), տուժողի իրավահաջորդ Կարեն Սուրիկի Մկրտչյանի ցուցմունքով (...), վկա Արմեն Գազիկի Ասրյանի ցուցմունքով (...), վկա Ասյա Արմենի Մուրադյանի ցուցմունքով (...), վկա Դերենիկ Լևոնի Հակոբյանի ցուցմունքով (...), վկա Էդգար Վարուժանի Ավետիսյանի ցուցմունքներով (...), վկա Գևորգ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 154-157:

Նուրարի Խաչատրյանի նախաքննական և դատարանական ցուցմունքով (...), վկա Գագիկ Մեխակի Սուրենյանի ցուցմունքով (...), վկա Արթուր Հայրապետի Հակոբյանի ցուցմունքով (...), վկա Հարություն Համլետի Հարությունյանի ցուցմունքով (...), վկա Արթուր Էդվարդի Ղասաբողյանի նախաքննական ցուցմունքով (...), վկա Մհեր Առաքելի Հովհաննիսյանի նախաքննական ցուցմունքով (...), վկա Էրիկ Ռաֆայելի Խաչատրյանի նախաքննական ցուցմունքով (...), վկա Անդրանիկ Կարենի Սկրպչյանի նախաքննական ցուցմունքով (...), ճանապարհապարհաստորագրային դեպքի վայրը զննելու մասին արձանագրությունով (...), «Օպել» մակնիշի 32 ՕԼ 127 հաշվառման համարանիշի ավտոմեքենան զննելու մասին արձանագրությունով (...), «Համեր» մակնիշի 07 XX 078 հաշվառման համարանիշի ավտոմեքենան զննելու մասին արձանագրությունով (...), «Նիսսան» մակնիշի 34 NN 210 հաշվառման համարանիշի ավտոմեքենան զննելու մասին արձանագրությունով (...), «Հոնդա» մակնիշի 7911 HA ժամանակավոր համարանիշի ավտոմեքենան զննելու մասին արձանագրությունով (...), [Ա]րթուր Հակոբյանից առգրավված լազերային սկավառակում պարունակվող տեսանյութը զննելու մասին արձանագրությունով (...), «Ֆոռա» ընկերությանը պատկանող «Ֆորդ» խանութ-սրահից դեպքին վերաբերող տեսանյութը առգրավելու մասին արձանագրությունով (...), «Ֆորդ» խանութ-սրահի տեսախցիկների տեսագրությունների զննության մասին արձանագրությունով (...), «Յուգ-Գազ Գրուպ» ՍՊ ընկերությանը պատկանող գազալցակայանից դեպքին վերաբերող տեսանյութը առգրավելու մասին արձանագրությունով (...), «Յուգ Գազ Գրուպ» ՍՊ ընկերությանը պատկանող լցակայանի տեսանկարահանող սարքերի տեսագրության զննության վերաբերյալ արձանագրությունով (...), www.youtube.com համացանցային կայքի «Gagik SHAMSHYAN» անվանումը կրող ալիքում տեղադրված «ԲԱՅԱՌԻԿ ՏԵՍԱՆՅՈՒԹ՝ հանրապետությունը ցնցած Hummer-ի մասնակցությամբ ողբերգական ավտովթարից» վերնագիրը կրող, դեպքին վերաբերող տեսանյութը զննելու մասին արձանագրությունով (...), [դ]ատարժշկական փորձաքննության թիվ 1839h եզրակացությամբ (...), [դ]ատարժշկական փորձաքննության թիվ 1840h եզրակացությամբ (...), [դ]իակի դատարժշկական փորձաքննության թիվ 1076 եզրակացությամբ (...), [դ]ատարավտոտեխնիկական փորձաքննության թիվ 67441708 եզրակացությամբ (...), [դ]ատարավտոտեխնիկական փորձաքննության թիվ 73111708 եզրակացությամբ (...), որպես իրեղեն սպացույց ճանաչված «HONDA ACCORD» մակնիշի 7911HA ժամանակավոր հաշվառման համարանիշի ավտոմեքենայով (...), որպես իրեղեն սպացույց ճանաչված «HUMMER H2» մակնիշի 07 XX 078 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով (...), որպես իրեղեն սպացույց ճանաչված «OPEL VECTRA

1.6» մականիշի 32 OL 127 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով (...), որպես իրենին ապացույց ճանաչված «NISSAN X-TRAIL 2.0» մականիշի 34 NN 210 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով (...), որպես այլ փաստաթուղթ, ապացույց ճանաչված՝ Արթուր Հակոբյանից առգրավված և զննված լազերային սկավառակով (...), որպես այլ փաստաթուղթ, ապացույց ճանաչված՝ «Տորդ» խանութ-սրահի և «Յուգ Գազ Գրուպ» ՄՊ ընկերությանը պարկանող լցակայանի տեսանկարահանող սարքերի՝ դեպքին վերաբերվող տեսագրությունները պարունակող լազերային սկավառակներով (...), որպես այլ փաստաթուղթ, ապացույց ճանաչված՝ www.youtube.com համացանցային կայքի «Gagik SHAMSHYAN» անվանումը կրող ալիքում տեղադրված «ԲԱՅԱՌԻԿ ՏԵՍԱՆՅՈՒԹ» հանրապետությունը ցնցած Hummer-ի մասնակցությամբ ողբերգական ավտովթարից» վերնագիրը կրող, դեպքին վերաբերող տեսանյութը պարունակող լազերային սկավառակով (...), որպես այլ փաստաթուղթ, ապացույց ճանաչված փաստաթղթերով՝ ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնի Ավանի բաժանմունքից ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչություն ստացված 06.09.2017 թվականի թիվ 32/1-2103 գրությունով (...), ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարից 14.09.2017թ.-ին ստացված թիվ 7/172/10138-17 գրությունով (...), ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից թիվ 17-2-2310-17 գրությամբ ստացված տեղեկարվությունով (...), փորձագետ Սարգիս Խաչատրյանի ցուցմունքով (...), փորձագետ Վաչե Եհնոյանի ցուցմունքով (...):

(...)

Լևոն Դերենիկի Հակոբյանի կարարած հանցանքները համապարասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հարկանիշներին: (...)»¹:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) [Վ]երլուծելով սույն գործով ձեռք բերված և Դատարանի կողմից դատաքննությամբ հետազոտված ապացույցները, դրանցից յուրաքանչյուրը գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, ինչպես նաև ստացման աղբյուրի և ձևավորման ընթացքի համադրությամբ, այդ ապացույցներից յուրաքանչյուրը համադրելով մյուս աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ տվյալ դեպքում առկա է փոխկապակցված ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որը, բացառելով հակասակի ողջամիտ հավանականությունը, հիմք է տալիս անվերապահ հետևություն

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 127-142:

անելու առ այն, որ ամբաստանյալ Լևոն Հակոբյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով նախատեսված արարքները: (...)»¹:

Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակները գտել են, որ ստորադաս դատարանների կողմից արդար և օբյեկտիվ չեն գնահատվել նախաքննությամբ և դատաքննությամբ ձեռք բերված ապացույցները, անտեսվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված՝ մրցակցության, ապացույցների ազատ գնահատման հիմնական սկզբունքները, չեն վերլուծվել և գնահատվել գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները, որոնք հանգեցրել են անհիմն դատավճռի կայացման:

Մասնավորապես, բողոքաբերների կարծիքով ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել Լ.Հակոբյանի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության խախտումների բնույթը, առաջացած հետևանքների նկատմամբ նրա դրսևորած հոգեբանական վերաբերմունքը, հաշվի չեն առել այն, որ կոնկրետ իրադրությունում ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին և առողջությանը վնաս պատճառելու, ինչպես նաև վտանգավոր հետևանքների առաջացման հավանականությունը Լ.Հակոբյանի համար ակնհայտ չի եղել:

Բացի այդ, ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել Լ.Հակոբյանի վարքագիծը, մասնավորապես այն, որ նա, իմանալով, որ ոստիկանները փնտրում են սպիտակ «Հոնդա» ավտոմեքենայի վարորդին, ինքնական ներկայացել է իրավապահ մարմիններին, ցուցմունքներ է տվել կատարվածի վերաբերյալ, նպաստել գործի հանգամանքների բացահայտմանը: Վերջինս չի ժխտել, որ թույլ է տվել ճանապարհային երթևեկության կանոնների խախտում, քանի որ հետադարձ է կատարել ճանապարհի չթույլատրվող մասից, սակայն նշել է, որ հետադարձ կատարելիս իր երթևեկած ուղղեմասում մեքենա և որևէ այլ խոչընդոտ չի եղել:

Բողոքաբերներն ընդգծել են նաև, որ կատարված դատաավտոտեխնիկական փորձաքննությամբ հաստատվել է, որ պատճառահետևանքային կապ է առկա Ա.Հակոբյանի գործողությունների ու առաջացած ծանր հետևանքների միջև, և որ նա իր վարքագծով ու

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 4-23:

կատարած գործողություններով իրեն զրկել է վթարը կանխելու տեխնիկական հնարավորությունից: Մինչդեռ, Լ.Հակոբյանը պատահարին մասնակից չի եղել, և նրա կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումն ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ չի գտնվել վթարի առաջացման մեխանիզմի հետ:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Լ.Հակոբյանի մասով Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 19-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը, հռչակել Լ.Հակոբյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում՝ հանցակազմի բացակայության հիմքով և նրան ճանաչել անպարտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Լ.Հակոբյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի և 244-րդ հոդվածի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման ու քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության ու գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ստորադաս դատարանները մեղսագրված արարքներում ամբաստանյալ Լ.Հակոբյանի մեղավորության հարցում հանգել են ճիշտ հետևության:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Լ.Հակոբյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով նախատեսված արարքներում հաստատված, իսկ բողոքաբերների պատճառաբանությունները հերքված են ամբաստանյալների, տուժող Ք.Սարգսյանի, տուժողի իրավահաջորդ Կ.Մկրտչյանի, վկաներ՝ Ա.Ասրյանի, Ա. Մուրադյանի, Դ.Հակոբյանի, Է.Ավետիսյանի, Գ.Խաչատրյանի, Գ.Սուրենյանի, Ա.Հակոբյանի, Հ.Հարությունյանի, Ա.Ղասաբօղյանի, Մ.Հովհաննիսյանի, Է.Խաչատրյանի, Ա.Մկրտչյանի ցուցմունքներով, դեպքին վերաբերող տեսանյութերն առգրավելու, ճանապարհատրանսպորտային դեպքի վայրը, ավտոմեքենաները և դեպքին վերաբերող տեսանյութերը զննելու մասին

արձանագրություններով, դատաբժշկական փորձաքննության թիվ 1839հ և 1840հ, դիակի դատաբժշկական փորձաքննության թիվ 1076, դատաավտոտեխնիկական փորձաքննության թիվ 67441708 և դատաավտոտեխնիկական փորձաքննության թիվ 73111708 եզրակացություններով, իրեղեն ապացույց ճանաչված ավտոմեքենաներով, որպես այլ փաստաթուղթ՝ ապացույց ճանաչված լազերային սկավառակներով և փաստաթղթերով, փորձագետներ Ս.Խաչատրյանի և Վ.Նինոյանի ցուցմունքներով¹:

Հետևաբար, ամբաստանյալ Լ.Հակոբյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի և 244-րդ հոդվածի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված են:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Լ.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ճանապարհապարհանսպորտային պատահարի վայրը թողնելը ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած վարորդի կողմից սույն օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման դեպքում՝*

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապարիկից երկուհարյուրհիսնապարիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտարկությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը (...):»:*

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.*

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...):

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նկարագրված արարքը դիտավորյալ հանցագործություն է, իսկ դրա համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում երկու տարին, ուստի այն դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով սահմանված հանցավոր արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները (...):»:

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկարումներ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ (...) [կետրում] նշված [հիմքով] գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը կրկնում է նախկինում արտահայտած իր դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանափակումները չունեն բացարձակ բնույթ, և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլոց, քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող դրույթի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում¹:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում²: Մասնավորապես, դատարանը պետք է պարզի, թե արդյոք ամբաստանյալը համաձայն է, որ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: Անձի համաձայնությունը ստանալու դեպքում դատարանը պարտավոր է դադարեցնել նրա նկատմամբ քրեական հետապնդումը, իսկ համաձայնության բացակայության դեպքում պետք է դատական քննությունը շարունակի ընդհանուր կարգով, սակայն դատավճիռ կայացնելիս՝ դադարեցնի անձի նկատմամբ քրեական հետապնդումը: Ընդ որում, երբ անձն արդեն հնարավորություն է ունեցել առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (վերջին դեպքում՝ վճռաբեկ բողոք բերելու միջոցով) վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը, ապա քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս նրա դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը բացակայում է³:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Լ.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով մեղաազգրվող

¹Տե՛ս, *mutatis mutandis*, Մխիթար Էլոյանի և այլոց վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ որոշման 14-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Անահիր Սաղաթելյանի* վերաբերյալ գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10, *Սիրաժ Դամբարյանի և այլոց* վերաբերյալ գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11, *Հրանտ Մազմանյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14, *Ֆարիդա Ավագիմյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՎԴ2/0016/01/14, *Անդրանիկ Գրիգորյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԴ/0180/01/15 որոշումները:

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սիրաժ Դամբարյանի և այլոց* վերաբերյալ գործով վերը հիշատակված որոշման 25-րդ կետը:

արարքն ավարտվել է **2017 թվականի սեպտեմբերի 5-ին**¹: Առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը կայացվել է **2019 թվականի հունիսի 19-ին**, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել **2019 թվականի դեկտեմբերի 16-ին**²: Նշված որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը 2020 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ³:

15. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Լ.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով մեղսագրվող արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը լրանալու օրվա՝ **2019 թվականի սեպտեմբերի 5-ի** դրությամբ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել: Հետևաբար, Լ.Հակոբյանին քրեական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետը Վերաքննիչ դատարանի որոշումը կայացնելու օրվա դրությամբ արդեն իսկ անցած է եղել: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, պատշաճ ուշադրության չարժանացնելով նշված հանգամանքը, 2019 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ չի քննարկել վաղեմության ժամկետն անցնելու հիմքով Լ.Հակոբյանին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը:

16. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով Լ.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով քրեական հետապնդումը չդադարեցնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

16.1. Մինչև սույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև սույն գործով Լ.Հակոբյանի նկատմամբ կիրառվել է Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, և վերջինս ազատվել է դատավճռով նշանակված պատժից, սակայն, կոնկրետ գործով Համաներման մասին օրենքի նշված դրույթով անձին պատժից ազատելու և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի՝ վաղեմության ժամկետն

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 2-3-րդ կետերը:

³ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

անցնելու հիմքերի առկայության պայմաններում, պետք է նախապատվությունը տրվի երկրորդ հիմքին, քանի որ դրա կիրառման իրավական հետևանքներն առավել բարենպաստ են անձի համար: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե Համաներման մասին օրենքի համապատասխան դրույթի կիրառմամբ Լ.Հակոբյանն ազատվում է նշանակված պատժից՝ մեղադրական դատավճռի առկայության պայմաններում, ապա վաղեմության ժամկետի հիմքով՝ առհասարակ քրեական պատասխանատվությունից¹:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Լ.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

17. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործի հարուցումը մերժել, հարուցված քրեական գործը կարճել, ինչպես նաև դադարեցնել քրեական հետապնդումը կամ չիրականացնել քրեական հետապնդում 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ կարարած հանցագործությունների դեպքերով (բացառությամբ անմիջականորեն մարդու մահվան հանգեցրած դեպքերի, որոնցով առկա է քրոժոդի իրավահաջորդի առարկությունը), որոնցով՝ անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են անզգուշությամբ հանցագործություն կատարելու մեջ, որոնց համար նախարեսված է պարիժ ոչ ավելի, քան վեց փարի ժամկետով ազատագրելու (...):»:

Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Սույն օրենքի կարարումը վերապահել (...) Հայասրանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերով վճռաբեկ բողոքներն ընդունվել են Հայասրանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարույթ (...):»:

Նկատի ունենալով, որ Լ.Հակոբյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անզգուշությամբ հանցագործություն կատարելու մեջ, որը տեղի է ունեցել մինչև 2018 թվականի հոկտեմբերի 21-ը, և որի համար նախատեսված պատիժը չի

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Արմենակ Ավագյանի վերաբերյալ գործով 2020 թվականի հունվարի 10-ի թիվ ԿԳ-3/0038/01/17 որոշումը:

գերազանցում վեց տարի ժամկետով ազատազրկումը, տուժողի իրավահաջորդն առարկություն չի հայտնել Համաներման մասին օրենքի կիրառմանը¹, ինչպես նաև քրեական գործի նյութերում բացակայում է Համաներման մասին օրենքի կիրառմանը խոչընդոտող որևէ հանգամանք, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա է ամբաստանյալ Լ.Հակոբյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառման անհրաժեշտ վավերապայմանները:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Լ.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, այն է՝ Համաներման մասին օրենքի ընդունման հիմքով:

18. Լ.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Համաներման մասին օրենքի ընդունման հիմքով, քրեական հետապնդումը դադարեցնելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ անձն արդեն իրացրել է օրենքով սահմանված կարգով իր մեղավորության հարցը համապատասխան դատական ատյաններում վիճարկելու իր իրավունքը, հետևաբար բացակայում է վերջինիս դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը²:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լ.Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց գրավն անհրաժեշտ է վերացնել և գրավի գումարը վերադարձնել գրավատուին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 76:

² Տե՛ս *mutatis mutandis* Ֆարիդա Ավագիմյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՎԴ2/0016/01/14 որոշման 16-րդ կետը, Սիրաժ Դամբարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշման 25-րդ կետը:

հունիսի 19-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումն ամբաստանյալ Լևոն Դերենիկի Հակոբյանի մասով բեկանել ու փոփոխել:

2. Լևոն Դերենիկի Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Լևոն Դերենիկի Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի հիման վրա:

3. Լևոն Դերենիկի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավը վերացնել և գրավի գումարը վերադարձնել գրավատուին:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

42. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴՆ/0057/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի սեպտեմբերի 24-ին

ք. Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով նոր հանգամանքի հիմքով Վաչե Վահագնի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2017 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռով Վաչե Վահագնի Պողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել կալանքի՝ 2 (երկու) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանվելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

2. Մեղադրող Մ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2018 թվականի մարտի 21-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակի, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճիռը պատժի մասով բեկանել և փոփոխել է:

Վաչե Պողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 150.000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 30-ի՝ «Իրեղեն ապացույցը ոչնչացնելու մասին» ակտի համաձայն՝ իրեղեն ապացույց ճանաչված «մարիխուանա» տեսակի թմրամիջոցը ոչնչացվել է¹:

Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք չի բերվել և այն մտել է օրինական ուժի մեջ:

2018 թվականի օգոստոսի 13-ին Վ.Պողոսյանը վերցվել է հաշվառման՝ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Արմավիրի բաժնում:

2018 թվականի օգոստոսի 24-ին Վ.Պողոսյանը դիմում է ներկայացրել իր նկատմամբ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերի» մասին ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշումը կիրառելու վերաբերյալ:

2018 թվականի օգոստոսի 27-ին պրոբացիայի ծառայության Արմավիրի մարզային բաժնի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան է ներկայացվել միջնորդություն՝ Վ.Պողոսյանի նկատմամբ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերի» մասին ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշումը կիրառելու վերաբերյալ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ դատապարտյալ Վ.Պողոսյանի նկատմամբ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերի» մասին ՀՀ կառավարության՝ 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշումը կիրառելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Արմավիրի մարզային բաժնի պետ Կ.Ստեփանյանի ներկայացրած միջնորդությունը թողնվել է առանց քննության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ դատապարտյալ Վ.Պողոսյանի կողմից նոր հանգամանքի հիմքով բերված վերաքննիչ բողոքը մերժվել է:

6. Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 25-ի և 2019 թվականի փետրվարի 26-ի որոշումներով դատապարտյալ Վ.Պողոսյանի բողոքները վերադարձվել են՝ ձևական սխալները շտկելու և դրանք կրկին

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 261:

ներկայացնելու համար, որից հետո սակայն, դատապարտյալ Վ.Պողոսյանի կողմից վճռաբեկ բողոք չի ներկայացվել:

7. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի կողմից նոր հանգամանքի հիմքով բերված բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2020 թվականի հունվարի 29-ի որոշմամբ հարուցել է դատական ակտի վերանայման վարույթ և վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Վաչե Պողոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է այն բանի համար, որ «(...) նա հանդիսանալով ՀՀ ՊՆ 63853 զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով կրտսեր սերժանտ, 23.07.2017թ.-ին սպորինի ձեռք է բերել՝ քաղել է և զորամասի 3-րդ հրաձգային զումարտակի 2-րդ հարկի ննջարանի իր զինվորական մահճակալի ներքնակի տակ, առանց իրացնելու նպատակի սպորինի պահել է զգալի չափերով՝ 2.112 գրամ հասարարուն չոր քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը, հղում կատարելով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին, ինչպես նաև վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածը և ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը, փաստարկել է, որ նշված փոփոխություններով բարելավվել է Վաչե Պողոսյանի վիճակը, հետևաբար դրանք ենթակա են կիրառման վերջինիս նկատմամբ:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է հարուցել դատական ակտերի վերանայման վարույթ, բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճիռը, Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 21-ի որոշումը, և ՀՀ քրեական

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 182:

օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ ճանաչել և հռչակել Վաչե Պողոսյանի անմեղությունը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՄԴՈ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է Վաչե Պողոսյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 21-ի որոշումը վերանայելու համար:

12. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) Արարքի պայրժելիությունը վերացնող կամ պայրիժը մեղմացնող օրենքն ունի հեղադարձ ուժ»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արարքի հանցավորությունը վերացնող, պայրիժը մեղմացնող կամ հանցանք կարարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հեղադարձ ուժ ունի, այսինքն՝ րարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մղնելը համապարասիան արարք կարարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պայրիժը կամ կրել են դա, սակայն ունեն դարվածություն»:*

13. Քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար, նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Դրա հետ մեկտեղ, ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Մասնավորապես, քրեական օրենքի հետադարձության կանոնը սկսում է գործել այն դեպքերում, երբ նոր օրենքը կա՛մ վերացնում է արարքի հանցավորությունը (ապարքրեականացում), կա՛մ մեղմացնում է պատիժը, կա՛մ այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը: Թվարկված պայմաններն ունեն իմպերատիվ բնույթ, և նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դրանցից առնվազն մեկի առկայության պարագայում նոր օրենքի գործողությունը տարածվում է մինչև այն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց

վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն¹:

14. ՀՀ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան), 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման շրջանակներում անդրադառնալով արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու կառուցակարգին, արձանագրել է. «(...) [Ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից և վերջինիս՝ սույն որոշման մեջ բացահայտված բովանդակությամբ կիրառումն ապահովելու համար իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը պարիժ կրող անձանց նկարմամբ անհրաժեշտ է իրականացնել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ իրավակարգավորումների շրջանակներում՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելը դիտարկելով որպես դատական ակտը վերանայելու համար նոր հանգամանք (...)]»²:

Արդյունքում, Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ գտնվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը համապարասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելը իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք, և օրինական ուժի մեջ մտնած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով (...)»³:

15. Նախորդ կետում մեջբերված Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի ընդունմամբ նախկինում կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ենթակա են վերանայման՝ ՀՀ քրեական

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գասպար Պողոսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴՌ/0013/01/11 որոշման 16-17-րդ կետերը:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման եզրափակիչ մասը:

դատավարության օրենսգրքի 49.1-րդ գլխով սահմանված՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման կանոններով: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը նոր հանգամանք է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու համար:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմեար (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝*

պարծվում է կալանքով առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրվում՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հավելվածում «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի համար որպես **զգալի չափ** է սահմանված եղել **0.5 գրամից** մինչև **5.0 գրամը ներառյալ**:

Վերոնշյալ օրենքի 4-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 1-5-րդ հավելվածներն ուժը կորցրած ճանաչելուց հետո ՀՀ կառավարության՝ 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի համար որպես **մանր չափ է** սահմանվել՝ **0.5 գրամից** մինչև **2.5 գրամը ներառյալ**, իսկ որպես **զգալի չափ՝ 2.5 գրամից** մինչև **12.5 գրամը ներառյալ**:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վաչե Պողոսյանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ առանց իրացնելու նպատակի **զգալի չափի՝ 2.112 գրամ** «մարիխուանա» տեսակի թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու և պահելու համար¹:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները վերացնում են Վաչե Պողոսյանի վերաբերյալ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով հաստատված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի հանցավորությունը:

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Մասնավորապես, «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի զգալի չափի նվազագույն և առավելագույն սահմանների օրենսդրական փոփոխությունների համեմատական ուսումնասիրությունից երևում է, որ դրանց արդյունքում 2.112 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոցն այսուհետ ոչ թե զգալի, այլ մանր չափի է: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով Վաչե Պողոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նման պայմաններում, թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին պետք է տալ հետադարձ ուժ և գործողությունը տարածել մինչև դրանց ուժի մեջ մտնելը Վաչե Պողոսյանի կողմից կատարված արարքի վրա:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է դատապարտյալ Վաչե Պողոսյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 21-ի որոշումը վերանայելու համար:

19. Վերանայման արդյունքում անհրաժեշտ է դատապարտյալ Վաչե Պողոսյանի վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճիռը, Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 21-ի որոշումը բեկանել ու փոփոխել, Վաչե Պողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426¹-426²-րդ, 426⁴-րդ, 426⁷-րդ և 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վաչե Վահագնի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 21-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վաչե Վահագնի Պողոսյանի վերաբերյալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 21-ի որոշումը բեկանել ու փոփոխել:

3. Վաչե Վահագնի Պողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

4. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

43. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԴ/0008/06/19

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 9-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Աշոտ Կամոյի Կիրակոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ պաշտպան Կ.Քալանթարյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչությունում 2019 թվականի հունիսի 3-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 24101319 քրեական գործը: Նշված գործի նյութերով նախաքննության մարմինը հարուցել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ թիվ 24101419, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով՝ թիվ 24101519, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ թիվ 24101619 քրեական գործերը, որոնք միացվել են թիվ 24101319 քրեական գործին՝ նախաքննությունը շարունակելով 24101319 համարի ներքո:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունիսի 7-ի որոշումներով Աշոտ Կիրակոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական

օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

1.1. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի հունիսի 7-ի որոշմամբ Աշոտ Կիրակոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

1.2. 2019 թվականի օգոստոսի 9-ին Աշոտ Կիրակոսյանը հայտնաբերվել է և ձերբակալվել: 2019 թվականի օգոստոսի 10-ին նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Կիրակոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերահաստատվել է: Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 4-ի, դեկտեմբերի 4-ի և 2020 թվականի փետրվարի 4-ի որոշումներով մեղադրյալ Ա.Կիրակոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է՝ յուրաքանչյուր անգամ երկու ամիս ժամկետով:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Կիրակոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է՝ երկու ամիս ժամկետով: Պաշտպան Կ.Քալանթարյանի միջնորդությունը՝ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ, մերժվել է:

3. Վերոնշյալ որոշման դեմ պաշտպան Կ.Քալանթարյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2020 թվականի մայիսի 6-ի որոշմամբ թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպան Կ.Քալանթարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 30-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Մեղադրյալ Ա.Կիրակոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի

ապրիլի 4-ով թվագրված որոշումը՝ դատական նիստի արձանագրության համաձայն, կայացվել է 2020 թվականի ապրիլի 3-ին տեղի ունեցած դատական նիստում և նույն օրն առձեռն, ստորագրությամբ հանձնվել է պաշտպան Կ.Քալանթարյանին¹:

6. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով պաշտպան Կ.Քալանթարյանի վերաքննիչ բողոքը, դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Առաջին արյանի դատարանի բողոքարկվող որոշումը մեղադրյալ Աշոտ Կամոյի Կիրակոսյանի պաշտպան Կարեն Քալանթարյանը, այդ մասին ստորագրությամբ հավաստելով, սրացել է 2020 թվականի ապրիլի 3-ին: Այլ կերպ՝ բողոքարկվող որոշումը պաշտպանին փաստացի հասու է դարձել 2020 թվականի ապրիլի 3-ին, հետևաբար դատական ակտի բողոքարկման 10-օրյա ժամկետի վերջին օրը եղել է 2020 թվականի ապրիլի 13-ը, մինչդեռ մեղադրյալի պաշտպան Կարեն Քալանթարյանն Առաջին արյանի դատարանի վերոգրյալ որոշման դեմ վերաքննիչ բողոքն առձեռն ներկայացրել է 2020 թվականի ապրիլի 14-ին:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ (...) պաշտպան Կարեն Քալանթարյանը վերաքննիչ բողոքը ներկայացրել է դատական ակտը սրանալուց հետո 10-օրյա ժամկետի խախտմամբ, հետևաբար բողոքարկման ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելու հիմքերը բացակայում են:

(...) [Պ]աշտպան Կարեն Քալանթարյանը, վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետը բաց թողնելու հանգամանքի ուժով, իրավական տեսանկյունից օբյեկտիվորեն անկարող է իրացնել դատական բողոքարկման իր իրավունքը, հետևաբար ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության՝ բողոքը ժամկետանց լինելու հիմքով (...)»²:

7. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ պաշտպան Կ.Քալանթարյանի վերաքննիչ բողոքն էլեկտրոնային փոստի միջոցով Վերաքննիչ դատարան է ուղարկվել 2020 թվականի ապրիլի 13-ին ժամը 18:59-ին³: Նշված բողոքը Վերաքննիչ դատարանի գրասենյակ է մուտքագրվել 2020 թվականի ապրիլի 14-ին⁴:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս նյութեր, հատոր 6, թերթեր 123-127, 136:

² Տե՛ս նյութեր, հատոր 7, թերթեր 15-18:

³ Տե՛ս նյութեր, հատոր 7, թերթ 58:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 7, թերթ 1:

8. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա և որի արդյունքում խախտվել են մեղադրյալ Ա.Կիրակոսյանի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և ենթակա է բեկանման:

Բողոքաբերը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարան է ներկայացվել ոչ թե առձեռն, այլ էլեկտրոնային եղանակով՝ 2020 թվականի ապրիլի 13-ին: Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը թվագրված է 2020 թվականի ապրիլի 4-ով: Ամփոփելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը եզրահանգել է, որ իր կողմից վերաքննիչ բողոքը ներկայացվել է բողոքարկման համար սահմանված 10-օրյա ժամկետում:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է կայացնել նոր դատական ակտ՝ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ իր վերաքննիչ բողոքը համարելով ժամկետում ներկայացված:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք պաշտպան Կ.Քալանթարյանի վերաքննիչ բողոքը՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ, առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

11. ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Սույն օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվվում են ժամերով, օրերով, ամիսներով և փարիսներով:*

2. Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը:

3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա գրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին: (...)

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ (...): Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վերաքննիչ բողոք բերվում են՝ (...)

3) առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղափոխման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

12. Վճռաբեկ դատարանը, արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում անդրադառնալով դատական բողոքարկման դատավարական ժամկետների պահպանության ստուգման հարցին, արձանագրել է, որ անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի անհարկի սահմանափակումները բացառելու նպատակով ներկայացված բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին դատարանների եզրահանգումները պետք է կառուցվեն հստակ և որոշակի փաստական հանգամանքներից բխող հետևությունների վրա՝ ապահովելու համար բողոքարկման իրավունքի սահմանափակման և հետապնդվող նպատակի միջև համարժեք հարաբերակցությունը: Մասնավորապես, համապատասխան փաստական տվյալները կարող են ձեռք բերվել փոստային անդորրագրի, «Հայփոստ» ՓԲԸ-ի կայքէջի, համապատասխան հարցում կատարելու և այլ միջոցներով:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Առաջին ատյանի դատարանի որոշումը պաշտպան Կ.Քալանթարյանն առձեռն ստացել է 2020 թվականի ապրիլի 3-ին²:

- Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ պաշտպան Կ.Քալանթարյանի վերաքննիչ բողոքն էլեկտրոնային փոստի միջոցով Վերաքննիչ դատարան է ուղարկվել 2020 թվականի ապրիլի 13-ին³:

- Վերաքննիչ դատարանը պաշտպան Կ.Քալանթարյանի բողոքը թողել է առանց քննության՝ նշելով, որ դատական ակտի բողոքարկման 10-օրյա ժամկետի վերջին օրը եղել է 2020 թվականի ապրիլի 13-ը, մինչդեռ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վարչապետ Գասպարիի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԳ/0067/11/16 որոշումը, 15-րդ կետ, *Սնդրանիկ Խաչատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ ՇԳ-2/0049/01/17 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոքն առձեռն ներկայացվել է 2020 թվականի ապրիլի 14-ին¹:

14. Վերլուծելով վերոշարադրյալ փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պաշտպան Կ.Քալանթարյանի վերաքննիչ բողոք ներկայացնելու եղանակի և ժամկետի վերաբերյալ Վերաքննիչ դատարանը հանգել է սխալ եզրահանգման: Այսպես՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը պաշտպան Կ.Քալանթարյանն առձեռն ստացել է 2020 թվականի ապրիլի 3-ին, որպիսի պայմաններում դրա վերաքննիչ բողոքարկման 10-օրյա ժամկետը հաշվարկելու ընթացքը սկսվում է 2020 թվականի ապրիլի 4-ից, հետևաբար պաշտպան Կ.Քալանթարյանը, վերաքննիչ բողոքն **ապրիլի 13-ին էլեկտրոնային փոստի** միջոցով Վերաքննիչ դատարան ուղարկելով, այն ներկայացրել է սահմանված ժամկետում: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը հանգել է սխալ հետևության՝ փաստելով, որ պաշտպան Կ.Քալանթարյանը վերաքննիչ բողոքը ներկայացրել է առձեռն 2020 թվականի ապրիլի 14-ին:

15. Նախորդ կետում կատարված վերլուծությունը գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ժամկետանց լինելու պատճառաբանությամբ պաշտպան Կ.Քալանթարյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն անհամաչափորեն սահմանափակել է մեղադրյալի՝ դատարանի մատչելիության իրավունքը, հաշվի առնելով, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է բողոքարկման ժամկետի պահպանմամբ:

Ուստի, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ պաշտպան Կ.Քալանթարյանի վերաքննիչ բողոքը՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ, առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար²: Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

արտահայտված դիրքորոշումը, պետք է քննարկման առարկա դարձնի պաշտպան Կ.Քալանթարյանի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Աշոտ Կամոյի Կիրակոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

44. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0052/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 9-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով, քննության առնելով դիմող Ջիվանշիր Միքայելի Աֆյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում Ջիվանշիր Աֆյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով 2017 թվականի ապրիլի 6-ին ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 15157217 քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

2. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ թիվ 15157217 քրեական գործի վարույթը կարճվել է և Աննա Մաքսիմի Ղազանյանի, Մուշեղ Հենրիկի Սարգսյանի, Ռոբերտ Մուրենի Վարդանյանցի, Արմեն Վազգենի Մելիքյանի և Ռաֆայել Վոլոդյայի

Այվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

3. Վերը նշված որոշման դեմ Ջ.Աֆյանի բողոքը Երևան քաղաքի դատախազ Բ.Ասլանյանի՝ 2018 թվականի հունվարի 15-ի որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

4. Վերը նշված որոշումների դեմ դիմող Ջ.Աֆյանի բողոքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ բավարարվել է՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել դիմողի իրավունքի խախտումը:

5. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 23-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող վիստերը.

7. 2017 թվականի մարտի 27-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում Ջիվանշիր Աֆյանը դիմում է ներկայացրել այն մասին, որ Աննա Ղազանչյանը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԿԴ/0102/04/11 գործով 2011 թվականի օգոստոսի 22-ի վճռով ճանաչվել է սնանկ, որից հետո՝ դատարանի 2011 թվականի

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

սեպտեմբերի 15-ի որոշմամբ ինքը նշանակվել է սնանկության գործով կառավարիչ: Ա.Ղազանյանի պարտատերերի նկատմամբ վերջինիս պարտավորությունները ծագել են մինչև 2009 թվականը, և երբ ուսումնասիրվել են Ա.Ղազանյանի սնանկության պատճառները, պարզվել է, որ նշված գործով պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարումից խուսափելու համար Ա.Ղազանյանը 2009 թվականի սեպտեմբերի 16-ին կնքված թիվ 6737 համալիր պայմանագրով վաճառել է իրեն պատկանող «Դիանա» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասը: Այդ հիմքով նշված ընկերության սեփականությունը հանդիսացող՝ Երևան քաղաքի Ե.Քոչարի 17/4 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ 2009 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Մարաշ» տարածքային ստարոբաժանումում գրանցվել է նշված համալիր պայմանագիրը և տրվել հաջորդող գրավի իրավունքի պետական գրանցման վկայական: Այնուհետև՝ 2009 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում Գևորգ Ավետիսյանի անվամբ գրանցվել է «Դիանա» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասը և տրվել է թիվ 034178 վկայականը: Մինչդեռ, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի հարկադիր կատարող Ա.Մակյանի կողմից 2009 թվականի սեպտեմբերի 15-ին կայացված որոշմամբ արգելանք է դրվել «Դիանա» ՍՊ ընկերության գույքի վրա, որը սակայն անտեսվել է:

8. Նախաքննության մարմնի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման համաձայն՝ *«(...) քրեական գործի նախաքննությամբ հնարավոր չի եղել պարզել, թե Աննա Մաքսիմի Ղազանյանը գույքի վրա արգելանք դնելու մասին 15.09.2009թ. վերը նշված որոշումը սրացել է, թե ոչ, եթե սրացել է, ապա 16.09.2009թ. գործարքը կատարելուց առաջ, թե դրանից հետո: Նրա արարքում բացակայում է ՀՀ քր. օր.-ի 345-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը, քանի որ քրեական գործով չի հիմնավորվել, որ վերը նշված գործարքը կատարելուց նա իմացել է, որ գույքը գրվել է արգելանքի տակ: Ինչ վերաբերում է ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի «Մարաշ» տարածքային ստարոբաժանման անշարժ գույքի գրանցման բաժնի նախկին պետ Մուշեղ Հենրիկի Սարգսյանին, նույն բաժնի պետի նախկին տեղակալ Ռոբերտ Սուրենի Վարդանյանցին, հաշվառման բաժնի նախկին գլխավոր մասնագետ Արմեն Վազգենի Մելիքյանին և անշարժ գույքի հաշվառման բաժնի նախկին 1-ին կարգի մասնագետ Ռաֆայել Վոլոդյայի Այվազյանին, ապա նրանց արարքներում նույնպես բացակայում է ՀՀ քր. օր.-ի 345-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը, քանի որ Եր.Քոչարի փողոցի թիվ 17/4 հասցեի նկատմամբ 23.09.2009թ. գրավի իրավունքը գրանցելու ժամանակ նրանք չեն իմացել, որ տվյալ գույքի վրա ՀՀ ԱՆ*

ԴԱՀԿ ծառայության Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի հարկադիր կատարող Ա.Մակյանի կողմից թիվ 01/02-2179/09 կատարողական վարույթի ընթացքում դրվել է արգելանք»:

9. Առաջին աստիճանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Նահաքննության ընթացքում Աննա Ղազանյանը և Ռաֆայել Այվազյանը չեն հարցաքննվել: Ըստ բողոքարկվող որոշման՝ Ռաֆայել Այվազյանին հարցաքննել չի հաջողվել, քանի որ նա քննությանը չի ներկայացել և հայրնի չէ նրա գրկավելու վայրը: Միաժամանակ նշվել է, որ Աննա Ղազանյանին հնարավոր չի եղել հարցաքննել, քանի որ հնարավոր չի եղել նրան հայրնաբերել:

ՀՀ նախկինության ՔՀԳՎ պետի տեղակալի 22.05.2017թ. թիվ 3/4751 և 17.08.2017թ. թիվ 3/7938 գրությունների՝ «ՄԷԿՏ» համակարգում առկա տեղեկությունների համաձայն՝ տեղեկությունները տրամադրելու պահի դրությամբ Աննա Ղազանյանի և Ռաֆայել Այվազյանի՝ ՀՀ-ից մեկնելու վերաբերյալ տվյալներն առկա չէին:

25.05.2017թ. վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվել է որոշում՝ Աննա Ղազանյանին բերման ենթարկելու մասին: ՀՀ նախկինության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի պետի 08.06.2017թ. թիվ 30/11328 գրությամբ տեղեկացվել է, որ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Կենտրոնական մարմնի հարկադիր կատարման օպերատիվ բաժնի կողմից Երևան քաղաքի Երվանդ Քոչար փողոցի 17 շենք, բն. 67 հասցեի բնակիչների, այդ թվում՝ Աննա Մաքսիմի Ղազանյանի նկատմամբ իրականացվել են վտարման կատարողական գործողություններ: 28.06.2017թ. վարույթն իրականացնող մարմնի կողմից ՀՀ նախկինության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնին հանձնարարություն է տրվել ձեռնարկել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ Աննա Ղազանյանի բնակության վայրը պարզելու ուղղությամբ: Ի պարսպան նշված գրության ՀՀ նախկինության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի պետի 13.07.2017թ. թիվ 30/14170 գրությամբ հայտնվել է, որ թիվ 15157217 քրեական գործով ձեռնարկվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ Աննա Մաքսիմի Ղազանյանի բնակության վայրը պարզելու և քննությանը ներկայացնելու ուղղությամբ: 13.12.2017թ. կրկին անգամ կայացվել է Աննա Ղազանյանին բերման ենթարկելու մասին որոշում: ՀՀ նախկինության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի պետի 15.12.2017թ. թիվ 31/5-18821 գրությամբ տեղեկացվել է, որ համապատասխան հասցեում Աննա Մաքսիմի Ղազանյան տվյալներով անձ չի բնակվում:

10.08.2017թ. վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվել է որոշում՝ Ռաֆայել Այվազյանին բերման ենթարկելու մասին: ՀՀ նախկինության Լոռու մարզային վարչության Սպիրտակի բաժնի պետի

ժ/պ 17.08.2017թ. թիվ 61/8-3266 գրությամբ հայտնվել է, որ Ռաֆայել Վոլոդյայի Այվազյանը համապատասխան հասցեում փաստացի չի բնակվում, գրնվելու վայրը հայտնի չէ: Դրանից հետո Ռաֆայել Այվազյանի գրնվելու վայրը պարզելու ուղղությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել, թեև «ՍԷԿՏ» համակարգում առկա տվյալներից երևում էր, որ վերջինս չի մեկնել ՀՀ-ից:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ա.Աֆանդյանի 04.10.2017թ. թիվ 55/403քր-17 գրությամբ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալի ուշադրությունը կրկին անգամ հրավիրվել է այն հանգամանքին, որ տեղական ժամանակ է, ինչ նախաքննության մարմինը չի կատարում քննչական և դատավարական գործողություններ, ուստի անհրաժեշտ է խստորեն հետևել, որպեսզի քննիչի կողմից ժամանակին կատարվեն քննչական գործողությունները, հակառակ դեպքում կկիրառվեն դատախազական ներգործության համապատասխան միջոցներ:

Այսպիսով, վարույթն իրականացնող մարմինը հետևողական է հանգել Ռաֆայել Այվազյանի արարքում հանցակազմի բացակայության մասին՝ պարճառարանելով, որ նա չի իմացել անշարժ գույքի վրա դրված արգելանքի մասին, մինչդեռ, չի ձեռնարկել ողջամիտ և բավարար միջոցներ վերջինիս հայտնաբերելու և նշված հանգամանքը պարզելու ուղղությամբ:

Միաժամանակ, (...) վարույթն իրականացնող մարմինը բավարար միջոցներ չի ձեռնարկել նաև Աննա Ղազանչյանին հայտնաբերելու և նաև նրա կողմից 16.09.2009թ. գործարքը կատարելու պահին անշարժ գույքի վրա դրված արգելանքի մասին տեղեկացված լինելու հանգամանքը պարզելու համար, նկատի ունենալով, որ ըստ «ՍԷԿՏ» համակարգում առկա տվյալների՝ նախաքննության ընթացքում վերջինս գրնվել է ՀՀ-ում:

(...) Դատարանը գրնում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է՝ չի կատարվել գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, ձեռք չի բերվել փաստական տվյալների բավարար համակցություն, որի հիման վրա հնարավոր կլինեք իրավական գնահատական տալ Աննա Ղազանչյանի և Ռաֆայել Այվազյանի գործողություններին:

Նախաքննական մարմնի կողմից քրեադատավարական օրենքի վերոնշյալ դրույթի պահանջը չպահպանելու արդյունքում խախտվել է դիմող Ջիվանշիր Աֆյանի՝ իր շահերին առնչվող քրեական գործի

արդարացի քննության իրավունքը, որպիսի խախտումը ենթակա է վերացման (...)»¹:

10. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Առաջին արյանի դատարանի կողմից կատարվել է ներկայացված նյութերի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, իսկ վարույթն իրականացնող մարմնի թույլ տված խախտումների վերաբերյալ հետևությունները լիարժեք հիմնավորված են և ամբողջովին բխում են ներկայացված նյութերի համակցությունից (...):

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ են Առաջին արյանի դատարանի ակտով արտահայտված այն հետևությունները, որ քրեական գործով չի կատարվել բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, այսինքն՝ չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով սահմանված պահանջը, և որ (...) քննիչ Ռ.Նազարյանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 26-ի (...) և Երևան քաղաքի դատախազ Բ.Ալանյանի (...) որոշումները պարզաճ պարճառարանված և հիմնավորված չեն, այդ որոշումներով խախտվել են Զիվանշիր Աֆյանի իրավունքները կամ ազատությունները, մասնավորապես՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց հայցելու իրավունքը:

(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ բողոքարկված դատարանի ակտը կայացնելիս Առաջին արյանի դատարանը թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատարանի սխալ և գործով ըստ էության կայացրել է ճիշտ լուծող դատարանի ակտ, որը բեկանելու իրավաչափ հիմքեր չկան (...):

10.1. Մինևույն ժամանակ Վերաքննիչ դատարանը, ի թիվս այլնի, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածը, դատարանի ակտում նշել է նաև հետևյալը. «(...) Անհրաժեշտ է նաև փաստել, որ ելնելով դատարանի արյանների գործառության և ինստիտուցիոնալ փարանջարման սկզբունքներից՝ օրենսդիրը սահմանել է յուրաքանչյուր հաջորդող դատարանի արյան բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների փարբերակված շրջանակ, մասնավորապես՝ վերաքննիչ բողոքարկման իրավունքով օժտել է մեղադրողին և վերադաս դատախազին, ինչն էլ Վերաքննիչ դատարանի գնահատմամբ որևէ կերպ չի սահմանափակում դատախազի՝ անսահմանափակ բողոքարկման իրավունքի կենսագործումը, քանզի և՛ մեղադրողը, և՛ վերադաս դատախազը քրեադատարանի օրենսդրության և դատախազության միասնական համակարգի հասկացության իմաստով ևս հանդիսանում են դատախազներ:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 162-165:

(...) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանը փյալ բողոքի քննության կապակցությամբ չի կարող համարվել ոչ միայն վերադաս դատախազ, այլև մեղադրող, քանզի քրեական գործն ըստ էության լուծման համար դատարանի վարույթում չէ և վերջինս էլ չի հանդիսանում այդ գործով մեղադրանքը դատարանում պաշտպանող դատախազ: Ասվածն առավել հասկանալի է դառնում այն հանգամանքի լույսի ներքո, որ Երևան քաղաքի դատախազ Բ.Ավանյանն է հենց հանդիսանում իր՝ 2018 թվականի հունվարի 13-ի՝ բողոքը մերժելու մասին որոշման՝ անձի իրավունքների և ազատությունների խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ արտահայտված տեսակետների «սեփականատերը», իսկ օրենսդիրի կամքն ուղղված է այն գաղափարին, որ այդ տեսակետներն արտահայտած դատախազի սրորադաս դատախազը չներկայացնի վերաքննիչ բողոք՝ ի պաշտպանություն վերադաս դատախազի տեսակետների, մինչդեռ այդ որոշումն ըստ էության գնահատման ենթարկված Առաջին աստի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել միայն (...) դատախազ Ս.Անդրեասյանը:

(...) Բացի այդ, (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի համապատասխան Վերաքննիչ դատարանն իրավասու է համապատասխան հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ բողոքը թողնել առանց քննության, վարույթ ընդունել այն կամ մերժել վարույթ ընդունելը: Այլ կերպ ասած՝ վերոթվարկյալ որոշումներից մեկի կայացումը բացառում է դրանից հետո մեկ այլ որոշման կայացումը:

Սույն պարագայում (...) դատախազ Ս.Անդրեասյանի վերաքննիչ բողոքը վարույթ է ընդունվել նկատի ունենալով, որ առերևույթ (prima facie) պահպանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները, մինչդեռ վերաքննիչ բողոքի լիարժեք քննության ընթացքում վեր է հանվել վերջինիս՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու ոչ պարզաձև սուբյեկտի հանդիսանալու հանգամանքը, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Առաջին աստի դատարանի կողմից քննության է առնվել նաև վերադաս դատախազի որոշումը և հենց նրան է պարտավորեցվել վերացնելու իրավունքների խախտումները, ուստի նման պայմաններում Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածով փոխված լիազորություններով, իրավունք ունի կայացնելու միայն վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ որոշում:

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանի վերաքննիչ բողոքը պետք է մերժել, Երևան քաղաքի առաջին աստի դատարանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի

նոյեմբերի 23-ի թիվ ԵՂ/0052/11/18 որոշումը թողնելով օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները (...)¹:

11. Քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն է իրականացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանը, ով նաև մասնակցել է Առաջին ատյանի դատարանում բողոքի քննությանը²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածը նեղ մեկնաբանելու հետևանքով, սահմանափակել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն իր վերլուծությունների հիմքում, ըստ էության, դրել է այն տրամաբանությունը, համաձայն որի՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազն իրավասու չէ մինչդատական քրեական վարույթն ավարտող՝ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության վիճարկման ընթացակարգում մասնակցելու, քանի որ այդ որոշման դեմ բերված բողոքը վերադաս դատախազի կողմից մերժվել է, ինչը չի բխում ՀՀ Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված լիազորությունների տրամաբանությունից: Հակառակը՝ եթե վերադաս դատախազը մերժել է մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված 7-օրյա ժամկետում օրինական համարված որոշման դեմ բերված բողոքը, ապա վերջիններս՝ տվյալ դատախազը և իր վերադաս դատախազը համակարծիք են քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման օրինական և հիմնավոր լինելու հարցում: Տվյալ դեպքում, ըստ բողոքաբերի, գործառությանն տարանջատման սկզբունքի խախտման մասին խոսք լինել չի կարող:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 111-123:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 40-41, 43, քրեական գործ, հատոր 3, թերթեր 189-190:

12.1. Բողոքի հեղինակն ընդգծել է, որ ողջամիտ չէ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն առ այն, թե դատախազի վերաքննիչ բողոքն առանց քննության չի թողել, քանի որ առերևույթ պահպանված են եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները: Այս առումով բողոքաբերը փաստարկել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը, ի թիվս այլ հանգամանքների, **պետք է բովանդակի տվյալներ բողոք բերած անձի մասին՝ նշելով նրա դատավարական կարգավիճակը**, բնակության կամ գտնվելու վայրը: Այն, որ բողոքը բերվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազի կողմից և որ նշված պաշտոնը զբաղեցնող դատախազն օրենքի ուժով չի կարող որևէ կերպ համարվել վերադաս դատախազ, **վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելիս եղել է անառարկելի կերպով ակնհայտ ու չի կարող համարվել վերաքննիչ բողոքի լիարժեք քննության ընթացքում վեր հանված հանգամանք:** Բողոքաբերն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանը, իր իսկ կիրառած տրամաբանությամբ, նման պարագայում վերաքննիչ բողոքը չպետք է ընդուներ վարույթ:

12.2. Մինևույն ժամանակ, բողոքաբերը, անդրադառնալով ստորադաս դատարանների դատական ակտերի հիմնավորվածությանն ու պատճառաբանություններին, նշել է, որ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերի խախտումներ, մասնավորապես՝ անտեսվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ և 358-րդ հոդվածների պահանջները: Վերաքննիչ դատարանի որոշումը պատշաճ պատճառաբանված չէ, ինչը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված՝ գործի արդարացի քննության սկզբունքից: Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները քրեական գործում առկա ապացույցների գնահատման ընթացքում թույլ են տվել դատական սխալ՝ ճիշտ չեն գնահատել գործում եղած ապացույցները և դրանով հանդերձ կայացրել են չպատճառաբանված դատական ակտեր:

13. Վերոշարադրյալի հիման վրա՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 14-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Երևան քաղաքի Կենտրոն և

Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու պատշաճ սուբյեկտ չէ:

15. ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ (...)

2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

(...)

4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

(...)

4. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն (...) մեղադրողը կամ վերադաս դատախազը, (...):»:

16. Վճռաբեկ դատարանը *Ժենիկ Հովսեփյանի* գործով ՀՀ Սահմանադրության, քրեական դատավարության օրենսգրքի և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի վերաբերելի կարգավորումների մեկնաբանմամբ արձանագրել է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակում առաջին ատյանի դատարանի կայացրած դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը ներառում է նաև մեղադրողի դատավարական կարգավիճակին համարժեք՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին, ինչպես նաև որպես դատավարության մասնակից՝ վերադաս դատախազի կողմից լիազորված այլ դատախազին¹:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- նախաքննության մարմնի՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման դեմ դիմող Ջ.Ա.Ֆյանի բողոքը Երևան քաղաքի դատախազ Ռ.Ասլանյանի՝ 2018 թվականի հունվարի 15-ի որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ²,

¹ Մանրամասն տե՛ս *Ժենիկ Հովսեփյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԱԲԴ-1/0002/11/18 որոշման 10-15-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

- Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ դիմող Ջ.Ա.Ֆյանի բողոքը բավարարել է՝ վարույթն իրականացնող մարմինն պարտավորեցնելով վերացնել դիմողի իրավունքի խախտումը¹: **Առաջին ատյանի դատարանում գործի քննությանը մասնակցել է մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանը²,**

- Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 23-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ՝ ըստ էության քննության առնելով դատախազի բողոքի փաստարկները³: Մինչև ժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանը վերաքննիչ բողոք ներկայացնելու պատշաճ սուբյեկտ չէ⁴:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և մեջբերված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի այնպիսի մեկնաբանությունը, ըստ որի՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունքով օժտված է միայն վերադաս դատախազը կամ մեղադրողը, հակասում է տվյալ իրավանդումը սահմանելիս օրենսդրի կամքին, դատախազության մարմինների միասնականության և կենտրոնացվածության սկզբունքներին, անհարկի սահմանափակում է դատախազի՝ սահմանադրորեն ամրագրված՝ դատական ակտերի բողոքարկման գործառնության իրացման հնարավորությունը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու պատշաճ սուբյեկտ չէ, հիմնավոր չէ:

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

18.1. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի փաստարկն այն մասին, որ վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավասություն չունեցող անձի կողմից այն ներկայացված լինելու դեպքում Վերաքննիչ դատարանը պետք է բողոքը վարույթ չընդուներ¹: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը արձանագրելով, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանն Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու պատշաճ սուբյեկտ չէ, այդուհանդերձ քննության է առել նրա ներկայացրած բողոքը և արդյունքում մերժել այն՝ բողոքարկված դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ²:

19. Մինևույն ժամանակ, անդրադառնալով վճռաբեկ բողոքի հեղինակի մյուս փաստարկներին³, Վճռաբեկ դատարանը գործի նյութերի համակողմանի ուսումնասիրման արդյունքում հիմնավոր է համարում ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ սույն գործով չի կատարվել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի համար ևս ընդունելի է ստորադաս դատարանների այն փաստարկը, որ նախաքննական մարմինը բավարար միջոցներ չի ձեռնարկել ՀՀ-ում գտնվող Աննա Ղազանյանին և Ռաֆայել Այվազյանին հայտնաբերելու ու հարցաքննելու ուղղությամբ: Ուստի, այս առումով բողոքաբերի ներկայացրած փաստարկները հիմնավոր չեն:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև Վերաքննիչ դատարանը 2019 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ ոչ իրավաչափ հետևություն է արել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանի՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 23-ի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու պատշաճ սուբյեկտ չհանդիսանալու մասին, այդուհանդերձ քննության է առել ներկայացված բողոքը և արդյունքում՝ իրավացիորեն մերժել է վերաքննիչ բողոքը՝ վիճարկվող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել, Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ

¹ Տե՛ս սույն որոշման 9.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ և 8.1-րդ կետերը:

³ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դիմող Ջիվանշիր Միքայելի Աֆյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

արորագրություն

Դատավորներ՝

արորագրություններ

45. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴ/0009/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 23-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 3-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Ա.Գևորգյանի (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին)՝ 2018 թվականի մարտի 12-ի որոշմամբ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի գրության հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության պատճառաբանությամբ:

Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ Գ.Խաչիկյանի՝ 2018 թվականի մարտի 20-ի որոշմամբ վերը նշված որոշումը վերացվել է, և ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 37200118 քրեական գործը:

1.1 Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 4-ի որոշմամբ Արմեն Մովսիսյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել, և քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերոնշյալ որոշման դեմ «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության տնօրեն Ա.Տեր-Սիմոնյանի բողոքի կապակցությամբ, Վայոց ձորի մարզի դատախազը 2018 թվականի հունիսի 27-ի գրությամբ պարզաբանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի կարգով բողոքը քննության առնելու անհնարիության վերաբերյալ՝ այն պատճառաբանությամբ, որ Ա.Տեր-Սիմոնյանը չի հանդիսանում նշված հոդվածով նախատեսված սուբյեկտներից որևէ մեկը:

2. «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության տնօրեն Ա.Օսիկյանի բողոքի քննության արդյունքում, Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), 2019 թվականի հունիսի 18-ի որոշմամբ բողոքը բավարարել է և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել վերացնելու «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության իրավունքների և ազատությունների խախտումը:

3. Վայոց ձորի մարզի դատախազի տեղակալ Գ.Խաչիկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 18-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

4.1 Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 16-ի թիվ ԱՎԴՅ/0406/02/17 քաղաքացիական գործով կայացված վճռի համաձայն. «(...) ՀՀ Վայոց ձորի մարզի Գլխավոր համայնքի ղեկավարին պարտավորեցնել չխոչընդոտելու «Վայկ Մետալ» ՍՊԸ կողմից 2016 թվականի սեպտեմբերի 14-ին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների

նախարարության, ի դեմս նախարար Լևոն Յոլյանի և «Վայկ Մեյրալ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ Պ-005 ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարմանը, և «Վայկ Մեյրալ» ՍՊԸ-ի հետ կնքել համաձայնագիր (հողօգտագործման պայմանագիր) նշված ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի բազմամետաղային հանքավայրի 625 հա կազմող տարածքում նեգիռնալ բնույթի երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար՝ ըստ 2016 թվականի սեպտեմբերի 14-ին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունից տրված թիվ ԵՌԻՀ-29/005 ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնության: (...)»¹:

5.1 Վերը նշված վճիռն օրինական ուժի մեջ է մտել 2017 թվականի նոյեմբերի 15-ին², որի հիման վրա 2017 թվականի դեկտեմբերի 4-ին տրվել է կատարողական թերթ³, իսկ 2017 թվականի դեկտեմբերի 11-ին հարուցվել է կատարողական վարույթ⁴:

5.2 Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի հարկադիր կատարողի՝ «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ Ա.Մովսիսյանը պարտավորվել է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 18-ը «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության հետ կնքել համաձայնագիր (հողօգտագործման պայմանագիր)⁵:

6. ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ղեկավար Ա.Մովսիսյանը 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 95 որոշմամբ համայնքի ավագանուն է ներկայացրել հողօգտագործման պայմանագիր կնքելու համար համայնքի բազմամետաղային հանքավայրի 625 հա մակերեսով տարածքը «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության օգտագործմանը տրամադրելու մասին առաջարկություն⁶, որը համայնքի ավագանու՝ նույն թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 42 որոշմամբ մերժվել է⁷:

7. Նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման համաձայն. «(...) [Նախաքննության ընթացքում [կատարված քննչական գործողությունների] արդյունքներով ևս չի հիմնավորվել Արմեն

¹ Տե՛ս քրեական գործ, թերթ 41:

² Տե՛ս քրեական գործ, թերթեր 56-57:

³ Տե՛ս քրեական գործ, թերթ 15:

⁴ Տե՛ս քրեական գործ, թերթ 22:

⁵ Տե՛ս քրեական գործ, թերթ 23:

⁶ Տե՛ս քրեական գործ, թերթ 27:

⁷ Տե՛ս քրեական գործ, թերթ 28:

Մովսիսյանի կողմից ՀՀ Արարարի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դադարանի վճիռը դիտարկությանը չկարարելու հանգամանքը:

(...)

Արևեն Մովսիսյանը հիմք ընդունելով ՀՀ Արարարի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դադարանի կողմից թիվ ԱՎԴՅ/0406/02/17 վճիռն ու նկատի ունենալով, որ համայնքի ղեկավարը հողօգտագործման պայմանագիր կարող է կնքել միայն համայնքի ավագանու համապատասխան որոշման առկայության դեպքում, 2017 թվականի դեկտեմբերի 14-ին որոշում է կայացրել հողօգտագործման պայմանագիր կնքելու համար Գլաձոր համայնքի ավագանուն առաջարկել համայնքի բազմամեդալային հանքավայրի 625 հա մակերեսով փարածք օգտագործման հանձնել «Վայկ Մեդալ» ՍՊ ընկերությանը (...):

(...) Համայնքի ավագանու որոշման առկայությամբ հողօգտագործման պայմանագիր կնքելու իրավունքը հաստատվում է նաև ՀՀ հողային օրենսգրքով և ՀՀ Կառավարության 2011 թվականի ապրիլի 12-ի Ծ-286 «Պեդական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգը սահմանելու մասին» որոշմամբ:

(...) Գլաձոր համայնքի ավագանու բոլոր անդամները (...) ցուցմունք են րվել այն մասին, որ (...) իրենք դեմ են արտահայտվել պայմանագիր կնքելուն՝ դրսևորելով իրենց անհատական մտրեցումն այդ ինդրին, ինչ վերաբերվում է համայնքի ղեկավարին, ապա նա րվյալ հարցը համայնքի ավագանու անդամներին ներկայացնելիս իր անձնական կարծիքը չի հայրնել կամ որևէ մեկին չի առաջարկել կողմ կամ դեմ քվեարկել (...):

Տվյալ դեպքում քրեական գործի նախաքննությամբ (...) ձեռք չեն բերվել (...) Արևեն Մովսիսյանի կողմից (...) դադարանի վճիռը դիտարկությանը չկարարելու վերաբերյալ փաստական րվյալներ, ուրի նրա արարքում բացակայում է [քրեական] օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասով [նախարեսված] հանցագործության հանցակազմը: (...):¹:

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 18-ի որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «(...) [Տվյալ դեպքում առկա է] [Առաջին ատյանի] դադարանի (...) օրինական ուժի մեջ մրած վճիռը, որով Գլաձոր համայնքի ղեկավարը (...) պարտավորվել է չհոչընդորել [ՀՀ էներգերիկայի և բնական պաշարների] նախարարության (...) և «Վայկ Մեդալ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ Պ-005 ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորությունների կարարմանը և «Վայկ Մեդալ» ՍՊԸ-ի հեր կնքել համաձայնագիր (հողօգտագործման պայմանագիր) նշված ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված

¹ Տե՛ս քրեական գործ, թերթեր 216-221:

ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի բազմամեյրադային հանրավայրի 625 հա կազմող տարածքում ռեզիդենսյա բնույթի երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար (...), և [համայնքի ավագանու անդամների] ցուցմունքները՝ ըստ որոնց՝ համայնքի ղեկավարը ավագանու անդամների քննարկմանն է ներկայացրել «Վայկ Մերալ» ՍՊԸ-ի հետ հողօգտագործման պայմանագիր կնքելու համաձայնություն տալու և հողհարկացում կատարելու հարցը, մինչդեռ ՀՀ հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ Հեղափոխական աշխարհներ կատարելու համար անհրաժեշտ հողամասերը չեն վերցվում և ՀՀ Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի Ե-286 որոշման 73-րդ մասի համաձայն՝ հողամասերում հեղափոխական, երկրաբուսաբանական, երկրաբանական և այլ բնույթի աշխարհները կարող են իրականացվել միայն համայնքների ղեկավարների և Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից սահմանված կարգով ընդունված որոշումների ու հողամասերն օգտագործողի հետ կնքված պայմանագրերի հիման վրա, ինչի ուղղությամբ նախաքննական մարմինը չի ձեռնարկել համապատասխան քննչական և դատավարական գործողություններ: (...)»¹:

Վերոշարադրյալի հաշվառմամբ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ «(...) [Բ]րեական գործի նախաքննությունն իրականացվել է ոչ լիարժեք, քրեական գործում առկա տվյալները լրիվ և բազմակողմանի հետազոտման ու գնահատման չեն ենթարկվել՝ չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ինչի արդյունքում խախտվել են «Վայկ Մերալ» ՍՊԸ-ի իրավունքները: (...)»²:

9. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, փաստել է, որ «(...) Ա.Մովսիսյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 353 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հարկանիշների առկայության կամ բացակայության փաստը պետք է քննարկման առարկա դառնար Դատարանի 2017 թվականի հունիսի 16-ի վճռի մեջ մատնանշված հանգամանքների, Դատարանի կողմից կատարված վերլուծությունների և Դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կատարման ուղղությամբ Գլաձոր համայնքի ղեկավար Ա.Մովսիսյանի կատարած գործողությունների համալրաբարում, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինեք հիմնավոր և իրավաչափ եզրահանգման գալ Ա.Մովսիսյանի գործողությունների վերաբերյալ: (...)»³:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 76-77:

² Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 77:

³ Տե՛ս նյութեր, հատոր 4, թերթ 52:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակի կարծիքով՝ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք կարող են ազդել գործի ելքի վրա:

Ըստ բողոքաբերի՝ Առաջին աստիճանի դատարանը կայացրել է չպատճառաբանված դատական ակտ, որի հիմնավորվածությունը փորձել է պատճառաբանել բացառապես ընդհանուր բնույթի ձևակերպումներով այն մասին, որ նախաքննության մարմինը չի կատարել լիարժեք քննություն, իսկ քրեական գործում առկա տվյալները լրիվ, բազմակողմանի հետազոտման ու գնահատման չեն ենթարկվել:

Մասնավորապես, բողոքաբերի պնդմամբ՝ վարույթն իրականացնող մարմինն պարտավորեցնելով վերացնել «Վայկ-Մետալ» ՍՊ ընկերության իրավունքների և ազատությունների խախտումները՝ ստորադաս դատարանները որևէ կերպ չեն պատճառաբանել, թե քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2018 թվականի մայիսի 4-ի որոշմամբ նշված ընկերության որ իրավունքները կամ ազատություններն են խախտվել, և ինչու են դրանք դրսևորվել, ինչն էլ ողջամտորեն անհրազործելի է դարձրել իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ դատարանների կողմից սահմանված՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը:

Անդրադառնալով դատարանների՝ բողոքարկվող որոշման պատճառաբանությունների հիմքում ընկած այն դատողությանը, որ ՀՀ հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի կամ ՀՀ Կառավարության՝ 2001 թվականի ապրիլի 12-ի Ն-286 որոշման ուղղությամբ նախաքննական մարմինը չի ձեռնարկել համապատասխան քննչական և դատավարական գործողություններ, բողոք բերած անձը նշել է, որ դրանք իրենց բնույթով վերացական են և գործում առկա փաստական տվյալների պայմաններում որևէ նշանակություն չէին կարող ունենալ՝ Ա.Մովսիսյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար:

Ի հիմնավորումն իր վերոնշյալ փաստարկների՝ բողոքաբերը, վկայակոչելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետը, փաստել է, որ անկախ հողամասն օգտագործման տրամադրելու նպատակից, համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման կարող է տրամադրվել միայն ավագանու որոշմամբ: Նշվածից հետևում է, որ

համայնքի ղեկավարը, որպեսզի կատարեր դատարանի վճիռը, պետք է կնքեր հողօգտագործման պայմանագիր, ինչը, բնականաբար, չէր կարող անել առանց ավագանու որոշման:

Բողոքի հեղինակը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ ու սուբյեկտիվ տարրերը և գնահատելով սույն քրեական գործում առկա փաստական տվյալները, նշել է նաև, որ Ա.Մովսիսյանը չի ունեցել ուղղակի դիտավորություն՝ դատական ակտը չկատարելու վերաբերյալ և ըստ էության իրականացրել է համապատասխան գործողություններ՝ սպառելով օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները: Ավելին՝ նա նաև չի խոչընդոտել «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության կողմից 2016 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարմանը, և ավագանու որոշման վրա ազդող որևէ ներգործություն համայնքի ավագանու անդամների նկատմամբ չի գործադրել:

Արդյունքում, բողոք բերած անձը եզրահանգել է, որ ստորադաս դատարանները, ուղղակիորեն անտեսելով քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցներն այն մասին, որ դատական ակտը կատարելու պարտավորություն ունեցող սուբյեկտի կողմից այն դիտավորությամբ չկատարելու կամ կատարելուն խոչընդոտելու հանգամանքը հերքվել է, եկել են սխալ եզրահանգման առ այն, որ նախաքննության մարմինը պատշաճ քննություն չի իրականացրել դատական ակտը կատարելու պարտականություն ունեցող սուբյեկտին և նրա մեղավորության հարցը պարզելու ուղղությամբ:

11. Վերոգրյալի հիման վրա, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ապանյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 3-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք դիմող՝ «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության իրավունքների խախտման և վարույթն իրականացնող մարմնին այդ խախտումը վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Բողոքը ճանաչելով հիմնավորված դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:*

Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: (...):»:

Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովումը,

- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների դեմ իրավասու անձի կողմից բողոք բերելու դեպքում (եթե այդ որոշումները կամ գործողությունները ենթակա են դատական բողոքարկման) դատարանը պարտավոր է ստուգել բողոքարկված որոշումների կամ գործողությունների օրինականությունն ու հիմնավորվածությունը, պարզել, թե արդյոք առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտում, արդյունքում՝ կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կամ բողոքը մերժելու մասին¹:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:*

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պարճատաբանված: Պարճատաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Վճռաբեկ դատարանը Արսեն Մակարյանի վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրել է, որ *«(...) [Յ]ուրաքանչյուր դեպքում դատարանները պարտավոր են կայացնել ոչ միայն օրինական և հիմնավոր, այլև բավարար չափով և պարշաճ կերպով պարճատաբանված դատական ակտեր: Այլ կերպ՝ դատական ակտի պարճատաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական,*

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Ներսես Միսակյանի վերաբերյալ գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ-1/0003/11/08, Վլադիմիր Բաղդասարյանի վերաբերյալ գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԴ4/0002/01/11, Արսեն Մակարյանի վերաբերյալ գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15 որոշումները:

ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող բացառապես հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների հիման վրա: Հսկասակ պարագայում քրեական դատավարության ինդիքները չեն իրագործվի, իսկ տրամաբանությունը՝ կիսարկվի: Դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին»¹:

Վերոնշյալ իրավադրույթների կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել նաև այն մասին, որ «(...) /Դ/ատարանը մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու շրջանակներում ներկայացված բողոքը հիմնավորված ճանաչելու դեպքում իր դատական ակտում պետք է հստակ պատճառաբանի՝

ա) վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության որ պահանջն է խախտվել և ինչում է այն դրսևորվել,

բ) դրա հետևանքով անձի որ իրավունքը կամ ազատությունն է խախտվել: (...)»²:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 16-ի վճռով Ա.Մովսիսյանը պարտավորվել է չխոչընդոտել «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության կողմից կնքված ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարմանը և «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության հետ կնքել համաձայնագիր (հողօգտագործման պայմանագիր)՝ նշված տարածքում ռեզիդնալ բնույթի երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար³: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 2017 թվականի նոյեմբերի 15-ին⁴:

- Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի հարկադիր կատարողի՝ 2017 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ Ա.Մովսիսյանը պարտավորվել է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 18-ը «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության հետ կնքել համաձայնագիր (հողօգտագործման պայմանագիր)⁵:

¹Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արսեն Մակարյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/01/15 որոշման 14-րդ կետը:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մանվել և Լիդա Հովհաննիսյանների* գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱԲԱԴ/0001/11/14 որոշման 18-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 5.2-րդ կետը:

- Ա.Մովսիսյանը 2017 թվականի դեկտեմբերի 14-ին համայնքի ավագանուն է ներկայացրել հողօգտագործման պայմանագիր կնքելու համար համայնքի բազմամետաղային հանքավայրի 625 հա մակերեսով տարածքը «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության օգտագործմանը տրամադրելու մասին առաջարկություն, որը համայնքի ավագանու՝ սույն թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ մերժվել է¹:

- Նախաքննության մարմինը քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում է կայացրել՝ Ա.Մովսիսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության պատճառաբանությամբ²:

- Վերոնշյալ որոշման դեմ ներկայացված բողոքն Առաջին աստիճանի դատարանը բավարարել է՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնելու դիմողի խախտված իրավունքները՝ այն հիմնավորմամբ, որ նախաքննությունն իրականացվել է ոչ լիարժեք, քրեական գործում առկա տվյալները լրիվ և բազմակողմանի հետազոտման ու գնահատման չեն ենթարկվել, ՀՀ հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի և ՀՀ կառավարության՝ 2001 թվականի ապրիլի 12-ի Ն-286 որոշման ուղղությամբ համապատասխան քննչական և դատավարական գործողություններ չեն ձեռնարկվել³:

- Օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի որոշումը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Ա.Մովսիսյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայության կամ բացակայության փաստը պետք է քննարկման առարկա դառնար Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի վճռի մեջ մատնանշված հանգամանքների, դատարանի վերլուծությունների և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման ուղղությամբ Ա.Մովսիսյանի կողմից ձեռնարկված գործողությունների համատեքստում⁴:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները դատական ակտերի պատճառաբանությունների հիմքում դրել են այն ընդհանրական դատողությունը, թե նախաքննության մարմինը չի կատարել

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

լիարժեք քննություն, լրիվ և բազմակողմանի հետազոտման ու գնահատման չի ենթարկել քրեական գործում առկա տվյալները: Սույն որոշման 14-րդ կետում վկայակոչված նախադեպային որոշումների լույսի ներքո ստորադաս դատարաններն իրենց պատճառաբանություններում հստակ չեն նշել, թե վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտումն ինչու է դրսևորվել և դրա հետևանքով «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության որ իրավունքն է խախտվել: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերում արտացոլված հետևությունները պատճառաբանված չեն:

Ավելին, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանը՝ ներկայացված բողոքը բավարարելիս, իսկ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելիս, հաշվի չեն առել այն հանգամանքը, որ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ղեկավարն իրավասու չէր միանձնյա՝ առանց համայնքի ավագանու թույլտվության, «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության հետ կնքելու համաձայնագիր (հոդօգտագործման պայմանագիր): Մասնավորապես, ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել վերաբերելի օրենսդրությունը, մասնավորապես՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ, 35-րդ և 43-րդ հոդվածների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին» օրենսգրքի 17-րդ հոդվածի կարգավորումները, որոնք վկայում են այն մասին, որ **համայնքի ղեկավարն իր լիազորությունները՝** համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի, հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու, ինչպես նաև ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ **հոդօգտագործման պայմանագիր կնքելու** հետ կապված, **իրավասու է իրացնելու բացառապես համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ:** Հետևաբար, այս առումով Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում բողոքաբերի այն փաստարկի հետ, որ Ա.Մովսիսյանը «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության հետ հոդօգտագործման պայմանագիր կարող էր կնքել միայն ավագանու թույլտվությամբ, ինչի մասին նշել է նաև նախաքննության մարմինը՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ¹:

Վերոգրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի դատողություններին՝ Ա.Մովսիսյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

հատկանիշների առկայության կամ բացակայության փաստը պարզելու վերաբերյալ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Ա.Մովսիսյանը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի հարկադիր կատարողի՝ 2017 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ պարտավորվելով մինչև 2017 թվականի դեկտեմբերի 18-ը «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության հետ կնքել համաձայնագիր (հոդօգտագործման պայմանագիր), հաջորդ իսկ օրը համայնքի ավագանուն ներկայացրել է առաջարկություն՝ հոդօգտագործման պայմանագիր կնքելու վերաբերյալ: Սակայն, ավագանին, օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, մերժել է առաջարկը՝ չտալով իր համաձայնությունը: Վերը նշված հանգամանքների համակցության պայմաններում, լրացուցիչ նախաքննության կատարման անհրաժեշտության վերաբերյալ ստորադաս դատարանների դատողություններն ընդունելի լինել չեն կարող:

Վերոնշյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի այն հետևությունը, որ ստորադաս դատարանները, անտեսելով քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալները, որոնցով հերքվել է Ա.Մովսիսյանի կողմից դատական ակտը դիտավորությամբ չկատարելու կամ կատարելուն խոչընդոտելու հանգամանքը, եկել են սխալ եզրահանգման առ այն, որ նախաքննության մարմինը պատշաճ քննություն չի իրականացրել:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ դիմող՝ «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության իրավունքների խախտման և վարույթն իրականացնող մարմինն այդ խախտումը վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, դատական ակտեր կայացնելիս, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ և 358-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք են ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերը բեկանելու համար: Մինևս ժամանակ, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող՝ «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ա.Օսիկյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ

հողվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող՝ «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության տնօրեն Ա.Օսիկյանի բողոքի վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հունիսի 18-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 3-ի որոշումը բեկանել և փոփոխել: Դիմող՝ «Վայկ Մետալ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ա.Օսիկյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

46.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0100/01/08

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹՎԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Լ.ՍԻՄՈՆՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման դեմ Ապլան Հովհաննեսի Ավետիսյանի պաշտպան Լ.Սիմոնյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով: Նախաքննության մարմնի՝ նույն

օրվա մեկ այլ որոշմամբ թիվ 62202508 քրեական գործը միացվել է 62202608 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 62202608 համարով:

2008 թվականի մարտի 7-ին Ասլան Հովհաննեսի Ավետիսյանը ձերբակալվել է:

2008 թվականի մարտի 8-ին Ա.Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով:

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի մարտի 8-ի որոշմամբ Ա.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

2008 թվականի մայիսի 27-ին որոշում է կայացվել Ասլան Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով:

2008 թվականի հունիսի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 16-ի դատավճռով Ա.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Ավետիսյանի պաշտպան Լ.Միմոնյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2008 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 16-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Ա.Ավետիսյանի պաշտպան Լ.Միմոնյանը հիմնարար խախտման հիմքով բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մարտի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 15-ին որոշում է կայացրել Ասլան Ավետիսյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման դեմ պաշտպան Լ.Միմոնյանի վճռաբեկ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննական մարմնի կողմից Ասլան Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Ն/ա 2008 թվականի մարտի 1-ին Երևան քաղաքի Գրիգոր Լուսավորիչ փողոցում բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, բացահայտ հաիշտություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, նրանց նկատմամբ հրազենի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ հարմարեցված առարկաների գործադրմամբ խմբակային հարձակումներով իրականացված, ինչպես նաև մարդկային զոհերի պարճառ դարձած, զանգվածային անկարգությունների ժամանակ չի ենթարկվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, այլ, ավելին, նման պահանջ է ներկայացրել նրանց, դիմելով անկարգությունների մասնակիցներին, կոչեր արել ոստիկանության աշխատակիցների պահանջներին ակտիվորեն չենթարկվելու, նրանց վրա հարձակվելու և բռնությամբ, ուժի գործադրմամբ Մյանհիկյան արձանի և ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան հարակից տարածքից «վոնդելու» և իր օրինակով հրահրել և ոգևորել է մյուսներին, մտրեցել ոստիկանության աշխատակիցներին և բղավել. «թողեք, հեռացեք, հակառակ դեպքում՝ զոռով հանելու ենք ձեզ» (...):»¹:

6. Առաջին ատյանի դատարանը, մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի պրոֆիլակտիկ բաժանմունքի տեսուչ Սիամանթո Խուդոյանի, ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի բաժնի ՉԱՊՎ պետ Խաչիկ Միքայելյանի, ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի ՊՊԾ ոստիկան Սերյոժա Շահումյանի, ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի պրոֆիլակտիկ բաժանմունքի տեսուչ Արմեն Արսենյանի ցուցմունքները, ապացույց ճանաչված լազերային կրիչները վերարտադրելու և զննելու մասին արձանագրությունը, փորձագիտական եզրակացությունները, դեպքի վայրի զննության արձանագրությունները²:

7. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, 2008 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ փաստել է. «(...) Վերաքննիչ դատարանը հաստատելով է համարում, որ 2008 թվականի մարտի 1-ին Երևանի Գրիգոր Լուսավորչի փողոցում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ժամանակ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին-րդ, թերթեր 281-282:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 64-67:

Ասլան Ավետիսյանն իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին ակտիվորեն չի ենթարկվել և նրանց նկատմամբ բռնության կոչեր է արել, այսինքն կարարել հանցանք, որ նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով և նրա արարքին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրվել է ճիշտ քրեաիրավական գնահատական, դատարանը դուրս չի եկել քրեական հետապնդման մարմնի կողմից Ավետիսյանին առաջադրված մեղադրանքի շրջանակներից և ոչ էլ մեղադրանքին նոր ձևակերպում է տրվել, ինչպես պարզապես ասվում է վերաքննիչ բողոքում, այլ ընդամենը ամբաստանյալին մեղաագրվող արարքը ձևակերպել է ավելի կոնկրետ և դատարանությանը ձեռք բերված փաստական փյուռից ելնելով, ուստի առաջին արյանի դատարանի դատավճիռը պետք է թողնել օրինական ուժի մեջ, պաշտպանի վերաքննիչ բողոքը՝ մերժել (...)¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը ներկայացված բողոքում վերլուծելով Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ և իրավական նորմեր՝ նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և խաթարել արդարադատության բուն էությունը: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները, Ա.Ավետիսյանի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովել արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները Ա.Ավետիսյանի մեղքը հիմնավորող ապացուցողական գամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Ինչ վերաբերում է այլ ապացույցներին, որոնց դատարանները հղում են կատարել, ապա դրանք անուղղակի ապացույցներ են և ուղղակիորեն չեն հաստատում Ա.Ավետիսյանի առնչությունը մեղսագրվող արարքին:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 109-110:

9. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Ա.Ավետիսյանի մեղավորության հարցին՝ բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, իսկ քրեական գործում առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված համարել, որ Ասլան Ավետիսյանը կատարել է սույն քրեական գործով իրեն մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքը:

10. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, Ասլան Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Ասլան Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում արդյո՞ք թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնք խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը և հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

12. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատարարվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը փոխյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ¹:

Մինևույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «հիմնարար խախտում» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից զուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 Արձանագրության Բացատրական գեկույցի 31-րդ կետում ընդգծված է, որ «4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հօգույր դատապարտված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատապարտյալի»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախևառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

Վերջապես, 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «ազդեն գործի ելքի վրա»՝ կամ հոգուտ անձի, կամ հակառակը¹:

12.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

12.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ն]ույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

12.3. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Մարգարյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրվում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)»¹:

12.4. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՍԴՌ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պատճառահետևանքային կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկարմամբ արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից փրժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պատճառված վնասը հատուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեզրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը ստացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»²:

13. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...)»:

13.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով³ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ:** Ի լրումն, ապացույցների որակը

¹ Տե՛ս *Մկրտիչ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

³ Տե՛ս *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ **արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ¹,**

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, **միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին:** Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին²,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում:** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած **այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեն յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները³:**

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետեր, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետեր:

² Տե՛ս *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը, 206-րդ կետ:

³ Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76201/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

- Ա.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2008 թվականի մարտի 1-ին Երևան քաղաքի Գրիգոր Լուսավորիչ փողոցում բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, նրանց նկատմամբ հրազենի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրմամբ խմբակային հարձակումներով իրականացված, ինչպես նաև մարդկային զոհերի պատճառ դարձած, զանգվածային անկարգությունների ժամանակ չի ենթարկվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, այլ, ավելին, նման պահանջ է ներկայացրել նրանց, դիմելով անկարգությունների մասնակիցներին, կոչեր արել ոստիկանության աշխատակիցներին պահանջներին ակտիվորեն չենթարկվելու, նրանց վրա հարձակվելու և բռնությամբ, ուժի գործադրմամբ Մյասնիկյան արձանի և Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի դեսպանատան հարակից տարածքից «վոնդելու» և իր օրինակով հրահրել և ոգևորել է մյուսներին, մոտեցել ոստիկանության աշխատակիցներին և բղավել. «թողեք, հեռացեք, հակառակ դեպքում՝ գոռով հանելու ենք ձեզ»¹,

- Առաջին ատյանի դատարանը, մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի պրոֆիլակտիկ բաժանմունքի տեսուչ Միամանթո Խուդոյանի, ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի բաժնի ՁԱՊՎ պետ Խաչիկ Միքայելյանի, ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի ՊՊԾ ոստիկան Սերյոժա Շահումյանի, ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի պրոֆիլակտիկ բաժանմունքի տեսուչ Արմեն Արսենյանի ցուցմունքները, ինչպես նաև ապացույց ճանաչված լազերային կրիչները վերարտադրելու և զննելու մասին արձանագրությունը, փորձագիտական եզրակացությունները, դեպքի վայրի զննության արձանագրությունները²,

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, դատական ակտում հաստատված է համարել, որ 2008 թվականի մարտի 1-ին Երևանի Գրիգոր Լուսավորչի փողոցում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ժամանակ Ասլան Ավետիսյանը իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին ակտիվորեն չի ենթարկվել և նրանց նկատմամբ բռնության կոչեր է արել³:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Ա.Ավետիսյանի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովել *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարաններն Ա.Ավետիսյանի մեղքը հիմնավորող ապացուցողական զամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների վստահելիությունն ու արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Ա.Ավետիսյանի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակիցներ՝ ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի պրոֆիլակտիկ բաժանմունքի տեսուչ Սիամանյո խոլոդյանի, ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի բաժնի ՁԱԳՎ պետ Խաչիկ Միքայելյանի, ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի ԳԳԾ ոստիկան Սերյոժա Շահումյանի, ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի պրոֆիլակտիկ բաժանմունքի տեսուչ Արմեն Արսենյանի ցուցմունքներն են:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Ա.Ավետիսյանի մեղավորության հարցին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հեղուկությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ *«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի*

վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն սպուզելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ «1.Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պարզաձև իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարարվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին պալիս է հաստատող պարասխաններ»:

16.1. Վերլուծելով ապացուցման քրեադատավարական կանոնները, մասնավորապես անդրադառնալով «ապացույցների բավարարություն» հասկացությանը՝ Վճռաբեկ դատարանն Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով որոշման մեջ նշել է, որ.

«(...) «[Ապացույցների բավարարությունը] որոշելու չափանիշներն են.

- 1) անմեղության կանխավարկածը,
- 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
- 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պարզառարանվածությունը:

(...) Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը

նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չսպացուցված մեղավորությունը հավասարագոր է սպացուցված անմեղության:

(...) Ներքին համոզմունքը, որպես սպացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող սպացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիրորդի մտք պետք է առաջացնի այն վարահությունը, որ սպացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

(...) Ապացույցի արժանահավարության հարկանիշը նույնպես վերաբերում է սպացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավար է այն սպացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավարության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) սպացույցի աղբյուրի հարկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տրվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հարկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հարկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) սպացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

(...):

Յուրաքանչյուր սպացույց արժանահավարության տեսանկյունից պետք է գնահատվի սպացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների սրացման աղբյուրները և սպացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավարության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից սրացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից սրացված տեղեկությունների արժանահավարությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել սրացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ սպացույցների հետ, պարզել դրանց համապարասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում դրա պարձառները:

Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական փյույթների վրա:

(...) Ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օրյեկտիվացվում ապացույցների բավարարությունը որոշելու մյուս՝ դատավարական որոշումների հիմնավորման և պարճառաքանման չափանիշի միջոցով (...):

(...) [Բ]րեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական փյույթների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (իհար ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»¹:

17. Սույն որոշման 16-16.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով 15-15.2-րդ կետերում ներկայացված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել այն հարցը, թե ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները՝ սույն գործի փաստական հանգամանքների և գործի նյութերի համատեքստում արդյո՞ք կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության առումով, ինչն ուներ առանցքային նշանակություն՝ դրանց արժանահավատությունը, ինչպես նաև այլ փաստական տվյալների հետ համակցության մեջ գործի լուծման համար բավարարությունը որոշելու տեսանկյունից:

Այսպես. դատական ակտերով հաստատված փաստական հանգամանքների և գործի նյութերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Ա. Ավետիսյանի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին ակտիվորեն չենթարկվելու և

¹ Տե՛ս Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 29-31-րդ և 33-րդ կետերը:

նրանց նկատմամբ բռնության կոչեր անելու համար¹, ինչը հիմնավորվել է վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակիցներ՝ ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներով²:

Նման պայմաններում, դեպքի ժամանակագրությունը՝ 2008 թվականի մարտի 1-ին Երևանի Գրիգոր Լուսավորչի փողոցում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների պահից մինչև Ա.Ավետիսյանին բերման ենթարկելը, այնուհետև՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանքի առաջադրումը՝ ողջամտորեն ստվերում են այն հիմնավորող, գործով ուղղակի ապացույց հանդիսացող՝ ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վստահելիությունն ու ճշգրտությունը՝ կասկածի տակ դնելով դրանց արժանահավատությունը և վկայում Ա.Ավետիսյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքների խախտման մասին:

18. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Ա.Ավետիսյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում և քրեական գործի վարույթը կարճելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառարանությամբ:

19. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 16-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը բեկանել:

2. Ասլան Հովհաննեսի Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

47. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ4/0013/01/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹՎԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Զալինյանի և վերջինիս պաշտպան Ռ.Հակոբյանի, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ՝ զինվորական դատախազ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի օգոստոսի 21-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության յոթերորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Բարայանի որոշմամբ հարուցվել է թիվ 90458817 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ Արեն Արարատի Զալինյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին

մասով: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2018 թվականի մարտի 17-ին թիվ 90458817 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, 2018 թվականի հուլիսի 20-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Զալիյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ ազատազրկման ձևով նշանակված պատիժը չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ Լոռու կայագործի զինվորական դատախազի տեղակալ Ա.Ավետիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ բողոքը բավարարել է և վերացրել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ թողնելով կրելու 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Ա.Զալիյանը, նրա պաշտպաններ Ս.Հարությունյանը, Ռ.Հակոբյանը և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ՝ զինվորական դատախազ Վ.Հարությունյանը:

4.1. Ա.Զալիյանը 2019 թվականի փետրվարի 6-ին ներկայացրել է դիմում՝ պաշտպան Ս.Հարությունյանի կողմից ներկայացված բողոքը հետ վերցնելու մասին: Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մարտի 4-ի որոշմամբ Ս.Հարությունյանի վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության, իսկ Ա.Զալիյանի և վերջինիս պաշտպան Ռ.Հակոբյանի, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ՝ զինվորական դատախազ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքները 2019 թվականի մայիսի 13-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Զալիյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ. «(...) [Ն]ա, 2009 թվականի փետրվարի 5-ին Վանաձորի զինկոմիսարիատում անցնելով կցագրում և ենթակա լինելով զորակոչի՝ խուսափել է ժամկերային զինվորական ծառայության հերթական՝ 2017թ. ամսուային

զորակոչից՝ այդ ծառայությունից ազատվելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայությամբ»¹:

6. Համաձայն գործում առկա նյութերի՝ Ա.Զալիսյանի առաջնելը՝ Արարատ Արենի Զալիսյանը ծնվել է 2016 թվականի նոյեմբերի 29-ին², իսկ երկրորդ երեխան՝ Արվի Արենի Զալիսյանը՝ 2017 թվականի դեկտեմբերի 15-ին³:

7. Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումները քննարկող հանրապետական հանձնաժողովը 2019 թվականի փետրվարի 27-ին հաստատել է Ա.Զալիսյանի վերաբերյալ միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2019 թվականի փետրվարի 25-ի որոշումը⁴, և Ա.Զալիսյանը 2019 թվականի փետրվարի 27-ին վճարել է որոշմամբ սահմանված գումարը⁵:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Բողոքաբերներ՝ ամբաստանյալ Ա.Զալիսյանը և նրա պաշտպան Ռ.Հակոբյանը փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են պատժի մասով ճիշտ որոշում կայացնելու վրա, և արդյունքում կայացվել է չհիմնավորված դատական ակտ, որը չի համապատասխանում արդարության պահանջներին:

8.1. Ի հիմնավորումը վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակները նշել են, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ ստուգման ու գնահատման չի ենթարկել Ա.Զալիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով վերագրվող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները, նրա անձը բնութագրող բոլոր տվյալները և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները: Բողոքաբերների պնդմամբ՝ ամբաստանյալի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրելու մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումը չի բխում պատժի նպատակներից:

9. Վերոգրյալի հիման վրա ամբաստանյալ Ա.Զալիսյանը և վերջինիս պաշտպան Ռ.Հակոբյանը խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 56:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 104:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 106:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 90:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 91:

ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 20-ի դատավճռին կամ գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

10. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ՝ զինվորական դատախազ Վ.Հարությունյանը վճռարենկ բողոքում նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի և «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

10.1. Բողոքաբերը, վկայակոչելով «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, նշել է, որ սույն քրեական գործն ինչպես Առաջին ատյանի դատարանում, այնպես էլ Վերաքննիչ դատարանում քննելիս առկա է եղել Ա.Զալիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը և քրեական գործով վարույթը բացառող հանգամանք, որը, սակայն, անտեսվել է դատարանների կողմից, ինչն էլ հանգեցրել է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման: Ի հիմնավորումն իր դիրքորոշման՝ բողոքաբերը նշել է, որ 2016 թվականի նոյեմբերի 29-ին ծնվել է Ա.Զալիսյանի առաջնեկը, իսկ 2017 թվականի դեկտեմբերի 15-ին՝ երկրորդ զավակը: Մեջբերելով «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը՝ բողոքաբերը նշել է նաև, որ Ա.Զալիսյանի նկատմամբ կիրառելի էին այդ օրենքի դրույթները՝ հաշվի առնելով, որ նա ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում խուսափել է ժամկետային զինվորական ծառայության հերթական՝ 2017 թվականի ամառային զորակոչից, իսկ 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ արդեն առկա է եղել նրան ընտանեկան դրության բերումով զինվորական ծառայությունից տարկետում տալու՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված հիմքը:

10.2. Բողոքաբերը, որպես քրեական հետապնդումը բացառող հանգամանք, վկայակոչել է նաև Ա.Զալիսյանի նկատմամբ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառելու վերաբերյալ հանրապետական հանձնաժողովի որոշումը:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը՝ գործն ուղարկելով ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրադրության փոփոխման դեպքում հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Ա.Զալինյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել իրադրության փոփոխման հիմքով:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (...) 74-րդ հոդված[ով] նախատեսված դեպք[ում]:»*:

ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պարասխանաբարձությունից, եթե պարզվի, որ իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վրանգավոր լինելուց»*:

14.1. Մեջբերված քրեաիրավական նորմը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Արամայիս և Յուրի Դալաչյանների գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով, որ. *«(...) [Ի]րադրությունը քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների այն վիճակն է, որոնց անձը ներգրավված է եղել հանցանքի կատարման պահին: Ուստի իրադրության փոփոխությունը՝ որպես քրեական պարասխանաբարձությունից ազատելու հիմք, հասարակական հարաբերությունների այդ վիճակի որակական, կայուն փոփոխությունն է, որը տեղի է ունեցել որևէ իրադարձության հետևանքով:*

ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածն ամրագրում է իրադրության փոփոխման դեպքում անձին քրեական պարասխանաարվությունից ազատելու երկու ինքնուրույն տեսակ՝

1. իրադրության փոփոխման հետևանքով հանրության համար վրանգավոր լինելուց դադարել է անձը,

2. իրադրության փոփոխման հետևանքով հանրության համար վրանգավոր լինելուց դադարել է արարքը:

Ընդ որում, իրադրության փոփոխման հիմքով անձին քրեական պարասխանաարվությունից ազատելու վերոնշյալ տեսակներից յուրաքանչյուրի կիրառումը թույլատրելի է, եթե անձին մեղաագրվող հանցանքը ոչ մեծ կամ միջին ծանրության է և կարարվել է առաջին անգամ:

Իրադրության փոփոխման հետևանքով անձի՝ հանրության համար վրանգավորության կորուստը ենթադրում է այնպիսի փոփոխությունների առկայություն, որոնց արդյունքում հանցանք կարարած անձը դադարում է հանրության համար վրանգավոր լինելուց: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ հանցագործությունից հետո անձի կյանքի և գործունեության պայմաններում կարարված փոփոխությունները զրկում են նրան հասարակական հարաբերություններին այնպիսի վնաս պատճառելու հնարավորությունից, ինչպիսին նա պատճառել է նախքան այդ փոփոխությունները: Այլ կերպ՝ կարարված փոփոխությունները պետք է էականորեն նվազեցնեն նոր հանցանք կարարելու՝ անձի օբյեկտիվ հնարավորությունը:

Իրադրության փոփոխման հետևանքով հանցավոր արարքի հանրային վրանգավորության կորուստը ենթադրում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում այնպիսի էական փոփոխությունների առկայություն, որոնց արդյունքում հանցավորի արարքը դադարում է հանրության համար վրանգ ներկայացնելուց՝ անկախ այն բանից, որ տվյալ պահին գործող քրեական օրենսգրքով այդ արարքը դեռևս համարվում է հանցավոր:

(...)

Վճռաբեկ դատարանը գրնում է, որ իրադրության փոփոխման հիմքով անձին քրեական պարասխանաարվությունից ազատելու պարագայում դատարանը, դատախազը և քննիչը պետք է հաջորդաբար քննության առնեն և համապարասխան որոշմամբ հարակորեն պարզաբանեն հետևյալ հարցերը՝ 1. հանցանքի կարարման պահին առկա իրադրությունը, 2. նոր (փոփոխված) իրադրությունը, 3. իրադարձությունը, որի հետևանքով տեղի է ունեցել իրադրության փոփոխությունը, 4. հանցանք կարարած անձի կամ նրա կարարած արարքի հանրային վրանգավորության կորստի կոնկրետ դրսևորումը, 5. պատճառական

կապը նոր (փոփոխված) իրադրության և հանցանք կատարած անձի կամ արարքի հանրային վրանգավորության կորստի միջև (...)»¹:

15. «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 1. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում փրվում է այն զորակոչիկին, որն ունի՝

(...)

գ) երկու և ավելի երեխա.

(...)

Զորակոչիկին տարկետում փրվում է նաև վերջինիս կնոջ՝ 2-րդ երեխայով կամ զույգ երեխայով վեցամսյա հղիության դեպքում»:

«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքի գործողության ոլորտն ընդգրկում է 1992 թվականի աշնանային զորակոչից մինչև 2019 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածը և տարածվում է այդ ընթացքում օրենքի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության չզորակոչված (զորակոչից խուսափած) ու 27 (պահեստագործի սպաները՝ 35) տարին լրացած կամ մինչև 27 (35) տարին լրանալը օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում սրանալու հիմքեր ձեռք բերած այն քաղաքացիների վրա, որոնց նկատմամբ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու հիմքով օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում (...)»:

Սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացին իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու և օրենքով սահմանված կարգով պահեստագործում հաշվառվելու նպատակով կարող է օրենքի խախտմամբ չզորակոչված յուրաքանչյուր զորակոչի դիմաց վճարել նվազագույն ամսական աշխատավարձի 200-ապարիկի չափով գումար (այսուհետ՝ օրենքով սահմանված վճար)»:

Սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Օրենսդրության խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության չզորակոչված, հետագայում 27 տարին լրացած կամ սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետման հիմքեր ձեռք բերած քաղաքացուն, սույն օրենքով սահմանված վճարը մոտեցրուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, փրվում է իր նկատմամբ հարուցված քրեական

¹ Տե՛ս Արամյան և Յուրի Դալայանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0009/11/11 որոշման 17-20-րդ կետերը:

հետապնդման դադարեցման մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումը, ինչպես նաև նա ստանում է զինվորական գրքույկ և հաշվառվում է պահեստագրում: Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

15.1. Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը նախատեսել է 1992 թվականի աշնանային գորակոչից մինչև 2019 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորություն, եթե՝

1) լրացել է քաղաքացու 27 տարին (պահեստագործի սպաների դեպքում՝ 35 տարին) կամ մինչև 27 (35) տարին լրանալը քաղաքացին ձեռք է բերել պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման հիմքեր, և

2) օրենքի խախտմամբ չգորակոչված յուրաքանչյուր գորակոչի դիմաց վճարել է նվազագույն ամսական աշխատավարձի 200-ապատիկի չափով գումար:

15.2. Իրադրության փոփոխման վերաբերյալ սույն որոշման 13.1-րդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշման լույսի ներքո գնահատելով նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նախատեսելով կոնկրետ դեպքում պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացու նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորություն՝ օրենսդիրը ելնում է այն գաղափարից, որ քաղաքացու՝ 27 տարին լրանալը և (կամ) սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետման հիմքեր ձեռք բերելը և վերջինիս կողմից օրենքով սահմանված չափի գումար վճարելը ենթադրում է իրադրության այնպիսի փոփոխություն, որի արդյունքում հանցավորի անձը դադարում է հանրության համար վտանգ ներկայացնելուց՝ անկախ այն բանից, որ տվյալ պահին գործող քրեական օրենքով այդ արարքը դեռևս համարվում է հանցավոր:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Զալիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքի կատարման մեջ՝ ժամկետային զինվորական ծառայության հերթական՝ 2017 թվականի ամառային գորակոչից խուսափելու համար՝ այդ ծառայությունից ազատվելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի

բացակայությամբ¹: Ա.Զալիյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը կայացվել է 2018 թվականի հուլիսի 20-ին², իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ին³: Ա.Զալիյանի առաջնեկը՝ Արարատ Արենի Զալիյանը ծնվել է 2016 թվականի նոյեմբերի 29-ին, իսկ երկրորդ երեխան՝ Արփի Արենի Զալիյանը՝ 2017 թվականի դեկտեմբերի 15-ին⁴:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-15.2-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2017 թվականի դեկտեմբերի 15-ին՝ Արփի Զալիյանի ծննդյան փաստով Ա.Զալիյանը առնվազն ձեռք է բերել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունք՝ երկու երեխա ունենալու հիմքով, ինչը, սակայն, ստորադաս դատարանների կողմից հաշվի չի առնվել Ա.Զալիյանին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը որոշելիս:

17.1. Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից որոշում կայացնելուց հետո Ա.Զալիյանի գործով ի հայտ է եկել նոր փաստական հանգամանք: Մասնավորապես, Ա.Զալիյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու և օրենքով սահմանված կարգով պահեստագործում հաշվառվելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողովը 2019 թվականի փետրվարի 25-ին որոշում է կայացրել, որը հանրապետական հանձնաժողովի կողմից հաստատվել է 2019 թվականի փետրվարի 27-ին, իսկ որոշմամբ սահմանված գումարը Ա.Զալիյանի կողմից վճարվել է 2019 թվականի փետրվարի 27-ին⁵: Սույն որոշման 15-15.2-րդ կետերի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ եթե Ա.Զալիյանի գործով ստորադաս դատարանների կողմից դատական ակտ կայացնելու պահին առկա է եղել միայն զինվորական ծառայությունից տարկետում տրամադրելու հիմք, ապա 2019 թվականի փետրվարի 27-ին Ա.Զալիյանի կողմից վերը նշված գումարը վճարելուց հետո տեղի է ունեցել իրադրության այնպիսի փոփոխություն, որի արդյունքում Ա.Զալիյանի անձը կորցրել է իր հանրային վտանգավորությունը:

Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ ինչպես Առաջին ատյանի դատարանում, այնպես էլ Վերաքննիչ դատարանում գործը քննելիս առկա է եղել հանգամանք, որը թույլ է տվել Ա.Զալիյանի

¹ Տե՛ս սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը և կարճել քրեական գործի վարույթը¹, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքում վկայակոչված² իրադրության փոփոխման հիմքում ընկած փաստական տվյալն² ի հայտ է եկել դատական ակտերը կայացնելուց հետո:

18. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ ամբաստանյալ Ա.Զալիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ իրադրության փոփոխման հիմքով:

19. Վճռաբեկ դատարանը, նման պայմաններում, առարկայագուրկ է համարում Ա.Զալիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անհրաժեշտության վերաբերյալ ամբաստանյալ Ա.Զալիսյանի և նրա պաշտպան Ռ.Հակոբյանի՝ սույն որոշման 8-րդ և 8.1-րդ կետերում վկայակոչված փաստարկներին անդրադառնալը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 37-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Ամբաստանյալ Արեն Արարատի Զալիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով Լոռու մարզի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 20-ի դատավճիռը և ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել:

2. Ամբաստանյալ Արեն Արարատի Զալիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ իրադրության փոփոխման հիմքով:

3. Արեն Արարատի Զալիսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

¹ Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարից հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

48. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0021/01/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահույթյամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 28-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Հրայրա Արամի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի դեկտեմբերի 28-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 71106618 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ Հրայրա Արամի Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2019 թվականի ապրիլի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2019 թվականի հուլիսի 25-ի դատավճռով Հրայր Խաչատրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Հ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի նոյեմբերի 11-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 25-ի դատավճիռը պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին: Ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված՝ 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկումը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ նշված ժամանակահատվածում մշտական բնակության վայրը չփոխելու պարտականություն սահմանելով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մարտի 12-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Վճռաբեկ դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 15-ին որոշում է կայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Հրայր Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «2018 թվականի դեկտեմբերի 27-ին՝ ժամը 20-ի սահմաններում, իր կողմից վարած «Nissan Teana 2.3» մակնիշի 01 VQ 020 հաշվառման համարանիշի ավտոմոբիլով Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղու և Նաիրի փողոցների հատման խաչմերուկում, խախտելով ճանապարհային երթևեկության կանոնները, երթևեկել է տվյալ պայմանների համար

սահմանված թույլատրելի առավելագույնը գերազանցող արագությամբ և վազանց կարարել արգելված վայրում՝ խաչմերուկում, այդ կերպ թույլ է տրվել ՀՀ «Ճանապարհային երթևեկության կանոնների» 65 և 77 կետերի պահանջներին հակասող գործողություններ, որի հետևանքով վրատերթի է ենթարկել փողոցը հետիոտնային անցման գոտով հատող, հետիոտն Սևակ Հրանտի Մարտիրոսյանին՝ ինքն իրեն գրկելով վրատերթը կանխելու փեխնիկական հնարավորությունից, ինչի արդյունքում Սևակ Մարտիրոսյանին անզգուշությամբ պատճառով է մահ»¹:

6. Առաջին առյանի դատարանը, անդրադառնալով ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ պատիժ նշանակելու հարցին, փաստել է. «(...) [Առաջին արյանի դատարանը] որպես Հ.Խաչատրյանի անձը բնութագրող փյալ հաշվի է առնում այն, որ նա երիտասարդ է, բնութագրվում է դրական, նախկինում դատապարտված չի եղել, սպորտային մրցաշարերում ունեցել է ակտիվ մասնակցություն, ունի բազմաթիվ պարվորեր և շնորհակալագրեր:

[Առաջին արյանի դատարանը], հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասը, որպես ամբաստանյալ Հ.Խաչատրյանի պարասխանարվությունն ու պարիժը մեղմացող հանգամանք հաշվի է առնում այն, որ նա իրեն լիովին մեղավոր է ճանաչել և փվել խոսքովանական ցուցմունքներ, անկեղծորեն զղջացել է կարարած արարքի համար:

[Առաջին արյանի դատարանն] արձանագրում է, որ Հ.Խաչատրյանի պարասխանարվությունն ու պարիժը ծանրացող հանգամանքներ առկա չեն:

(...)

[Առաջին արյանի դատարանը], հաշվի առնելով ամբաստանյալ Հ.Խաչատրյանի կարարած արարքի՝ հանրության համար վրանգավորության աստիճանն ու բնույթը, նրա անձը բնութագրող և պարասխանարվությունն ու պարիժը մեղմացող հանգամանքները, և հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների պահանջները, գրնում է, որ ամբաստանյալ Հ.Խաչատրյանն իր կարարած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության համար ենթակա է պարժի ազարագրկման և որոշակի գործունեությամբ՝ փրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից գրկման ձևով:

Անդրադառնալով ամբաստանյալ Հ.Խաչատրյանի կողմից իր նկարմամբ նշանակված պարիժը կրելու նպարակահարմարության հարցին [Առաջին արյանի դատարանն] արձանագրում է հետևյալը.

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 231-241:

[Առաջին արյանի դատարանը], հաշվի առնելով հանցավորի անձը բնութագրող հանգամանքները, կատարված արարքի բնույթն ու հանրային վրանգավորության աստիճանը, պարժի՝ սոցիալական արդարության վերականգման և պարժի ենթարկված անձի ուղղվելու նպատակների իրացման հարցը, գրնում է, որ ամբաստանյալ Հ.Խաչատրյանը պետք է կրի իր նկատմամբ նշանակված պարժը, այն պայմանականորեն չկիրառելու հիմքերը բացակայում են և միայն ազատագրվման ձևով նշանակված պարժը ռեալ կրելու պայմաններում է հնարավոր սպահովել պարժի նպատակները»¹:

7. Վերաքննիչ դատարանը, պատժի մասով բեկանելով և փոփոխելով Առաջին արյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է հետևյալը. «(...) Առաջին արյանի դատարանի կողմից արձանագրված ամբաստանյալի պարասխանաարվությունն ու պարժը մեղմացնող հանգամանքը, նրա անձը բնութագրող հանգամանքները, ամբաստանյալի կատարած հանցագործության բնույթը և հանրային վրանգավորության աստիճանը, հանցագործության կատարման հանգամանքները, հանցանքը կատարելուց հետո ամբաստանյալի դրսևորած վարքագիծը, պարասխանաարվությունն ու պարժը ծանրացնող հանգամանքի բացակայության փաստը թույլ են տալիս գալու եզրահանգման, որ (...) կոնկրետ պարժարեսակի և պարժաչափի նշանակման հարցում Առաջին արյանի դատարանի հերևությանը չհամաձայնվելու իրավաչափի հիմքեր տվյալ պարագայում առկա չեն:

(...) [Ա]յնուհանդերձ Հ.Խաչատրյանի նկատմամբ նշանակված ազատագրվման ձևով պարժը փաստացի չկրելու նպատակահարմարության համարեքստում նրա վերաբերյալ վերոնշյալ տվյալները պարժած գնահարման չի ենթարկել, որի արդյունքում եկել է սխալ հերևության:

Վերաքննիչ դատարանի նման հերևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ամբաստանյալ Հ.Խաչատրյանի երիտասարդ լինելը, դրականորեն բնութագրվելը, նախկինում դատապարտված չլինելը և անձը բնութագրող մյուս հանգամանքները, հանրորեն վրանգավոր արարքի և դրա հերևանքների նկատմամբ նրա դրսևորած հոգեբանական վերաբերմունքը, դեպքից հետո դրսևորած վարքագիծը, իրեն լիովին մեղավոր ճանաչելը, խոստովանական ցուցմունքներ տալը և անկեղծորեն գղջալը, ինչպես նաև տուժողի իրավահաջորդի դիրքորոշումը՝ ամբաստանյալից բողոք կամ որևէ պահանջ չունենալու մասին, իրենց համակցության մեջ, էապես նվազեցնում են ինչպես ամբաստանյալ Հ.Խաչատրյանի, այնպես էլ նրա կատարած արարքի հանրության համար

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 302-307:

վրանգավորության աստիճանը և բավարար հիմքեր են տալիս գալու հետևություն, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը փաստացի կրելու և ըստ այդմ՝ հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրացվելիությանը»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որի արդյունքում կայացվել է անհիմն և անօրինական դատական ակտ:

Մասնավորապես, բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, պատշաճ գնահատականի չի արժանացրել կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է սույն գործով հաստատված այն հանգամանքը, որ ամբաստանյալ Հ.Խաչատրյանը, խախտելով ճանապարհային երթևեկության կանոնները, գերազանցել է սահմանված թույլատրելի առավելագույն արագությունը և վազանց կատարել արգելված վայրում՝ խաչմերուկում, ինչի հետևանքով վրատեղի է ենթարկել փողոցը հետիոտնային անցման գոտիով հատող Ս.Մարտիրոսյանին և նրան անզգուշությամբ մահ պատճառել:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել ամբաստանյալ Հ.Խաչատրյանի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը, դրանց նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը, այն է՝ հանցավոր ինքնավստահությամբ գործելու հանգամանքը, որպիսիք ճանապարհատրանսպորտային հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցավորի անձի և արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին ճիշտ պատկերացում կազմելու հարցում ունեն առանցքային նշանակություն:

8.1. Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքում դրված հանգամանքների համակցությունը սույն գործով որևէ կերպ չի նվազեցնում ամբաստանյալի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բավարար չէ հանգելու հետևության, որ պատժի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 36-46:

նպատակները կարող են իրականացվել առանց նրա կողմից նշանակված պատիժը փաստացի կրելու:

9. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 25-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ավրոմորիլի կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս (...):*

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ (...):»:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ պատիժ նշանակելիս, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս հաշվի առնվող հանգամանքների վերաբերյալ իր նախադեպային իրավունքում ձևավորված իրավական դիրքորոշումները, *Գազիկ Ղուկասյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում փաստել է, որ վերոնշյալ հանցագործությունների վերաբերյալ գործերով *«դատարանները, ի թիվս այլոց, պետք է հարկապես հաշվի առնեն՝*

ա. հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները (...),

բ. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը բացահայտելու համար դատարանները, յուրաքանչյուր դեպքում ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, պետք է գնահատման ենթարկեն, թե

ճանապարհային երթևեկության կանոնների տվյալ խախտումը ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ իրադրությունում որքանով էր հավանական դարձնում ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը (...): Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ, ի թիվս այլոց, լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, սահմանված արագությունը գերազանցելը, տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելը, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը վրանգ են առաջացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար և առավել հավանական դարձնում հանրության համար վրանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը (...):

գ. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում փաստել է, որ դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե տրանսպորտային միջոցի վարորդը ճանապարհային երթևեկության կանոնների խախտումն արդյոք գիտակցաբար է թույլ տվել (...):

Զարգացնելով սույն իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կարևոր նշանակություն ունի այն հարցի պարզումը, թե ճանապարհային երթևեկության կանոնները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-11-րդ հոդվածների իմաստով դիտարկությամբ, թե անզգուշությամբ են խախտվել: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ճանապարհային երթևեկության կանոնները դիտարկությամբ խախտելը վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության հանրային վրանգավորության առավել բարձր աստիճանի մասին,

դ. հանրորեն վրանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը (...),

ե. հանցագործությամբ պատճառված վնասը (...),

զ. հանցանքի կատարումից անմիջապես հետո, ինչպես նաև հետագայում հարուցված քրեական գործի քննության ընթացքում հանցավորի դրսևորած վարքագիծը (...):

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարած անձանց նկատմամբ պարժի տեսակի ու չափի, ինչպես նաև նշանակված պարիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները սույն որոշման նախորդ կետում նշված հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ վերլուծության հիման վրա

կառուցելն ունի առանձնապես կարևոր նշանակություն: Ոստիկանը այդ հանգամանքները հաշվի չառնելը, դրանք անտեսելը կարող է հանգեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը (...):»¹:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Հ.Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա, իր կողմից վարած «Nissan Teana 2.3» մակնիշի 01 VQ 020 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղու և Նաիրի փողոցների հատման խաչմերուկում խախտելով ճանապարհային երթևեկության կանոնները, երթևեկել է տվյալ պայմանների համար սահմանված թույլատրելի առավելագույնը գերազանցող արագությամբ և վազանց կատարել արգելված վայրում՝ խաչմերուկում՝ այդ կերպ թույլ տալով ՀՀ «Ճանապարհային երթևեկության կանոնների» 65-րդ և 77-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ, որի հետևանքով վրաերթի է ենթարկել փողոցը հետիոտնային անցման գոտիով հատող հետիոտն Ս.Մարտիրոսյանին և նրան անզգուշությամբ մահ պատճառել²:

Գնահատելով կատարված հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, ամբաստանյալ Հ.Խաչատրյանի անձը բնութագրող տվյալները՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ նրա նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր չէ հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված պատժի նպատակներին³:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, չհամաձայնելով Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դիրքորոշմանը, նշել է, որ ամբաստանյալ Հ.Խաչատրյանի երիտասարդ լինելը, դրականորեն բնութագրվելը, նախկինում դատապարտված չլինելը և անձը բնութագրող մյուս հանգամանքները, հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ նրա դրսևորած հոգեբանական վերաբերմունքը, դեպքից հետո դրսևորած վարքագիծը, իրեն լիովին մեղավոր ճանաչելը, խոստովանական ցուցմունքներ տալը և անկեղծորեն գղջալը, ինչպես նաև տուժողի իրավահաջորդի դիրքորոշումը՝ ամբաստանյալից բողոք կամ որևէ պահանջ

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գազիկ Ղուկասյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԳ/0075/01/16 որոշման 13-14-րդ կետերը, ինչպես նաև, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Սահակյանի* վերաբերյալ գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ1/0003/01/10, *Էդմոն Ասաբոյանի* վերաբերյալ գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11, *Արամայիս Հովհաննեսյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14 որոշումները:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

չունենալու մասին, իրենց համակցության մեջ էապես նվազեցնում են ինչպես ամբաստանյալ Հ.Խաչատրյանի, այնպես էլ նրա կատարած արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բավարար հիմքեր են տալիս գալու հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը փաստացի կրելու¹:

13. Նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-րդ կետում մեջքերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական վերլուծության չի ենթարկել ամբաստանյալի կողմից կատարված հանցավոր արարքի բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող մի շարք գործոններ, որոնք վկայում են վերջինիս անձի և նրա կատարած արարքի հանրային բարձր վտանգավորության մասին:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը պատշաճ վերլուծության և գնահատման չի ենթարկել՝

ա) ամբաստանյալի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը: Այսպես՝ ամբաստանյալ Հ.Խաչատրյանը երթևեկել է թույլատրելի առավելագույն արագությունը գերազանցող արագությամբ և վազանց է կատարել արգելված վայրում՝ խաչմերուկում, որպիսի հանգամանքներն ավելի հավանական են դարձրել ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը,

բ) ճանապարհային երթևեկության կանոնների խախտման նկատմամբ ամբաստանյալ Հ.Խաչատրյանի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Մասնավորապես՝ ամբաստանյալի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է դիտավորությամբ կատարվող իրավախախտում,

գ) հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ ամբաստանյալ Հ.Խաչատրյանի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Այդ առումով Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի այն փաստարկը, որ ճանապարհային երթևեկության տվյալ իրադրությունում տրանսպորտային միջոցի լիարժեք կառավարումն ապահովելու համար թույլատրելի առավելագույն արագությունը գերազանցող արագությամբ ընթանալով, արգելված վայրում՝ խաչմերուկում, վազանց կատարելով, ամբաստանյալ Հ.Խաչատրյանը նախատեսել է իր գործողության

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

արդյունքում հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն, այսինքն՝ հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ վերջինս դրսևորել է հանցավոր ինքնավստահություն¹:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից համարժեք իրավական գնահատականի չի արժանացվել նաև այն փաստը, որ ամբաստանյալը տուժողին վրաերթի է ենթարկել հետիոտնային անցման գոտին հատելիս, այսինքն՝ Ս.Մարտիրոսյանին անզգուշությամբ մահ է պատճառվել այնպիսի իրադրությունում, երբ նա ճանապարհի երթևեկելի մասը հատում էր օրենքով սահմանված կարգով՝ հետիոտների տեղաշարժվելու համար նախատեսված երթևեկելի մասի առանձնացված հատվածով, որպիսի հանգամանքը ևս բարձրացնում է կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը:

14. Ընդհանրացնելով նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պատշաճ գնահատման չի ենթարկել կատարված արարքի բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են վերջինիս կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը, ճանապարհային երթևեկության կանոնների խախտման և հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Մինչդեռ, ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները պետք է կառուցվելին վերոնշյալ հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ մանրամասն վերլուծության արդյունքում, իսկ դրանք անտեսելը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ կատարված արարքի բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող վերոնշյալ հանգամանքներն էականորեն բարձրացնում են հանցավորի անձի և կատարված արարքի վտանգավորությունը, ուստի, նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի առնված հանգամանքներն ինքնին չեն կարող բավարար լինել՝ ազատագրկման ձևով նշանակված պատիժը

¹ Տե՛ս նույն որոշման 8-րդ կետը:

պայմանականորեն չկիրառելու և պատժի նպատակների իրացմանը հասնելու համար:

15. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

Մինևույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանը, պատշաճ կերպով վերլուծելով և գնահատման ենթարկելով գործում առկա՝ ամբաստանյալ Հ.Խաչատրյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, մեղսագրվող արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցում հանգել է ճիշտ հետևության՝ իրավաչափորեն արձանագրելով, որ վերջինիս նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր չէ հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված պատժի նպատակներին:

16. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի սխալ կիրառում, արդյունքում կայացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ:

Մինչդեռ, սույն գործով Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 25-ի դատավճիռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 418-419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Հրաչյա Արամի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 25-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

49. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0245/01/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
ամբաստանյալ՝
պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս.ԹՈՐՈՍՅԱՆԻ
Ա.ՔՈԶԱՐՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Սմբատ Սեյրանի Թորոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնում, 2019 թվականի փետրվարի 17-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 60101819 քրեական գործը:

2019 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ Սմբատ Սեյրանի Թորոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2019 թվականի ապրիլի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 15-ի դատավճռով Սմբատ Թորոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ս.Թորոսյանի պաշտպան Ա.Քոչարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ պաշտպանի բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 15-ի դատավճիռը պատժի մասով բեկանել և փոփոխել է, Ս.Թորոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մարտի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 15-ին որոշում է կայացրել ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Սմբատ Թորոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «*Մ/ա, վարելով իրեն պարկանոց «Մերսեդես» մակնիշի 35 ZS 896 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, թույլ է տրվել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջների և*

ճանապարհային երթևեկության կանոնների խախտում, ինչի հետևանքով վրատերթի է ենթարկել Լարիսա Դիմիտրիի Կյուրեղյանին, որն անզգուշությամբ առաջացրել է վերջինիս մահը:

Այսպես.

Սմբար Սեյրանի Թորոսյանը, 2013 թվականի հուլիսի 18-ից ծառայելով ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կարևորագույն օբյեկտների և հիմնարկ-ձեռնարկությունների պահպանության գնդի 1-ին գումարտակի ավագ ոստիկանի պաշտոնում, ունենալով ոստիկանության ավագի կոչում, այսինքն՝ հանդիսանալով պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, չունենալով փրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական, 2019 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը 19:30-ի սահմաններում, վարելով իրեն պատկանող «Մերսեդես» մակնիշի 35 ZS 896 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայով շուրջ 60կմ/ժամ արագությամբ երթևեկել է դեպի Բագրատունյաց փողոցի ուղղությամբ: Երթևեկության ընթացքում, Արշակունյաց պողոտայի թիվ 272 հասցեի դիմաց, չկարգավորվող հետիոտնային անցումից առաջ՝ բջջային հեռախոսն ավտոմեքենայի ցուցիչների վահանակին ամրացնելու հետևանքով շեղելով ուշադրությունը երթևեկությունից և շարունակելով երթևեկությունը՝ այդ կերպ խոչընդոտ սրելով չկարգավորվող հետիոտնային անցումով երթևեկելի մասը հատող հետիոտնի համար, Սմբար Թորոսյանը թույլ է տվել «ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի, ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված «ճանապարհային երթևեկության կանոնների» 67-րդ և 103-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ, րեինհիկական րեասկերից սրելով է վթարային իրադրություն, դրանով իսկ պայմանավորել վրատերթի առաջացում՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու րեինհիկական հնարավորությունից: Մասնավորապես, թույլ տված ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջների և ճանապարհային երթևեկության կանոնների խախտման հետևանքով Արշակունյաց պողոտայի թիվ 272 հասցեի դիմաց՝ ճանապարհահատվածում, Սմբար Թորոսյանն իր վարած ավտոմեքենայի առջևի ձախ մասով վրատերթի է ենթարկել չկարգավորվող հետիոտնային անցումով երթևեկելի մասը հատող հետիոտն Լարիսա Կյուրեղյանին, որն անզգուշությամբ առաջացրել է վերջինիս մահը¹:

6. Առաջին առյանի դատարանն արձանագրել է հետևյալը. «(...) Դատարանը, հաշվի առնելով Սմբար Սեյրանի Թորոսյանի կատարած

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 279-280:

արարքի՝ հանրության համար վրանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ նրա գործողությունների վրանգավորության աստիճանը, նրա անձը՝ այն, որ ծառայելով ՀՀ օստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կարևորագույն օբյեկտների և հիմնարկ-ձեռնարկությունների պահպանության գնդի 1-ին գումարակի ավագ օստիկանի պաշտոնում, չունենալով փրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական, վարել է ավտոմեքենա, կատարած հանցագործությունից հետո դրսևորած վարքագիծը, պարասիանսարվությունն ու պարիժը մեղմացնող և պարասիանսարվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կատարել է հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություն դատարանը հանգում է այն համոզման, որ Սմբար Սեյրանի Թորոսյանի ուղղվելը հնարավոր է միայն՝ նշանակված պարիժը փաստացի կրելու դեպքում (...): [Մ]իաժամանակ (...) ամբաստանյալ Սմբար Սեյրանի Թորոսյանի նկարմամբ պեպք է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պարիժը՝ որոշակի գործունեությամբ՝ վարորդությամբ զբաղվելու իրավունքից զրկելը (...):»¹:

7. Վերաքննիչ դատարանը, իր որոշմամբ անդրադառնալով Ա.Թորոսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցին, արձանագրել է. «(...) [Բ]նության առնելով ամբաստանյալ Սմբար Սեյրանի Թորոսյանի նկարմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ազատագրված անվ նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորության հարցը, հաշվի է առնում ինչպես կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը, կատարման հանգամանքները, այնպես էլ ամբաստանյալ Սմբար Սեյրանի Թորոսյանի անձը բնութագրող տվյալներն, այն, որ և ծառայության, և բնակության վայրերում բնութագրվում է դրականորեն, նախկինում դատապարտված և արարավորված չի եղել, իրեն մեղավոր է ճանաչել, զղջում է կատարածի համար, ինչպես նաև պարասիանսարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքներ չարձանագրելը:

Որպես պարասիանսարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքներ Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում նաև այն, որ ամբաստանյալ Սմբար Սեյրանի Թորոսյանը իրեն լիովին մեղավոր է ճանաչել, զղջացել է կատարած արարքի համար, ինչպես նաև րուժողի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 54-56:

իրավահաջորդի կողմից ամբաստանյալ Սմբատ Սեյրանի Թորոսյանի նկարումամբ բողոք, որևէ պահանջ չներկայացնելը:

(...) [Տ]ուժողի իրավահաջորդ Լիանա Իրիցյանը (...) դատարանին խնդրել է ամբաստանյալ Սմբատ Թորոսյանի նկարումամբ նշանակված պարիժը մեղմացնել և նրա նկարումամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և պարիժը պայմանականորեն չկիրառել: Սմբատ Թորոսյանի նկարումամբ քաղաքացիական պահանջ չունի:

(...)

Հիմք ընդունելով վերոգրյալը, վերաքննիչ դատարանը գտնում է, որ Գատարանն ամբաստանյալ Սմբատ Սեյրանի Թորոսյանի նկարումամբ ազարագրվման ձևով նշանակված պարիժը ռեալ կրելու նպատակահարմարության հարցում, կոնկրետ դեպքում, հանգել է ոչ ճիշդ եզրակացության, ինչը հանգեցրել է նյութական իրավունքի այնպիսի խախտման, որը հիմք է վիճարկվող դատական ակտն այդ մասով բեկանելու և փոփոխելու, ազարագրվման ձևով նշանակված պարիժը՝ 1 (մեկ) փարի 6 (վեց) ամիս ժամկետով ազարագրկումը պայմանականորեն չկիրառելու և 2 (երկու) փարի ժամկետով փորձաշրջան սահմանելու համար (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և խաթարել արդարադատության բուն էությունը:

Բողոքի հեղինակը փաստել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է Վճռաբեկ դատարանի կողմից մի շարք նախադեպային որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները, մասնավորապես, ուշադրության չի արժանացրել այն հանգամանքը, թե տվյալ խախտումների արդյունքում, ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ իրադրությունում, որքանով էր հավանական անձանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը և որքանով էր ակնհայտ թույլ տված խախտման ու հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման միջև պատճառական կապի զարգացման հավանականությունը:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 56-58:

Բողոքաբերի կարծիքով, Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել կատարված հանցագործության բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, մասնավորապես, չի գնահատել թույլ տրված խախտման բնույթը, ծանրության աստիճանը, դրա նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Բացի այդ, որևէ կարևորություն չի տրվել նաև հանցագործության արդյունքում վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքին, այն է՝ դրսևորված անզգուշության արդյունքում վնասվել է օրենքով առավել խիստ պաշտպանվող բարիք՝ պատճառվել է մարդու մահ:

Ավելին՝ ըստ բողոքաբերի, Ս.Թորոսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ամբաստանյալը տրանսպորտային միջոցը վարել է՝ չունենալով վարորդական իրավունքի վկայական, ինչն էլ ավելի է բարձրացնում կատարված արարքի և հանցավորի անձի վտանգավորությունը:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 22-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 15-ի դատավճռին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք ամբաստանյալ Ս.Թորոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածը սահմանում է. «1. Ավրոմոբիլի կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս` (...):

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ (...):»:

Վճարելի դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ պատիժ նշանակելիս, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս հաշվի առնվող

հանգամանքների վերաբերյալ իր նախադեպային իրավունքում ձևավորված իրավական դիրքորոշումները, Գագիկ Ղուկասյանի վերաբերյալ որոշման շրջանակներում փաստել է, որ վերոնշյալ հանցագործությունների վերաբերյալ գործերով «դատարանները, ի թիվս այլոց, պետք է հատկապես հաշվի առնեն՝

ա. հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները (...),

բ. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը բացահայտելու համար դատարանները, յուրաքանչյուր դեպքում ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, պետք է գնահատման ենթարկեն, թե ճանապարհային երթևեկության կանոնների տվյալ խախտումը ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ իրադրությունում որքանով էր հավանական դարձնում ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պարճատելու հնարավորությունը (...): Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ, ի թիվս այլոց, լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, սահմանված արագությունը գերազանցելը, տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելը, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը վրանձ են առաջացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար և առավել հավանական դարձնում հանրության համար վրանձավոր հետևանքների առաջացման հնարավորությունը: (...),

գ. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում փաստել է, որ դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե տրանսպորտային միջոցի վարորդը ճանապարհային երթևեկության կանոնների խախտումն արդյոք գիտակցաբար է թույլ տվել (...):

Զարգացնելով սույն իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կարևոր նշանակություն ունի այն հարցի պարզումը, թե ճանապարհային երթևեկության կանոնները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-11-րդ հոդվածների իմաստով դիտարկությամբ, թե անզգուշությամբ են խախտվել: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ճանապարհային երթևեկության կանոնները դիտարկությամբ խախտելը վկայում է հանցավորի

անձնավորության և կատարված հանցագործության հանրային վրանգավորության առավել բարձր աստիճանի մասին,

դ. հանրորեն վրանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը (...),

ե. հանցագործությամբ պարճատված վնասը (...),

զ. հանցանքի կատարումից անմիջապես հետո, ինչպես նաև հետագայում հարուցված քրեական գործի քննության ընթացքում հանցավորի դրսևորած վարքագիծը (...):

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարած անձանց նկատմամբ պարճի տեսակի ու չափի, ինչպես նաև նշանակված պարճի կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները սույն որոշման նախորդ կետում նշված հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ վերլուծության հիման վրա կառուցելն ունի առանձնապես կարևոր նշանակություն: Ուարի այդ հանգամանքները հաշվի չառնելը, դրանք անտեսելը կարող է հանգեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը (...):¹

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը *Էդմոն Ասատրյանի* վերաբերյալ որոշմամբ արձանագրել է, որ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից հետիոտնային անցումների հատման կանոնները խախտելը, այդ թվում՝ հետիոտնին չզիջելը, պարունակում է ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու մեծ հավանականություն: Նշված իրադրությունում, որպես կանոն, խախտումը թույլ տվողի համար բավականաչափ ակնհայտ է լինում խախտման արդյունքում վտանգավոր հետևանքների առաջացման հավանականությունը²:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Թորոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա, չունենալով տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական, իրեն պատկանող «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով շուրջ 60 կմ/ժամ արագությամբ երթևեկել է Երևանի Արշակունյաց պողոտայով դեպի

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գագիկ Ղուկասյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԴ/0075/01/16 որոշման 13-14-րդ կետերը, ինչպես նաև, *mutatis mutandis*, տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Սահակյանի* վերաբերյալ գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ1/0003/01/10, *Էդմոն Ասատրյանի* վերաբերյալ գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11, *Արամայիս Հովհաննեսյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14 որոշումները:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդմոն Ասատրյանի* վերաբերյալ գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշումը:

Բագրատունյաց փողոցի ուղղությամբ, չկարգավորվող հետիոտնային անցումից առաջ շեղել է ուշադրությունը երթևեկությունից՝ բջջային հեռախոսն ավտոմեքենայի ցուցիչների վահանակին ամրացնելու պատճառով, և շարունակել երթևեկությունը՝ թույլ տալով «ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված «ճանապարհային երթևեկության կանոնների» 67-րդ և 103-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ, ինչի հետևանքով վրատերթի է ենթարկել հետիոտնային անցումով երթևեկելի մասը հատող հետիոտն Լ.Կյուրեղյանին և վերջինիս անզգուշությամբ մահ պատճառել¹:

Առաջին ատյանի դատարանը, Ս.Թորոսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս, հաշվի է առել նրա կատարած արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը, մասնավորապես այն, որ վարել է ավտոմեքենան՝ չունենալով վարորդական վկայական, հանցագործությունից հետո նրա դրսևորած վարքագիծը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայությունը: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ Ս.Թորոսյանի նկատմամբ անհրաժեշտ է նշանակել ազատազրկման ձևով պատիժ, որը նա պետք է կրի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրացումն ապահովելու համար²:

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ամբաստանյալ Ս.Թորոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորության հարցը, արձանագրել է, որ Ս.Թորոսյանի ուղղվելը հնարավոր է առանց ազատազրկման ձևով նշանակված պատիժը փաստացի կրելու՝ հաշվի առնելով, մասնավորապես, վերագրվող հանցագործության բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, կատարման հանգամանքները, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալներն առ այն, որ ծառայության և բնակության վայրերում բնութագրվում է դրական, նախկինում դատապարտված չի եղել, իրեն մեղավոր է ճանաչել, գոջացել է կատարածի համար, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չեն արձանագրվել, բացի այդ, տուժողի իրավահաջորդի կողմից ամբաստանյալ Ս.Թորոսյանի նկատմամբ որևէ բողոք կամ պահանջ չի ներկայացվել³:

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

13. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ս.Թորոսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս, Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական վերլուծության չի ենթարկել ամբաստանյալի կողմից կատարված հանցավոր արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող մի շարք գործոններ:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման և վերլուծության չի ենթարկել ամբաստանյալի կողմից թույլ տրված երթևեկության կանոնների խախտման բնույթը, ինչպես նաև դրանց արդյունքում վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքները: Այսպես՝ շուրջ 60 կմ/ժամ արագությամբ ընթանալու պարագայում, ամբաստանյալը չկարգավորվող հետիոտնային անցումից առաջ շեղել է ուշադրությունը երթևեկությունից՝ բջջային հեռախոսն ավտոմեքենայի ցուցիչների վահանակին ամրացնելու նպատակով, այդ ընթացքում միջոցներ չի ձեռնարկել արագությունն իջեցնելու համար և շարունակել է երթևեկությունը՝ խոչընդոտ առաջացնելով չկարգավորվող հետիոտնային անցումի երթևեկելի մասը հատող հետիոտնի համար, արդյունքում ստեղծել է վթարային իրադրություն՝ դրանով իսկ պայմանավորել վրաերթի առաջացումը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ խախտումները, կոնկրետ իրադրությունում, ավելի հավանական են դարձրել ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը, և արդյունքում տուժողին անզգուշությամբ մահ է պատճառվել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի կողմից համարժեք իրավական գնահատականի չի արժանացվել այն, որ ամբաստանյալը տրանսպորտային միջոցը վարել է՝ չունենալով տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական իրավունքի վկայական, ինչպես նաև տուժողին վրաերթի է ենթարկել հետիոտնային անցումի երթևեկելի մասը հատելիս, այսինքն՝ Լ.Կյուրեղյանին անզգուշությամբ մահ է պատճառվել՝ ճանապարհի երթևեկելի մասը վերջինիս կողմից օրենքով սահմանված կարգով հատելու ընթացքում: Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ վերոնշյալ հանգամանքները ևս էականորեն բարձրացնում են ինչպես հանցավորի, այնպես էլ կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը: Ուստի, նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի առնված հանգամանքներն ինքնին չեն կարող բավարար լինել՝ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու և պատժի նպատակների իրացումն ապահովելու համար:

14. Ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ս.Թորոսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, պատշաճ վերլուծության չի ենթարկել կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են վերջինիս կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը և դրանց արդյունքում վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքը, այն է՝ տուժողին անզգուշությամբ մահ պատճառելը: Մինևույն ժամանակ, վերոնշյալի համատեքստում համարժեք գնահատականի չեն արժանացվել հանցավորի անձի և կատարված արարքի հանրային բարձր վտանգավորության աստիճանի մասին վկայող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են ամբաստանյալի կողմից տրանսպորտային միջոց վարելը՝ առանց տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ունենալու, ինչպես նաև տուժողին վրաերթի ենթարկելը՝ հետիոտնային անցումը հատելու ընթացքում:

Մինչդեռ, ամբաստանյալ Ս.Թորոսյանի նկատմամբ նշանակված պատժի տեսակի ու չափի, ինչպես նաև պատիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները պետք է կառուցվեն վերոնշյալ հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ մանրամասն վերլուծության արդյունքում, իսկ դրանք անտեսելը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման:

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ս.Թորոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում, արդյունքում կայացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ: Այսինքն, թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության

ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 22-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 15-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սմբատ Սեյրանի Թորոսանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 22-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 15-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

50. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0005/11/10

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահույթյամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ՝
դիմողի ներկայացուցիչ՝
դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ԶԵՅՆԱԼՅԱՆԻ
Տ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դիմող Լատուրա Նիկոլայի Մեհրաբյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանի՝ նոր հանգամանքի հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ալբերտ Երվանդի Մկրտումյանի մահվան փաստի առթիվ նախապատրաստված նյութերով ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի քննիչ Ժ.Մովսիսյանը 2008 թվականի ապրիլի 22-ին որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Վերոգրյալ որոշման դեմ դիմող Լատուրա Նիկոլայի Մեհրաբյանի բողոքի քննության արդյունքում, Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանը, 2008 թվականի հունիսի 19-ի

որոշմամբ բողոքը բավարարել է՝ վերացնելով ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի քննիչ Փ.Մովսիսյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2008 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

Նշված դատական ակտի դեմ դատախազի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ մերժվել է՝ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հունիսի 19-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

1.1. 2008 թվականի հուլիսի 23-ին Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի դատախազությունում հարուցվել է թիվ 11114808 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի քննիչ Փ.Մովսիսյանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճվել է՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Նախաքննության մարմնի նշված որոշման դեմ դիմող Լաուրա Մեհրաբյանի բողոքի քննության արդյունքում, Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանը, 2009 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ բողոքը բավարարել է՝ վերացնելով ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի քննիչ Փ.Մովսիսյանի՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին 2008 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը:

Վերոգրյալ դատական ակտի դեմ դատախազի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի մայիսի 19-ի որոշմամբ մերժվել է, Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 3-ի որոշումը թողնելով է օրինական ուժի մեջ:

1.2. Նախաքննության մարմնի՝ 2009 թվականի հունիսի 18-ի որոշմամբ քրեական գործով վարույթը վերսկսվել է:

Նախաքննության մարմնի՝ 2009 թվականի հունիսի 19-ի որոշմամբ Լ.Մեհրաբյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

1.3. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ Փ.Մովսիսյանի՝ 2009 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճվել է՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Նախաքննության մարմնի նշված որոշման դեմ դիմող Լ.Մեհրաբյանի բողոքը Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի

դատախազության դատախազ Մ. Շահգալոյանի՝ 2009 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ մերժվել է:

Նախաքննության մարմնի նշված որոշման դեմ դիմող Լ. Մեհրաբյանի բողոքի քննության արդյունքում, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը, 2009 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ բողոքը բավարարել է՝ վերացնելով ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ Ժ. Մովսիսյանի՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին 2009 թվականի հուլիսի 10-ի որոշումը:

Վերոգրյալ դատական ակտի դեմ դատախազի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2010 թվականի հունվարի 15-ի որոշմամբ մերժվել է, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

2. Նախաքննության մարմնի՝ 2010 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ քրեական գործով վարույթը վերսկսվել է:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շենգավիթի քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ Հ. Թեմուրյանի՝ 2010 թվականի մարտի 4-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճվել է՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Նախաքննության մարմնի նշված որոշման դեմ դիմող Լ. Մեհրաբյանի բողոքը Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Տ. Պողոսյանի՝ 2010 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ մերժվել է:

3. Դիմող Լ. Մեհրաբյանի բողոքի քննության արդյունքում Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), 2010 թվականի մայիսի 10-ի որոշմամբ բողոքը մերժել է:

4. Վերոգրյալ դատական ակտի դեմ դիմող Լ. Մեհրաբյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2010 թվականի հունիսի 18-ի որոշմամբ մերժվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի մայիսի 10-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ Լ. Մեհրաբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ վերադարձվել է:

6. Դիմող Լ. Մեհրաբյանի գանգատի հիման վրա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), 2020 թվականի մարտի 19-ին, *Մեհրաբյանն ընդդեմ*

Հայաստանի գործով կայացրել է վճիռ՝ արձանագրելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 2-րդ հոդվածի դատավարական դրույթների մասով խախտում:

7. Դիմող Լ.Մեիրաբյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի հիշյալ վճիռը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

8. Վճռաբեկ դատարանը 2020 թվականի հուլիսի 28-ին որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 4-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

9. Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանը, 2008 թվականի հունիսի 19-ի որոշմամբ, քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության սահմաններում եզրահանգել է, որ ներկայացված հաղորդման կապակցությամբ քրեական գործի հարուցման հարցը լուծելիս էական նշանակություն ունի պարզել, ի թիվս այլնի, այն աշխատանքի ճշգրիտ ծավալը, որը պետք է կատարվեր ըստ աշխատանքային կարգազգրության, այն սարքավորումները, որոնք ենթադրվում էր, որ պետք է անջատված լինեին, այն պատասխանատու անձը, որի մոտ գտնվել է ռեզերվային էլեկտրաապահովման խցի բանալին, ինչպես է Ա.Մկրտումյանը կարողացել առանց բանալու բացել այդ դուռը, կարգազգրում առկա ստորագրություններն արդյոք կատարվել են Ա.Մկրտումյանի կողմից, վերջինս իրավունք ունեցել է կատարելու կարգազգրում նշված աշխատանքը, էլեկտրահարումից հետո Ա.Մկրտումյանի դին ինչ վիճակում կարող էր կամ պետք է գտնվեր, արդյոք Երևանի ջերմաէլեկտրակենտրոնի համապատասխան աշխատակիցների կողմից պահպանվել են էլեկտրակայանների շահագործման անվտանգության կանոնների պահանջները: Բացի այդ, էլեկտրաարհմիության տեսուչի եզրակացությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը¹:

9.1. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, 2008 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ արձանագրել է, որ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 101-102:

ընդհանուր իրավասության դատարանը, 2008 թվականի հունիսի 19-ի որոշմամբ, իրավական գնահատականի արժանացնելով նյութերը նախապատրաստող մարմնի եզրահանգումները, իրավաչափորեն նշել է փաստական տվյալների ձեռք բերելու անհրաժեշտության մասին այն հանգամանքների կապակցությամբ, որոնք ունեն էական նշանակություն՝ ներկայացված հաղորդմամբ քրեական գործ հարուցելու հարցը լուծելու համար¹:

10. Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանը 2009 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ արձանագրել է, որ չեն կատարվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ անփոփոխ թողնված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հունիսի 19-ի որոշման պահանջները²:

11. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը, 2009 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ նշել է, որ նախաքննության մարմինն անդրադարձ չի կատարել Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հունիսի 19-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 10-ի որոշումներով արձնագրված պարզաբանման ենթակա որոշ հարցերին³:

12. Նախաքննության մարմնի՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին 2010 թվականի մարտի 4-ի որոշման համաձայն՝ *«(․․) քրեական գործի քննությամբ հիմնավորվել է, որ Ալբերտ Մկրտումյանի մահը վրա է հասել նրա կողմից աշխատանքային կարգապահության խախտումով, կարգագրում չհասարակված աշխատատեղի և ծավալների ընդլայնումը՝ լարման տակ գրնվող 6000 վոլտ պահուստային սնուցման բջիջում աշխատանքների ինքնակամ կատարումը, որն արտահայտվել է այդ պահուստային սնուցման բջիջ մուրք գործելուն և անթույլատրելի հեռավորության վրա 9Տ տրանսֆորմատորից սնվող լարման տակ գրնվող ներքևի հաղորդաձողերին մոտենալուն, որի հետևանքով էլեկտրահարվել է, հետևաբար հանցագործության դեպք տեղի չի ունեցել և քրեական գործով վարույթը ենթակա է կարճման»⁴:*

13. Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի մայիսի 10-ի որոշման համաձայն՝ *«(․․) [Առաջին աստիճանի դատարանը/ ուսումնասիրելով ներկայացված նյութերը, լսելով քննիչի բացատրությունը,*

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 108-115:
² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 174-176:
³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 216:
⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 257-262:

դատախազի առարկությունը, եկավ համոզման, որ չկան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքերը քննիչի 04.03.2010թ. որոշումը վերացնելու համար, բողոքարկվող գործողությունները կատարվել են օրենքին համապատասխան, անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, նյութական և դատավարական օրենքի խախտում չի կատարվել, դիմումում մատնանշված փաստերի շուրջ կատարվել է նախաքննություն, ձեռնարկվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, հարուցված քրեական գործով պարզաբանվել են այն բոլոր հարցերը, որի արդյունքում էլ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում է կայացվել, հերևարար Լատուրա Մեհրաբյանի բողոքը ենթակա է մերժման»¹:

14. Վերաքննիչ դատարանի՝ 2010 թվականի հունիսի 18-ի որոշման համաձայն՝ «(․․) Վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում դատական սրուգման ենթարկելով [Առաջին արյանի դատարանի] որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, լսելով դատախազի պատասխանը, քննիչի բացատրությունները՝ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Լատուրա Մեհրաբյանի վերաքննիչ բողոքը պետք է մերժել, իսկ [Առաջին արյանի դատարանի] դատական ակտը թողնել անսխիտիս (․․)»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

15. Բողոքաբերի պնդմամբ՝ Եվրոպական դատարանի կողմից 2020 թվականի մարտի 19-ին Մեհրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճիռը նոր հանգամանք է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 2010 թվականի օգոստոսի 4-ի որոշումը վերանայելու և ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Ի հիմնավորումը վերոնշյալ փաստարկի՝ բողոք բերած անձը, մեջբերելով Եվրոպական դատարանի հիշյալ վճռի հիմնավորումները, նշել է, որ ներպետական դատարանների կողմից կայացված դատական ակտերով խախտվել է Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված՝ տուժողի իրավահաջորդ Լ.Մեհրաբյանի իրավունքը: Մասնավորապես, բողոքաբերը փաստարկել է, որ խախտվել են

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 28-30:

² Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 74-76:

Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված՝ կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական դրույթների պահանջները: Ըստ բողոքաբերի՝ ակնհայտ է այն փաստը, որ պետական իրավասու մարմինները չեն իրականացրել գործի պատշաճ և արդյունավետ քննություն՝ Ա.Մկրտումյանի մահվանը հանգեցրած իրադարձությունների կապակցությամբ համոզիչ բացատրություններ ներկայացնելու առնչությամբ:

16. Վերոշարադրյալի հիման վրա, դիմող Լ.Մեիրաբյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանը խնդրել է նոր հանգամանքի հիմքով վերանայել Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 4-ի որոշումը, վերանայման արդյունքում բեկանել Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 4-ի որոշումը և Վերաքննիչ դատարանի՝ 2010 թվականի հունիսի 18-ի որոշումը ու գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք *Մեիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական դրույթների մասով խախտում արձանագրելու փաստը հիմք է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 4-ի որոշումը վերանայելու համար:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝*

(...)

2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426¹-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին արյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

Նույն օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նոր հանգամանքների հերևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.*

(...)

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը:

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետով նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող փվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:

(...)»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը¹:

19. Եվրոպական դատարանի՝ *Մեհրաբյանն ընդդեմ Հայաստանի՝* 2020 թվականի մարտի 19-ի ուժի մեջ մտած վճռով արձանագրվել է Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական դրույթների մասով խախտում: Այսպես.

Մեհրաբյանն ընդդեմ Հայաստանի վճռով Եվրոպական դատարանը, վերահաստատելով Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով իր իրավական դիրքորոշումները, ընդգծել է. «(...) [Եվրոպական կոնվենցիայի] 2-րդ հոդվածի 1-ին կետի առաջին նախադասությամբ պետությունը պարտավորվում է ոչ միայն զերծ մնալ կյանքից դիտարկյալ կամ անօրինական ձևով զրկելուց, այլ նաև դրա մեջ ներառում է պարտականություն՝ իր իրավասության շրջանակում անհրաժեշտության դեպքում ողջամիտ միջոցներ ձեռնարկել անձանց կյանքի անվտանգությունն ապահովելու և երաշխավորելու համար (...): [Եվրոպական կոնվենցիայի] 2-րդ հոդվածով սահմանված այդ դրական

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Գրիշա Վիրաբյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, Ժիրայր Մեֆիլյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, Բագրատ և Նարինե Նալբանդյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, Արայիկ Զալյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, Հրայսյա Մուրադյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 30-ի, Դավիթ Ավերիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՍԴ3/0088/01/09, Ալիկ Մաթևոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ՎԲ-05/12 որոշումները:

պարտավորությունն ընդգրկում է ոլորտների լայն շրջանակ (...): Լուրջ վնասվածքի կամ մահվան դեպքում [Եվրոպական կոնվենցիայի] 2-րդ հոդվածով սահմանված պարտականությունը պետք է դիտարկվի նաև որպես պարտականություն, որով պետությունից պահանջվում է ունենալ արդյունավետ անկախ դատական համակարգ՝ փաստերը պարզելու, մեղավոր անձանց պարասխանարվության ենթարկելու և փուժողին պարշաճ փոխհարուցում փրամադրելու հնարավորություն Կրոնի իրավական միջոցներ ապահովելու համար: Այդպիսի համակարգը կարող է, իսկ որոշակի հանգամանքներում պետք է ներառի քրեաիրավական պաշտպանության միջոց: Այնուամենայնիվ, եթե դրսևորվել է անզգուշություն, ապա պարտավորությունը կարող է նաև կատարվել այն դեպքում, երբ իրավական համակարգը փուժողներին փախիս է քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցներից օգտվելու հնարավորություն՝ կա՛մ առանձին, կա՛մ քրեաիրավական պաշտպանության միջոցների համակցությամբ: Դատարանն ընդգծում է, որ այս պարտավորությունը ոչ թե արդյունքի, այլ միայն միջոցի պարտավորություն է (...):»¹:

20. Վերոգրյալ սկզբունքները կիրառելով քննարկվող գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Եվրոպական դատարանը նշել է. «(...) դիմումատուի ամուսնու մահվան դեպքով քրեական գործի քննությունն իրոք սկսվել է անհապաղ: Այն փաստը, որ հետաքննության մարմինը հետաքննության ավարտից հետո մերժել է քրեական գործի հարուցումը, և որ եղել են որոշ ուշացումներ, ինչպես օրինակ՝ միակ ականատես Վ.Մ.-ին պարտադրից միայն քսան օր հետո հարցաքննելը, չեն ազդում այս եզրահանգման վրա: Չնայած դրան՝ Դատարանը գտնում է, որ ներպետական մարմինների կողմից կատարված նախնական քննությունը բավարար չի եղել մի քանի պարճատներով:

Դատարանը նկատում է, որ դիմումատուի ամուսնու մահվան գործով նախնական քննությունը դադարեցվել է չորս անգամ, և որ նախնական քննությունը դադարեցնելու մասին որոշումը դատական վերանայումից հետո վերացվել է երեք անգամ, քանի որ հետաքննության և նախաքննության մարմինները ամբողջությամբ չէին պարզել պարտադրի հանգամանքները (...): Դատարանն այնուհետև նկատում է, որ այն դատական որոշումների մեջ, որոնցով վերացվել են նախնական քննությունը դադարեցնելու մասին որոշումները, մանրամասն ներկայացվել են նախնական քննության հետ կապված անհամապարասխանությունները և թերությունները, որոնց

¹ Տե՛ս Մեկրայանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճի 79-81-րդ կետերը:

դատարանների կարծիքով պետք է անդրադարձ կատարվեր, մինչդեռ նախաքննության մարմինները լիարժեք չեն կատարել այդ հանձնարարականները. այս փաստը մատնանշվել է հետագա դատական որոշումներով (...): Ավելին, ի տարբերություն նախնական քննությունը դադարեցնելու մասին որոշումների դեմ դիմումատուի կողմից ներկայացված բողոքները բավարարող նախորդ դատական որոշումների՝ այն որոշումներում, որոնցով անփոփոխ են թողնվել քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումները, անդրադարձ չի կատարվել ավելի վաղ կայացված որոշումներում մատնանշված թերություններին և այն հարցին, թե արդյոք դրանք փաստացի շրկվել են նախնական քննություն իրականացնող մարմինների կողմից, թե ոչ (...):

Դատարանը գրնում է, որ այն դատական որոշումների կրկնությամբ, որոնցով գործը հետ է ուղարկվել մեղադրողին այն պատճառով, որ մեկ վարույթի շրջանակում նախաքննության մարմինը թույլ է տվել մի քանի սխալներ, դիմումատուի գործով բացահայտվել է դատական համակարգի գործունեության լուրջ անկատարություն (...):

Ավելին, եղել են մի շարք թերություններ մասնավորապես վարույթի վաղ փուլում, որոնք բացասական ազդեցություն են ունեցել գործի փաստերը պարզելու ցանկացած հեռանկարի վրա: Մասնավորապես չի պահպանվել դեպքի վայրը, իսկ պարահարից հետո քննիչի կողմից չի նշանակվել որևէ փորձագիտական եզրակացություն: Դա կատարվել է միայն այն բանից հետո, երբ Վարչական շրջանի դատարանը վերացրել է քրեական գործի վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը և մեղադրողին կոնկրետ հանձնարարել է ձեռք բերել փորձագիտական եզրակացություն (...): Արդյունքում էլեկտրասպահնիկական փորձաքննությունը նշանակվել է դեպքից ավելի քան չորս ամիս անց: Այնուամենայնիվ, փորձագետը չի կարողացել իրականացնել դեպքի վայրի առաջնային գնություն, քանի որ 6 000 վոլտ հզորությամբ մեքենայական սրահի առաջին հարվածամասի ռեզերվային էլեկտրասպահովման խցի վիճակը պահպանված չի եղել (...): Բացի այդ, մի շարք հարցեր, օրինակ՝ մարմնի դիրքը, հանձնարարված աշխատանքի ծավալը և Երևանի ՋԷԿ-ում աշխատանքների անվտանգության համար պարասխանատու անձնակազմի կողմից անվտանգության համապարասխան կանոնակարգերի պահանջների պահպանումը, ռեզերվային էլեկտրասպահովման խցի դռան բացումը և գործը երրորդ անգամ հետ ուղարկելուց հետո փաստաթղթաբանական փորձագետի կողմից հասարակված՝ աշխատանքային կարգադրության մեջ կատարված փոփոխությունների պարճառները (...) նույնպես չեն պարզաբանվել նախաքննության ընթացքում (...):

Ի վերջո, Դատարանը չի կարող անսրբել այն դժվարությունները, որոնց դիմումատուսն քախվել է Գրուժոդի կարգավիճակ ձեռք բերելու և, հետևաբար, վարույթին ամբողջությամբ մասնակցելու իր փորձերի ժամանակ (...):»¹:

21. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ «(...) դիմումատուի ամուսնու մահվան պարճառ դարձած պարահարի հանգամանքների քննությունը չի համապատասխանել [Եվրոպական կոնվենցիայի] 2-րդ հոդվածի պահանջներին: Հետևաբար այն եզրակացնում է, որ տեղի է ունեցել [Եվրոպական կոնվենցիայի] 2-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի խախտում»²:

22. Մեհրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է նաև հետևյալը. «(...) Դատարանը նշում է, որ հաշվի առնելով սոկա նյութերը, չկա որևէ փաստ՝ նշելու, որ դիմումատուի ամուսնու մահը պարճատվել է դիրավորությամբ: Բացի այդ, դիմումատուսն ինքն էլ չի պնդում, որ պետական մարմիններն են պարասխանատու այդ պարահարի համար: Նա սակայն բողոքում է, որ նրանք պարջաճ կերպով արդյունավետ քննության միջոցով չեն պարզել իր ամուսնու մահվան պարճառ դարձած պարահարի հանգամանքները, այդ թվում՝ նրան հանձնարարված տեխնիկական սպասարկման աշխատանքների ընթացքում անվրանգության կանոնների հավանական անսրետումը»³:

23. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մեհրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական դրույթների մասով խախտման արձանագրման փաստը հիմք է նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 4-ի որոշումը վերանայելու համար:

24. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Եվրոպական դատարանի՝ Մեհրաբյանն ընդդեմ Հայաստանի վճռով արձանագրված Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական դրույթների մասով խախտումը հիմք է Լ.Մեհրաբյանի բողոքի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի մայիսի 10-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2010 թվականի հունիսի 18-ի որոշումները բեկանելու համար:

¹ Տե՛ս Մեհրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի 86-89-րդ կետերը:

² Տե՛ս Մեհրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի 90-րդ կետը:

³ Տե՛ս Մեհրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի 83-րդ կետը:

25. Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Գատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:

25.1. Ժիրայր Սեֆիլյանի գործով Վճարելի դատարանն արձանագրել է, որ «[Եվրոպական կոնվենցիայի] 46-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պետություններն ունեն հետևյալ պարտավորությունները.

1. վճարել նշանակված փոխհատուցումը,

2. անհրաժեշտության դեպքում հոգուր դիմումարուի ձեռնարկել անհատական միջոցառումներ, այն է՝

- դադարեցնել Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքի խախտումը կամ դրա հետևանքների ներգործությունը,

- հնարավորինս վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը (*restitutio in integrum*), իսկ դրա անհնարինության դեպքում Գատարանի վճիռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ համարեղելի այլ միջոցներով ապահովել իր սրանձնած պարտավորությունների կատարումը,

3. ձեռնարկել ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ կանխելու համար նմանատիպ խախտումներն ապագայում»¹:

26. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված [վճիռների] հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաքսցելու մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հունվարի 19-ի թիվ R(2000)2՝ անդամ պետություններին ուղղված հանձնարարականի 1-ին կետի համաձայն՝ Պայմանավորվող կողմերին կոչ է արվել երաշխավորել ազգային մակարդակով «*restitutio in integrum*» (նախնական իրավական վիճակի վերականգնում) հնարավորինս ապահովելու համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների առկայությունը:

Նույն հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ Նախարարների կոմիտեն խրախուսում է Պայմանավորվող կողմերին, մասնավորապես, վերլուծել իրենց ազգային իրավական համակարգերը՝ նպատակ հետապնդելով երաշխավորել գործի վերաքննության համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների գոյությունն այն դեպքերի համար, երբ Եվրոպական դատարանը հայտնաբերել է Կոնվենցիայի խախտում, հատկապես, երբ.

(i) Տուժող կողմը շարունակում է համապատասխան ներպետական որոշման ելքի պատճառով կրել շատ ծանր բացասական հետևանքներ,

¹ Տե՛ս Ժիրայր Սեֆիլյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշման 24-րդ կետը:

որոնք համարժեքորեն չեն շտկվում արդարացի հատուցման տրամադրմամբ և չեն կարող շտկվել, բացառությամբ գործի վերաքննության կամ վերաբացման միջոցով, և

(ii) Դատարանի վճիռը հանգեցնում է այն եզրակացության, որ

ա) վիճարկվող ներպետական որոշումն ըստ էության հակասում է Կոնվենցիային,

բ) հայտնաբերված խախտումը հիմնված է այնպիսի ծանրության դատավարական սխալների կամ թերությունների վրա, որ լուրջ կասկածի տակ է հայտնվում բողոքի առարկա ներպետական վարույթի ելքը:

26.1. Վերոնշյալ հանձնարարականի կապակցությամբ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի մեկնաբանությունների համաձայն՝ կոնվենցիոն մարմինների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես քրեական իրավունքի ոլորտում գործերի վերանայումը, ներառյալ վերաբացումը, ունի հիմնարար նշանակություն:

Նշված չափանիշներից (i)-ը, ըստ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի, վերաբերում է օրինակ այն անձանց, ովքեր դատապարտվել են ազատությունից զրկելու հետ կապված երկարատև պատիժների և դեռևս գտնվում են քրեակատարողական հիմնարկում, երբ կոնվենցիոն մարմինների կողմից քննվում է գործը: *Այդ չափանիշի բավարարման համար պելրք է լինի ուղիղ պարճատահերևանքային կսս՝ հայրնսբերված խսխրմանն և րուժող կողմի համար ստսջսցսժ շարունակական բսցսսական հերևանքների միջև:*

Վերոնշյալ պայմանի առկայության պարագայում, ըստ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի, (ii) խմբում ներառված չափանիշները նպատակառոտված են ընդգծելու խախտումների բնույթը, որոնց պայմաններում գործերի վերանայումը կամ վերաբացումը հատկապես կարևոր է: Այսպես, «ա» չափանիշին կարող են համապատասխանել այն դեպքերը, երբ օրինակ՝ անձի դատապարտումը ներպետական ատյանների կողմից խախտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածն այն պատճառով, որ ներպետական մարմինների կողմից քրեորեն պատժելի դիտարկված հայտարարություններն իրավաչափորեն արվել են արտահայտվելու ազատության շրջանակներում, կամ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, քանի որ քրեորեն պատժելի դիտարկված անձի վարքագիծը եղել է կրոնի ազատության իրավաչափ դրսևորում: Ինչ վերաբերում է «բ» չափանիշին, սպս դրան կարող են համապատասխանել այն դեպքերը, երբ օրինակ՝ տուժող կողմը չի ունեցել ժամանակ և հնարավորություն կսզմակերպելու իր պսշտպանությունը քրեական դատավարությունում, երբ դատապարտումը հիմնվել է խոշտանգման արդյունքում ստսցված հայտարարությունների կամ այն նյութերի վրս, որոնք տուժող կողմը հնարավորություն չի ունեցել ստուզել: *Նման թերությունները պելրք է լինեն*

այնպիսի ծանրության, որ լուրջ կասկած առաջացնեն ներպետական վարույթի արդյունքների վերաբերյալ՝

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁹-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «[Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված] վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մարտահանգամանք հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա: (...)»:

28. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմող Լ.Մեհրաբյանի բողոքի վերաբերյալ բողոքարկվող դատական ակտերը վերաբերել են վեջինիս ամուսնու՝ Ա.Մկրտումյանի մահվան պատճառների և հանգամանքների կապակցությամբ իրականացված քննության արդյունավետությանը:

29. Մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 25-27-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Եվրոպական դատարանի՝ Մեհրաբյանի ընդդեմ Հայաստանի վճռով արձանագրված՝ Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման (դատավարական դրույթների մասով) բացասական հետևանքները սույն բողոքի քննության պահի դրությամբ դիմումատուն շարունակում է կրել: Նման պայմաններում դիմող Լ.Մեհրաբյանի բողոքի վերաբերյալ դատական ակտերի բեկանումը կվերականգնի մինչ խախտումն առկա իրավիճակը, քանի որ առկա է ուղիղ պատճառահետևանքային կապը՝ հայտնաբերված խախտման և դիմող Լ.Մեհրաբյանի կողմից կրվող շարունակական բացասական հետևանքների միջև: Հետևաբար, նշված խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը, ըստ Վճռաբեկ դատարանի, վիճարկվող դատական ակտերը բեկանելը և դիմող Լ.Մեհրաբյանի բողոքը բավարարելով վարույթն իրականացնող մարմնին դիմողի իրավունքի խախտումը վերացնելուն պարտավորեցնելն է:

30. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 4-ի որոշման վերանայման արդյունքում Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի մայիսի 10-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2010 թվականի հունիսի 18-ի դատական ակտերը պետք է բեկանել ու փոփոխել, դիմող

¹ St'u Explanatory memorandum, Council of Europe, Committee of Ministers, Recommendation R (2000)2 on the re-examination or reopening of certain cases at domestic level following judgements of the European Court of Human Rights:

Լ.Մեհրաբյանի բողոքը բավարարել և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել վերացնելու *Մեհրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2020 թվականի մարտի 19-ի վճիռով արձանագրված՝ դիմողի ամուսնու՝ Ա.Մկրտումյանի մահվան պատճառների և հանգամանքների կապակցությամբ իրականացված քննության ընթացքում թույլ տրված՝ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պահանջի խախտումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 398-րդ, 418-419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426²-րդ, 426⁴-րդ, 426⁷-րդ, 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 4-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վերանայման արդյունքում դիմող Լատուրա Նիկոլայի Մեհրաբյանի բողոքը մերժելու մասին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2010 թվականի մայիսի 10-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2010 թվականի հունիսի 18-ի որոշումը բեկանել ու փոփոխել:

3. Դիմող Լատուրա Նիկոլայի Մեհրաբյանի բողոքը բավարարել՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնելու դիմողի իրավունքի խախտումը:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

51.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/1487/07/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահույթյամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազներ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ
Ն.ԱՇՐԱՖՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում 2019 թվականի ապրիլի 25-ին հարուցվել է թիվ 58209519 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ Ա.Միրզոյանի՝ 2019 թվականի մայիսի 6-ի որոշմամբ քրեական գործն ընդունվել է վարույթ:

2. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունիսի 19-ի որոշմամբ միջնորդություն է հարուցվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝

Ռուբեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Ստեփանյան 1 հասցեի առաջին հարկի՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին վարձակալությամբ չտրամադրված հատվածում և դրա օժանդակ շինություններում (այդպիսիք առկա լինելու դեպքում) խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 19-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է:

3. Դատախազ Ա.Մարգարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 19-ի որոշումը՝ թողել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վերաքննիչ դատարանի որոշման հիմնավորումները:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 15-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմինը 2019 թվականի հունիսի 19-ին միջնորդություն է հարուցել Առաջին ատյանի դատարան՝ **Ռուբեն Սահակյանին** սեփականության իրավունքով պատկանող տարածքում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ¹:

6. Առաջին ատյանի դատարանի՝ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման համաձայն՝ *«(...) [Բննիչը] միջնորդություն է հարուցել դատարան՝ խնդրելով թույլատրել (...) խուզարկություն կատարել «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում՝ Երևան քաղաքի Ստեփանյան 1 հասցեի առաջին հարկի Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին վարձակալությամբ չտրամադրված հատվածում և դրա օժանդակ շինություններում (այդպիսիք առկա լինելու դեպքում) (...)»²:*

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 3-4:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 43-44:

7. Տիգրան Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն չտրամադրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ դատախազ Ա.Մարգարյանի վերաքննիչ բողոքը¹ մերժելով՝ Վերաքննիչ դատարանը նշել է. «*Ինչպես քննիչի կողմից (...) միջնորդություն հարուցելու մասին որոշմամբ, այնպես էլ դատարանի կողմից կայացված և սույն գործով վիճարկվող որոշմամբ առկա է որոշակի անճշտություն:*

Մասնավորապես, վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված միջնորդությամբ հայցվող սահմանափակմանն առնչվող անձի և վերջինիս կողմից իրականացվող գործունեության վայրի (տեղի) գրնվելու առնչությամբ:

Այլ կերպ ասած, վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված միջնորդությամբ հայցվող սահմանափակումն առնչվում է Ռուբեն Սահակյանին սեփականության իրավունքով պարկանող և վերջինիս կողմից իրականացվող գործունեության վայրում, միջնորդությամբ մատնանշված համապարասիան հասցեի հարվածում խուզարկություն կատարելուն:

Մինչդեռ, սույն գործով վիճարկվող որոշմամբ արձանագրված է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից հայցվող սահմանափակումն առնչվում է Կորյուն Աթոյանի որդուն՝ Տիգրան Աթոյանին պարկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեություն իրականացնելու վայրում խուզարկություն կատարելուն:

Այսինքն, վարույթն իրականացնող մարմնի կողմից հիշյալ միջնորդությունը հարուցելու որոշումն, ինչպես նաև դրա եզրափակիչ մասում տեղ գրած խնդրանքն առնչվում է Ռուբեն Սահակյանին սեփականության իրավունքով պարկանող հիշյալ միջնորդությամբ մատնանշված հասցեի համապարասիան հարվածում խուզարկություն կատարելուն:

Որպիսի պայմաններում, դատախազի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված միջնորդությամբ հայցվող սահմանափակմանն առնչությամբ առկա անճշտությունը, քննարկվող դեպքում, ինքնին բացառում է հիշյալ միջնորդությունն առկա պայմաններում բավարարելու իրավական հնարավորությունը:

Բացի այդ, դատախազի վերաքննիչ բողոքում բերված պարճատարանությունները թեև անհրաժեշտ, սակայն քննարկվող դեպքում, ինքնին բավարար չեն վարույթն իրականացնող մարմնի կողմից

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 1-7:

հայցվող սահմանափակումն արդարացված դիտարկելու առնչությամբ հիմնավոր հետևության հանգելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ, վերաքննիչ դատարանը գտնում է, որ առկա պայմաններում, դատահազի վերաքննիչ բողոքում տեղ գրած պարզառարանությունների հետ համաձայնվելու իրավաչափ հիմքեր չկան (...):»¹:

8. Նախաքննության մարմինը նույն քրեական գործով 2019 թվականի հունիսի 19-ի մեկ այլ որոշմամբ միջնորդություն է հարուցել Առաջին ատյանի դատարան նաև նույն հասցեում գտնվող, սակայն մեկ այլ սուբյեկտի՝ «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ: Նախաքննության մարմնի վերոնշյալ միջնորդության առնչությամբ Առաջին ատյանի դատարանում կազմված թիվ ԵԴ/1488/07/19 գործում առկա են **Ռուբեն Սահակյանին** պատկանող վայրում խուզարկություն կատարելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը և այդ որոշման դեմ դատախազ Ա.Մարգարյանի վերաքննիչ բողոքը²:

9. Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ թիվ 58209519 քրեական գործի վարույթը կարճվել է և քրեական հետապնդում չի իրականացվել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով³:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 12-րդ և 398-րդ հոդվածներով սահմանված պահանջները՝ թույլ տալով դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Այսպես, բողոքաբերը փաստել է, որ 2019 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված միջնորդությամբ հայցվող սահմանափակումն առնչվում է Ռ.Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում խուզարկություն կատարելուն, մինչդեռ Առաջին ատյանի դատարանի բողոքարկվող որոշմամբ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 30-39:

² Տե՛ս թիվ ԵԴ/1488/07/19 գործի նյութերը:

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի դատական նիստի արձանագրությունը:

արձանագրված է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից հայցվող սահմանափակումն առնչվում է Տ.Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության տարածքում խուզարկություն կատարելուն: Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այս փաստարկին՝ բողոքաբերը նշել է, որ վերոնշյալ անճշտությունը պայմանավորված է նրանով, որ Տ.Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ քննիչի միջնորդությունը կցվել է Ռ.Սահակյանի գործունեության վայրում խուզարկություն կատարելու միջնորդության առնչությամբ Առաջին ատյանի դատարանում կազմված թիվ ԵԴ/1488/07/19 գործին, իսկ Ռ.Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին քննիչի միջնորդությունը՝ Տ.Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում խուզարկություն կատարելու միջնորդության առնչությամբ Առաջին ատյանի դատարանում կազմված թիվ ԵԴ/1487/07/19 գործին:

10.1. Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի որոշման նկարագրական մասում արձանագրված այն հանգամանքը, որ դատախազը բողոք է ներկայացրել Ռ.Սահակյանի գործունեության վայրում խուզարկություն կատարելու միջնորդությունը մերժելու մասին որոշման դեմ, չի համապատասխանում իրականությանը, քանի որ դատախազի կողմից վիճարկվող թիվ ԵԴ/1487/07/19 որոշումը և դրա դեմ բերված բողոքը, որն ըստ էության քննել է դատավոր Ա.Դանիելյանը, վերաբերում է Տ.Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում խուզարկություն կատարելուն:

10.2. Բացի այդ, ըստ բողոքաբերի, խուզարկություն կատարելու մասին դատախազի հիմնավորումները բավարար չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը պատճառաբանված չէ, և հակասում է նույն վայրում միևնույն փաստական հանգամանքներով և պատճառաբանություններով ներկայացված միջնորդությունը թիվ ԵԴ/1488/07/19 գործով բավարարելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմանը:

11. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 19-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 22-ի որոշումները և կայացնել գործն ըստ էության չլուծող նոր դատական ակտ՝ բավարարելով քննիչի միջնորդությունը և թույլատրելով խուզարկություն կատարել Տ.Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում Երևան քաղաքի Ստեփանյան 1 հասցեի շենքի առաջին հարկի՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին վարձակալությամբ չտրամադրված հատվածում և դրա օժանդակ շինություններում:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի կողմից **Տիգրան Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության** գործունեության վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելն այն դեպքում, երբ քննիչի միջնորդությունը վերաբերում էր **Ռուբեն Սահակյանին** սեփականության իրավունքով պատկանող տարածքում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալուն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը քննում է քննչական (...) գործողություններ կատարելու (...) վերաբերյալ միջնորդությունները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ *«Դատարանի որոշմամբ կատարվում են քննարանի խուզարկությունը (...):»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանում վարույթն սկսելու հիմք է ծառայում հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի պարճառաբանված որոշման մեջ պարունակվող միջնորդությունը՝ համապատասխան գործողություններ կատարելու մասին թույլտվություն ստանալու համար:*

2. *Որոշման պարճառաբանական մասում պետք է նշվեն տվյալներ այն հանցագործության մասին, որի առիթով մտադրություն կա կատարել համապատասխան քննչական գործողություն, ինչպիսի տվյալներ պետք է ստացվեն քաղաքացիների հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված այդպիսի գործողությունների արդյունքում, համապատասխան գործողությունների կատարման ժամկետը, տեղը, անմիջական կատարողները, արդյունքների ամրագրման ձևը, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են դատարանին օրինական և հիմնավորված որոշում ընդունելու համար (...):»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Միջնորդության քննումն ավարտելուց հետո դատավորը որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 286-րդ հոդվածի համաձայն՝ *«Դատարանի որոշման մեջ պետք է նշված լինեն որոշումը կազմելու օրը, ամիսը, փարին և տեղը, դատավորի ազգանունը, միջնորդություն ներկայացրած պաշտոնատար անձը, քննչական*

գործողություններ կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու կամ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին նշում ցույց տալով այդ գործողությունը կամ միջոցը և ում վրա է տարածվում, որոշման գործողության ժամկետը, որոշումը կատարելու համար իրավասու պաշտոնատար անձը կամ մարմինը, դատավորի կնիքով վավերացված արտագրությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

14. Վճռաբեկ դատարանը, Սեպուհ Թադևոսյանի և Միրուն Նաջարյանի գործով անդրադառնալով բնակարանում խուզարկություն կատարելու իրավական հիմքերին, արձանագրել է, որ. «(...) Խուզարկության կատարման իրավական հիմքը խուզարկություն կատարելը թույլատրելու մասին դատարանի որոշումն է: Ընդ որում, դատարանի որոշման համար առիթ է հանդիսանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին նախաքննական մարմնի որոշումը:

Ինչպես նախաքննական մարմնի, այնպես էլ դատարանի որոշումները պետք է լինեն հիմնավորված և պարճառաբանված: Մասնավորապես, նախաքննական մարմնի որոշման պարճառաբանական մասում պետք է նշվեն փյալներ այն հանցագործության մասին, որի առիթով մտադրություն կա կատարել խուզարկություն, ինչպիսի առարկաներ պետք է սրացվեն քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված գործողության արդյունքում, դրա կատարման ժամկետը, այն բնակարանի նույնականացման փյալները, որտեղ պետք է կատարվի խուզարկությունը, փյալները, որոնք հիմք են փայխա ենթադրելու, որ փնտրվող առարկաները գտնվում են փյալ բնակարանում, քննչական գործողության անմիջական կատարողները, արդյունքների ամրագրման ձևը, ինչպես նաև այլ փյալներ, որոնք անհրաժեշտ են դատարանին օրինական և հիմնավորված որոշում ընդունելու համար:

Իրան համապատասխան՝ միջնորդության քննման արդյունքում դատարանը որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը: Միջնորդության բավարարման դեպքում դատարանի որոշումը պետք է պարունակի նշում խուզարկության կատարման փաստական հիմքերի առկայության մասին, դրանց վերաբերելիության, արժանահավատության և բավարարության մասին հիմնավորումներ, փնտրվող առարկաների գործի համար նշանակության վերաբերյալ հիմնավորումներ, ինչպես նաև

հստակ նշում բնակարանի նույնականացման համար անհրաժեշտ փվյալների և փնտրվող առարկաների բնութագրի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ որպես բնակարանի նույնականացման փվյալ պետք է նշվի դրա տեսակը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետ), գտնվելու վայրը՝ հասցեն, ինչպես նաև՝ ում է պատկանում կամ ում կողմից է մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում (սուբյեկտը, ում բնակարանի անձեռնմխելիության իրավունքը ենթակա է սահմանափակման): Դատարանին նշված փվյալների տրամադրումը և վերջինիս կողմից դրանց ստուգումը և դատական ակտում արտացոլումը երաշխիք է անձի՝ Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով նախատեսված՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի ապահովման համար (...)¹:

15. Վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը հանդիսանալով դատարանում վարույթ սկսելու հիմք, դատարանի որոշման համար առիթ, կանխորոշում է դատարանի կողմից գործի քննության սահմաններն առաջին ատյանի դատարանում, ինչպես նաև վերադաս դատական ատյաններում՝ հաշվի առնելով նաև դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքը: Վերոնշյալը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի միջնորդությունը քննելիս դատարանները կաշկանդված են դրանում նշված քննչական գործողության կատարման տեղով (վայրով) և այն սուբյեկտների շրջանակով, ում իրավունքների սահմանափակման թույլտվություն է հայցվում:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմինը միջնորդություն է հարուցել Առաջին ատյանի դատարան **Ռուբեն Սահակյանին** սեփականության իրավունքով պատկանող տարածքում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ²,

- Նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ արձանագրված է, որ քննիչը

¹ Տե՛ս Մեպոի Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշման 24-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

միջնորդություն է հարուցել՝ խնդրելով թույլատրել խուզարկություն կատարել **«Տիգվակո» ՍՊ ընկերության** գործունեության վայրում¹,

- Դատախազ Ա.Մարգարյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել **Տիգրան Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության** գործունեության վայրում խուզարկություն կատարելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ²,

- Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը մերժել՝ նշելով, որ նախաքննության մարմնի միջնորդությամբ հայցվող սահմանափակումն առնչվում է Ռ.Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում խուզարկություն կատարելուն, մինչդեռ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ արձանագրված է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից հայցվող սահմանափակումն առնչվում է Տ.Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում խուզարկություն կատարելուն: Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ դատախազի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված միջնորդությամբ հայցվող սահմանափակման առնչությամբ առկա անճշտությունը բացառում է հիշյալ միջնորդությունն առկա պայմաններում բավարարելու իրավական հնարավորությունը: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ դատախազի վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանությունները թեև անհրաժեշտ, սակայն քննարկվող դեպքում, ինքնին բավարար չեն վարույթն իրականացնող մարմնի կողմից հայցվող սահմանափակումն արդարացված դիտարկելու առնչությամբ հիմնավոր հետևության հանգելու համար: Վերոգրյալի հաշվառմամբ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ առկա պայմաններում, դատախազի վերաքննիչ բողոքում տեղ գտած պատճառաբանությունների հետ համաձայնվելու իրավաչափ հիմքեր չկան³:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով մի կողմից՝ նախաքննության մարմնի միջնորդության, մյուս կողմից՝ Առաջին ատյանի դատարանի որոշման և այդ որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքի միջև առկա է անհամապատասխանություն, ինչը պայմանավորված է նրանով, որ միևնույն հասցեում խուզարկություններ կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ Առաջին ատյանի դատարան 2019 թվականի հունիսի 19-ին նախաքննության մարմնի կողմից ներկայացված երկու միջնորդություններից մեկը վերաբերում էր **Տիգրան**

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրին, իսկ մյուսը՝ Ռուբեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքին: Սակայն Տիգրան Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում խուզարկություն կատարելու վերաբերյալ միջնորդության առնչությամբ Առաջին ատյանի դատարանում կազմված գործում առկա է **Ռուբեն Սահակյանի** վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը և այդ որոշման դեմ բերված դատախազի վերաքննիչ բողոքը (թիվ ԵԴ/1488/07/19 գործ), իսկ **Ռուբեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում** խուզարկության վերաբերյալ միջնորդության առնչությամբ Առաջին ատյանի դատարանում կազմված գործում՝ **Տիգրան Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության** վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը և այդ որոշման դեմ բերված դատախազի վերաքննիչ բողոքը (ԵԴ/1487/07/19 գործ)՝:

18. Սույն որոշման 16-17-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թեև իրավաչափորեն արձանագրել է, որ նման պայմաններում բացառվում է նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելու իրավական հնարավորությունը, սակայն պատշաճ գնահատական չի տվել քննիչի միջնորդությանը չհամապատասխանող Առաջին ատյանի դատարանի որոշմանը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ դատախազի վերաքննիչ բողոքում տեղ գտած պատճառաբանությունների հետ համաձայնվելու իրավաչափ հիմքեր չկան՝ ըստ էության բովանդակային առումով քննարկման առարկա դարձնելով վերաքննիչ բողոքը և դուրս գալով նախաքննության մարմնի միջնորդության շրջանակից:

19. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից **Տիգրան Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության** գործունեության վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելն այն դեպքում, երբ քննիչի միջնորդությունը վերաբերում էր **Ռուբեն Սահակյանին** պատկանող վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալուն, իրավաչափ չէր:

20. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել

¹ Տե՛ս սույն որոշման 5-8-րդ կետերը:

քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Սակայն հաշվի առնելով, որ թիվ 58209519 քրեական գործի վարույթը կարճվել է¹, ուստի բողոքարկված դատական ակտերը չեն կարող բեկանվել, քանի որ սույն որոշումը կայացնելու պահին կորցրել են իրենց իրավական նշանակությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 22-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

52. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/1488/07/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹՎԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազներ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ
Ն.ԱՇՐԱՖՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 12-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում 2019 թվականի ապրիլի 25-ին հարուցվել է թիվ 58209519 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ Ա.Միրզոյանի՝ 2019 թվականի մայիսի 6-ի որոշմամբ քրեական գործն ընդունվել է վարույթ:

2. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունիսի 19-ի որոշմամբ միջնորդություն է հարուցվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)

«Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում Երևան քաղաքի Ստեփանյան 1 հասցեի առաջին հարկի՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին վարձակալությամբ չտրամադրված հատվածում և դրա օժանդակ շինություններում (այդպիսիք առկա լինելու դեպքում) խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 19-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է:

3. Դատախազ Ա.Մարգարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 19-ի որոշումը՝ բեկանել, նախաքննության մարմնի միջնորդությունը՝ բավարարել՝ թույլատրելով խուզարկություն կատարել «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում Երևան քաղաքի Ստեփանյան թիվ 1 հասցեի առաջին հարկի՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին վարձակալությամբ չտրամադրված հատվածում և դրա օժանդակ շինություններում:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 15-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմինը 2019 թվականի հունիսի 19-ին միջնորդություն է հարուցել Առաջին ատյանի դատարան «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ¹:

6. Առաջին ատյանի դատարանի՝ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման համաձայն՝ «(...) *[Բննիչը/միջնորդություն է հարուցել դատարան՝ խնդրելով թույլատրել (...) խուզարկություն կատարել Ռուբեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Ստեփանյան 1 հասցեի շենքի*

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 3-4:

առաջին հարկի՝ Հայաստանի պետական փոխտեսագիտական համալսարանին վարձակալությամբ չտրամադրված հարվածում և դրա օժանդակ շինություններում (այդպիսիք առկա լինելու դեպքում) (...)¹»:

7. **Ռուբեն Սահակյանին** սեփականության իրավունքով պատկանող տարածքում խուզարկություն կատարելու թույլտվություն չտրամադրելու վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ դատախազ Ա.Մարգարյանի վերաքննիչ բողոքի² քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը բավարարել է այն՝ թույլատրելով խուզարկություն կատարել «**Տիգրակո**» ՍՊ ընկերության գործունեության վայրում՝ Երևան քաղաքի Ստեփանյան թիվ 1 հասցեի առաջին հարկի՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին վարձակալությամբ չտրամադրված հատվածում և դրա օժանդակ շինություններում³:

8. Նախաքննության մարմինը նույն քրեական գործով 2019 թվականի հունիսի 19-ի մեկ այլ որոշմամբ միջնորդություն է հարուցել Առաջին աստիճանի դատարան նաև նույն հասցեում գտնվող, սակայն մեկ այլ անձի՝ **Ռուբեն Սահակյանին** սեփականության իրավունքով պատկանող տարածքում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ: Նախաքննության մարմնի վերոնշյալ միջնորդության առնչությամբ Առաջին աստիճանի դատարանում կազմված թիվ ԵԴ/1487/07/19 գործում առկա են **Տիգրան Աթոյանին պատկանող «Տիգրակո» ՍՊ ընկերության** գործունեության վայրում խուզարկություն կատարելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի որոշումը և այդ որոշման դեմ դատախազ Ա.Մարգարյանի վերաքննիչ բողոքը⁴:

9. Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ թիվ 58209519 քրեական գործի վարույթը կարճվել է և քրեական հետապնդում չի իրականացվել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով⁵:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 44-45:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 47-53:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 65-79:

⁴ Տե՛ս թիվ ԵԴ/1487/07/19 գործի նյութերը:

⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի դատական նիստի արձանագրությունը, Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ԵԴ/1487/07/19 որոշման 9-րդ կետը:

10. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 12-րդ և 398-րդ հոդվածներով սահմանված պահանջները՝ թույլ տալով դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը 2019 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ թույլատրել է խուզարկություն կատարել Տ.Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում այն պարագայում, երբ Առաջին ատյանի դատարանի բողոքարկվող որոշումը և դրա դեմ բերված վերաքննիչ բողոքը վերաբերել են Ռ.Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում խուզարկություն կատարելուն:

11. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 19-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 12-ի որոշումները և կայացնել գործն ըստ էության չլուծող նոր դատական ակտ՝ բավարարելով քննիչի միջնորդությունը և թույլատրելով խուզարկություն կատարել Երևան քաղաքի Ստեփանյան 1 հասցեի շենքի առաջին հարկի՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին վարձակալությամբ չտրամադրված հատվածում՝ Ռուբեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող գրասենյակային տարածքում և դրա օժանդակ շինություններում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի կողմից «Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում խուզարկության կատարումը թույլատրելն այն դեպքում, երբ Առաջին ատյանի դատարանի որոշումը և դրա դեմ բերված վերաքննիչ բողոքը վերաբերել են **Ռուբեն Սահակյանին** սեփականության իրավունքով պատկանող տարածքում խուզարկություն կատարելու թույլտվությունը մերժելուն:

13. ՀՀ Սահմանադրության 172-րդ հոդվածի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարաններն առաջին արյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական արյան են»:*

Դատական վերանայման իրավունքի համատեքստում դատարանների գործառնությային տարանջատվածության մասին Սահմանադրական դատարանը նշել է, որ տարբեր ատյանների

դատարանները միմյանցից տարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով: Տվյալ դատական ատյանի իրավասությունների շրջանակով են պայմանավորված այդ դատարանի կողմից ընդունվող դատական ակտերի բնույթն ու բովանդակությունը. յուրաքանչյուր դատական ատյանի կողմից ընդունվող ակտը հանդիսանում է տվյալ դատական ատյանի իրավասությունների և գործառույթների կրողը: Հետևաբար, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դատական ատյանի գործառույթի իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում¹:

13.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի համաձայն՝ *«Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն ստուգում է գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշգրտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը»:*

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ վերաքննիչ դատարանում դատական վերանայման առարկան սահմանափակվում է միայն առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգմամբ:

Վերոնշյալ դիրքորոշումը բխում է դատարանների միջև գործառույթային կապն ապահովելու տրամաբանական պահանջից: Մասնավորապես, դատարանակազմական խնդիրներով պայմանավորված՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները իրականացնում են տարբեր դատավարական գործառույթներ և համապատասխանաբար օժտված են դրանց կատարումն ապահովող տարբեր լիազորություններով²:

Վճռաբեկ դատարանը Հրայր Հովսեփյանի գործով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. *«(...) «վերաքննությունը», որը ծագում է լատիներեն «appellare» բառից և թարգմանաբար նշանակում է բողոքարկում, իրենից ենթադրում է սրորադաս դատարանի կողմից կայացված դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգում: Այսինքն՝ վերաքննիչ դատարանը, սահմանափակ*

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՌ-719 որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գոռ Դուրյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ՏԴ/0052/06/14 որոշման 19-րդ կետը:

վերաքննության մոդելի պայմաններում, կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններով, վերանայում է առաջին արյանի դատարանի դատական ակտը: Եշվածը՝ որպես վերաքննիչ դատարանի հիմնական գործառույթ, ամրագրվեց նաև 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով՝ հստակեցնելով վերաքննիչ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը:

Նման պայմաններում, պետք է փաստել, որ եթե առաջին արյանի դատարանը լրիվ ծավալով քննության է առնում բողոքը և կայացված որոշմամբ լուծում ներկայացված պահանջի հիմնավորվածության ու իրավաչափության հարցը, սպա վերաքննիչ դատարանը, որպես կանոն, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայում է առաջին արյանի դատարանի կողմից բողոքի առնչությամբ արված լուծման հիմնավորվածությունը և իրավաչափությունը: Այդ համարեքստում վերաքննիչ դատարանի մարչելիությունն անձի համար երաշխավորվում է հենց այդ նպատակով՝ սրուզման ենթարկելու իր իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական ակտը: Հարկ է նկատել, որ այս սահմանով են փարանչարվում առաջին արյանի և վերաքննիչ դատարանների գործառույթները, այդ դատարանների առջև դրված խնդիրները և հերապնովող նպատակները: Հակառակ պարագայում, երբ վերաքննիչ դատարանն իր կարգավիճակով սրանձնի առաջին արյանի դատարանի դերը, ոչ միայն կիսաիրվի այդ դատարանների միջև ձևավորված գործառույթային կապը, այլ նաև անհամաչափորեն կասհմանափակվի անձի՝ վերաքննության մարչելիության իրավունքը, և վերջինս կգրկվի իր վերաբերյալ կայացված դատական ակտը սրուզման ենթարկելու հնարավորությունից (...)¹:

13.2. Միննույն ժամանակ, անդրադառնալով քրեական հետապնդման մարմինների կողմից բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալուն, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը հանդիսանալով դատարանում վարույթ սկսելու հիմք, դատարանի որոշման համար առիթ, կանխորոշում է դատարանի կողմից գործի քննության սահմաններն առաջին ատյանի դատարանում, ինչպես նաև վերադաս դատական ատյաններում՝ հաշվի առնելով նաև դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքը: Վերոնշյալը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ քրեական հետապնդման

¹ Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

մարմնի միջնորդությունը քննելիս դատարանները կաշկանդված են դրանում նշված քննչական գործողության կատարման տեղով (վայրով) և այն սուբյեկտների շրջանակով, ում իրավունքների սահմանափակման թույլտվություն է հայցվում¹:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմինը միջնորդություն է հարուցել Առաջին ատյանի դատարան **«Տիգրակո» ՍՊ ընկերության** գործունեության վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ²,

- Նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ արձանագրված է, որ քննիչը միջնորդություն է հարուցել՝ խնդրելով թույլատրել խուզարկություն կատարել **Ռուբեն Սահակյանին** սեփականության իրավունքով պատկանող տարածում³,

- Դատախազ Ա.Մարգարյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել **Ռուբեն Սահակյանին** սեփականության իրավունքով պատկանող տարածքում խուզարկություն կատարելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ⁴,

- Վերաքննիչ դատարանը դատախազ Ա.Մարգարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում բավարարել է այն՝ թույլատրելով խուզարկություն կատարել **«Տիգրակո» ՍՊ ընկերության** գործունեության վայրում⁵:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով մի կողմից՝ նախաքննության մարմնի միջնորդության, մյուս կողմից՝ Առաջին ատյանի դատարանի որոշման և այդ որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքի միջև առկա է անհամապատասխանություն, ինչը պայմանավորված է նրանով, որ միևնույն հասցեում խուզարկություններ կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ Առաջին ատյանի դատարան 2019 թվականի հունիսի 19-ին նախաքննության մարմնի կողմից ներկայացված երկու միջնորդություններից մեկը վերաբերում էր **Տիգրան Աթոյանին պատկանող «Տիգրակո» ՍՊ ընկերության գործունեության** վայրին, իսկ մյուսը՝ **Ռուբեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքին**: Սակայն **Տիգրան Աթոյանին պատկանող**

¹ Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ԵԴԽ/1487/07/19 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

«Տիգվակո» ՍՊ ընկերության գործունեության վայրում խուզարկություն կատարելու վերաբերյալ միջնորդության առնչությամբ Առաջին ատյանի դատարանում կազմված գործում առկա է **Ռուբեն Սահակյանի** վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը և այդ որոշման դեմ բերված դատախազի վերաքննիչ բողոքը (թիվ ԵԴ/1488/07/19 գործ), իսկ **Ռուբեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում** խուզարկության վերաբերյալ միջնորդության առնչությամբ Առաջին ատյանի դատարանում կազմված գործում՝ **Տիգրան Աթոյանին պատկանող «Տիգվակո» ՍՊ ընկերության** վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը և այդ որոշման դեմ բերված դատախազի վերաքննիչ բողոքը (ԵԴ/1487/07/19 գործ)¹: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, բավարարելով նախաքննության մարմնի միջնորդությունը և թույլատրելով խուզարկություն կատարել **«Տիգվակո» ՍՊ ընկերության** գործունեության վայրում, հաշվի չի առել այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը և դրա դեմ բերված վերաքննիչ բողոքն ամբողջությամբ վերաբերել են մեկ այլ անձի՝ **Ռուբեն Սահակյանին** սեփականության իրավունքով պատկանող տարածքում, այլ ոչ թե քննիչի միջնորդության մեջ նշված՝ **«Տիգվակո» ՍՊ ընկերության** գործունեության վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն տրամադրելու հարցին:

16. Սույն որոշման 14-15-րդ կետերում շարադրված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 13-13.2-րդ կետերում ներկայացված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը և բավարարելով նախաքննության մարմնի միջնորդությունը, ոչ թե ստուգել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, այլ փաստացի հանդես է եկել որպես առաջին ատյանի դատարան՝ դուրս գալով վերաքննիչ վերանայման սահմաններից և խախտելով դատարանների միջև գործառութային կապը:

17. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից **«Տիգվակո» ՍՊ ընկերության** գործունեության վայրում խուզարկության կատարումը թույլատրելն այն դեպքում, երբ Առաջին ատյանի դատարանի որոշումը և դրա դեմ բերված վերաքննիչ բողոքը վերաբերում էին **Ռուբեն Սահակյանին** սեփականության իրավունքով պատկանող տարածքում խուզարկություն կատարելու թույլտվություն չտրամադրելուն, իրավաչափ չէր:

18. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները դատական ակտ

¹ Տե՛ս սույն որոշման 5-8-րդ կետերը:

կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Սակայն հաշվի առնելով, որ թիվ 58209519 քրեական գործի վարույթը կարճվել է¹, ուստի բողոքարկված դատական ակտերը չեն կարող բեկանվել, քանի որ սույն որոշումը կայացնելու պահին կորցրել են իրենց իրավական նշանակությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 12-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

53. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/3085/07/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Վ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնփակ դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 10-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Յ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի օգոստոսի 17-ին ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքում հարուցվել է թիվ 13886618 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2018 թվականի օգոստոսի 30-ից քրեական գործի քննությունը շարունակվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում (այսուհետ նաև՝ Նախաքննության մարմին):

Նախաքննության մարմնի 2018 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ Յաշա Սերգեյի Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ,

և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը՝ Յ.Խաչատրյանի բնակության՝ Երևան քաղաքի Ֆանարջյան փողոց 50/6 տուն հասցեում և դրան կից օժանդակ շինություններում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին, մերժվել է:

3. Դատախազ Վ.Պողոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2020 թվականի հունվարի 10-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 15-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող վիստերը.

5. 2018 թվականի հոկտեմբերի 17-ին որպես վկա հարցաքննվելիս Յ.Խաչատրյանը համաձայնություն չի տվել վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն և քրեական գործի վարույթը կարճելուն¹:

6. Յաշա Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Մ]ա 2010-2011 թվականների ընթացքում, «Ֆլեշ» ՍՊ ընկերությանը պարձառոված վնասի վերականգնման ենթադրյալ իրավունքը վերագրելով իրեն, իրավապահ մարմիններին դիմելու և քրեադատավարական ու քաղաքացիական դատավարության կարգով ենթադրաբար հափշտակությամբ պարձառոված նյութական վնասի վերականգնման փոխարեն, ինքնակամ՝ օրենքով սահմանված կարգի խախտմամբ՝ Գևորգ Վահանի Գևորգյանից պահանջել և ստացել է ստանձնապես խոշոր չափերի՝ 13.200.000 ՀՀ դրամ գումար:

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի դատական նիստի արձանագրությունը:

Այսպես, Յաշա Սերգեյի Խաչատրյանը, հանդիսանալով «Ֆլեշ» ՍՊ ընկերության փոփոխ, Երևան քաղաքի Ե.Կողբացի 30 հասցեում գործող նույն ընկերության գրասենյակ է հրավիրել ընկերությանը պարկանոց բնագալցակայաններից մեկի վարիչ Գևորգ Գևորգյանին, վերջինիս մեղադրել հափշտակություն կատարելու մեջ, որից հետո սպանույթներ հնչեցնելով վերջինիս որդու՝ Սարգիս Գևորգյանի հասցեին, որպես վսասի փոխհատուցում Գևորգ Գևորգյանից պահանջել է և 2010 թ. ընթացքում ընկերության գրասենյակում սրացել է 3.000.000 ՀՀ դրամ գումար:

Այնուհետև, Յաշա Խաչատրյանը (...) Գևորգ Գևորգյանին հայրնել է, որ սիսկ հաշվարկ է կատարվել և վերահաշվարկի արդյունքում պարզվել է, որ ևս 3.200.000 ՀՀ դրամ գումար պետք է վճարել (...): Գևորգ Գևորգյանը սրիաված Յաշա Խաչատրյանին 2010 թ. ընթացքում ընկերության գրասենյակում վճարել է պահանջված 3.200.000 ՀՀ դրամ գումարը (...):

Դրանից հետո Յաշա Խաչատրյանը Գևորգ Գևորգյանին (...) պարտադրել է ստորագրել ևս 7.000.000 ՀՀ դրամ գումարի չափով պարտավորագիր, որից հետո արդեն ստորագրված պարտավորագրի հիման վրա 2011 թվականի ընթացքում ընկերության գրասենյակում սրացել է հիշյալ 7.000.000 ՀՀ դրամ գումարը (...):»:

7. Նախաքննության մարմնի՝ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշման համաձայն՝ «(...) Քրեական գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննությունն ապահովելու, այն է՝ Գևորգ Գևորգյանի կողմից 7.000.000 ՀՀ դրամ գումարի չափով գումար պարտք լինելու պարտավորագիր հայրնաբերելու նպատակով նախաքննությամբ անհրաժեշտություն է առաջացել խուզարկություն կատարել Յաշա Սերգեյի Խաչատրյանի բնակության՝ Երևան քաղաքի Ֆանարյան փողոց 50/6 փուն հասցեում, դրան կից օժանդակ շինություններում, եթե այդպիսիք լինեն (...):»²:

8. Առաջին ատյանի դատարանի որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «(...) [Բ]ոլոր այն դեպքերում, երբ որևէ գործով նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում որևէ անձի բնակարանում կատարելու խուզարկություն, դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի նաև Օրենսգրքի 35-րդ հոդվածում սահմանված քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության կամ բացակայության հարցը և, եթե կհասարարի, որ առկա են վարույթը բացառող հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը, ապա չի կարող բնակարանի խուզարկության միջնորդությունը բավարարել:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 30-31:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 3-5:

Դատարանն ներկայացված միջնորդության և կից նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ սույն միջնորդության մեջ նշված ենթադրյալ հանցագործության (որի առիթով մերադրություն կա կատարել քնակարանի խուզարկություն) դեպքի կապակցությամբ սուկա է քրեական գործով վարույթը բացառող առերևույթ հանգամանք, մասնավորապես Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքը, ինչպես նաև դրա հնարավոր կիրառելիությունը:

(...) [Ե]ման պայմաններում (...) քնակարանում խուզարկություն կատարելը կդիրվի անհամաչափ միջամտություն անձի սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների նկատմամբ, ուստի քննիչի միջնորդությունը ենթակա է մերժման:

(...) Դատարանը փաստում է նաև, որ քննիչի կողմից չի ներկայացվել բավարար հիմքեր խուզարկություն կատարելու թույլտվություն սրանալու համար, քանի որ կոնկրետ դեպքում Յաշա Սերգեյի Խաչատրյանի քնակության վայրից՝ Չևորգ Չևորգյանի կողմից 7.000.000 ՀՀ դրամ գումարի չափով պարտք լինելու պարտավորագիր հայրնաբերելու մասին քննիչի հետևությունները հիմնված չեն որևէ ապացույցի կամ այլ փյվայի վրա, քննիչը պարզապես ենթադրել է, որ հնարավոր է Յաշա Սերգեյի Խաչատրյանի քնակության՝ Երևան քաղաքի Ֆանարջյան փողոց 50/6 փանը, դրան կից օժանդակ շինություններում խուզարկություն կատարելու արդյունքում հայրնաբերվեն դրանք, առանց նշելու, թե կոնկրետ ինչից է նման հետևություն արվել, այն պարագայում, երբ դեպքից անցել է մոտ 8 փարի ժամանակ:

Դատարանը նաև արձանագրում է, որ քննիչի միջնորդությունը ժամանակավրեպ է, քանի որ միջնորդության մեջ նշված խուզարկություն կատարելու անհրաժեշտության մասին վկայող փյվայները քննիչին հայրնի են եղել մեկ փարուց ավելի ժամանակ առաջ, ինչը նշանակում է, որ այս պահին խուզարկություն կատարելը կլինի անարդյունավետ: Խուզարկությունը դասվում է այն քննչական գործողությունների շարքին, որը հանդիսանում է անհետաձգելի, անհապաղ կատարվող գործողություն և ենթադրում է, որ միշտ պետք է կատարել այն ժամանակ, երբ նախաքննության մարմնին հայրնի է դառնում դրա կատարման անհրաժեշտության մասին վկայող որևէ փյվայ (...):»¹:

9. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, փաստել է, որ. «(...) [Ա]ռերևույթ հիմքեր չկան չհամաձայնելու Առաջին ատյանի դատարանի եզրահանգմանն առ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 36-37:

այն, որ երբ անցել են քրեական պարասիանսարվության վաղեմության ժամկետները, այսինքն՝ միջնորդությանը կից դատարան ներկայացված նյութերում առերևույթ առկա է քրեական գործով վարույթը բացառող հանգամանք, բնակարանում խուզարկություն կատարելը կդիտվի անհամաձայի միջամտություն անձի սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների նկատմամբ:

(...) Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ վերը նշված մտրեցումն ու ընդհանուր գաղափարն է ընկած նաև (...) անձի ազատության իրավունքի առնչությամբ (...) ՀՀ Վճռաբեկ դատարանի ձևավորած այն կայուն նահաղեպային իրավունքի հիմքում, համաձայն որի՝ քրեական վարույթն առերևույթ բացառող հանգամանքների առկայության պայմաններում անձի ազատության իրավունքի սահմանափակումը չի կարող համարվել անհրաժեշտ ու օրինական:

(...) [Բ]րեական գործով վարույթն առերևույթ բացառող հանգամանքի առկայության պայմաններում միջամտությունը մասնավոր կյանքին չի կարող համարվել համաձայի և ըստ էության անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում: (...)

Ինչ վերաբերում է բողոքարկի այն փաստարկին, որ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը, իսկ սույն քրեական գործով մեղադրյալ Յաշա Խաչատրյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և նման դիրքորոշում չի հայտնել վարույթն իրականացնող մարմին, ապա Վերաքննիչ դատարանը փաստում է, որ նման պայմաններում քրեական վարույթը շարունակելու օրենսդրական կարգավորման բուն նպատակն անձի՝ լիարժեք ռեսիլիտացվելու հնարավորության ապահովումն է և չի կարող հանգեցնել անձի այնպիսի իրավունքի անհամարժեք սահմանափակման, որպիսին է անձնական կյանքի անքակտելի մաս հանդիսացող բնակարանի անձեռնմխելիության իրավունքը: Վերաքննիչ դատարանը գրնում է, որ նման դեպքերում քննությունը պետք է իրականացվի այնպիսի մեթոդների և գործիքակազմի գործադրմամբ, որոնց կիրառումն անձի իրավունքների և օրինական շահերի անհամաձայի միջամտություն չի ենթադրում և չի կարող հանգեցնել (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 70-81:

10. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը կարող է ազդել գործի ելքի վրա:

10.1. Բողոքաբերը, անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանություններին, անհիմն է համարել դատարանների այն դիրքորոշումը, թե քրեական վարույթը բացառող հանգամանքների՝ մասնավորապես քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետներն անցնելու դեպքում բնակարանում խուզարկություն կատարելու միջնորդությունը չի կարող բավարարվել, և որ նման միջամտությունը մասնավոր կյանքին չի կարող համաչափ համարվել: Մասնավորապես, մեջբերելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասը՝ բողոք բերած անձը նշել է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ Յ.Խաչատրյանն իրեն առաջադրված մեղադրանքում մեղավոր չի ճանաչել և նման դիրքորոշում չի հայտնել վարույթն իրականացնող մարմին, իսկ տվյալ դեպքում գործի վարույթը պետք է շարունակվի սովորական կարգով: Բողոքաբերն ընդգծել է նաև, որ անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի նկատմամբ միջամտությունը չի կարող անհամաչափ գնահատվել զուտ այն փաստի ուժով, որ առերևույթ անցել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները:

Արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ այն պայմաններում, երբ մեղադրյալ Յ.Խաչատրյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և համաձայնություն չի տվել վաղեմության ժամկետն անցնելու հիմքով վարույթը կարճելուն, վերջինիս վերագրվող արարքն ապացուցված համարելու և քրեական գործը դատարան ուղարկելու համար պահանջվել է կատարել լրացուցիչ քննչական և այլ դատավարական գործողություններ, մասնավորապես՝ խուզարկություն վերջինիս բնակարանում, ինչը կարող է քրեական գործի համար էական նշանակություն ունեցող ապացույց ձեռք բերելու հնարավորություն ընձեռել, իսկ ստորադաս դատարանների կողմից կայացված որոշման արդյունքում վարույթն իրականացնող մարմինը գրկվել է լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն իրականացնելու հնարավորությունից:

10.2. Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանների դիրքորոշման պարագայում վարույթն իրականացնող մարմինը գրկվում է մի շարք քննչական ու դատավարական գործողություններ կատարելու հնարավորությունից: Օրինակ՝ նման դիրքորոշմամբ առաջնորդվելու դեպքում վարույթն իրականացնող մարմինները չեն կարող դատարան ներկայացնել նաև նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, հեռախոսային խոսակցությունները լսելու վերաբերյալ միջնորդություններ, կամ առգրավել բանկային կամ ստանալ նոտարական

գաղտնիք կազմող տեղեկություններ և այլն, քանի որ դրանք ևս այս կամ այն կերպ միջամտում են անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքին:

10.3. Բողոք բերած անձը փաստել է նաև, որ Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Սարգսյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելի չեն սույն գործով, քանի որ դրանք վերաբերում են վաղեմության ժամկետներն անցած լինելու դեպքում անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի առավելագույն սահմանափակման՝ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու անթույլատրելիությանը: Մինչդեռ, վաղեմության ժամկետներն առերևույթ անցած լինելու պայմաններում մեղադրյալի նկատմամբ ամենախիստ խափանման միջոցի՝ կալանավորման կիրառման անթույլատրելիությունը չի կարող նույն հարթության վրա դրվել նմանատիպ քրեական գործերով անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող դատավարական գործողությունների հետ:

10.4. Բացի վերոշարադրյալից, բողոքաբերը վճռաբեկ բողոքում անդրադարձել է նաև խուզարկության կատարման փաստական հիմքերին:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 10-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ բավարարելով քննիչի միջնորդությունը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Յ.Խաչատրյանին մեղսագրվող արարքի համար վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն առերևույթ անցած լինելու պայմաններում բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունը չի կարող բավարարվել:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

6) անցել են վաղեմության ժամկետները.

(...)

6. Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման

դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով (...):»:

13.1. Քրեական հետապնդումը բացառող քննարկվող հիմքի առնչությամբ Վճռաբեկ դատարանը նախատեսային իրավունք է ձևավորել այն մասին, որ՝

- օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները,

- քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով¹,

- վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար մեղադրյալի համաձայնության առկայությունը բխում է անմեղության կանխավարկածի սկզբունքից և անձի արդար դատաքննության, մասնավորապես օրենքով սահմանված կարգով իր մեղավորության հարցը համապատասխան դատական ատյաններում վիճարկելու իրավունքից: Հետևաբար, այն դեպքում, երբ անձը համաձայն չէ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հետ, նրան պետք է հնարավորություն ընձեռվի դատական քննության միջոցով հասնել իր անմեղության ապացուցման²:

13.2. Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված նորմը կիրառելի է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- անցել են ենթադրյալ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետները,

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Անահիտ Սաղաթելյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշման 24-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Միրաժ Ղամբարյանի և այլոց* գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշման 24-րդ կետը, *Հարություն Սարգսյանի* գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ՇԴ/0172/01/12 որոշման 14.1-րդ կետը:

- ենթադրյալ հանցանք կատարած անձը չի առարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու դեմ:

Ուստի այն դեպքում, երբ մեղադրյալն առարկում է վաղեմության ժամկետն անցնելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու դեմ, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել և քրեական գործի վարույթը չի կարող կարճվել: Նման պայմաններում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ընդհանուր կարգով շարունակել գործի վարույթը, քրեադատավարական հնարավոր բոլոր միջոցներով կատարել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն՝ վերջնական դատավարական որոշում կայացնելու համար:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գրնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գրնելու և վերցնելու համար: (...):»*

14.1. Քննչական գործողություններն ընդհանրապես և խուզարկությունը, մասնավորապես, այն դատավարական գործողություններն են, որոնք ուղղված են գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելուն: Դեռ ավելին, դրանք այն գործողություններն են, որոնք անմիջականորեն ուղղված են գործով ապացուցողական տեղեկատվության ստացմանը և վերջին հաշվով ճշմարտության բացահայտմանը: Ինչ վերաբերում է այս կամ այն քննչական գործողությունը կատարելու անհրաժեշտությանը, ապա իրավասու սուբյեկտը, ելնելով գործի համար նշանակություն ունեցող պարզման ենթակա հանգամանքներից, համապատասխան քննչական գործողության կատարման փաստական և իրավական հիմքերի առկայությունից, ինքն է որոշում, թե երբ և ինչ քննչական գործողություն է հարկավոր կատարել՝ ապահովելու համար քրեական դատավարության բնականոն շարժը: Ինչ վերաբերում է բնակարանի խուզարկությանը, ապա վարույթն իրականացնող մարմինն իրավասու է նշված քննչական գործողությունը կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությամբ դիմել դատարան, եթե գտնում է, որ առկա են բավարար տվյալներ, որոնք հանգեցնում են ողջամիտ ենթադրության առ այն, որ տվյալ բնակարանում կարող են հայտնաբերվել գործի համար նշանակություն ունեցող առարկաներ,

փաստաթղթեր, հետախուզվող կամ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձինք, ինչպես նաև դիակներ:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ

- Յ.Խաչատրյանն առարկել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու դեմ¹,

- Նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ Յ.Խաչատրյանի բնակության՝ Երևան քաղաքի Ֆանարջյան փողոց 50/6 տուն հասցեում և դրան կից օժանդակ շինություններում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու համար, որն Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ մերժվել է այն պատճառաբանությամբ, որ առկա է քրեական գործով վարույթը բացառող հանգամանք, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքը, որպիսի պայմաններում բնակարանում խուզարկություն կատարելը կդիտվի անհամաչափ միջամտություն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների նկատմամբ²,

- օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանի մոտեցման հիմքում ընկած է անձի ազատության իրավունքի առնչությամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած այն կայուն նախադեպային իրավունքը, ըստ որի՝ քրեական վարույթն առերևույթ բացառող հանգամանքների առկայության պայմաններում անձի ազատության իրավունքի սահմանափակումը չի կարող համարվել անհրաժեշտ ու օրինական: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ այն դեպքում, երբ անձն առարկում է վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու դեմ, ապա նման դեպքերում քննությունը պետք է իրականացվի այնպիսի մեթոդների և գործիքակազմի գործադրմամբ, որոնց կիրառումն անձի իրավունքների և օրինական շահերի անհամաչափ միջամտություն չի ենթադրում և չի կարող հանգեցնել անձի այնպիսի իրավունքի անհամարժեք սահմանափակման, որպիսին է անձնական կյանքի անքակտելի մաս հանդիսացող՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը³:

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերը:

³ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն պայմաններում, երբ մեղադրյալը համաձայնություն չի տվել վաղեմության ժամկետն անցնելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն և գործի վարույթը կարճելուն, ապա վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է շարունակել գործի քննությունը, կատարել անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ՝ գործի բնականոն քննությունն ապահովելու և վերջնական դատավարական որոշում կայացնելու համար անհրաժեշտ իրավական և փաստական հիմքեր ձևավորելու, այդ թվում՝ քրեական գործը դատարան ուղարկելու և անձին դատական քննության փուլում իրեն առաջադրված մեղադրանքը վիճարկելու հնարավորություն տալու համար: Եվ կոնկրետ դեպքում, ինչպես փաստում է բողոքաբերը¹, անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի նկատմամբ միջամտությունը չի կարող անհամաչափ գնահատվել զուտ այն փաստի ուժով, որ առերևույթ անցել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները: Ավելին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է նաև, որ մեղադրյալին այս հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու դեմ առարկելու հնարավորություն տալն օրենքով սահմանված հստակ և հատուկ կառուցակարգ է, որն ապահովում է անձի համար կանխատեսելի հետևանքներ: Մասնավորապես, վարույթն իրականացնող մարմնի համար վարույթը սովորական կարգով շարունակելու պարտականության հստակ ամրագրման պայմաններում անձի համար կանխատեսելի է, որ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված բոլոր քննչական և դատավարական գործողությունները, որոնք ուղղված են անձի մեղքի ապացուցմանը, կարող են կատարվել: Այսպիսով, վաղեմության ժամկետն անցնելու հիմքով վարույթի դադարեցման դեմ առարկելով մեղադրյալն ընդունում է իր որոշ իրավունքների հնարավոր սահմանափակման, իսկ արդյունքում նաև՝ իր մեղավորության հաստատման ռիսկը:

16.1. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ նման դեպքերում քննությունը պետք է իրականացվի այնպիսի մեթոդների և գործիքակազմի գործադրմամբ, որոնց կիրառումն անձի իրավունքներին և օրինական շահերին անհամաչափ միջամտություն չի ենթադրում և չի կարող հանգեցնել անձի՝ անձնական կյանքի անքակտելի մասը կազմող բնակարանի անձեռնմխելիության իրավունքի անհամարժեք սահմանափակման, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

¹ Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

օրենսդիրը նման իրավիճակներում քննության որևէ առանձնահատկություն կամ թույլատրելի քննչական և դատավարական գործողությունների սահմանափակ շրջանակ չի նախատեսել: Ուստի գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով՝ նախաքննության մարմինն է որոշում, թե ինչ քննչական կամ դատավարական գործողություններ է անհրաժեշտ կատարել: Բացի այդ, հակառակ մոտեցման պարագայում ստացվում է, որ այն դեպքերում, երբ անցել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, իսկ անձը համաձայն չէ այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելուն և քրեական գործի վարույթի կարճելուն, վարույթն իրականացնող մարմինը, ըստ էության, դատարան չի կարող ներկայացնել նաև անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի հնարավոր սահմանափակմանն ուղղված այլ քննչական գործողություններ կատարելու միջնորդություններ ևս (օրինակ՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բանկային կամ նոտարական գաղտնիք ստանալու և այլն), որպիսի մոտեցումը Վճռաբեկ դատարանի համար ընդունելի չէ:

16.2. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից որպես փաստարկ Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Սարգսյանի*¹ գործով որոշման շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները մատնանշելուն, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի ազատության իրավունքի սահմանափակման, մասնավորապես քրեական վարույթն առերևույթ բացառող հանգամանք(ներ)ի առկայության պայմաններում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելու անթույլատրելիության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները սույն գործով կիրառելի չեն: Վճռաբեկ դատարանի համապատասխան դատողությունները հիմք չեն այնպիսի կատեգորիկ եզրահանգման գալու համար, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքի առկայության դեպքում, որի կիրառման դեմ անձն առարկում է, բնակարանի խուզարկության միջնորդությունը չի կարող բավարարվել: Վերոհիշյալ դիրքորոշումը հիմնավորվում է առնվազն նրանով, որ քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առկայության դեպքում կալանավորման կիրառման անթույլատրելիությունն անմիջականորեն բխում է հենց

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Սարգսյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 23-րդ կետը:

օրենքից: Մասնավորապես, անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պարտադիր պայմաններից մեկն անձին մեղսագրվող հանցանքի համար ազատագրկման ձևով նախատեսվող պատժի ժամկետի՝ մեկ տարուց ավելի լինելն է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մաս), իսկ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու դեպքում, անգամ այդ հիմքով գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկելու պարագայում, անձը ենթակա չէ պատժի, հետևաբար՝ բացակայում է կալանավորման կիրառման պայմաններից մեկը, որն էլ բացառում է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հնարավորությունը: Բացի այդ, տարբեր են կալանավորման և բնակարանի խուզարկության նպատակները: Մասնավորապես, եթե կալանավորման դեպքում նպատակը վարույթի ընթացքում մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելն է, ապա բնակարանի խուզարկության դեպքում վարույթն իրականացնող մարմինը նպատակ ունի ձեռք բերել գործի համար նշանակություն ունեցող առարկաներ և այլն՝ ապահովելու գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը:

17. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ չեն ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Յ.Խաչատրյանին մեղսագրվող արարքի համար վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն առերևույթ անցած լինելու պայմաններում բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունը չի կարող բավարարվել:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, բողոքարկված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք է¹:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննարկման առարկա դարձնի խուզարկության կատարման փաստական հիմքերի առնչությամբ դատախազի ներկայացրած պնդումներն ու դատողությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

հողվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 10-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

54. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/3084/07/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Վ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնփակ դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 13-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Յ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի օգոստոսի 17-ին ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքում հարուցվել է թիվ 13886618 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2018 թվականի օգոստոսի 30-ից քրեական գործի քննությունը շարունակվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում (այսուհետ նաև՝ Նախաքննության մարմին):

Նախաքննության մարմնի 2018 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ Յաշա Սերգեյի Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ,

և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ Նախաքննության մարմնի միջնորդությունը՝ Երևան քաղաքի Եզնիկ Կողբացի 30 հասցեում գտնվող՝ «Ֆլեշ» ՍՊ ընկերության տնօրեն Յաշա Խաչատրյանի աշխատասենյակում և դրան կից օժանդակ շինություններում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին, մերժվել է:

3. Դատախազ Վ.Պողոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2020 թվականի հունվարի 13-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 16-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Յաշա Խաչատրյանը համաձայնություն չի տվել վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն և քրեական գործի վարույթը կարճելուն¹:

6. Յաշա Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Մ/ա 2010-2011 թվականների ընթացքում, «Ֆլեշ» ՍՊ ընկերությանը պայրճառված վնասի վերականգնման ենթադրյալ իրավունքը վերագրելով իրեն, իրավապահ մարմիններին դիմելու և քրեադատավարական ու քաղաքացիական դատավարության կարգով ենթադրաբար հափշտակությանը պայրճառված նյութական վնասի վերականգնման փոխարեն, ինքնակամ՝ օրենքով սահմանված կարգի խախտմամբ՝ Գևորգ Վահանի Գևորգյանից պահանջել և ստացել է ստանձնապես խոշոր չափերի՝ 13.200.000 ՀՀ դրամ գումար:

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի դատական նիստի արձանագրությունը:

Այսպես, Յաշա Սերգեյի Խաչատրյանը, հանդիսանալով «Ֆլեշ» ՍՊ ընկերության տնօրեն, Երևան քաղաքի Ե.Կողբացի 30 հասցեում գործող նույն ընկերության գրասենյակ է հրավիրել ընկերությանը պարկանոց բենզալցակայաններից մեկի վարիչ Գևորգ Գևորգյանին, վերջինիս մեղադրել հափշտակություն կատարելու մեջ, որից հետո սպանուալիքներ հնչեցնելով վերջինիս որդու՝ Սարգիս Գևորգյանի հասցեին, որպես վնասի փոխհատուցում Գևորգ Գևորգյանից պահանջել է և 2010 թ. ընթացքում ընկերության գրասենյակում սրացել է 3.000.000 ՀՀ դրամ գումար:

Այնուհետև, Յաշա Խաչատրյանը (...) Գևորգ Գևորգյանին հայրնել է, որ սիսակ հաշվարկ է կատարվել և վերահաշվարկի արդյունքում պարզվել է, որ ևս 3.200.000 ՀՀ դրամ գումար պետք է վճարել (...): Գևորգ Գևորգյանը ստիպված Յաշա Խաչատրյանին 2010 թ. ընթացքում ընկերության գրասենյակում վճարել է պահանջված 3.200.000 ՀՀ դրամ գումարը (...):

Դրանից հետո Յաշա Խաչատրյանը Գևորգ Գևորգյանին (...) պարտադրել է ստորագրել ևս 7.000.000 ՀՀ դրամ գումարի չափով պարտավորագիր, որից հետո արդեն ստորագրված պարտավորագրի հիման վրա 2011 թվականի ընթացքում ընկերության գրասենյակում սրացել է հիշյալ 7.000.000 ՀՀ դրամ գումարը (...):»:

7. Նախաքննության մարմնի՝ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշման համաձայն՝ «(...) Քրեական գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննությունն ապահովելու, այն է՝ Գևորգ Գևորգյանի կողմից 7.000.000 ՀՀ դրամ գումարի չափով գումար պարտք լինելու պարտավորագիր հայրնաբերելու նպատակով նախաքննությամբ անհրաժեշտություն է առաջացել խուզարկություն կատարել Երևան քաղաքի Եզնիկ Կողբացի 30 հասցեում գտնվող «Ֆլեշ» ՍՊ ընկերության տնօրեն Յաշա Խաչատրյանի աշխատասենյակում, դրան կից օժանդակ շինություններում, եթե այդպիսիք լինեն (...):»²:

8. Առաջին ատյանի դատարանի որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «(...) [Բ]ոլոր այն դեպքերում, երբ որևէ գործով նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում որևէ անձի բնակարանում կատարելու խուզարկություն, դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի նաև Օրենսգրքի 35-րդ հոդվածում սահմանված քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության կամ բացակայության հարցը և, եթե կհաստատվի, որ առկա են վարույթը բացառող հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը, սպա չի կարող բնակարանի խուզարկության միջնորդությունը բավարարել:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 30-31:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 3-5:

Դատարանն ներկայացված միջնորդության և կից նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ սույն միջնորդության մեջ նշված ենթադրյալ հանցագործության (որի առիթով մերադրություն կա կատարել բնակարանի խուզարկություն) դեպքի կապակցությամբ առկա է քրեական գործով վարույթը բացառող առերևույթ հանգամանք, մասնավորապես Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքը, ինչպես նաև դրա հնարավոր կիրառելիությունը:

(...) [Ե]ման պայմաններում, (...) բնակարանում խուզարկություն կատարելը կդիմելի անհամաչափ միջամտություն անձի սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների նկատմամբ, ուստի քննիչի միջնորդությունը ենթակա է մերժման:

Դատարանը չի անդրադառնում այն հարցին, որ վաղեմության ժամկետը կիրառվում է կոնկրետ անձի նկատմամբ և առանց նրա համաձայնության այն չի կարող քրեական վարույթը բացառող հանգամանք լինել, քանի որ դատարանի խնդիրը զուտ միջնորդության քննությունն է, այլ ոչ թե գործի ըստ էության լուծումը: Դատարանը փաստում է նաև, որ քննիչի կողմից չի ներկայացվել բավարար հիմքեր խուզարկություն կատարելու թույլտվություն սրանալու համար, քանի որ կոնկրետ դեպքում Յաշա Սերգեյի Խաչատրյանի աշխատատեղակից՝ Գևորգ Գևորգյանի կողմից 7.000.000 ՀՀ դրամ գումարի չափով պարտք լինելու պարտավորագիր հայրնաբերելու մասին քննիչի հետևությունները հիմնված չեն որևէ ապացույցի կամ այլ փյույթի վրա, քննիչը պարզապես ենթադրել է, որ հնարավոր է Յաշա Սերգեյի Խաչատրյանի աշխատատեղակում խուզարկություն կատարելու արդյունքում հայրնաբերվեն դրանք, առանց նշելու, թե կոնկրետ ինչից է նման հետևություն արվել, այն պարագայում, երբ դեպքից անցել է մոտ 8 տարի ժամանակ:

Դատարանը նաև արձանագրում է, որ քննիչի միջնորդությունը ժամանակավրեպ է, քանի որ միջնորդության մեջ նշված խուզարկություն կատարելու անհրաժեշտության մասին վկայող փյույթները քննիչին հայրնի են եղել մեկ տարուց ավելի ժամանակ առաջ, ինչը նշանակում է, որ այս պահին խուզարկություն կատարելը կլինի անարդյունավետ: Խուզարկությունը դասվում է այն քննչական գործողությունների շարքին, որը հանդիսանում է անհետաձգելի, անհասպաղ կատարվող գործողություն և ենթադրում է, որ միշտ պետք է կատարել այն ժամանակ, երբ

նախաքննության մարմինն հայրնի է դառնում դրա կարարման անհրաժեշտության մասին վկայող որևէ տվյալ: (...)»¹:

9. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիանի դատարանի որոշումը, արձանագրել է, որ. «(...) Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, օրինականության և հիմնավորվածության տեսանկյունից գնահատման ենթարկելով Երևան քաղաքի առաջին արշալանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ կարարված վերոշարադրյալ եզրահանգումները, գտնում է, որ որ դրանք իրավաչափ են, բխում են նախաքննության մարմնի կողմից ներկայացված փաստական տվյալների համակողմանի ուսումնասիրությունից, իսկ Դատախազի կողմից իր վերաքննիչ բողոքում վկայակոչված հիմնավորումներն ի գորու չեն դատական ակտը բեկանելու համար բավարար իրավական և փաստական նախադրյալներ արեղծել, քանի որ քրեական պարասխանավորության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի իրավակարգավորումների ուժով հանդիսանում է քրեական գործի վարույթը բացառող հանգամանք, որը տվյալ գործի նկատմամբ առերևույթ կիրառելի է:

(...) Թրեական գործի վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայության պայմաններում, երբ անձը որպես արդյունք քրեական պարասխանավորությունից ազատվելու է, միջամտությունը մասնավոր կյանքին չի կարող համաչափ համարվել, և թույլատրելի համարվել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության խախտումը՝ հոգուր հանրային շահի:

(...) Ինչ վերաբերում է անձին լիարժեք ռեսիդիացման հնարավորություն ընձեռելու նպատակով քրեական գործի լիարժեք քննության անհրաժեշտությանը, ապա պետք է նշել, որ քրեական գործի վարույթը բացառող հանգամանքի առկայության պայմաններում վարույթն իրականացնող մարմինը հանրային ռեսուրսների օգրագործման շրջանակներում պետք է քննությունն իրականացնի այնպիսի մեթոդների և գործիքակազմի գործադրմամբ, որպեսզի անհամաչափ միջամտություն թույլ չտրվի անձանց իրավունքների և օրինական շահերի նկատմամբ: Հակառակ մոտեցման դեպքում կարացվի մի իրավիճակ, երբ միայն քրեական գործի քննության շահից ելնելով՝ անձը կարող է ձերբակալվել, կալանավորվել անգամ քրեական գործի վարույթը բացառող հանգամանքի առկայության պայմաններում:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 36-37:

(...) Վերաքննիչ դատարանի համոզմամբ հիշյալ մուրեցումն է ընկած նաև ՀՀ վճռարեկ դատարանի նախադեպային որոշումներով ձևավորված այն իրավական դիրքորոշումների հիմքում, համաձայն որի՝ քրեական վարույթը բացառող հանգամանքի առկայության պայմաններում անձի նկարմամբ չի կարող որպես խափանման միջոց կիրառվել կալանավորումը: (...)»¹:

Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը՝ անհիմն կերպով մերժվել է քննիչի կողմից ներկայացված՝ բնակարանում խուզարկություն կատարելու մասին միջնորդությունը, որով կարող էին ձեռք բերվել քրեական գործի համար էական նշանակություն ունեցող փաստական տվյալներ: Արդյունքում խախտվել է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը:

10.1. Բողոքաբերը, անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանություններին, անհիմն է համարել դատարանների այն դիրքորոշումը, թե քրեական վարույթը բացառող հանգամանքների՝ մասնավորապես քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետներն անցնելու դեպքում բնակարանում խուզարկություն կատարելու միջնորդությունը չի կարող բավարարվել, և որ նման միջամտությունը մասնավոր կյանքին չի կարող համաչափ համարվել: Մասնավորապես, մեջբերելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասը՝ բողոք բերած անձը նշել է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ Յ.Խաչատրյանն իրեն առաջադրված մեղադրանքում մեղավոր չի ճանաչել և նման դիրքորոշում չի հայտնել վարույթն իրականացնող մարմնին, իսկ տվյալ դեպքում գործի վարույթը պետք է շարունակվի սովորական կարգով: Բողոքաբերն ընդգծել է նաև, որ անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի նկատմամբ միջամտությունը չի կարող անհամաչափ գնահատվել զուտ այն փաստի ուժով, որ առերևույթ անցել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները:

Արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ այն պայմաններում, երբ մեղադրյալ Յ.Խաչատրյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և համաձայնություն չի տվել վաղեմության ժամկետն անցնելու հիմքով վարույթը կարճելուն, վերջինիս վերագրվող արարքն ապացուցված

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 67-79:

համարելու և քրեական գործը դատարան ուղարկելու համար պահանջվել է կատարել լրացուցիչ քննչական և այլ դատավարական գործողություններ, մասնավորապես՝ խուզարկություն վերջինիս բնակարանում, ինչը կարող է քրեական գործի համար էական նշանակություն ունեցող ապացույց ձեռք բերելու հնարավորություն ընձեռել, իսկ ստորադաս դատարանների կողմից կայացված որոշման արդյունքում վարույթն իրականացնող մարմինը գրկվել է լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն իրականացնելու հնարավորությունից:

10.2. Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանների դիրքորոշման պարագայում վարույթն իրականացնող մարմինը գրկվում է մի շարք քննչական ու դատավարական գործողություններ կատարելու հնարավորությունից: Օրինակ՝ նման դիրքորոշմամբ առաջնորդվելու դեպքում վարույթն իրականացնող մարմինները չեն կարող դատարան ներկայացնել նաև նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, հեռախոսային խոսակցությունները լսելու վերաբերյալ միջնորդություններ, կամ առգրավել բանկային կամ ստանալ նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ և այլն, քանի որ դրանք ևս այս կամ այն կերպ միջամտում են անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքին:

10.3. Բողոք բերած անձը փաստել է նաև, որ Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Մարգարյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելի չեն սույն գործով, քանի որ դրանք վերաբերում են վաղեմության ժամկետներն անցած լինելու դեպքում անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի առավելագույն սահմանափակման՝ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու անթույլատրելիությանը: Մինչդեռ, վաղեմության ժամկետներն առերևույթ անցած լինելու պայմաններում մեղադրյալի նկատմամբ ամենախիստ խափանման միջոցի՝ կալանավորման կիրառման անթույլատրելիությունը չի կարող նույն հարթության վրա դրվել նմանատիպ քրեական գործերով անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող դատավարական գործողությունների հետ:

10.4. Բացի վերոշարադրյալից, բողոքաբերը վճռաբեկ բողոքում անդրադարձել է նաև խուզարկության կատարման փաստական հիմքերին:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 13-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ բավարարելով Յաշա Խաչատրյանի բնակարանում, դրան կից օժանդակ շինություններում խուզարկություն կատարելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Յ.Խաչատրյանին մեղսագրվող արարքի համար վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն առերևույթ անցած լինելու պայմաններում բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունը չի կարող բավարարվել:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

6) անցել են վաղեմության ժամկետները.

(...)

6. Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով (...):»:

13.1. Քրեական հետապնդումը բացառող քննարկվող հիմքի առնչությամբ Վճռաբեկ դատարանը նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ՝

- օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները,

- քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով¹,

- վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար մեղադրյալի համաձայնության առկայությունը բխում է անմեղության կանխավարկածի սկզբունքից և անձի արդար դատաքննության,

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մասիկո Սաղաթելյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշման 24-րդ կետը:

մասնավորապես օրենքով սահմանված կարգով իր մեղավորության հարցը համապատասխան դատական ատյաններում վիճարկելու իրավունքից: Հետևաբար, այն դեպքում, երբ անձը համաձայն չէ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հետ, նրան պետք է հնարավորություն ընձեռվի դատական քննության միջոցով հասնել իր անմեղության ապացուցման¹:

13.2. Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված նորմը կիրառելի է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- անցել են ենթադրյալ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետները,

- ենթադրյալ հանցանք կատարած անձը չի առարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու դեմ:

Ուստի այն դեպքում, երբ մեղադրյալն առարկում է վաղեմության ժամկետն անցնելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու դեմ, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել և քրեական գործի վարույթը չի կարող կարճվել: Նման պայմաններում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ընդհանուր կարգով շարունակել գործի վարույթը, քրեադատավարական հնարավոր բոլոր միջոցներով կատարել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն՝ վերջնական դատավարական որոշում կայացնելու համար:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գրնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գրնելու և վերցնելու համար: (...)»:*

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Միրած Ղամբարյանի և այլոց գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԳ/0055/01/11 որոշման 24-րդ կետը, Հարություն Սարգսյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ՇԳ/0172/01/12 որոշման 14.1-րդ կետը:

14.1. Քննչական գործողություններն ընդհանրապես և խուզարկությունը, մասնավորապես, այն դատավարական գործողություններն են, որոնք ուղղված են գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելուն: Դեռ ավելին, դրանք այն գործողություններն են, որոնք անմիջականորեն ուղղված են գործով ապացուցողական տեղեկատվության ստացմանը և վերջին հաշվով ճշմարտության բացահայտմանը: Ինչ վերաբերում է այս կամ այն քննչական գործողությունը կատարելու անհրաժեշտությանը, ապա իրավասու սուբյեկտը, ելնելով գործի համար նշանակություն ունեցող պարզման ենթակա հանգամանքներից, համապատասխան քննչական գործողության կատարման փաստական և իրավական հիմքերի առկայությունից, ինքն է որոշում, թե երբ և ինչ քննչական գործողություն է հարկավոր կատարել՝ ապահովելու համար քրեական դատավարության բնականոն շարժը: Ինչ վերաբերում է բնակարանի խուզարկությանը, ապա վարույթն իրականացնող մարմինն իրավասու է նշված քննչական գործողությունը կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությամբ դիմել դատարան, եթե գտնում է, որ առկա են բավարար տվյալներ, որոնք հանգեցնում են ողջամիտ ենթադրության առ այն, որ տվյալ բնակարանում կարող են հայտնաբերվել գործի համար նշանակություն ունեցող առարկաներ, փաստաթղթեր, հետախուզվող կամ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձինք, ինչպես նաև դիակներ:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ

- Յ.Խաչատրյանն առարկել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու դեմ¹,

- Նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ Երևան քաղաքի Եզնիկ Կողբացի 30 հասցեում գտնվող «Ֆլեշ» ՍՊ ընկերության տնօրեն Յաշա Խաչատրյանի աշխատասենյակում, դրան կից օժանդակ շինություններում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու համար, որն Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ մերժվել է այն պատճառաբանությամբ, որ առկա է քրեական գործով վարույթը բացառող հանգամանք, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքը, որպիսի պայմաններում բնակարանում խուզարկություն կատարելը կդիտվի անհամաչափ միջամտություն անձի՝ ՀՀ

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների նկատմամբ¹,

- օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ Վերաքննիչ դատարանը փաստել է, որ քրեական գործի վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայության պայմաններում, երբ անձը որպես արդյունք քրեական պատասխանատվությունից ազատվելու է, միջամտությունը մասնավոր կյանքին չի կարող համաչափ համարվել, նաև չի կարող թույլատրելի համարվել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության խախտումը՝ հօգուտ հանրային շահի²:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն պայմաններում, երբ մեղադրյալը համաձայնություն չի տվել վաղեմության ժամկետն անցնելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն և գործի վարույթը կարճելուն, ապա վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է շարունակել գործի քննությունը, կատարել անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ՝ գործի բնականոն քննությունն ապահովելու և վերջնական դատավարական որոշում կայացնելու համար անհրաժեշտ իրավական և փաստական հիմքեր ձևավորելու, այդ թվում՝ քրեական գործը դատարան ուղարկելու և անձին դատական քննության փուլում իրեն առաջադրված մեղադրանքը վիճարկելու հնարավորություն տալու համար: Եվ կոնկրետ դեպքում, ինչպես փաստում է բողոքաբերը³, անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի նկատմամբ միջամտությունը չի կարող անհամաչափ գնահատվել զուտ այն փաստի ուժով, որ առերևույթ անցել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները: Ավելին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է նաև, որ մեղադրյալին այս հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու դեմ առարկելու հնարավորություն տալն օրենքով սահմանված հստակ և հատուկ կառուցակարգ է, որն ապահովում է անձի համար կանխատեսելի հետևանքներ: Մասնավորապես, վարույթն իրականացնող մարմնի համար վարույթը սովորական կարգով շարունակելու պարտականության հստակ ամրագրման պայմաններում անձի համար կանխատեսելի է, որ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված բոլոր քննչական և դատավարական գործողությունները, որոնք ուղղված են անձի մեղքի ապացուցմանը, կարող են կատարվել: Այսպիսով, վաղեմության ժամկետն

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

անցնելու հիմքով վարույթի դադարեցման դեմ առարկելով մեղադրյալն ընդունում է իր որոշ իրավունքների հնարավոր սահմանափակման, իսկ արդյունքում նաև՝ իր մեղավորության հաստատման ռիսկը:

16.1. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ քրեական գործի վարույթը բացառող հանգամանքի առկայության պայմաններում վարույթն իրականացնող մարմինը հանրային ռեսուրսների օգտագործման շրջանակներում պետք է քննությունն իրականացնի այնպիսի մեթոդների և գործիքակազմի գործադրմամբ, որպեսզի անհամաչափ միջամտություն թույլ չտրվի անձանց իրավունքների և օրինական շահերի նկատմամբ, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նման իրավիճակներում քննության որևէ առանձնահատկություն կամ թույլատրելի քննչական և դատավարական գործողությունների սահմանափակ շրջանակ չի նախատեսել: Ուստի գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով՝ նախաքննության մարմինն է որոշում, թե ինչ քննչական կամ դատավարական գործողություններ է անհրաժեշտ կատարել: Բացի այդ, հակառակ մոտեցման պարագայում ստացվում է, որ այն դեպքերում, երբ անցել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, իսկ անձը համաձայն չէ այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելուն և քրեական գործի վարույթի կարճելուն, վարույթն իրականացնող մարմինը, ըստ էության, դատարան չի կարող ներկայացնել նաև անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի հնարավոր սահմանափակմանն ուղղված այլ քննչական գործողություններ կատարելու միջնորդություններ ևս (օրինակ՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բանկային կամ նոտարական գաղտնիք ստանալու և այլն), որպիսի մոտեցումը Վճռաբեկ դատարանի համար ընդունելի չէ:

16.2. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից որպես փաստարկ Վճռաբեկ դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումները վկայակոչելուն, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի ազատության իրավունքի սահմանափակման, մասնավորապես քրեական վարույթն առերևույթ բացառող հանգամանք(ներ)ի առկայության պայմաններում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելու անթույլատրելիության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները սույն գործով կիրառելի չեն¹: Վճռաբեկ դատարանի համապատասխան

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Սարգսյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0503/06/10 որոշման 23-րդ կետը:

դատողությունները հիմք չեն այնպիսի կատեգորիկ եզրահանգման գալու համար, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքի առկայության դեպքում, որի կիրառման դեմ անձն առարկում է, բնակարանի խուզարկության միջնորդությունը չի կարող բավարարվել: Վերոհիշյալ դիրքորոշումը հիմնավորվում է առնվազն նրանով, որ քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առկայության դեպքում կալանավորման կիրառման անթույլատրելիությունն անմիջականորեն բխում է հենց օրենքից: Մասնավորապես, անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պարտադիր պայմաններից մեկն անձին մեղսագրվող հանցանքի համար ազատագրկման ձևով նախատեսվող պատժի ժամկետի՝ մեկ տարուց ավելի լինելն է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մաս), իսկ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու դեպքում, անգամ այդ հիմքով գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկելու պարագայում, անձը ենթակա չէ պատժի, հետևաբար՝ բացակայում է կալանավորման կիրառման պայմաններից մեկը, որն էլ բացառում է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հնարավորությունը: Բացի այդ, տարբեր են կալանավորման և բնակարանի խուզարկության նպատակները: Մասնավորապես, եթե կալանավորման դեպքում նպատակը վարույթի ընթացքում մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելն է, ապա բնակարանի խուզարկության դեպքում վարույթն իրականացնող մարմինը նպատակ ունի ձեռք բերել գործի համար նշանակություն ունեցող առարկաներ և այլն՝ ապահովելու գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը:

17. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ չեն ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Յ.Խաչատրյանին մեղսագրվող արարքի համար վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն առերևույթ անցած լինելու պայմաններում բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունը չի կարող բավարարվել:

18. Անփոփոխելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ

հողվածի, բողոքարկված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք է¹:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննարկման առարկա դարձնի խուզարկության կատարման փաստական հիմքերի առնչությամբ դատախազի ներկայացրած պնդումներն ու դատողությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Երևան քաղաքի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԳ/0426/11/18 որոշումը:

55.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0065/01/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2020 թվականի հոկտեմբերի 28-ին

ք.Երևանում

դո՛ւրսաց դատական նիստում, քննության առնելով Վարդգեզ Լիվանի Գասպարիի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի մարտի 30-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով և Վարդգեզ Լիվանի Գասպարիի ներկայացուցիչ՝ փաստաբան Մ.Շուշանյանի՝ նոր հանգամանքի հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով: Նախաքննության մարմնի՝ նույն

օրվա մեկ այլ որոշմամբ, թիվ 62202508 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին:

Նույն օրը Վարտգեզ Լիվանի Գասապարին ձերբակալվել է:

2008 թվականի մարտի 5-ին Վ.Գասապարին ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի մարտի 5-ի որոշմամբ Վ.Գասապարիի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 31-ի որոշմամբ թիվ 62202608 քրեական գործից անջատվել են Վ.Գասապարիի վերաբերյալ գործի նյութերը և կազմվել է թիվ 62205108 քրեական գործը:

2008 թվականի ապրիլի 3-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 10-ի դատավճռով Վ.Գասապարին մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Վ.Գասապարիի պաշտպան Ա.Զաքարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2009 թվականի մարտի 30-ի որոշմամբ բողոքը մերժել է: Նույն որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 10-ի դատավճիռը պատժի մասով փոփոխել է և Վ.Գասապարիին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ դատապարտելով ազատազրկման՝ 11 (տասնմեկ) ամիս 29 (քսանինը) օր ժամկետով:

4. Վերոնշյալ որոշման դեմ Վ.Գասապարիի և նրա պաշտպաններ՝ Ա.Զաքարյանի և Մ.Շուշանյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 5-ի որոշմամբ վերադարձվել է:

5. 2020 թվականի մարտի 20-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը հիմնարար խախտման հիմքով բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան, որը 2020 թվականի մայիսի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

6. Վ.Գասապարիի գանգատի հիման վրա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), *Գասապարին ընդդեմ Հայաստանի* գործով 2020 թվականի մարտի 26-ին

վճիռ է կայացրել, որով ճանաչել է Վ.Գասպարիի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքի խախտման փաստը:

7. 2020 թվականի օգոստոսի 5-ին Վ.Գասպարիի ներկայացուցիչ՝ փաստաբան Մ.Շուշանյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով *Գասպարին ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ հարուցվել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ և բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Նախաքննության մարմնի կողմից Վարտգեզ Գասպարիին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Ե]ս, մասնակցելով ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի և նրա համահոհների կողմից 2008 թվականի փետրվարի 20-ից կազմակերպված և իրականացված մայրաքաղաքի կենսագործունեությունը, երթևեկությունը, պեղական և մասնավոր հիմնարկների քնականոն գործունեությունը, ազգաբնակչության հանգիստը ու անդորրը խանգարող սպորինի հրապարակային միջոցառումներին՝ զանգվածային ցույցերին, շուրջօրյա հանրահավաքներին, միտինգներին, պիկետներին և նստացույցներին, 2008 թվականի մարտի 1-ին ժամը 08:30-ի սահմաններում, երբ իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներ՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ոստիկաններ Էդգար Պետրոսյանը և Գարիկ Հովանյանն «Ազատության» հրապարակի մոտակայքում հերթական անգամ նրան նախազգուշացրել և պահանջել են դադարեցնել անօրինական միջոցառման մասնակցելը, Վարտգեզ Գասպարին, չենթարկվելով նրանց օրինական պահանջներին, կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բռնություն է գործադրել Էդգար Պետրոսյանի և Գարիկ Հովանյանի նկատմամբ ու նաև փվել բռնություն գործադրելու սպառնալիքներ (...)»¹:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 144-147:

9. Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում, Վ.Գասպարիի պաշտպան Մ.Շուշանյանը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Հովհաննես Ղազարյանին, Զարուհի Փոստանջանին, Մեղա Մելիքյանին և Արմեն Մարտիրոսյանին, ինչը դատարանի կողմից թողնվել է առանց քննության¹:

9.1. Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվագորներ Էդգար Պետրոսյանի և Գարիկ Հովանյանի ցուցմունքները, ինչպես նաև անձին ոստիկանության բաժնի բերման ենթարկելու և անձնական զննություն կատարելու մասին Է.Պետրոսյանի և Գ.Հովանյանի արձանագրություններն ու Է.Պետրոսյանի զեկուցագիրը²:

10. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է. «(...) Վերաքննիչ դատարանը (...) գործով հավաքված և սույն որոշման մեջ թվարկված ապացույցները ենթարկելով բազմակողմանի և օբյեկտիվ սրուզման՝ ձեռք բերված յուրաքանչյուր ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն սրուզելու միջոցով, յուրաքանչյուր ապացույցը ենթարկելով գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, հանգեց այն հետևության, որ դրանք հավաստի և փոխկապակցված են, հաստատում են ամբաստանյալ Վ.Գասպարիի կողմից մեղաագրված արարքը կատարելը և նրա մեղավորությունը րվյալ հանցանքը կատարելու մեջ:

(...) Չնայած այն հանգամանքին, որ [Առաջին ատյանի] դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ մեղադրական դատավճիռ, այնուամենայնիվ, դատավճիռը թերի է պարճառաբանել, կամ գործի համար նշանակություն ունեցող որոշ հանգամանքների վերաբերյալ պարճառաբանություններ չի ներկայացրել, ինչն էլ դարձել է վերաքննիչ բողոքի առարկա (...):

(...) [Վերաքննիչ դատարանը] քննության առնելով պաշտպանության կողմի միջնորդությունը՝ վկաներ՝ Զարուհի Փոստանջանին, Արմեն Մարտիրոսյանին, Մեղա Մելիքյանին, Հովհաննես Ղազարյանին դատարան հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ գրել է, որ այդպիսի անհրաժեշտություն չկա, քանի որ Վ.Գասպարիին բերման ենթարկելու և նրան ոստիկանության Արաբկիրի բաժնի տեսչի հետևելու հետ կապված հանգամանքները պարզվել են բազմաթիվ րվյալներով, դատարանում

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 41-45:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 165-166:

*հետագայում տեսասկավառակով, ամբաստանյալ Վ.Գասպարիի հայտարարություններով (...)*¹:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբեր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Գավթյանը փաստել է, որ ստորադաս դատարանները, գործի նախորդ դատական քննության ընթացքում, թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնցով խաթարվել է արդարադատության բուն էությունը և խախտվել սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքի հեղինակը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 20-րդ կետը, 270-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Ճաղարյանի և այլոց* վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ փաստել է, որ Վ.Գասպարիին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքն անորոշ է: Մասնավորապես՝ Վ.Գասպարիին առաջադրված մեղադրանքի ձևակերպումից չի երևում, թե ինչպես է ամբաստանյալն իրականացրել իր հանցավոր մտադրությունը, այսինքն՝ ինչպիսի ձև և բովանդակություն է ունեցել մեղսագրված արարքի պարտադիր հատկանիշ հանդիսացող՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ դրա սպառնալիքն այն պայմաններում, երբ վերացական կերպով ուղղակի մեջբերվել են վերագրվող հանցագործությունը սահմանող նորմի դիսպոզիցիան, որոնց վերաբերյալ կոնկրետ կատարման ձևն ու եղանակը չի նկարագրվել: Բողոքաբերը նշել է, որ հատկանշական է նաև այն հանգամանքը, որ քրեական գործով որևէ անձ տուժող չի ճանաչվել: Բողոքի հեղինակը փաստել է, որ խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ և 18-րդ հոդվածների պահանջները՝ արդյունքում եզրահանգելով, որ Վ.Գասպարիի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը:

11.1. Անդրադառնալով Վ.Գասպարիի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններին՝ բողոքաբերը փաստել է, որ սույն գործով ստորադաս դատարանները խախտել են նաև ամբաստանյալի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 133-136:

կոնվենցիայով ամրագրված պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը:

Մասնավորապես՝ դատական քննության ընթացքում պաշտպանության կողմը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ հրավիրելու և որպես վկա հարցաքննելու Հովհաննես Ղազարյանին, Զարուհի Փոստանջանին, Արմեն Մարտիրոսյանին և Սեդա Մելիքյանին, ովքեր կա՛մ ականատես են եղել նկարագրված իրադարձությանը, կա՛մ ականատես են եղել, թե ինչպես է Վ.Գասպարին բերման ենթարկվել ոստիկանության բաժին: Սակայն հիշյալ անձանց դատարան հրավիրելու և որպես վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունները դատարանն առանց որևէ պատճառաբանության մերժել է, իսկ մեղադրական դատավճռի հիմքում դրել է բացառապես ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները: Վկայակոչելով «Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանի վճիռը՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործով դատարանը բացառապես հիմնվել է վիճարկվող իրադարձությանն ակտիվ ներգրավված ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ պաշտպանության կողմին չտալով հակառակ ապացույցներ ներկայացնելու որևէ հնարավորություն, ինչը հանգեցրել է պաշտպանության իրավունքի սահմանափակման: Ըստ բողոքի հեղինակի՝ սույն գործով խախտվել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով երաշխավորված գործի արդարացի քննության իրավունքը:

11.2. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Վ.Գասպարիի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 10-ի դատավճիռը և այն մասնակի բեկանելու ու պատժի մասով փոփոխելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի մարտի 30-ի որոշումը՝ ճանաչելով և հռչակելով Վարդգեզ Գասպարիի անմեղությունը մեղսագրված արարքում:

12. Բողոքաբեր՝ Վ.Գասպարիի ներկայացուցիչ Մ.Շուշանյանը փաստել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Գասպարին ընդդեմ Հայաստանի վճռով ճանաչվել է Վ.Գասպարիի՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքի խախտման փաստը, որն ուղղակիորեն առնչվում է թե՛ փաստերի, և թե՛ իրավունքի հարցերի մասին Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նյութական և դատավարական իրավունքների կոպիտ և էական սխալներին, որպիսիք և հանգեցրել են Վ.Գասպարիի վերոնշյալ իրավունքների խախտումներին:

Բողոքաբերը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Գարրիեյանն ընդդեմ Հայաստանի, Ավերիսյանն ընդդեմ Հայաստանի և Ասարոյանն ընդդեմ Հայաստանի գործերով կայացված

վճիռները, նշել է, որ գործերի վերաբացումը (վերանայումը) խախտված իրավունքի վերականգնման ամենապատշաճ միջոցն է, եթե իրականացվող վերաբացված (վերսկսված) դատավարությամբ կամ գործի վերաքննությամբ ապահովված լինեն արդար դատաքննության երաշխիքները:

12.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է հարուցել նոր հանգամանքի հիմքով Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի մարտի 30-ի որոշման վերանայման վարույթ, բեկանել վերը նշված որոշումը և ճանաչել ու հռչակել Վ.Գասպարիի անմեղությունը՝ հանցադեպի բացակայության հիմքով:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

13. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործով առկա են Վարտգեղ Գասպարիի վերաբերյալ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բացառիկ վերանայման հիմքեր:

14. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը րվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական

ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ¹:

Մինևույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «*հիմնարար խախտում*» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից գուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չի կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել, և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7-րդ արձանագրության Բացատրական զեկույցի 31-րդ կետում ընդգծված է, որ «*4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հոգուր դատապարտված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատապարտյալի*»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախևառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «ազդեն գործի ելքի վրա»՝ կամ հոգուտ անձի, կամ հակառակը²:

14.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման*

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրեթի անձի վիճակի վարթարացում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ե]րկու հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

14.2. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Եման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)»¹:

14.3. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՄԴՈ-1431 որոշմամբ՝ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարճառահետևանքային կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկարմամբ արդարացի պարիժ

¹ Տե՛ս Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

նշանակելուն, հանցագործությունից փրժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճառված վնասը հատուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեզրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսենացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը սրացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»¹:

15. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները (...):»:

15.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *Գասպարին ընդդեմ Հայաստանի* գործով 2020 թվականի մարտի 26-ին կայացված վճռում², արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ**: Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ **արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ**,

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2020 թվականի մարտի 26-ի *Gaspari v. Armenia* գործով վճիռը, գանգատ թիվ 6822/10:

վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցներն ընդունելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար լուսմների հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ **դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»**,

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն¹,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում**: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած **այն հիմնական**

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelian v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, 202-204-րդ կետեր, *Murtazaliyeva v. Russia* գործով 2018 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 36658/05, 139-159-րդ կետեր:

փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեն յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները¹:

15.2. Վերոգրյալ դրույթները կիրառելով քննարկվող գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է. «(...) Ըստ երևույթին, դիմումատուի դեմ քրեական գործով վարույթն իրականացվել է նույն կերպ: Քրեական գործը, որը հարուցվել է դիմումատուի դեմ, որին [Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի] գործի դիմումատուի պես մեղադրանք է առաջադրվել Ազատության հրապարակում հավաքի հետ կապված որոշ գործողություններ ենթադրաբար կատարելու համար, հիմնված է եղել բացառապես ոստիկանության երկու ծառայողների ցուցմունքների վրա, որոնք, ինչպես պարզել են ներպետական դատարանները, ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, և բացի այդ, նրանց հայտարարությունները պարունակել են անհամապատասխանություններ: Դիմումատուի՝ տեսագրությունն ընդունելու և վկաներ կանչելու պահանջները, որոնք եղել են բավարար հիմնավորված և վերաբերելի իրեն առաջադրված մեղադրանքին, նույնիսկ չեն ուսումնասիրվել գործը քննող դատարանի կողմից՝ խախտելով ներպետական դատավարական նորմերը, ինչպես հետագայում հասարակվել է Վերաքննիչ դատարանի կողմից (...): Ճիշտ է, որ հետագայում Վերաքննիչ դատարանը քննել է այդ պահանջները և նույնիսկ ուսումնասիրման համար ընդունել է փյույակ տեսագրությունը: Այնուամենայնիվ, հարց է առաջանում, թե արդյոք դրանով շփոթվել են առաջին արյանի վարույթի թերությունները: Առաջինը, ինչ վերաբերում է տեսագրությունն ընդունելու պահանջին, պարզ է դառնում, որ Վերաքննիչ դատարանը, *a priori* (նախապես), դատական քննության շրջանակներում այդ պահանջի վերաբերյալ որոշում չկայացնելը դիտարկել է որպես զուր դատավարական թերություն, որը որևէ կերպ չի ազդում գործը քննող դատարանի ըստ էության կատարված եզրահանգումների վրա (...): Հերևարար պարզ է դառնում, որ Վերաքննիչ դատարանի կողմից այդ թերության արուգումը կրել է զուր ձևական բնույթ, և ըստ երևույթին, պարզաձև ուշադրություն չի դարձվել այդ ապացույցին: Երկրորդ, ինչ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76204/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

վերաբերում է վկաներ կանչելու պահանջին, ապա պահանջը մերժվել է Վերաքննիչ դատարանի կողմից՝ առանց բավարար և համոզիչ պարճառարանության՝ հարկապես հաշվի առնելով այն փաստը, որ վկաներից մեկը, որին դիմումատուին ցանկացել էր կանչել, ենթադրաբար կարող էր ցուցմունք տալ ոչ միայն դիմումատուին ուստիականության մեկ բաժնից մյուսը տեղափոխելու հանգամանքների վերաբերյալ, այլ նաև նրան Կենտրոնի ուստիականության բաժին «բերման ենթարկելու» հանգամանքների վերաբերյալ, ինչն ուղղակիորեն վերաբերելի էր նրան առաջադրված մեղադրանքին (...):

(...) Հերևաբար Դատարանը համարում է, որ ներպետական դատարանները մեղադրանքների հիմքում ընկած այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, որոնք, ավելին, հիմնված են եղել հակասական ապացույցների վրա, չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ուստիականության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք քրեական հետապնդման համար միակ վկաներն էին և սկզբից դեր էին ունեցել վիճարկվող իրադարձություններում: Կարելի է ասել, որ իրադարձությունների վերաբերյալ ուստիականության կողմից ներկայացված տարբերակն անվերապահորեն հաստատվելը, դիմումատուի փաստարկներին պարզաճ կերպով չհանդարտանալը և պաշտպանության կողմի վկաներին քննելու հարցում մերժելը՝ առանց պարզաճ կերպով ուսումնասիրելու նրանց ցուցմունքների վերաբերելիությունը, հանգեցրել են պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակման, ինչը հակասում է արդարացի լսումների երաշխիքներին (...):

(...) Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուի դեմ հարուցված քրեական վարույթն ընդհանուր առմամբ իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդարացի լսումների իրավունքի խախտմամբ (...):»¹:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Վ.Գասպարիին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, մասնակցելով ՀՀ Նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի և նրա համախոհների կողմից 2008 թվականի փետրվարի 20-ից կազմակերպված և իրականացված՝ մայրաքաղաքի կենսագործունեությունը, երթևեկությունը, պետական և մասնավոր հիմնարկների բնականոն գործունեությունը, ազգաբնակչության հանգիստն ու անդորրը խանգարող ապօրինի հրապարակային միջոցառումներին՝ զանգվածային ցույցերին, շուրջօրյա

¹ Տե՛ս *Gaspari v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2020 թվականի մարտի 26-ի վճիռը, զանգատ թիվ 6822/10, կետեր 35-37:

հանրահավաքներին, միտինգներին, պիկետներին և նստացույցներին, 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 08:30-ի սահմաններում, երբ իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներ՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ոստիկաններ Էդգար Պետրոսյանը և Գարիկ Հովանյանն «Ազատության» հրապարակի մոտակայքում հերթական անգամ նրան նախազգուշացրել և պահանջել են դադարեցնել անօրինական միջոցառման մասնակցելը, Վարուգեզ Գասպարին, չենթարկվելով նրանց օրինական պահանջներին, կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել Էդգար Պետրոսյանի և Գարիկ Հովանյանի նկատմամբ ու նաև տվել բռնություն գործադրելու սպառնալիքներ¹,

- Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում, Վ.Գասպարիի պաշտպան Մ.Շուշանյանը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Հովհաննես Ղազարյանին, Զարուհի Փոստանջյանին, Սեդա Մելիքյանին և Արմեն Մարտիրոսյանին, ինչը դատարանի կողմից թողնվել է առանց քննության²,

- Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվազորներ Էդգար Պետրոսյանի և Գարիկ Հովանյանի ցուցմունքները, ինչպես նաև անձին ոստիկանության բաժնի բերման ենթարկելու և անձնական զննություն կատարելու մասին Է.Պետրոսյանի և Գ.Հովանյանի արձանագրություններն ու Է.Պետրոսյանի զեկուցագիրը³,

- Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է, որ գործով հավաքված և իր որոշման մեջ թվարկված ապացույցները ենթարկելով բազմակողմանի ու օբյեկտիվ ստուգման՝ հանգել է այն հետևության, որ դրանք հավաստի են և փոխկապակցված, հաստատում են Վ.Գասպարիի կողմից մեղաազգրված արարքը կատարելն ու նրա մեղավորությունը տվյալ հանցանքը կատարելու մեջ: Վերաքննիչ դատարանը քննության առնելով պաշտպանության կողմի միջնորդությունը՝ վկաներ՝ Զարուհի Փոստանջյանին, Արմեն Մարտիրոսյանին, Սեդա Մելիքյանին, Հովհաննես Ղազարյանին դատարան հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ, գտել է, որ այդպիսի անհրաժեշտություն չկա, քանի որ Վ.Գասպարիին բերման ենթարկելու և նրան ոստիկանության Արաբկիրի բաժնի տեղափոխելու հետ կապված հանգամանքները պարզվել են բազմաթիվ տվյալներով,

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 9.1-րդ կետը:

դատարանում հետազոտված տեսասկավառակով, ամբաստանյալ Վ.Գասպարիի հայտարարություններով¹:

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Գասպարին ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Վ.Գասպարիի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովել *Գասպարին ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները Վ.Գասպարիի մեղքը հիմնավորող ապացուցողական գամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների վստահելիությունն ու արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Վ.Գասպարիի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակից՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազորներ Է.Պետրոսյանի և Գ.Հովանյանի ցուցմունքներն են:

Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Վ.Գասպարիին մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում: Ավելին, ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Գասպարին ընդդեմ Հայաստանի* գործով վճռում, պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Այսինքն՝ բողոքաբերների փաստարկներն այն մասին, որ պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և

¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

առարկելու դրանց օգտագործման դեմ, ընդունելի են Վճռաբեկ դատարանի համար, քանի որ պաշտպանական կողմին հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու մի շարք վկաների և ապացուցողական զանգվածում ներառելու նրանց ցուցմունքները՝ առանց պատշաճ կերպով ուսումնասիրելու նրանց ցուցմունքների վերաբերելիությունը, ինչը հանգեցրել է պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակման:

Այլ կերպ, ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն անվերապահորեն ընդունելը՝ առանց պաշտպանական կողմին լիարժեք հնարավորություն ընձեռելու մրցակցային դատավարության պայմաններում արդյունավետորեն վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքների արժանահավատությունը, հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման¹:

Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Գասպարին ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը նոր հանգամանք է Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 5-ի որոշումը վերանայելու համար:

18. Միևնույն ժամանակ, հիմնարար խախտման հիմքով ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի սահմաններում, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ բողոքաբերի՝ սույն որոշման 11-րդ կետում ներկայացված փաստարկին:

18.1. ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝
«Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

(...)

3) իր պաշտպանությունը նախապարտավորելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք (...):»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրտեղծված անկասի ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:*

¹ Տե՛ս *Matevosyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 61730/08, 41-րդ կետ, *mutatis mutandis*, *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար (...):

18.2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի դրույթն ընդգծում է առաջադրվող «մեղադրանքի» մասին մեղադրյալին ծանուցելուն հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Հանցագործության վերաբերյալ մանրամասն տվյալները կարևոր դեր են խաղում քրեական դատավարությունում այն իմաստով, որ դրանց հայտարարման պահից է անձը համարվում պաշտոնապես ծանուցված նրա դեմ առաջ քաշված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելու իրավունքը պետք է դիտել պաշտպանության նախապատրաստության իրավունքի լույսի ներքո¹:

18.3. Վճռաբեկ դատարանը *Ֆևրզ Ճադարյանի և մյուսների* գործով որոշման մեջ մեղադրանքի ձևակերպումը դիտարկելով որպես արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման միջոց՝ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) /Դ/րանում, բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ: (...)

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կդառնա մեղադրյալին պատշաճ կերպով

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Seliverstov v. Russia* գործով 2008 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 19692/02, կետեր 16-17:

իրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դատավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայագրկման»¹:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Գասպարիին առաջադրված մեղադրանքի բովանդակությունը չի համապատասխանում «մեղադրանքի» վերաբերյալ միջազգային և ներպետական պահանջներին ու Վճռաբեկ դատարանի կողմից *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով որոշմամբ սահմանված չափանիշներին: Մասնավորապես, մեղադրանքի ձևակերպումը պարունակում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի դիսպոզիցիայի նկարագրությունը: Մեղադրանքի մեջ նշված չեն այնպիսի փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն հիմնավորված կերպով եզրահանգելու, որ Վ.Գասպարիի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասին, այն է՝ մեղադրանքի բովանդակությունից հնարավոր չէ պատկերացում կազմել, թե Վ.Գասպարիին կոնկրետ ի՞նչ գործողություններ է կատարել ոստիկանության աշխատակիցների նկատմամբ, ինչպե՞ս են դրանք դրսևորվել, ինչպիսի՞ վնաս է պատճառվել դրանց արդյունքում, ու ինչպե՞ս է որոշվել, որ Վ.Գասպարիի կողմից գործադրվել է հենց կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Վ.Գասպարիին առաջադրված մեղադրանքում մանրամասնորեն և հստակ չեն նշվել արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական տվյալները՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրանքի այդպիսի անորոշ ձևակերպման պայմաններում, խախտվել է քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքը՝ տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքի մասին, որպիսի պայմաններում չի ապահովվել նաև անձի պաշտպանության իրավունքի իրացումը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է արդար դատաքննության իրավունքի հիմնարար խախտման:

Այսինքն՝ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ,

¹ Տե՛ս *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 21-րդ կետը:

որոնց արդյունքում ընդունված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

20. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առկա են Վ.Գասպարիի վերաբերյալ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բացառիկ վերանայման հիմքեր:

21. Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս վերանայելու Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 5-ի որոշումը և բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Վ.Գասպարիի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և քրեական գործի վարույթը կարճելու՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

22. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի և Վարտգեզ Լիվանի Գասպարիի ներկայացուցիչ՝ փաստաբան Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքները բավարարել: Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 5-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վարտգեզ Լիվանի Գասպարիի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 10-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի մարտի 30-ի որոշումը բեկանել:

3. Վարտգեզ Լիվանի Գասպարիին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարից հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

56. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0072/01/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի նոյեմբերի 12-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 18-ի որոշման դեմ մեղադրյալ Հայկազ Վաչագանի Մարտիրոսյանի պաշտպան Ս.Ամիրխանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի հունվարի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 19100118 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հունվարի 4-ի որոշմամբ Հայկազ Վաչագանի Մարտիրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 5-ի որոշմամբ Հայկազ Մարտիրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով, որը նույն դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով:

2018 թվականի փետրվարի 26-ին ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 19101018 քրեական գործը:

2018 թվականի մարտի 16-ին ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 19101318 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մարտի 16-ի որոշմամբ թիվ 19100118 և 19101318 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում և նախաքննությունը շարունակվել է 19100118 համարով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 27-ի, 2018 թվականի հունիսի 26-ի, 2018 թվականի օգոստոսի 23-ի, 2018 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումներով Հ.Մարտիրոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը յուրաքանչյուր անգամ երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի նոյեմբերի 20-ի, 2018 թվականի նոյեմբերի 21-ի և 2018 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումներով Հ.Մարտիրոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, ու նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 1-ին մասով և 325-րդ հոդվածի 1-ին մասով:

2. 2018 թվականի դեկտեմբերի 18-ին քրեական գործն ըստ մեղադրանքի Հ.Մարտիրոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 1-ին մասով և 325-րդ հոդվածի 1-ին մասով ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

3. Առաջին ատյանի դատարանը, 2018 թվականի դեկտեմբերի 25-ին, քրեական գործը դատական քննության նախապատրաստելու փուլում, քննության առնելով Հ.Մարտիրոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու կամ փոխելու, ինչպես նաև դրա հիմնավորվածության հարցը, այն թողել է անփոփոխ՝ միաժամանակ մերժելով կալանավորումը գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը:

4. Հ.Մարտիրոսյանի պաշտպան Ս.Ամիրխանյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

5. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Հ.Մարտիրոսյանի պաշտպան Ս.Ամիրխանյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 21-ի որոշմամբ բողոքն ընդունվել է

վարույթ¹: Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի դեկտեմբերի 25-ի որոշման եզրափակիչ մասում նշել է. «(...) Հայկազ Վաչագանի Մարտիրոսյանի նկարումամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ (...)»²:

7. Վերաքննիչ դատարանը, բողոքն առանց քննության թողնելու մասին որոշմամբ վկայակոչելով *Մնուշ Ղավայյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԲԲԴ/0299/01/08 որոշումը, արձանագրել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի տառացի մեկնարանման արդյունքում սրացվում է, որ դատական կարգով բողոքարկման ենթակա են միայն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումները: Քրեադատավարական օրենքը որևէ նշում չի պարունակում որպես խափանման միջոց ընտրված կալանքն անփոփոխ թողնելու մասին որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության մասին (...):

(...) Քրեադատավարական օրենքը որևէ դրույթ չի պարունակում որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գործի քննության փլյալ փուլում անփոփոխ թողնելու մասին դատարանի որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության մասին, մինչդեռ սույն գործով բողոքարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ Հայկազ Մարտիրոսյանի նկարումամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը անփոփոխ թողնելու մասին որոշումը, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով չի կարող բողոքարկվել ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան, այսինքն՝ փլյալ դեպքում բողոքարկվել է այնպիսի դատավարական ակտ, որն

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

² Տե՛ս նյութեր, հավելված, թերթ 16:

ենթակա չէ բողոքարկման, ինչը հիմք է պաշտպանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու համար (...)¹:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, Հ.Մարտիրոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին որոշում կայացնելով, դուրս է եկել քրեադատավարական օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից և կայացրել է իրավական կարգավորումներից դուրս, ոչ օրինական և ոչ իրավաչափ որոշում:

Ըստ բողոքաբերի՝ գործի դատական քննության նախապատրաստական փուլում քրեադատավարական օրենսգրքով նախատեսված չեն կալանք խափանման միջոցի կիրառման առավելագույն ժամկետներ, ուստի իրավական կարգավորումներից դուրս կայացված ոչ օրինական որոշման արդյունքում Հ.Մարտիրոսյանը 2019 թվականի հունվարի 2-ից առանց ժամկետի սահմանափակման անօրինական է պահվում անազատության մեջ, որի կապակցությամբ Եվրոպական դատարանը կայացրել է հստակ դիրքորոշում:

Բողոքաբերը նշել է, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի իրեն ազատությունից զրկելու որոշումը բողոքարկելու իրավունք, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, ներկայացված վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության: Նման պայմաններում, բողոքաբերը հանգել է հետևության, որ ատկա է Հ.Մարտիրոսյանի իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Ըստ բողոքաբերի՝ Հ.Մարտիրոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 25-ի՝ իրավական կարգավորումներից դուրս կայացրած որոշումը, և այդ որոշումն ըստ էության վերաքննության կարգով վիճարկելու հնարավորությունը սահմանափակող՝ պաշտպանի ներկայացրած բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի որոշումը չեն կարող իրավաչափ և օրինական համարվել:

9. Վերոշարադրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 18-ի՝

¹ Տե՛ս նյութեր, հավելված, թերթեր 62-63:

որոշումը, կայացնել նոր դատական ակտ, և Հ.Մարտիրոսյանին անհապաղ ազատ արձակել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից Հ.Մարտիրոսյանի պաշտպան Ս.Ամիրխանյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ այն դեպքում, երբ բողոքարկվել է գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին որոշումը:

11. ՀՀ սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՌ-1421 որոշմամբ անդրադառնալով գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննության արդյունքում կայացված որոշման բողոքարկման հնարավորությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«(...) [Գ]ործը դատական քննության նախապատրաստելու փուլում վիճարկվող իրավակարգավորման ուժով մեղադրյալի նկատմամբ անձնական ազատության իրավունքի սահմանափակում նախատեսող խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունվում է որոշում (Օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մաս), որն, ի թիվս այլնի, Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետի, ինչպես նաև Օրենսգրքի 73-րդ հոդվածի 15-րդ կետի ուժով կարող է բողոքարկվել մեղադրյալի, նրա պաշտպանի կողմից (...): Ուարիև, Սահմանադրական դատարանը գրնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումը խնդրահարույց չէ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համարեքսրում այն առումով, որ Օրենսգրքում, մասնավորապես, առկա են կալանքի՝ որպես խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունված որոշման դատական բողոքարկման (սրուզման) օրենսդրական երաշխիքներ (...)»¹:

12. ՀՀ սահմանադրական դատարանի՝ նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՌ-1421 որոշման 4.2-րդ կետը:

վերանայելով *Անուշ Ղափայանի* գործով արտահայտած իրավական դիրքորոշումները¹ *Գարիկ Մարգարյանի* գործով փաստել է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու (այդ թվում նաև՝ կալանավորումը վերացնելու կամ այլ խափանման միջոցով փոխարինելու միջնորդությունը մերժելու) մասին որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով²:

13. ՀՀ սահմանադրական դատարանը, 2019 թվականի նոյեմբերի 6-ի թիվ ՍԴՌ-1487 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Ելնելով մարդու հիմնական իրավունքների և ազատությունների աստիճական գործողության սահմանադրական պահանջից, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, մինչև Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մտրեցմամբ, որ գործի դատական քննության փուլում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումները ենթակա են վերաքննության կարգով անմիջական բողոքարկման՝ առաջին պայմանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու որոշումների բողոքարկման համար Օրենսգրքով սահմանված կարգով՝ առաջնորդվելով անձնական ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրացման ապահովման անհրաժեշտությամբ (...)»³ :

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը գործը դատական քննության նախապատրաստելու փուլում, որոշում է կայացրել Հ.Մարտիրոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին⁴: Նշված որոշման դեմ պաշտպան Ս.Ամիրխանյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանը թողել է առանց քննության՝ այն պատճառաբանությամբ, որ պաշտպանի կողմից վերաքննության կարգով բողոքարկվել է որոշում, որը

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Անուշ Ղափայանի* գործով 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԶԲԴ/0299/01/08 որոշման 21-րդ կետը:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարիկ Մարգարյանի* գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԵԿԴ/0294/01/17 որոշման 14-րդ կետը:

³ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի թիվ ՍԴՌ-1487 որոշման 4.6.-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածով սահմանված՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա ակտերի ցանկում¹:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 10-13-րդ կետերում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի կողմից Հ.Մարտիրոսյանի պաշտպան Ս.Ամիրխանյանի ներկայացրած վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ այն դեպքում, երբ բողոքարկվել է գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ կալանավորումն անփոփոխ թողնելու մասին որոշումը:

16. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի պահանջի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առնի Հ.Մարտիրոսյանի պաշտպան Ս.Ամիրխանյանի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Հայկազ Վաչագանի Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 18-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

57.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0363/01/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՆԻՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի նոյեմբերի 13-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Արտաշես Կարենի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 5-ի որոշման դեմ պաշտպան Լ.Պինգուլյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Յ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի փետրվարի 12-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11161019 քրեական գործը:

2019 թվականի փետրվարի 14-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ս.Ավագյանի որոշմամբ թիվ 11161019 քրեական գործն ընդունվել է վարույթ:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մարտի 11-ի որոշմամբ անչափահաս Արտաշես Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ծնողի հսկողությանը հանձնելը:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մարտի 15-ի որոշմամբ Ա.Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 29-ի որոշումներով անհայտ անձի կողմից Ա.Հակոբյանին «մարիխուանա» տեսակի թմրամիջոց ապօրինի իրացնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11110719 քրեական գործը և միացվել թիվ 11161019 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 29-ի որոշմամբ 2.74 գրամ հաստատուն չոր քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցը և 3 (երեք) հատ ապակյա գլանները ճանաչվել են իրեղեն ապացույց:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 29-ի որոշմամբ Արտաշես Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ թիվ 11161019 քրեական գործից անջատվել են ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով՝ անհայտ անձի վերաբերյալ քրեական գործի նյութերը և անջատված քրեական գործին շնորհվել է 11110719 համարը:

2019 թվականի հունիսի 4-ին Արտաշես Հակոբյանի վերաբերյալ թիվ 11161019 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

1.1. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 12-ի որոշմամբ Ա.Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ծողի հսկողությանը հանձնելը, փոփոխվել է և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չեռանալու մասին ստորագրությունը:

2. Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, 2019 թվականի հուլիսի 9-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Հակոբյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման՝ 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Առաջին ատյանի դատարանի դատավճռով որոշվել է նաև իրեղեն ապացույց ճանաչված 2.74 գրամ հաստատուն չոր քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի տնօրինման հարցին անդրադառնալ թիվ 11110719 քրեական գործով վերջնական որոշում կայացնելիս:

3. Ամբաստանյալ Ա.Հակոբյանի պաշտպան Լ.Պինգույցյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 9-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպան Լ.Պինգուլցյանը վճարելի բողոք է բերել, որը Վճարելի դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճարելի դատարանը 2020 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ սահմանել է վճարելի բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 9-ի դատավճռով Արտաշես Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով, այն բանի համար, որ նա «(...) առանց իրացնելու նպատակի՝ անձնական գործածման համար, քննությամբ չչարզված ժամանակահատվածում, ինքնությունը չչարզված անձից ապօրինի ձեռք է բերել և իր մոտ ապօրինի պահել է զգալի չափերով՝ 2.74 գրամ հասարարուն չոր քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որը 2019 թվականի փետրվարի 6-ին ժամը 14:00-ին նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է ՀՀ ոստիկանության Կ.Դեմիրճյանի անվան Մեյրոբյուրլիսի պահպանության բաժնի աշխատակիցների կողմից»¹:

6. Ամբաստանյալ Արտաշես Հակոբյանը ծնվել է 2001 թվականի ապրիլի 8-ին²:

7. Ամբաստանյալ Ա.Հակոբյանը չի առարկել, որպեսզի ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի և թիվ ԵԴ/0363/01/19 քրեական գործով վարույթը կարճվի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով³:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 5-ի որոշումն ուղարկվել է պաշտպան Լ.Պինգուլցյանին 2020 թվականի փետրվարի 1-ով թվագրված ուղեկցական գրությամբ և վերջինս այն ստացել է 2020 թվականի փետրվարի 12-ին⁴:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 44-48:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 9, հատոր 2, թերթեր 44-48:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 11:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 107-108:

9. Ըստ բողոքաբերի՝ սույն քրեական գործով առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ ամբաստանյալ Ա.Հակոբյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցել է, և Վերաքննիչ դատարանի որոշման ի կատար ածումը կհանգեցնի ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքի խախտման:

Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ Ա.Հակոբյանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարել է մինչև տասնութ տարին լրանալը՝ 2019 թվականի փետրվարի 6-ին, հետևաբար Ա.Հակոբյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրացել է 2020 թվականի փետրվարի 6-ին: Միաժամանակ, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը մինչև 2020 թվականի փետրվարի 6-ը կողմերին դեռևս տրամադրված չի եղել և ինքն այն ստացել է 2020 թվականի փետրվարի 12-ին:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 9-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը բեկանել, Արտաշես Հակոբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, ամբաստանյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Ա.Հակոբյանի նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե (...)*

6) անցել են վաղեմության ժամկետները, (...)

5. Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.*

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից. (...)

2. *Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...)*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածի համաձայն՝ *«Մինչև տասնութ տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պարասխանաարվությունից կամ պարժից ազատելիս սույն օրենսգրքի 75-րդ և 81-րդ հոդվածներով նախատեսված վաղեմության ժամկետները համապարասխանաբար կրճատվում են կիսով չափ»*:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը (...)*»:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Այդ հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արամ Սարգսյանի* գործով որոշմամբ, արձանագրելով՝ *«(...) [Թ]եև [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման»*¹:

15. Մինևսույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝

¹ Տե՛ս *Արամ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը:

սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին աստիճանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում¹:

16. Վերոգրյալի հիման վրա, անդրադառնալով վաղեմության ժամկետն անցնելու հիմքով ամբաստանյալ Ա.Հակոբյանին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմեծ (հոգեներգործուն) նյութեր սպորինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝

պարծվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրվում՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված արարքը ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցագործություն է: Հետևաբար այն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարվելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածը սահմանում է, որ մինչև տասնութ տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետները կրճատվում են կիսով չափ:

Վերոնշյալից հետևում է, որ մինչև տասնութ տարին լրանալը անձի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարելու դեպքում, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկու տարի

¹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի մանրամասն վերլուծությունը տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Անահիտ Մաղաթեյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10, Սիրաժ Դամբարյանի և այլոց գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11, Հրանտ Մազմանյանի գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշումներում:

վաղեմության ժամկետը ՀՀ քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածի ուժով կրճատվում է կիսով չափ՝ կազմելով մեկ տարի:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքն ավարտվել է 2019 թվականի փետրվարի 6-ին¹: ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով որակված՝ Ա.Հակոբյանին մեղսագրված արարքը կատարելու մեջ վերջինիս մեղավորությունը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է 2019 թվականի հուլիսի 9-ին², որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել 2019 թվականի նոյեմբերի 5-ին³: Նշված որոշումը ուղարկվել է պաշտպան Լ.Պինգույցյանին 2020 թվականի փետրվարի 1-ով թվագրված ուղեկցական գրությամբ և վերջինս այն ստացել է 2020 թվականի փետրվարի 12-ին⁴: Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպան Լ.Պինգույցյանը 2020 թվականի մարտի 9-ին բերել է վճռաբեկ բողոք⁵, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ⁶:

18. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-16-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և արտահայտված դիրքորոշումների վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Հակոբյանին մեղսագրված ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունն ավարտվել է 2019 թվականի փետրվարի 6-ին, երբ նրա 18 տարին լրացած չի եղել⁷:

Հետևաբար, Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ և 95-րդ հոդվածների կանոններով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության մեկ տարի ժամկետը լրացել է 2020 թվականի փետրվարի 6-ին: Մինչդեռ, այդ օրվա դրությամբ Ա.Հակոբյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել:

19. Նման պայմաններում, Արտաշես Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցել է:

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 13:

⁶ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

20. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 9-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը պետք է բեկանել, Ա.Հակոբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ Արտաշես Կարենի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը պետք է վերացնել, իսկ իրեղեն ապացույց ճանաչված՝ 2.74 գրամ հաստատուն չոր քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցը, 3 (երեք) հատ ապակյա գլանները՝ թողնել քրեական գործում և դրանց վերջնական տնօրինման հարցին անդրադառնալ թիվ 11110719 քրեական գործով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արտաշես Կարենի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 9-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը բեկանել, Արտաշես Կարենի Հակոբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ, և քրեական գործի վարույթը կարճել:

2. Արտաշես Կարենի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

3. Իրեղեն ապացույց ճանաչված՝ 2.74 գրամ հաստատուն չոր քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցը ու 3 (երեք) հատ ապակյա գլանները

թողնել քրեական գործում և դրանց վերջնական տնօրինման հարցին անդրադառնալ թիվ 11110719 քրեական գործով:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

58. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0201/01/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի նոյեմբերի 20-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 9-ի որոշման դեմ ամբաստանյալ Ամիր Մոհամմադի Բորումանդֆարի պաշտպան Թ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի փետրվարի 15-ին ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում հարուցվել է թիվ 58202318 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին և 34-329-րդ հոդվածի 1-ին մասերով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

2018 թվականի փետրվարի 15-ին Ամիր Մոհամմադի Բորումանդֆարը ձերբակալվել է:

2018 թվականի փետրվարի 17-ին Ա.Բորումանդֆարն ազատվել է արգելանքից, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չիեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի փետրվարի 21-ի որոշմամբ Ա.Բորումանդֆարը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 34-329-րդ հոդվածի 1-ին մասով:

2018 թվականի ապրիլի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 26-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Բորումանդֆարը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 34-329-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով Ա.Բորումանդֆարը դատապարտվել է ազատազրկման՝ 3 (երեք) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 34-329-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ 3 (երեք) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով, Ա.Բորումանդֆարի նկատմամբ պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների կիրառմամբ, Ա.Բորումանդֆարի նկատմամբ նշանակված պատժին հաշվակցվել է անազատության մեջ գտնվելու 2 (երկու) օրը և նրան վերջնական թողնվել է կրելու ազատազրկում՝ 5 (հինգ) ամիս 28 (քսանութ) օր ժամկետով: Կիրառվել է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և Ա.Բորումանդֆարին ազատվել է պատժից: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Ռոբերտ Հայրիկի Քեշիշին:

3. Ամբաստանյալ Ա.Բորումանդֆարի պաշտպան Թ.Բաղդասարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի հունվարի 9-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 26-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

Վերոգրյալ որոշման դեմ 2020 թվականի մայիսի 4-ին վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Բորումանդֆարի պաշտպան Թ.Բաղդասարյանը:

4. Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Բորումանդֆարի պաշտպան Թ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2020

թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամիր Մոհամմադի Բորումանդֆարին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին և 34-329-րդ հոդվածի 1-ին մասերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «/Ն/ա, բնակվելով Իրանում և նպարակ ունենալով մշրական բնակություն հաստատել Կանադայում, ընկերոջ՝ Ամին Քարամիի միջոցով հեռահուսակապ է հաստատել ՀՀ-ում բնակվող ԻԻՀ քաղաքացի Ռոբերտ Քեշիշիի հետ, ով սրանձնել է յուրաքանչյուր անձի համար 17.000-ական ԱՄՆ դոլարի դիմաց ձեռք բերել նրանց տվյալներով եվրոպական որևէ երկրի անձնագրեր և ուղևորության փաստաթղթեր, իսկ լրացուցիչ 2000-ական ԱՄՆ դոլարի դիմաց նաև մկրտության վկայագրեր, որպեսզի վերջիններս Կանադայում հիմքեր ունենան որպես փախարականներ հանձնվելու համար: Նշված գումարից 5000-ական ԱՄՆ դոլար Ամին Քարամին և Ամիր Բորումանդֆարը բանկային փոխանցումով ուղարկել են Ռոբերտ Քեշիշիի նշած իրանական բանկային հաշվին:

06.02.2018թ.-ին Ամիր Բորումանդֆարն Ամին Քարամիի հետ ժամանել են Երևան, որտեղ Ռոբերտ Քեշիշիին են վճարել գումարի մնացած մասը և 14.02.2018թ-ին սրացել իրենց տվյալներով Նորվեգիայի քաղաքացիների թիվ 35500539 և թիվ 52150352 կեղծ անձնագրերը, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արագածոտնի թեմի կողմից տրված մկրտության կեղծ վկայագրեր, ինչպես նաև Երևան-Փարիզ-Բեյզրադ չվերթի ավիատոմսեր՝ հրահանգավորվելով «Զվարթնոց» օդանավակայանի ուղևորների հաշվառման ծառայությանը և օդանավակայանի անվտանգությանը ներկայացնել կեղծ նորվեգական անձնագրերը, իսկ սահմանային վերահսկողությունն անցնելիս իսկական իրանական անձնագրերը:

15.02.2018թ-ին Ամիր Բորումանդֆարն Ամին Քարամիի հետ մեկնել է Երևանի «Զվարթնոց» օդանավակայան, որտեղ օդանավակայանի «Զվարթնոց Հենդլինգ» ՓԲ ընկերության ուղևորների հաշվառման ծառայության աշխատակիցներին ներկայացնելով իր տվյալներով կազմված Նորվեգիայի քաղաքացու 52150352 համարի ակնհայտ կեղծ անձնագիրը, հաշվառվել է Երևան-Փարիզ չվերթի համար, սակայն չի կարողացել կեղծ անձնագրով հարել ՀՀ պետական սահմանն իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ սահմանային վերահսկողություն

անցնելիս կեղծիքը բացահայտվել է ՀՀ ԿԱ ԱԱԾ ՍԶ զինծառայողների կողմից, իսկ ՀՀ-ից ելքը՝ արգելվել»¹:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն. «(...) [Ա]մբաստանյալ Ամիր Մոհամմադի Բորումանդֆարի նկատմամբ նշանակվող պատժի տեսակի հարցը քննարկելիս Դատարանը հաշվի է առնում, որ վերջինս երիտասարդ է, նախկինում ՀՀ-ում դատապարտված կամ այլ կերպ արատավորված չի եղել, զղջացել է կատարած արարքի համար: Դատարանը հաշվի է առնում նաև գործի հանգամանքներն ու ամբաստանյալի դերը կատարված հանցագործության մեջ, այն որ հանցագործության կատարման նախաձեռնությունը պատկանել է վերջինիս: (...) Վերոգրյալի հիման վրա, քննարկելով ամբաստանյալ Ամիր Մոհամմադի Բորումանդֆարու նկատմամբ նշանակվող պատժի տեսակի հարցը և հաշվի առնելով գործի հանգամանքներն, ամբաստանյալի անձը, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղը, դիրքը և բնութագիրը, հանցագործության բնույթն ու վրանգավորության աստիճանը, ինչպես նաև հաշվի առնելով հանցագործության կատարման մեջ նրա դերը, գործով ծանրացնող հանգամանքների բացակայության հանգամանքը, բացի այդ՝ իր հայեցողության շրջանակում ղեկավարվելով պատժի նշանակման օրինականության, արդարության, պարասխանատվության անհատականացման և մարդասիրության սկզբունքներով, (...) Դատարանը գտնում է, որ Ա.Բորումանդֆարու նկատմամբ պետք է ազատազրկման ձևով պատիժ նշանակել:

(...) Դատարանն արձանագրում է, որ քրեական գործի նյութերում բացակայում են Ամիր Բորումանդֆարու նկատմամբ համաներման մասին օրենքը կիրառելուն խոչընդոտող հանգամանքները (...)»²:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...)

ամբաստանյալ Ամիր Բորումանդֆարիի նկատմամբ պատժի տեսակ և պատժաչափ ընտրելիս Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ ամբաստանյալը երիտասարդ է, նախկինում ՀՀ-ում դատապարտված կամ այլ կերպ արատավորված չի եղել, զղջացել է կատարած արարքի համար: Դրա հետ մեկտեղ, հաշվի է առել գործի փաստական հանգամանքները, ամբաստանյալի նախաձեռնողականությունն ու դրանով պայմանավորված առավել ակտիվ դերակատարությունը հանցագործությունների կատարման մեջ, ինչպես նաև նրա կատարած կոնկրետ հանցագործություններից յուրաքանչյուրի բնույթը և հանրության համար վրանգավորության աստիճանը, որի արդյունքում նշանակել է տվյալ հանցագործությունների

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 221-222:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 121-122:

համար օրենսդրի կողմից սահմանված ազատազրկում պատժարեսակի նվազագույնի չափով պարիժ, որպիսին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի կարող դիտարկվել ակնհայտ խիստ լինելու հիմքով անարդարացի:

Ինչ վերաբերում է ամբաստանյալ Ամիր Բորումանդֆարիի նկարմամբ մինչ Համաներման մասին օրենքի կիրառումը նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու հարցն Առաջին արյանի դատարանի կողմից քննարկված չլինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկին, ապա վերջինս ոչ միայն չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 7-8-րդ կետերի և Համաներման մասին օրենքի դրույթների համադրված վերլուծությունից, այլ նաև ինքնին առարկայազուրկ է:

Վերոգրյալի ամիտումամբ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Ամիր Բորումանդֆարիի նկարմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-329-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների համակցությամբ 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկում պարիժ նշանակելով և այդ պատժից Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ ազատելով Առաջին արյանի դատարանը թույլ չի տրվել այնպիսի դատական սխալ, որն ի վնաս ամբաստանյալի ազդեցություն է ունեցել կամ կարող էր ազդեցություն ունենալ գործի էլքի վրա: Ուստի Առաջին արյանի դատարանի 2019 թվականի հունիսի 29-ի դատավճիռն ամբաստանյալ Ամիր Բորումանդֆարիի մասով պետք է թողնել անփոփոխ, իսկ պաշտպան Թ.Բաղդասարյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը՝ մերժել»:¹

7.1. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 9-ի որոշման պատճեն ամբաստանյալ Ա.Բորումանդֆարի պաշտպան Թ.Բաղդասարյանին ուղարկվել է 2020 թվականի ապրիլի 22-ին, որը պաշտպանը ստացել է 2020 թվականի ապրիլի 30-ին²:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտումներով: Խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջները, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 41-42:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 86-87:

դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման:

Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ անկախ այն հանգամանքից, որ ցանկացած պարագայում կիրառելի է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքը, պետք է թույլ չտալ նյութական իրավունքի նորմերի խախտում, այն է՝ նվազ խիստ պատժատեսակի առկայության պայմաններում նշանակել առավել խիստ պատիժը և չանդրադառնալ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորությանը:

Հետևաբար, բողոքաբերը հանգել է հետևության, որ իր պաշտպանյալի նկատմամբ պետք է սահմանվեն հոդվածներով նախատեսված նվազ խիստ պատժատեսակները, իսկ ազատագրկման ձևով պատժի նշանակման դեպքում՝ կիրառվեր ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, որից հետո միայն նա պետք է ազատվեր նշանակված պատժից՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթի ուժով:

8.1. Բացի այդ, բողոքաբերը փաստել է, որ թեև ստորադաս դատարանը նշել է, որ ամբաստանյալ՝ Ամիր Բորումանդֆարի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվել նրա անձը բնութագրող տվյալներն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, սակայն ամբողջությամբ, խորությամբ և մանրակրկիտ վերլուծության չի ենթարկել դրանք: Այդ իսկ պատճառով դատարանը պատժատեսակ է ընտրել ազատագրկման ձևով, սակայն ամբաստանյալի նկատմամբ տուգանք պատժատեսակը բավարար էր վերջինիս ուղղելու համար:

Ըստ բողոքաբերի՝ Ա.Բորումանդֆարի նկատմամբ չի կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, որը կիրառելով ևս հնարավոր էր հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է Ամիր Բորումանդֆարի նկատմամբ նշանակված պատժի տեսակի կամ կրման մասով Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 9-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ նշանակելով տուգանքի ձևով պատիժ, ապա «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ ազատել այդ պատժից, իսկ ազատագրկման ձևով պատիժ

նշանակելու դեպքում կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ ազատել նշանակված պատժից:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք ամբաստանյալ Ամիր Բորումանդֆարի նկատմամբ ազատագրկման ձևով պատժի նշանակման վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

11. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով գործը քննելիս և լուծելիս նյութական ու դատավարական իրավունքի նորմերի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ Ամիր Բորումանդֆարի նկատմամբ նշանակված պատժի համաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատման է ենթարկել և հաշվի է առել ամբաստանյալին մեղսագրված հանցագործությունների բնույթն ու վտանգավորության աստիճանը՝ իրավաչափորեն փաստելով, որ դրանք վկայում են ամբաստանյալի անձի և նրան մեղսագրված հանցագործությունների վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին¹:

11.1. Ինչ վերաբերում է բողոք բերած անձի կողմից բարձրացված այն փաստարկներին, որ Ամիր Բորումանդֆարի նկատմամբ պատիժ նշանակելիս ստորադաս դատարաններն ամբողջությամբ, խորությամբ և մանրակրկիտ վերլուծության չեն ենթարկել նրա անձը բնութագրող տվյալներն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն անհիմն է, քանի որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս, հաշվի է առել, որ վերջինս երիտասարդ է, նախկինում Հայաստանի Հանրապետությունում դատապարտված կամ այլ կերպ արատավորված չի եղել, գղջացել է կատարած արարքների համար: Միաժամանակ, Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել կոնկրետ գործի փաստական հանգամանքները, ամբաստանյալի նախաձեռնողականությունն ու դրանով պայմանավորված առավել ակտիվ դերակատարությունը հանցագործությունների կատարման մեջ, ինչպես

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

նաև նրա կատարած կոնկրետ հանցագործություններից յուրաքանչյուրի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, որի արդյունքում նշանակել է տվյալ հանցագործությունների համար օրենսդրի կողմից սահմանված ազատագրկում պատժատեսակի նվազագույնի չափով պատիժ¹:

12. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ամիր Բորումանդֆարի նկատմամբ ազատագրկման ձևով պատժի նշանակման վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր է:

13. Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առերևույթ առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք և կրկնելով նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանները չունեն բացարձակ բնույթ և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլնի, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում²՝ փաստում է, որ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել ամբաստանյալ Ամիր Բորումանդֆարի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով դադարեցնելու հարցը:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Ամիր Բորումանդֆարի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները (...):»

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:*

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Միսիթար Էլոյանի և այլոց վերաբերյալ գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ (...) [կետրում] նշված [հիմքով] գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

16. Վերոգրյալ հոդվածի վերլուծությունից երևում է, որ դրանում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Նշված հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում, քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

16.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Արամ Մարգարյանի գործով որոշման մեջ և արձանագրել, որ «(...) [Թ]եև [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են ինկերտարիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման»¹:

16.2. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը կրկնում է նախկինում արտահայտած իր դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանափակումները չունեն բացարձակ բնույթ, և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլոց, քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում²:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իրավունք վերապահող կամ պարասխանատրությունից ազատող վկայական կամ պաշտոնական փաստաթուղթ կեղծելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք օգրագործելու կամ իրացնելու նպատակով կամ այդպիսի փաստաթուղթ իրացնելը կամ նույն նպատակներով կեղծ կնիքներ, դրոշմներ, ձևաթղթեր, փրանսպորտային

¹ Տե՛ս Արամ Մարգարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Միխիթար Էրոյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ որոշման 14-րդ կետը:

միջոցների հաշվառման համարանիշներ պատրաստելը կամ իրացնելը, ինչպես նաև ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելը՝

պարծվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապարիկից չորսհարյուրապարիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտարկությանը կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...):

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: (...):

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կարարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից»:

18. ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված արարքը դիտարկյալ հանցագործություն է, իսկ դրա համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում երկու տարին, ուստի այն դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հանցավոր արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

19. Քրեական հետապնդումը բացառող քննարկվող հիմքի առնչությամբ Վճռարեկ դատարանը կրկնում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները: Մինևս այն դեպքում, քրեադատավարական

օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով: Այսինքն՝ այն դեպքում, երբ անձը համաձայն չէ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու, իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հետ, նրան պետք է հնարավորություն ընձեռվի դատական քննության փուլում վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում: Մասնավորապես, դատարանը պետք է պարզի, թե արդյո՞ք ամբաստանյալը համաձայն է, որ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: Անձի համաձայնությունը ստանալու դեպքում՝ դատարանը պարտավոր է դադարեցնել նրա նկատմամբ քրեական հետապնդումը, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ պետք է դատական քննությունը շարունակի ընդհանուր կարգով, սակայն դատավճիռ կայացնելիս՝ դադարեցնի անձի նկատմամբ քրեական հետապնդումը: Ընդ որում, երբ անձն արդեն հնարավորություն է ունեցել առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (վերջին դեպքում՝ վճռաբեկ բողոք բերելու միջոցով) վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը, ապա քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս նրա դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը բացակայում է²:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ամիր Բորումանդֆարին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքն ավարտվել է **2018 թվականի փետրվարի 15-ին**: ՀՀ

¹ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ասահիր Սադաթեյյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը, *Սիրաժ Ղամբարյանի և այլոց* գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշումը, *Հրանտ Մազմանյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշումը, *Ֆարիդա Ավագինյանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՎԴ2/0016/01/14 որոշումը, *Ասդրանիկ Գրիգորյանի* գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԴ/0180/01/15 որոշումը:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սիրաժ Ղամբարյանի և այլոց* գործով վերը հիշատակված որոշման 25-րդ կետը:

քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով որակված՝ Ամիր Բորումանդֆարին մեղսագրված արարքը կատարելու մեջ վերջինիս մեղավորությունը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է **2019 թվականի հունիսի 26-ին**¹, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել **2020 թվականի հունվարի 9-ին**²: Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 9-ի որոշման պատճեն ամբաստանյալ Ա.Բորումանդֆարի պաշտպան Թ.Բաղդասարյանին է ուղարկվել **2020 թվականի ապրիլի 22-ին**, որը պաշտպանը ստացել է **2020 թվականի ապրիլի 30-ին**³:

Նշված որոշման դեմ ամբաստանյալ Ամիր Բորումանդֆարի պաշտպանը **2020 թվականի մայիսի 4-ին** բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ **2020 թվականի հոկտեմբերի 15-ի** որոշմամբ ընդունվել է վարույթ⁴:

Վերոշարադրյալից բխում է, որ Ամիր Բորումանդֆարին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքի՝ որպես ոչ մեծ ծանրության հանցանքի համար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը լրանալու օրվա՝ **2020 թվականի փետրվարի 15-ի** դրությամբ վերջինիս նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել:

21. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-19-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ամիր Բորումանդֆարի պաշտպան Թ.Բաղդասարյանի կողմից վճռաբեկ բողոքը ներկայացնելու օրվա՝ 2020 թվականի մայիսի 4-ի դրությամբ Ա.Բորումանդֆարին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն արդեն իսկ անցել է:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև սույն գործով Ա.Բորումանդֆարի նկատմամբ կիրառվել է Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, և վերջինս ազատվել է դատավճռով նշանակված պատժից, սակայն, կոնկրետ գործով Համաներման մասին օրենքի նշված դրույթով անձին պատժից ազատելու և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված՝

¹ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

քրեական հետապնդումը բացառող հանգամանքի՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքերի առկայության պայմաններում, պետք է նախապատվությունը տրվի երկրորդ հիմքին, քանի որ դրա կիրառման իրավական հետևանքներն առավել բարենպաստ են անձի համար: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե Համաներման մասին օրենքի համապատասխան դրույթի կիրառմամբ Ա.Բորումանդֆարին ազատվում է նշանակված պատժից՝ մեղադրական դատավճռի առկայության պայմաններում, ապա վաղեմության ժամկետի հիմքով՝ առհասարակ քրեական պատասխանատվությունից¹:

22. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ամիր Բորումանդֆարի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 34-329-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված՝ 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկումը պետք է թողնել անփոփոխ: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների կիրառմամբ Ա.Բորումանդֆարի նկատմամբ նշանակված պատժին պետք է հաշվակցել վերջինիս անազատության մեջ գտնվելու 2 (երկու) օրը և վերջնական թողնել կրելու ազատազրկում՝ 2 (երկու) ամիս 28 (քսանութ) օր ժամկետով:

Ա.Բորումանդֆարի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և նրան ազատել պատժից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն առարկայազուրկ է համարում անդրադառնալ բողոքաբերի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման փաստարկին²:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ Ամիր Մոհամմադի Բորումանդֆարի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը պետք է վերացնել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Արմենակ Ավագյանի վերաբերյալ գործով 2020 թվականի հունվարի 10-ի թիվ ԿԳ3/0038/01/17 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 8-8.1-րդ կետերը:

օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361.¹-րդ, 403-406-րդ, 415.¹-րդ, 418.¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Ամիր Մոհամմադի Բորումանդֆարի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին սայանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հունիսի 26-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 9-ի որոշումը բեկանել ու փոփոխել:

2. Ամբաստանյալ Ամիր Մոհամմադի Բորումանդֆարի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Ամբաստանյալ Ամիր Մոհամմադի Բորումանդֆարի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-329-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկում պատժին ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների կիրառմամբ՝ հաշվակցել վերջինիս անազատության մեջ գտնվելու 2 (երկու) օրը և վերջնական թողնել կրելու ազատազրկում՝ 2 (երկու) ամիս 28 (քսանութ) օր ժամկետով:

Ա.Բորումանդֆարի նկատմամբ կիրառել «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և նրան ազատել պատժից:

3. Ամիր Մոհամմադի Բորումանդֆարի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

4. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

59. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԴ/0033/15/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահույթյամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով դատապարտյալ Հարություն Ժորայի Հարությունյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ի որոշման դեմ պաշտպան Է.Թովմայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 5-ի դատավճռով Հարություն Ժորայի Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ 2 (երկու) դրվագով առաջադրված մեղադրանքում, և նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ հանցանքների համակցությամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 10 (տասը) ամիս ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2015 թվականի նոյեմբերի 5-ից:

2. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ պատիժը կրելուց

պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ դատապարտյալ Հ.Հարությունյանի դիմում-բողոքը մերժվել է:

3. Դատապարտյալ Հ.Հարությունյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)¹ 2019 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի¹ վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Հ.Հարությունյանը, որը Վճռաբեկ դատարանի¹ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ վերադարձվել է¹ թերությունները վերացնելու և կրկին ներկայացնելու համար:

Դատապարտյալ Հ.Հարությունյանի պաշտպան Է.Թովմայանը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի¹ 2020 թվականի հունվարի 30-ի որոշմամբ վարույթ է ընդունվել¹: Վճռաբեկ դատարանի¹ 2020 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով դատապարտյալ Հ.Հարությունյանի վերաքննիչ բողոքը, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(…) «1. Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի¹

(…)

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում մեջբերելով դրանց հակասող մասերը և կարարելով համեմատական վերլուծություն, կամ որոնք են նոր

¹ Ծանոթություն. Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի¹ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանի¹ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը.

(...):

2.1. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը թողնում է առանց քննության, եթե՝

1) վերաքննիչ բողոքը բերվել է սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ և 5.1-ին կետերով սահմանված պահանջների խախտմամբ.

(...)»:

4. Եստի որդ կետում շարադրված նորմերը կիրառելով սույն որոշման 2-րդ կետում մեջբերվածի նկատմամբ՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 5.1-րդ կետերով սահմանված վերաքննիչ բողոքին առաջադրվող պահանջները, մասնավորապես բողոքը չի բովանդակում համապատասխան հիմք և հիմնավորում, որպիսիք պետք է ներկայացվեն բացառապես վերաքննիչ բողոքում և չեն կարող փոփոխվել կամ լրացվել գործի դատական քննության ընթացքում, ուստի այն պետք է թողնել առանց քննության»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի դրույթները, որի հետևանքով խախտվել են Հ.Հարությունյանի իրավունքները:

Բողոք բերած անձը, վկայակոչելով ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՄԴՈ-1420 որոշումը, նշել է, որ Վերաքննիչ դատարանը դատապարտյալին զրկել է բողոքը շտկելու և կրկին ներկայացնելու հնարավորությունից:

Բողոքաբերի պնդմամբ, հաշվի առնելով բողոքաբերի իրավագիտակցության ցածր մակարդակը, բողոքի նման ձևակերպումն ինքնին հիմք չէր վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելու համար:

7. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ի որոշումը, և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

¹ Տե՛ս՝ ս նյութեր, թերթեր 114-115:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն այն պատճառաբանությամբ, որ չի պահպանվել բողոքի հիմքը և հիմնավորումը ներկայացնելու վերաքննիչ բողոքին առաջադրվող պահանջը, հանգեցրել է դատապարտյալ Հ.Հարությունյանի՝ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքների խախտման:

9. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրբեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

10. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով¹,

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից

¹ Տե՛ս *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը¹,

- դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն²,

- ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա³: Դատարանի մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի⁴:

11. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով դատարանի մատչելիության իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ «Դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պարտաբան, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատարանի պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս *Khalfaoui v. France* գործով 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, 36-րդ կետ, *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ:

³ Տե՛ս *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

⁴ Տե՛ս *Efstathiou and others v. Greece* գործով 2006 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ:

կիսահարվեն անձի՝ դատարանի մնացելիության և արդար դատաքննության իրավունքները»¹:

12. Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող պահանջների պահպանումը չպետք է այնպես մեկնաբանվի և այն աստիճան ձևականացվի (excessive formalism), որ անձի դատական պաշտպանության, այդ թվում՝ արդարադատության մատչելիության իրավունքը ոչ իրավաչափորեն սահմանափակվի: Բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը պետք է հիմնված լինի վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող պահանջների պահպանված չլինելու մասին փաստերի բովանդակային գնահատման վրա: Այլ կերպ՝ վերաքննիչ բողոքարկման դատավարական կանոնները պետք է մեկնաբանվեն դատարանի մատչելիության իրավունքի իրական ապահովման համատեքստում:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝

(...)

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում մեջբերելով դրանց հակասող մասերը և կարարելով համեմատական վերլուծություն, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը. (...)»:

14. Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՄԴՌ-1420 որոշմամբ փաստել է. «(...) [Վ]երաքննիչ բողոքում հայրնաբերված թերությունների կամ սխալների նկատմամբ պետք է դրսևորվի փարբերակված մտրեցում, ինչի հետևանքով անհրաժեշտ կլինի նաև սահմանազարել դրանցից հետրող հնարավոր իրավական հետևանքները: Եթե ձևական պահանջների խախտման դեպքում չստիպանց խիար հետևանքներ նախարեսելը կսահմանափակի անձի հիմնական իրավունքի իրացման հնարավորությունը, սպար բովանդակային պահանջների խախտման հանդես անհամաչափ մեղմ

¹Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Այվազյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշումը, 16-րդ կետ, Լևոն Հարությունյանի գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշումը, 13-րդ կետ:

գնահատականը կարող է այդ իրավունքի չարաշահման նախադրյալներ արեղծել:

(...)

Այսպիսով, եթե վերաքննիչ բողոք ներկայացրել է այն անձը, ով չունի այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է (բացակայում է այն վերականգնելու հիմնավոր որևէ պարճատ), կամ այն բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման և նման այլ այնպիսի հիմքերի առկայությամբ, երբ անձը վերաքննիչ դատարանի գնահատմամբ փաստի ուժով, իրավական տեսանկյունից օբյեկտիվորեն անկարող է իրացնել դատական բողոքարկման իր իրավունքը, ապա վերջինիս իրացման արգելքը, ինչը նախատեսված է [ՀՀ քրեական դատավարության] [օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասում, իրավական պարշաճ գործընթացի արդյունքում կարող է գնահատվել իրավաչափ: Մինչդեռ, վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական որևէ նախապայմանի խախտման հիմքով, երբ առկա է այն շրկելու իրավական ողջամիտ հնարավորություն, անձին Սահմանադրությամբ երաշխավորված դատական բողոքարկման իր իրավունքի իրացումից զրկելը, սահմանափակելը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ չի կարող բխել մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման և իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներից, ինչպես նաև այդ բնագավառում հանրային իշխանությանն առաջադրված սահմանադրաիրավական նպատակներից: Հերևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ, վեճի առարկա իրավակարգավորմամբ նախատեսված ձևական պահանջների չպահպանման հիմքով սահմանափակելով անձի հիմնական իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, այդ թվում՝ արդարադատության մարչելիության իրավունքը, խախտվել է Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքը: Սահմանադրության 75-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից այդ իրավակարգավորումը չի համապատասխանում իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման ընթացակարգի չափանիշներին (...):»¹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 12-ի որոշման դեմ դատապարտյալի բողոքը թողնվել է առանց քննության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 5¹-րդ

¹Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՌ-1420 որոշման 4.3-4.5-րդ կետերը:

կետերով վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջերը պահպանված չլինելու պատճառաբանությամբ¹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքը գնահատելով սույն որոշման 9-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե կոնկրետ դեպքում առկա է եղել վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական նախապայմանի խախտում, ապա այն շտկելու ողջամիտ հնարավորության առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելը հիմնավոր համարվել չի կարող: Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող դատավարական պահանջներին տրված նման մեկնաբանությամբ դատապարտյալի բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելով, *prima facie*, ոչ իրավաչափորեն սահմանափակել է դատարան դիմելու և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու անձի իրավունքը:

17. Հետևաբար, Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն այն պատճառաբանությամբ, որ չի պահպանվել բողոքի հիմքը և հիմնավորումը ներկայացնելու վերաքննիչ բողոքին առաջադրվող պահանջը, հանգեցրել է դատապարտյալ Հ.Հարությունյանի՝ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքների խախտման:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ համապատասխան որոշում կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

¹Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Հարություն Ժորայի Հարությունյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

60. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ1/0077/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով Արմեն Վյաչեսլավի Արզումանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի սեպտեմբերի 10-ին ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ Գ.Գաբրիելյանի որոշմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, հարուցվել է թիվ 57109617 քրեական գործը:

2017 թվականի սեպտեմբերի 11-ին Արմեն Վյաչեսլավի Արզումանյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ Արմեն Արզումանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ Ա.Արզումանյանի

նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

2017 թվականի դեկտեմբերի 20-ին Ա.Արզումանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի դեկտեմբերի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի հունիսի 10-ի դատավճռով Ա.Արզումանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ, նշանակված պատժին հաշվակցվել է Ա.Արզումանյանի անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածը՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս 10 (տասը) օրը, և վերջնական թողնվել է կրելու ազատազրկում՝ 2 (երկու) տարի 5 (հինգ) ամիս 20 (քսան) օր ժամկետով: «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, Ա.Արզումանյանն ազատվել է նշանակված պատժից:

Առաջին ատյանի դատարանի նույն օրվա որոշմամբ լուծվել է վերոնշյալ դատավճռի եզրափակիչ մասում թույլ տրված անհստակությունը, Ա.Արզումանյանի նկատմամբ դատավճռով նշանակված պատժի ժամկետին հաշվակցվել է վերջինիս անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածը՝ 1 (մեկ) տարի 8 (ութ) ամիս 29 (քսանինը) օրը, և վերջնական թողնվել է կրելու ազատազրկում՝ 2 (երկու) տարի 3 (երեք) ամիս 1 (մեկ) օր ժամկետով:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ բողոքը բավարարել է և Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 10-ի դատավճիռը՝ բեկանել. Ա.Արզումանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ պատժի ժամկետին հաշվակցելով անազատության մեջ գտնվելու 1 (մեկ) տարի 8 (ութ) ամիս 29 (քսանինը) օրը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք,

որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մարտի 12-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Արմեն Արզումանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն բանի համար, որ նա, «2017 թվականի սեպտեմբերի 10-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, սպորինսարար, Խորեն Աշուրի Գասպարյանին կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ, դանակով հարվածներ է հասցրել նրա մարմնի կենսականորեն կարևոր օրգաններին, սակայն իր կանքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցրել: Այսպես.

Արմեն Արզումանյանը և Խորեն Գասպարյանը բնակվում են հարևանությամբ՝ Արմավիրի մարզի Փարաքար գյուղում, 2017 թվականի սեպտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը հանդիպել են միմյանց և հարևանությամբ բնակվող Վանուշ Ղազարյանի ու Գեղամ Ասլանյանի հետ միասին գարեջուր են խմել նախ Փարաքար գյուղի Մեքենագործների փողոցի 1-ին շենքի բակում, իսկ այնուհետև՝ շենքի հարևանությամբ գտնվող գարեջրատանը, որից հետո Ա.Արզումանյանը գնացել է տուն, իսկ մյուսները Խ.Գասպարյանի «Օպել Աստրա» մակնիշի 34 ՍԱ 439 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով ուղևորվել են Էջմիածին քաղաք: Հասնելով տուն՝ Ա.Արզումանյանը գանգահարել է Խ.Գասպարյանին և բացատրություն պահանջել իրեն վիրավորելու համար, վերջինը հերքել է նրան վիրավորելու հանգամանքը, որից հետո Արմեն Արզումանյանը Խորեն Գասպարյանի հասցեին տվել է սեռական բնույթի հայհոյանքներ: Այնուհետև վերջինը Վանուշ Ղազարյանի հետ ետ է վերադարձել Փարաքար գյուղ, որից հետո՝ ժամը 01:30-ի սահմաններում, Արմեն Արզումանյանը, տեղեկանալով, որ Խորեն Գասպարյանը գտնվում է Մեքենագործների փողոցի 1-ին շենքի դիմաց, Խորեն Գասպարյանին սպանելու՝ սպորինսարար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ, տնից վերցրել է սուր կտրող-ծակող գործիք հանդիսացող տնտեսակենցաղային նշանակության դանակ և այն պահելով գրպանում, տնից դուրս է եկել նշված շենքի բակ: Տեսնելով ավտոմեքենայից իջնող Խորեն Գասպարյանին՝ Արմեն Արզումանյանը մոտեցել է նրան և սեռական բնույթի հայհոյանքներ տալով՝ վիճաբանել նրա հետ, որի ընթացքում

Խորեն Գասպարյանին սպանելու՝ ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ, նախատեսելով վերջինի մահվան առաջացման իրական հնարավորությունը, ցանկանալով դրա վրա հասնելը և գիտակցելով իր արարքից բխող համապատասխան հետևանքի առաջացումը, իր հետ նախապես վերցրած դանակով թվով 5 հարված է հասցրել վերջինի մարմնի կենսական կարևոր օրգաններին, մասնավորապես՝ որովայնին և կրծքավանդակին՝ նրա առողջությանը որովայնի առաջային պատի ծակած-կտրած թափանցող, արյունահոսող վերքի՝ մեծ ճարպոնի ստամոքսի և լյարդի վնասման, ներքին արյունահոսության, որովայնի ձախ կողմնային պատի ծակած-կտրած չթափանցող, արյունահոսող վերքերի, կրծքավանդակի աջ և ձախ կետերի ծակած-կտրած թափանցող վերքերի, սրտապարկի և սրտի վնասման, երկկողմանի հեմոպնևմոթորաքսի, կրծքավանդակի աջ կեսի ծակած-կտրած չթափանցող վերքերի ձևով պատճառել կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս և Խորեն Գասպարյանին սպանելուն ուղղված գործողությունները համարելով բավարար՝ Արմեն Արզումանյանը վիճաբանությանը ներկա գտնվող Վանուշ Ղազարյանի կողմից այն դադարեցնելու նպատակով միջամտելուց և նրան մի կողմ տանելուց հետո դիմել է փախուստի՝ այդպիսով հանցագործությունն ավարտին չի հասցրել՝ իր կամքից անկախ հանգամանքներով»:

5.1. Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Արմեն Արզումանյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայությունը հաստատելուց հետո, անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ նշանակվելիք պատժի հարցին, իր որոշմամբ արձանագրել է, որ. *«(...) Չավարտված հանցագործության համար պարիժ նշանակելու կանոնը ընդհանուր կանոնից բացառություն է և այդ հանցագործությունների դեպքում օրենքով նախատեսված պարիժն առավել նպաստավոր պայմաններ է սրելոծում հանցանք կատարած անձի համար:*

ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների սանկցիաները սահմանում են միայն ավարտված հանցագործության համար նախատեսված պատիժները, ընդ որում՝ նախատեսելով այդ պատիժների առավելագույն և նվազագույն սահմանները: Մյուս կողմից ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասը, մասնավորապես 65-րդ հոդվածը, կարգավորում է չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու կանոնները: Ի տարբերություն ավարտված հանցագործության, չավարտված հանցագործության դեպքում օրենսդիրը սահմանափակում է միայն պատժի առավելագույն շեմը (ի տարբերություն ռեցիդիվի դեպքերի, ինչն իր հերթին կրկին ընդհանուր կանոնից բացառություն է)՝ հիմքում որպես հաշվարկի ելակետ դնելով Հատուկ մասի համապատասխան

հողվածով ավարտված հանցագործության համար որոշակի ժամկետով ազատագրվման առավելագույն չափը: Ընդ որում՝ օրենսդիրը, ի տարբերություն պատժի առավելագույն սահմանի՝ նվազագույն սահմանը չի կապում Հատուկ մասի համապատասխան հողվածի նվազագույն չափի հետ: (...) Հետևաբար՝ չավարտված հանցագործության դեպքում պատիժ նշանակելիս դատարանը կարող է նշանակել տվյալ պատժատեսակի՝ ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով սահմանված նվազագույն չափից մինչև ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հողվածի սանկցիայի առավելագույն սահմանի կեսը կամ երեք քառորդը:

(...)

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածը նախատեսում է չավարտված հանցագործության (հանցագործության նախապատրաստության և հանցավորձի) համար պատիժ նշանակելու հատուկ կանոններ, որոնց կիրառմամբ դատարանը հանցագործության նախապատրաստության և հանցավորձի դեպքում պատիժ նշանակելիս կաշկանդված չէ Հատուկ մասի համապատասխան հողվածի սանկցիայի նվազագույն սահմանով:

(...)

Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով վերը նշված պատճառաբանությունները, (...) գտնում է, որ Արմեն Արզումանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ պետք է նշանակել ազատագրվում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված չէ, քանի որ դրանով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, բողոք բերած անձի համոզմամբ, Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 61-րդ և 65-րդ հոդվածներով նախատեսված քրեաիրավական նորմերը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ օրենսդիրը, սպանության համար նախատեսելով 8-ից 15 տարի ժամկետով ազատագրվման ձևով պատիժ, միաժամանակ իրավակիրառողին հնարավորություն է տվել և պարտականություն սահմանել սպանության

¹ Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 67-71:

չավարտված հանցագործության համար նշանակվելիք պատժի առավելագույն շեմը կրճատելու: Մինևն այն դեպքերում, երբ օրենսդիրը չի սահմանել սպանության չափազանցության հանցագործության համար նշանակվելիք պատժի ստորին շեմը՝ հաշվի առնելով այն, որ արդեն իսկ պատժի արդարացիության սկզբունքից ելնելով բավական է վերին՝ խիստ շեմի նվազեցումը:

Բողոքարկերը գտել է, որ տվյալ դեպքում դատարանները, չավարտված սպանության համար պատիժ նշանակելիս, նախնառաջ կաշկանդված են ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի սանկցիայով, այնուհետև որպես ընդհանուր մասի դրույթ պարտավոր են կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված դրույթները: Տվյալ դեպքում, դատարաններն իրավասու չեն նշանակել մեղազարկվող հոդվածի սանկցիայի նվազագույն շեմից ավելի ցածր պատիժ:

Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ որոշելիս, կաշկանդված լինելով ամբաստանյալի նկատմամբ ազատագրված ձևով պատիժ նշանակել 8 (ութ) տարուց մինչև 11 (տասնմեկ) տարի 3 (երեք) ամիս ժամկետների սահմաններում, դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից և նշանակել այնպիսի պատիժ, որն օրենքով նախատեսված չէ:

7. Վերոգրյալի հիման վրա, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը խնդրել է պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 29-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնությունների իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցավորձի համար պատիժ նշանակելու կանոնը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր, ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ համանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված ամբաստանյալ Արմեն Արզումանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատժաչափի սահմանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

10. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պարիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պարիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Չավարտված հանցագործության համար պարիժ նշանակելիս հաշվի են առնվում հանցավորի կատարած գործողությունների բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և այն հանգամանքները, որոնց հետևանքով հանցագործությունը ավարտին չի հասցվել»:*

2. Հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով պարժի ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պարժի առավելագույն ժամկետի կետը:

3. Հանցափորձի համար ազատազրկման ձևով պարժի ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պարժի առավելագույն ժամկետի երեք քառորդը: (...):»:

11. Պատժի նշանակման սկզբունքների համատեքստում Վճռաբեկ դատարանը Մանուշակ Աբրահամյանի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«Պարիժ նշանակելիս օրինականության սկզբունքն արտահայտվում է նրանում, որ պարժի տեսակն ու չափը*

որոշվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հայրուկ մասի այն հոդվածի սանկցիայով, որի դիպուկացիայի հարկանիշներին համապատասխան անձը մեղավոր է ճանաչվել հանցագործության մեջ: Փաստորեն, ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը պարտադրում է դուրս չգալ Հայրուկ մասի հոդվածի սանկցիայի սահմաններից: Նշանակվող պարիժը չի կարող հոդվածի սանկցիայում նախարեսված պարժի առավելագույն կամ նվազագույն չափից ավելի խիստ կամ մեղմ լինել: Այդ պահանջից բացառություն կարող է անել միայն օրենքը, որը Ընդհանուր մասում նախարեսված հայրուկ նորմերի ուժով դատարանին իրավունք է վերապահում դուրս գալ այդ սահմաններից: Մասնավորապես, Կրիմիա հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքի Հայրուկ մասի համապատասխան հոդվածով նախարեսված պարժի նվազագույն չափից ավելի ցածր պարիժ նշանակելը կարգավորվում է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի նորմերով¹:

12. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պատիժ նշանակելու գործընթացում ելակետային նշանակություն ունեն ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով ամրագրված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները՝ այն հիմնարար դրույթները, որոնցով դատարանը ղեկավարվում է՝ օրինական, արդարացի և անհատական պատիժ նշանակելու համար: Ընդհանուր սկզբունքներից առանցքային նշանակություն ունի օրինականության սկզբունքը, որը դատարանին պարտավորեցնում է պատժի տեսակը և չափը որոշելիս որպես ելակետ ընդունել ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի այն հոդվածի սանկցիայի առավելագույն և նվազագույն սահմանները, որը մեղսագրվել է հանցագործություն կատարած անձին: Այլ կերպ՝ պատիժ նշանակելիս դատարանը կաշկանդված է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներով՝ որպես օրինականության սկզբունքի կարևորագույն պահանջ, հետևաբար նշանակվող պատիժը չի կարող այդ հոդվածով նախատեսված պատժի առավելագույն կամ նվազագույն չափից ավելի խիստ կամ մեղմ լինել:

Նշված պահանջից բացառություն կարող է սահմանվել միայն քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթներով: Մասնավորապես, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին զուգահեռ գործում են պատիժ նշանակելու հատուկ կանոններ, որոնց կիրառման արդյունքում քրեական օրենսգրքի Հատուկ մասի սանկցիան մեղմացման կամ խստացման առումով ենթարկվում է որոշակի փոփոխությունների: Պատիժ նշանակելու հատուկ կանոնները ընդհանուր սկզբունքների հետ համատեղ

¹ Տե՛ս Մանուշակ Աբրահամյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի ապրիլի 6-ի թիվ ՎԲ-63/07 որոշումը:

կոչված են առավելագույնս ապահովելու անձի նկատմամբ նշանակվող պատժի տարբերակումն ու անհատականացումը՝ հաշվի առնելով օրենքի տեսանկյունից էական նշանակություն ունեցող որոշակի հանգամանքների առկայությունը (օրինակ՝ բացառիկ հանգամանքներ, չավարտված հանցագործություն, ռեցիդիվ և այլն):

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներն ու պատիժ նշանակելու հատուկ կանոնները փոխարացում են միմյանց և հատուկ կանոնի առկայությունը դեռևս չի բացառում ընդհանուր սկզբունքների կիրառման հնարավորությունը, հետևաբար դրանք, որպես կանոն, պետք է կիրառվեն միմյանց հետ զուգակցված (եթե, իհարկե, հատուկ կանոնը չի նախատեսում ընդհանուր սկզբունքներից բացառություն, ինչպես, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի պարագայում, երբ բացառիկ հանգամանքների առկայության դեպքում դատարանը կարող է նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ):

12.1. ՀՀ քրեական օրենսգրքով պատիժ նշանակելու առանձնացված կարգ է նախատեսվել չավարտված հանցագործությունների դեպքում (հանցափորձ, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստություն): Մասնավորապես, հաշվի առնելով ավարտված հանցագործությունների համեմատ դրանց նվազ հանրային վտանգավորության աստիճանը՝ օրենսդիրը, ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածում նախատեսված հատուկ կանոնների կիրառմամբ, օրենքի ուժով, նախատեսել է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակում առավել նվազ պատժաչափ սահմանելու հնարավորություն: Այսինքն՝ չավարտված հանցագործությունների դեպքում դատական հայեցողության շրջանակը սահմանափակված է ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետի համապատասխանաբար՝ կեսից կամ երեք քառորդից ոչ ավել չափով պատժի նշանակման պահանջով: Այլ խոսքով՝ չավարտված հանցագործության դեպքում նախատեսվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի առավելագույն չափի ինպերատիվ մեղմացման պահանջ:

Նշված մոտեցումն օրենսդիրը որդեգրել ու ընդունելի է համարել՝ հաշվի առնելով ավարտված հանցագործությունների համեմատ չավարտված հանցագործությունների հանրային վտանգավորության ցածր աստիճանը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերություններին՝ հանցագործության օբյեկտին պատճառվող վնասի չափը:

13. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չավարտված

հանցագործությունների դեպքում պատիժ նշանակելիս դատարանը դարձյալ կաշկանդված է օրինականության, արդարության և պատժի անհատականացման ընդհանուր սկզբունքներով, ուստի պատիժ նշանակելու քննարկվող հատուկ կանոնը չի կարող ընդհանուր սկզբունքներից որպես բացառություն դիտարկվել. պատիժ նշանակելու վերոնշյալ ընդհանուր և հատուկ կանոնները հնարավորինս պետք է կիրառվեն համակցված՝ հաշվի առնելով, բնականաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված առանձնահատկությունները: Այսպես՝ չավարտված հանցագործությունների դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնով սահմանվել է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայի առավելագույն չափի իմպերատիվ մեղմացման պահանջ, մինչև ժամանակ, սակայն, հոդվածի սանկցիայի նվազագույն չափի առումով որևէ հատուկ կարգավորում չի նախատեսվել: Նման պայմաններում, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով ամրագրված՝ օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում պատիժ նշանակելու ընդհանուր կանոնը, ինչպես նաև պատիժ նշանակելու գործընթացում օրինականության սկզբունքը երաշխավորելու անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ չավարտված հանցագործությունների դեպքում մեղսագրվող արարքի համար նշանակվող պատժաչափը պետք է որոշվի՝ ելնելով Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի նվազագույն սահմանի և օրենքի ուժով մեղմացված վերին սահմանի հարաբերակցությունից:

Հետևաբար, չավարտված հանցագործությունների դեպքում օրենսդրի կողմից հոդվածի սանկցիայի նվազագույն չափի առումով հատուկ կարգավորում չնախատեսելը չի կարող մեկնաբանվել այնպես, որ չավարտված հանցագործության դեպքում դատարանը կարող է նշանակել տվյալ պատժատեսակի՝ ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով սահմանված նվազագույն չափից մինչև ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի առավելագույն սահմանի կետը կամ երեք քառորդը: Վճռաբեկ դատարանի համոզմամբ վերոնշյալ մոտեցումը ճիշտ չի արտացոլում պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների և հատուկ կանոնների հարաբերակցությունը, հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով երաշխավորված օրինականության սկզբունքին:

13.1. Ուստի, չավարտված հանցագործության, մասնավորապես՝ հանցավորձի դեպքում պատիժ նշանակելիս, որպես ելակետ պետք է ընդունել ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի մի կողմից՝ նվազագույն շեմը, մյուս կողմից՝ երեք քառորդով կրճատված առավելագույն շեմը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, 2019 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ ամբաստանյալ Արմեն Արզումանյանին մեղավոր ճանաչելով **ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով** նախատեսված հանցագործության կատարման մեջ, նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում **5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով**: Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ օրենսդիրը, չավարտված հանցագործության դեպքում պատժի նվազագույն սահմանը, ի տարբերություն պատժի առավելագույն սահմանի, չի կապում Հատուկ մասի համապատասխան հոդվածի նվազագույն չափի հետ¹:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13.1-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք՝ սպանություն կատարելու համար **որպես պատիժ՝ 8-15 տարի ժամկետով ազատազրկում սահմանված լինելու պայմաններում**, հանցափորձի դեպքում, ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված կանոնների կիրառմամբ, պատժի առավելագույն ժամկետն օրենքի ուժով ենթակա է երեք քառորդով կրճատման՝ **մինչև 11 տարի 3 ամիս ժամկետով ազատազրկումը**: Նման պայմաններում, հաշվի առնելով սպանության փորձի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և այն հանգամանքները, որոնց հետևանքով հանցագործությունն ավարտին չի հասցվել, այդ հանցագործության կատարման համար պատիժ նշանակելիս դատական հայեցողության շրջանակը սահմանափակված է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված՝ ազատազրկման ձևով պատժի նվազագույն ժամկետից՝ **8 տարուց մինչև 11 տարի 3 ամիս ժամկետով ազատազրկմամբ**: Այսինքն՝ տվյալ պարագայում, սպանության փորձի կատարման համար, դատարանը պետք է նշանակի համաչափ պատիժ՝ հարաբերականորեն որոշակի սանկցիայի նվազագույն և օրենքի ուժով կրճատված՝ առավելագույն շեմի սահմաններում:

Ուստի, սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում, Վերաքննիչ դատարանի կողմից հիմք ընդունված այն մոտեցումը, որ կոնկրետ դեպքում, հանցափորձի կատարման համար պատիժ նշանակելիս դատարանը կաշկանդված չէ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի նվազագույն սահմանով և որպես ազատազրկման նվազագույն սահման պետք է ելակետ ընդունվի ՀՀ

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում սահմանված՝ ազատագրվում պատժատեսակի նվազագույն ժամկետը՝ երեք ամիսը, չի համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի պահանջներին: Մասնավորապես, այդպիսի մոտեցումը չի բխում սպանության բնույթին ու հանրային վտանգավորության աստիճանին համապատասխան՝ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում օրենսդրի կողմից տարբերակված սանկցիայի նախատեսման անհրաժեշտությունից, իսկ որպես արդյունք՝ նաև պատժի արդարացիության ու պատասխանատվության անհատականացման սկզբունքից:

Վերաքննիչ դատարանի մոտեցումն ընդունելի համարելու պարագայում, կարող է ստացվել այնպիսի իրավիճակ, երբ բոլոր չավարտված հանցագործությունների դեպքում, անկախ արարքի բնույթից և հանրային վտանգավորության աստիճանից, հանցավոր մտադրության իրականացման աստիճանից և օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերություններին պատճառված վնասի չափից, որպես պատիժ կարող է նշանակվել ազատագրվում պատժատեսակի նվազագույն չափը՝ երեք ամիսը, որպիսի մոտեցումն ակնհայտ է, որ չի բխի ՀՀ քրեական օրենսգրքի հիմքում ընկած՝ պատժի արդարացիության սկզբունքից:

Նման պայմաններում, հաշվի առնելով սույն գործի փաստական հանգամանքները, Վճռաբեկ դատարանն ընդունելի է համարում բողոքաբերի այն փաստարկը, որ տվյալ դեպքում ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նշանակվող պատժաչափը որոշելիս, դատարանի հայեցողությունը սահմանափակված է եղել տվյալ հոդվածի սանկցիայով նախատեսված՝ ազատագրվման ձևով պատժի՝ 8 (ութ) տարուց մինչև 11 (տասնմեկ) տարի 3 (երեք) ամիս ժամկետներով:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված ամբաստանյալ Արմեն Արզումանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատագրվման ձևով պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատժաչափ սահմանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունն իրավաչափ չէ:

16. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, այն է՝ սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի, 65-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի, հիմք է Վերաքննիչ

դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 29-ի դատական ակտն Ա.Արզումանյանի նկատմամբ նշանակված պատժի մասով բեկանելու և բեկանված մասով գործը նոր քննության ուղարկելու համար: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում, Վերաքննիչ դատարանը պետք է ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակի՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 395-րդ, 397-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արմեն Վյաչեսլավի Արզումանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 29-ի որոշումը մասնակիորեն՝ նշանակված պատժի մասով բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արմեն Վյաչեսլավի Արզումանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

61. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0201/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ ամբաստանյալ Մանուկ Սամվելի Կիրակոսյանի պաշտպան Ա.Հոբոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի ապրիլի 16-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 09107215 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ Մանուկ Կիրակոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2015 թվականի նոյեմբերի 9-ին թիվ 09107215 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որտեղ գործին շնորհվել է ԵԱԲԴ/0201/01/15 համարը:

2. 2016 թվականի հունվարի 14-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 14102316 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ Մ.Կիրակոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի ապրիլի 29-ին թիվ 14102316 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որտեղ գործին շնորհվել է ԵԱՔԴ/0076/01/16 համարը:

2.1. 2016 թվականի հուլիսի 8-ին թիվ ԵԱՔԴ/0076/01/16 քրեական գործը միացվել է ԵԱՔԴ/0201/01/15 քրեական գործին և քննությունը շարունակվել է ԵԱՔԴ/0201/01/15 համարի ներքո:

3. 2015 թվականի մայիսի 15-ին ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 20119615 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ Մ.Կիրակոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 178-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ Մ.Կիրակոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ սկիզբը հաշվելով 2016 թվականի ապրիլի 26-ից:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 30-ի որոշմամբ Մ.Կիրակոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ու 178-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի հուլիսի 6-ին թիվ 20119615 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որտեղ գործին շնորհվել է ԵԿԴ/0189/01/16 համարը:

3.1. 2016 թվականի սեպտեմբերի 29-ին թիվ ԵԿԴ/0189/01/16 քրեական գործը միացվել է ԵԱԲԴ/0201/01/15 քրեական գործին և քննությունը շարունակվել է ԵԱԲԴ/0201/01/15 համարի ներքո:

4. Դատական քննության ընթացքում՝ 2018 թվականի հունիսի 5-ին, մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի կանոններով, որոշում է կայացրել Մ. Կիրակոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին և նրան նոր մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ բավարարվել է պաշտպանի միջնորդությունը, և ամբաստանյալ Մ. Կիրակոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, փոխարինվել է այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով, և գրավի չափ է սահմանվել 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մարտի 6-ի որոշմամբ ամբաստանյալ Մ. Կիրակոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Դատական քննության ընթացքում՝ 2019 թվականի մարտի 26-ին, մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի կանոններով, որոշում է կայացրել ամբաստանյալ Մ. Կիրակոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին և նրան նոր մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 23-ի դատավճռով ամբաստանյալ Մ. Կիրակոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի 4 (չորս) ամիս ժամկետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման՝ 3 (երեք) տարի 4 (չորս) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ հանցանքների համակցությամբ, նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով, Մ. Կիրակոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ Մ. Կիրակոսյանին վերջնական թողնվել է կրելու

ազատագրվում՝ 1 (մեկ) տարի 8 (ութ) ամիս 20 (քսան) օր ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է փաստացի արգելանքի վերցնելու պահից:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Վաղիմ Էոնեստի Ալեքսանյանը:

6. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ ամբաստանյալ Մ.Կիրակոսյանի, վերջինիս և Վ.Ալեքսանյանի պաշտպանի վերաքննիչ բողոքները մերժվել են, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 23-ի դատավճիռը՝ թողնվել անփոփոխ:

7. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալներ Մ.Կիրակոսյանի և Վ.Ալեքսանյանի պաշտպան Ա.Հոբոսյանը, 2020 թվականի մարտի 12-ին բերել է վճարելի բողոք:

Վճարելի դատարանի՝ 2020 թվականի հունիսի 19-ի որոշմամբ ամբաստանյալ Մ.Կիրակոսյանի վերաբերյալ պաշտպան Ա.Հոբոսյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ, իսկ Վ.Ալեքսանյանի վերաբերյալ՝ վարույթ ընդունելը մերժվել է: Վճարելի դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ սահմանվել է վճարելի բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Առաջին ատյանի դատարանը դատավճռի՝ դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների հատվածում արձանագրել է. «Մանուկ Մամվելի Կիրակոսյանը և Վաղիմ Էոնեստի Ալեքսանյանը, հանդիսանալով ընկերներ, խարդախությամբ գումար համաշխարհային նպատակով, նախնական համաձայնության են եկել, նախապես դերաբաշխում կատարել և իմրի կազմում, միասնական հանցավոր արդյունքի հասնելու ընդհանուր գործում իրենց գործողություններով միմյանց լրացնելով և համարեղելով իրենց ջանքերը, Արթուր Լուսյանից խաբեությամբ համաշխարհային են 40.000 ՀՀ դրամ և շենքի հակառակ կողմից փախուսարի դիմել: Մասնավորապես, ամբաստանյալներ Մանուկ Մամվելի Կիրակոսյանը և Վաղիմ Էոնեստի Ալեքսանյանը, օգրվելով Արթուր Լուսյանի կողմից վարվող «Օպել» մակնիշի տաքսի ավտոմեքենայից, 2015 թվականի փետրվար ամսին, երեկոյան, նախապես տեղյակ լինելով, որ Երևան քաղաքի Ազատության 10 շենքը երկկողմանի մուտք ունի, պարվիրել են իրենց տեղափոխել նշված հասցե: Մանուկ Կիրակոսյանը, նսրելով ավտոմեքենայի ուղևորի համար նախադրված դիմացի հարվածում, հերազայում Ա.Լուսյանի ծառայությունից օգրվելու

նպատակով վերցրել է վերջինիս բջջային հեռախոսահամարը: Այնուհետև, մինչև Երևան քաղաքի Ազատության 10 շենքի հասնելը, Մ.Կիրակոսյանն Արթուր Լուսինյանից հարցրել է, թե արդյոք մանր գումար ունի, որպեսզի իմանա Ա.Լուսինյանի մոտ առկա գումարի չափը: Տուժող Ա.Լուսինյանը պատասխանել է, որ իր մոտ երկու 20.000 դրամանոց թղթադրամներ են: Տեղեկանալով, որ Արթուր Լուսինյանի մոտ առկա է երկու 20.000 ՀՀ թղթադրամ՝ այն ԱՄԵ դոլարի փոխանակելու և վերադարձնելու պարտվակով, նախնական համաձայնությամբ, խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով, ամբաստանյալ Մանուկ Կիրակոսյանն Արթուր Լուսինյանից վերցրել է 20.000 ՀՀ դրամ և իջնելով ավտոմեքենայից՝ մտել է շենքի մուտք: Մ.Կիրակոսյանի ընկեր Վաղիմ Ալեքսանյանը վարորդի հետ մնացել է ավտոմեքենայում: Մի քանի թույն անց ամբաստանյալ Մանուկ Կիրակոսյանն իր բջջային հեռախոսահամարից զանգահարել է Արթուր Լուսինյանի բջջային հեռախոսահամարին և խնդրել ևս 20.000 ՀՀ դրամ ավտոմեքենայում գրնվող Վաղիմ Ալեքսանյանի հետ ուղարկել: Արթուր Լուսինյանը Վաղիմ Ալեքսանյանին է տվել 20.000 ՀՀ դրամ գումարը, որը վերջինս վերցնելով մտել է նույն շենքի մուտք և հակառակ կողմից հեռացել՝ Մանուկ Կիրակոսյանի հետ հափշտակելով Արթուր Լուսինյանին պատկանող 40.000 ՀՀ դրամ գումարը:

Բացի այդ, Մանուկ Սամվելի Կիրակոսյանը, Անժիկ Ռազմիկի Վարդանյանից խաբեությամբ գույք հափշտակելու դիտարկությամբ, իրականությունը խեղաթյուրել և իրականում գոյություն չունեցող փաստեր է հաղորդել այն մասին, որ կարող է բանկում վարկ ձևակերպել և 2014 թվականի հուլիսի 05-ին Երևան քաղաքի Թումանյան 2 հասցեում գրնվող «Վեգա» խանութից կանխավճար վճարելով Անժիկ Վարդանյանի անվամբ ապառիկ կարգով վերցրել է 348.000 ՀՀ դրամ արժողությամբ «Ipad» մոդելի պլանշետ, որից հետո՝ նույն օրը Երևան քաղաքի Սայաթ-Նովա 22 հասցեում գործող «Ասկար մոբայլ» խանութից, կանխավճար վճարելով Անժիկ Վարդանյանի անվամբ ապառիկ կարգով վերցրել է 290.000 ՀՀ դրամ արժողությամբ «Samsung G900H» տեսակի բջջային հեռախոս և չարաշահելով Անժիկ Վարդանյանի վստահությունը՝ խաբեությամբ տրիսցել է հիշյալ ապրանքներին՝ վերջինիս պատճառելով ընդհանուր 638.000 ՀՀ դրամի գույքային վնաս»¹:

8.1. Դատավճի՞ իրավական վերլուծությունների հատվածում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է. «(...) Վերլուծելով [ամբաստանյալ] Մանուկ Սամվելի Կիրակոսյանին (...) առաջադրված [մեղադրանքը], քննարկելով պարզա՞ իրավական ընթացակարգի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 21, թերթեր 118-142:

շրջանակներում հետազոտված (...) ապացույցները, գնահատելով դրանք իրենց վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից՝ հիմնված ներքին համոզմամբ, Դատարանն ապացուցված է համարում այն, որ ամբաստանյալ Մանուկ Սամվելի Կիրակոսյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմարեցված հանցավոր արարքներ, (...) հետևաբար՝ [ամբաստանյալը] քրեական պարասիանարվության և պատժի ենթակա է] այդ հոդվածներով»¹:

9. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) Առաջին արյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում սրուզման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ամբաստանյալ Մանուկ Կիրակոսյանի (...) մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին արյանի դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ քրեական գործի փաստական հանգամանքների մասին Առաջին արյանի դատարանի հետևությունները հետազոտված ապացույցներին չհամապատասխանելու և ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ամբաստանյալ Մանուկ Կիրակոսյանին (...) առաջադրված մեղադրանքը հիմնավորված չլինելու վերաբերյալ պաշտպանի փաստարկները քրեական գործի նյութերում իրենց հաստատումը չեն գրել, հետևաբար չեն կարող հիմք հանդիսանալ Առաջին արյանի դատարանի դատական ակտը բեկանելու համար (...)»²:

9.1. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը պաշտպանության կողմը ստացել է 2020 թվականի փետրվարի 28-ին³:

¹ Տե՛ս քրեական գործ, նույն տեղում:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 22, թերթեր 85-121:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 22, թերթ 126:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակի կարծիքով՝ ստորադաս դատարաններն առերևույթ թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական և նյութական իրավունքի հիմնարար խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Բողոքաբերի պնդմամբ՝ տուժող Ա.Լուպոյանի դրվագով Մ.Կիրակոսյանի արարքում խարդախության հանցակազմի որակյալ հատկանիշի առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին, չեն բխում քննության ընթացքում ձեռք բերված, դատարանում հետազոտված ապացույցների բավարար համակցությունից: Ըստ բողոքաբերի՝ դատարանում հետազոտված ապացույցները ոչ միայն բավարար չեն եզրահանգելու, որ Մ.Կիրակոսյանը և Վ.Ալեքսանյանը մինչև հափշտակության օբյեկտիվ կողմը սկսելը պայմանավորվել էին հափշտակությունը համատեղ կատարելու մասին, այլև այն, որ Վ.Ալեքսանյանը տեղյակ է եղել տուժող Ա.Լուպոյանի գույքը խարդախությամբ հափշտակելու Մ.Կիրակոսյանի դիտավորության մասին: Հետևաբար դատարաններն այս դրվագով սխալ քրեաիրավական որակում են տվել Մ.Կիրակոսյանին մեղսագրվող արարքին:

10.1. Անդրադառնալով տուժող Ա.Վարդանյանի դրվագով Մ.Կիրակոսյանին մեղսագրված արարքին, բողոքի հեղինակը նշել է, որ այս դրվագով բացի տուժող Ա.Վարդանյանի և վկա Մ.Ամիրյանի ցուցմունքներից այլ ապացույցներ առկա չեն, մինչդեռ պաշտպանության կողմը դատաքննության փուլում զրկված է եղել վկային հարցաքննելու հնարավորությունից, սակայն վերջինիս նախաքննական ցուցմունքները դրվել են մեղադրական դատական ակտի հիմքում, ինչով էլ Առաջին ատյանի դատարանը չի ապահովել ամբաստանյալի՝ հակընդդեմ հարցման իրավունքը՝ խախտելով արդար դատաքննության իրավունքը: Բացի այդ, դատական քննության ընթացքում վկա Մ.Ամիրյանի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքի արձանագրությունները հնարավոր չի եղել պատշաճ ընթերցել, այսինքն՝ մատչելի չեն եղել պաշտպանության կողմին, հետևաբար դրանք չեն կարող դրվել մեղադրական դատական ակտի հիմքում: Միևնույն ժամանակ, բողոք բերած անձը գտել է, որ նշված վկայի նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները հակասական են, ոչ արժանահավատ:

Վերոգրյալի հաշվառմամբ, բողոքի հեղինակը եզրահանգել է, որ այս դրվագով առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Մ.Կիրակոսյանը

կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նրան մեղաազրված արարքը:

10.2. Բողոք բերած անձը նշել է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքները միջին ծանրության հանցագործություն են, և այն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է հինգ տարի: Սույն դեպքում Մ.Կիրակոսյանին մեղաազրված վերջին արարքը կատարվել է 2015 թվականի փետրվարի 5-ին, իսկ 2020 թվականի փետրվարի 5-ի դրությամբ Մ.Կիրակոսյանի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ չի եղել, վաղեմության ժամկետի ընթացքը չի ընդհատվել կամ կասեցվել, հետևաբար նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

11. Վերոգրյալի հիման վրա, Մ.Կիրակոսյանի պաշտպան Ա.Հոբոսյանը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը, ճանաչել և հռչակել Մ.Կիրակոսյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը վերադրակել նույն օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել մեղմ պատժի կամ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք հիմնավորված և պատճառաբանված են ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ու 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքները կատարելու մեջ Մ.Կիրակոսյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական

գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևություն, որ ստորադաս դատարանները ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքներում Մ.Կիրակոսյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մ.Կիրակոսյանի մեղքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքում հաստատվում է գործով ձեռք բերված և ստորադաս դատարանների դատական ակտերում պատշաճ վերլուծված ապացույցների բավարար համակցությամբ, այն է՝ տուժող Ա.Լոպոյանի՝ հանցագործության մասին հաղորդմամբ¹, ցուցմունքներով², հեռախոսահամարների վերծանումները գննելու մասին արձանագրությամբ³: Ինչ վերաբերում է պաշտպանության կողմի այն փաստարկին, որ սույն գործով հետազոտված ապացույցները բավարար չեն արձանագրելու Մ.Կիրակոսյանի արարքում խարդախության հանցակազմի որակյալ հատկանիշի՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելու հանգամանքը⁴, ապա Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Առաջին ատյանի դատարանի այն եզրահանգումը, որ Մ.Կիրակոսյանի արարքում քննարկվող որակյալ հատկանիշի առկայությունը հաստատվում է նաև տուժողի և ամբաստանյալի ցուցմունքով այն մասին, որ Մ.Կիրակոսյանն ավտոմեքենայում տուժողին ներկայացել է մտացածին Արթուր անունով, ինչին ներկա է եղել նաև Վ.Ալեքսանյանը: Վերոգրյալը, Առաջին ատյանի դատարանի գնահատմամբ, անարժանահավատ է դարձնում Վ.Ալեքսանյանի ցուցմունքն այն մասին, որ ինքը տեղյակ չի եղել Մ.Կիրակոսյանի՝ հափշտակություն կատարելու մտադրության մասին⁵:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Մ.Կիրակոսյանի մեղքը հաստատվում է գործով ձեռք բերված և ստորադաս դատարանների դատական ակտերում պատշաճ վերլուծված հետևյալ ապացույցների բավարար համակցությամբ՝ տուժող Ա.Վարդանյանի ցուցմունքներով⁶, վկա Մ.Ամիրյանի նախաքննական ցուցմունքներով⁷, լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու մասին

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 4:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 26-29, 224, 270-271 և հատոր 21, թերթեր 118-142:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 286-290:

⁴ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 21, թերթեր 118-142:

⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթեր 13-16, 45,63-64, 112-113, 132-133, հատոր 12, թերթ 246, հատոր 14, թերթեր 101-104 և հատոր 21, թերթեր 118-142:

⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթեր 8-9, 27-34, հատոր 9, թերթեր 151-153, հատոր 15, թերթեր 66-67, 68-70, 124-127 և հատոր 21, թերթեր 118-142:

արձանագրությամբ¹, որպես այլ փաստաթուղթ՝ ապացույց ճանաչված վարկային պայմանագրերով²: Անդրադառնալով վկա Մ.Ամիրյանի ցուցմունքների միջև առկա հակասությունների և անարժանահավատության վերաբերյալ բողոքաբերի փաստարկին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ հակասություններն էական չեն և վկայի ցուցմունքն անարժանահավատ չեն դարձնում: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհիմն է նաև նշված վկայի նախաքննական ցուցմունքները պաշտպանության կողմին մատչելի չլինելու փաստարկը³ նկատի ունենալով, որ պաշտպանության կողմը, վերլուծելով վկա Մ.Ամիրյանի ցուցմունքները, գտել է, որ դրանք հակասական լինելու պատճառաբանությամբ արժանահավատ չեն կարող գնահատվել:

Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ Մ.Կիրակոսյանը հնարավորություն չի ունեցել իրացնելու իր դեմ ցուցմունք տված անձին հարցեր ուղղելու իր իրավունքը, որպիսի պարագայում պաշտպանության կողմի հակընդդեմ հարցման իրավունքը չի ապահովվել⁴, ապա նշված հանգամանքը գնահատման ենթարկելով *Արդուշ Ղուլյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում⁵ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կոնկրետ դեպքում վկա Մ.Ամիրյանի ցուցմունքը վճռորոշ կամ միակը չի եղել և սույն գործով, ընդհանուր առմամբ, քրեական վարույթի արդարացիությունն ապահովվել է և չի խախտվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջը:

14. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքները կատարելու մեջ Մ.Կիրակոսյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված են և պատճառաբանված:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. Մ.Կիրակոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդումը ենթակա՞ է արդյոք դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթ 102:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 15, թերթեր 141-142:

³ Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

⁵ Տե՛ս *Արդուշ Ղուլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏԴ2/0037/01/15 որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները.

(...)»:

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:*

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Այդ հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արամ Սարգսյանի* գործով որոշմամբ, արձանագրելով՝ *«(…) [Թ]/են [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված/ հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են ինպերսարիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, սպա գործի վարույթը ենթակա է կարճման»¹:*

18. Մինչույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական

¹ Տե՛ս *Արամ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը:

քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Հնդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում¹:

19. Վերոգրյալի հիման վրա, անդրադառնալով վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով Մ.Կիրակոսյանին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ բողոքաբերի փաստաթղթին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը համապատասխանաբար սահմանում են. «*խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը, որը կատարվել է՝*

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

(...)

2) խոշոր չափերով՝

պարծվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապարիկից հազարապարիկի չափով, կամ ազատագրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտարկորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատագրկումը, ինչպես նաև անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատագրկումը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

(...)

3) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...)

¹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի մանրամասն վերլուծությունը տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Անահիտ Սաղաթելյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10, Միրաժ Դամբարյանի և այլոց գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11, Հրանտ Մազմանյանի գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշումներում:

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված արարքները միջին ծանրության հանցագործություն են, և այն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է հինգ տարի:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Կիրակոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղսագրված հանցագործությունը կատարել է 2015 թվականի փետրվար ամսին, իսկ նույն օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքը՝ 2014 թվականի հունիսի 5-ին¹:

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից բխում է, որ ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ամբաստանյալ Մ.Կիրակոսյանին մեղսագրված հանցանքի, այնպես էլ նույն օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված հանցագործության համար օրենքով սահմանված վաղեմության ժամկետները ենթակա են հաշվարկման 2015 թվականի փետրվար ամսից՝ յուրաքանչյուր հանցագործության համար ինքնուրույն²:

20.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետերով որակված՝ Մ.Կիրակոսյանին մեղսագրված արարքները կատարելու մեջ վերջինիս մեղավորությունը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է **2019 թվականի մայիսի 23-ին**, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում որոշում է կայացվել **2019 թվականի դեկտեմբերի 20-ին**³: Վերաքննիչ դատարանի դատական ակտը պաշտպանության կողմը ստացել է **2020 թվականի փետրվարի 28-ին**⁴: Նշված որոշման դեմ Մ.Կիրակոսյանի պաշտպանը **2020 թվականի մարտի 12-ին** բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ **2020 թվականի հունիսի 19-ի** որոշմամբ ընդունվել է վարույթ⁵:

21. Մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-19-րդ կետերում վկայակոչված

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

² Մանրամասն ^{տե՛ս}՝ *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Սիրած Ղամբարյանի և այլոց գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշման 21-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 5-րդ և 6-րդ կետերը:

⁴ Տե՛ս սույն որոշման 9.1-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

իրավանորմերի և շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մ.Կիրակոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքների՝ որպես միջին ծանրության հանցանքների համար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու հնգամյա ժամկետը լրանալու օրվա՝ 2020 թվականի փետրվար ամսվա դրությամբ, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել, հետևաբար Մ.Կիրակոսյանին հիշյալ արարքների համար քրեական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետն անցել է:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մ.Կիրակոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Վերոշարադրյալը, ինչպես նաև գործի դատական քննության փուլում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառման իմպերատիվ բնույթը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 23-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի դատական ակտերը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա Մ.Կիրակոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդումը դադարեցնելու և նրա վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճելու:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Մ.Կիրակոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավն անհրաժեշտ է վերացնել և գրավի գումարը վերադարձնել գրավատուին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Մանուկ Սամվելի Կիրակոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի մայիսի 23-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և փոփոխել:

Ամբաստանյալ Մանուկ Սամվելի Կիրակոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ և նրա վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճել:

2. Ամբաստանյալ Մանուկ Սամվելի Կիրակոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը վերացնել և որպես գրավ վճարված 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը վերադարձնել գրավատուին:

3. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասերով թողնել անփոփոխ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

արորագրություն

Դատավորներ՝

արորագրություններ

62. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0554/11/19

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

*նախազահույթյամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՈՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մարտի 2-ի որոշման դեմ դիմող Վարուգեզ Լիվանի Գասպարիի ներկայացուցիչ Տիգրան Եգորյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Յ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի սեպտեմբերի 20-ին Վարուգեզ Գասպարիի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում հարուցվել է թիվ 15864618 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2018 թվականի սեպտեմբերի 24-ին քրեական գործն ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին)՝ նախաքննություն կատարելու համար:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ քրեական գործի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցվել է:

Վերոնշյալ որոշման դեմ դիմող Վ. Գասպարիի ներկայացուցիչ Տ. Եգորյանի բողոքը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական

շրջանների դատախազության դատախազ Ս.Անդրեասյանի՝ 2019 թվականի հունիսի 6-ի որոշմամբ մերժվել է:

2. Դիմող Վ.Գասպարիի ներկայացուցիչ Տ.Եգորյանի բողոքի քննության արդյունքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), 2019 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ բողոքը բավարարել է՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել Վ.Գասպարիի իրավունքների խախտումը:

3. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազի պաշտոնակատար Գ.Մարգարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2020 թվականի մարտի 2-ի որոշմամբ բողոքը մասնակիորեն բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դիմող Վ.Գասպարիի ներկայացուցիչ Տ.Եգորյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետին ուղղված 2019 թվականի հուլիսի 24-ի գրությամբ խնդրել է դատարան ներկայացնել դիմողի ներկայացուցչի բողոքի վերաբերյալ նյութերը¹:

6. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի՝ 2019 թվականի օգոստոսի 2-ի գրությամբ Առաջին ատյանի դատարան են ուղարկվել թիվ 15864618 քրեական գործի նյութերը՝ լազերային սկավառակով²:

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը փաստում է, որ քրեական գործով վարույթը կասեցնելը

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 8:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 17:

վաղաժամ է: Վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձին հայրնաբերելու ուղղությամբ նախաքննության մարմնի կողմից իրականացված քննչական գործողությունները բավարար չեն եղել:

(...) [Հ]անցագործությունը չի բացահայտվել, որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը չի բացահայտվել, որի հետևանքով խախտվել են տուժող Վ. Գասպարիի իրավունքներն ու օրինական շահերը»¹:

8. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքում դատախազը փաստել է. «(...) Դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380¹-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջի խախտում՝ սույն բողոքի քննարկման արդյունքում անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ, 358-րդ հոդվածների պահանջները: (...) [Դ]ատարանի որոշումը բավարար չափով պարճառաբանված չէ, իսկ դատական ակտի պարճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: (...)»: Արդյունքում բողոքաբերը խնդրել է բեկանել առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը և Վարտգեղ Գասպարիի ներկայացուցիչ Տիգրան Եգորյանի բողոքը մերժել²:

9. Վերաքննիչ դատարանը, առանց ըստ էության քննության առնելու դատախազի վերաքննիչ բողոքը, իր որոշմամբ արձանագրել է. «(...) [Ս]ույն գործի քննության համար սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանը նախաքննության մարմնից չի պահանջել քրեական գործի՝ օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող նյութերը, այլ բավարարվել է լազերային սկավառակով, որում ենթադրաբար պարունակվում է սույն քրեական գործի նյութերի սկանավորված տարբերակը:

Բանն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի համալիր վերլուծությունից պարզ է դառնում, որ քրեական գործի նյութերը բաղկացած են փաստաթղթերից, որոնք կազմվում են մեկ կամ մի քանի թղթապանակներում՝ յուրաքանչյուրի կազմի վրա համապատասխան գրառումներով և նրանցում պարունակվող նյութերի ցուցակով: Ընդ որում՝ գործում եղած յուրաքանչյուր փաստաթուղթ գործին կցվելով՝ անմիջապես պետք է ըստ էջերի համարակալվի: Քրեական վարույթն իրականացնող մարմիններն իրականացնում են գործի էջերի հերթական համարակալումը՝ դրանց կցման ժամանակագրական կարգով:

Սույն գործում առկա չեն թղթապանակներով փաստաթղթեր՝ դրանց ներկայացվող օրենսդրական պահանջներով, հետևաբար առանց պարզաձ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 41:

² Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 2-8:

քրեական գործի նյութերի Առաջին ասրյանի դատարանն ըստ էության կայացրել է չհիմնավորված և անօրինական դատական ակտ:

Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ քրեական գործի նյութերի սկանավորված տարբերակը պարունակող լազերային սկավառակը չի կարող հիմք ընդունվել բողոքի քննության համար նաև այն առումով, որ փվյալ սկավառակը զննելու համար անհրաժեշտ և համապատասխան տեխնիկական միջոցներով կահավորված չեն նաև դատական նիստերի դահլիճները, որպեսզի դատարանը հնարավորություն ունենա ապահովել մրցակցային դատավարության առանցքային տարրեր հանդիսացող անմիջականության և բանավորության սկզբունքների կենսագործումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով ներկայացված բողոքների քննության ընթացքում: Արդյունքում, եթե անգամ բողոքը քննող դատավորը հնարավորություն ունեցել է ուսումնասիրելու սկավառակը և դրանում պարունակվող տեղեկարկությունը, ապա դա արել է ոչ հրապարակային, քանի որ դատական նիստի ընթացքում այն (սկավառակը) չի զննվել կողմերի մասնակցությամբ:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերոգրյալով պայմանավորված առկա է դատական ակտը անվերապահ բեկանելու հիմք (...):»¹:

Վճռարենկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռարենկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Մասնավորապես, բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել օրենքով սահմանված քննության շրջանակներից, անդրադարձել է հարցերի, որոնք դուրս են վերաքննիչ բողոքի բովանդակությունից՝ դրանով իսկ դադարելով օրենքի հիման վրա ստեղծված դատարան հանդիսանալուց:

10.1. Բողոքաբերը նաև անհիմն է համարել Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով բերված բողոքի քննության շրջանակներում Առաջին ասրյանի դատարանը վարույթ իրականացնող մարմնից պետք է պահանջեր քրեական գործի բոլոր նյութերը, և որ այդ նյութերը պետք է անհրաժեշտաբար տրամադրվեին թղթային տարբերակով: Ըստ բողոքի

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 40-43:

հեղինակի՝ օրենքը նման պայմաններ և ընթացակարգ չի նախատեսում, ավելին՝ այն ըստ էության նման վարույթների կապակցությամբ սահմանում է վարույթ իրականացնող մարմնի իրավունքը և ոչ պարտականությունը՝ ներկայացնելու նյութեր:

11. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել, վերացնել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մարտի 2-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին աստիճանի դատարանը դատական ակտ է կայացրել առանց պատշաճ քրեական գործի նյութերի:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Քրեական գործում պահվում են քրեական գործի նյութերը:*

2. Գործում եղած յուրաքանչյուր փաստաթուղթ գործին կցվելով անմիջապես պետք է ըստ էջերի համարակալվի: Քրեական վարույթն իրականացնող մարմիններն իրականացնում են գործի էջերի հերթական համարակալումը՝ դրանց կցման ժամանակագրական կարգով:

(...)

4. Քրեական գործի փաստաթղթերը կազմվում են մեկ կամ մի քանի թղթապանակներում յուրաքանչյուրի կազմի վրա համապատասխան գրառումներով և նրանցում պարունակվող նյութերի ցուցակով:

(...)

6. Քրեական գործի փաստաթղթերը կարող են պարճենահանվել թղթային կամ էլեկտրոնային կրիչի վրա քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից, որը հավասարում է պարճենի ճշգրտությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«(...) Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: (...)»:*

14. Վերոնշյալ իրավադրույթների համադրված վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ օրենսդիրն անձի դատական պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով վարույթն իրականացնող մարմնի համար սահմանել է միայն բողոքի վերաբերյալ նյութերը դատարան ներկայացնելու պարտականություն՝ չկանխորոշելով դրանց ներկայացման ձևը (բնօրինակ, պատճեն և այլն) և այն թողնելով վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը: Իսկ վարույթն իրականացնող մարմինն իրավասու է քրեական գործի փաստաթղթերը պատճենահանել թղթային կամ էլեկտրոնային կրիչի վրա:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրականացման համար վարույթն իրականացնող մարմնի կողմից բողոքի վերաբերյալ նյութերը դատարան կարող են ներկայացվել ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային կրիչով:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետին ուղղված 2019 թվականի հուլիսի 24-ի գրությամբ խնդրել է դատարան ներկայացնել դիմողի ներկայացուցչի բողոքի վերաբերյալ նյութերը¹: ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի՝ 2019 թվականի օգոստոսի 2-ի գրությամբ Առաջին ատյանի դատարան են ուղարկվել թիվ 15864618 քրեական գործի նյութերը՝ լազերային սկավառակով²,

- Առաջին ատյանի դատարանը, դիմող Վ.Գասպարիի ներկայացուցիչ Տ.Եգորյանի բողոքի քննության արդյունքում, 2019 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ բողոքը բավարարել է՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել Վ.Գասպարիի իրավունքների խախտումը³,

- Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման դեմ դատավարական իրավունքի խախտման հիմքով վերաքննիչ բողոք է ներկայացրել դատախազը՝ փաստարկելով, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բավարար չափով պատճառաբանված չէ, իսկ պատճառաբանությունների հիմքում դրվել են վերացական դատողություններ⁴,

- առանց ըստ էության քննության առնելու դատախազի բողոքը, Վերաքննիչ դատարանը, 2020 թվականի մարտի 2-ին որոշում է կայացրել այն մասնակիորեն բավարարելու և գործը նոր քննության ուղարկելու մասին՝ փաստելով, որ սույն քրեական գործում առկա չեն թղթապանակներով փաստաթղթեր՝ դրանց ներկայացվող օրենսդրական պահանջներով, հետևաբար Առաջին ատյանի դատարանն առանց պատշաճ քրեական գործի նյութերի, ըստ էության, կայացրել է չհիմնավորված և անօրինական դատական ակտ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ քրեական գործի նյութերի սկանավորված տարբերակը պարունակող լազերային սկավառակը չէր կարող հիմք ընդունվել բողոքի

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

քննության համար, քանի որ այն օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող նյութ չէ և դատական նիստի ընթացքում, մրցակցային դատավարության անմիջականության և բանավորության սկզբունքներին համապատասխան, կողմերի մասնակցությամբ չի գնվել: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ առկա է դատական ակտն անվերապահ բեկանելու հիմք, ուստի Առաջին ատյանի դատարանի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով քննության¹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը գտնելով, որ քրեական գործի նյութերի էլեկտրոնային տարբերակը պարունակող լազերային կրիչը (սկավառակը) չէր կարող հիմք ընդունվել բողոքի քննության համար, քանի որ այն օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող նյութ չէ, պատշաճ գնահատման չի ենթարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ և 290-րդ հոդվածների կարգավորումները ու ոչ իրավաչափորեն դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

Մասնավորապես, տվյալ պարագում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ

վարույթն իրականացնող մարմնի կողմից թիվ 15864618 քրեական գործի նյութերն Առաջին ատյանի դատարանի պահանջով տրամադրվել են էլեկտրոնային կրիչի՝ լազերային սկավառակի վրա, որի ուսումնասիրությունից երևում է, որ այն համապատասխանել է օրենքով սահմանված պահանջներին²: Այսպես, գործի նյութերն ամփոփված են առանձին պանակում՝ համապատասխան գրառումներով և նյութերի ցանկով, իսկ յուրաքանչյուր փաստաթուղթ համարակալված է ըստ էջերի՝ համաձայն կցման ժամանակագրության³:

Միաժամանակ, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ քրեական գործի նյութերի (փաստաթղթերի) էլեկտրոնային տարբերակը պարունակող լազերային սկավառակը չի կարող հիմք ընդունվել բողոքի քննության համար, քանի որ այն գննելու համար անհրաժեշտ և համապատասխան տեխնիկական պայմաններ չկան, որպեսզի դատարանը հնարավորություն ունենա ապահովել մրցակցային դատավարության առանցքային տարրեր հանդիսացող անմիջականության

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 18:

և բանավորության սկզբունքների կենսագործումը բողոքների քննության ընթացքում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական գործի նյութերը (փաստաթղթերը) լազերային սկավառակով դատարանին ներկայացնելու դեպքում դատարանը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս կարող է միջոցներ ձեռնարկել դրանց հետազոտումն այն նույն եղանակով կազմակերպելու համար, ինչ քրեական գործերով որպես ապացույց ներկայացվող լազերային սկավառակների հետազոտման դեպքում:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը դատական ակտ է կայացրել առանց պատշաճ քրեական գործի նյութերի, հիմնավոր չէ:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ, 290-րդ և 385-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք են:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննարկման առարկա դարձնի դատախազի ներկայացրած վերաքննիչ բողոքը՝ դրա հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Վարսզեզ Լիվանի Գասպարիի ներկայացուցիչ Տ.Եգորյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մարտի 2-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

63. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0717/13/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՆՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 6-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2015 թվականի հունվարի 21-ի դատավճռով Հրանտ Արամի Վարդանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ Հ.Վարդանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 4 (չորս) տարի ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Արմեն Կարենի Սարգսյանը:

Մեղադրող Ի.Իշխանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2015 թվականի հունիսի 2-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Սյունիքի մարզի ընդհանուր

իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թվականի հունվարի 21-ի դատավճիռը:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի հունվարի 15-ի որոշմամբ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018 թվականի նոյեմբերի 1-ին ընդունված՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառմամբ՝ Հ.Վարդանյանն ազատվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունվարի 21-ի դատավճռով նշանակված ազատազրկման ձևով պատժից:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի մարտի 6-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 15-ի որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է՝ վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 15-ի որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքի ներածական մասի համաձայն՝ այն հասցեագրվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ Վ.Ռշտունուն²:

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-66 որոշումը ստանալուց հետո:

² Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 2:

6. Վերաքննիչ դատարանը, իր դատական ակտում վկայակոչելով մինչև «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 13-ի՝ թիվ ՀՕ-155-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի կարգավորումները, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 15-ի որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժել է՝ հետևյալ հիմնավորմամբ. «(...) *Վերաքննիչ դատարանը փաստում է, որ թիվ ԵԳ/0717/13/18 գործով ներկայացված բողոքը չի համապատասխանում Վերաքննիչ բողոքին ներկայացվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանված պահանջին, մասնավորապես, այն հասցեագրված է ՀՀ վերաքննիչ դատարանի նախագահին, ուստի՝ բողոքը չի կարող ընդունվել վարույթ և նշանակվել քննության, այլ պետք է դրա վարույթ ընդունելը մերժել*»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, ինչի արդյունքում կայացվել է անհիմն և անօրինական դատական ակտ:

Մասնավորապես, մեջբերելով արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, բողոքաբերը եզրահանգել է, որ ներկայացված վերաքննիչ բողոքում դատարանին հասցեագրված լինելու ձևական պահանջը պահպանված չլինելու հիմքով բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում կայացնելով՝ Վերաքննիչ դատարանն անհամաչափորեն սահմանափակել է դատախազության՝ դատական ակտերի բողոքարկման իրավունքը:

8. Վերոշարադրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 6-ի որոշումը, և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 11:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելը՝ դատարանին հասցեագրված լինելու ձևական պահանջը պահպանված չլինելու պատճառաբանությամբ, արդյո՞ք հանգեցրել է դատախազի՝ Սահմանադրությամբ ամրագրված դատական ակտերի բողոքարկման գործառույթի իրացման անհնարինության:

10. ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *«Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ (...) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ *«Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է՝*

(...) բողոքարկել դատարանի դատավճիռները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումներ»:

10.1. Մեջբերված նորմերի բովանդակությունից հետևում է, որ դատախազը, լինելով հանրային իշխանության մարմին, քրեական դատավարությունում հանդես է գալիս որպես մեղադրանքի կողմ և օժտված է, ի թիվս այլնի, նաև դատարանի դատավճիռները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումները բողոքարկելու լիազորությամբ: Դատախազի այս լիազորությունը համահունչ է դատախազի կարգավիճակի վերաբերյալ միջազգային փաստաթղթերով ամրագրված չափանիշներին: Այսպես՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հոկտեմբերի 6-ի «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ» թիվ Rec(2000)19 հանձնարարականի 1-ին հոդվածի համաձայն՝ դատախազները պետական իշխանությամբ օժտված մարմինների ներկայացուցիչներ են, ովքեր հասարակության անունից և հանուն հանրային շահի ապահովում են օրենքի կիրառումը բոլոր այն դեպքերում, երբ օրենքի խախտումը հանգեցնում է քրեական սանկցիաների՝ հաշվի առնելով ինչպես անձի իրավունքները, այնպես էլ քրեական արդարադատության համակարգի պատշաճ արդյունավետությունը: Հանձնարարականի 2-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ քրեական արդարադատության բոլոր համակարգերում դատախազները կարող են բողոքարկել բոլոր կամ որոշ դատական որոշումներ: Նշված հանձնարարականի բացատրական նամակում տրված 2-րդ հոդվածի մեկնաբանության համաձայն՝ դատական որոշումները

բողոքարկելու դատախազի իրավունքը սերտորեն փոխկապված է դատախազության ընդհանուր գործառնայթի հետ, քանի որ այն օրենքի կիրառումն ապահովելու և միննույն ժամանակ արդարադատության համակարգն ավելի արդյունավետ դարձնելուն օժանդակող միջոցներից մեկն է¹:

10.2. Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող պահանջների պահպանումը չպետք է այնպես մեկնաբանվի և այն աստիճան ձևականացվի (excessive formalism), որ դատախազի՝ դատական ակտերը բողոքարկելու սահմանադրորեն ամրագրված լիազորությունը ոչ իրավաչափորեն սահմանափակվի²: Այլ կերպ՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու (բողոքն առանց քննության թողնելու) մասին որոշումը պետք է հիմնված լինի վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող պահանջների՝ պահպանված չլինելու մասին փաստերի բովանդակային գնահատման վրա:

11. Մինչև «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 13-ի՝ թիվ ՀՕ-155-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝

1) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը (...):
(...)

6. Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը կարող է մերժել միայն այն դեպքում, երբ չեն պահպանվել վերաքննիչ բողոքին առաջադրվող պահանջները (...):

(...):»:

12. Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշմամբ փաստել է. «(...) [Վ]երաքննիչ բողոքում հայրնաբերված թերությունների կամ սխալների նկարումներ պետք է դրսևորվի փարբերակված մտրեցում, ինչի հերևանքով անհրաժեշտ կլինի նաև սահմանազարել դրանցից հերևող հնարավոր իրավական հերևանքները: Եթե ձևական պահանջների խախտման դեպքում չսիազանց իհար հերևանքներ նաիարեսելը կսահմանափակի անձի

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Նարեկ Հարությունյանի գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՆԴ/0081/01/14 որոշումը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Այվազյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշման 16-րդ կետը, Լևոն Հարությունյանի գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշման 13-րդ կետը, Նաիրի Գևորգյանի գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ՍԴ/0088/01/12 որոշման 14-րդ կետը:

հիմնական իրավունքի իրացման հնարավորությունը, սպա բովանդակային պահանջների խախտման հանդեպ անհամաչափ մեղմ գնահատականը կարող է այդ իրավունքի չարաշահման նախադրյալներ ստեղծել:

(...)

Այսպիսով, եթե վերաքննիչ բողոք ներկայացրել է այն անձը, ով չունի այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է (քացակայում է այն վերականգնելու հիմնավոր որևէ պարճատ), կամ այն բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման և նման այլ այնպիսի հիմքերի առկայությամբ, երբ անձը վերաքննիչ դատարանի գնահատմամբ փաստի ուժով, իրավական տեսանկյունից օբյեկտիվորեն անկարող է իրացնել դատական բողոքարկման իր իրավունքը, սպա վերջինիս իրացման արգելքը, ինչը նախատեսված է [ՀՀ քրեական դատավարության] [օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասում, իրավական պարշաճ գործընթացի արդյունքում կարող է գնահատվել իրավաչափ: Մինչդեռ, վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական որևէ նախապայմանի խախտման հիմքով, երբ առկա է այն շրկելու իրավական ողջամիտ հնարավորություն, անձին Սահմանադրությամբ երաշխավորված դատական բողոքարկման իր իրավունքի իրացումից զրկելը, սահմանափակելը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ չի կարող բխել մնադու իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման և իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներից, ինչպես նաև այդ բնագավառում հանրային իշխանությանն առաջադրված սահմանադրաիրավական նպատակներից: Հերեաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ, վեճի առարկա իրավակարգավորմամբ նախատեսված ձևական պահանջների չպահպանման հիմքով սահմանափակելով անձի հիմնական իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, այդ թվում՝ արդարադատության մտրչելիության իրավունքը, խախտվել է Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքը: Սահմանադրության 75-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից այդ իրավակարգավորումը չի համապատասխանում իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման ընթացակարգի չափանիշներին (...):»¹:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 6-ի որոշմամբ Առաջին ստյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 15-ի որոշման դեմ

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՌ-1420 որոշման 4.3-4.5-րդ կետերը:

դատախազի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է՝ մինչև «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 13-ի՝ թիվ ՀՕ-155-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջը պահպանված չլինելու պատճառաբանությամբ¹:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքը գնահատելով սույն որոշման 10-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե անգամ կոնկրետ դեպքում առկա է եղել վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող իր բնույթով ձևական պահանջի խախտում, ապա այն շտկելու ողջամիտ հնարավորության առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից դատախազի բողոքը վարույթ ընդունելը մերժելը հիմնավոր համարվել չի կարող:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող պահանջի պահպանվածությանը տրված նման մեկնաբանությամբ դատախազի բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում կայացնելով, *prima facie* ոչ իրավաչափորեն սահմանափակել է դատախազի՝ սահմանադրորեն ամրագրված դատական ակտերի բողոքարկման գործառույթի իրացումը:

15. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելը՝ դատարանին հասցեագրված լինելու ձևական պահանջը պահպանված չլինելու պատճառաբանությամբ, հանգեցրել է դատախազի՝ Սահմանադրությամբ ամրագրված՝ դատական ակտերի բողոքարկման գործառույթի իրացման անհնարինության:

16. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 6-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության², որի ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է կայացնի համապատասխան որոշում՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք»

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Հրանտ Արամի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

64. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԴ/0044/15/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի դեկտեմբերի 22-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով դատապարտյալ Աշոտ Էդվարդի Ղուկասյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 29-ի որոշման դեմ պաշտպան Վ.Գալստյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Արարտի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 28-ի դատավճռով Աշոտ Ղուկասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 10 (տաս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Պատժի սկիզբը հաշվվել է 2010 թվականի օգոստոսի 9-ից:

Ամբաստանյալի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև վերաքննիչ դատարան)՝ 2011 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ բողոքը մերժվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 28-ի դատավճիռը՝ թողնվել անփոփոխ:

2. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Ղուկասյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը մերժվել է:

3. Դատապարտյալ Ա.Ղուկասյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 29-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Հ.Գալստյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 14-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով դատապարտյալ Ա.Ղուկասյանի վերաքննիչ բողոքը, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(․․․) «1. Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝

(․․․)

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում մեջբերելով դրանց հակասող մասերը և կարարելով համեմատական վերլուծություն, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հերևանքով գործի վերանայման հիմքերը.

(․․․):

2.1. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը թողնում է առանց քննության, եթե՝

1) վերաքննիչ բողոքը բերվել է սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ և 5.1-ին կետերով սահմանված պահանջների խախտմամբ. (․․․)»:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Աշոտ Ղուկասյանը չի շարադրել բողոքի հիմքերը, վերաքննիչ բողոքում չի նշել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները:

Այսինքն՝ բողոքաբերը չի պահպանել վերաքննիչ բողոքին ներկայացվող բովանդակային պահանջները՝ բացակայում են վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները: Այլ կերպ՝ ներկայացված վերաքննիչ բողոքը չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 5.1-ին կետերով սահմանված պահանջներին:

(...)

Ամփոփելով վերոգրյալը, և նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքին ներկայացվող բովանդակային պահանջների խախտման հանդեպ անհամաձայն մեղմ գնահատականը կարող է այդ իրավունքի չարաշահման նախադրյալներ ստեղծել՝ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Իվյալ դեպքում դատապարտյալ Աշոտ Ղուկասյանը, վերաքննիչ բողոքին ներկայացվող բովանդակային պահանջների խախտման փաստի ուժով, իրավական տեսանկյունից օբյեկտիվորեն անկարող է իրացնել դատական բողոքարկման իր իրավունքը, հետևաբար՝ նրա կողմից ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության¹:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի դրույթները, ինչի արդյունքում խախտվել են Ա.Ղուկասյանի իրավունքները:

Բողոք բերած անձը, վկայակոչելով ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշումը, հայտնել է, որ Վերաքննիչ դատարանը դատապարտյալին զրկել է բողոքը շտկելու և կրկին ներկայացնելու հնարավորությունից:

Բողոքաբերի պնդմամբ՝ դատապարտյալի կողմից բողոք կազմելիս տեսականորեն պահպանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի դրույթների պահանջները, և նկատի ունենալով վերջինիս ցածր իրավագիտակցությունը, ըստ էության բողոքի նման ձևակերպում

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 73-76:

ինքնին հիմք չէր վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելու համար:

7. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 29-ի որոշումը, և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն այն պատճառաբանությամբ, որ չի պահպանվել բողոքի հիմքը և հիմնավորումը ներկայացնելու վերաքննիչ բողոքին առաջադրվող պահանջը, հանգեցրել է դատապարտյալ Ա.Ղուկասյանի՝ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքների խախտման:

9. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա արեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

10. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով¹,

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը²,

- դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն³,

- ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա⁴: Դատարանի մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի⁵:

11. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով դատարանի մատչելիության իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ «*Դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պարզապես պահանջարկային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա:*

¹Տե՛ս *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

² Տե՛ս նույն տեղում:

³Տե՛ս *Khalfaoui v. France* գործով 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, 36-րդ կետ, *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ:

⁴Տե՛ս *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

⁵Տե՛ս *Efstathiou and others v. Greece* գործով 2006 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ:

Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կհասիրվեն անձի՝ դատարանի մարչելիության և արդար դատաքննության իրավունքները»¹:

12. Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՄԴՈ-1420 որոշմամբ փաստել է. «(...) [Վ]երաքննիչ բողոքում հայրնաբերված թերությունների կամ սխալների նկարումներ պետք է դրսևորվի փարբերակված մտրեցում, ինչի հերևանքով անհրաժեշտ կլինի նաև սահմանազարել դրանցից հերևող հնարավոր իրավական հերևանքներ: Եթե ձևական պահանջների խախտման դեպքում չսիազանց խիար հերևանքներ նախարեսելը կսահմանափակի անձի հիմնական իրավունքի իրացման հնարավորությունը, սպար բովանդակային պահանջների խախտման հանդեպ անհամաչափ մեղմ գնահարականը կարող է այդ իրավունքի չարաչահման նախարթյալներ սրեղծել:

(...)

Այսպիսով, եթե վերաքննիչ բողոք ներկայացրել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է (բացակայում է այն վերականգնելու հիմնավոր որևէ պարճատ), կամ այն բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման և նման այլ այնպիսի հիմքերի առկայությամբ, երբ անձը վերաքննիչ դատարանի գնահարումներ փաստի ուժով, իրավական տեսանկյունից օրյեկտիվորեն անկարող է իրացնել դատական բողոքարկման իր իրավունքը, սպար վերջինիս իրացման արգելքը, ինչը նախարեսված է [ՀՀ քրեական դատավարության] [օրենսգրքի 381-րդ հողվածի 2-րդ մասում, իրավական պարչաճ գործընթացի արդյունքում կարող է գնահարվել իրավաչափ: Մինչդեռ, վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական որևէ նախասպայմանի խախտման հիմքով, երբ առկա է այն շրկելու իրավական ողչամիտ հնարավորություն, անձին Սահմանադրությամբ երաչխավորված դատական բողոքարկման իր իրավունքի իրացումից գրկելը, սահմանափակելը, Սահմանադրական դատարանի գնահարումներ չի կարող բիել մարդու իրավունքների ու ազարությունների արդյունավեր դատական պաշտպանության

¹Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Այվազյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴԶ/0007/15/12 որոշումը, 16-րդ կետ, Լևոն Հարությունյանի գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշումը, 13-րդ կետ:

իրավունքի երաշխավորման և իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներից, ինչպես նաև այդ բնագավառում հանրային իշխանությանն առաջադրված սահմանադրաիրավական նպատակներից: Հերևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ, վեճի առարկա իրավակարգավորմանը նախապեսված ձևական պահանջների չպահպանման հիմքով սահմանափակելով անձի հիմնական իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, այդ թվում՝ արդարադատության մարչելիության իրավունքը, խախտվել է Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքը: Սահմանադրության 75-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից այդ իրավակարգավորումը չի համապատասխանում իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման ընթացակարգի չափանիշներին (...)¹:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի (...)

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5¹) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում մեջբերելով դրանց հսկասող մասերը և կարարելով համեմատական վերլուծություն, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը. (...):»:

14. Մեջբերված նորմի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը Հարություն Հարությունյանի գործով արձանագրել է, որ եթե կոնկրետ դեպքում առկա է վերաքննիչ բողոքի բովանդակությամբ ներկայացվող բնույթով ձևական նախապայմանի խախտում, ապա այն շտկելու ողջամիտ հնարավորության առկայության պայմաններում բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելով, Վերաքննիչ դատարանը *prima facie* ոչ իրավաչափորեն սահմանափակում է անձի դատարան դիմելու և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու իրավունքը²:

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշման 4.3-4.5-րդ կետերը:

² Տե՛ս Հարություն Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԱԲԱԳ/0033/15/19 որոշման 16-17-րդ կետերը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 29-ի որոշմամբ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ դատապարտյալի բողոքը թողնվել է առանց քննության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 5¹-րդ կետերով վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները պահպանված չլինելու պատճառաբանությամբ¹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքը գնահատելով սույն որոշման 9-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե կոնկրետ դեպքում առկա է եղել վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական նախապայմանի խախտում, ապա այն շտկելու ողջամիտ հնարավորության առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից այն առանց քննության թողնելը հիմնավոր համարվել չի կարող: Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող դատավարական պահանջներին տրված նման մեկնաբանությամբ դատապարտյալի բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելով, ոչ իրավաչափորեն սահմանափակել է դատարան դիմելու անձի իրավունքը, որի արդյունքում խախտվել են անձի՝ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքները:

17. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ դատապարտյալ Ա.Ղուկասյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 29-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ համապատասխան որոշում կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Աշոտ Էդվարդի Դուկասյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

65. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0548/06/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2020 թվականի դեկտեմբերի 25-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Վալերի Հովանեսի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 2-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայագորային քննչական բաժնում (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին), 2019 թվականի մարտի 28-ին հարուցվել է թիվ 90253719 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

1.1. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 23-ի որոշմամբ Վալերի Հովանեսի Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով:

1.2. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 23-ի որոշմամբ Վ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհետանալու մասին ստորագրությունը և հայտարարվել է հետախուզում:

1.3. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 24-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ մեղադրյալի կողմից քննությունից թաքնվելու հիմքով, քրեական գործով վարույթը կասեցվել է:

1.4. Գործի քննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից ցուցում է տրվել փոփոխել մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված չհեռանալու մասին ստորագրությունը և վերջինիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնել դատարան:

1.5. Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է կատարել դատավարական գործողություններ, որոնք կարող են իրականացվել առանց մեղադրյալի մասնակցության, Նախաքննության մարմինը 2019 թվականի հունիսի 17-ին որոշում է կայացրել քրեական գործով կասեցված վարույթը վերակսելու մասին:

1.6. 2019 թվականի հուլիսի 12-ին Նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Վ.Հակոբյանի նկատմամբ երկու ամիս ժամկետով կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ մեղադրյալ Վ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը երկու ամիս ժամկետով ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է:

3. Երևանի կայագործի գինվորական դատախազության դատախազ Հ.Մաշադյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 17-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹: Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 21-ի

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0426/11/18 գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-66 որոշումը ստանալուց հետո:

որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Երևանի թիվ 2 զինվորական կոմիսարիատի զինվորական կոմիսար Ս.Արմենակյանի՝ 2019 թվականի մարտի 7-ի գրության համաձայն՝ 2000 թվականի դեկտեմբերի 16-ին ծնված գորակոչիկ Վ.Հակոբյանը 2018 թվականի մարտի 13-ին հաշվառվել է Կենտրոնական զինվորական կոմիսարիատում, ենթակա է եղել գորակոչի 2018 թվականի ձմեռային գորակոչին, սակայն նշված ժամանակահատվածում չի ներկայացել գորակոչին: Համաձայն նույն գրության՝ Վ.Հակոբյանին գորակոչային միջոցառումներին ներկայացնելու նպատակով զինվորական կոմիսարիատի և ոստիկանության կողմից ձեռնարկված միջոցառումները արդյունք չեն տվել¹:

5.1. Նախաքննության մարմնի՝ վկային հարցաքննության կանչելու մասին 2019 թվականի մարտի 28-ի ծանուցագրի համաձայն՝ Վ.Հակոբյանը որպես վկա հարցաքննության նպատակով հրավիրվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժին²:

5.2. Ոստիկանության Կենտրոնական բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան Ս.Աբրահամյանի՝ 2019 թվականի մարտի 28-ի տեղեկանքում նշվում է, որ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժնից ստացված գրության պահանջի համաձայն՝ այցելել է Վ.Հակոբյանի բնակության վայր՝ վերջինիս հայտնաբերելու և վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու համար, սակայն դուռը գտնվել է փակ վիճակում, իսկ ըստ տեղամասի լիազոր՝ Հասմիկ Մեսրոպյանի հետ գրույցի և բանավոր հայտարարության, Վ.Հակոբյանի ծնվելուց հետո մեկ տարի անց ընտանիքը տեղափոխվել է Վրաստանի Հանրապետության Ջավախք համայնք³:

5.3. Անձին բերման ենթարկելու մասին 2019 թվականի ապրիլի 5-ի որոշման համաձայն՝ որպես վկա հարցաքննության ներկայանալու նպատակով ծանուցագիր է ուղարկվել Վ.Հակոբյանին, սակայն վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացել վարույթն իրականացնող մարմին:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 13:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 19:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 22:

5.4. Ոստիկանության Կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքի համայնքային ոստիկանության տեսուչ, ավագ լեյտենանտ Գ.Սարգսյանի կազմած արձանագրության համաձայն՝ վերջինս այցելել է Վ.Հակոբյանի բնակության վայր վերջինիս հայտնաբերելու և վարույթն իրականացնող մարմին բերման ենթարկելու համար, սակայն դուռը գտնվել է փակ վիճակում¹:

6. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 23-ի որոշմամբ Վալերի Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն բանի համար, որ. *«(...) [Ն/ա 13.03.2018թ.-ին կցագրվել է Կենտրոնական զինվորական կոմիսարիատում և ենթակա եղել զորակոչի 2018թ. ձմեռային զորակոչին, սակայն զորակոչի համար սահմանված ժամկետում չի ներկայացել զինկոմիսարիատ և խախտելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» կամ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքները խուսափել է ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական 2018թ. ձմեռային զորակոչից այդ ծառայությունից ազատվելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում»²:*

7. Նախաքննության մարմնի կողմից Վ.Հակոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությանը կից ներկայացվել է վերջինիս սահմանահատումների պատմությունը, որի համաձայն՝ վերջինս 2018 թվականի մարտի 19-ին լքել է Հայաստանի Հանրապետության սահմանը³:

8. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(...) [Դ]ատարանը հաստատել է համարում, որ Վալերի Հովանեսի Հակոբյանը հանդիսանում է ՀՀ քաղաքացի, ուստի ՀՀ սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը: (...) [Դ]ատարանը հաստատել է համարում, որ առկա են հիմքեր հաստատելու մեղադրյալին առաջադրված մեղադրանքում հիմնավոր կասկածի առկայությունը:*

Անդրադառնալով մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությանը, դատարանը արձանագրում է, որ միջնորդության մեջ վարույթն իրականացնող մարմինը դրա հիմքում դրել է հետևյալ պատճառաբանությունը՝ «սա թաքնվում է քննությունից, խուսափում է զորակոչային հանձնաժողովին և քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայանալուց»: Դատարանը հարկ է

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 23:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 9:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 18:

համարում նշել, որ գորակոչային հանձնաժողովին ներկայանալուց խուսափելը չի կարող հիմք հանդիսանալ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար, այդ արարքը կարող է հանգեցնել միայն վարչական պատասխանատվության: Ինչ վերաբերում է քննությունից թաքնվելուն կամ վարույթն իրականացնող մարմնին ներկայանալուց խուսափելուն, ապա չի ներկայացվել որևէ տվյալ կամ փաստական հանգամանք, որը կհիմնավորի, որ մեղադրյալը տեղյակ է իրականացվող քրեական հետապնդման մասին և թաքնվում կամ խուսափում է քննությունից: Ընդ որում ներկայացված նյութերի համաձայն մեղադրյալը 19.03.2018 թվականին հատել է ՀՀ պետական սահմանը, իսկ քրեական գործը հարուցվել է դրանից ավելի քան մեկ տարի անց՝ 28.03.2019 թվականին, հետևաբար վարույթն իրականացնող մարմնի պնդումները, որ մեղադրյալը թաքնվում է քննությունից անհիմն են ու հակասում են գործի նյութերից բխող փաստական տվյալներին:

(...)

[Դատարանը գտնում է, որ Վալերի Հովանեսի Հակոբյանի նկատմամբ կալանավորման կիրառումը կոնկրետ դեպքում անհամաչափ կսահմանափակի նրա ազատության իրավունքը, ուստի միջնորդությունը ենթակա է մերժման (...)]¹:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանի դիտարկմամբ, հիմնավոր կասկածի առկայությամբ ներկայացված փաստական տվյալներն ու տեղեկությունները, (կոնկրետ դեպքում) բավարար են գործի քննության ներկա փուլում, հիմնավոր կասկածի շեղում հաղթահարելու համար:

Ինչ վերաբերում է (միջնորդությամբ վկայակոչված) կալանավորման հիմքին՝ մեղադրյալի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելուն, ապա այդ առնչությամբ դատախազի կողմից ներկայացված պատճառաբանություններն ու արտահայտած պնդումները (կոնկրետ դեպքում) բավարար չափով փաստարկված չեն և բավարարության կանխավարկածի համատեքստում այդ առումով հիմնավոր ենթադրություն անելու հիմք հանդիսանալ չեն կարող:

Այլ կերպ ասած, քննարկվող դեպքում, առկա չէ որպես խափանման միջոց կալանավորում ընտրելու հիմքն, ինչն ինքնին բացառում է մեղադրյալ Վալերի Հովանեսի Հակոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հնարավորությունը:

Որպիսի պայմաններում, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ տվյալ դեպքում, առկա չէ այնպիսի շահ, որն արդարացնում

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 27-28:

է (կոնկրետ դեպքում) մեղադրյալ Վալերի Հովհաննեսի Հակոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելը:

(...)

[Վ]երաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով, դատական ակտ կայացնելիս ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի խախտումներ թույլ չեն տրվել, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Հետևաբար, վիճարկվող դատական ակտը պետք է թողնել անփոփոխ, իսկ դատախազի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժել (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

10. Բողոքի հեղինակը, մատնանշելով Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, գտել է, որ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 17-ի որոշումը, թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

11. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը վերլուծության չի ենթարկել այնպիսի փաստական հանգամանքներ, ինչպիսիք են՝ մեղադրյալ Վ.Հակոբյանին հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկված անհրաժեշտ և իրենց որակական ու քանակական կազմով բավարար միջոցառումները, մասնավորապես այն, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից հարցաքննության ներկայանալու համար Վ.Հակոբյանին ուղարկվել է ծանուցագիր, մինչ այդ ծանուցագրեր են ուղարկվել Երևանի թիվ 2 զինկոմիսարիատի աշխատակիցների կողմից, կազմվել է բերման ենթարկելու մասին որոշում, մեղադրյալի բնակության հասցեով երեք այցելություններ են կատարվել, մեղադրյալ Վ.Հակոբյանին հայտնաբերելու համար հայտարարվել է հետախուզում, և քրեական գործով ձեռք է բերվել փաստական տվյալ, որ մեղադրյալը 2018 թվականի մարտի 19-ին լքել է ՀՀ սահմանը:

11.1. Վերաքննիչ դատարանի կողմից, բողոքաբերի պնդմամբ, գնահատման չի ենթարկվել այն հանգամանքը, որ Վ.Հակոբյանի՝ որպես ՀՀ քաղաքացու համար նվազագույնը պետք է կանխատեսելի լինել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պարտականությունը, ուստի և նրա դրսևորած վարքագիծը գնահատելով՝ վարույթն իրականացնող մարմնի

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 34-35:

մոտ համոզմունք է ձևավորվել առ այն, որ Վ.Հակոբյանն ուղղակի դիտավորությամբ թաքնվում է վարույթն իրականացնող մարմնից:

11.2. Բողոք բերած անձը նշել է նաև, որ մեղադրյալ Վ.Հակոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի բացակայության մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումը հիմնված է ոչ թե գործի նյութերում առկա փաստական տվյալները և տեղեկություններն իրենց համակցության մեջ գնահատելու, այլ դրանք մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման ենթարկելու արդյունքում ձևավորված դատողությունների վրա: Արդյունքում բողոքաբերը եզրակացրել է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Վ.Հակոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են, հիմնավոր չեն և չեն բխում ինչպես քրեական գործով ձեռք բերված փաստական հանգամանքներից, այնպես էլ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներից:

12. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը՝ բավարարելով մեղադրյալ Վ.Հակոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Վ.Հակոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու՝ քննությունից թաքնվելու հիմքի բացակայության մասին ստորադաս դատարանների հետևությունները:

14. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (...):»

14.1. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական*

անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում՝ նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար (...):»:

14.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և անձնական ազատության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: (...):»:

Նույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

(...):»:

15. Մեջբերված նորմերի վերլուծության շրջանակներում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, հարուցված քրեական գործի, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայություն և այլն) վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների

առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով¹:

15.1. Վճռաբեկ դատարանը կրկին փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները բոլոր դեպքերում պետք է պայմանավորված լինեն գործի նյութերից բխող որոշ փաստական տվյալներով: Սակայն մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կալանավորման հիմք(եր)ի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն ոչ թե այդ փաստական տվյալները մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման ենթարկելու, այլ դրանք իրենց համակցության մեջ գնահատման ենթարկելու արդյունքում ձևավորվող փաստարկված դատողությունների վրա: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ համապատասխան փաստական տվյալներն իրենց ամբողջության մեջ չվերլուծելը, դրանք իրարից անջատ գնահատելը կարող է հանգեցնել կալանավորման հիմքի առկայության կամ բացակայության մասին չհիմնավորված եզրահանգման գալու: Հետևաբար խնդրո առարկա հարցը լուծելիս դատարանի հետևությունները յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնված լինեն գործի նյութերում առկա ապացույցների, փաստերի կամ այլ տեղեկությունների, այդ թվում՝ քրեական օրենքով արգելված ենթադրյալ հանցանքի կատարման պահից ի վեր մեղադրյալի դրսևորած վարքագծի և նրա անձը բնութագրող այլ հատկանիշների՝ իրենց ամբողջության մեջ գնահատման վրա:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրահանգումը պետք է հիմնված լինի վերը նշված հանգամանքների փոխազդեցության, հարաբերակցության բացահայտման, այդ հանգամանքների համակցված գնահատման արդյունքում ձևավորված համոզմունքի վրա, ինչն իր հերթին պետք է արտացոլվի դատարանի կողմից կայացվող դատական ակտում²:

Վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու համատեքստում պատշաճ ծանուցված լինելու հանգամանքի առնչությամբ Վճռաբեկ

¹ Տե՛ս, մասնավորապես, Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Ճուղուրյանի* գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07, *Սայան Ավերիայանի* գործով 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08, *Տիգրան Վահրադյանի* գործով 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08, *Աշոտ Առաքելյանի* գործով 2007 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԿԴ/0580/06/09, *Վահրամ Գևորգյանի* գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10, *Գոռ Դուրյանի* գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ՏԴ/0052/06/14, *Գազիկ Խաչիկյանի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱԲԴ/0386/06/15 որոշումները և այլն:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Պետրոսյանի* գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԿԴ/0084/06/16 որոշման 13-րդ կետը:

դատարանը կրկնում է, որ ծանուցագիրը ստանալու փաստը հաստատող տվյալի բացակայության դեպքում ծանուցման պատշաճ լինելու հարցը լուծելիս անհրաժեշտ է բազմակողմանի վերլուծության ենթարկել այդ ուղղությամբ համապատասխան մարմինների կողմից ձեռնարկված գործողությունների քանակական և որակական կազմը, ծանուցվող անձի դրսևորած վարքագիծը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք կարող են առանցքային նշանակություն ունենալ խնդրո առարկա հարցի լուծման համար: Հակառակ մեկնաբանության դեպքում, երբ վարույթ իրականացնող մարմին ներկայանալու վերաբերյալ ծանուցումները ենթադրյալ հանցանք կատարած անձի՝ օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվելու հանգամանքով պայմանավորված չստանալու դեպքում մեխանիկորեն համարվեն ոչ պատշաճ, ապա կարող է արհեստականորեն խոչընդոտվել նրանց հայտնաբերմանն ուղղված դատավարական հարկադրանքի միջոցների գործադրումը և անհնարին դառնալ պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կենսագործումը¹:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Վ.Հակոբյանը 2018 թվականի մարտի 13-ին հաշվառվել է Կենտրոնական զինվորական կոմիսարիատում, ենթակա է եղել զորակոչի 2018 թվականի ձմռանը, սակայն 2018 թվականի մարտի 19-ին հատել է ՀՀ պետական սահմանը և նշված ժամանակահատվածում չի ներկայացել զորակոչին²,

- 2019 թվականի մարտի 28-ին հարուցվել է թիվ 90253719 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Նույն օրը՝ 2019 թվականի մարտի 28-ին, Վ.Հակոբյանին որպես վկա հարցաքննության համար ծանուցագիր է ուղարկվել, և նույն օրը վերջինիս հայտնաբերելու և վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու համար այցելություն է կատարվել նրա բնակության հասցեով, սակայն բնակարանը փակ է եղել³,

- 2019 թվականի ապրիլի 5-ին Վ.Հակոբյանին բերման ենթարկելու մասին որոշում է կայացվել, և ի կատարումն նշված որոշման, այցելություն է կատարվել վերջինիս բնակության վայր, սակայն բնակարանը փակ է եղել⁴,

- նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 23-ի որոշմամբ Վ.Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն բանի համար, որ խախտելով

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Պևրոբյանի* գործով վերը հիշատակված որոշման 15-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 5.1-րդ և 5.2-րդ կետերը:

⁴ Տե՛ս սույն որոշման 5.3-րդ և 5.4-րդ կետերը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» կամ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության պայմաններում խուսափել է ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական՝ 2018 թվականի ձմեռային գորակոչից¹,

- Առաջին ատյանի դատարանը, Վ.Հակոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննության շրջանակում 2019 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ արձանագրել է, որ Վ.Հակոբյանը ՀՀ քաղաքացի է, ուստի ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, հետևապես առկա են հիմքեր հաստատված համարելու մեղադրյալին առաջադրված մեղադրանքում հիմնավոր կասկածի առկայությունը: Մինևույն ժամանակ, վերոգրյալ որոշմամբ դատարանը, անդրադառնալով Նախաքննության մարմնի ներկայացրած միջնորդության մեջ նշված՝ Վ.Հակոբյանի կողմից քննությունից թաքնվելու, գորակոչային հանձնաժողով և քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալուց խուսափելու պատճառաբանություններին, ընդգծել է, որ գորակոչային հանձնաժողովին ներկայանալուց խուսափելը հիմք չէ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար, այդ արարքը կարող է հանգեցնել միայն վարչական պատասխանատվության, իսկ ինչ վերաբերում է քննությունից թաքնվելուն կամ վարույթն իրականացնող մարմին ներկայանալուց խուսափելուն, ապա չի ներկայացվել որևէ տվյալ կամ փաստական հանգամանք, որը կհիմնավորի, որ մեղադրյալը տեղյակ է իրականացվող քրեական հետապնդման մասին և թաքնվում կամ խուսափում է քննությունից: Առաջին ատյանի դատարանն ընդգծել է, որ ներկայացված նյութերի համաձայն՝ մեղադրյալը 2018 թվականի մարտի 19-ին հատել է ՀՀ պետական սահմանը, իսկ քրեական գործը հարուցվել է դրանից ավելի քան մեկ տարի անց՝ 2019 թվականի մարտի 28-ին, ուստի այն պնդումները, թե մեղադրյալը թաքնվում է քննությունից, անհիմն են ու հակասում են գործի նյութերից բխող փաստական տվյալներին²:

- Վերաքննիչ դատարանը 2020 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ հաստատել է Առաջին ատյանի դատարանի որոշման հիմնավորվածությունն ու օրինականությունը³:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-15.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, Վ.Հակոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշում կայացնելով, իսկ Վերաքննիչ դատարանը՝ այդ որոշումն անփոփոխ թողնելով, պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել մի շարք հանգամանքներ և իրենց եզրահանգումները չեն կառուցել այդ հանգամանքների համակցված վերլուծության վրա: Մասնավորապես, ստորադաս դատարաններն անտեսել են.

- մեղադրյալ Վ.Հակոբյանին հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների որակական և քանակական կազմը, մասնավորապես՝ հարցաքննության համար վարույթն իրականացնող մարմին ներկայանալու վերաբերյալ ծանուցագիր ուղարկելը, բերման ենթարկելու մասին որոշում կազմելը, մեղադրյալի բնակության վայրի հասցեով երկու այցելություն կատարելը,

- մեղադրյալին առնչվող հանգամանքները, մասնավորապես՝ այն, որ Վ.Հակոբյանին՝ որպես ՀՀ զինվորական ծառայության ենթակա լինելու պարտականություն ունեցող ՀՀ քաղաքացու համար հայտնի է եղել զորակոչի ենթակա լինելու հանգամանքը, ինչպես նաև ողջամտորեն կանխատեսելի են եղել զորակոչի ներկայանալու պոզիտիվ պարտականությունը չկատարելու դեպքում հնարավոր բացասական հետևանքները:

18. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում նաև Առաջին ատյանի դատարանի որոշման հիմքում դրված այն դիրքորոշումը, որ քրեական գործը հարուցվել է մեղադրյալի կողմից ՀՀ պետական սահմանը հատելուց մեկ տարի անց, հետևաբար հիմնավոր չեն մեղադրյալի կողմից քննությունից թաքնվելու մասին պնդումները:

19. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հիմնավոր չեն Վ.Հակոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու՝ քննությունից թաքնվելու հիմքի բացակայության մասին ստորադաս դատարանների հետևությունները:

20. Այսպիսով, անփոփոխելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել դատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջների խախտում, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է

Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար¹:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վալերի Հովանեսի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 2-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

սրորագրություն

Դատավորներ՝

սրորագրություններ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

66. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0016/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹՎԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
դիմողի ներկայացուցիչ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՊԱՊԻԿՅԱՆԻ

2020 թվականի մայիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 5-ի որոշման դեմ դիմող Նախշուն Արամի Ենգիբարյանի ներկայացուցիչ Ա.Պապիկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի փետրվարի 4-ին Նախշուն Ենգիբարյանը ՀՀ գլխավոր դատախազին դիմում է ներկայացրել այն մասին, որ իր որդուն՝ կալանքի տակ գտնվող Հրայա Գևորգյանին ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում (այսուհետ՝ նաև ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ) թունավորել են:

2016 թվականի փետրվարի 26-ին ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի հետաքննիչ Հ.Սավրայանը որոշում է կայացրել

Ն.Ենգիբարյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշմամբ վերը նշված որոշումը վերացվել է, և ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 63202016 քրեական գործը:

1.1. 2017 թվականի ապրիլի 7-ին Արմավիրի մարզի դատախազությունում ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ) դատապարտյալ Հ.Գևորգյանի մահվան փաստի առթիվ նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 57200117 քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին):

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 16-ի որոշմամբ վերոնշյալ քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է 57200117 համարով:

1.2. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ թիվ 57200117 քրեական գործի նյութերով հարուցվել է նոր՝ թիվ 62239017 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Նույն օրը թիվ 62239017 քրեական գործը միացվել է թիվ 57200117 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 57200117 համարով:

2. Նախաքննության մարմինը 2017 թվականի նոյեմբերի 30-ին որոշում է կայացրել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի աշխատակիցներ Սմբատ Բուրդադարյանի, Նոնա Օհանյանի և Արմեն Դուկասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասով հանցագործության դեպքի բացակայության, ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի աշխատակիցներ Ն.Օհանյանի, Ա.Դուկասյանի, ինչպես նաև Հ.Գևորգյանի բուժումն իրականացրած բուժանձնակազմի և «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի բուժանձնակազմի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով, Հ.Գևորգյանի և Ն.Ենգիբարյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի նոյեմբերի 30-ի մեկ այլ որոշմամբ ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի բժշկական սպասարկման բաժնի պետ Լևոն Մարկոսյանի, ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց»

ՔԿՀ-ի պետի բուժական գծով տեղակալ Անդրանիկ Բաղդասարյանի, նյարդաբան Արման Ավագյանի, հոգեբույժ Գաբրիել Ահարոնյանի, նարկոլոգ Սուրեն Նազիկյանի և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի աշխատակիցների նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ների պատասխանատու պաշտոնատար անձանց, ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ), ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի և ՀՀ արդարադատության նախարարության բժշկական աշխատանքային հանձնաժողովի աշխատակիցների նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ և 308-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով քրեական հետապնդում չի իրականացվել:

Նախաքննության մարմնի նույն օրվա՝ մեկ այլ որոշմամբ թիվ 57200117 քրեական գործով վարույթը կասեցվել է՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

Վերոհիշյալ որոշումների դեմ դիմող Ն.Ենգիբարյանի ներկայացուցիչներ Ն.Կարապետյանցի և Ա.Պապիկյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ մերժվել է:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հունիսի 14-ի որոշմամբ դիմող Ն.Ենգիբարյանի ներկայացուցիչներ Ն.Կարապետյանցի և Ա.Պապիկյանի բողոքը մերժվել է:

4. Դիմող Ն.Ենգիբարյանի ներկայացուցիչներ Ն.Կարապետյանցի և Ա.Պապիկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 14-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել դիմող Ն.Ենգիբարյանի ներկայացուցիչ Ա.Պապիկյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. 2016 թվականի փետրվարի 17-ին ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում Ն.Ենգիբարյանի դիմումի հիման վրա նախապատրաստվել են նյութեր, որի ընթացքում պարզվել է, որ 1964 թվականին ծնված Հրայր Գևորգյանը 2011 թվականի հոկտեմբերի 18-ից պատիժ է կրում ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում: 2014 թվականի ապրիլի 26-ին Հ.Գևորգյանը տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ և «Ուղիղ աղու արյունահոսող պոլիպ, օտար մարմին (մետաղյա) ստամոքսում» նախնական ախտորոշմամբ ընդունվել վիրաբուժական բաժանմունք: 2014 թվականի նոյեմբերի 14-ին Հ.Գևորգյանը վիրահատվել է, որից հետո՝ 2015 թվականի փետրվարի 3-ին, տեղափոխվել ինֆեկցիոն բաժանմունք՝ «Վիճակ թուլաբանական է, հետադարձ, պորտային ճողվածք», «Քրոնիկական եղնաջացան», «Ալերգիկ դերմատիտ» ախտորոշմամբ, որին համապատասխան ստացել է դեղորայքային բուժում: 2015 թվականի փետրվարի 16-ից Հ.Գևորգյանը զուգահեռաբար ընդգրկվել է նաև մեթադոնային փոխարինող բուժման ծրագրում: 2015 թվականի փետրվարի 25-ին Հ.Գևորգյանը բուժման նպատակով շտապ կարգով ուղարկվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն: Կատարված հետազոտությունների արդյունքում Հ.Գևորգյանի մոտ ախտորոշվել է «Երկկողմանի սուր բլթային թոքաբորբ», և նույն օրը վերջինս տեղափոխվել է «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն, որտեղ էլ ախտորոշվել են «Սուր շնչական անբավարարություն II աստիճանի», «Երկկողմանի ստորբլթային թոքաբորբ», «Հեպատիտ C» հիվանդությունները: 2015 թվականի մարտի 12-ին հիվանդը բավարար վիճակում դուրս է գրվել «Արմենիա» բժշկական կենտրոնից և տեղափոխվել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ: 2015 թվականի ապրիլի 28-ին Հ.Գևորգյանը «Խրոնիկ բրոնխիտ», «Խրոնիկ հեպատիտ» ախտորոշումներով դուրս է գրվել և տեղափոխվել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ:

6.1. Հ.Գևորգյանի մահվան փաստի առթիվ նախապատրաստված նյութերով պարզվել է, որ ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի դատապարտյալ Հ.Գևորգյանը 2017 թվականի մարտի 31-ին, «Ասենտո-նևրոտիկ սինդրոմ, էնցեֆալոպատիա, գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարում» նախնական ախտորոշմամբ նախ՝ տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, այնուհետև՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի շտապօգնության և վերակենդանացման բաժանմունք, որտեղ վերջինիս մոտ ախտորոշվել են՝ «Հեպատիտ C», «Լյարդ-բջջային անբավարարություն», «Հոգեկան և վարքային խանգարումներ՝ կապված նարկոմանիայի հետ» հիվանդությունները,

խորհուրդ է տրվել նարկոլոգի ամբուլատոր հսկողություն: Մեկ օր անց՝ 2017 թվականի ապրիլի 1-ին, Հ.Գևորգյանը դուրս է գրվել և կրկին տեղափոխվել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, որտեղ էլ բժշկական կոնսիլիումը որոշել է, որ նա ստացիոնար բուժման կարիք չունի, այլ կարիք ունի դիսպանսեր հսկողության՝ պատժի կրման հիմնական վայրում, որպիսի հիմնավորմամբ նույն օրը դատապարտյալը տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ, որտեղ էլ 2017 թվականի ապրիլի 5-ին՝ ժամը 17:05-ին, մահացել է:

7. Տուժող *Հրայր Գևորգյանը* ցուցմունք է տվել այն մասին, որ 2011 թվականի հոկտեմբերի 18-ին ձերբակալվել է, որից հետո տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկ, այնուհետև 2014 թվականի ապրիլի 26-ին առողջական վիճակը շատ է վատացել, տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ և շուրջ 7-8 ամիս անց վիրահատվել: Վիրահատությունից հետո իրեն շուրջ մեկ ամիս լավ է զգացել, վերջույթներում դող չի ունեցել, կարողացել է նորմալ խոսել և ինքնուրույն տեղաշարժվել: Այնուհետև, տեղափոխվել է «ալերգիայի» բաժանմունք, որտեղ մեթադոն տեսակի դեղի հետ իրեն ներարկել են այլ հոգեմետ դեղեր, որոնցից իրեն վատ է զգացել: Այդ մասին հայտնել է բժիշկներին, ովքեր պատասխանել են, որ ամեն ինչ նորմալ է, կանցնի: 2015 թվականի փետրվարի 25-ին առողջական վիճակը կտրուկ վատացել է և տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն: Քաղաքացիական հիվանդանոցում մի քանի օր «կոմայի» մեջ գտնվելուց հետո գիտակցության է եկել և դրանից հետո չի կարողացել ինքնուրույն ուտել, տեղաշարժվել և նորմալ խոսել: 2015 թվականի մարտի 12-ին տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, իսկ նույն թվականի ապրիլի 29-ին՝ «Նուբարաշեն» ՔԿՀ, որտեղ իրեն բուժմաս տեղափոխելու փոխարեն 5 օր պահել են կարանտինում, որից հետո միայն տեղափոխել բուժմաս: Հայտնել է նաև, որ իր համոզմամբ՝ առողջական վիճակի կտրուկ վատացումը պայմանավորված է եղել մեթադոնի հետ բժիշկների կողմից տրված այլ դեղեր օգտագործելու հետ, որը կազմակերպել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի այդ ժամանակվա պետի տեղակալ Ս.Բուլդադարյանը¹:

8. Վկա *Նախշուն Ենգիբարյանը* ցուցմունք է տվել այն մասին, որ 2015 թվականի փետրվարին տեղեկացել է, որ որդու առողջական վիճակը կտրուկ վատացել է և նրան անգիտակից վիճակում տեղափոխել են «Արմենիա» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունք: Միաժամանակ համոզմունք է հայտնել, որ որդու առողջական վիճակի կտրուկ վատացումը պայմանավորված է վերջինիս թունավորելու հետ,

¹ Տե՛ս քննիչի կողմից ներկայացված նյութերը:

քանի որ Հ.Գևորգյանը կալանավորվելիս եղել է առողջ: Հայտնել է նաև, որ որդուն վերջին անգամ տեսել է 2015 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին դատարանում, երբ վերջինս արդեն գամված էր սայլակին և չէր կարողանում խոսել¹:

9. ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետի տեղակալ *Սմբայր Բուդադարյան*ն ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ 2015 թվականի փետրվար ամսից մինչև մայիս ամիսը աշխատել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում որպես պետի տեղակալ: Ինչ վերաբերում է Հ.Գևորգյանի հայտնած տեղեկություններին, ապա դրանք իրականությանը չեն համապատասխանում, նպատակ ունեն իրեն գրպարտելու: Դատապարտյալների միջև տարածված խոսակցությունների համաձայն, որը հասել է նաև իրեն, Հ.Գևորգյանի վիճակի վատթարացման պատճառը եղել է մեթադոնային բուժման մեջ գտնվելու ընթացքում ինչ-որ հոգեմետ դեղ օգտագործելը, ինչի հետևանքով էլ տեղի է ունեցել գերդոզավորում, և վերջինս ընկել է կոմայի մեջ²:

10. ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության պետի տեղակալի՝ 2017 թվականի նոյեմբերի 6-ի գրության համաձայն՝ ազատագրվման ձևով պատիժ կրելու ընթացքում Հ.Գևորգյանին քրեակատարողական հիմնարկի որևէ աշխատակցի, դատապարտյալի կամ կալանավորի կողմից թունավորելու կամ այլ եղանակով նրա կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու, վերջինիս կողմից թմրամիջոց, հոգեմետ նյութեր կամ շրջանառությունից հանված այլ թմրամիջոցներ ձեռք բերելու կամ օգտագործելու վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով ձեռնարկված միջոցառումները դրական արդյունք չեն տվել³:

11. ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի բժշկական սպասարկման բաժնի պետ *Լևոն Մարկոսյան*ը ցուցմունք է տվել այն մասին, որ 2017 թվականի մարտի 31-ին Հ.Գևորգյանը շտապ կարգով տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ: Նույն օրն իրեն է գանգահարել վերոնշյալ ՔԿՀ-ի պետի բժշկական գծով տեղակալ Ա.Բադրասարյանը և հայտնել, որ Հրայրյի վիճակը ծանր է, հիմնարկի բժիշկների եզրակացության համաձայն կարիք ունի ռեանիմացիոն միջոցառումների, այդ իսկ պատճառով հիվանդը տեղափոխվում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ՝ վերակենդանացման բաժանմունք: Հաջորդ օրն իրեն է գանգահարել Հ.Գևորգյանին ուղեկցող աշխատակիցը, հայտնել, որ հիվանդին դուրս են գրում և հարցրել, թե ուր տեղափոխեն նրան, ինքը պատասխանել է, որ տանեն ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց»

¹ Տե՛ս, քննիչի կողմից ներկայացված նյութերը:

² Տե՛ս քննիչի կողմից ներկայացված նյութերը:

³ Տե՛ս քննիչի կողմից ներկայացված նյութերը:

ՔԿՀ: Դրանից մոտ մեկ ժամ անց իրեն է զանգահարել Ա.Բաղդասարյանը և հայտնել, որ ըստ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՔԿ-ից տրված էպիկրիզի՝ հիվանդը ստացիոնար բուժման կարիք չունի: Նույն օրը ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում բժիշկների կոնսիլիումը նույնպես որոշում է կայացրել, որ Հ.Գևորգյանը ստացիոնար բուժման կարիք չունի, և վերջինս տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ, որտեղ ցուցաբերվել է անհրաժեշտ բժշկական օգնություն: Տեսնելով, որ Հ.Գևորգյանի առողջական վիճակը շարունակում է պրոգրեսիվորեն վատանալ՝ հիվանդին ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխելու կարգադրագիր է պահանջել: 2017 թվականի ապրիլի 5-ին ստացվել է վերջինիս հոսպիտալացնելու թույլտվությունը, և նա այդ նպատակով խցից տեղափոխվել է հերթապահ մաս, որտեղ էլ վիճակը կտրուկ վատացել է և արձանագրվել կենսաբանական մահը:

Քննիչի այն հարցին, թե ճիշտ էր արդյո՞ք Հ.Գևորգյանին 2017 թվականի ապրիլի 1-ին կրկին «Արմավիր» ՔԿՀ ընդունելը, Լ.Մարկոսյանը պատասխանել է, որ ինքը գտել է և ներկայումս էլ այն կարծիքին է, որ Հ.Գևորգյանը կարիք ուներ մանրակրկիտ հետազոտության և դրա արդյունքում ռացիոնալ բուժման, որը հնարավոր էր կազմակերպել միայն ստացիոնար պայմաններում¹:

11.1. Լ.Մարկոսյանը լրացուցիչ ցուցմունքով պատասխանելով քննիչի այն հարցին, թե ի՞նչ է եղել Հ.Գևորգյանի նախորդ բժշկական քարտի հետ և ինչու՞ է նրա համար կրկնօրինակ բժշկական քարտ բացվել, հայտնել է, որ իր ունեցած տեղեկություններով՝ Հ.Գևորգյանի կողմից տրված հաղորդման առթիվ հարուցված մեկ այլ քրեական գործով այն առգրավվել է²:

12. ՀՀ արդարադատության նախարարության բժշկական աշխատանքային հանձնաժողովի նախագահ Կարո Առուարամյանը ցուցմունք է տվել այն մասին, որ հիմնարկներում գտնվող դատապարտված անձանց կողմից պատժի կրմանը խոչընդոտող հիվանդությունների քննարկումն իրականացվում է հետևյալ եղանակով. տվյալ հիմնարկի բժշկական սպասարկման բաժանմունքի պետը հիվանդության կասկածների վերաբերյալ հայտնում է ՀՀ ԱՆ ՔԿ վարչության բժշկական սպասարկման բաժանմունքի պետին, վերջինս այդ մասին տեղեկացնում է բժշկական աշխատանքային հանձնաժողովին: Հանձնաժողովն այցելում է հիվանդին, տեղում կատարում է զննում, իսկ անհրաժեշտության դեպքում ներգրավում այլ մասնագետներ կամ ուղեգրում է հիվանդին դուրս՝ լաբորատոր գործիքային հետազոտությունների: Հիվանդությունը հաստատվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ դատապարտյալը

¹ Տե՛ս քննիչի կողմից ներկայացված նյութերը:

² Տե՛ս քննիչի կողմից ներկայացված նյութերը:

ներկայացվում է միջգերատեսչական հանձնաժողովի նիստին, իսկ հերքման դեպքում՝ ոչ: Հ.Գևորգյանի վերաբերյալ հայտնել է, որ վերջինիս մոտ 2016 թվականի փետրվարի 22-ին նյարդաբանի գնման արդյունքում ախտորոշվել է պատժի կրմանը խոչընդոտող հիվանդություն՝ «Պարկինսոնի հիվանդություն, արտահայտված ակինետո-ռիգիդային համախտանիշով, դիզարթրիա՝ հենաշարժողական ֆունկցիայի խիստ խանգարումով», որից հետո՝ 2016 թվականի մարտի 31-ին նա ենթարկվել է գնման, իսկ 2016 թվականի մայիսի 26-ին՝ էլեկտրոնային միոգրաֆիկ հետազոտության: 2016 թվականի հունիսի 5-ին հրավիրվել է բժշկական կոնսիլիում և նույն օրը որոշում է կայացվել, որ Հ.Գևորգյանի մոտ նյարդային համակարգի ախտահարման նշաններ չեն հայտնաբերվել, ինչը նշանակում է, որ նա «Պարկինսոնի համախտանիշ» հիվանդությամբ չի տառապել, ուստի միջգերատեսչական հանձնաժողովի նիստին չի ներկայացվել:

13. 2016 թվականի մայիսի 4-ի դատաբժշկական փորձաքննության թիվ 39/հձ. եզրակացության համաձայն՝ «(...) Հրաչյա Հենզելի Գևորգյանը պատասպան է հեղինակ հիվանդություններով «Մասցորդային երևույթներ պարած երկկողմանի սրորբլթային թոքաբորբից հետո, հեպատիտ «С», ալերգիկ դերմատիտ, հոգեակտիվ նյութերի օգտագործման հետևանքով առաջացած շարժումների դիսոցացված խանգարումներով»:

(...)

Ներկայումս սրույգ տարբերակել, որոշել, թե ինչն է Հ.Գևորգյանի մոտ 25.02.2016-ի վիճակի կորույթ վարացման պարճառը՝ հնարավոր չէ, սակայն ելնելով առկա փյալյալներից կարելի է ենթադրել, որ առողջության վարացումը կարող էր պայմանավորված լինել ինչպես երկկողմանի սրորբլթային թոքաբորբ հիվանդության և դրա հետևանքով առաջացած 2-րդ աստիճանի սուր շնչական անբավարարությունից, այնպես էլ «մեդադոն» դեղի միանվագ թույլատրելի չափաբաժնից բազմաթիվ անգամներ գերազանցող չափաբաժնի ընդունելուց՝ գերդոզավորումից, ինչը բերել է հոգեակտիվ նյութերի օգտագործման հետևանքով առաջացած շարժումների դիսոցացված խանգարումների, իսկ առողջության վարթարացումը և առաջացած հետևանքներն առողջությանը պարճառել են ծանր վնաս՝ կյանքի համար վրանգավորության հարկանիշներով (...):²:

14. 2017 թվականի ապրիլի 7-ի թիվ 16-2560 դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության համաձայն՝ «(...) [Ն]երկայացված բժշկական փաստաթղթերի փյալյալների համադրությունը հիմք է փալիս եզրակացնել, որ [2014 թվականի ապրիլի 26-ից մինչև 2015 թվականի

¹ Տե՛ս քննիչի կողմից ներկայացված նյութերը:

² Տե՛ս քննիչի կողմից ներկայացված նյութերը:

մայիսի 20-ը՝ բուժօգնությունների ցուցաբերման փուլերում [«Դատարարության հիվանդանոց» ՔԿՀ-ի, «Էրեբունի» և «Արմենիա» բժշկական կենտրոնների, «Նուրարաշեն» ՔԿՀ-ի] համապարասիան բուժանձնակազմերի կողմից բժշկական օգնության և սպասարկման այնպիսի թերություններ և բացթողումներ, որոնք Հ.Ֆևրոգյանի առողջությանը վնաս պատճառեին կամ գրնվեին պատճառական կապի մեջ նշված ժամկետում նրա առողջական վիճակի վարացման հետ, թույլ չեն րրվել:

(...) Համադրելով բժշկական փաստաթղթերի րվյալները և նկարի ունենալով այն, որ «Արմենիա» ՀԲԿ-ում մոտ 12 օր հիվանդին միացված է եղել արհեստական շնչառության սպարար գրնում ենք, որ Հ.Ֆևրոգյանի առողջական վիճակի կրրուկ վարացումը հնարավոր է պայմանավորված լիներ ինչպես 2-րդ սափհանի սուր շնչական անբավարարությամբ, այնպես էլ չի բացառվում առաջանար մեթադոնային բուժման ծրագրով բուժական դեղատարեր սրանալու գուգահեռ 25.02.2015թ-ին այլ րեսակի թմրամիջոցների, հոգեմեք նյութերի և/կամ հակացուցված այլ դեղամիջոցների որոշակի չափաքանակների առանց բժշկի նշանակման օգրագործելու հերևանքով:

(...)

Ինչ վերաբերում է Հ.Ֆևրոգյանի «Դատարարության հիվանդանոց» ՔԿՀ-ից «Նուրարաշեն» ՔԿՀ-ի բուժանմաս, այնուհերև խուց, րեղափոխությունները եղել են ժամանակին և հիմնավորված, թե՛ ոչ, հարակ և հիմնավոր եզրահանգումներ կարարել հնարավոր չէ՝ ներկայացված համապարասիան բժշկական փաստաթղթերում նրա ընդհանուր վիճակի վերաբերյալ գրառումների ոչ լիարժեք, սակավաթիվ և խրթին լինելու պատճառով, ինչպես նաև այն հանգամանքի, որ «Դատարարության հիվանդանոց» ՔԿՀ-ից դուրս գրվելիս ԲԱՀ-ի կողմից 28.04.2015թ-ին րրված «Խրոնիկական բրոնխիտ: Խրոնիկական հեպարիտ» ափորոշումից հերոռ «Նուրարաշեն» ՔԿՀ րեղափոխվելուց հերոռ բժշկական քարտում չկան հիվանդի առողջական վիճակի և ցուցաբերված բուժօգնության վերաբերյալ բավարար րվյալներ, որով հնարավոր լիներ եզրահանգումներ կարարել րվյալ ժամանակահարվածում նրա ընդհանուր վիճակի, ցուցաբերված բուժօգնության ծավալների, ժամկետների և րեղափոխությունների վերաբերյալ (...):¹:

15. Դիակի դատաբժշկական փորձաքնության՝ 2017 թվականի հունիսի 5-ի թիվ 34 եզրակացության համաձայն՝ «(...) Հ.Ֆևրոգյանի մահը վրա է հասել սրրի պասկաձև անոթների սուր անբավարարությունից,

¹ Տե՛ս քննիչի կողմից ներկայացված նյութերը:

չափավոր արտահայտված աթերոսկլերոզի հետևանքով, որը առավելապես ախտահարել է սրտի պսակաձև անոթները, ստրուան և ուղեղի հիմի անոթները: (...) Հ.Գևորգյանը կենդանության օրոք տառապել է նաև իրոնիկական պերսիստենցոդ հեպատրիտով, որը չի գրնվում ուղղակի պարճատական կապի մեջ մահվան անմիջական պարճատի հետ, բայց և այնպես կարող էր նպաստել նրան»:

Նույն եզրակացության համաճայն՝ Հ.Գևորգյանի մարմնի վրա հայտնաբերվել են առողջությանը պատճառված թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մի շարք մարմնական վնասվածքներ՝ արյունազեղումներ, քերճվածքներ: Դրանք պատճառվել են կենդանության օրոք՝ մահվանից 4-10, 1-4, 4-6, 2-4, 1-2 օր առաջ, և դրանք կարող էին պատճառվել ինչպես սահմանափակ մակերես ունեցող բուծ կոշտ առարկայով կամ առարկաներով անմիջական ուղղակի հարվածների հետևանքով, այնպես էլ չի բացառվում դրանց առաջացման հնարավորությունն այդպիսի առարկաներին հարվածվելու հետևանքով:

16. 2017 թվականի հոկտեմբերի 17-ի դատաբժշկական թիվ 183/հճ փորճաքնության եզրակացության «Գորճի հանգամանքները» մասի համաճայն՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում Հ.Գևորգյանի անվամբ լրացված բժշկական քարտի տվյալների ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերջինս 2016 թվականի փետրվարի 22-ին ենթարկվել է նյարդաբանի գնման և ախտորոշվել է «Պարկինսոնի հիվանդություն, արտահայտված ակինետո-ռիգիդային համախտանիշով, դիզարթրիա՝ հենաշարճողական ֆունկցիայի խիստ խանգարումով»:

Նույն եզրակացության համաճայն՝ ի թիվս այլ հարցերի, փորճագիտական հանճնաճողովը հետևության է հանգել, որ. «(...) «Մուրք Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում Հրաչյա Գևորգյանի մուր կատարված հետազոտություններն իրենց տեսակներով, ճավարով և բնույթով, ինչպես նաև իրականացված ախտահիշային բուճումը համապատասխանել են նրա մուր ախտորոշված հիվանդություններին, իսկ սրացիոնարից դուրս գրումը, բժշկական տեսանկյունից, եղել է հիմնավորված:

(...)

Փորճաքնությանը ներկայացված «Արմավիր» ՔԿ հիմնարկում Հ.Գևորգյանի անվամբ լրացված բժշկական քարտի կրկնօրինակում 01/04/2017-02/04/2017թ.-ի ճամնակահարվածին վերաբերող գրառումներ չկան, ուստի դատորոշություններ անել 2017թ. սպրիլի 1-ին նրան «Արմավիր» ՔԿ հիմնարկ ընդունելուց հետո՝ օրյեկրիվ վիճակի, գրնվելու պայմանների, ինչպես նաև՝ կատարված հետազոտությունների և բուճման տեսակի ու ճավարի մասին՝ հնարավոր չէ, վերջիններս, ամենայն

¹ Տե՛ս քննիչի կողմից ներկայացված նյութերը:

հավանականությամբ՝ չեն եղել, իսկ 03/04/2017-04/04/2017թ.-ին կատարված գրառումների համաձայն՝ Հ.Գևորգյանի վիճակն եղել է անբավարար, ծանր, բացասական դինամիկայի առկայությամբ (...): Հ.Գևորգյանին կատարվել է գննում, «Կորդիամին»-ի ներարկում, ինչը հակացուցված չի եղել, սակայն այն չէր կարող որևէ էական ազդեցություն ունենալ ախտաբանության զարգացման կամ բուժման վրա, ինչպես նաև նշվել է՝ վերջինիս շտապ կարգով վերակենդանացման բաժանմունք կամ «Դատապարտյալների հիվանդանոց» ԶԿՀ տեղափոխելու անհրաժեշտության մասին:

(...)

Համաձայն սույն փորձաքննությանը ներկայացված բժշկական փաստաթղթերի, ՀՀ կառավարության 26/05/2006թ.-ի թիվ 825-Ն որոշման թիվ 2 հավելվածով նահապետաված պարիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկում ընդգրկված որևէ հիվանդությամբ (հիվանդություններով) Հրաչյա Գևորգյանը չի տառապել:

Հ.Գևորգյանի առողջական վիճակի կտրուկ վատացումը հնարավոր է պայմանավորված լիներ ինչպես 2-րդ աստիճանի սուր շնչական անբավարարությամբ, այնպես էլ չի բացառվում առաջանար մեթադոնային բուժման ծրագրով բուժական դեղաչափեր սրանայուն զուգահեռ 25.02.2015թ-ին այլ տեսակի թմրամիջոցների, հոգեմեդիկամենտների և/կամ հակացուցված այլ դեղամիջոցների որոշակի չափաքանակների առանց բժշկի նշանակման օգտագործելու հետևանքով¹:

17. Քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2017 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը քննիչը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Սմբար Բուլղադարյանի, Նոնա Օհանյանի և Արմեն Ղուկասյանի կողմից մեթադոն տեսակի դեղի հետ հակացուցված այլ դեղորայք տալու միջոցով Հրաչյա Գևորգյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու վերաբերյալ բացի գործի ելքով շահագրգռված անձանց՝ վերջինիս և Նախշուն Ենգիբարյանի կողմից ցուցմունքներով հայրնած ենթադրություններից, այլ ապացույցներ ձեռք չեն բերվել:

(...) [Գ]ործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության արդյունքում չեն հաստատվել (...) Հրաչյա Գևորգյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու վերջինիս հայրնած կասկածները, իսկ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևություններ չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված, հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Մեղադրանքն ապացուցված

¹ Տե՛ս քննիչի կողմից ներկայացված նյութերը:

լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարսարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան պարզաձև իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հոգուր մեղադրյալի կամ կասկածյալի: Փաստորեն, Հրաչյա Գևորգյանի և Նսիշուն Ենգիբարյանի հայրնաձ հանգամանքներն իրենցից ներկայացնում են կասկած, որոնք կարարվաձ նսխաքննությանք չեն փարսարվել, սվելին՝ հարցաքննություններով և փորձաքննություններով հերքվել են (...):

(...) [Հարկ է արձանագրել, որ որևէ րվյալներ չկան, որոնք կվկայեն, որ Հրաչյա Գևորգյանի առողջությանը պարձառվաձ վնասն առաջացել է «Արմենիա» ԲԿ-ի կամ ՀՀ ԱԵ «Դարսպարյալների հիվանդանոց» ԲԿ-ի բուձաշխարակիցների կողմից իրենց պարրականությունները ոչ պարզաձ կարարելու հերևանքով (...)]¹:

17.1. Քրեական հետսպնդում չիրականացնելու մսսին 2017 թվականի նոյեմբերի 30-ի երկրորդ որոշումը պատձառաբանվել է հետևյալ կերպ. «(...) Վարույթն իրականացնող մարմինը փաստում է, որ որևէ րվյալներ չկան, որոնք կվկայեն, որ Հրաչյա Գևորգյանի մսհը վրս է հսսել ՀՀ ԱԵ «Արմավիր» ԲԿ-ի, ՀՀ ԱԵ «Դարսպարյալների հիվանդանոց» ԲԿ-ի կամ «Մուրք Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի բուձաշխարակիցների կողմից իրենց պարրականությունները ոչ պարզաձ կարարելու հերևանքով:

Բացի այդ, նսխաքննությանք ձեռք չեն բերվել նսս այնպիսի րվյալներ, որոնք կմարնանշեն ՀՀ ԱԵ «Արմավիր» և «Դարսպարյալների հիվանդանոց» քրեակարարողական հիմնարկների պաշրոնսարսր սնձանց, այդ թվում բժշկական սպասսարկմսն բսձնի աշխարակիցների կողմից ձառայողական պարրականությունները շսհադիրական, սնձնական այլ շսհագրոզվսձությունից կամ իմբային շսհերից ելնելով ձառայության շսհերին հսկստսկ օգրսգորձելու կամ ձառայողական պարրականությունները չկարարելու, ինչպես նսս պաշրոնեական սնսիրությունն ցուցաբերելու մսսին: (...)

Ադրսդստնսսյով Հրաչյա Գևորգյանի մոր 22.02.2016թ-ին սհարորոշվսձ «Պարկինստնի հիվանդություն, արրսսհայրվսձ սկինեքր-դիգրիային հսմնսիրսնիշով, դիգրթրիսս՝ հենսշարձողական ֆունկցիայի իսիսր իսննգարումով» հիվանդության հայրնսքերումից հերոռ ՀՀ ԱԵ «Նուրսրաշեն» ԲԿ-ի և ՀՀ ԱԵ քրեակարարողական վարչության բժշկական սպասսարկմսն բսձնի և ՀՀ ԱԵ բժշկական աշխարսնրային հսնձնսսձողովի աշխարակիցների գորձողություններին, վարույթն իրականացնող մարմինը փաստում է, որ հիշյալ սհարորոշումից հերոռ Հրաչյա Գևորգյանը գնվել է բժիշկ-մսսնսագերների կողմից, ենթարկվել

¹ Տե՛ս քնսիչի կողմից ներկայացվսձ նյութերը:

լարրուարոր-գործիքային հեղափոխությունների, ներկայացվել է ՀՀ ԱՆ բժշկական աշխատանքային հանձնաժողովի կոնսիլիումին, որոնց արդյունքում հերքվել է նրա մոյր վերը նշված ախտորոշման առկայությունը, որից հետո ԲԱՀ-ի կողմից որոշում է կայացվել, որ Հրաչյա Գևորգյանի մոյր նյարդային համակարգի ախտահարման նշաններ առկա չեն: Բացի այդ Հրաչյա Գևորգյանի մոյր հիշյալ ախտորոշումը հերքվել է Գուրգեն Հովհաննիսյանի ցուցմունքով, որ վերջինս հիշյալ հիվանդությամբ չի տառապել, թիվ 183/հձ եզրակացությամբ (...), հետևաբար՝ ՀՀ ԱՆ «Նուրարաշեն» ՔԿՀ-ի, ՀՀ ԱՆ քրեակարարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի և ՀՀ ԱՆ բժշկական աշխատանքային հանձնաժողովի աշխատակիցների արարքներում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ և 308-րդ հոդվածներով նախատեսված հանցագործության հանցակազմը»¹:

17.2. Նախաքննության մարմնի՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին 2017 թվականի նոյեմբերի 30-ի որոշման համաձայն՝ «(...) [Կ]արարված նախաքննության ընթացքում հարցաքննվել են հնարավոր բոլոր այն անձինք, ովքեր կարող էին տեղեկություններ ունենալ Հրաչյա Գևորգյանի կողմից մարմնական վնասվածքներ ստանալու հանգամանքների մասին: Նրանք ցուցմունքներով հերքել են Հրաչյա Գևորգյանի նկատմամբ բռնություն գործադրված լինելու հանգամանքը, ավելին՝ հայտնել են, որ նա մարմնական վնասվածքներ է ստացել իր իսկ գործողությունների արդյունքում: Փորձագետը չի բացառել Հրաչյա Գևորգյանի կողմից մահճակալից վայր ընկնելու պայմաններում նշված վնասվածքների ստացման հնարավորությունը, նրա դրսևորած վարքագիծը ենթադրությունների տեղիք է տալիս, որ նա կարող էր իրեն վնասել, օպերատիվ-հետախուզական միջոցառումներով Հրաչյա Գևորգյանի նկատմամբ բռնություն գործադրված լինելու մասին որևէ տեղեկություն չի ստացվել: Միևնույն ժամանակ վարույթն իրականացնող մարմինը փաստում է, որ ՀՀ ԱՆ քրեակարարողական վարչության աշխատակիցները հանդիսանում են գործի ելքով շահագրգիռ անձիք և նրանց ցուցմունքները, առանց օբյեկտիվ այլ ապացույցների, չեն կարող բավարար համարվել Հրաչյա Գևորգյանի նկատմամբ բռնություն գործադրված չլինելու փաստը հաստատված համարելու առումով, հետևաբար գրնում են, որ քրեական գործով վարույթը ենթակա է կասեցման՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով (...)»²:

¹ Տե՛ս քննիչի կողմից ներկայացված նյութերը:

² Տե՛ս քննիչի կողմից ներկայացված նյութերը:

18. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հունիսի 14-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) [Ս]ույն գործի նախաքննության ընթացքում իրականացվել են մի շարք քննչական գործողություններ, մասնավորպես՝ հարցաքննվել են քրեակարարողական հիմնարկների աշխատակիցներ, բժիշկներ, ինչպես նաև տուժողի իրավահաջորդը, նշանակվել են դատաբժշկական, դիակի դատաբժշկական, ինչպես նաև մի քանի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություններ, բացի այդ, բազմիցս երկարացվել է նախաքննության ժամկետը գործի արդյունավետ քննությունն ապահովելու համար: Դատարանն արձանագրում է, որ վարույթ իրականացնող մարմնի կողմից իրականացված քննության արդյունքում ձեռք չեն բերվել այնպիսի փաստական տվյալների համակցություն, որոնք թույլ կտային քրեական հետապնդում իրականացնել այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ որոշումներ են կայացվել քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Վարույթն իրականացնող մարմինը քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումներ կայացնելիս հիմք է ընդունել դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները, որոնց արդյունքներից հնարավոր չէ հետևության գալ հակառակի վերաբերյալ:

(...)

Այսպիսով՝ նախաքննության մարմինը ձեռք չի բերել որևէ փաստական տվյալ, որով կհիմնավորվեր, որ սույն գործով տուժողին բժշկական օգնություն ցուցաբերելիս, ինչպես նաև բուժսպասարկում իրականացնելիս բուժանձնակազմի կողմից չեն կատարվել իրենց մասնագիտական պարտականությունները կամ ոչ պատշաճ են դրանք իրականացվել, որն էլ հանգեցրել է Հ.Գևորգյանի մահվան: Իր հերթին, նախաքննության մարմինը տուժողի մահվան կապակցությամբ իրականացրել է արդյունավետ քննություն:

(...)

Ինչ վերաբերում է գործի վարույթը կատեցնելու մասին որոշմանը, ապա դատարանն արձանագրում է, որ այն գործի ելքը որոշող վերջնական ակտ չէ և դատարանի կողմից դրա վերացումը կոնկրետ դեպքում կերի ձևական բնույթ, քանի որ համապատասխան հիմքերի առկայության դեպքում այն կարող է վերսկսվել ինչպես քննիչի, այնպես էլ դատախազի որոշմամբ (...)»¹:

19. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, 2018 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ փաստել է, որ «(...) Դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պարճառաբանված, նախաքննական մարմինն իրավաչափ որոշումներ է

¹ Տե՛ս թիվ ԵԴ/0016/11/18 քրեական գործի նյութերը, էջեր 51-56:

կայացրել թիվ 57200117 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, որի հետևանքով դիմող Ն.Ենգիբարյանի իրավունքներն ու օրինական շահերը չեն խախտվել, դիմողի ներկայացուցչի բողոքը քննության առնելիս Դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են դատական սխալի (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

20. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ «Քրեական հետապնդում չիրականացնելու մասին» վերտառությամբ երկու որոշումները և «Քրեական գործով վարույթը կասեցնելու մասին» որոշումն անհիմն են, դրանցում տեղ գտած քննիչի եզրահանգումները կամայական են և Հ.Գևորգյանին տևաբար պատշաճ բուժօգնություն չտրամադրելու, ինչպես նաև նրա առողջությանը վնաս պատճառող գործողությունների կատարելու փաստերով մեղավոր անձանց քրեական պատասխանատվության չենթարկելու նպատակ են հետապնդում:

Բողոքաբերը, շարադրելով և վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, գտել է, որ վարույթն իրականացնող մարմինը պետության բացառիկ հոգածության ներքո գտնվող անձին անհրաժեշտ տեսակի, ծավալի և բնույթի բժշկական օգնություն չտրամադրելու, նրան հասցված մարմնական վնասվածքների, ինչպես նաև վերջինիս մահվան կապակցությամբ արդյունավետ և պատշաճ քննություն չի կատարել:

Ըստ բողոքի հեղինակի՝ ստորադաս դատարանների դատական ակտերը ևս անհիմն են և չպատճառաբանված, դրանցով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, բողոքաբերը, մեջբերելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 61-րդ, 63-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 58-րդ, 80-րդ հոդվածները, ինչպես նաև վկայակոչելով տուժողի իրավունքների պաշտպանության վերաբերյալ մի շարք միջազգային-իրավական ակտեր, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) և Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներ, եզրահանգել է, որ ստորադաս դատարանները բողոքը մերժելու մասին որոշումներ կայացնելով փաստացի անտեսել են տուժողի իրավունքները:

¹ Տե՛ս թիվ ԵԴ/0016/11/18 քրեական գործի նյութերը, էջեր 111-141:

21. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը, վերացնել քննիչի՝ 2017 թվականի նոյեմբերի 30-ի «Քրեական հետապնդում չիրականացնելու մասին» վերտառությամբ երկու որոշումները և «Քրեական գործով վարույթը կասեցնելու մասին» որոշումն ու ճանաչել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների խախտման փաստերով մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով արդյունավետ և պատշաճ քննություն իրականացնելուց հրաժարվելու փաստը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

22. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ Հ.Գևորգյանի մահվան փաստի առթիվ իրականացված քննությունը եղել է արդյունավետ:

23. ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...):»:

24. Մեջբերված սահմանադրական և կոնվենցիոն նորմերով ամրագրված է կյանքի իրավունքը՝ որպես անձի հիմնարար իրավունք:

24.1. Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված նորմին, այն մեկնաբանել է որպես այդ դրույթի նյութաիրավական կողմի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմ՝ հաշվի առնելով այս իրավունքի հիմնարար բնույթը¹:

25. Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի ընթացակարգային բաղադրիչի արդյունավետ քննության մասով Եվրոպական դատարանն իր դիրքորոշումներում բազմիցս ընդգծել է, որ

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *McCann and Others v. The United Kingdom* գործով 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18984/91, կետեր 157-164, *Ergi v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23818/94, կետ 82, *Assenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, կետեր 101-106:

Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածը պետություններին պարտավորեցնում է ոչ միայն ձեռնպահ մնալ անձանց կյանքի նկատմամբ դիտավորյալ, անօրինական ոտնձգություններից, այլ նաև սահմանում է, որ պետությունները պետք է իրենց իրավագործության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար համապատասխան քայլեր ձեռնարկեն¹: Կյանքի իրավունքի պատշապանությունն անուղղակիորեն պետությունից պահանջում է անձանց մահվան կապակցությամբ պաշտոնապես օբյեկտիվ քննություն իրականացնել: Նման քննություն իրականացնելու պարտականությունը ծագում է բոլոր դեպքերում՝ սպանության կամ կասկած հարուցող մահվան դեպքերում՝ անկախ նրանից, թե հանցանք կատարած անձինք անհատներ են, թե պետական մարմիններ կամ անհայտ անձինք²:

Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջն է, որ իրավասու մարմինները գործեն պատշաճ ջանասիրությամբ ու արագությամբ և պարտավոր լինեն նախաձեռնել քննություն, որն ի վիճակի է նախ որոշակիացնել այն հանգամանքները, որոնցում դեպքը տեղի է ունեցել և կարգավորող համակարգի գործունեության ցանկացած թերություն, երկրորդ՝ բացահայտել դրանում ներգրավված պետական պաշտոնյաներին և մարմիններին³:

25.1. Քննությունն արդյունավետ կարող է համարվել այն դեպքում, երբ հնարավոր կլինի քննությամբ ձեռք բերված փաստերը համադրել և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկել: Իշխանությունները տեղի ունեցած իրադարձությունը բացահայտելու համար պետք է ձեռնարկեն հասանելի, խելամիտ քայլեր՝ վկաների հարցաքննություն, դատաբժշկական փորձաքննության նշանակում, ինչպես նաև դիախերձում, ինչը թույլ կտա բացահայտել առկա վնասվածքների ամբողջական և իրական պատկերը, ինչպես նաև մահվան պատճառը⁴: Քննության եզրակացությունը պետք է հիմնված լինի գործով առկա փաստերի ամբողջական, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության վրա:

25.2. Եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս ընդգծել է, որ քննության արդյունավետությունը գնահատելիս կարևոր է հատկապես

¹ Ի թիվս այլոց, տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Osman v. the United Kingdom* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 87/1997/871/1083, կետ 115:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Nachova and Others v. Bulgaria* գործով 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռը, գանգատներ թիվ 43577/98, 43579/98, կետ 110:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kats and Others v. Ukraine*, 2008 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 29971/04, կետ 116:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Tanrikulu v. Turkey* գործով 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 23763/94, կետ 109 և *Gül v. Turkey* գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, կետ 89:

այն հանգամանքը, թե որքան արագ են իշխանություններն արձագանքում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքներին, ինչը նպաստում է հանրության վստահության պահպանմանը՝ օրինականության ամրապնդման և անօրինական գործողությունների նկատմամբ հանդուրժողականության բացառման հարցում¹:

25.3. Եվրոպական դատարանն ընդգծել է, որ քննությունը պետք է լինի մանրամասն: Դա նշանակում է, որ տեղի ունեցածը բացահայտելու նպատակով իրավասու մարմինները պետք է իրականացնեն լուրջ ջանքեր և քննությունն ավարտելիս կամ իրենց որոշումները պատճառաբանելիս չհենվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված եզրահանգումների վրա: Նրանք պետք է կատարեն իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ձեռք բերեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլոց, ականատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները: Քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը²:

25.4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդդեմ Հայաստանի կայացված մի շարք վճիռներում արձանագրվել է, որ պետությունն իր պոզիտիվ պարտականության շրջանակներում չի կատարել մահվան դեպքերի առնչությամբ արդյունավետ քննություն, ինչը հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչի խախտման³: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ քննություն իրականացնող մարմինները չեն գործել բավարար ջանասիրությամբ և չեն ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի պարզեն տուժողի մահվան հանգամանքները⁴:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար (...):»*:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hugh Jordan v. United Kingdom* գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, կետ 108, *Yasa v. Turkey* գործով 1998 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռը, զեկույցներ 1998-IV, էջեր 2439-2440, կետեր 102-104:

² Տե՛ս, ի թիվս այլոց, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorelov v. Russia*, 2014 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 49072/11, կետ 52:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Muradyan v. Armenia* գործով 2016 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 11275/07, *Movsesyan v. Armenia* գործով 2017 թվականի նոյեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 27524/09 և այլն, *Mkrtychyan v. Armenia* գործով 2020 թվականի մայիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 3673/11:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ նույն վճիռները:

26.1. Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներում մշտապես ընդգծել է Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված՝ կյանքի իրավունքի առաջնային և հիմնարար բնույթը¹: Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած մոտեցումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության գնահատման հիմնական չափանիշներից են՝

ա) իրավասու մարմինները պետք է գործեն պարզաձև ջանասիրությամբ և արագությամբ,

բ) քննության արդյունքում պետք է հստակեցվեն դեպքի հանգամանքները,

գ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներ ձեռք բերելու համար: Վարույթն իրականացնող մարմինները պետք է ձեռնպահ մնան շրայտողական կամ թույլ պարճառարանված հետևություններից, քանի որ քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում մահվան պարճառները պարասիանարու անձանց կողմից պարզելու կարողությունը, վրանգում է քննության արդյունավետությունը, հերևաբար և Կոնվենցիայի 2-րդ հոդվածով պետության սրանձնած պարտավորությունների իրագործումը:

Այն դեպքում, երբ պետության վերահսկողության ներքո (ուսրիկանությունում, քրեակարարողական հիմնարկում և այլն) գրնվող անձը մահանում է, և պետությունը Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ուժով պարտավորություն է կրում ներկայացնելու մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, ապա իրավասու մարմինները (պաշտոնապար անձինք) կասկածելի մահվան փաստի առթիվ պետք է հարուցեն քրեական գործ և քրեադատավարական ողջ գործիքակազմի ներգրավմամբ իրականացնեն հնարավոր ողջամիտ քայլերը՝ դեպքի հանգամանքները պարզելու համար: (...)»²:

26.2. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ կալանավորված, դատապարտված կամ այլ կերպ պետության իրավասության ներքո գտնվող անձի մահվան դեպքերում քննություն

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Սեյրան Այվազյանի գործով 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08, Լևոն Գոյլանի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԴ/0051/11/09, Կարեն Փափազյանի գործով 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԷԴ/0002/11/10, Մուսաննա Ասրոնյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12, Ռուզաննա Նիսազյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշումները:

² Մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ռուզաննա Նիսազյանի վերաբերյալ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշման 25-26-րդ կետերը:

իրականացնող մարմինները պետք է գործեն արդյունավետ, կատարեն մանրամասն քննություն, ձեռնարկեն հնարավոր և անհրաժեշտ բոլոր միջոցները՝ անձի մահվան պատճառները պարզելու համար՝ միաժամանակ ձեռնպահ մնալով մահվան հանգամանքների վերաբերյալ հապճեպ կամ չհիմնավորված վերջնական գնահատականներ տալուց: Վճռարենկ դատարանի գնահատմամբ՝ պետության վերահսկողության ներքո գտնվող անձանց մահվան դեպքերով վերը նշված պահանջներին համապատասխանող քննությունը միայն կարող է համարվել արդյունավետ և համահունչ Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչին:

27. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմինը 2017 թվականի նոյեմբերի 30-ի որոշումներով քրեական հետապնդում չի իրականացրել և քրեական գործով վարույթը կասեցրել է այն պատճառաբանությամբ, որ նախաքննության ընթացքում կատարվել են հնարավոր բոլոր քննչական ու դատավարական գործողությունները և ձեռք չեն բերվել այնպիսի փաստական տվյալներ, որոնք կվկայեին Հ.Գևորգյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու մասին կամ, որ Հ.Գևորգյանի մահը վրա է հասել ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿԸ-ի, ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿԸ-ի կամ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի բուժաշխատակիցների կողմից իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով¹:

- Առաջին ատյանի դատարանը, քննարկելով դիմող Ն.Ենգիբարյանի ներկայացուցիչներ Ա.Պապիկյանի և Ն.Կարապետյանցի բողոքը, մերժել է այն՝ նշելով, որ գործի նախաքննության ընթացքում տուժող Հ.Գևորգյանի մահվան փաստի առթիվ իրականացվել է արդյունավետ քննություն, քննչական և դատավարական գործողությունները քննիչի կողմից կատարվել են օրենքով սահմանված քրեադատավարական ընթացակարգին համապատասխան և կայացվել են քրեական հետապնդում չիրականացնելու մասին օրինական և հիմնավոր որոշումներ: Ինչ վերաբերում է գործի վարույթը կասեցնելու մասին որոշմանը, ապա Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ այն գործի ելքը որոշող վերջնական ակտ չէ և համապատասխան հիմքերի առկայության դեպքում կարող է վերսկսվել²:

- Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, նախաքննական մարմինն իրավաչափ որոշումներ է

¹ Տե՛ս սույն որոշման 17-17.2-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 18-րդ կետը:

կայացրել թիվ 57200117 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և գործով վարույթը կասեցնելու մասին, որի հետևանքով դիմող Ն.Ենգիբարյանի իրավունքներն ու օրինական շահերը չեն խախտվել¹:

28. Նախորդ կետում շարադրված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 23-26.2-րդ կետերում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Հ.Գևորգյանի մահվան դեպքի առթիվ իրականացված քննության արդյունավետությունը գնահատելիս համակողմանի ուշադրության չեն արժանացրել գործի փաստական հանգամանքները: Մասնավորապես, ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ՝

- Նախաքննության մարմինը «լուրջ ջանքեր» չի գործադրել պարզելու, թե որն է եղել 2015 թվականի փետրվարի 25-ին Հ.Գևորգյանի առողջական վիճակի կտրուկ վատացման պատճառը: Մասնավորապես այս առումով վարույթն իրականացնող մարմինը պատշաճ քննության առարկա չի դարձրել Հ.Գևորգյանի ցուցմունքներն այն մասին, որ «մեթադոն» տեսակի դեղի հետ ինքը բժիշկների կողմից ստացել է նաև այլ հոգեմետ դեղեր², ինչպես նաև գործի քննության ընթացքում նշանակված դատաբժշկական հանձնաժողովային երեք փորձաքննությունների եզրակացությունները, ըստ որոնց՝ չի բացառվում, որ Հ.Գևորգյանի առողջական վիճակի կտրուկ վատացումն առաջանար մեթադոնային բուժման ծրագրով բուժական դեղաչափեր ստանալուն զուգահեռ այլ տեսակի թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և/կամ հակացուցված այլ դեղամիջոցների որոշակի չափաքանակների առանց բժշկի նշանակման օգտագործելու հետևանքով³: Այս առումով հատկանշական են նաև ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի այդ ժամանակվա պետի տեղակալ Ս.Բուլդադարյանի ցուցմունքն այն մասին, որ դատապարտյալների միջև տարածված խոսակցությունների համաձայն, որը հասել է նաև իրեն, Հ.Գևորգյանի վիճակի վատթարացման պատճառը եղել է հոգեմետ դեղ օգտագործելը⁴, և ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության պետի տեղակալի գրությունն այն մասին, որ Հ.Գևորգյանի կողմից թմրամիջոց, հոգեմետ նյութեր կամ շրջանառությունից հանված այլ թմրամիջոցներ ձեռք բերելու կամ օգտագործելու վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով ձեռնարկված օպերատիվ

¹ Տե՛ս սույն որոշման 19-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 13-14-րդ և 16-րդ կետերը:

⁴ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

միջոցառումները դրական արդյունք չեն տվել¹: Մինչդեռ, նշված փաստական տվյալների առկայության պայմաններում, այդ կապակցությամբ քննություն չի կատարվել, քննիչը կատարված նախաքննության ընթացքում այդ կապակցությամբ անհրաժեշտ հարցեր չի ուղղել Ս.Բաղդասարյանին՝ պարզելու, թե կոնկրետ ովքեր են նման տեղեկություններ հայտնել և միջոցներ չի ձեռնարկել այդ անձանց հարցման ենթարկելու և նրանցից այդ հանգամանքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինը չի պարզել, թե հնարավոր էր արդյո՞ք, որ անազատության մեջ և հսկողության տակ պահվող դատապարտյալը կարողանար ձեռք բերել և օգտագործել արգելված նյութեր,

- վարույթն իրականացնող մարմինը պատշաճ քննության առարկա չի դարձրել այն փաստը, որ 2015 թվականի փետրվարի 25-ին Հ.Գևորգյանը տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կետորոն, որտեղ նրա մոտ ախտորոշվել են «Մուր շնչական անբավարարություն II աստիճանի», «Երկկողմանի ստորբլթային թոքաբորբ», «Հեպատիտ C» հիվանդությունները, 2015 թվականի մարտի 12-ին հիվանդը բավարար վիճակում դուրս է գրվել և տեղափոխվել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, ապա 2015 թվականի ապրիլի 29-ին՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ: Այս առումով Նախաքննության մարմինը քայլեր չի ձեռնարկել պարզելու՝ արդյո՞ք Հ.Գևորգյանը ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում ստացել է իր մոտ ախտորոշված հիվանդություններին համապատասխան բուժում թե ոչ, նշված ՔԿՀ-ների բժշկական մասում արդյո՞ք եղել են բավարար պայմաններ նման հիվանդություններով տառապող անձին անհրաժեշտ բուժօգնություն ցուցաբերելու համար թե ոչ, առկա է եղել արդյո՞ք համապատասխան մասնագիտացում ունեցող բուժանձնակազմ, կանոնավոր հետազոտություններ իրականացնելու պայմաններ, անհրաժեշտ սարքավորումներ, համապատասխան դեղորայք և այլն,

- Նախաքննության մարմնի կողմից մանրամասն քննություն չի տարվել նաև ստուգելու, թե Հ.Գևորգյանի՝ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից «Նուբարաշեն» ՔԿՀ-ի բուժսանմաս, այնուհետև՝ խուց, տեղափոխությունները եղել են ժամանակին և հիմնավորված, թե՛ ոչ, քանի որ ըստ դատաբժշկական փորձաքննության թիվ 16-2560 եզրակացության՝ հստակ և հիմնավոր եզրահանգումներ կատարել հնարավոր չի եղել՝ ներկայացված համապատասխան բժշկական փաստաթղթերում նրա ընդհանուր վիճակի վերաբերյալ գրառումների ոչ լիարժեք, սակավաթիվ և խրթին լինելու պատճառով, ինչպես նաև այն

¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

հանգամանքի, որ «Նուբարաշեն» ՔԿՀ տեղափոխվելուց հետո բժշկական քարտում հիվանդի առողջական վիճակի և ցուցաբերված բուժօգնության վերաբերյալ բավարար տվյալներ չեն եղել, որով հնարավոր լինել եզրահանգումներ կատարել տվյալ ժամանակահատվածում նրա ընդհանուր վիճակի, ցուցաբերված բուժօգնության ծավալների, ժամկետների և տեղափոխությունների վերաբերյալ: Այս մասով վարույթն իրականացնող մարմինը քննություն չի իրականացրել և չի պարզել, թե որն է այդ ժամանակահատվածից հետո բժշկական քարտում համապատասխան տվյալների անբավարարության պատճառը, ինչպես նաև չեն ձեռնարկվել քայլեր՝ ստուգելու և պարզելու Հ.Գևորգյանի հայտնած տեղեկություններն այն մասին, որ իրեն «Նուբարաշեն» ՔԿՀ-ի բուժմաս տեղափոխելու փոխարեն 5 օր պահել են կարանտինում, որից հետո նոր միայն տեղափոխել բուժմաս²,

- վարույթն իրականացնող մարմինը միջոցներ չի ձեռնարկել պարզելու, թե 2016 թվականի փետրվարի 22-ին նյարդաբանի գնման արդյունքում Հ.Գևորգյանի մոտ պատժի կրմանը խոչընդոտող հիվանդություն՝ «Պարկինսոնի հիվանդություն, արտահայտված ակինետո-ռիգիդային համախտանիշով, դիզարթրիա՝ հենաշարժողական ֆունկցիայի խիստ խանգարումով» ախտորոշվելուց հետո ի՞նչ հետազոտություններ են իրականացվել և ինչու՞ է ախտորոշումից շուրջ 5 ամիս անց որոշվել, որ նա այդ հիվանդությամբ չի տառապել: Քննիչը չի փորձել նաև սպառիչ պատասխան ստանալ այն հարցին, թե նման ախտորոշումը հաստատելու կամ հերքելու համար ի՞նչ կարգ է գործում, և բավարարվել է այդ մասին ՀՀ արդարադատության նախարարության բժշկական աշխատանքային հանձնաժողովի նախագահ Կ.Առուստամյանի ցուցմունքը հիմք ընդունելով³,

- վարույթն իրականացնող մարմինը պատշաճ գնահատման չի արժանացրել այն, որ 2017 թվականի մարտի 31-ին Հ.Գևորգյանը «Արմավիր» ՔԿՀ-ից շտապ կարգով, «Աստենո-նևրոտիկ սինդրոմ (էնցելոպատիա) գլխուղեղի արյան շրջանառության դինամիկ խանգարում» ախտորոշմամբ տեղափոխվել է նախ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, ապա «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ, որտեղ հիշյալ ախտորոշումը ոչ հաստատվել է, ոչ էլ հերքվել, ինչը վկայում է այն մասին, որ այդ մասով համապատասխան հետազոտություններ չեն իրականացվել,

- Նախաքննության մարմնի կողմից պատշաճ գնահատման չի ենթարկվել նաև ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի բժշկական սպասարկման բաժնի պետ Լ.Մարկոսյանի ցուցմունքն այն մասին, որ իր կարծիքով՝ Հ.Գևորգյանը կարիք ուներ մանրակրկիտ հետազոտության և դրա

¹ Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

արդյունքում ռացիոնալ բուժման, որը հնարավոր էր կազմակերպել միայն ստացիոնար պայմաններում¹, և այս առումով միջոցներ չի ձեռնարկել պարզելու, թե 2017 թվականի ապրիլի 1-ից վիճակի շարունակական վատթարացման պայմաններում ինչու՞ Հ.Գևորգյանին հիվանդանոց կամ այլ մասնագիտացված հաստատություն տեղափոխելու մասին որոշումն ավելի շուտ չի կայացվել և արդյո՞ք մինչև 2017 թվականի ապրիլի 5-ը ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿԿ-ում անձի վիճակը կայունացնելու համար ձեռնարկված միջոցառումներն արդյունավետ են եղել,

- քննիչը բավարար միջոցներ չի ձեռնարկել պարզելու, թե որտե՞ղ է գտնվում Հ.Գևորգյանի նախորդ բժշկական քարտը և ինչու՞ է «Արմավիր» ՔԿԿ-ում նրա անվամբ կրկնօրինակ քարտ լրացվել, ինչու՞ այդ քարտում 2017 թվականի ապրիլի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածին վերաբերող գրառումներ առկա չեն: Ավելին՝ ունենալով տվյալներ այն մասին, որ բժշկական քարտի բնօրինակը հնարավոր է, որ առգրավված լինի Հ.Գևորգյանի կողմից տրված հաղորդման առթիվ հարուցված մեկ այլ քրեական գործով², որևէ միջոց չի ձեռնարկվել այն հայտնաբերելու ուղղությամբ,

- վարույթն իրականացնող մարմինը գործի քննության ընթացքում քայլեր չի ձեռնարկել պարզելու նաև, թե Հ.Գևորգյանի մարմնի վրա հայտնաբերված և մահվանից 4-10, 1-4, 4-6, 2-4, 1-2 օր առաջ պատճառված մարմնական վնասվածքներն³ ինչու՞ չեն արձանագրվել քրեակատարողական հիմնարկների կողմից և ինչու՞ այդ կապակցությամբ անմիջապես քննություն չի ձեռնարկվել:

29. Նախորդ կետում վկայակոչված հանգամանքների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Հ.Գևորգյանի մահվան դեպքի առթիվ իրականացված քննության կապակցությամբ չեն ձեռնարկվել բոլոր ողջամիտ քայլերը, որոնք օբյեկտիվ դիտորդին համոզիչ կերպով հնարավորություն կընձեռեին լիարժեք պատկերացում կազմել դեպքի իրական հանգամանքների վերաբերյալ: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ տրված դատավարական խախտումների պայմաններում արդյունավետ քննություն չի իրականացվել, ինչը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացել ստորադաս դատարանների կողմից: Ուստի, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ Հ.Գևորգյանի մահվան փաստի առթիվ իրականացված քննությունը եղել է արդյունավետ, հիմնավոր չէ:

¹ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 11.1-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 15-րդ կետը:

30. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտ կայացնելիս, ստորադաս դատարանները թույլ են տվել Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական բաղադրիչի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Վերոշարադրյալը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու, դիմող Ն.Ենգիբարյանի ներկայացուցիչներ Ն.Կարապետյանցի և Ա.Պապիկյանի բողոքը բավարարելու և Ն.Ենգիբարյանի իրավունքների՝ սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականություն սահմանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Նախշուն Արամի Ենգիբարյանի ներկայացուցիչներ Ն.Կարապետյանցի և Ա.Պապիկյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հունիսի 14-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը բեկանել ու փոփոխել: Դիմողի ներկայացուցիչներ Ն.Կարապետյանցի և Ա.Պապիկյանի բողոքը բավարարել՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնելու Ն.Ենգիբարյանի իրավունքների խախտումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

արորագրություն

Դատավորներ՝

արորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

Հատոր XII

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: Թուղթը՝ օֆսեթ
Տառատեսակը՝ GHEA Mariam: Ծավալը՝ 62 տպ. մամ.
Տպաքանակ՝ 500

Տպագրվել է «Զանգակ-97» ՍՊԸ-ի տպարանում

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
info@zangak.am, www.zangak.am, www.book.am, www.facebook.com/zangak

